



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3228

28
2-47 1863

22

22001

2010

28

Printed in Turkey

Z-47

Ճ Ա Ռ Ք

Ի ՎԵՐԱՅ

Ա Պ Ե Յ Ո Յ Յ Ի

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ

ՈՐ ՅՕՐԻՆԱԺ Է

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՐԺԱՊԵՏ

ՄԱՐԿՈՍ ՀԱՓՔԻՆՍ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՆԱՍԵԱՆ

— 1863 —

11218



2066
40

Ա Պ Ա Յ ՈՅ Յ

Ք Բ Դ Ս Տ Ո Ն Է Ռ Թ Ե Ա Ն

Ճ Ա Ռ Ա

Մ. յս ճառերուն շարունակութեանը ձեռք դար-
կած ատենս, մէկ գաղափար մը կայ, որմէ նախ
և առաջ կուզեմ ձեզ զգուշացնել: Մ. յսինքն՝
թէ ես կուգամ հիմա Քրիստոնէութիւնը պաշտ-
պանելու, որպէս թէ անոր ճշմարիտ ըլլալը տա-
րակուսելի բան մըն է: Ո՛չ, անանկ չէ: Ես
ճշմարտութեան վրայ վիճելու չեմ դար, այլ ա-
նիկա ցուցնելու, և կատարելու իմ պարտաւորու-
թիւնս ան մեծ գործին մէջ որ կատարուելու է,
ամեն յաջորդող ազգերուն անանկ ցուցնելով
անոնց, որ իրենք իրենցմէ տեսնեն Քրիստոնէա-
կան կրօնքին վրայ իրենց ունեցած հաւատքին ի՞նչ
հիմանց վրայ հաստատուիլը: Կուգամ որ կայնիմ
ճշմարտութեան տաճարին դուռը, և խնդրեմ ձեզ-
մէ որ ներս մտնէք ինձի հետ, ու տեսնէք ձեր
աչքովը ան սիւներուն պատուանդանները, ու բուն
ան սիւները որոնց վրայ անոր շէնքը հաստա-
տուած է. կը խնդրեմ ձեզմէ հիներէն մէկուն ը-
սածին պէս, պտրտիլ Սիօնին չորս կողմը, ու ա-
նոր բոլորափքը շարուիլ, ու աշտարակները համ-
րել. ու շաղրութեամբ դիտել անոր պարիսպները,

զննել անոր պաշտօները որ գալու ազգին պատ-
մէք* : Աս ընելով կը յուսամ օգտակար ըլլալ
երեք կարգ մարդոց :

Առաջինը անոնք են՝ որ ընդունած են Վր-
րիստոնէութիւնը առանց բնաւ ընդդիմութեան , ո-
րոնք բնաւ քննած չեն անոր ճշմարտութիւնը և
բնաւ ապացոյց փնտռած չեն : Աս կարգէն ե-
ղողները շատ են , և կը վախցուի թէ աւելի կը
շատնան . և ինծի կը թուի թէ անոնց ունեցած
մտքի վիճակին և անոր հետեւութիւններուն բա-
ւական նկատում ընող չկայ :

Վրիստոնէական կրօնքը Վրիստոնէական երկ-
րի մէջ մեծցող պատանիներուն առջևը ինքզինքը
շատ տարբեր կերպով կը ներկայացունէ , քան թէ
ան ատենը երբոր նախ քարողուեցաւ , որ ատեն
այնքան արագ յառաջադիմութիւն և մարդոց մըտ-
քին վրայ այնքան զօրաւոր ազդեցութիւն կը
նէր : Ան ատենը ոչ մէկ Վրիստոնեայ կը ծը-
նէր , այլ ո՛վ որ Վրիստոնեայ կը լար՝ կը լար
ընդդէմ իր կը թուութեան պաշարմանցը , ազդակցու-
թեան կապերուն , շահասնդրութեան շարժառիժ-
ներուն և շատ անգամ ալ զոհելով պատիւն ու կեան-
քը : Ասիկա ո՛չ մէկ կը նէ եթէ իր միտքը ամենազօ-
րաւոր ապացոյցներ չտեսնէ և անոնց հաւանու-
թիւն չտայ : Վրիստոնէութիւնը կրօնք մըն էր՝
որ ուրիշ կրօնքներուն հետ ինք կսկսէր հակառա-
կիլ և ոչ մէկ պայմանով մը անոնց հետ դաշնակ-
ցութեան կը մտնէր : Աւրիշ ամեն ձև կրօնքի

*Սաղ . ԽԸ . 12 . 13 :

վրայ կը յարձակէր թէ շրէական և թէ շե-
 թանոսական և կը ջանար կործանել անիկա :
 «Աշխարհը տակնուվրայ կընէր» ուր որ կեր-
 թար . և առաջին հարցումը որ մէկ մարդ մը բը-
 նականապէս պիտի հարցնէր աս էր, թէ ի՞նչ
 գրութիւն է աս, և ի՞նչ ապացոյցներ ունի որ ես
 անիկայ ընդունիմ : Աւ հարկաւ ամենքը պիտի
 քննէին անոր սկզբունքները և ապացոյցները, ան
 մտադրութիւնով՝ որ բանին նորութիւնն և ան-
 ձին շահը կրնայ յառաջ բերել : Սակայն բա-
 նը հիմա փոխուած է . մարդիկ անունով Քրի-
 թիստոնեայ կը ծնին : Արօնքին ճշմարտութիւնը
 կընդունուի առանց քննութեան . անիկա քննե-
 լու ու հարցուփորձ ընելու պատճառ եղող բան
 մը չկայ : Աս վիճակին մէջ կրնայ ըլլալ որ միտ-
 քը արթննայ և ան կրօնքին ներքին գերազան-
 ցութիւնը և մարդկային կարօտութեանց անոր ու-
 նեցած ճիշդ յարմարութիւնը զգալով ընդունի
 անիկա . բայց հաւանականը աս է որ տարակոյս-
 ներ պիտի ծագին : Ասոր պատճառ եղող բաներ
 բազմաթիւ են ամեն կողմը . աշխարհիս կարգէ
 դուրս վիճակը, ազանդներուն շատութիւնը, Քրի-
 թիստոնէից վարքը, այսինչ ընկեր մը որ կրօնքը
 ծաղր կընէ, և այնինչ անհաւատութեան գիրքը :
 Աւ մէկ առարկութիւնն ու տարակոյսը մէկալը
 յառաջ կը բերէ : Սախ առարկութիւնները կու-
 դան, և մարդն ինք չիմացած կրօնքի վրայ իր ու-
 նեցած յարգը և վստահութիւնը կըտկարացնեն :
 Սանաւանդ այսպէս պիտի ըլլայ եթէ մէկ պատա-
 նի մը շատ ճամբորդութիւն կընէ, և կըտեսնէ

ղանազան կրօնքներ: Արտեսնէ որ Հնդիկը կը-
խանարհի իր կուռքին առջին, Տաճիկը իր աղօթ-
քը դէպի Մէքքա կըմատուցանէ, Պապականը
իր սուրբին առջին ծունկ կը ծռի, և Ռոմէսդան-
դը իր եկեղեցին կերթայ. և որովհետև ամենը
հաւասարապէս անկեղծութիւն և վստահութիւն
կըցուցնեն, իր մտքին մէջ կտանայ՝ գուցէ ա-
ռանց ինք զգալու ալ, մէկ ընդհանուր տպաւորու-
թիւն մը թէ ամեն կրօնք հաւասարապէս ճշմա-
րիտ է, կամ՝ որ շատ մօտ է անոր, հաւասարա-
պէս սուտ է, ու Քրիստոնէական կրօնքին ան-
հրաժեշտ կապուիլը իբրև կրօնամոլութիւն պի-
տի երևի. կրօնքը բոլորովին իբրև մէկ սանձ մը
անհաճոյ պիտի դայ, և պիտի արհամարհուի իբրև
մէկ արարողութիւն մը: Այլսաւորապէս աս կար-
գէն են որոնց մէջ մէկ կողմէն կրօնամոլութիւ-
նը՝ միւս կողմէն անհաւատութիւնը շատցած է.
և ասանկ մէկու մը կրօնամոլ կամ անհաւատ
ըլլալը շատ անգամ իր խառնուածքէն կամ իրեն
դէմը ելած փորձութիւններէն կախում ունի:

Աս մասին անտարակոյս Քրիստոնեայ ճնողք
ալ պաշտօնեաներն ալ պակսութիւն ունին: Սըր-
տեղ որ պատշաճ կրթութիւն կայ, հոն ասանկ ան-
ձինքը շատ քիչ կը լնան:

Արդարև անպիտան տարակոյսներ հանելու չէ.
բայց պատիւ մը չէ Քրիստոնէական կրօնքին ա-
նիկա առանց քննութեան ընդունիլը: Պակ-
սութիւն չէ ան հարցումներն ընելը, բանին վրայ
պայծառ տեսութիւն ունենալու փափաքիլը, (հոգ
չէ թող տարակոյս կոչուի.) որ միշտ կը ծագին

զօրաւոր մտքերուն մէջ, և չեն հանդարտիր մինչև որ իրենց ընդունած բաներուն հիմն ու ապացոյցը պայծառ չտեսնեն: Արդեօք կա՞ն ասանկ անձինք իմ ընթերցողներուս մէջ. անոնց կը յուսամ թէ օգուտ պիտի ընեմ: Կը յուսամ նոյնը ընել անոնց ինչ որ Ղուկաս Աւետարանիչ ըրաւ պատուական Թէոփիլոսին, որ է ցուցնել անոնց՝ իրենց սորված բաներուն ստուգութիւնը, և յիշել անոնց՝ ինչպէս որ նոյն անձը կրնէ Վործք Առաքելոցին մէջ, ան բաղմամբիւ ապացոյցներն որոնց վրայ կրօնքը կը հիմնուի:

Արկորդ կարգի անձինքը՝ որոնց որ կը յուսամ օգուտ ընել, անոնք են որ նախընթաց կարգէն կամաց կամաց տարակոյսի ու անհաւատութեան մէջ ինկած են: Ասանկներուն համար ես կը սուսեմ թէ յոյս կայ: Անոնք կուզեն ապացոյց գտնել, չեն փափաքիր որ ապացոյց չգտնուի: Իրենց վիճակը պատճառ եղաւ որ առաջ առարկութիւններուն նային, և կարելի է բնաւ ժամանակ ու պատահութիւն չունեցան Վրիստոնէութեան ապացոյցներուն մեծ գումարը նայելու: Անոնք անհաւատութեան մէջ են ինկեր, կամ խաբուելով իրենց ընկերներէն կամ նորասիրութիւնով իրենց ակնկալած մտքի խաղաղութիւնը չեն գտեր, և յօժար են կրկին քննութեան ձեռք զարնելու, կամ յաւէտ աս կրօնքին ապացոյցներն առաջին անգամ անաչառութեամբ քննելու:

Սակայն անհաւատներուն աս կարգէն իզատ ուրիշ երկուք ալ կան, որոնց շատ քիչ յոյս ունիմ օգուտ ընելու: Մէկը անոնք են՝ որ անհա-

ւատ եղած են իրենց կիրքերէն , և իրենց ախոր-
 ժակին՝ փառասիրութեանը՝ ազահուծեանը՝ կամ
 վրէժխնդրութեան աղդեցութեանը տակն են :
 Ասոնք ինչպէս որ փաստով անհաւատ չեղան ,
 անանկ ալ հաւանական չէ որ փաստով դարձի
 դան : Ասոնք առանց Թշնամական ոգիի՝ կրօնքի
 վրայ բնաւ չեն խորհիր , և առանց ծաղրաբանու-
 թեան ու երգիծաբանութեան չեն խօսիր : Միւս
 կարգը պաղ՝ կասկածոտ ու խորամանկ սկեպտի-
 կեաններն են , որոնք կը հակառակին նախնա-
 կան սկզբունքներուն , և առածներով կը շփոթեն
 իրենց ընթերցողներն և ունկնդիրները : Կասկա-
 ծով շարժուած կերևան , բայց կրնդունին ա-
 նանկ սկզբունքներ՝ որոնք փաստաբանութիւնը բո-
 լորովին անկարելի և անզօր կընեն , ու մարդը կը
 տանին հիմնական ու ընդհանրական սկեպտիկեա-
 նութեան : Աս կարգը կերևի թէ առջի ժամա-
 նակները եղածին չափ բազմաթիւ և վնասակար չէ :
 Արրորդ կարգը՝ որոնց կը յուսամ օգուտ ընել ,
 բուն Քրիստոնեաներն են : Քրիստոնէական բը-
 նութեանն և ներգործութեանը պայմաններուն
 մէկն է , որ այս կամ այն հիմանը վրայ հաստա-
 տուած հաւատք կամ վստահութիւն մ'ը լլայու է
 Քրիստոնէութեան ճշմարտութեանը վրայ , որ յա-
 ուաջ բերէ գործ և անձնուրացութիւն , և եթէ
 հարկաւորի մինչև անգամ մարտիրոսութիւն :
 Ասանկ վստահութեան մը հիմերը որչափ աղէկ
 որ քննուին՝ կարծէ : Չկայ մարդ՝ որ բանի մը
 վրայ ունեցած վստահութիւնովը գործ մ'ընելու
 պարտաւորած ատենը , ինքզինքը չյարդէ և իր

մտքին խաղաղութիւնը չհատնայ ու աւելի աշխուժութիւն չգայ վրան ան գործն ընելու, երբոր ան վստահութեան հիմը պայծառ կրտսննէ : Աւ մինչև անգամ թէպէտ Քրիստոնէութեան ապացոյցները բոլոր իրենց զօրութեամբը անգամ մը տեսած և անոնց մեծ գումարին վրայ զարմացած ու կատարելապէս համոզուած ալ ըլլայ, սակայն և այնպէս ատենէ մը վերջը այստրպաւորութիւնները կրտկարանան և աղէկ կը լլայ կրկին նորոգել անոնք :

Աերևի թէ այս վստահութեան զգացումը հին ատենի եռանդուն բարեպաշտութեան մէկ տարրն էր : Անոնք կը հաւատային և անոր համար կը խօսէին : Վիտէին որու հաւատացեր էին, վասն որոյ պատրաստ էին նուիրուելու. իրենց խօսքը «ստուգութեան անսխալ ապացոյցներու» և «ականատես» ըլլալու վրայ և «աւելի հաստատուն մարդարէական խօսքերու» վրայ էր : Անոնց քալուածքը ան մարդոցը պէս չէր՝ որ տարակուսելի վեկայութեանց աղօտ լուսովը կերթան խարխափելով, այլ անոնց պէս՝ որ կրտսննեն պայծառ լուսով ու առողջ տեսութեամբ : Յիրաւի իմ միտքըս սահմանի տակ ամփոփել չէ՝ թէ բարեպաշտութիւն կենալու համար այս կամ այնչափ դիտութիւն կամ վստահութիւն ըլլալու է : Աթէ բարեպաշտութիւնը կրնայ տկար լոյս եղած տեղը բուսնիլ և աճիլ, ուր որ տարակոյսներով ծածկուած է, և ճշմարտութեան ուղղակի ճառագայթները բնաւ չզգար, տակաւին պարտաւոր ենք ուրախանալ. բայց աս ալ գիտնալու է որ աճումը

տկար պիտի ըլլայ, և տունկը պիտի զրկուի ան
գեղեցկութենէն և անուշահոտ բուրումէն, որ պի-
տի ունենար եթէ օրուան բացօթեայ պայծառ լու-
սին մէջ բուսնէր: Աս վստահութեան զգացումը
արդէն Քրիստոնեայ եղողին մտքին մէջ յառաջ
բերելու համար էր, որ Առկասու Աւետարանը
գրուեցաւ, և աս զգացումն է որ միանգամայն մտքի
խաղաղութեան և քաջալերութեան տարրներուն
հետ կը յուսամ յառաջ բերել և տպաւորել Քրիս-
տոնէից մտացը մէջ:

Բայց եթէ աս ունիցէ կարգերէն եղողներուն օգ-
տակար պիտի ըլլամ, հարկաւ իրենց գործակ-
ցութիւնովը պիտի ըլլայ: Աս ըսածիս մէջ պա-
րունակուած սկզբունքը՝ նկատմամբ բարոյական
ճշմարտութեան, և արդարեւ ամեն ճշմարտութեան
համար, որուն ստացմանը համար մտադրութիւն
պէտք է, յայտնի է փիլիսոփայութեան և հասա-
րակաց դատողութեանը, ինչպէս Աստուածաշուն-
չին մէջ ալ պարզապէս վկայուած է: Հատ հասա-
րակ բան մըն է մարդոց՝ թէ իրենց ներկայ և թէ
ապագայ շահուցը վերաբերեալ բաներուն վրայօք
“աչք ունենալ ու չտեսնել”:

Բայց հոս սա առարկութիւնը կելնէ դիմա-
ցրս թէ մարդուն հաւատքը իր ձեռքը չէ, այլ
կը պարտաւորի հաւատալ բանի մը՝ ապացոյցի
այսինչ օրէնքներուն համեմատ: Աս առարկու-
թիւնը ես մեծ բան մը չեմ սեպեր, բայց որով-
հետեւ տեսած եմ քանի մը իմացականութեան տէր
անձինք որ անիկա կը բռնեն, և յառաջ կը բե-
րուի բարձր համարում ունեցողներուն անուննե-
րովը, վասնորոյ պէտք է քննել անիկա:

Աս բանին մէջ՝ ինչպէս ասոր նման շատ ուրիշներուն մէջ ալ, առարկութիւնը մասամբ մը ճշմարտութիւն ունի իր մէջը, որ անկէ կեննէ իր հաւանականութիւնը: ՂԷ՛ր է՝ այսինչ սահմաններու մէջ և այնինչ պայմաններու տակ և այնինչ տեսակ ճշմարտութիւններու նկատմամբ, որ մեր հաւատքը մեր ձեռքը չէ, բայց աս ալ կայ որ աս պայմաններն ու սահմանները անանկ են՝ որ մեր ընդունելու յօժար չեղած հետեութիւնը բոլորովին կրբաժնեն աս ճշմարտութենէն (որ է հաւատքը մեր ձեռքը չըլլալու ճշմարտութիւնը), և հետեապէս մեր յօժարութիւնը մեծ ներդործութիւն կրնէ անանկ հետեութիւններն ընդունելու կամ չընդունելու:

Արնդունինք որ հաւատքը ոչ մէկ բանի մը մէջ ուղղակի կամքէն կախուած է, և կան բաներ՝ որոնց մէջ բոլորովին անկախ է անկէ. բայց ան՝ որ կը հաստատէ թէ կամքը ազդեցութիւն չունի հաւատքին վրայ, խիստ նախապաշարեալ կամ իր բոլորովին դարձած բաներուն բնաւ չդիտող մէկն ըլլալու է: Աս բանին մէջ կամքին ներդործութիւնը՝ անոր ուրիշ բաներու մէջ ըրած ներդործութեանը նման է, տեսութեան առարկաներուն վրայ ունեցած ներդործութեանը չափ մեծ է: Արբոր մէկ մարդ մը կը դարձունէ իր աչքը այն կողմը ուր որ ծառ մը կայ, անիկա տեսնելը իր կամքէն կախում չունի. քանի որ ծառ կայ հոն՝ հարկաւ պիտի տեսնէ անիկա, և կը պարտաւորի հաւատալ անոր դոյութեանը. բայց իր աչքը ան կողմը դարձունելը բոլորովին իր ձեռքն է, և այն-

պէս կրնայ ան կողմը չնայիլ, և ամենաբարձր աս-
տիճանի վկայութիւն կենալով ալ՝ չհաւատալ
ծառին գոյութեանը, և չզղալ անոր դեղեցկու-
թիւնն ու ձեին վայելչութիւնը: Մարդ ուղղակի
իր կամքովը չէ որ կիշխէ իր խորհուրդներուն վա-
րայ: Յիրաւի մեր ուղեւորն չէ որ մէկ խորհուրդ
մը միտքերնիս կուգայ, բայց և այնպէս ամենքս դի-
տենք որ մտադրութեամբ և դուրորդութեան ունա-
կութիւններով մեծ չափով մը խորհուրդներնիս
մեր կամքովը կրկառավարուին:

Շիշդ այսպէս է հաւատքն ալ, և ան որ կու-
րանայ ասիկա, կուրանայ անաչառութեան յարգը
և կողմնական ոգիին ու նախապաշարման և անձին
օգուտին ներդործութիւնը մտքին մտայ: Սակայն
այնչափ մեծ է աս ներդործութիւնը, որ մարդկա-
յին բնութեանը սուր դիտողութիւն ունեցող մէկը,
անանկ մէկը՝ որմէն կասկած չը լար թէ իմ հի-
մակու ան պաշտպանած վարդապետութեանս ապօ-
րինաւոր կերպով յարած ըլլայ, կը սեպէ թէ աս
ներդործութիւնը մատէմատիքական ճշմարտու-
թեանց վրայ մեր ունեցած հաւատքին անգամ կը
հասնի: «Մարդիկ» կըսէ «կըբողոքեն սովորու-
թեանէն բանականութեանը և բանականութեանէն
սովորութեանը՝ ինչպէս որ ժամանակին պարա-
գան պահանջէ, հեռանալով սովորութեանէն եր-
բոր իրենց շահը կըպահանջէ, և բանականու-
թեան հակառակելով երբոր ան իրենց դէմ կել-
նէ, որ աս է պատճառը որ իրաւունքի ու անի-
րաւութեան վարդապետութեանը վրայ շարունակ
վէճ կը լլայ թէ գրիչով և թէ սուրով, մինչ գի-

ճերու ու ձևերու վարդապետութիւնը (երկրաչափութիւն) անանկ չէ, որովհետև այդ նիւթին մէջ ճշմարիտը որն ըլլալը հոգերնին չէ. քանզի անանկ քան մըն է՝ որ մարդոց ո՛չ փառասիրութեանը՝ ո՛չ շահուն և ո՛չ ցանկութեանը հակառակ կու գայ: Այս ան զի տարակոյս չունիմ որ եթէ եւոռանկիւնի մը երեք անկիւնները երկու ուղղանկեան հաւասար ըլլալը մարդոց իշխանութեան իրաւունքին կամ իշխանութիւն ունեցողներուն շահուն հակառակ քան մ՝ ըլլար, այդ վարդապետութեանը եթէ չհակառակէին ալ՝ բոլոր երկրաչափութեան գիրքերը էրելով ձեռքերնէն եկածին չափ պիտի խափանէին:

Թող մէկ մարդ մը՝ երբոր առաջին անգամ կըլսէ երկրաչափութեան մէկ առաջարկութիւն մը, քննէ քայլ առ քայլ փաստաբանութիւնը, ու պէտք է հասարայ որ ճշմարիտ է. քայց թող, գիտնայ թէ երբոր միտք առնէ ան ապացոյցները՝ անանկ որ հաւատայ ան առաջարկութեանը, անմիջապէս պիտի կորսնցնէ իր աջ աչքը, բնաւ պիտի չքննէ վերջապետութիւնները կամ պիտի չհասնի ան հաւատքին, որ յառաջ կուգայ միայն օրինաւոր փաստաբանութենէն: Առն ջա՛նք ըրէ որ հասկցնես թէ ճշմարիտ է. ան քեզի կըսէ թէ, Աս չեմ գիտեր, և չեմ տեսներ թէ անանկ է:

Այս անորոյ Քրիստոնէական կրօնքը չընդունողներուն ո՛չ միայն ջատագովութիւն մը չկայ հաւատոյ աս օրէնքին մէջ, (որ է ան օրէնքը՝ թէ երբոր միտքը այսինչ չափ վկայութիւն կը գայ, հաւատքը ինքնին հարկաւ կու գայ.) այլ բուն աս օ-

րէնքին մէջը կը տեսնեմ ես անոնց դատաւար
 տութիւնը : Տարակոյս չկայ որ եթէ Աստուած
 տուեր է այնքան համոզիչ վկայութիւն՝ որչափ որ
 երկրաչափութեան առաջարկութեան մը վկայու-
 թիւնները կը համոզեն, անանկ որ ամեն մարդոց
 կրմնայ միայն անաչառութեամբ քննել բանը,
 ուրեմն անպատասխանի պիտի ըլլան եթէ չհա-
 լատան : Ասիկայ ես կը սեպեմ թէ Աստուած ը-
 րած է . ան կուզէ որ հալատանք՝ բայց միայն վը-
 կայութեան ուժովը, և անանկ վկայութեան՝ որ
 կրնայ հաւանութիւն յառաջ բերել : Թող մէկ
 մարդ մը քննէ այս վկայութիւնը կատարեալ ա-
 նաչառութեամբ, մէկդի ձգելով և բնաւ չմտածե-
 լով հետեւութիւնները թէ ի՞նչ պիտի ելլէ ասկէ,
 այլ պարզապէս քննէ վկայութեան օրէնքներուն
 համեմատ . և եթէ ան ատենը չհամոզուի, ես կը
 հաւատամ որ ինք դատաստանի ան մեծ օրը աս
 բանին մէջ Աստուծոյ առջևը անմեղ պիտի ըլլայ :
 Բայց եթէ Աստուած տուեր է մարդոց այնքան
 վկայութիւն՝ որ միայն օրինաւոր ու կատարեալ և
 բոլորովին անաչառ քննութիւն մը կրմնայ մար-
 դոց ընել հաւատքը հարկաւորապէս յառաջ դա-
 լու համար, ապա ուրեմն եթէ մարդիկ չհալա-
 տան՝ բուն աս օրէնքին մէջն է որ իրենց դատա-
 վարտութեան պատճառը պիտի դանենք : Աչ թէ
 դժուարութիւնը իրենց անանկ մտաւոր հանգա-
 մանաց տէր ըլլալուն մէջ կը կայանայ, որով դիւ-
 րին չեն կրնար հալատալ ապացոյցի, և ոչ ա-
 պացոյց չկենալուն մէջ . այլ իրենց բարոյական
 վիճակին մէջ, սրտին կամ մտքին ան վիճակին

մէջ, որ չթողուր օրինաւոր քննութիւն ընել: «Չե-
րևար թէ կարելի է, կրսէ, Պրդլըր, մէկ պատճառ
մը ցուցնել, թէ ինչո՞ւ համար՝ ինչպէս որ հասա-
րակ գործքերնուս մէջ մեր հասկցողութիւնը ու-
ղիղ գործածելէն կախում ունի բաղդերնիս, ա-
նանկ ալ կրօնական նիւթերու մէջ չկրնար ըլ-
լալ: Այս բանին մէջ մեր հասկցողութիւնը ուղիղ
գործածելը այնքան մեր ձեռքն է՝ որքան որ միւս-
ներուն մէջ»:

Եւ այս տեղը այս ալ կուղեմ ըսել՝ թէ կը տես-
նենք թէ ի՞նչ է ճշմարտութեան յաջողիլը: Հա-
տերը կան որ կը կարծեն, թէ այն՝ այս յաղթու-
թիւնը կրնէ և կը յաջողի, երբոր ազատ կը թո-
ղուի որ կուուի սխալմանց հետ առանց դուրսէն դո-
րութիւն մէջ ձգելու, և կերևայ թէ անոնք կը-
կարծեն որ հարկաւ ճշմարտութիւնը յաղթող
պիտի ելնէ: Բայց փորձը կը ցուցնէ որ ճշմար-
տութիւնը դրեթէ բնաւ չյաջողիր մարդուն պէս
էակին բովը, երբոր անիկա ընդունելէն անձնու-
րացութիւն կամ իրեն հաճելի չեղած պարտա-
ւորութիւններ յառաջ կուգան: Թող ապակա-
նեալ սրտէն իմացականութեան առջևը ելած մա-
ռախուղը ցրուի, և անատենը առաջուց մթու-
թեան մէջ եղած ճշմարտութիւնները արեգակի
պէս կը փայլին: Մարդու իմացականութիւն, բայց
հրեշտակի սրբութիւն և անշահախնդրութիւն ու-
նեցող մէկու մը մտքին առջևը աւետարանի պէս
դրութեան մը վկայութիւնները բոլորովին յագե-
ցուցիչ և համոզիչ պիտի ըլլային:

Արեմն ճշմարիտ է որ եթէ կատարելապէս

անաչառ մտադրութիւն ըլլայ անոր ապացոյցներու
րուն, Վրիստոնէութեան ճշմարտութեան վրայ
վստահութիւն յառաջ պիտի դայ մտքին մէջ այս
վերջի օրերուն մէջ ալ : Ա՛յո՛ . ես կըսեմ ասիկա
աղէկ տեսնելով թէ ի՛նչ տեսակ ապացոյցներով
Վրիստոնէութիւնը հաստատուած է, և՛ ինչպէս
ոմանք կըսեպէն, թէ անոնք կարող չեն անանկ
վստահութիւն յառաջ բերել :

Արեմն հիմա նայինք թէ ի՛նչ տեսակ ապա-
ցոյցներով Վրիստոնէութիւնը հաստատուած է : Այս
այս բանին մէջ պատրաստ եմ ըսելու թէ բա-
րոյական ապացոյց է այն՝ և ոչ թէ մաթեմատի-
քական, հաւանական կոչուած վկայութիւնն է և
ո՛չ թէ ապացուցական : Այց մի՞թէ մաթեմա-
թիքական վկայութիւնը բարոյականէն աւելի՞ վստ-
տահութեան հիմն կըլլայ : Ա՛յո նիւթին վրայ և
այն առարկաներուն վրայ՝ որոնց վրայ որ պատշա-
ճապէս կրնայ դործածուիլ մաթեմատիքական ա-
պացոյցը, մէկ սխալ տպաւորութիւն մը տարա-
ծուած է ոչ միայն հասարակ ժողովուրդին մէջ, այլ
նաև կրթուած մարդոց մէջ ալ : Արեմն թէ թուա-
նշանները չեն կրնար սուտ ըսել, և կերևայ թէ ա-
նանկ տպաւորութիւն մը կայ թէ երբոր անոնք
կըդործածենք՝ արդիւնքը հարկաւ ստոյգ պիտի
ըլլայ : Այց երբոր երկրաչափը դաշտի մը կողմե-
րը և անկիւնները կըչափէ, և հաշիւով պարու-
նակութիւնը կըգտնէ, վստահ է որ այն դաշտին
ճիշդ պարունակութիւնն է գտածը : Իր գտածը
շիտակ է՝ եթէ կողմերը և անկիւնները չափած ա-
տենք սխալած չէ : Այց ասոր վրայ բնաւ վստ-

ասո՛ց չկրնար ըլլալ եթէ ըլլայ ալ՝ մատեմատի-
 քական վկայութեամբ եղած վստահութիւն չէ :
 Իր հաշիւին ճշուութիւնը կախում ունի իր գործ-
 ծիքներուն կատարելութենէն՝ որուն վրայ բնաւ
 չկրնար վստահ ըլլալ : Ա՛յսպէս պիտի ըլլայ բոլոր
 Խառն մատեմատիքական կոչուած հաշիւներուն
 կամ գործողութիւններուն մէջ : Ա՛նանկ նիւթե-
 րու կամ գործողութիւններու հետ կապակցու-
 թիւն ունի արդիւնքը՝ որ ենթակայ չին կրնար
 ըլլալ մատեմատիքական վկայութեան . վասնո-
 րոյ ելած արդիւնքին վկայութիւնը ապացուցա-
 կան չէ : Ա՛ինչև անգամ այն ելած արդիւնքնե-
 րուն մէջ՝ որոնց վրայ ամենամեծ վստահութիւն
 կը դրուան, և կերևի թէ կայ՝ ու գուցէ իրօք ա-
 նանկ պատահեր է որ կատարեալ ճշդութիւն մը
 կայ, տակաւին այն զգացուած վստահութիւնը մա-
 թեմատիքական վկայութենէն յառաջ եկած չէ :
 Իր գործածած վկայութեան բնութիւնը հասկը-
 ցող ոչ մէկ մարդ մը պիտի ըսէ՝ թէ Ա՛յս ապա-
 ցուցական տրամաբանութիւնով հաստատեցի թէ
 դալ տարի խաւարում պիտի ըլլայ : Իր ակնկա-
 լութիւնը կախում է ոչ թէ մատեմատիքական
 վկայութենէն, այլ լնութեան օրէնքներուն ան-
 փոփոխութեանը վրայ իր ունեցած հաւատքէն :

Ա՛յլ մինչև անգամ այն օրէնքներուն չհակառա-
 կելով ալ՝ անկարելի չէ որ մէկ նոր դիտարմը մը
 գայ և երկրին կամ լուսինին ընթացքը խոտորէ, և
 անանկով անոնց մէկը մէկու վերաբերական դիւրբը
 աւրէ :

Ի՛սոյց ես՝ կըրսէ առարկողը, զո՞ր մատեմատի-

քա ի և անոր վկայութիւնը տուած վստահութեանը վրայ կը խօսիմ : Ան ատենը ես ալ կըսեմ թէ Օրու մաթեմատիքան իրողութեան չգար : Աչ մէկ եղելութիւն մը ապացուցական տրամաբանութեամբ կրնայ հաստատուիլ : Աչ մէկ բան մը և ոչ երբէք եղած կամ ըլլալիք բանի մը վրայ մէկ հաստատութիւն մը կրնայ ապացուցական տրամաբանութեամբ հաստատուիլ , այսինքն ապացուցուիլ զուտ մաթեմատիքական վկայութիւնով : Ասոր հաւանութիւն պիտի տան այն ամենը որ կը հասկընան մաթեմատիքական վկայութեան բնութիւնը . և ցուցնելը դժուար բան մը չէ : Արնայ ապացուցուիլ որ ամեն ուղղանկիւն եռանկեան մէջ երկու սրանկիւնները հաւասար են մէկ ուղղանկեան . բայց միթէ կարելի է իրօք եղած մէկ եռանկիւնի մը վրայ ապացուցանել ասիկա : Վաչէ՛ քու ուղղանկիւն եռանկիւն ըսածդ , և տես թէ կրնաս անոր վրայ ապացուցանել : Աչ . չես կրնար ապացուցանել թէ քու քաշածդ ուղղանկիւն եռանկիւն է : Անոր ճիշտ ուղղանկիւն եռանկիւն ըլլալը կամ չըլլալը՝ քու գործիքներուդ և զգայարանաց կատարելութենէն կախուած է : Ասանորոյ մաթեմատիքական տրամաբանութիւնը բնաւ չհաստատեր , և չկրնար հաստատել մէկ եռանկիւնի մը համար թէ այս ուղղանկիւն եռանկիւն է . բայց անոր խօսքը այս է , Սենք թէ այս ուղղանկիւն եռանկիւն է , սեպէ թէ անանկ է , և անատենը երկու սրանկիւնները հաւասար պիտի ըլլան ան ուղղանկեանը : Իրականապէս կեցած բանի մը վրայ բնաւ բան մը չհաստատեր ,

այլ միայն այսինչ ենթադրութեան ու այնինչ
 հետևութեան մէջ եղած կապակցութիւնը : Աւս-
 տի ինչ վստահութիւն որ եղած կամ ըլլա էք
 բանի մը վրայ երբէք կունենանք , ոչ թէ մատե-
 մատիքական՝ այլ բարոյական կամ հաւանա-
 կան կոչուած վկայութիւնէն ելած է կամ կելնէ :

Աւ ոչ այսչափ միայն՝ այլ ասկէ ալ անդին
 կանցնիմ և կը հաստատեմ , թէ այն վստահու-
 թիւնը անգամ որ կը ըլլայ ենթադրութեան ու
 հետևութեան մէջ եղած կապակցութեանը վրայ ,
 (որ միայն այն է այն տեսակ ենթադրական ճշմար-
 տութիւնը որ կրնայ ապացուցուիլ ,) անանկ վկա-
 յութիւնէ կախում ունի որ մատեմատիքական չէ :
 Մատեմատիքական տրամաբանութեամբ բան մը
 հաստատելու համար երկու բան հարկաւոր է :
 Առաջինը այս է որ տրամաբանութիւնը սկսելու
 է ենթադրութիւն մը իրեն առաջին սկզբունք
 դնելով : Այլ թէ սկսէ եղելութիւնէ մը , մատեմա-
 թիքական տրամաբանութիւն չըլլար : Աւ երկ-
 րորդը այս է որ տրամաբանութեան ամեն քայլը
 առնելու է բանին բնութեանը մէջ եղած զուտ
 ապացոյցով : Տրամաբանողը իր տրամաբանու-
 թեանը այսպէս յառաջ երթալը միայն յիշողու-
 թեան վկայութիւնով կը գիտնայ , որ անշուշտ
 մատեմատիքական կամ ապացուցական վկայու-
 թիւն չէ : Առանց ասոր՝ բոլոր իր տրամաբանու-
 թիւնը աւագէ չուան մը պիտի ըլլայ :

9906

Ինչ պիտի ըսենք ուրեմն անոնց ըսածին պատ-
 շաճութեանը կամ յաւէտ յիմարութեանը՝ որոնք
 մատեմատիքական վկայութիւն կուզեն Վրիս-



տոնէական կրօնքին ճշմարտութիւնը ապացուցանելու համար, երբ այն վկայութիւնով կարելի է բնաւ մէկ եղելութիւն մը հաստատել: Այլ ինչ քսենք այն պարծանքին՝ թէ մատեմատիքական վկայութիւնը ամենէն գերազանց է. որ ատեն այն վստահութիւնը որ մէկ մարդ մը կը զգայ այս կերպ տրամաբանութիւնով ապացուցուած ենթադրական հետեւութեան մը վրայ, տակաւին այն ալ մատեմատիքական չեղած վկայութեանէ կախում ունի:

Ինչաւ ես անպատիւ չեմ ընել մատեմատիքան: Արվկայեմ անոնց բազմաթիւ բաներու գործածութիւնը և մեծ օգտակարութիւնը. կզմայլիմ այն ճարտարութեանը՝ որով այնքան ճշգումեամբ կը շինուին այն գործիքները որ ենթադրեալ գիծերու և ձևերու վրայ ապացուցուած ճշմարտութիւնները կենաց գործնական նպատակներուն այնքան ճշգումեամբ ու յաճախակի կը գործածուին: Օարմանքով կընայիմ տիեզերքին կազմութեանը, որուն մէջ պարունակուած բաներուն ձևին՝ զօրութիւններուն և շարժմունքներուն մէջ այնքան ճշգումեամբ կը տեսնուին այս նոյն վերացեալ առաջարկութիւններուն վրայօք ապացուցուած ճշմարտութիւնները: Իայց ես կուզեմ որ այս գիտութիւնը իր սահմանին մէջ մնայ, և իրեն չը յատկացնէ անանկ վստահութիւն մը որ ինքիրմէն չունի, ու ուրիշ նիւթերու վրայ մեր ըրած եղբակացութիւններուն վրայ կասկած հանելու պատճառ կըլլայ:

Արեմն կամ մատեմատիքական վկայութեանէն

զատ վկայութիւններով ալ վստահութիւն կը ըլլայ, և կամ՝ ուրիշ եղելութիւն կամ ուրիշ բանի վրայ բնաւ վստահութիւն չկայ. և չկայ կենալու տեղ Տիմնական սկեպտիկեանութենէ ասդին, որ կուրանայ մարդկային կարողութիւններուն զօրութիւնը, և կը կասկածի ամեն բանի, և վերջապէս իր կասկածելուն ալ կը կասկածի:

Արեմն եթէ ասանկ վստահութիւն կրնայ ձեռք ձգուիլ՝ մեր յաջորդ խնդիրը պիտի ըլլայ, թէ ՚նչ են անոր Տիմերը: Այլ ասոնք են վեց:

Առաջինը այն է՝ որ Բանականութիւն կը կոչուի, որով մարդ կ'ամանայ ուղղակի՝ ներքնապէս և հարկաւորապէս, և կը հաւատայ անհրաժեշտ վստահութիւնով մը այնինչ Տիմնական ճշմարտութիւններուն՝ որոնց վրայ կը հիմնուին ամեն ուրիշ ճշմարտութիւնները, և բոլոր դատողութիւն ըսուած բանը և կամ մակածութիւնը: Ասով է որ կը հաւատանք մեր գոյութեանը և անձնական նոյնութեանը, և ան առածին թէ Ամեն դիպուած մէկ պատշաճ պատճառ մը ունի: Ասիկայ ամեն մարդ ունի, և իր սահմանին մէջ իր իշխանութիւնը կատարեալ է: Ասկէ բարձր իշխանութիւն չկրնար ըլլալ. ասող տուածէն աւելի կատարեալ ու բացարձակ վստահութիւն մէկ բան մը չկրնար տալ: Այլ մէկ մարդ մը կրնայ ուրիշ բանի մը աւելի մեծ վստահութեամբ հաւատալ, քան որով կը հաւատայ իր գոյութեանը. և եթէ կրնանք ենթադրել որ անանկ բան մ' ըլլայ որ մէկը իր գոյութեանը վրայ կասկածի, ան մէկ կասկածին մէջ հարկաւորապէս կը պարունակուի կասկած ամեն ուրիշ բանի վրայ:

Ստատիստիկան երկրորդ հիմք ներքին շահութանն է . ասով կիմանանք ինչ որ մեր ներսիդին մտքերնուս մէջ կըլլայ : Ստատիկը կըլլանք թէ կըխորհինք և կզգանք :

Երրորդ հիմք է զգայարանաց վկայութիւնը : Չեմ ուրանար որ զգայարանքները կրնայ ըլլալ որ մեզ խաբեն , և երբեմն կըխաբեն . բայց կը հաստատեմ թէ զգայարանաց վկայութիւնը բոլոր մարդկային ազգին կատարեալ վստահութեան հիմ մըն է ընդհանրապէս խօսելով : Տեսնելը հաւատալ է անոնց , և աս վկայութենէն ելած վստահութենէն աւելի մեծը չեն կրնար ըմբռնել : Արչափ ալ կասկած ձգելու ջանան ոմանք այս բանին վրայ , տակաւին յայտնի է որ ոչ մէկ դիպուած մը , թող ըլլայ ջուրին դէպի իր ալը վազելը , կրնայ բնութեան օրէնքներուն աւելի մեծ խանգարում մ' ըլլալ , քան թէ պիտի ըլլայ մարդոց այսինչ բաներու վրայօք և այնինչ պարագաներու մէջ իրենց զգայարանքներէն խաբուիլը : Այնքան մեծ հրաշք մըն է երեք միլիօն մարդոց հաւատալը թէ դուրս կելլէին և մանանայ կը ժողուէին՝ թէ տեսան՝ շոշափեցին և ճաշակեցին անիկա , երբ իրօք ատանկ բան չեղաւ , որքան որ պիտի ըլլայ եթէ ջուրը ետ դէպի իր եկած տեղը վազէ կամ բաժնուի և կենայ դիզուի :

Ստատիստիկան չորրորդ հիմք մշտնջենական վկայութիւնն է : Ասոր վաւերականութենէն է՝ որ ինչպէս առաջ ըսի , մատիւմատիքական տրամաբանութեան վստահութիւնը կախուած է . առանց ասոր վրայ կատարեալ վստահութեան ոչ մէկ վկա-

յուժիւն մը կը բռնուի դատաստանի ատեանին
 առջևը և ոչ յանցաւոր մը կը դատապարտուի :
 Արքայ յիշողութիւնը կատարելապէս պայծառ ու
 որոշ կերպով կը վկայէ բան մը, բնաւ տարա-
 կոյս չմնար մտքին մէջ :

Հինգերորդ հիմը ճարտոյց վկայութիւնն է :
 Ասոր վրայ ալ գրեթէ նոյնը պիտի ըսեմ ինչ որ
 ըսի զգայարանքներուն վրայ : Տարակոյս չկայ որ
 վկայութիւնը երբեմն կը խաբէ մեզ . բայց բա-
 ւական մտադրութիւն եղած չէ սա կէտին, թէ
 վկայութիւնը կրնայ անանկ անձինքներէ, և այն-
 քան մարդոցմէ և անանկ պարագաներու մէջ
 տրուիլ, որ վստահութեան հիմ մ'ըլլայ, որմէն ա-
 լելի վաւերականը չկրնար ըլլալ : Աս հիմա չեմ
 ըսեր թէ Քրիստոնէական կրօնքին համար եղած
 վկայութիւնը այս տեսակ է, այլ կը ըսեմ թէ Աթէ
 այս տեսակը չէ, դժուարութիւնը ապացոյցին տե-
 սակին մէջ չկայանար, այսինքն մաթեմատիքական
 ապացոյց չըլլալուն մէջ, այլ այս մասնաւոր բա-
 նին մէջ վկայութեան աստիճանին մէջ եղած պի-
 տի ըլլայ :

Վստահութեան վեցերորդ հիմն է արամաբանու-
 թիւը : Տրամաբանութեան մաթեմատիքայի մէջ
 ալ վստահութեան հիմ մ'ըլլալը ամենը կրնդունին :
 Աւ որիչ առարկաներու վրայ ալ ասկէ ելած
 վստահութիւնը հաւասարապէս կատարեալ ու
 բացարձակ կրնայ ըլլալ : Արքայ Աօպէնսոն իր
 կղզիին եզերքը մարդու ոտքի նշան տեսաւ, այն-
 քան վստահ եղաւ հոն մարդ կեցած ըլլալուն, որ-
 քան պիտի ըլլար եթէ աչքովը տեսնէր : Ասիկա

տրամաբանութիւն էր . իր զգայութեամբը գիտցած մէկ իրողութեանէն ուրիշ այնպէս չգիտցածը մակարեւրել էր . բայց ինչ վճռական մակարեւրութիւն : Անանկ սկեպտիկեան մը եղած չէ բնաւ որ ասոր կասկածի : Աս տեսակ ապացոյցը ամեն աստիճան հաւանականութեան ընդունակ է , ամենէն աղօս նշոյլէն մինչև ամենապայծառ լոյսը : Հատ անգամ կրպահանջէ շատ մը պարագաներ մէկ տեղ առնել . և այնպէս ալ շատ բաներու մէջ մէկ բացարձակ փաստ մը յառաջ չբերեր : Սակայն ուրիշ բաներու մէջ յառաջ կը բերէ . և ան պարագան որուն կուզեմ որ մտադրութիւն ըլլայ , աս է որ տրամաբանութիւնը այնքան հաստատուն և վստահ հաւատքի հիմն կրնայ ըլլալ , որ անկէ աւելին չկրնար ըլլալ :

Արդ՝ ասոնք են վստահութեան հիմերը , և ամեն մէկը իր յատուկ սահմանը ունի : Ասոնցմէ առջի երեքին ամեն մէկը՝ որ են բանականութիւն , ներքին ծանօթութիւն և զգայարանք , ինքնին իրենց սահմանին մէջ կ'ստար' լսպէս բաւական են , և արդարև հալ' և ուրիշ օգնութեան տեղ կրննայ : Իսկ վերջին երեքը անանկ չեն . յիշողութեան՝ վկայութեան՝ և տրամաբանութեան յառաջ բերած փաստերը կրնան փոփոխակի օգնել և մէկըմէկ հաստատել : Արջին երկուքն են՝ այսինքն վկայութիւնը և տրամաբանութիւնը , որ կը կազմեն Վրիստոնէութեան արտաք'ն կոչուած փաստերը . և եթէ ասոնց մէկը կրնայ վստահութիւն յառաջ բերել , շատ աւելի (եթէ աստիճանաւ վստահութիւն կը լլայ) պիտի բերեն , երբոր երկուքը մէկէն նոյն բանը հաստատեն :

Ա՛ս նիւթին վրայ երկարեցի , որովհետեւ ինձի
 կերևի թէ շատ մարդիկ մեկ հիւանդոտ և կանա-
 ցի սովորութիւն մը կը տածեն մտքերնուն մէջ . կաս-
 կածելու ամեն ան նիւթերուն վրայ , որ մաթե-
 մաթիքայի կամ բնական գիտութեան գոնէ փոքր
 ինչ երևոյթ մը չունին վրանին , և յատկապէս կը-
 րօնքի վրայ : Ա՛յնչափ խօսուած է ու այնքան կար-
 ծիքներ ու կասկածներ եղած է բուն կրօնքին այլ
 և այլ կէտերուն վրայ , որ կասկածի զգացումը
 կրօնքէն անցաւ ան վկայութեանն ալ , որով կրօն-
 քը կը հաստատուի : Ա՛սանորոյ կուզեմ որ որո-
 շակի զգացուի թէ այն տեսակ վկայութիւնը՝
 որով Քրիստոնէութիւնը կը հաստատուի , ընդու-
 նակ է վստահութիւն յառաջ բերելու . և ես կը-
 հաստատեմ թէ Քրիստոնէութեան վկայութիւն-
 ները անանկ են որ երբ կատարեալ ու օրինա-
 ւոր քննութիւն ըլլայ , անանկ վստահութիւն յա-
 ռաջ կը բերին : Ա՛նոնք այն տեսակ վկայութիւնն
 են , որ կը կոչուին բարոյական ապացոյց : Ան շատ
 նիւթեր որոնց վրայ՝ վկայութեան պակասութե-
 նէն կամ անոնք մարդկային իմացականութեան
 սահմանէն վեր բաներ ըլլալուն համար , իմաս-
 տութեան և զօրաւոր մտքի նշան է կասկածիլը՝
 կան առարկաներ ալ որոնց վրայ հաւասարապէս
 տկար մտքին նշան է կասկածիլը , և զօրաւորի նշան է
 կատարեալ հաւանութիւն տալը : Արհաւատամ թէ
 անցաւ անօրը , որ ատեն կասկածելու և սկեպտի-
 կեանութեան սովորութիւնը գերագոյն իմացակա-
 նութեան նշան մը կը կարծուէր :

Քրիստոնէական կրօնքը կրնայ ստուգապէս
 ապացուցուիլ, և ասիկա ցուցնելը առջի ճառին մէկ
 նպատակն էր: Նայց ան փաստերը՝ որոնցմով կապա-
 ցուցուի, փնտռած ատեննիս երկու ճամբայ կըր-
 նանք բռնել: Կամ խնդիրի տակ եղած եղելու-
 թիւնները պիտի քննենք վկայութեան օրէնքնե-
 րովը, ճիշտ ինչպէս որ ուրիշ եղելութիւնները
 պիտի ընէինք, կամ թէ առաջուց անոնց հաւա-
 նականութիւնը կամ անհաւանականութիւնը կըր-
 նանք դատել: Առջի կերպով ըրած ատեննիս
 ամենեւին առաջուց հաւանականութեանը կամ ան-
 հաւանականութեանը պիտի չնայինք, եղելութիւն-
 ները թէ հրաշալի ըլլան, թէ հասարակ դէպ-
 քեր, մեր դատողութիւնը անոր համեմատ պիտի
 չճշտենք: Ինքզինքնիս անկողմնական դատաւորի
 մը տեղ պիտի դնենք որ կեցած ենք վճիռ կըտ-
 րելու միայն վկայութեան նայելով: Աս ընթացքը
 միայն համաձայն է մակաճական փիլիսոփայու-
 թեան ոգւոյն, որ նախնական ենթադրութեանց
 նայելով բան մը չվճռեր, այլ բոլորովին պատշա-
 ճապէս վաւերականացած եղելութիւններու ա-
 ռաջնորդութեանը կրնայի. և ոչ մէկ հետևու-
 թիւն մը կըմերժէ, որ ան եղելութիւններուն գո-
 յութիւնը հարկաւորապէս կըպարունակէ: Թող
 անոնք՝ որ Քրիստոնէութեան վրայ դատողութիւն
 պիտի ընեն, աս ոգւով մօտենան անոր և մենք

գոհ կըլլանք : Ասանկ նիւթի մը վրայ չկայ բան մը այնչափ հակառակ այն իմաստուն զգուշութեանը որ եղելութիւններուն կապուած՝ վկայութիւնը կըկշռէ , և միտքը պատրաստ կըպահէ համոզման , քանթէ մէկ վճիռ մը տալ , որ բանին առաջուց երեցած անհաւանականութիւնովը պաշարեալ միտքի մը ազդեցութիւնովը եղած է :

Եւ այց այս ընթացքը որչափ ալ որ ուղիղ փիլիսոփայութեան հակառակ է , ուղղակի ժամանակին ոգիէն յառաջ կուգայ : Մարդկային միտքը՝ որ դիւրահաւանութեան և սկեպտիկեանութեան ծայրերուն մէջ տեղերը շարունակ կըտարուբերի , հիմա ինքզինքը սկեպտիկեանութեան սահմանին քովերը կըհաստատէ : Դամանակ մը գրականութեան ծաղկելէն առաջ ալ վերջն ալ՝ յաճախակի գերբնական ներգործութիւններ ըլլալուն սովորական էր հաւատալը : Եւ այց երբոր շատ բաներ՝ որ գերբնական ազդեցութեան կըտարուէր , գիտութեան լուսովը բնական պատճառներէ ծագիլը յայտնուեցաւ , և ասանկով շատ մը սնապաշտութիւններ ջնջուեցան , անատերը մարդիկ անցան միւս ծայրը , և տկարութիւն ու սնապաշտութիւն սեպուեցաւ բնականէն իզատ ուրիշ ունիցէ պատճառի մը կարելիութեանը անգամ հաւատալը : Այս զգացմանը դէպի սկեպտիկեանութեան վերջին ծայրը երթալու յառաջադիմութիւնն էր , որ շատերը աշխարհին լուսաւորութեան յառաջադիմութիւնը կըկոչէին . և սկեպտիկեանները ասիկա պատեհ առնելով ամեն կարելի եղանակաւ կըպնդէին և կըջանային : Եւ այց մարդկային մտքին ընդհանուր հակումը

բնաւ բոլորովին անհիմն չկրնար ըլլալ . ասիկա մէկ մեծ ճշմարտութիւն մը կրցուցնէ : Մարդուս գերբնական ներդործութեան հաւատալու հակամիտութիւնն ալ այնպէս է :

Եւ երբոր մարդիկ սնապաշտութեան անդիի ծայրը մղող զօրութեան անդրադարձութիւնը (որ է հիմա ալ անոնց սկեպտիկեանութեան անդիի ծայրը վաղելը) անցնի, և մարդիկ մէկ մեծ փորձառութեան մը լուսոյ մէջ ինքզինքնին հաստատեն, անատենը տարակոյս չունիմ որ ընդհանրապէս պիտի ընդունուի, որ թէպէտ բնութեան ընթացքը միակերպ է, որով փորձառութեան հիմ կրդնէ և անոր արժէք կուտայ, բայց կայ բան մըն ալ այս կարդադրութեանը մէջ մեր գերբնական բանի հաւատալու հակամիտութեանը պատասխանող, կան զօրութիւններ բնականներէն բարձրագոյն, և կապակցած՝ տիեզերքին բնական ու բարոյական կառավարութեանը հետ, որ կրնան գործել մարդուն բարելաւութեանը համար :

Բայց այս՝ ինչ որ պիտի ըլլայ ասկէ ետեւ, հիմա անանկ չէ : Քրիստոնէութեան վկայութիւններուն հարադատ զօրութիւնը միշտ կրխամիանուի ան եղելութիւններուն անհաւանական ըլլալուն վրայ եղած լոկ ենթադրական խօսքերով : Հիմա մենք ասանկ անհաւանականութիւն չենք ընդունիր, մենք անանկ կրնդունինք թէ մէկ մարդ մը իրաւունք չունի որ բնազանցական կշիռ մը շինէ, և անոր մէջ ինքիրմէ մէկ ենթադրութիւն մը մէկ փոքր վաւերական վկայութեան մը դիմացը դնէ : Ասիկա վերստին այն խաւար դարերուն

դառնալ է. ասիկա կրօնքի վրայ դործածել կրկայ
այն առածները, որ շատոնց մերժուած են բնա-
կան դիտութիւններուն մէջէն: Ասանորոյ ժա-
մանակին պիտոյքին նայելով՝ ու ոչ թէ Քրիս-
տոնէութեան ապացոյցին էական մասը սեպելով
է որ մէջ պիտի բերեմ քանի մը խորհրդածու-
թիւններ, ցուցնելու Վստուծմէ յայանութիւն
մը տրուիլը հաւանական ըլլալը:

Մէկ դիպուածի մը հաւանականութեանը վրայ
դատադութիւն ընելու համար, քիչ մը տեղեկու-
թիւն ունենալու ենք անոր պատճառներուն կամ
անիկա յառաջ բերելու էակին դիտաւորութիւն-
ներուն վրայ: Աթէ ասոնց վրայ դիտութիւն մի
չունենանք, իրաւունք չունինք դիպուածի մը հա-
մար ըսելու թէ անիկա հաւանական է, կամ ան
հաւանական: Աթէ դիտնանք ամեն ներդործո
պատճառները, կամ դործողին ունեցած բոլ,
դիտաւորութիւնները, ստուգութեամբ կրնա
դուշակել թէ ինչ պիտի պատահի: Աւստի յայտ է
է թէ մէկ դիպուած մը որ շատ հաւանական կա
դրել թէ ստոյգ կերևի մէկու մը, կրնայ ըլլալ թ
բողոքովին անհաւանական երևի ուրիշի մը: Ա
շատ մարդիկ աղէկ ճանաչողութիւն ունին որ ի-
րենք չին կրնար դիտնալ թէ ինչ պատճառն
աղղեցութիւններ և նպատակներ կրնայ ըլլալ այս
բաղմակնճիւնն ու սքանչելի տիեզերքին մէջ, ա-
նանկ որ շատ վկայութիւն պէտք չէ անոն, որ
տեսնեն թէ շատ դիպուածներ որ եղան՝ մեկ ա-
ռաջուց խիստ անհաւանական պիտի երևու են.
մանաւանդ երբ ինքնիշխան էակի մը գոյ ոյը

վրայ պիտի ըլլայ մեր դատողութիւնը . և մենք շատ քիչ տեղեկութիւն ունինք անոր բնաւորութեանը ու նպատակներուն վրայ :

Իսոյց ճիշդ այսպէս է մեր առջևի եղած խնդիրը : Խնդիրն այս է թէ արդեօք առաջուց հաւանական էր որ Մատուած յայտնութիւն մը տար մարդոց : Մտոր վրայ միայն անատենը կրնանք դատողութիւն ընել՝ երբ տեղեակ ենք Մատուծոյ բնութեանը վրայ, և դիտենք թէ ինչ կարօտութիւն կայ որ անոր միջամուխ ըլլալը կը պահանջէ : Թէ այն կրնայ ասանկ յայտնութիւն մը ընել ու հաստատել անիկա հրաշքներով՝ ամեն աստուածեան ընդունելու է, և փնտուելու բանը պարզապէս այս է, թէ Մատուած՝ իբրև ինքնիշխան գործող և բարոյական կառավար, աղէկ պիտի սեպէ՞ յայտնութիւն մը տալ :

Վիտեմ որ ոմանք կըսեն թէ ասիկա անանկ նիւթ մըն է որուն վրայ մեզի չիյնար խորհիլ : Մատուած՝ կըսեն, անհուն էակ մըն է . և իր խորհուրդներն ու գործողութիւնները այնքան բազմախառն պիտի ըլլան, որ յանդգնութիւն պիտի ըլլայ մեզի պէս արարածներուն՝ որ երեկուան արարածներն ենք և կըրնակինք տիեզերքին այս հեռու անկիւնը, դատել թէ ինչ բան հաւանական կամ անհաւանական է անոր կառավարութեանը մէջ : Մտքներարան կարգացող պղտիկ տղայ մը աւելի աղէկ դատողութիւն կրնայ ընել մէկ ընդարձակ տէրութեան մը գործքերուն և նպատակներուն մէջ ինչ հաւանական ու ինչ անհաւանական ըլլալուն վրայ, քան թէ մարդիկ Մատուծոյ կառավարութեանը մէջ :

Այս խօսքին երբեմն անկեղծութեամբ ըսուիլը
 ուրանալու կամք չունիմ . բայց շատ անգամ խա-
 բէութիւն մը կապուած է ասոր հետ՝ որ բնաւ
 անվնաս չէ : Ինչպէս ուրեմն , ասոր բոլորովին
 իրաւացի ըլլալը , և ի՞նչ կը հետեւի . միթէ յայտ-
 նութիւն մը տրուելուն հաւանականութեանը դէմ
 փաստ մը . ո՛չ բնաւ : Պարզասլէս սա կը հետեւի
 թէ յայտնութեան մը հաւանական կամ անհաւա-
 նական ըլլալը առաջուց չենք կրնար գիտնալ .
 վասնորոյ անաչառ մարդը յայտնութեան վկա-
 յութիւնները պիտի դատէ , ճիշդ ինչպէս որ
 ուրիշ դիպուածի մը պիտի ընէր : Աւ բոլոր
 մեր ուղածն ալ այս է : Թող առաջուց անհաւա-
 նականութեան դադարի մը չպաշարէ միտքը , ու
 մենք յօժար ենք անմիջապէս եղելութիւններուն
 և փաստերուն նայելու : Իայց այսպէս է անոնց
 մտքին վիճակը , որ մարդը այնքան տգէտ կըրցու-
 ցնեն այն նիւթերուն վրայ . իրենց նպատակը
 այնպէս մտքի վիճակ մը յառաջ բերել է . չեմ
 կարծեր , այլ յաւէտ բոլոր բանին վրայ տարակոյս ու
 անստուգութիւն ձգել : Արհաստատենթէ մենք տգէտ
 ենք Աստուծոյ նպատակներուն վրայ , ու նոյն ատե-
 նը՝ այն տգիտութենէն յայտնութեան մը անհաւա-
 նականութիւնը կուզեն ցուցնել : Իայց կը թուի
 թէ մոռցեր են՝ թէ բան մը ինչպէս որ հաւանա-
 կան դատելու համար , ճիշտ անանկ ալ անհաւա-
 նական դատելու համար առաջուց անոր վրայ գի-
 տութիւն ունենալու ենք : Աւ այս անձինքը քանի
 որ բարեպաշտական ակնածութիւնով մը կը խոր-

շին Մատուծոյ ինչ ընելիքին ու ինչ չընելիքին
 վրայ դատողութիւն ընելու յանդգնելէն, ծածկա-
 բար կընդունին թէ իրենք գիտեն անոր նպատակ-
 ները, կամ գոնէ գիտեն թէ այսինչ պարագայի
 մէջ հաւանական չէ որ այս կամ այն գործը ընէ :
 Մենք կըսենք թէ ով որ կը հաստատէ թէ հաւա-
 նական չէ որ Մատուած յայտնութիւն մը տայ, իր
 վստահութեանը համեմատութիւնովը Մատուծոյ
 խորհուրդներուն և նպատակներուն վրայ դատու-
 թիւն ունենալը իրօք կ'ենթադրէ, և անոր համար կը-
 հարցընենք թէ Աւրիկէ ստացաւ այդ դատութիւնը :
 Մատուած իրեն ասանկ բան մը չըսաւ, քանզի ասիկա
 յայտնութիւն մը պիտի ըլլար : Փորձառութենէն
 ալ չկրնար գիտնալ, վասնզի ասիկա եղական բան
 մըն է. մենք չ'ենք գիտեր թէ Մատուած ինչ կընէ
 ուրիշ աշխարհներու մէջ մեր վիճակին մէջ եղող
 արարածներուն, եթէ կան անանկներ : Մտութեան
 միօրինակ ընթացքը առարկութիւն մը չկրնար ըլ-
 լալ, որովհետեւ քննութեան տակեղած բուն խնդի-
 րը սա է թէ արդեօք այս ընթացքը կընդմի-
 ջահատի՞ թէ ոչ : Ամեն մարդ կընդունի թէ Մատ-
 ուած կատարեալ դիւրութեամբ կրնայ ընել ա-
 նիկա, և ասանկ մարդ մը ինչպէս կրնայ գիտնալ
 թէ ասանկ բան մը իր բարոյական կառավարու-
 թեանը կարօտութիւններուն հարկ չըլլար :

Թէպէտեւ ես բնաւ հաւանութիւն չեմ տար ան
 խօսքին թէ մարդիկ այնպէս տգէտ են այս նիւթին
 վրայ : Այն թէ «առաջուց» բառը իր ճիշդ ու ամե-
 նաբարձր իմաստովը գործածենք, կարելի է յան-
 դգնութիւն պիտի ըլլայ մեզի Մատուծոյ ինչ ընէ :

լիքին վրայ առաջուց դատողութիւն ընել : Իայց
 Վրիստոնէական կրօնքին վրայօք բոլոր մեր փաս-
 տերուն մէջ իբրև ընդունուած կրքոնենք բնա-
 կան կրօնքին մեծ ճշմարտութիւնները : Չափով
 մը գիտութիւն ունինք Վստուծոյ վրայ , և անոր
 մարդկային ազգին հետ ունեցած վարմունքին վրայ ,
 և յանդգնութիւն չէ մեզի դատել թէ մարդոց
 յայտնութիւն մը տալը համաձայն կուգայ այն բը-
 նութեանը՝ որչափ որ գիտցուած է անիկա , և նման
 է ուրիշ բաներու մէջ իր վարմունքին : Վսիկայ է
 ճշմարիտ խնդիրը : Վստուծոյ բնութեանը վրայօք
 մեր գիտցածներուն մէջ կայ բան մը մարդուն վի-
 ճակին հետ կապակցած , որ հաւանական կամ
 անհաւանական կրնէ անոր յայտնութիւն մը տալը :

Աւ ինչո՞ւ պիտի չոտայ . ես չեմ գիտեր թէ ին-
 չո՞ւ այնքան տարօրինակ բան մը սեպուելու է Վս-
 տուծոյ մարդոց յայտնութիւն մը տալը : Աթէ չեմ
 սխալիր , շատ աւելի տարօրինակ պիտի ըլլար եթէ
 չտար : Վշխարհը երբէք ստեղծել ու մարդուն պէս
 էակ մը անոր մէջը դնելը կրնայ ըլլալ որ զար-
 մանալի ըլլայ , բայց եթէ կը հաւատանք որ Վստ-
 ուած անիկա բանական ու կրօնական բնութիւնով
 ստեղծեց , զաւակ մը ըրաւ անիկա , որ է ընդու-
 նակ՝ իրեն հետ հաղորդակցութիւն ունենալու և
 իր քովը միայն գտնելու երջանկութեան ամենա-
 բարձր ազգիւրը և բարոյական կատարելութեան
 միջոցները , ուրեմն խիստ զարմանալի բան մը պի-
 տի ըլլար եթէ Վստուած ինքզինքը անոր չյայտ-
 ներ : Հայր մը իր զաւակին հետ չըխօսիր :

Իանականութեան սկզբունքներով ասիկա կա-

պատուցուի որ եթէ մարդը անմեղութեան վիճակին մէջ մնար, իր բնութեանը ամենաբարձր յառաջադիմութիւնը և երջանկութիւնը ձեռք չէր կրնար ձգուիլ, եթէ ոչ Մատուծոյ հետ հաղորդակցութիւն ունենալով: Մարդը որո՞ւն հետ որ յօժարութեամբ հաղորդակցութիւն պահէ, անոր նմանութիւնը կառնէ: Այլ որովհետև Մատուծ ամեն աղնութեան աղբիւրն է, ինչո՞ւ համար պիտի չյայտնէ ինքզինքը ան անմեղ էակին, որ ինք ստեղծեց անանկ կարողութիւններով, որով կրնայ ճանչնալ սիրել և վայելել զինքը: Խօսքը իր նախնական և բարձրագոյն իմաստովը առնելով, բնական վիճակը Մատուծոյ հետ ուղղակի հաղորդակցութիւն ունենալու վիճակ մըն է: Այլ ասոր համեմատ Մատուծաշունչն ալ անհաւատներուն, և պարտաւոր եմ ըսել շատ Մատուծաբաններուն ալ ըրածին պէս զարմանալի բան մը չսեպելով Մատուծոյ մարդոց հետ հաղորդակցութիւն ունենալը, անոր վրայ իբրև հարկաւ այնպէս ըլլալու բան մը կրիսօսի. և ամեն աղգաց աւանդութիւններն ալ մարդոց չաստուածներուն հետ յաճախ հաղորդակցութիւնը անմեղութեան դարու մը հետ կապեր են: Այլ բանին բնութեանը մէջ, և ոչ մարդկային բնութեան ներքին ազդմունքներուն մէջ բան մը կայ, որ յառաջ բերէ այն զարմանալիութիւնը՝ որով անհաւատները կըրցուցնեն Մատուծմէ յայտնութիւն մ' ըլլալը. այլ ընդհակառակը կայ: Չարմանալի բան է որ երբէք մարդ կայ. զարմանալի է որ Մատուծ կայ: Մէկ միտքով մը ամեն բան զարմանալի է, և հաւասարապէս զարմանալի: Նայց

ընդունելով թէ Մատուած կայ, և ստեղծեր է մարդուն պէս արարած մը, զարմանալի Վ' որ յայտնութիւն մը ընէ անոր: Արդարեւ սեպել թէ Մատուած մարդը ստեղծեր է կրօնքի ընդունակ՝ որն որ կը պահանջէ իր բնութեան բարձրագոյն մասին յառաջադիմութեանը համար, և նոյն ատենը իբրև հայր հաղորդակցութիւն չընէր անոր հետնոյն յայտնութիւններովը, որով միայն կրնայ կատարելագործիչ նոյն բնութիւնը, ասիկա Մատուծոյ վրայ նախատինք ձգել պիտի ըլլայ ու հակասութիւն:

Եւ ոչ մինչև անգամ անմեղութեան վիճակի մէջ բաւական պիտի ըլլար Մատուծոյ իր գործքերովը ըրած յայտնութիւնը, որովհետև անոնցմով զլիսաւորապէս իր բնական ստորագելիքը կը յայտնէ, և ոչ թէ ան սրբութիւնը և բարոյական կատարելութիւնը՝ որմէ կէլլեն այն մեծ պարտաւորութիւնները և հաղորդակցութեան կապերը և անոր ծառայութեանը ան մեծ հաճոյքը: Մինչև անգամ հիմա կը գտնուի անանկ մարդ՝ որ աս ընդհանուր օրէնքներով կազմուած մանուածոյ և անթեքելի բնութեան մէջ խարխափելով կաղաղակէ, «Արանի թէ գիտնայի թէ ո՛ւր կրնամ գտնել զինքը, որ երթայի մօտենայի բուն իր աստուծին», և ո՛րչափ աւելի դժգոհ պիտի ըլլար մարդ անմեղութեան վիճակին մէջ, մնալու առանց անմիջական հաղորդակցութեան Մատուծոյ հետ: Տիեզերքին վրայօք ամենէն փառաւոր ու ամենէն բընական գաղափարը զՄատուած իր բանական ու հոգևոր արարածներուն շայրը դնելն է. և անոնք իբրև մէկ ընտանիք մը ըմբռնել, հաղորդակցու-

Թիւն կենալով անոր ու անոնց մէջ իբրև անձնական էակներ, և այն՝ իր կամքն ու բնութիւնը անոնց յայտնելով, և անոնք հնադանդելով ու պաշտելով անիկա :

Արդարև՝ մենք առաջուց չէինք կրնար գիտնալ թէ երբ անմեղ էակ մը մեղանչէր, ի՞նչ պիտի ըլլար : Ինչպէս անանկ պիտի սեպէինք թէ արդարութիւնը իր ընթացքը յառաջ պիտի տանի : Իսկ նայելով մարդկային ազգին վիճակին վրայ՝ որ յայտնապէս չափով մը շնորհք գաած են Աստուծոյ առջևը, ընդունելով անոր անձրևը և արեգակին պայծառ ճառագայթները և պտղաբեր եղանակները, այնքան պատճառ պիտի ունենայինք մարդուն բնութեանէն և իր վիճակէն խորհելու, թէ ճշմարիտ կրօնքի պէս քան մը ըլլալու է երկրի վրայ, որքան պիտի ունենայինք խորհելու թէ ճշմարիտ գիտութիւն մը կենալու է երկրի վրայ : Ասան զի մարդուն բարոյական ու կրօնական բնութիւն ունենալը այնքան յայտնի է, որքան իմացական բնութիւն ունենալը : Մարդ ուր որ գտնուեր է և կրգտնուի՝ միօրինակ և միշտ չարին ու բարիին մէջ որոշում՝ ըսեր է ու կրնէ, և պաշտեր է ու կրպաշտէ մէկ գերազոյն էակ մը : Աթէ քանի մը անձինք եղած են որ անաստուածութիւն դաւաներ են, և եթէ մենք հաւատանք որ բողոքովին անկեղծ են, թէ և շատ բաներ կան որ չեն թողուր որ հաւատանք, ասիկա աւելի չապացուցաներ թէ մարդը կրօնական բնութիւն չունի, քան թէ քանի մը անձանց՝ ընկերական բնութեան ազգմունքներուն յաղթելով, ինքզինք-

նին ընկերութենէ քաշելը կապացուցանէ թէ մարդը ընկերական բնութիւն չունի :

Այլ ալ ան սկզբունքները որ կասկած կուտան մարդուն՝ ապառնի հասուցման և գերադոյն զօրութիւններու գոյութեան, լոկ երկրորդական կամ ուրիշներէն վար են : Ասոնք յատկապէս այն ըսկզբունքներն են՝ որով մարդ անասունէն կորոշուի : Այն սկզբունքներն են՝ որ ինչպէս ամեն պատմութիւն կը ցուցնէ, անոնց մշակութեանը և կատարեալ զարգացմանը հետ մարդուն ուրիշ ամեն կարողութիւնները իրենց ամենաբարձր կատարելութեանը կը հասնին, իսկ անոնց խանգարուելովը և նուաստանալովը բոլոր միւս կարողութիւնները գէշ կը թուածին մը կանեն, չզարգացած կը մնան : Արդարև այնքան ազդու տեսնուած է այն զօրութիւններուն ներդրութիւնը՝ որ բոլոր առջի տէրութիւնները կը նայէին որ անոնցմէ օգնութիւն առնեն, և կը ջանային կապել կրօնքին զօրութիւնը մարմնաւոր բազուկին զօրութեանը հետ : Այս սկզբունքներէն է յաւէտ և ոչ ուրիշներէն՝ որ շարժառիթներ ելած են խիստ հաստատ որոշումներու երկայն համբերութեան և կամաւոր ազբատութեան ու մարտիրոսութեան : Ա կը ցոյց տայ անցեալ բաներուն պատմութիւններուն մէջէն ամեն այն գործքերը՝ որոնք կամ ուղղակի մարդուն կրօնական բնութենէն ելած են, կամ անով եղանակաւորած են, և անատենը պիտի ըլլայ անիկա ուրիշ աշխարհի մը և ուրիշ էակներու պատմութիւն մը :

Գիտեմ որ այս սկզբունքը խիստ շատ տեսակ

արդիւնքներ ունեցած է . և երբեմն ալ երևակայ-
 յել կըրցած իդ չափ յիմար և անարդ արդիւնքներ :
 Չկայ անտեղութիւն մը որ մարդիկ ընդունած չեն ,
 չկայ խստութիւն մը որ ի գործ դրած չեն , չկայ
 երկրաւոր բարիք մը և ոչ բնական զգացում մը
 որ զոհած չեն կրօնքի անունով . և բուն աս կրօ-
 նական արարողութեանց զանազանութիւնը և ան-
 տեղութիւնը՝ մարդոց անոնց վրայ ունեցած ան-
 կեղծութիւնովը մէկտեղ , անհաւատներուն գլխա-
 ւոր մէկ փաստը եղած է և տակաւին է , ցուցնե-
 լու թէ ամեն կրօնք ոչինչ են : Նայց աղէկ պատաս-
 խաներ են ասոր թէ « Արչափ տարօրինակ որ ըլլան
 այն հակասութիւնները , ու որչափ ծաղրալի այն ար-
 արողութիւնները , որոնց մարդկային բնականու-
 թեան հպարտութիւնը կը զիջանի , այնքան աւելի
 զօրաւոր կըլլայ մեր վկայութիւնը թէ կրօնքը մար-
 դուն բնութեանը մէջ հիմ մը ունի » : Արդա-
 բև ոչ մէկ ճշմարտութիւն մը կրնայ աւելի հաս-
 տատուիլ թէ փիլիսոփայութիւնով և թէ պատ-
 մութիւնով , քան թէ աս ճշմարտութիւնը՝ թէ մարդ-
 կային բնութիւնը անանկ կազմուած է , որ հար-
 կաւ կրօնք մը պիտի ունենայ : Մարդը կրօնա-
 կան բնութիւն ունի , որ այն իր գոյութեան մէկ
 հիմնական և տարրական կազմիչ մասն է . այս
 բնութիւնը ինքզինքը պիտի յայտնէ : Թող վեր-
 ցուի ճշմարիտ կրօնքը , սուտ կրօնք մը անոր տեղը
 կուգայ : Ասիկա ճշմարտութիւն մըն է , որուն վրայ
 շատ հարկաւոր կըսեպեմ որ հասարակութեան
 միտքը պայծառ ըմբռնում ունենայ . վասն զի եթէ
 մարդկային ազգին ընկերութիւնը յառաջ պիտի

երթայ, ատիկայ պիտի ըլլայ մարդուն ունեցած կարողութիւնները մշակելով և ո՛չ թէ զանոնք ջնջել ջանալով, վասնորոյ առանց կրօնքներուն մէջ որոշում ընելու բուն կրօնքի դէմ խօսիլը հարկաւ այդ յառաջագիմութիւնը պիտի տկարացնէ :

Արեմն մարդ կրօնական բնութիւն ունի . և ի՛նչ նպատակաւ կրնայ այն իմաստուն ու բարի Աստուծոյ ընդունիլ պահել մարդկային ազգը, եթէ այն այս բնութիւնը ուղիղ կերպով իգործ չդնէ իր սեպհական առարկաներուն նայելով : Այլ սեպելը թէ Աստուծոյ մարդուն չտուաւ անանկ առարկայ՝ որուն վրայ այդ բնութիւնը գործածէ, նման է սեպելուն թէ անիկա կրստեղծէ աչք առանց լուսոյ և ականջ առանց ձայնի, կամ թէ կրդնէ մարդը իբրև իմացական էակ՝ անանկ խառնափրնգոր աշխարհի մը մէջ, ուր ո՛չ կարգ, ոչ կանոն և հետեապէս ոչ ալ գիտութիւն կրնայ կենալ : Աստուծոյ գործքերուն և անոր մարդոց հետ ունեցած վարմունքին բոլոր վերաբանութիւնը կը ցուցնէ որ եթէ մարդ կրօնական բնութիւն ունի, իրաւացի է ակնկալել որ այն բնութեանը ուղիղ գործածութիւնը հնարաւոր պիտի գտնենք, և աշխարհիս վրայ ճշմարիտ կրօնքի պէս բան մը կենալու է :

(Նշանօթութիւն . Ա :)

Նայց եթէ կրօնքի ընդունակ բանական էակ մը կորսնցուցած ըլլայ իր բարոյական կերպարանքը, և հետեապէս Աստուծոյ ճշմարիտ ճանաչողութիւնը, և եթէ Աստուծոյ դիտաւորութիւնը ըլլայ վերստին նորոգել անիկայ, ուրիշ ճամբով չկրնար

ըլլալ եթէ ոչ ուղղակի յայտնութիւնով : Ասի-
 կա երկու պատճառներով յայտնի կը ըլլայ : Ասի
 պիտի գտնուի անանկ բաներ , որ անհրաժեշտ հարկ
 պիտի ըլլայ ասանկ էակի մը գիտնալ , որոնք ու-
 ըիշ կերպով չկրնար գիտնալ եթէ ոչ անմիջա-
 կան հաղորդակցութեամբ : Ասոնք այն տեսակը
 բաներ են , որոնց մտայ բնութիւնը ոչ մէկ ձայն
 մը կամ խօսք մը բնաւ չկրնար ունենալ : Ինչ-
 պէս սա հարցման պատասխանը թէ Աստուած
 երբէք մեղք պիտի ներէ՞ թէ ոչ . և եթէ պիտի
 ներէ՞ ինչ պայմաններով : Աւ երկրորդ՝ հնար չէ՞
 որ մեղանչական էակ մը դառնայ Աստուծոյ՝ սրբ-
 բութեան և սիրոյ , առանց Աստուծոյ սրբութեա-
 նը և սիրոյն մտայ անանկ յայտնութիւն մը ըլլա-
 լու իրեն որ բնութենէն չըլլար : Մեր տեսնել
 կրցածին նայելով՝ կերևի թէ մէկ գործադրութիւն
 մ՝ ըլլալու է բարոյական նմանողութեան այն մեծ
 սկզբունքին , որ Առաքեալը կը յիշէ ըսելով , թէ
 «Մենք ամենքս բաց երեսով Տէրօջը փառքը որ-
 պէս թէ հայելիի մէջ տեսնելով , նոյն պատկերին
 կրնորոգուինք փառքէ ի փառք» : Աւրեմն եթէ
 հաւանական է որ Աստուած բան մ՝ ընէ մարդ-
 կային պատժապարտ ազգը իրեն դարձնելու ,
 նոյն աստիճանաւ հաւանական է որ յայտնութիւն
 մը տայ , տարբեր ամեն այն յայտնութիւններէն որ
 նար է բնութեան երբէք տալ : Արչափ որ մենք
 կրնանք տեսնել , անկարելի պիտի ըլլար իրեն ու-
 ըիշ կերպով ընել նոյնը :

Աւ ինչ որ այսպէս բանին բնութենէն կրնանք
 մակարտել , նոյնը եղելութիւններն ալ բոլորովին

կը հաստատեն : Մէկ անկողմնասէր դիտողութիւն մը երկրի այն մասերուն վիճակին, ուր յայտնութեան լոյսը չկայ, վճռաբար կը ցուցնէ թէ առանց անոր մարդուն նորոգութեան յոյս չկայ : Մէկ կատարեալ ու աղէկ փորձ մ' եղած է այս բանին : Այս փորձին ընդարձակութիւնը հազարաւոր տարիներ եղած է, որ այնքան ատենի մէջ բաւական ժամանակ եղած է ամեն սկզբունք փորձի դնելու, ամեն հակամիտութեան հետեւութիւնը տեսնելու, և մարդուն ունեցած ամեն ճիգն ի գործ դնելու : Այս փորձն եղած է ամեն կլիմայի՝ ամեն ձև կառավարութեան և ամեն պարագայի տակ, թէ բարբարոսներու և թէ կրթուածներու մէջ . և անանկ անձինքներու ձեռքով, որոնք իմացական կարողութիւններու կողմանէ աշխարհիս պարծանքն եղեր են, և անանկ ազգերու մէջ՝ որոնք ամենամեծ յառաջագիմութիւն ըրեր են դրականութեան՝ գիտութեան և արուեստի մէջ : Աւստի ինչ որ մարդը առանց օգնութեան ըրեր է կրօնական խաւարը փարատելու և աշխարհին բարոյական հիւանդութիւնները բժշկելու, իր կրնալ ընելիքին ալ աղէկ օրինակ մը կրնայ սեպուիլ :

Մարդոց առանց յայտնութեան անհրաժեշտ վատթարացած և նուաստացած ըլլալը և այնպէս շարունակելիքը անոնց գլխաւոր նպատակն եղաւ ցուցնել, որոնք ջանացին յայտնութեան մը հաւանականութիւնը ապացուցանել : Ասիկա ըրած են շատ կարգալով ու փնտուելով, և այնքան ընտանի է այս նիւթը որ ընդարձակ պիտի չխօսիմ անոր վրայ, այլ դո՛հ պիտի ըլլամ քանի մը

Հարկաւորագոյն կէտերուն վրայ համառօտ տեղեկութիւն մը տալու :

Եւ նախ՝ Մատուածային միութեան այն մեծ վարդապետութիւնը առանց յայտնութեան կորսուեցաւ : Մեն տեղ մարդոց բազմութիւնը բնական առարկաներու կամ բնութեան անձնաւորեալ զօրութիւններուն կամ կուռքերու կամ աստուածացեալ մարդոց երկրպագող եղան . և եթէ քանի մը փիլիսոփայ այս բանին յիմարութիւնը տեսան և իրօք Մատուծոյ միութիւնը ընդունեցին , յաւէտ հասարակութիւնը ծաղրելու և արհամարհելու համար էր ըրածնին , քան թէ անոնց օգուտ ընելու միտքով : Եւ կերևի թէ անոնք կրբունէին այս վարդապետութիւնը իբրև մտածութեան առարկայ , և չունէին սովորութիւն մի միայն անհուն Մատուծոյն երկրպագութիւն ընելու , կամ այլոց սորվեցնելու թէ պարտ է պաշտել անիկա : Ինչ եղած պիտի ըլլայ այս երևելի նիւթին վրայ այն փիլիսոփային գործնական կուրութիւնը և անվստահութիւնը որ իր մահուան ատենը այս ալ կրխնդրէ իր մէկ բարեկամէն , որ չմոռնայ աքաղաղ մը զոհել իրեն համար այսինչ չաստուածին : Եւ այս ընողը Սոկրատէս փիլիսոփայն է : Ինչ եղած պիտի ըլլայ Օգոստեան դարուն ատենը երկրի վրայ ամենէն լուսաւորեալ ժողովուրդին մտքին վիճակը , երբ կրնան արձան մը կանգնել իր անառակութեանը և մոլութեանը համար համբաւաւոր կնկան մը , հետեւեալ տողը վրան փորագրելով , և կարգելով անիկա մէկ չաստուածուհի մը ոչ նուաստ բուն Վախախնամութենէն :

«Միսպագոս ծերակոյտը և շինգ շարիւրոց ծերակոյտը Յուլիա () գոստա Նախախնամութեան չաստուածուհւոյն» :

Երկրորդ՝ հեթանոս ազգերը բոլորովին զուրկ էին Մատուծոյ վրայ այն ճանաչողութենէն, թէ անկա սուրբ է և կատարեալ բարոյականութիւն ունի, և կրվարէ բարոյական կառավարութիւն մը՝ որուն սկզբունքները սրտին խորհուրդներուն կը հասնին : Բնութեան մէջ այս գիտութեանը հիմն ըլլալը կամ չըլլալը մեզի հարկ չէ որոշել, բայց յայտնի է որ առանց Մատուծոյ վրայ այս ճանաչողութեանը սուրբ ու հոգևոր կրօնք չկրնար կենալ : Բնդհանրապէս մարդոց զգացումները՝ կիրքերը և միջև անգամ ցանկութիւնները Մատուծոյ տալով, այնպէս կը մբռնէին անոր բարոյական բնութիւնը : Եւ չկրնար օգուտ ընել մարդուն կրօնք մը, որ հիմնուած է պաշտուելու առարկային վրայօք ասանկ գաղափարի մը վրայ : շարկաւ անոր ազդեցութիւնը պիտի վատթարացնէ մարդը :

Իսկ երրորդ՝ Մատուծոյ բնութեանը վրայ եղած այս տգիտութիւնը առաջնորդած է՝ ինչպէս բնականապէս պիտի ըլլայ, պաշտամունքի անանկ արարողութիւններ մտցունելու, որ Մնոր ընդունելի չկրնար ըլլալ, և գաղափար մը յառաջ բերած է թէ կրօնքը և բարոյականութիւնը զատ բաներ են, որ ասիկա շատ ընդհանուր էր հեթանոս ազգաց մէջ և շատերը կատարելապէս տարբեր բաներ կը ճանչնային զանոնք : Ինչ որ հեղինակին մէկը ըսած է շնդկաստանցւոց վըրայ, կրնանք քիչ մը փոխելով ամեն հեթանոս

աղգաց վրայ ըսել, «Մենք աղէկ բնութիւններն
 որ կրգտնուին անոնց մէջ, բնաւ չտեսայ թէ
 կրօնքէ յառաջ եկած է կամ անոր հետ կապակ-
 ցութիւն մը ունի. որովհետեւ բնաւ իրենց հաւա-
 տացած ապառնի հատուցումները բարի գործքե-
 րու կամ առաքինի վարուց խոստացուած չեն»
 Աւասոր համեմատ, կըսէ, «բնաւ չտեսայ մար-
 դոց անանկ ցեղ մը՝ որոնց բարոյականութիւնը
 այնքան նուաստ ըլլայ, որոնք այնպէս չամչեան
 ստութիւննին բռնուած ատենը, և այնքան անհոգ
 ըլլան իրենց կարգէն չեղող մէկ դրացիին տառա-
 պանքին վրայ. որոնց սովորական և ընտանեկան
 խօսակցութիւնը այնքան անպարկեշտ ըլլայ, կամ
 թէ աւելի վայրենի ու բարբարոս եղողներուն պէս
 այնքան յօժարութեամբ մարդու արիւն թափեն»
 Մենք տեղ զօրաւոր է կրօնքն ու բարոյականու-
 թիւնը այսպէս մէկզմէկէ զատելու հակամիտու-
 թիւնը. և մէկ բան մը ասոր չափ կործանիչ չկը-
 նար ըլլալ միանգամայն ճշմարիտ Աստուածաշ-
 տութեան և բարոյականի, կամ աւելի մահաբեր՝
 մարդուն ամեն օգուտին: Արբ մարդիկ կըխորհին
 զԱստուած հաճեցնել ընծաներով՝ արարողու-
 թիւններով և մարմնոյ տանջանքով, առանց նկա-
 տում ունենալու արդարութեան՝ բարեսիրութեան
 և սրբութեան, անատենը անձնական երջանկու-
 թեան և ընկերական կարգադրութեան ամեն հի-
 մերը խանգարած պիտի ըլլան: Աւ ո՞րչափ աւե-
 լի այնպէս պիտի ըլլայ երբոր երկրպագեալ ա-
 ռարկային բնութիւնը անանկ է որ քաջալերու-
 թիւն ու գրգիռ կուտայ ամեն կերպ անիրաւու-

Թեան, և ինչպէս շատ անգամ կըլլայ երբոր բնութեանէ դուրս անգթութիւն՝ գինեմոլութիւն՝ և անպարկեշտ խօսուածքներն ու շարժուածքները փոխանակ արգիլուելու՝ կրօնական ծէսերու մէջ մասը կըլլան: “Արբոր այն լոյսն որ մարդուն մէջ է, խաւար կըլլայ, ալ որչափ մեծ է այն խաւարը”: Ասիկա շատ կարևոր կէտ մըն է, որովհետև ոչ մէկ սուտ կրօնք մը երբէք սորվեցուց կամ կրնայ բնաւ սորվեցնել ու պատշաճ կերպով հաստատութիւն տալ բարոյականի կատարեալ դրութեան պէս բանի մը. և բարոյականութիւնը առանց կրօնքին օգնութեանը բնաւ պատշաճ հիմ մը չկրնար դնել թէ անհատից և թէ ընդհանուրին յառաջադիմութեանը:

Չորրորդ՝ առանց յայտնութեան մարդիկ շատ աղօտ ու տարակուսական գաղափարներ ունեցած են հոգւոյն անմահութեանը վրայ, և որչափ որ այս հիմնական վարդապետութիւնը ընդունուած է, անոր ազդեցութիւնը եղած է յաւետ մարդիկ հոս իրենց վարքին մէջ զսպել, քան թէ յարմարցնել անոնք հանդերձեալին: Քիչխօսիաներուն մեծ մասը այս հաւատքը ռամկական նախապաշարում մը կըսեպէին, և անոնք որ կրնդունէին, իբրև կասկածելի կըբռնէին: Մինչև անգամ Աիկերոնը որ բազմահոգութեամբ սորված էր Մոկրատէսի ապացոյցները և իրմէ ալ ուրիշները աւելցուցեր էր վրան, կըսէ՝ “Ասոնցմէ որք ճշմարիտ է Աստուած գիտէ, իսկ որք շատ հաւանական ըլլալը շատ մեծ խնդիր մըն է”: Աւ խիստ շատերն ալ որ կրնդունէին, այն վարդապետութեանը

Հետք անանկ վարդապետութիւններ . . . | |
 կրկորսնցնէին անոր գործնական բարի ազդեցու
 թիւնը : Ոմանք կրքունէին անիկա բաղդի և հար-
 կաւորութեան վարդապետութեանը հետ , և ոմանք
 Պղատոնին պէս հոգւոյ փոխադրութեան վարդա-
 պետութեանը հետ . ոմանք ալ վերոյիշեալ նոր-
 կաստանցւոց պէս բոլորովին կրքաժնէին մարդուն
 այս տեղի բարոյական վարքը հոգւոյն ապագայ վի-
 ճակէն : Ա անորոյ իբրև գործնական վարդապե-
 տութիւն «կեանքն ու անմահութիւնը աւետարա-
 նով լոյսի բերուեցաւ» : Մ. յս միայն յայտնեց ան-
 նիկա անանկ բարձր հեղինակութեամբ և ստու-
 դութեա՝ք և անանկ վարդապետութիւններու հետ
 կապակցած , որ ունենայ իր կատարեալ ներգոր-
 ծութիւնը իբրև գործքի շարժառիթ : Չկայ մէկ
 աւելի գեղեցիկ ու աւելի փիլիսոփայական բան մը ,
 քան թէ այն կերպը որով Քրիստոնէութիւնը
 կրտարածէ միւսոյն բարոյական օրէնքները և
 երջանկութեան հիմնական պայմանները ներկայ
 և ապառնի կենաց վրայ միանգամայն , անանկ որ
 երկնից կեանքը ուրիշ բան եղած չէ , այլ հոս
 սկսուած կեանքին տարածութիւնը և պայծառու-
 թիւնը : Մ. յս կողմանէ Քրիստոնէութեան երևան
 գալը՝ Աւտոնեան դրութեան յայտնուելուն կրնմա-
 նի . վասն զի ինչպէս որ անիկա՝ նախնեաց վարդա-
 պետութեանը հակառակ կրցուցնէ թէ միւսոյն օ-
 րէնքները կը վերաբերին թէ երկրաւոր և թէ երկ-
 նային մարմիններուն միօրինակ , թէ օդին մէջ
 տատանող փոշիի մասնիկին , և թէ իր շրջանին
 մէջ վազող մոլորակին , անանկ ալ Քրիստոնէ-

ութիւնը միութիւն և պարզութիւն կրբերէ բարոյական դրութեան մէջ, և կը ցուցնէ թէ ամենախոնարհ մանուկ մը որ բարոյական և պատասխանատու էակ մըն է, և ամենաբարձր հրեշտակապետը միւնոյն բարոյական օրինաց հպատակ են :

Մ. յս չորս կէտերուն նայելով՝ որ են Մատուծոյ միութիւնը՝ Մնոր բարոյական բնութիւնը՝ Մնոր մատուցուելու պաշտօնին այն տեսակը որ ընդունելի կը լայ իրեն, և հոգիին անմահութիւնը, կրնայ ըլլալ որ սեպուի թէ նարաւոր էր մարդոց հասնիլ աս գիտութիւններուն : Բայց որո՞ւ համար որ ասիկա ճշմարիտ ըլլայ, հասարակութեան համար ճշմարիտ չէ թէ կրնային հասնիլ :

Բայց կան՝ ինչպէս առաջ յիշուեցաւ, ուրիշ անանկ կարգ մը ճշմարտութիւններ, անոնցմէ ոմանք հիմնական և գիտնալու անհրաժեշտ հարկաւորութիւն ունեցող ըլլալով՝ որ չի մացուեցան և չեն կրնար իմացուիլ բնութենէն : Մասնաւորապէս ասանկ է նախ՝ այն ճշմարտութիւնը թէ Մատուած կրնայ մեղք ներել այսինչ պայմաններով : Այլ թէ մէկ հիմնական վարդապետութիւն մը ունի բնական կրօնքը, այս է թէ Մատուած արդար է : Մ. յնքան զօրաւոր կը զգար ասիկա Սոկրատէս, որ կը տարակուսէր թէ արդեօք կրնայ ներել Մատուած մեղքը : Մեղաւոր եղողի մը այնքան անհրաժեշտ հարկաւորութիւն ունի այս բանը, որ մինչև որ անիկա չգիտցուի, կրօնքի բանաւոր դրութիւն մը չկրնար կազմուիլ. և թէպէտ բնութեան մէջ եղած քանի մը բաներ կրնայ ըլլալ որ յոյս

մը տան, թէ ինչպէս շատ ուրիշ չարիքներու համար, անանկ ալ բարոյական չարեաց համար մէկ դարման մը գտնուի պիտի. բայց և այնպէս ասոնք այնքան մութ բաներ են որ բնաւ չեն կրնար գործնական արդիւնք մը յառաջ բերել, և կըթուի թէ ամեն պատճառ կայ հաւատալու որ այս նիւթին վրայօք տիրած ընդհանուրին համոզումը յայտնութենէն առած է իր ծագումը:

Բայց երկրորդ՝ եթէ վստահացած ըլլայինք որ Մատուած մեղաց թողութիւն կուտայ, տակաւին անկնար պիտի ըլլար մեզի գիտնալ թէ ինչ պայմաններով: Երրորդ անյեալ դարերուն պատմութեանը մէջ ասկէ հակառակ բան մը չկայ, որ արդի աստուածեաններէն ոմանք կըսեն թէ բանականութիւնը կըրցուցնէ որ Մատուած զղջումով կըսերէ մեղքը: Այլ ըսուէր թէ բանականութիւնը կըրցուցնէ որ մարմնոյ տանջանքը և մեծածախ զոհերը և ծանր կրօնական արարողութիւնները թողութեան պայմաններ են, շատ բան պիտի գտնուէր պատմութեան մէջ անիկա հաստատելու: Բայց կրնանք աստուածեանը հրաւիրել որ ցուցնէ մէկ հեթանոսական հաւատոյ հանգանակ մը որունմէկ մասն ըլլայ ասիկա, կամ յառաջ բերէ Վրիստոնէութենէն զատ ուրիշ կրօնքի ջերմեռանդ հետևող մը, որ կըբռնէ հիմա այդ վարդապետութիւնը: Անենալով Մատուածաշունչին լոյսը, պայծառ կըտեսնենք, որ Մատուած չկրնար պատշաճապէս ներել յանցաւորին առանց զղջման իբրև պայման. զղջում ըսելով մէկ կատարեալ նորողութիւն մը իմանալով ոչ միայն վարուց, այլ և վարքի սկզբունքներու, շարժառիթներու և սր-

տին գաղտնի զգացումներուն : Բայց ո՞վ երբէք
 լսեր է ասոր պէս զղջում մը իբրև մէկ հատուած
 մը ուրիշ կրօնքներու հանդանակին : Այլ կրնամ
 հարցնել թէ Ո՞վ լսեր է որ մէկ աստուածեան
 մը ասանկ զղջում ըրեր է տակաւին աստուածեան
 մնալով : Աւրիշ կրօնքներու մէջ շատ աղէկ բնու-
 թիւններ կը ցուցուին , որոնց համար կըսեպեն թէ
 զղջման կարօտութիւն չկայ : Բայց բնաւ չեմ լսեր
 որ մէկ իրօք մոլի և անառակ մարդ մը զղջացեր
 է՝ բառին բարձր ու միայն ճշմարիտ իմաստովը ,
 առանց աւետարանին շարժառիթներուն : Օղջու-
 մը՝ մինչև անգամ իբրև թողութեան պայման , ա-
 վետարանի դրութեան յատուկ է , և իբրև պատ-
 մական եղելութիւն միայն ավետարանի շարժա-
 ռիթներով յառաջ եկեր է : Ճշմարիտը սա է
 որ աստուածեանները այս ըստ մասին ճշմարտու-
 թիւնը Աստուածաշունչէն փոխ առին , և կըզոր-
 ծածեն անիկա ցուցնելու թէ կարօտ չենք բուն
 ան Վրքին որմէ անիկա առած են : Ատարեւա-
 պէս արդար Աստուծոյ մը մեզք ներելը նարա-
 ռոր կամ աննար ըլլալը , և ինչ կերպով ներելը
 մեծ խնդիր մըն է բարոյական կառավարութեան
 մէջ , և չկայ վերաբանութիւն մը մարդկային
 օրինաց գործադրութենէն , և բնաւ բան մը չենք
 կրնար գտնել Աստուծոյ բնական օրինաց մէջ ,
 տեսնելով թէ ինչ անթեքելի և խիստ կանոնե-
 ըրով անոնք ի գործ կըդրուին , որ մեզ առաջնոր-
 դէ հաւատալու թէ զղջումը մինակ անանկ դո-
 րութիւն մը ունի բարոյական յանցանքները քա-
 լելու :

յո՞ւրիշ ինչո՞ւ չենք զղջում : Ինչո՞ւ չենք զղջում : Ինչո՞ւ չենք զղջում :

Եւ երկրորդ՝ եթէ մարդը ջանայ ինքզինքը մոլութեան գերութենէն ազատել, չկրնար գիտնալ թէ արդեօք Մատուած պիտի հաճի՞ անոր և պիտի օգնէ, թէ ինք մինակ պիտի մնայ որ աշխատի հոսանքին դէմ անօգնական ջանքովը : Թէ Մատուած մէ իբրև անձնական Վակէ մը ուղղակի կուգան շնորհք և երկնային օգնութիւն փորձութիւններով պաշարած մեղաւորին, որով մարդուն տկարութիւնը այնքան պաշտպանութիւն կը գտնէ, և խեղճութիւնը այնքան մխիթարութիւն, անանկ բաներ են՝ որոնց վրայ հնար չէ որ բնութիւնը երբէք ծանօթութիւն մը տար : Իսկ Մատուծոյ երկընցած ձեռքն է այն՝ առաջնորդել և հաստատ բռնելու իր խաւարի մէջ մնացած և տկար արարածները : (Օ՛ան . Ի :

Եւ եթէ մարդկային ազգը առանց յայտնութեան այսպէս խաւարի մէջ էր, հարկաւ կը հետևի որ վարքերնին ալ խանգարած պիտի ըլլայ : Իարոյական խաւարը մարդուն յօժարութեամբը եկած՝ հարկաւորապէս գործնական չարութիւն կը բերէ իր հետը : Առանց իշխանութիւն ունեցող բարոյականի հիման մը, ինչպէս է Մատուծոյ օրէնքը, առանց բարոյական կրթութեան ընդհանուր դրութեան մը, առանց Մատուծոյ բարոյական կառավարութենէն և ապառնի հատուցումէն ելած շարժառիթներուն՝ հանդերձ կրօնքով մը որուն վարդապետութիւնները և արարողութիւնները ըստ մեծի մասին հակառակ գան մարդուն բարոյական բնութեան պահանջումներուն, չենք կրնար զարմանալ հետզհետէ Կէշի երթալու հակամիտութեանը վրայ որ

ամեն տեղ կրտեսնուի, և ո՛չ ստուծեան և ան-
 դժուծեան ու անթիւ անառակութեանց տա-
 րածուելուն: Աթէ հասարակութեան մէջ քանի
 մը առաքինութիւններ մշակուեցան, ասիկա գլխա-
 ւորապէս նահանգներուն ծաղկելու միջոցներուն ե-
 դաւ, մարդկային ընկերութեան նախնի և քիչ խան-
 դարած աստիճանին մէջ, և ո՛չ բնաւ հոգեղէն և
 սրբազան՝ ստուծոյ պաշտամունքին հետ կապակցե-
 լով, կամ սրտի ու վարուց սրբութեան մշակութիւ-
 նով: Փիլիսոփայութիւնը կարողացուց իր հետև-
 ողները դժուարութիւնները յաւէտ տեսնելու և
 անոնց վրայ ճառելու, քան թէ անոնք վերցնե-
 լու: Փիլիսոփայութիւնը մինչև անգամ բուն
 փիլիսոփաներուն վարքերը չկրցաւ բարեկարգել,
 և հասարակ ժողովուրդը կրթելու կամ բարե-
 կարգելու ջանք ալ չըրաւ: Զեղինակին մէ-
 կը իր ատենի փիլիսոփաներուն համար կրսէ
 թէ, «Ամենէն յայտնի ու երևելի մոլու-
 թիւնները այն անունին տակը պահուած են, և
 չեն աշխատիր անոնք առաքինութիւնով ու
 ուսմունքով փիլիսոփայի վարք ունենալ, այլ ա-
 մենամոլի վարքեր կրճած կեն խստաբարոյ երևու-
 թի և որոշ կերպարանքի մը տակը»: Աւ երբոր
 ասիկա կըսուի փիլիսոփաներու վրայ, հասարակ ժո-
 ղովուրդին վրայօք ներշնչութենէն վար հեղինա-
 կութեամբ ալ կրնանք հաւատալ որ անոնք «լե-
 ցուած էին ամեն անիրաւութիւնով, պոռնկու-
 թիւնով, անզգամութիւնով, ազահուութիւնով,
 չարութիւնով, նախանձով լեցուն, մարդասպա-
 նութիւնով, հակառակութիւնով, նենգութիւնով

չարասրտութիւնով, և էին քսուներ, չարախօսներ, Մատուած ատողներ, նախատողներ, հրպարտներ, ամբարտաւաններ, չար բաներ հնարողներ, ծնողաց անհնազանդներ, անմիտներ, ուխտ չպահողներ, անգութներ, անհաշտներ, անողորմներ" : (Օւան . Գւ)

Մհա ուրեմն ասկէ խեղճ ու ցաւալի բան չենք կրնար երեւակայել, որ Մատուծոյ մէկ արարածին ամենապատուական կարողութիւնները՝ որոնց միջոցովն իր ամենաբարձր կատարելութիւնը և երջանկութիւնը պիտի ստացուի, միջոց եղան զինքն ընկղմելու անառակութեան, և պիտի՝ անգութ՝ բաղմածախ ու ասարկու սնապաշտութեան ամենաբարձր վիճակին մէջ : Ղշմարիտ Մատուածը՝ մարդուն կրօնական բնութեան պատասխանող մի միայն առարկան, վերցուած ըլլալով, մարդուն կարողութիւնները բնաջինջ եղած չեն . և չկրնար մէկդի ձգել իր բնութիւնը, հարկաւ կրօնք մը ունենալու է . և այնպէս սնապաշտութիւնը և կրօնամոլութիւնը երեւան կելնէ, և ամեն կերպ անիրաւութիւն ի գործ կըդրուի Մատուծոյ անունովը . և կրօնական բնութիւնը կըդորձածուի իբրև մեքենայ մը մարդկային ազատութիւնը ջախջախելու և բնութեան կապերը երկաթներով հաստատելու : Մ. յս մտաւոր և բարոյական ասաւոր խանգարումը ներկայացնելու չկայ բորոտութենէն աւելի յարմար բան մը, որով կենաց յառաջադիմութիւնը՝ որ երթալով գեղեցիկ ու կատարեալ մարմին մը պիտի կազմէր, անոր փոխանակ հետզհետէ ա-

ւելի կը գրգռէ մահաբեր ախտին զօրութիւնը, ախտակրին կերպարանքը ծուռ կաղմուածքներով աւելի ահաւոր ընելու համար: Այս տեղ ուրեմն խնդիրը վախճանի մը կը հասնի: Արք բաները ասանկ վիճակի մէջ են, որ ատեն յայտնի է թէ երկինքէն ձայն մը և ո՛չ ուրիշ բան կրնայ ազատութիւն հասցնել, անատենը այն ձայնը պիտի հնչուի: Անշուշտ՝ եթէ բան մը կրնայ պատահիլ, որուն մէջ կրնանք յուսալ Աստուծոյ բարեսիրութենէն, որ յատուկ կերպով ձեռնամուխ ըլլայ, այս է այն բանը: Աստուծոյ այս օգնութենէն կախուած է բոլոր մարդկային ազգին բաղդը, և մէկ մարդ մը երբ որ կրնայ իր մտքին մէջ ամփոփել Աստուծոյ ողորմութիւն ընելու հնարաւոր ըլլալուն բարձր գաղափարը, անհաւանական պիտի չսեպէ որ անիկա բարեհաճի այն օգնութիւնը շնորհել:

Աստուծոնքէն կերևի որ եթէ մարդ մը անմեղութեան վիճակի մէջ սեպենք, բնականապէս պիտի յուսանք որ Աստուած հաղորդակցութիւն պիտի ընէ անոր հետ, և եթէ սեպենք յանցաւոր ու Աստուծոյ գիտութիւնը ու բարոյական պատկերը կորսնցուցած, անատենը այն հաղորդակցութիւնը անհրաժեշտ հարկաւոր պիտի ըլլայ, եթէ մարդը պիտի ուղղուի: Այսինքն յայտնութիւն մ' ըլլալուն առաջուց նոյնչափ հաւանականութիւն կայ, որքան որ կայ Աստուծոյ երբէք յանցաւորին օգնութիւն մ' ընելուն կամ երկրի վրայ ճշմարիտ կրօնք մը կենալուն: Այս հաւանականութիւնը նաև կը զօրանայ մարդկային ազգին ընդհանուր ակնկալութեամբը՝ որ կը ցուցուի

իրենց կեղծեալ յայտնութիւններու պատմութիւնները ընդունելու յօժարու պատրաստ ըլլալէն, և այն բնական հակամտութենէն, որով մարդ կը ցանկայ Մատուծմէ անմիջական օգնութեան :

Իսկ ինչ հաւանականութիւն որ կար յայտնութիւն մ' ըլլալուն, նոյնը կար հրաշք ըլլալուն. վասն զի մեր հասկընալ կարող եղածին նայելով՝ միայն հրաշքներն են այն միջոցը, որով հնար է Մատուծոյ վաւերացնել մարդուն ըրած հաղորդակցութիւնը : Ղշմարիտ է որ կրնար ամեն անհատի յատուկ յայտնութիւն մ' ընել և վստահացնել անիկա թէ յայտնութիւն է. բայց անիկա իր ուրիշ բաներու մէջ գործելու եղանակին նման պիտի չըլլար. և եթէ իր նպատակն այն ըլլայ որ իր կախքը քանի մը անհատ անձանց յայտնէ, որ անոնց ձեռքը ամեն ուրիշ մարդոց հաղորդուի, անհնար կերևայ որ անոնք իրենց անբաբելութեանը հրաշքէ ի զատ ուրիշ մէկ կնիք մը ցուցնեն : Վստիկա է այն պարզ՝ բնական ու վսեմ կնիքը, որ ակնկալելու ենք թէ Մատուծ կապէ իրմէ եղած հաղորդակցութեան մը հետ, և երբոր այս կնիքը կը ցուցուի անանկ մարդոցմէ՝ որոնց կեանքն ու գործքերը կը համաձայնին անոր, ինչ որ կրնանք ակնկալել Մատուծոյ պատգամաւոր եղողներէ, անատները կը զգանք որ բոլորովին վստահացուցիչ է այն կնիքը :

Իսկ թէպէտև այսպէս հրաշքը ճիշտ յայտնութեան չափ հաւանական է, մինչև անգամ թէպէտ չենք ուղեր ըսել թէ յայտնութիւնն ալ հրաշք մըն է և թէպէտ հրաշքին զլխաւոր նպա-

տակը յայտնութեան հեղինակութիւն տալ է, բայց և այնպէս որովհետև յայտնութեան դէմ եղած գլխաւոր առարկութիւնները անոր հրաշալի ըլլալուն համար են, կուղեմ մէկ երկու խորհրդածութիւն ալ աւելցնել՝ ցուցնելու թէ հաւանական է որ այս մեր դրութեան պէս դրութեան մը մէջ հրաշքներ ըլլան:

Մ. ռաջին խորհրդածութիւնը այն ներգործութեանը վրայ է՝ որ հրաշքները պիտի ընեն մէկ անձնաւոր Մ. ստուծոյ մը էութեանը վրայ համոզում մը յառաջ բերելով: Մ. սիկա խիստ հարկաւոր բան մըն է: Մ. սենք թ հրաշք եղած չըլլայ, և ոչ հրաշքի կեղծիք մը որչափ որ հին պատմութիւնները կրնան գտնուիլ, այլ միշտ բնութեան միակերպ ընթացքը յառաջ խաղացած ըլլայ առանց մէկ դերագոյն անձնական զօրութիւն մը միջամուխ ըլլալուն կամ անանկ սեպուելուն. և արհամարհողներուն ըսածին պէս ամեն բան արարչութեան սկիզբէն հետէ եղածին պէս շարունակած ըլլայ, ոչ ջրհեղեղ եղած ըլլայ և ոչ օրէնք տրուած որոտումներով և երկրաշարժերով, և ոչ վերէն պատգամաւոր մը՝ որուն կերպարանքը «Մ. ստուծոյ Արդւոյն կրնմանէր», պտրտած ըլլայ բարի մարդոց հետ կրակին մէջ, և ոչ արդար կառավարութեան և ապառնի հատուցման ուրիշ նշան մը երեցած ըլլայ, քան թէ ինչ որ կապակցած է այն անսխալ օրէնքներուն՝ որ ամեն բան ամենուն միօրինակ կրնեն. և ո՞վ կրնայ ըմբռնել բաներուն այս վիճակին հակամիտութիւնը անատինը գործնական՝ եթէ ոչ տեսական ան-

աստուածութեան : Մինչև անգամ քննելու բան
 մըն է թէ անձնաւոր Աստուծոյ մը գոյութեանը
 համար եղած սուրբական փաստը՝ որ կը բերուի
 բնական բաներուն մէջ գտնուած մէկզմէկու յար-
 մարութենէն և տեսնուած նպատակներէն, մի՞թէ
 վաւերական է, անիկա մինակ առնելով և բա-
 ներուն ասանկ միօրինակ ընթացքին նայելով :
 Եթէ կարելի ըլլար անգամ մը ընդմիջահատել այս
 խիստ կարգադրութիւնը մէկ բարի և ծանօթ պատ-
 ճառի մը համար, յայտնի է որ բոլորովին պիտի
 փոխուէր ապացոյցին երեւոյթը : Արբոր անգամ
 մը տեսնէինք ծանրութեան օրէնքը ընդմիջած՝ եր-
 բոր այսինչ բարի մարդը իր հալածիչները լեռան
 գագաթէն վար կը ձգեն, եթէ տեսնէինք որ հրե-
 ղէն կառք ու ձիեր կիջնեն ու կազատեն արդարը
 մահուան ընդհանուր օրէնքէն, եթէ տեսնէինք
 որ արեգակը երկինքը դադրած կենար որ չարերը
 յաղթուին, անատենը պիտի վստահաբար պիտ-
 նայինք որ կայ մէկ անձնաւոր Օրութիւն մը ո-
 բոշ կամբով՝ որուն գործակալները ու պաշտօն-
 եաներն են այս օրէնքները : Իր էութեանը վրայ
 ասանկ ապացոյցներ կրնայինք ակնկալել որ Աստ-
 ուած պիտի տայ, ոչ միայն մասնաւոր յայտնու-
 թիւն մը վաւերացնելու, այլ այն անորոշութեան
 ընդհանրութեան և այն գերադոյն Օրութեան
 մէջ անձնաւորութիւն չըլլալու զգացումը վերցը-
 նելու համար, որ ընդհանուր օրէնքներուն գոր-
 ծադրութիւնը՝ որ հարկաւորապէս կը շփոթէ ամեն
 բարոյական որոշումներ, հակամիտութիւն ունի
 յառաջ բերելու :

Հրաշքներուն երկրորդ ներգործութիւնը որ
 կուշեմ մէջ բերել այս է՝ որ անոնք կը ցուցնեն
 որ բնութեան օրէնքները Մատուծոյ բարոյական
 թագաւորութեանը բարձրագոյն օրէնքներուն իշ-
 խանութեանը տակն են, և անոնց նայելով կը կա-
 ռավարուին ու կը նդմիջահատին: Մտոր նայելով՝
 հարկաւ հրաշքները ո՛չ պատահական և ո՛չ չըն-
 չին բաներ ըլլալու են, այլ անանկ գործուած որ
 այս ճշմարտութիւնը ցուցնէ: Մյն մարդը որ տա-
 կաւին տեսած չէ թէ Մատուծոյ բարոյական կա-
 ռավարութիւնն է՝ որուն համար տիեզերքը կազ-
 մուած է ու կը պահուի, այնքան հեռու է Մատ-
 ուածային տնօրէնութեան ճշմարիտ դրութենէն,
 որքան որ աստեղաբաշխութեան ճշմարիտ դրու-
 թենէն հեռու պիտի ըլլայ երկիրը կեդրոնը դնողը:
 Մյս գաղափարը կը պարունակուէր Քրիստոսի այն
 զարմանալի խօսքերուն մէջ թէ, «Վիւրին է որ
 երկինքը ու երկիրը անցնի, քան թէ օրէնքէն մէկ
 նշանագիր մը իյնայ» և արդարեւ բանին բնու-
 թենէն ալ կերեւայ: Ո՞ր պատուոյ տէր մարդ բնաւ
 ստացուածքի կը նայի, երբ իր բարոյական բնու-
 թեան համբաւը վտանգի մէջ է: Ո՞ր իմաստուն
 մարդ չզոհեր ստացուածք՝ բանաւոր և իմացական
 էակներուն ճշմարիտ բարւոյն համար: Մյսպէս՝
 եթէ Մատուած բարոյական բնութիւն ունի և բա-
 րոյական կառավարութիւն մը, ուրեմն բնութիւն
 և անոր օրէնքները ըսածնիս նոյն յարաբերու-
 թիւնը պիտի ունենայ Մտոր՝ որ ստացուածքը ու-
 նի մարդուն բարոյական բնութեանը: Մատուծոյ
 կարողութիւնը և իմաստութիւնը բնութեան մէջ

կրտեսնուի, բայց անոր արդարութիւնը՝ ճշմարտութիւնը և ողորմութիւնը, որուն մէջ կրկայանայ իր ամենաբարձր փառքը, կրնայ տեսնուիլ միայն իր բարոյական արարածներուն հետ ունեցած վարմունքին մէջ : Եթէ բնութեան մէկ օրէնքը խանգարուի, կրնայ նորէն հաստատուիլ . եթէ արեգակներու և մոլորակներու դրութիւն մը ոչնչանայ, անոր տեղը ուրիշը կրնայ դրուիլ . եթէ երկինքն ու երկիրը անցնին, կրկին կրնան ստեղծուիլ . բայց եթէ Մատուծոյ բարոյական բնութեան պայծառութիւնը աղօտանայ, Մատուծոյ այդ որպիսութիւնը յաւիտեան պիտի կորսուի : Այլ բնութեան և բարոյական կառավարութեան մէջ եղած այս որոշումը հիմնական է . և բան մը աւելի մեծ հակամիտութիւն չկրնար ունենալ մարդոց մէջ այս գաղափարը արթնցնելու, քան թէ տեսնել որ Մատուած իր բարոյական նպատակները կատարելու համար մէկգի կըդնէ այն բնութեան օրէնքները՝ որոնք մենք սեպեր էինք թէ յաւիտենական լեռներու պէս հաստատուած են . և տեսնել որ ամբողջ տեսանելի բնութիւնը՝ ամեն իր օրէնքներովը կրկենայ նազանդելու անոր բարոյական թագաւորութեանը ճշմարիտ պատգամաւորներուն : Աւրիշ ի՞նչ կերպով կրնար Մատուած ցուցնել մեզի իր բնական ու բարոյական կառավարութիւններուն մէկզմէկու ունեցած ճշմարիտ վերաբերութիւնները :

Աւրեմն եթէ հրաշքները հարկաւոր են որ յայտնութեան հաստատութիւն տան և անձնական Մատուծոյ մը գոյութեանը վրայօք մէկ գործ

Նախան տպաւորութիւն մ' ընեն, և անոր բարոյական կառավարութեան ճշմարիտ գիւրքը ցուցնեն, ենթադրելով թէ բարոյական կառավարութիւն մը ունի Աստուած, ո՞վ պիտի ըսէ թէ հրաշքները անհաւանական են: (Ման. Գ)

Արվերջացնեմ հիմա այս ճառը միայն սա ըսելով թէ ինչ հաւանականութիւն որ կայ թէ Աստուած երբէք յայտնութիւն մը տուած է, նոյնը կայ Վրիստոնէութիւնը այն յայտնութիւնը ըլլալուն: Հիմա աշխարհիս պատմութեան այն կէտին հասած ենք, որ ամեն գիտնականներու մէջ խնդիրը երկու նիւթին վրայ կը դառնայ, կամ Վրիստոնէութիւնը ճշմարիտ է, և կամ կրօնք չկայ: Անշուշտ Վրիստոնեայ կոչուածներուն ոչ մէկը Վրիստոնէութիւնը թողելով պիտի պաշտպանէ հեթանոսութիւն՝ կռապաշտութիւն կամ բազմաստուածութիւն:

Աստուածեանութեան վրայ կարելի է ոմանք տարակուսին թէ արդեօք անիկա կրօնք սեպելու է թէ ոչ: Ասիկա կարգաւոր չունի, հաւատոյ հանգանակ չունի, իր ընդունած ճշմարտութիւնները պարունակել դաւանող գիրք մը չունի. ոչ տաճար և ոչ մէկ տեղ ժողուիլ ու պաշտամունք, Վաղղիացւոց յեղափոխութեան ատենը եղած քիչ մը միջոցէն ի դատ: Արեմն եթէ կրօնք ըսելով պիտի իմանանք անանկ դաւանութիւն մը Աստուծոյ վերայ, որ համաձայն գալով մեր ընկերական բընութեանը կը կապէ մարդկային ազգը մէկ հաւասար եղբայրութիւնով մը, և նոյն ատենը կը ներկայացնէ զանոնք հասարակաց շօրը աթոռին

առջևը, աստուածեանութիւնը կրօնք չէ: Անոնք որ ասիկա սորվեցնել կրդաւանին, իրենց վարդապետութեանցը մէջ միաբան չեն, և այն վարդապետութիւններէն ալ ոմանք Քրիստոնէութենէն փոխ առած են, և դարձեր կրսորվեցնեն իբրև բանականութեան ազգմունքներ:

Ո՛չ. չկայ երկրի երեսին վրայ բան մը որ կրօնայ երբէք բաղդատուիլ Քրիստոնէութեան հետ իբրև կրօնք մը մարդուն համար: Վարդկային ազգին յոյսը այս կրօնքէն կախուած է: Առաջուց հետէ կեցաւ, որ հրեղէն սիւնին պէս առաջնորդութիւն ընէ մարդոց: Ահա հապետական՝ Հրեական և Քրիստոնէական դրութիւնները ամենը մի և նոյն կրօնքն եղած են, որովհետև զոհերուն ճշմարիտ նշանակութեանը և արդարութեան կանոններուն մէջ միևնոյն միտքը ունին:

Վարդկային ազգին իմացականութիւնը և զօրութիւնը այս կրօնքը ընդունողներուն քովն եղած է. և հիմա եթէ յիրաւի Աստուծմէ խրկուած հրեղէն սիւն մ' ըլլալու փոխանակ գտնուի որ խաբէական հնարք մըն է, անատենը ուրիշ բան չմնար մարդոց, այլ դառնալ այս ճշմարտութիւնները մերժելէն յլերջը մնացած խաւարին, և Ագիպտոսի գերութենէն գէշին:

Իմ առաջին ճառովս ջանացի ցուցնել որ եթէ
 Աստուած յայտնութիւն մը տուած է՝ մենք ստու-
 գիւ կրնանք գիտնալ . և երկրորդովը թէ առա-
 ջուց անանկ անհաւանականութիւն մը չկայ որ
 մեզ արդարացնէ ուրիշ դիպուածներու համար
 պէտք եղած փաստերէն տարբեր փաստ պահան-
 ջել ասոր : Ա կայութեան օրէնքներ կան, որոնց
 համեմատ դատողութիւն կրնենք ուրիշ բանե-
 րու մէջ , և ես այս միայն կուզեմ որ այս բանին
 մէջ ալ նոյն օրէնքներն ի գործ դրուին :

Եթէ այս կէտերը հոս հաստատուած են , պատ-
 րաստ ենք հարցնելու թէ Իրօք Աստուած ասանկ
 յայտնութիւն մը տուած է թէ ոչ :

Երբոր աշխարհ կուգանք՝ կըտեսնենք որ Քրիս-
 տոնէականկրօնք մը կայ որ իրեն համար կըսէ թէ ա-
 նանկ յայտնութիւն մընէ Աստուծմէ : Արդ՝ կուզենք
 որ ստուգենք թէ անանկ է . ի՞նչպէս պիտի ընենք :
 Այս վկայութիւնները որով անիկա կը հաստատուի,
 սովորաբար երկու տեսակի կը բաժնուին . արտա-
 քին և ներքին : Այս բաժանումը պարզ է և հին .
 բայց ասով անանկ տեսակ վկայութիւններ մէկ
 կարգի մէջ կը դասուին , որ այնքան քիչ նմանու-
 թիւն ունին մէկզմէկու . և ոմանց նկատմամբ այն-
 քան դժուար է ի՞նչ սկզբունքով մէկ կարգին
 ու ոչ միւս կարգին մէջ դասուելնին տեսնելը , որ
 տարակուսելի կը լայ անոր օգտակարութիւնը :

Մյուսպէս՝ տեսնողներուն տուած վկայութենէն՝ մարդարէութենէն՝ աւետարանը տարածուելու կերպէն և անոր յառաջ բերած արդիւնքներէն ելած փաստերը, որ անանկ նիւթեր են որ հաղիւ երբէք մէկզմէկու նմանութիւն ունին, այսամենը արտաքին վկայութեանց կարգը կը դասուին. իսկ ճշմարտութեան զանազան նշանները՝ որ Վոր Արտակարանին մէջ կը դասուին, անոր մասերուն մէկզմէկու համաձայնիլը՝ անոր յատուկ տեսակ վարդապետութիւնները՝ մաքուր բարոյականութիւնը և Քրիստոսի բնութեանը վրայ ըրած նկարագրութիւնը, բնութեան անոր ունեցած վերաբանութիւնները՝ մարդկային վիճակին և կարօտութեանց ունեցած յարմարութիւնը, նիւթեր՝ որ աւելի աննման են մէկզմէկու, կը դասուին ներքին վկայութեանց կարգը:

Աս մէջ կը բերեմ այս կարգադրութեանը անորոշ ըլլալը, որովհետեւ այս երկու կարգ վկայութիւնները շատ անգամ մէկզմէկու հակառակ եկած են, և անոնց որը գերազանց ըլլալուն վերայ վէճ եղած է. նաև երևելի դիտնական և բարի մարդիկ երբեմն յանդգնութիւն սեպեր են ներքին վկայութիւնները երբէք քննելը, որպէս թէ անիկա առաջուց դատողութեան նստել պիտի ըլլայ թէ ինչ տեսակ յայտնութիւն տալու է Մտուած. և ոմանք հղարտութիւն սեպերցին ներքին վկայութիւնները առաջ քննելը, որպէս թէ յայտնութեան վրայ՝ անոր տրուելէն վերջը դատողութիւնընելը, մարդուն այնքան դիտուն ըլլալը կը ցուցնէ, որ բնաւ յայտնութեան հարկաւորութիւն չմնար:

Տայց վերոյիշեալ ներքին վկայութիւններէն որոնն համար կրնայ ըսուիլ՝ թէ յանդգնութիւն է մարդուն դատել առանց վերաբերութեան մը արտաքին վկայութեանց: Անշուշտ ոչ թէ ճշմարտութեան այն բնական ու պատահական վկայութիւններուն համար որ սիրուած են՝ Աոր Ատակարանին ամեն թերթերուն վրայ, և ոչ անոր այլ և այլ գիրքերուն մէկըմէկու համաձայնութեանը համար, ոչ ալ Աւետարանին բարոյականութեանը համար, ոչ ալ անոր՝ այս կեանքին մէջ մարդկային երջանկութիւնը յառաջացնելու հակամիտութեանը համար, և եթէ կան անանկ վարդապետութիւններ՝ որոնց հաւանականութիւնը առաջուց չէինք կրնար դատել, ատոր համար պէտքը չէ որ թողունք այն նիւթին ուրիշ այն ամեն մասերն ալ՝ որոնք ուղղակի մեր դիտողութեանը տակը կիյնան: Հեղինակին մէկուն ըսածին պէս՝ ներքին վկայութիւն կայ կրիտեսսական կամ դատողական, ներքին վկայութիւն կայ բարոյական: Առաջին տեսակը դատելու կարողութիւն ունինք, և երկրորդը դատելու բաւականութիւն ունենալնիս որոշած ատեննիս զանց ընելու չէ նոյն երևելի հեղինակին ըրած մէկ զանազանութիւնը, այսինքն «Ճշմարտութիւնը գտնելու, ու անիկա մեր դատողութեանը ներկայացած ատենը քննելու և որոշում ընելու կարողութիւններուն մէջ եղած զանազանութիւնը»: «Մարդկային գիտութիւններու մէջ՝ կրսէ, «որքան քիչերուն տրուած է մէկը, և որքան ընդհանուր է միւսը: Այլէ՛ այն բազմաթիւ մաթեմատիքական հնարքներուն և ապացոյցներ-

րուն, որ երևելի կարողութիւններու տէր անձինք յառաջ տարին ամեն դարու մէջ անընդհատ շարունակութեամբ նախնի Ազգիպատացւոց գիտնական քուրմերուն օրերէն մինչև հիմա : Այլ կայ այս դարու մաթեմատիքայի տեղեակ եղողներուն մէջ տրամաբանութեան բոլոր այս երկայն ու անընդհատ շղթան ինքնիրեն գտնելու կարող : Աթէ առանց օգնութեան իրենց դիտողութիւններուն մնային, որչափ յառաջ պիտի տանէր զկրկնք 'Ա'տոնի և Քասկալի հնարագիտութեան հանձարը : Այսու ամենայնիւ գիտենք որ այնքան երևելի իմացականութեան տէր անձանց ըրած անձանձիր աշխատութիւններուն այս շքեղ տեղը մէկ հասարակ ուսանող մը՝ որ եթէ միայն իրեն մտաց կարողութեանը մնայ բնաւ երկրաչափութեան պարզ սկզբունքներէն անդին չկրնար անցնիլ, քանի մը տարի ուսման հետեւելով կրնայ մանրամասնարար և ճշգրութեամբ քննել և փորձել անոր ամեն քայլերը, և կատարելապէս ընտանենաւ լով իր մտքին ստացուածքը ընել անիկա :

Այս տրամաբանութիւնը կամ ուղղակի կամ վայելուչ վերաբանութեամբ կը յարմարի թէ բնութեան և թէ մտաց օրէնքներուն վրայօք մեր ունեցած գիտութեան ամեն մասին. վասնորոյ ոչ յանդգնութիւն և ոչ փիլիսոփայութեան դէմ, այլ ընդհակառակը ողջամիտ տրամաբանութեան ճշգիւ համաձայն կերևայ հաստատել, թէ թէպէտև «աշխարհը իմաստութիւնով չճանչցաւ զ'ստուած», սակայն և այնպէս ինչպէս որ ինքզինքը յայտնեց մարդոց և կը հրաւիրէ անոնք որ

ընդունին և նազանդին այն յայտնեալ կամքին, անոր համեմատ ալ անանկ կարողութիւններ տուած է անոնց, որ ոչ թէ ստիպմամբ, այլ իր օգնութեամբը կարող ըլլան հասկընալ իր յայտնութիւնը և ընդունիլ անոր ճշմարտութեանը պատուականութիւնը և գեղեցկութիւնը, և զգալ անոր հրահանգութեանը կարօտ ըլլալնին, ինչպէս նաև ճանչնալ այն մարդկային վկայութեան արժէքը որով կրվկայուի Սուրբ Կրօն ճշմարտութիւնը կամ անոնցմով կրպաշտպանուի :

Մնշուշտ կան շատ բաներ որ երբ յայտնուին, անոնց մէջ մէկ յարմարութիւն մը և պատուականութիւն մը կրտեսանենք՝ որոնց վրայ ինքնիրեն նիս բնաւ դադարիար մը պիտի չունենայինք : Մ, յսպէս՝ Սեպտեմբերի դրութիւնը մտաց աչքին առջևը կեղծ ինչպէս որ մէկ մեծ լեռ մը մարմնոյ աչքին առջև կերևայ . և անմիջապէս կրտեսանենք որ Մստուածային վսեմութեան արժան բան մըն է անիկա : Ալ Մստուծոյ գործքերուն վրայ դատողութիւն ընելու իրաւունք չունինք կարծող վախկոտն ալ չկրնար չզգալ անոր այս ազդեցութիւնը : Մնոր պարզութիւնը՝ գեղեցկութիւնը՝ վսեմութիւնը կրխօսին մէկ ձայնով մը, որ մաթեմատիքական տրամաբանութեանէն աւելի հաճելի է և հազիւ թէ անկէ քիչ յագեցուցիչ : Այս չեմ բեր թէ որչափ անանկ գերազանցութիւն պիտի տեսնուի, կամ թէ երբէք պիտի տեսնուի այն յայտնութեանը վրայ որ մենք պարտաւոր ենք ընդունիլ : Մնշուշտ շրէայք շատ քիչ կրտեսանէին իրենց յայտնութեանը վրայ, քան թէ մենք մերինին վրայ : Կայց այս կրտեմ թէ մտքին բնա-

կան ազգմունքն է իբրև յայտնութիւն առջևը եւ լած բանը ասանկ փորձերով քննել. եւ երբ կրլայ պատշաճ ոգիով և այն սահմանները դնելով խնդիրներ հանելու, որ ուղիղ դատողութիւնը միշտ կրցուցնէ թէ դնելու է, ոչ յանդգնութիւն է և ոչ վտանգաւոր: Ասիկա առաջուց դատել չէ թէ Աստուած ինչ բնելու է, այլ դատել է այն բանին վրայ՝ որ կրսուի թէ այն բեր է. և այն ոգին որ մեզ ասիկա ընելէն կարգիլէ, նոյնը ետ պիտի բռնէ մեզ Աստուծոյ գործքերուն մէջ վերջին պատճառները քննելէն: Այն թէ աւետարանը բնաւորութեան պիտի ներգործէ, ուրեմն ընդունուելու է անիկա՝ անոր մեր կարօտութիւններուն ունեցած յարմարութեանը և անոր պատուականութեանը վրայ մտքին պայծառ ճանաչողութիւնովը և տեսութիւնովը: Ինչպէս Աստուծոյ պատգամաւորը՝ նոյնպէս ալ Աստուծոյ պատգամը ինքզինքը «մարդոց ամեն խղճմտանքին կրնձայէ Աստուծոյ առջևը»:

Աս չեմ պահանջեր որ բանականութիւնը իրեն արժան եղած աստիճանէն վեր բռնուի: Քրիստոնէական կրօնքը ըստ որում եղելութիւններով վրայ հիմնուած՝ պատմական վկայութիւններու վրայ հիմնուելու է. բայց ըստ որում ճշմարտութեան և շարժառիթի դրութիւն մը, սահմանուած՝ մարդկային բնութիւնը և անոր բարեղաւութիւնը կարգի դնելու, Աստուծոյ մեղի տուած դատողութիւնով և խղճմտանքովը դատուելու է: Միտքը ի բնէ ունի իր մէջը առաջին սկզբունքներ և նախնական գաղտնիարներ որոնցմով փորձելու է Քրիստ

տոնէութիւնը տրամաբանութեան շղթան անոնց-
մէ սկսելով : Արնայ ըլլալ որ մարդիկ կողմնապա-
հութիւն և ամբարիշտ դատողութիւն ընեն այս
քննութեան մէջ, նոյնպէս կրնայ ըլլալ պատ-
մական ապացոյցներուն քննութեանը մէջ ալ. և
այս վախը մէկին մէջ միւսէն աւելի չէ : Քրիս-
տոնէութեան պէս դրութեան մը վրայ փաստա-
բանութիւն ըրած ատեննիս հարկաւ ընդունուած
պիտի սեպենք Աստուծոյ գոյութիւնը ու կատա-
րելութիւնները. մենք առաջուց ճանաչում ունինք
անոր գործքերուն՝ նախախնամութեանը՝ բարւոյ ու
չարի տարբերութեանը, և այն էակներուն վրայ՝
որոնց համար որ է այս դրութիւնը : Իմա ըսենք
թէ մէկ անաչառ մարդ մը այս դրութեան մէջ մէկ
անտեղի կամ բարոյականի դէմ բան մը չդտնէ .
բայց շատ բաներ տարօրինակ և իրեն ակնկալե-
լիքներուն անհամաձայն երևայ իրեն, անատենը
տակաւին տարակոյսի մէջ պիտի ըլլայ : Բայց գիտ-
նալով իր ունեցած գիտութեան պակսութիւնը
և իր կարողութիւններուն ամփոփեալ ըլլալը, իր
միտքը բաց պիտի պահէ պատմական ապացոյցնե-
րու կատարեալ զօրութեանը : Բայց ցուցուր ա-
նոր դրութիւն մը՝ որ թէպէտ ինք չէր կրնար գրտ-
նել, բայց երբ գտնուի՝ կրնայ տեսնել անոր
անհուն իմաստութիւն և բարութիւն ունեցող
Աստուծոյ արժան դրութիւն մ' ըլլալը. թող հա-
մաձայն տեսնէ անիկա Աստուծոյ վրայով անոր
գործքերէն բոլոր իր գիտցածներուն՝ և բնական
կրօնքին՝ որչափ վարդապետութիւն որ անիկա կը-
պարունակէ, տեսնելով անոր մէջը՝ կատարեալ

բարոյականի կանոն մը, և մարդուն վրայ ամենաբարձր գաղափարներու համաձայնութիւն մը և անոր կարօտութիւններուն յարմարութիւն իբրև տկար ու յանցաւոր էակ մը. և անատենը բոլոր ասոնց մէջ մէկ բանաւոր համոզման հիմ մը պիտի տեսնէ՝ թէ ասանկ դրութիւն մը Վստուածմէ եկած ըլլալու է. և այնպէս այն հղելութիւնները՝ որ անբաժանելի կերպով կապակցած են անոր հետ, ճշմարիտ ըլլալու են: Վնատենը պատմական վկայութիւնը անոր շատ նման կըլլայ Սամարացի կնկանը վկայութեանը իր քաղաքացիներուն՝ անոնց անձամբ Քրիստոսը տեսնելէն և անկէ ըսելէն վերջը: Այս է բնական ընթացքը՝ երբ բոլր ուրիշ գրութիւն մէկ նիւթի մը վրայ մեզի կընկերկայանայ: Վասնզ Կրհարցներէ թէ Վնէ է այն և որչափ կը համաձայնի մեր առաջուց ունեցած դիտութեանը, այս կերպով ձեռք կառնենք և կը քննենք, և ապա՝ եթէ հարկ ըլլայ, անոր ծագմանը պատմութիւնը:

Այս ալ այս ներքին վկայութեան ապացոյցը՝ ինչպէս կերևի թէ ոմանք կըսեպեն, լոկ զգացումներու արդիւնք է: Այժմէ Վստուած տուած է մեզի մէկ կրօնք մը՝ որ ընդունելու ենք մեր բանականութիւնը բանեցնելով, և պիտի ներգործէ մեզի մեր զգացումներովը և մեր ունեցած կարողութիւններուն համաձայն կերպով մը, ես չեմ կրնար չխորհիլ թէ անանկ յարմարութիւն մը ունենալու է անիկա մարդկային բնութեանը և անոր անձնական ու ընկերական բարեխաւութեանը, որ ցուցնէ թէ անիկա եկած է մարդը Ստեղծողէն.

և այս յարմարութիւնը տեսնելէն ելած ապացոյցը պատմական վկայութեան չափ զուտ իմացական և ճիշտ տրամաբանական է: Ասանկ ըրած ատենն ՚նիս ոչ թէ կրօնքին ճշմարտութեանը հաւատացած կըլլանք այնպէս զգալնուս համար, այլ անոր մէջ տեսնելնուս համար Աստուածային իմաստութիւն և միջոցներու վախճանի մը յարմարութիւն:

Այս զգացումն է՝ ինչպէս որ վերը յիշուեցաւ երևելի գիտնական ու բարի մարդոց անիկա յայտնելը, որ պատճառ եղաւ Սուրբ Վրոյներքին և արտաքին վկայութիւններուն վրայ խօսող թէ Անգղիա և թէ Ամերիկա հրատարակուած ամեն իմ գիտցած գրութիւններուս կարգադրութեանը: Ար այսպէս է արտաքին վկայութիւնները առաջ կըդնեն, անիկա սեպելով իբրև խնդիրը լուծող և ապա ներքին վկայութիւնները մէջ կըբերեն, իբրև բանին հաստատութիւն տուող: Անշուշտ պատմական վկայութիւնները վճռական կըսեպեմ և անհրաժեշտ հարկաւոր է. վասն զի Վրիստոնէական կրօնքը լոկ առածներէ և մտացածին կարծիքներէ չբաղկանար, այլ եղելութիւններու վրայ հիմնուած է: Արդարև անիկա սկզբունքներու կազմութիւն մըն է. բայց ոչ թէ միայն խօսքով կամ լոկ հրամաններով, այն սկզբունքները գործքերով նիւթականացած են. և միայն իբրև այսպէս նիւթականացած կրնան ունենալ այն ազդեցութիւնը: Թէ Վրիստոս աշխարհ եկաւ, խաչուեցաւ և յարութիւն առաւ, այնչափ հարկաւոր եղելութիւններ են Վրիստոնէական կրօնքին, որչափ որ հիմ

մը շէնքին հարկաւոր է. և Վերմանիոյ նորասեր-
ներէն իզատ ոչ մէկը կրնայ ասկէ տարբեր խոր-
հիլ : Վայց եթէ արտաքին վկայութիւնները այն-
քան հարկաւոր ու վճռական են, անանկ են նաև
ներքինները : Վ՛նչ ազդեցութիւն ու զօրութիւն
պիտի ունենային Վրիստոսի հրաշքները առանց
իր անբիծ ու գերազանց բնաւորութեանը : Այժմէ
ինծի հարցնեն թէ Ո՛րը աւելի ազդու կըցուցնէ
անոր Վստուծմէ ըլլալը, հրաշքները թէ իր ցու-
ցուցած բնաւորութիւնը, կարծեմ ես պիտի ըսեմ
Իր սրբութիւնը. և այնքան յարմար կըսեպեմ
ինքզինքս մէկը դատելու՝ որքան որ միւսը. և
ինչպէս առաջ յիշեցի, ես կըսեպեմ թէ ասիկա
է այն վկայութիւնը որ առաջ ինքզինքը կընկը-
կայացնէ :

Վ՛նչի ատենները՝ երբ կրօնքը ամեն տեղ քրն-
նութեան տակ էր, երբ հրաշքներ կըգործուէին
անիկա հաստատելու համար, տակաւին թէ ան-
հատից և թէ ընդհանուրին կարօտութեանցը իր
յարմարութիւնը կատարելապէս ցուցնելու ժա-
մանակ չեղած, բնական էր առաջ հրաշքներուն
և իր Վստուածային հեղինակութեանը համար
ունեցած վկայութիւններուն նայիլ. բայց հիմա՝
որ կրօնքը հաստատուած է, նոյնչափ բնական է
անցնիլ՝ առանց պատմական վկայութեան մասնա-
ւոր մտազրութիւն ընելու, քննելու բուն կրօնքը,
անոր համաձայնութիւնը մեր Վստուծոյ վրայ ու-
նեցած գիտութեանը և մեր կարօտութիւններուն :
Իրօք այս կերպով եղած է որ Վրիստոնէութիւ-
նը ընդունողներուն շատը ընդունած են անիկա,

և ես ոչ յանդգնութիւն և ոչ փիլիսոփայութեան դէմ կրկարծեմ կրօնքին վկայութիւնները ցուցուցած ժամանակնիս հետեիլ այն ընթացքին՝ որ բռնած են Վրիստոնեաներուն շատը այն հաւատոյ հիմք ձեռք ձգելու ատեննին՝ որուն վրայ հիմա հաստատուած են :

Արեմն փոխանակ առաջ քննելու պատմական վկայութեան երկայն ընթացքը, դանք ուղղակի Վրիստոնեական կրօնքին : Վնենք անիկա՝ անաչառ դատողութիւնով, բաղդաանք և փորձենք Մատուծոյ և իր գործքերուն ու մարդուն վերայ մեր գիտցածներովը : Վրիստոնեական կրօնքը ասանկ քննութենէ ոչ թէ կրփախչի, այլ կրփնարուէ անիկա : Մտապէս չքննուելուն համար է որ բանի տեղ չեն դներ անիկա : Վիտենք որ ինչ դրութիւն որ Մատուծմէ գայ՝ անոր արժան բան մը պիտի ըլլայ՝ և ամեն անոր միւս գործքերուն և ուրիշ ճշմարտութեանց համաձայն ըլլալու է, անոր առաջարկած վախճանները բարի ըլլալու են, և ամենայաջող կերպով յարմարացած ըլլալու են այն վախճանները կատարելու : Վիտենք՝ կրսեմ, որ ասանկ դրութիւն մը իրօք տեսնուի՝ է բոլոր այս բաները, և մենք մեր ունեցած գիտութեանը չափովը պիտի տեսնենք՝ անոր անանկ ըլլալը : Աթէ չկրնանք հասկընալ անիկա կատարելապէս, որ եթէ Մատուծային դրութիւն մըն է պէտք չէ որ ակնկալենք թէ պիտի հասկընանք, տակաւին մասամբ մը կրնանք գիտնալ : Մենք հիմա լուսաւորեալ դարու մը մէջ ենք : Շատ ատեն է որ կրօնքը աշխարհի մէջն է. և

շատ բաներու մէջ Մատուծոյ բնական նախախնամութեանը և մարդկային սահմանադրութիւններու պատահած է : Արօնքը մեզի ներդրուելու համար է . և եթէ իրօք Մատուծ մէ է, զարմանալի պիտի ըլլայ որ անոր վրայ իր ձեռքին գործելուն մէկ նշանը չկրնանք գտնել :

Աւստի՝ նախ կրտսեր թէ Քրիստոնէական կրօնքին ունեցած Մատուծոյ գործքերուն և անոր բնական կառավարութեանը նմանութիւնը վկայութիւն մըն է անոր Մատուածային ծագմանը : Համաձայնութիւն կայ յարմարութեան, և համաձայնութիւն ալ կայ նմանութեան : Նանալին յարմարացած է կղզանքին . ձուկին թւերը թռչունին թւերուն նման է : Քրիստոնէութիւնը՝ ինչպէս որ ես կը յուսամ ցուցնել, յարմարացած է մարդուն . և նման է Մատուծոյ իրեն վրայօք ըրած ուրիշ յայտնութիւններուն :

Մատուծոյ գործքերը այլ և այլ կարգերու բաժնուած են, որոնց ամեն մէկը ունին իրենց օրէնքները, որոնք մէկ միտքով մը անկախ են մէկզմէկէ . բայց և այնպէս կայ մէկ յայտնի համաձայնութիւն մը անոնց մէջ, որ անմիջապէս կը ճանչնանք անոնք թէ միւսոյն ձեռքէ ելած են : Աւսումնական հետազոտութիւնները հաստատ կիմացնեն մեզի թէ Մատուած մէկ է, ու միակերպ ու համաձայն է իր ամեն գործքերուն մէջ, և այս ակնկալութիւնը կուտայ մեզի թէ՛ եթէ նոր կարգադրութիւն մը դնելու ըլլայ՝ անոր ու անկէ առաջ գտնուածներուն մէջ նմանութիւն ըլլալու է, ինչպէս որ կայ իր գործոցը ուրիշ կարգերուն մէջ :

Մոր՝ մենք կը հաստատենք թէ աւետարանը կը պարունակէ այն օրէնքները՝ որ Մատուած տուած է իր արարածներուն բարոյական ու հոգեոր կարգին կառավարութեանը համար, և կայ անոր ու Մատուծոյ ուրիշ գործքերուն մէջ մեր ակնկալած վերաբանութիւնը և համաձայնութիւնը:

1. Մատուածաշունչը ինչ որ կը սորվեցնէ Մատուծոյ բնական ստորոգելեացը վրայ, համաձայն է բնութեան սորվեցուցածներուն, մարդոց բնութեան վրայ հիմնական ունեցած ճանաչողութեանը նայելով: Աոր կտակարանը Մատուծոյ բնական ստորոգելեացը վրայ երկայն չխօսիր. բայց երբ որ կը խօսի չափով մը, ինչպէս Պօղոս Առաքեալին փառաբանութիւնը, թէ «Յաւիտենական թագաւորին որ անեղծ ու աներևոյթ է, մի միայն իմաստուն Մատուծոյն» և՛, յայտնապէս կը դաւանի և կը յորդունի ինչ կտակարանին վարդապետութիւնները. վասնորոյ այս նպատակին համար պատշաճապէս կը նան անոնք մէկտեղ առնուիլ: Արեմն ետ երթանք այն նախնի մարգարէներուն: Այժմէ յայտնութեան դաղափարը մէկդի դնենք, Մատուծոյ վրայ անոնց ցուցուցած դաղափարներէն աւելի զարմանալի բան մը չկրնար ըլլալ: Այս դաղափարները ինքնին բաւական են Մատուածային հեղինակութեան կնիքը տալու անոնց գրուածքներուն: Թէև չորս կողմէն բազմաստուածութեան հետևող ազգերով պատած՝ իրենք Մնոր միութիւնը կը քարոզէին: Գիղիքական ուսմանց նայելով մեծ տգիտութիւն եղած դարու մը մէջ բացարձակ յաւիտենականութիւն և այն ան-

փոփոխութիւնը կուտային Մատուծոյ՝ որ էական է
 կատարեալ Նշակի մը . և բոլոր անոր բնական
 ստորոգելիքները իբրև անհուն կրցուցնէին :
 Աւ ըստ այնմ՝ այս ստորոգելիքները իրենց նիւթը
 եղած ատենն է որ իրենց բանաստեղծութիւնը կը
 բարձրանայ իր անդուգական գերազանցութեանը :
 «Միջ» կըսէ Նսայի մարգարէն «իբր ամուլը ջու-
 րերը չափեց, ու թիւովը երկինքը ծրագրեց, ու
 երկրիս հողը չափի մէջ ամփոփեց, ու լեռները
 կշռորդով և բլուրները կշիռքով կշռեց» : Մին-
 չև անգամ հիմա՝ որ ուսմունքը անհուն միջոցի
 խորութիւններէն ծանօթութիւն բերած է, և
 պատմած է մեզի արեգակներուն և դրութիւննե-
 րուն վրայ, որ լոյսերնին կը ճառագայթեն և հոն
 իրենց շրջանը կը կատարեն, ուրիշ ի՞նչ խօսք կը
 նանք գտնել մեր զգացումները աւելի աղէկ բա-
 ցատրելու, քան թէ անոր ըսածը, թէ «Նշքերնիդ
 վեր վերցուցէք ու նայեցէք, անոնք ո՞վ ստեղծեց,
 անիկա անոնց զօրքը համբանքով կը հանէ . անոնց
 ամենը իրենց անունովը կը կանչէ, իր մեծ իշխա-
 նութեամբը՝ ու սաստիկ զօրութեամբը, անոնցմէ
 բնաւ մէկը ետ չմնար» : Աւ երբ գիտութիւնը իր
 գիտակը ուրիշ կողմ կը դարձնէ և կը գտնէ մէկ
 կաթիլ ջուրի մէջ զարմանալիքներ, հազիւ թէ
 երկինքը եղածներէն պակաս զարմանալիք, երբ
 կը լուծէ նիւթը, երբ կը բաժնէ լուսոյ ճառագայթ-
 ները և այն գոյները՝ որոնցմէ անոր ճերմակ ու-
 տայնը մանուած է, երբ բուսական և կենդանա-
 կան մարմիններուն սքանչելի կազմութիւնը կը պար-
 զէ, ի՞նչ կրնանք ըսել բոլոր ասոնք իգործ դնո-

զին վրայ, եթէ ոչ թէ «անոր խորհուրդը սքան-
 չելի է, և անոր իմաստութիւնը գերազանց է» :
 Աւ դարձեալ երբոր կրնանք ետ նայիլ անկէ ալ
 երեք հազար տարիի չափ առաջ եղած միջոցին
 վրայ, որ երկիրը իր շրջանը ըրած է այնքան ատեն
 իր սահմանեալ ճամբուն վրայ, և այն հզօր ուժը՝
 որով ամեն բան կը շարժի, հաստատ պահուած է,
 ի՞նչ կրնանք ընել, եթէ ոչ հարցնել թէ «մի-
 թէ չգիտցար կամ չլսեցիր որ յաւիտենական
 Աստուածը Ահուան՝ երկրիս ծայրերուն Ատեղ-
 ծիչը չյողնիր ու չթուլնար» : Անոնց քովը չտես-
 նուիր հակամիտութիւն մը հին փիլիսոփաներուն
 պէս նիւթը յաւիտենական դնելու, այլ միշտ իբ-
 րև ստեղծուած կը խօսին անոր վրայ, ոչ ալ հա-
 մայնաստուածներուն պէս նիւթը և Աստուած
 նոյն դնելու. և ոչ կռապաշտներուն պէս խա-
 բուելու նիւթական բաներուն մեծութենէն՝ ձեռն
 կամ կարգադրութենէն՝ կամ պայծառութենէն՝
 կամ ուղիցէ բանէ մը որ զգայարանաց կրնայ ազդել :
 Քայց անոնց քովը բոլոր նիւթը նուաաս ու ան-
 պիտան է Աստուծոյ հետ բաղդատելով : Անոնք
 կը ցուցնեն որ Աստուած նիւթը իր ներկայ կար-
 գադրութեանը մէջ կը բռնէ ժամանակ մը, և վեր-
 ջը կը ծալէ այս ատենելի երկինքները հանդեր-
 ձի պէս, և մէկդի կը գնէ : Ար ասկէ կատարեալ
 բացատրութիւն չկրնար ըլլալ Աստուծոյ բնական
 ստորոգելեաց բացարձակ անհունութեանը, կամ
 իրեն ու տիեզերք կոչուած բոլոր բանին մէջ ե-
 ղած կատարեալ բաժանմանը և աննմանութեա-

նը , կամ նիւթին անոր կամացը կատարեալ հպա-
տակութեանը :

Արդ՝ բազմաստուածութիւն՝ կռապաշտութիւն
և Փիղիքական ուսմանց կողմանէ մեծ ազիտութիւն
տիրած դարու մը մէջ ուսմունքով ուրիշներէն
երկելի չեղող մարդոց Աստուծոյ բնական ստո-
րոգեւեացը վրայ անանկ վարդապետութիւններ
ունենալը՝ որ պէտք չըլլայ բնաւ փոփոխութիւն մը
ընել անոնց մէջ , երբ գիտութիւնը այնքան փո-
փոխութիւն ընէ որ գրեթէ նոր տիեզերք մը ցու-
ցընէ , ինծի թեթեւ վկայութիւն մը չերկիր ա-
նոնց այն Աստուծմէ ներշնչեալ ըլլալուն՝ որուն
ստորոգելիքը կը ցուցնէին :

Չ. Ամանութիւն կայ բնութեան օրէնքներուն՝
ինչպէս որ մակածութիւնով կը դանուին անոնք ,
և բարոյական օրէնքներուն մէջ՝ որ կը պարունա-
կուին Աոր Ատակարանին մէջ . ոչ միայն Աստու-
ծոյ նոյն բնական ստորոգելիքները ցուցնելովն ,
այլ նաև նոյն աստիճան կատարելութիւնով ցու-
ցնելովն : Մնական օրինաց մեծ և վսեմ յատ-
կութիւնն է , մանաւանդ ծանրութեան օրէնքին՝ որ
երբ այնքան կատարելապէս կը տիրէ այնքան մեծ
զանգուածներու վրայ և այն մեծ հեռաւորու-
թենէն , նաև հաւասարապէս կը տիրէ արևին ճա-
ռագայթին մէջ երևցած փոշիին ամենամանր հա-
տին վրայ . և որչափ հեռու որ մղուի այն փոքր
մասնիկը , և ուր որ դանուի միջոցի անհունութեան
մէջ , բնաւ բողբ մը այս օրէնքին ազդեցութե-
նէն ու իշխանութենէն ազատ չէ . և բնաւ չկը-
նար ըլլալ : Ասիկա բնական կառավարութեան

մէջ մէկ մանր ճշգոյթութիւն մը և կատարելութիւն
 մը կըրցուցնէ, որուն նշոյլը չէր ցուցնէր Վրիս-
 տոսի ժամանակը գիտոյւած գիտութիւնը: Այս
 հիմա որչափ բնական կերևայ, որ նոյն Աստուա-
 ծը՝ որ իր բնական օրէնքներուն ընդհանրական
 տիրողութեանը մէջ ամենափոքր մասնիկին ամենա-
 մեծ մոլորակէն պակաս չնայիր, իր բարոյական օրէն-
 քին մէջ ալ կրնկատէ ամեն դատարկ խօսքերը և սրբ-
 տին խորհուրդները ու դիտաւորութիւնները: Այս
 փոշիի մը կտորը միշտ Աստուծոյ գիտողութեանը
 տակն ըլլալը՝ որ ասիկա անոր բնական օրէնքին
 ամենէն երևելի բացատրողները կըրցուցնեն, և մէկ
 դատարկ խօսքն ալ անոր բարոյական օրէնքին
 գիտողութեանը և դատապարտութեանը տակ իյ-
 նալը՝ որ այս ալ Վրիստոս կըրցուցնէ, այո՛ կը-
 սեմ նիւթին կառավարութեանը ամենամանր ճշ-
 գոյթութիւնը և կատարելութիւնը որ կը յայտնէ ներ-
 կայ դարուս գիտութիւնը, և մինչև անգամ ման-
 բացոյցով ակներև կըրցուցնէ, և բարոյական օ-
 րինաց այն հոգեւոր մեկնութիւնը՝ որով կըրցուցուի
 թէ այն կըհասնի սրտին ամեն խորհուրդներուն և
 դիտաւորութիւններուն, ասոնք այս գաղափարը
 կուտան թէ աշխարհիս միանգամայն թէ բնական
 և թէ բարոյական կարգադրութիւններուն մէջ
 կառավարութեան նոյն բացարձակ կատարելու-
 թիւնը կայ, և կըտեսնուի որ նոյն անհուն բնա-
 կան ստորոգելիքն են այն միայն պայմանները՝ ո-
 րով ասանկ կառավարութիւն մը ունիցէ այս կար-
 գերուն մէջ կրնայ յառաջ երթալ:

Այս երկու կարգերուն մէջ կառավարութեան

բացարձակ ընդհանրութեան և կատարելութեան գաղափարը՝ որ այն միայն է կատարեալ Աստուծոյ մը արժան եղած գաղափարը, չեմ կրնար սեպել՝ թէ մանաւանդ բարոյական մասին մարդոցմէ իր ծագումը առած ըլլայ: Այս գաղափարը բնական մասին գիտենք որ չծագեցաւ և մէկը չխորհեցաւ, մինչև որ գրեթէ բռնի մարդոց գիտողութեանն առջևն ելաւ: Այլ ի՞նչպէս կրնայ որ բարոյական կառավարութեան այս բացարձակ կատարելութիւնը՝ ամեն դատարկ խօսքին՝ ամեն գաղտնի բաներուն և երկրիս վրայ երբէք դրա՛նուած ամենանուաստ բարոյական էակին ամենէն մանր բարոյական գործքին դատաստանի բերուիլը դանուի և քարոզուի, բնական մասին այն աւելի յայտնի հաւասար գաղափարին մարդոց մտքին մէջ կասկած մ'անգամ ձգելէն հազարաւոր տարիներ առաջ:

Այլ հոս չեմ կրնար չյիշել՝ թէպէտ և զատ հատուածով պիտի չխօսիմ անոր վրայ, թէ ի՞նչպէս համաձայն են դիտութեան բոլոր յայտնածները Սուրբ Գրոց սորվեցուցած Աստուծոյ ընդհանուր և մասնաւոր նախասինամական կառավարութեանը հետ: Գիտենք թէ մարդիկ որչափ ծանր են ասիկա ընդունելու, բայց և այնպէս չերևար թէ մէկ աստուածեան մը բնական օրինաց գործելու կերպին վրայ պայծառ տեսութիւն մը ունենալով կրնայ տարակուսիլ անոր վրայ: Աստուած բնական օրէնքով նիւթոյ ահագին զանգուածները կրկառավարէ, ի՞նչպէս կրնայ: Յայտնի է որ օրէնքը ներգործել տալով՝ ո՛չ թէ զանգուածին

վրայ իբրև ամբողջ, այլ այն զանգուածը կազմող ամեն անհատ մասնիկին վրայ, այսինքն ամբողջը կրկառավարէ մասը կառավարելով: Աւելի՛ց այսպէս կրնէ նիւթին, ո՞վ կրնայ չվկայել թէ նոյն այս սկզբունքէն հաւանականաբար յառաջ կուգայ մէկ նախախնամութիւն մը, որ կը համարէ մեր գլուխներուն մազերը և կը հսկէ ձնճղուկի մը իյնալը: Մի թէ Մատուած փոքրը պիտի խնամէ և ո՞չ մեծագոյնը. «Ի՞նչ որ դաշտի խոտը Մատուած անանկ կը հագուեցնէ, հապա որչափ աւելի ձեզ թերեհաւատներ»:

3. Ննութեան և Քրիստոնէութեան հաղորդած գիտութիւններուն մէջ թէ իրենց տեսակին և թէ իրենց սահմանին նայելով նմանութիւն կայ: Ննութիւնը լեցուն է հարկաւոր եղած պարզ գործողութիւններով. բայց ճիգ մը չունի բացատրելու այն գործողութիւններուն պատճառները և կերպերը: Օդ կուտայ մեղի որ շնչենք, և անով կենդանութիւն կառնենք, բայց չսորվեցներ թէ անիկա կրբաղկանայ թթուածինէ և բորակածինէ և թէ մեր կենդանութիւնը միայն թթուածինէն կուգայ: Այս կուտայ մեղի և կը տեսնենք, բայց որչափ ատեն աշխարհը տգէտ մնաց այս բանին վրայ և բնութիւնը մէկու մը միտքը անանկ խորհուրդ մը չձգեց թէ այն լոյսը եօթը գլխաւոր գոյներէ կրբաղկանայ: Մեզ կը վարժէ կրակին գործածութեանը, բայց չսորվեցներ թէ այրելու գործողութիւնը ինչպէս կը լայ: Մարդիկ սկիզբէն հետէ հիմակուան պէս գիւրաւ ջուր կը առայնէին, բայց մնացեր էր այս դարուն և Քրիստոնէութեանը:

բատէյ անուն քիմիաբանին որ գտնէ թէ բոցը ելեքտրական ներգործութեան արդիւնքն է : Վընութիւնը գործողութիւնները մեղի կիմացնէ , մեր նպատակին համեմատ պէտք եղած գործքերը ընել մեզ կրկարողացնէ , և անատենը կըթողու մեզ որ ինտոր որ կրնանք՝ գտնենք այն գործողութիւններուն փիլիսոփայութիւնը :

Եւ այսպէս է Վրիստոնէութեան հաղորդուած գիտութիւնն ալ : Ինչ կարևոր գործնական ճշմարտութիւն որ բարոյական էակ մը կրնայ գիտնալ ուղել , չկայ անոնցմէ մէկը՝ որուն վրայ կատարելապէս որոշ չխօսի այս կրօնքը կամ անոր կանոնը , որ է Սուրբ Վիրքը : Կատարելալ պատասխանատուութիւն և ապանի հատուցման ճշմարտութիւնը՝ անմահութեան՝ մեռելոց յարութեան՝ մասնաւոր նախախնամութեան՝ մարդուն ինքնիշխանութեան և անոր Վստուծմէ կախում ունենալու և դարձի եկող զղջացեալներուն եղած Վստուծոյ ողորմութեան ճշմարտութիւնները , ասոնց ամեն մէկը ամենայն կատարելութիւնով և պարզութիւնով ծանուցուած են , բայց շատ քիչ խօսք կայ այն ճշմարտութիւններուն փիլիսոփայութեանը կամ անոնց մէկզմէկու հետ համաձայնեցնելու կերպին վրայ : Վստուածաշունչը պէտք եղած ծանօթութիւնը կուտայ և հոն կրկենայ : Վնիկա կուտայ գործնական՝ և ոչ բնատեսական գիտութիւն իբրև տեսական :

Վրդ՝ երբ կըմտածենք որ Վրիստոնէութիւնը կըլուծէ բուն իր կերպովը մարդկային բարելաւութեանը վերաբերեալ ամեն կարևոր խնդիրնե-

ըր, նկատուելու է սա զարմանալի բանը, որ այս ծանօթութիւնը տալու ատենը, ինքը այսպէս կրկենայ ճիշդ այն տեղը, ուր որ բնութիւնը կրկենայ: Արբոր մտածենք թէ որչափ զօրաւոր եղած պիտի ըլլայ այն հակամիտութիւնը առանց Աստուածային օգնութեան եղած լոկ մարդկային բնութեանը, յագեցնելու մարդիկ և անոնց զգացումները զարթուցանելու ուրիշ աշխարհներուն և չտեսնուած բաներուն վրայ մանրամասն ստորագրութիւններ ընելով, որ այնչափ բնական է ակնկալել այն աշխարհներէն եղող պատգամաւորէ մը: Արբոր մտածենք թէ որչափ զօրաւոր կերպով պիտի գրաւէին կրօնամոլն ու խաբեբան իրենց հետեւողներուն երեւակայութիւնը այս միջոցով, և թէ առանց հրաշքի ու ապացոյցի արդարեւ ամենէն աւելի ասով կրնան բռնել անոնք, և երբոր կրդիանք ուրիշ ամեն յայտնութիւն ունենալ կեղծողներուն այս մասին բռնած ընթացքը, այս ապացոյցը թէթե բանի մը տեղ պիտի չգնենք:

Արչափ տարբեր է Քրիստոսի և անոր Առաքելոց ընթացքը այս մասին սուտ կրօնքներու ու սուցիչներէն: Արբոր Քրիստոս և անոր Առաքելները կրխօսին հանդերձեալ աշխարհին և վարձքի ու դատապարտութեան վրայ, յիշաւի անանկ խօսքերով է որ զօրաւոր բարոյական տպաւորութիւն մը յառաջ կրբերեն, բայց և այնպէս իբրև մէկ խիստ ու զգուշաւոր գաղտնիք մը կրխօսին: Իրենց խօսքերը ընդհանուր են մասնաւոր բաներու վրայ չկան երկայն խօս-

քեր, որպէս թէ մարդոց հետաքրքրութիւնը յագեցնելու կամ երեւակայութիւնը սանձարձակ թողելու համար: Անոնք կը յիշեն «երկնից թագաւորութիւն, յաւիտենական կեանք, անթառամ փառաց սրակ, կեանք ու անմահութիւն, շօրը տունը, շատ բնակարաններ» . բայց այս ալ կըսեն թէ «աչք չէ տեսեր, և ականջ չէ լսեր, ու մարդու սրտին մէջ չէ ինկեր այն բաները՝ որ Աստուած իր սիրելիներուն պատրաստեց»: Աւրնդհակառակն կը յիշեն «կրակ որ բնաւ չմարիր», «ուր որ անոնց որդը չմեռնիր և կրակը չմարիր», և «յաւիտենական կրակ սատանային և անոր հրեշտակներուն համար պատրաստուած» . նաև «յաւիտենական կործանում Տէրօջը երեսէն և անոր դօրութեան փառքէն», ու «խաւարի մէզ յաւիտեան» . բայց բնաւ մանրամասն չեն ստորագրեր այս բաները: Ասանկ չեն անոնք որ սուտ յայտնութիւն մը կը քարոզեն . անոնք ընդհանրապէս շատ մանրամասն ստորագրութեան կը մտնեն հանդերձեալ աշխարհին մէջ մեռելոց վիճակին վրայ միայն հետաքրքրութիւնը յագեցնելու համար, կամ թէ լոկ մարմնաւոր ցանկութիւն գրգռելու համար: Վրիստոսի և անոր Առաքելոց կողմանէ ծածկոցը վեր առնելու և անտեսանելի աշխարհը մեղի ցուցնելու այն վեհանձն հրաժարումը ոչ միայն նման է բնութեան ընթացքին, այլ միայն այն է որչ իմացականութեան և ճշմարիտ փիլիսոփայութեան համեմատ եղած ընթացքը: Այս ինչո՞ւ համար ամէն ներշնչութիւն ունենալ ցուցը-

նողներէն այս մարդիկը այն ընթացքը բռնեցին, որ դժուար է, բայց շատ յարմար կուգայ մարդկային ազգին խոհուն մասին ծանրալուրջ դատողութեանը :

Եւ քիչ նշանաւոր չէ այն նմանութիւնըն ալ որ կայ բնութենէն ստացուած գիտութեան ու Մատուածաշունչէն ստացուածին սահմաններուն մէջ . կամ թէ՛ իմ խորհուրդըս աւելի ճշդութեամբ յայտնելու համար, ըսեմ երկուքին ալ տուած ծանօթութիւնը անհուն անծանօթութեան կերթան : Բնութեան ուսանողը որչափ ժամանակ և գիտութեան որ ճիւղին վրայ որ աշխատի, ինքզինքը բնաւ գիտութեան կատարելագործութեան մօտեցած չգտնէր : Եւ որչափ յառաջ երթայ՝ այնչափ աւելի կաղաղակէ, Ի՞նչ առարկայ կայ քննութեան՝ որուն ծայրը անհունութեան չհասնի : Իհատ յաջող եղած ատենը անգամ ինքզինքը նման կրգտնէ տղի մը որ ծովեղերքը կեցած քարի կտորները կը ժողվէ, երբ ճշմարտութեան մեծ ուկիանօսը իր առջին կեցած է : Մէկ մարդու մը իմացական տեսութիւնը ուրիշինէն ընդարձակ կրնայ ըլլալ, կրնայ ըլլալ որ աւելի բացը ըլլայ իր հորիզոնը . բայց երկինքը երկուքին ալ միօրինակ կրնաներուն վրայ կրգոցուի, և գիտցուած բանը անհուն անծանօթութեան կը հասնի : Բնութիւնը մեզ անհունութեան մէջ տեղը կրգնէ . անիկա կը ցուցնէ մէկ հաւանական կապակցութիւն մը մեր բնակած մոլորակին և այն անթիւ աշխարհներուն մէջ որ կը շարժին

պարապութեան մէջ . վերաբանութեան կանոնով
 կիմացնէ թէ հաւանական է որ նիւթական
 տիեզերքին ընդարձակութեանը համեմատ բարոյական
 և իմացական էակներու կարգ մը կայ . կրղարթուցանէ
 մեր հեռաքրքրութիւնը աստղաշին աշխարհներու
 մէջ բնակողներուն կերպարանքներուն և իրենց գոյութեան
 կերպերուն վերաբեր . բայց այն հեռաքրքրութիւնը
 յագեցնելու միջոց չտար : Մնութեան խօսքը մարդուն
 այս է , Քուն աշակերտ մըն ես Մստուծոյ կառավարութեան
 մեծ դպրատան մէկ կարգին : մէջ , թոյլտուութիւն
 եղած է քեզի կարծել թէ կան ուրիշ բարձրագոյն
 կարգեր ալ , բայց ոչ թէ գիտնալ այն տեղ
 սորվուած բաներէն մէկ բան մը : Մու գործդ
 հոս սորվելիք դասերդ սորվիլ և անով
 գոհ ըլլալ է . թէպէտ և չես կրնար
 չգիտնալ որ ամեն ծանուցուած ճշմարտութիւնները
 վերաբերութիւն ունին շատ անձանօթ եղածներու
 հետ : Ալ ճիշդ այսպէս է Մստուածաշունչն ալ :
 Չներկայացնել մեզի ուսումնական կանոնով
 կարգաւորեալ ճշմարտութեան դրութիւն մը ,
 որուն մարդկային միտքը կրնայ խելք
 հասցընել և ըմբռնել : Մնոր ճշմարտութիւնները
 յաւիտենականութենէ յաւիտենականութիւն
 կրնգարձակեն : Ալ թէ բնութիւնը խորին
 գաղանխքներու կրտանի մեզ , նոյնպէս կրնէ
 և Մստուածաշունչը : Ալ թէ այն կրթողութեզ
 հոն որ զարմանեալք և խոնարհութիւն ընենք ,
 նոյնպէս կրնէ Մստուածաշունչը : Վաղտնիքները
 իբրև Քրիստոնէութեան մէկ մասը կր

բռնենք մենք, կրսենք թէ բնութեան Աստուծո՞ւմէն եկած կրօնքը առանց դադանիքի չկրնար ըլլալ. մեզի շնորհործեր անհաւատին այն նախատինքը թէ "Վ՞նչ տեսակ յայտնութիւն է դադանիքի յայտնութիւնը": Մենք անոր կրսենք թէ Անիկա եղելութեան մը յայտնութիւնն է, որուն ամեն կերպերը և յարաբերութիւնները մեզի ծանուցուած չեն. կամ թէ յայտնութիւնն է անանկ եղելութեան մը որ կրնայ ըլլալ որ արդէն ծանօթ եղած բանի մը հակառակ երևայ: Ասա կրսենք թէ Անհուն դադափարի մը մասերուն յայտնութեանը մէջ այսպէս յարաբերութիւններ ունեցող ճշմարտութիւններ գտնուիլը բնականապէս կրկարծուի: Բնաւ յայտնութիւն մը պիտանի չէ՞, եթէ պայծառ՝ կատարեալ և որոշ չըլլայ: Ապա ի՞նչ յայտնութիւն է ուրեմն որ բնութիւնը կրնէ երկնից աստղերուն վրայ, ազօտ՝ հեռու՝ մութ՝ հաղարաւոր խնդիրներ հանող և ոչ մէկին պատասխան տուող. բայց և այնպէս անհուն պիտանութիւն ունի ասիկա մարդուն: Աւ այս կերպով է որ Աստուածաշունչը իբրև ընդունուած կրբռնէ թէ կան ուրիշ կարգեր իմացական էակներու՝ հրեշտակներու՝ հրեշտակապետներու՝ պետութիւններու՝ իշխանութիւններու. ճիշդ անանկ իմացական ու բարոյական դրութիւն մը կը ցուցնէ որ Աստուծոյ գործքերուն վրայ մեր ներկայ գիտութենէն հաւանական կերևի. բայց ասոնց մասնաւոր պարագաները տրուած չեն. միայն կը ցուցնէ Սուրբ Վիրքը անոնք՝ ինչպէս որ գիշերն ալ աստղերը

կըցուցնէ . և բնութեան պէս մեզ կըթողու ան-
հունութեան մէջ տեղը կեցած՝ հազարաւոր հար-
ցումներ ունենալով չպատասխանուած : Արդ՝
չեմ կրնար այսպէս չխորհիլ թէ Աթէ Աստուա-
ծաշունչը մարդոցմէ շինուած ըլլար, կամ կա-
տարելապէս կանոնաւորած դրութիւն մը պիտի
ըլլար մարդկային իմացականութեան պայծառու-
թիւնովը և նոյն ատենը այն զօրութիւնովը . կամ
թէ պիտի ըլլար անսանձ՝ չափազանցական և
անհիմն . կամ թէ պիտի ջանար հեռաւոր և
ապագայ աշխարհներուն գաղտնիքները մանրա-
մասն բացատրել :

4. Անանկ մէկ նմանութիւն մը կամ համեմա-
տութիւն մը կայ Աստուծոյ գործերուն և Աս-
տուածաշունչին մէջ, որ իրաւամբ կրնանք ակն-
կալել թէ երկուքն ալ Աստուծմէ եկած են,
վասնզի մտքի և բնաւորութեան նոյն վիճակը
պէտք կըլլայ երկուքին ալ յաջող կերպով ու-
սանելուն : Այն ոգին՝ որ Քրիստոս իր սորվեցու-
ցած մեծ ճշմարտութիւնները պատշաճ կերպով
հասկրնալու և ընդունելու համար էականապէս
հարկաւոր կըսեպէր, ճշմարիտ փիլիսոփայական
ոգիին հետ նոյն ըլլալը՝ առաջ Պաքօն այն ե-
րևելի հեղինակին դիտողութեանը տակն ինկած
է : Հատ նշանաւոր են իր խօսքերը, «Մարդոց
թագաւորութիւնը» կըսէ, «որ հիմնուած է դի-
տութեան վրայ, Աստուծոյ թագաւորութիւնը
մտնելու կերպէն տարբեր կերպով չմտնուիր, որ
է պզտիկ տղու մը պէս ըլլալու պայմանովը» :
Ասոր միտքը և ճշմարտութիւնը քիչ մը մտա-

գրութիւն ընելով՝ գիտութեան պատմութիւնը
 յայտնի կըլլայ: Արջափատեն որ մարդիկ կըջանա-
 յին տեսական քննութեամբ իմանալ բաները և
 դատի նստիլ Աստուծոյ՝ որոշելու թէ ի՞նչ բան
 պէտք էր ընել, փոխանակ իբրև աշակերտ բնու-
 թեան գիրքին առջևը նստելու, անկէ անդին
 տղայական ու անտեղի դաղափարներ չէր ըլլար՝
 որոնց մէջ ինկան: Նայց տեսական գիտութեան
 հպարտութիւնը մէկդի դնելով՝ ուսանողի և գի-
 տողի խոնարհ կերպարանքը առած ու բնութեան
 մեկնիչն եղածին պէս, գիտութիւնը սկսեց յա-
 ռաջ երթալ: Մարդոց մէջ գիտութեան տա-
 ճարը կանգնեցնելու վրայ խօսք կըլլար, որպէս
 թէ իրենք պիտի շինէին անիկա: Նայց եթէ տա-
 ճար մը կար՝ կրկենար անիկա, ինչպէս որ հիմա
 կրկենայ, իր վսեմ վեհափառութիւնովը Աս-
 տուծոյ գործքերուն արարչութենէն հետէ.
 և մարդոց բոլոր ընել կըցածը՝ անոր ծածկոցը
 բանալ և անոր գեղեցիկ համեմատութիւնները
 ցուցնել է: Ղշմարիտ փիլիսոփան իր բովէն բան
 մը շինել չխորհիր: Անիկա կիմանայ որ ինք ուսա-
 նող մը և միայն ուսանող մըն է բնութեան ոտքը:
 Նոյրովին կըզսպէ երևակայութիւնը՝ որչափ գե-
 ղեցիկ և հրապուրիչ ալ ըլլայ անոր ձևացու-
 ցած տեսական դաղափարները. կըմերժէ ամեն
 նախապաշարմունք և առաջուց ենթադրեալ կար-
 ծիքները, և աներկիւղ կերթայ ուր որ բնութիւ-
 նը՝ փորձը և իրողութիւնը կըտանի զինքը:

Աթէ կըսեն թէ Մեծ փիլիսոփաներ եղած են
 որ անհաւատ էին, և այս ոգին չունէին. կըպա-

տասխանեմ թէ Ոչ : Ազաճ են երկրորդական կարգի փիլիսոփաներ, որ երևելի եղան մեծագոյն անձանց ըրած գիտերուն չետեւելով : Բայց բոլոր այն մեծ գիտերը դանող անձինքը՝ որոնց միտքը սերտ կապուած էր բնութեան հետ, նշանաւոր կերպով այս ոգին տէր էին :

Բայց աւետարանին գիտութեանը համար անոր այս ոգին ու բնաւորութիւնը պահանջելը, գրեթէ հարկ է ցուցնել : Առաջին անգամ հոն կրդանենք պղտիկ տղու պէս ըլլալու պահանջմունքը : Անիկա կրպահանջէ որ ամեն երևակայութիւն դադրի, և ամեն բարձր բան որ ինքզինքը Աստուծոյ գիտութեանը դէմ կրբարձրացնէ՝ ցածնայ, և ամեն խորհուրդ Քրիստոսի նազանդութեանը հպատակի : Ոչ մէկ յառաջագիմութիւն մը կրլայ կրօնքի մէջ կամ գիտութեան մէջ, մինչև որ այն հպարտութիւնը՝ որ կրբարձրացնէ ինքզինքը Աստուծոյ վրայ դատաստան ընելու, և որոշելու թէ Աստուծոյ ինչ պէտք էր ընել, չգտուի . և մինչև որ մարդը իբրև ուսանող Յիսուսի ստքը չկենայ, ինչպէս որ փիլիսոփան կրկենայ բնութեան ոտքը : Ահա այսչափ համաձայն է թէ ճշմարիտ կրօնքին և թէ ճշմարիտ փիլիսոփայութեան ոգին . և այսչափ կատարելապէս ցուցուց մեր Փրկիչը երկուքին ալ պէտք եղած ոգին հազար ութը հարիւր տարի առաջ : Արդարև դարմանալի է որ երբոր բնական գիտութիւն ստանալու կերպին մեծ մեկնիչը ուղեց ցուցնել ճշմարիտ կերպին ճշմարիտ ոգին, չգտաւ անկէ ուրիշ լաւագոյն խօսք մը որ Քրիստոս ըսաւ՝ մակաճական

փիլիսոփայութիւնը մարդոց խորհուրդին մէջ չին-
կած, ուսման պատշաճ կերպը ցուցնելու. համար
Մատուծոյ թագաւորութեան և կառավարութեա-
նը մէկ բարձրագոյն մասին մէջ: Աւրեմն եթէ
բնութիւնն ու յայտնութիւնը այսպէս նման կեր-
պով յարաբերութիւն ունին մարդկային մտքին,
հարկաւ նման եղած պիտի ըլլան մէկզմէկու:

Մ. Ես գլխուն նիւթին հետ կից կապակցութիւն
ունի սա խորհրդածութիւնն ալ, թէ Բնութիւնը
որչափ որ կը սորվեցնէ բնական կրօնք և բարո-
յական ճշմարտութիւն, թէ անոր և թէ Քրիս-
տոնէութեան սորվեցնելու կերպերուն և ար-
դիւնքներուն մէջ նմանութիւն կայ: Չկրնար
բան մը սելի յայտնի ըլլալ, քան թէ այս
թէ Մատուծոյ դիտաւորութիւնը մարդը իր այս
վիճակին մէջ փորձի դնել է, անանկ որ մէկ կող-
մէն յաղթող զօրութիւն մը կամ շարժառիժ-
ներու մեծ առաւելութիւն մը չըլլայ, այլ գէշ
ընտրութիւնը կարելի ըլլայ, և աղէկը շատ անգամ
դժուար: Ասկէ ուրիշ ենթադրութիւն չյարմա-
րիր մարդուն ամփոփեալ դիտութեանը կամ այն
երկու տեսակ մէկզմէկու խառնուած և հաւասա-
րակշիռ եղած շարժառիժներուն, որոնց մէջ շատ
անգամ կը գտնուի իր ընելիքը որոշելու ատեն:
Մատ այնմ թէպէտ բնութեան սորվեցուցած բա-
րոյական և կրօնական բաները իրական և վա-
ւերական են, ու այն որ լսելու ականջ ունի կրնայ
լսել, բայց և այնպէս բնաւ բռնաւորական չեն:
Մ. Են օրէնքներուն ձայնը հեզիկ ու մեղմ է, դիւ-
րաւ կը խափանի կրից յուզմունքէն և աշխարհիս

աղաղակէն. բայց անուշ ու զօրաւոր է մտիկ ընե-
լու յօժար եղողներուն ականջին: Աւ ըստ այնմ՝
«բնական առաքինութեան լոյսը անառակութեան
ընթացքով մարելէն, և մոլութեան մէջ իրենց
ընտանի ըլլալովը ամեն բարի բաները արհամար-
հելու սովորութիւն մը ստանալէն աւելի դիւրին
և աւելի սովորական բան չկայ մարդոց»: Ա. յս
է ահա այն կերպը՝ որով բնութիւնը կը ստորվե-
ցնէ բարոյական և կրօնական ճշմարտութիւն, միշտ
նոյն հեղիկ ձայնը նաչեցնելով, մարդիկ թէ մը-
տիկ ընեն թէ մերժեն. և այսպէս է արդիւնքը:
Քրիստոնէութիւնը նոյն կերպին սկզբունքը կը-
բունէ, և արդիւնքներն ալ տարբեր չեն տեսակաւ:
Թէ անոր Աստուածային ծագմանը վկայութիւնը
քննենք, և թէ անոր ցուցուցած բարոյական ճշ-
մարտութիւնները, կըտեսնենք որ թէպէտ ա-
նանկ վկայութիւն ունի որ յագեցուցիչ է ամեն
անոնց որ կուզեն մտադրութիւն ընել անոր, սա-
կայն չբռնադատեր մարդը այն վկայութեանը մտա-
դրութիւն ընելու: Արդարեւ ասոր ձայնը աւելի
բարձրաձայն է. և այն որ ականջ ունի կրնայ լը-
սել. բայց այն ջատիպեր մարդիկ մտադրութիւն
ընելու: Ըստ այնմ ինչպէս որ կըտեսնենք որ
մարդիկ բնական խիղճին օրէնքը և առաքինու-
թեան ընդհանուր առաւմները չեն նկատեր, անանկ
ալ կըտեսնենք Աստուծոյ յայտնութեանը վրայ
տղէտ կըմնան և հետեւապէս կարհամարհեն ա-
նիկա:

Կիտեմ որ յայտնութեան այս վիճակը առար-
կութիւն ըրած են անոր դէմ: Ըսած են թէ՛

Եթէ Մատուած յայտնութիւն մը տար, անոր հետ անանկ վկայութիւն մը պիտի տար որ ստիպէր ամեն միտք համոզուելու, երկինքին վրայ պիտի գրէր անիկա, բայց առարկողը չմտածեր որ եթէ անանկ ըլլար, այս կեանքը փորձի վիճակ պիտի չըլլար, ոչ ալ աւետարանին յայտնութիւնը բնութեան յայտնութեանը հետ զուգընթաց: Միթէ բնական կրօնքին մեծ ճշմարտութիւնները երկինքին վրայ գրուած են: Միթէ ամեն մարդոց բռնադատութիւն կրկայ բարեխառնութեան՝ արդարութեան՝ բարետիրութեան հասարակ առածներուն մտադրութիւն ընելու: Աւտի փոխանակ Քրիստոնէութեան վկայութեան և օրէնքներուն բնութեանը ստիպողական չըլլալը անոր դէմ փաստ մ'ըլլալու, փաստ մըն է անոր այն Մատուածին ըլլալուն, որ բնական կրօնքին լոյսը և մինչև անգամ դիտութեան լոյսն ալ աշխարհիս մէջ ճիշդ նոյն պայմաններուն տակը դրաւ:

5. Քրիստոնէութիւնը համաձայն է Մատուծոյ գործքերուն հետ՝ միջոցի ղրութիւն մ'ըլլալով: Ոմանք կը հարցնեն, Եթէ Մատուած մարդոց սրբութիւնը կուզէ, ինչո՞ւ իսկոյն անոնք սուրբ չընեն, և կառարկեն թէ անոր իր կամքը կատարելու համար միջոցներու այնչափ երկայն ընթացք մը բռնելը՝ իր կարողութեանը և իմաստութեանը պակասութիւն մըն է: Բայց անշուշտ հարկ է ինձի ըսել թէ Նորոք բնութիւնը միջոցի ղրութիւն մըն է, թէ կատարուելու վախճանը բնաւ չկատարուիր առանց միջոցի, և շատ անգամ պէտք է դարեր անցնին որ այն վախճանը կատարուի Մատու

րակոյս Աստուած կրնար ծառ մը իսկոյն ստեղծել
բոլոր կատարելութիւնովը . բայց փոխանակ
այսպէս ընելու՝ փոքր սերմէ մը կրբուսցնէ ա-
նիկա, և իր արևը անոր վրայ կը ծագեցնէ և
անձրևով կոռոզէ անիկա, և եղանակներուն յա-
ջորդական ներգործութիւններուն ենթակայ կընէ .
(որոնց ոմանց ատենը անանկ կերևի թէ բնաւ յա-
ռաջադիմութիւն չընէր) մինչև վերջապէս դէպի
երկինք կը բարձրանայ, և դարերու փոթորիկները
բանի տեղ չդնելով կը դիմանայ: Այսպէս երկ-
նից թագաւորութիւնը հողիին մէջը մանանեխի
հատին նման է, որ արդարեւ ամեն սերմերուն փոքրն
է, բայց Աստուած կաճեցնէ անիկա և իր երև-
սին լոյսը անոր վրայ կը ծագէ, կոռոզէ անիկա իր
չնորհաց ցօղով, մինչև որ ըլլայ պտղաբեր տունկ
մը Աստուծոյ պարտէզին մէջ: Բայց և այնպէս
ոմանք որ կը հաւատան թէ բնութեանը Աստուծ մէ-
է, աւետարանին առարկութիւն կը բերեն բուն
այն պարագաները՝ որով անիկա կը համաձայնի
Աստուծոյ ուրիշ գործքերուն:

Այլ հոս պէտք է յիշել թէ մէկ պատճառ մը
կայ բաները սխալ տեսնելու կամ ըմբռնելու, որ
այն ալ հասարակ է թէ բնութեան և թէ Վրիս-
տոնէութեան: Միջոցի դրութիւն ըսելով կիմա-
ցուի թէ մէկ գաղափար մը հետզհետէ իր կատա-
րելութեանը պիտի հասնի, և հետեապէս այն
գաղափարը շատ տարբեր երևոյթներ պիտի ներ-
կայացնէ՝ անոր այլ և ուր աստիճաններուն մէջ
անոր վրայ նայողներուն: Կան անանկ գործո-
ղութիւններ բնութեան մէջ՝ որ աշխարհիս առա-

ջին դարերուն մէջ չէին կրնար հասկցուիլ : Ինչ-
 պէս՝ երկնային մարմիններուն ոմանց շարժումը ,
 և անոնց երևնալու ատենները այնչափ մութ և
 բազմակնճիուն՝ որ գրեթէ վեց հազար տարուան
 գիտողութիւն և ուսմունք պէտք եղաւ անոնց
 դրութիւնը և կարգադրութիւնը հասկընալու . և
 այն փիլիսոփային միտքը որ քննեց այն մարմիննե-
 րը անատենը՝ երբ ասանկ գիտողութիւններ չէր
 կրնար ըլլալ, հարկաւ պիտի մնացած ըլլայ չյա-
 գեցած և շիտածած : Անոնց լոյսը իր վրայ կը ծա-
 գէր , և ինք կը տեսնար անիկա , բայց չէր կրնար
 հասկընալ անոնց շարժմանը փիլիսոփայութիւնը
 և համաձայնութիւնը : Այսպէս է և Քրիստո-
 նէութիւնը . թէպէտ առատապէս կուտայ՝ մեզ
 առաջնորդելու համար , պէտք եղած գործնական
 լոյսը , բայց մարդիկ անոր փիլիսոփայութեանը
 վրայ դատողութիւն ընելու յարմար դիրքի մէջ
 չեն : Ասոր վրայով դատեցին և տակաւին կը-
 դատեն շատ ծուռ կերպով , և հաւանական է որ
 անոնցմէ ոչ մէկը ամեն կերպով ուղիղ դատած է .
 անոնք տակաւին ուղիղ դիրքի մէջ չեն : Եւ որ
 մարդ մը կենայ արևին վրայ , և իսկոյն աստեղա-
 բաշխ մը պիտի ըլլայ . իր դիրքը պիտի կարողա-
 ցնէ զինքը տեսնել մոլորակներուն շարժումնե-
 րը ճիշդ ինչպէս որ են : Աւ Քրիստոնէութիւ-
 նը ճիշդ ասանկ կէտ մ' ըլլալուն վրայ կը խօսի
 որ իրեն և Աստուծոյ բարոյական կառավարու-
 թեան վերաբերութիւն ունի , ուր պիտի կենայ
 ամեն մարդ : Ամացնէ թէ « ամեն բաներուն
 կարգադրութեանը ատենը » կայ : Իսկ մինչև ան-

ատենը անոնք որ կըմերժեն Քրիստոնէութեան գործնական լոյսին առաջնորդութիւնը, անոր փիլիսոփայութեան այն ինչ կէտերը հասկընալ չկրնանալնուհ համար, ճիշդ այն ընթացքովը գործած կըլլան՝ որ պիտի ըլլային Աւետոնէն առաջ եղող փիլիսոփաները, եթէ աչքերնին գոցէին որ լուսինին լոյսը չտեսնեն, անոր շարժումները հասկընալ չկրնալնուհ համար:

6. Քրիստոնէութիւնը նման է բնութեան դրութեանը, դարմանի դրութիւն մ' ըլլալովը: Արբոր մարմինը կը հիւանդանայ, երբոր մէկ անդամ մը կը կոտորի, երբոր քաղցկեղը կսկսի, բնութիւնը անշուշտ կորստեան չթողուր մարդը: Անիկա հաստատեր է մէկ դարմանի դրութիւն մը. և եթէ պատշաճ դեղեր ըլլայ ժամանակին, մարդը կառողջանայ: Արդ այս դարմանի դրութիւնը ինչպէս որ է բնութեան ընթացքին մէջ, Քրիստոնէութիւնն ալ անանկ է Աստուծոյ բարոյական կառավարութեանը մէջ: Այն կերպով կուգայ մեզի ոչ թէ իբր առողջներու, այլ իբրև հիւանդներու, և կառաջարկէ օգնութիւն անոր նման պայմաններով: Հիւանդ եղողը բաւական հաւատք ունենալու է դեղին վրայ որ պատշաճ քրնութիւն մը ընէ անոր վրայ, և այնպէս ըլլալու են անոնք որ կուզեն վայելել Քրիստոնէութեան օգուտը: Անութեան դարմանի դրութիւնը կը պահանջէ շատ անգամ մեծ ներկայ ցաւ քաշել, որ մեծագոյն ապառնի ցաւը արգիլուի, և Քրիստոնէութիւնը կը պահանջէ անանկ դժուար անձնուրացութիւններ և զոհեր ընել, որ Քրիստոս աջ

ձեռքը կտրելու և աջ աչքը հանելու կրնանցը-
նէ : Բնութեան դարմանի դրութիւնը իսկոյն չա-
ղատեր հիւանդը իր հիւանդութեան ամեն ցա-
ւալի հետեանքներէն . կը չարչարուի և կրնայ ըւ-
լալ որ շատ ժամանակ քաշէ անոր ցաւերը
ընդդէմ ամենալաւ դեղերու : Ա՛յսպէս այն որ
Քրիստոնէութիւնը կրնդունի , իսկոյն չաղատիր
մեղաց ամեն ցաւալի հետեանքներէն : Ա՛սոր պատ-
ճառաւ կրտանջուի և կը մեռնի . բայց դեղը ամե-
նագորաւոր է . և անով վերջապէս պիտի ազատի
մեղքէն բոլորովին , և հասնի կատարեալ բարո-
յական առողջութեան : Բնութիւնը մարդոց մէջ
ղանազանութիւն չընէր . անոր տուած ցաւերը
այնչափ սաստիկ են , և առաջարկած դեղերը այն-
չափ դառն են մեկուն՝ որչափ միւսին : Քրիստո-
նէութիւնն ալ բոլորովին անաչառ է . ամեն ըն-
դունողները պարտին ընդունիլ նոյն խոնարհե-
ցնող պայմաններովը . և ամեն անիկա ընդու-
նիլ չուզողներուն նոյն ահարկու պատիժը կը ս-
պառնայ : Ա՛ անորոց կրտեսնուի որ շատ կից նը-
մանութիւն մը կայ բնութեան մէջ եղած կառա-
վարութեան ոճին և Քրիստոնէութեան յայտնա-
ծին մէջ :

7 . Քրիստոնէութիւնը նման է բնութեան
դրութեանը՝ միջնորդական դրութիւն մ'ըլլալով
վը : Ա՛սիկա յիշելովնիս դիտաւորութիւննիս վի-
ճաբանութեան մանեղ չէ . վասն զի ամենը կրն-
դունին որ Քրիստոսի յօժարութեամբ քաշած
չարչարանքներովը և մահուամբը կրնդունինք դո-
նէ երկրաւոր մեծ բարիքներ , և ես այս բանը կը

պնդեմ թէ Մենք անոր՝ թէ այս ցած զգալի բաներուն վերաբերեալ ըրած միջնորդութեանը նայինք, և թէ բռնենք անիկա իբրև ներողութեան միակ հիմը, տակաւին սկզբունքը՝ իբրև միջնորդութեան սկզբունք, փոխուած չըլլար, և համաձայն է հանապազ Մտուծոյ բնական կառավարութեանը մէջ մեր դիտողութեան տակ ինչպէս բաներուն: «Ղշխարհը», կրտէ Պրզըր անուն հեղինակը, «անանկ կազմութիւն մը կամ դրութիւն մըն է որուն մասերը փոփոխ վերաբերութիւն մ'ունին մէկըմէկու: և Տնութեան ընթացք կոչուած մէկ կարգադրութիւն մը կայ բաներու՝ որ աստիճանաւ հետզհետէ յառաջ կերթայ, որուն յառաջ տանելուն Մտուած մեզ այլ և այլ կերպով գործակից դրած է: Եւ երբոր բնական նախախնամութեան հանապազօրեայ ընթացքին մէջ սահմանուած է որ անմեղ մարդիկ յանցաւորներուն պակասութեանը պատճառաւ ներողութիւն քաշեն, ասոր դէմ ալ կուգայ նոյն իսկ առաքելութիւնը, որ կը բերուի մեր հիմա քննած բանին դէմ: Վերիստոնէական սահմանադրութեան անհունապէս մեծագոյն կարևորութիւնը՝ որուն դէմ այս առաքելութիւնը կը բերուի, արդեւ չէ, այլ տակաւին կրնայ ըլլալ, ինչպէս որ յայտնապէս ալ է, ճիշդ այն տեսակ սահմանադրութիւն մը՝ որուն օրինակները ամեն օր աշխարհիս մէջ կը տեսնենք»: «Մարդիկ իրենց յիմարութիւնովը այն աստիճան տառապանաց ու ներողութեան մէջ կը ձգեն ինքզինքնին որ անհրաժեշտ պիտի վերջացնէ կեանքերնին, եթէ ուրիշները միջամուխ ըլլալով

օգնութիւն չընեն: Աստուած բնութեան օրէնքովը կը հրամայէ որ այս օգնութիւնը ընենք անոնց, որ շատ անգամ չենք կրնար ընել առանց մենք մեծ ցաւ ու աշխատութիւն ու նեղութիւն կրելու: Այլ կրտեսներնք թէ ինչ զանազան կերպերով մէկուն նեղուելովը ուրիշի մը սփոփանք կը լայ, և ինչպէս մեր դիտողութեանը տակ ինչպիսի բնութեան սահմանադրութենէն և օրէնքներէն կը հետեի ասիկա, և մարդիկ ընտանի ըլլալով ասոր՝ զարմանալի չերևիր իրենց: Անանկ որ Քրիստոսի արդեանցը դէմ այն տեսակ առարկութիւններու վրայ պնդելուն պատճառը՝ կամ այսէ որ չեն մտածեր Աստուծոյ բոլոր սահմանադրութիւնները հաստատուն և միակերպ ըլլալը, կամ թէ կրմունան որ փոխանակութեամբ պատիժ կրելը անանկ սահմանադրութիւն մըն է՝ որուն փորձը ամեն օր կը լայ: Ասանորոյ ինչպէս որ չարիքներ՝ որոնցմէ ինքնիրեննիս չենք կրնար ազատիլ, Աստուծոյ նախախնամութեանը մէջ շատ անգամ կը վերցուին մեզմէ մեր ընկերներուն ձեռնտուութեամբը, անանկ ալ կատարելապէս համաձայն է նոյն նախախնամութեանը հետ սեպել թէ աւելի մեծ չարիքներ՝ որոնցմէ մենք չենք կրնար ազատիլ, կը վերցուին Աստուծոյ Արդւոյն մէջ մտնելովը:

Ասոնց և ուրիշ մասնաւոր բաներու մէջ՝ որ կրնան յիշուիլ, կրտեսներնք անանկ նմանութիւն մը Քրիստոնէութեան և բնութեան մէջ, որ կը ցուցնէ թէ անոնք մի և նոյն ձեռքէ եկած են: Ահա մէկ փորձ մը, այսինքն անոր ընդհանուր

նմանութիւնը և Տամաձայնութիւնը Աստուծոյ գործքերուն և անոր բնական ու նախասնամական կառավարութեանը հետ, որով ոչ մէկ սուտ դրութիւն մը փորձուելով կրնայ շիտակ երեւիլ : Աւ մասնաւորապէս աւելի նշանաւոր է այս բանը որ Քրիստոնէութիւնը այս փորձին կրնայ դիմանալ, երբոր կրբազգաթեւեր անիկա Հրէական դրութեանը հետ իր աշխարհ նոր մտած առեներ : Աւ այս խորհրդածութիւնովը կը վերջացնեմ այս ճառը :

Քրիստոնէութիւնը երբոր սկիզբ առաւ՝ ընդունեց Հրէական կրօնքը իբրև Աստուծմէ, և Հրէաներուն անիկա մերժելու պատճառ մըն էր այս բանը՝ թէ անիկա կը կործանէր իրենց օրէնքը և արարողութիւնը : Ասանորոյ հարկ էր ցուցնել՝ որ այս էր Առաքեալին Աբրայեցւոց թուղթը գրելուն գլխաւոր նպատակը, թէ Քրիստոնէութիւնը կատարելապէս համաձայն է Հրէական կրօնքին հետ, երբոր ուղիղ հասկըցուի անիկա, և արդարև հարկաւոր էր անոր կատարելութեանը համար : Այժմէ Հրէայք կը պնդէին թէ Քրիստոնէութիւնը քահանայութիւն չունի, Առաքեալը կը հաստատէ թէ անանկ քահանայապետ մը ունի որ կը վայելէ մեզի, «Սուրբ՝ անմեղ՝ անարատ՝ մեղաւորներէն զատուած ու երկինքէն բարձրացած» : Այժմէ անոնք կը հաստատէին թէ Քրիստոնէութիւնը տաճար չունի, Առաքեալը կը ցուցնէ թէ Քրիստոս «պաշտօնեայ էր ճշմարիտ խորանին որ Տէրը կանգնեց, և չէ թէ մարդ» : Աւ թէ «Քրիստոս չէ՛ թէ ձեռքով շինուած Սուրբ

տեղերը մտաւ, որ ճշմարտին օրինակներ էին, հա-
պա բուն երկինքը": Աթէ կառարկէին որ Քրիս-
տոնէութիւնը ո՛չ սեղան ունի և ո՛չ զոճ, Ա-
ռաքեալը կը հաստատէ թէ "հիմա մէկ անգամ
մը դարերուն վերջը իր անձին պատարագովը
յայտնուեցաւ մեղքը մէկգի ձգելու համար":
Այսպէս Առաքեալը ցուցուց որ Հրէական կր-
օնքը ծէսերու և արարողութեանց խանձարու-
րէն արձակուելով՝ Քրիստոնէութեան հետ նոյն
էր հոգիով: Աւ Նոր կտակարանի բոլոր Հե-
ղինակները նոյն համաձայնութիւնը կամ կը շա-
նան ցուցնել, կամ իրրեւ ընդունուած վրան կը
խօսին: Բայց երբոր կը մտածենք թէ Քրիստո-
նէութիւնը զատ հոգևոր կրօնք մըն է առանց բեռ-
նաւորած ըլլալու արտաքին ձևերով, և թէ Հրէա-
կան կրօնքը երևոյթով ամեն ուրիշ դրութենէն
աւելի արուեստական էր, երբ կը մտածենք թէ
ոչ միայն համաձայնութիւն պահելու էր նախա-
տիպերու և արարողութիւններու հետ, այլ նաև
չատ մարդարէութիւններու կատարումներ ալ ըլ-
լալու էր, կը ատենենք որ անկարելի է ունիցէ
մարդկային ճարտարութեան կազմել դրութիւն
մը այնչափ նոյն իր սկզբունքներովը, բայց և այն-
պէս այնչափ տարբեր ցուցուցած երևոյթներովը:
Ա՛չ ալ արդարև կրնար մէկ շարժառիթ մը ըլ-
լալ ասանկ մէկ ջանք մ' ընելու, վասն զի ասոր
մէջ կը լաճ մեծ դժուարութենէն իզատ, Քրիս-
տոնէութիւնը՝ Հրէից յատկութիւնները բոլորո-
վին մէկգի ձգելով, բնաւ յոյս չէր թողուր որ
անոնց զօրաւոր ազգային զգացումները պիտի

տանին անիկա ընդունիլ • քանի որ ուրիշ աղ-
գաց առջև ալ այն ատելութեանը ենթակայ պի-
տի ըլլար, որ հարկաւ յառաջ պիտի դայ անոր
Հրէական կրօնքին վրայ հիմնեալ ըլլալէն : Աւ-
րատ այնմ կրտեսներք որ արդեամբք ալ թէ Հը-
րէաները և թէ Հեթանոսները հաւասարապէս դէմ
էին : Քայց հարկ էր ցուցնել համաձայնութիւն
՛ը այն երկու դրութիւններուն մէջ որոնց մէկն էր
բացարձակապէս աղգի մը սահմանուած՝ ուրիշ
դրութեան մը նախատիպն եղող՝ ծիսական՝ ար-
տաքին՝ շքեղ ու զգայարանաց ուղղուած, և միւ-
սը պարզ՝ ընդհանրական՝ առանց մեծ հանդէսի
կամ շքեղութեան. և ասիկա Պօղոս Առաքեալը
և Նոր Ատակարանի հեղինակները ընդհանրապէս
ցուցուցին :

Արդ՝ որչափ տարբեր փորձի մը տակ դրուե-
ցաւ հիմա Քրիստոնէութիւնը : Արնդունուի թէ
Աստուծոյ գործքերը անկէ են. և հիմա ճանչ-
ցուած է թէ որչափ պարզ են իրենց օրէնքնե-
րուն մէջ, որչափ բազմակնճիուն իրենց յարաբե-
րութիւններուն մէջ, և որչափ անհուն իրենց ըն-
դարձակութեանը մէջ : Աւ կրնայ մի և նոյն դը-
րութիւնը՝ որ այնքան կատարելապէս համաձայ-
նեցաւ Հրէից ամփոփեալ դրութեանը հետ, հա-
ւասարապէս համաձայնիլ Աստուծոյ գործքերուն
անհուն և անսահման դրութեանը և յարաբե-
րութիւններուն հետ : Արելի՞ բան է որ այն կը-
րօնքը որ ատեն մը մէկ տգէտ և բարբարոս ժո-
ղովուրդի մը արարողութեանցը մէջ ամփոփուած
էր, և իր տարածումը և կատարելագործութիւնը

ստացաւ՝ Քիզիգական դիտութեան կողմանէ մեծ
 տգիտութիւն եղած դարու մը մէջ, համաձայնի՝
 Մատուծոյ և անոր կառավարութեանը վրայ ըրած
 յայտնութիւններուն նկատմամբ, անոր բնութեանը
 և թափաւորութեանը վրայ հիմակուան մերունե-
 ցած բարձր գաղափարներուն հետ: Արնա՛ր Աւտոն
 երկնից ուսմունքէն Մատուածաշունչին ուսմանը
 անցնիլ, և զգալ թէ վար չի ջաւ. այո՛ ան-
 շուշտ: Մատուածաշունչին ցուցուցած Մատուծոյն
 բնութենէն և անոր յայտնած բարոյական դրու-
 թենէն բան մը պակաս չտեսնուիր, երբոր կը բազ-
 դատուին բնութեան ընդարձակութեանը և անոր
 օրէնքներուն պարզութեանը և վսեմութեանը
 հետ. այլ յաւէտ արժանի կը տեսնուին անանկ
 սքանչելի տէրութեան վրայ դահակալելու և տի-
 բելու: Ախթական տիեզերքը եթէ անհուն ալ
 չէ՛ անորոշ է ընդարձակութեամբ: Այն մառախ-
 լապատ կէտը՝ որ մէկ պարզ իրիկուան ատենը
 հազիւ թէ հաստատութեան խորհապատութեանը
 գոյնը կը փոխէ, հեռաւոր Օհր կաթին կամ
 Յարդգողի ձամբայ մըն է, անոր նման որ
 մեր երկինքին կամարին վրայ ձգուած է, որուն
 մէկ պղտիկ մասն է մեր արեգակնային դրութիւ-
 նը: Մասնկ լուսաւոր ձամբաներ երկնից վրայ ա-
 ռատութեամբ սփռած կը տեսնենք, որուն ամեն
 մէկը մեր համրելու կարողութենէն աւելի արե-
 գակներ կը պարունակեն. և ասոնք ամենը իրենց
 արբանեակ դրութիւններովը կը տեսնենք որ մէկ-
 տեղ կապուած են օրէնքով մը՝ որ այնչափ զօրա-
 ւոր է, որչափ որ պարզ ու անփոփոխ: «Անոնք

մէկտեղ կըկայնին ու բնաւ մէկը ետ չմնար" :
Բայց այս դրութիւնը գտնուելէն շատ առաջ՝ Աստուածաշունչին մէջ յայտնուած էր մէկ բարոյական դրութիւն մը՝ անոր բոլորովին համաձայն :
Կրտսնները ասոնց դուրսը կեցող և ամենուն վրայ բարձր իշխանութեամբ տիրող մէկ անհուն ու
"մի միայն իմաստուն Աստուած մը", "մէկ յաւիտենական թագաւոր մը՝ որ անեղծ ու աներևոյթ է" :
Մենէ վեր եղած հրեշտակային և Սերուբէական դրութեանց վրայ քիչ տեղեկութիւն ունինք . բայց կրտսնները մէկ օրէնք մը պարզ զօրաւոր և ծանրութեան օրէնքին պէս բնդհանրական , այս է սիրոյ օրէնքը՝ որ կըտարածէ իր իշխանութիւնը Աստուծոյ ամբողջ թագաւորութեանը վրայ , տիրելով հոն ուր որ այն ներկայ է , իր բնդհանրական իշխանութեան մէջ առնելով ամեն բարոյական շարժումներ , և իրեն նազանդութիւն եղած տեղը այն համաձայնութիւնը յառաջ բերելով՝ որ կրտսնները բնութեան շարժումներուն մէջ :
Այն տղայական բաներուն ոչ մէկը կրտսնները ասոր մէջ՝ որով ամեն ուրիշ դրութիւն նուաստացած են :
Այն օրէնքին վճիռները՝ անոր յայտնած բարոյական որպիսութիւնները և ցուցուցած վիճակները՝ ծագած ակնկալութիւնները , ամենը յաւիտենականութեան կերթան . և անբնդհատ իրենց հետ կըպահեն այն վսեմ շարժութիւնները՝ որ կըծագին Աստուծոյ փառաւոր գործերը քննելէն :
"Անդունդը անդունդին կըկանչէ" :

Ժ Ա Ռ Գ

Եթէ ինչպէս որ նախընթաց ճառովը ջանա-
ցինք ցուցնել, կրնայ ցուցուիլ բնութեան կազ-
մութեանը և Քրիստոնէութեան մէջ որոշ նմա-
նութիւն մը, ասիկա զօրաւոր հաւանականութիւն
մը կուտայ որ անոնք երկուքն ալ մէկ ձեռքէ
եկած են: Բայց եթէ ասանկ նմանութիւն մը
չկրնայ ցուցուիլ, Քրիստոնէութեան դէմ բան
մը չհետեիր. վասն զի այնչափ աննմանութիւն
կայ աշխարհիս նիւթական և հողեր կազմու-
թիւններուն մէջ և անոնց օրէնքներուն մէջ, որ
մէկուն վրայ կրնայ անանկ յայտնութիւն մ' ըլլալ
որ միւսին նմանութիւն մը չցուցնէ:

Բայց ասանկ չէ հիմա իմ մէջ բերելիք փաստս,
որ կելնէ Քրիստոնէութեան բնական կրօնքին
հետ համաձայն դալէն: Ճշմարտութիւնը մէկ է.
եթէ Մատուած յայտնութիւն մ' ըրեր է մէկ ե-
ղանակաւ մը, հարկաւ նոյն պիտի ըլլայ ուրիշ
եղանակաւ յայտնածին: Այստեղ կ'ընայ
ցուցուիլ որ Քրիստոնէութիւնը բնական կրօնքին
հաստատապէս սորվեցուցած բաներուն միաբան
չէ, ասիկա անոր դէմ վկայութիւն մը կ'ըլլայ:
Նոյնութիւնը Մատուած մէ է. անոր սորվեցուցած-
ներն ալ անկէ կ'ըլլան. և Մատուածային յայտ-
նութիւն ըլլալ պահանջող ուրիշ բանի դէմ
վճռական փաստ մը սեպելու եմ, եթէ կրնայ ցու-
ցուիլ որ անիկա հազառակ կուգայ բնական կրօն-

քին : Այլ միւս կողմէն եթէ կրնայ ցուցուիլ որ Քրիստոնէութիւնը կատարելապէս միաբան է բնական կրօնքին , և արդեամբք միայն այն կրտորվեցնէ անոր այն կատարեալ դրութիւնը որուն նմանը տեսնուած չէ , ասիկա մէկ զօրաւոր ապացոյց մը պիտի ըլլայ անոր , մանաւանդ երբոր կրտորհինք այն կրօնքին ինչպէս ծագումն առնելը :
 Բնական կրօնք ըսելով կուլեմ իմացնել Մատուծոյ և մեր պարտուցը վրայ այն գիտութիւնը որ մարդ կրնայ ստանալ առանց յայտնութեան : Բնական կրօնք ըսելը շիտակ չըլլար , երբոր կրդործածուի անանկ միտքով մը որ նշանակէ թէ յայտնեալ կրօնքը բնական չէ . վասն զի մարդուն նախնական ու բնական վիճակը Մատուծոյ հետ անմիջական հաղորդակցութիւն ունեցող վիճակ մըն էր . և մինչև անգամ հիմա յայտնութիւնը ամենաբարձր միտքով բնական է : Անիկա պէտք է գործածել միայն յայտնութեան սորվեցուցած գիտութիւնը բնութենէն ստացուած գիտութենէն որոշելու համար : Բնական կրօնքի վրայ շատերուն գաղափարը անդիի ծայր անորոշ է . բայց հիմա դրուած սահմանը ճշմարիտ ըլլալը յայտնի է , որովհետև միայն այն է որ կրնայ մէկ հաստատուն ու որոշ իմաստ մը տալ : Անոր նշանակութիւն չկրնար ըլլալ , ինչ որ մարդիկ արդեամբք սորված են բնութենէն , վասն զի ասիկա ատեն ատեն զանազանած է : Անիրաւութիւն ըրած պիտի ըլլանք բնութեան ազդմունքներուն եթէ Մատուծոյ և մարդկային պարտուց վրայ ամենէն լուսաւորեալ հեթանոսներուն ստա-

ցած գիտութիւնը ամբողջ Մնական կրօնք կոչենք :
Յայտնեալ կրօնք ըսելով՝ չենք ուզեր իմացնել
մէկ ազանդի մը կողմնական և ծուռ կարծիքնե-
րը, այլ այն գրութիւնը որ Մատուած իրօք յայտ-
նած է Մատուածաշունչին մէջ, և փութաջան ու
անաչառ եղողը կրնայ գտնել հոն : Աւ այսպէս
Մնական կրօնք ըսելով՝ ըսել չենք ուզեր ծոյլ
նախապաշարեալ և անձնասէր մարդոց իմացածը,
այլ ինչ որ բնութիւնը իրօք կը սորվեցնէ, և մէկ
փութաջան ու անաչառ մարդ մը կրնայ գտնել,
իր կարողութիւնները ամենալաւ կերպով բանե-
ցնելով :

Աթէ այս է ուրեմն բնական կրօնքը, անոր
վարդապետութիւնները ինչպէս կը յայտնուին :
Մնոր՝ Մատուծոյ վրայ և մարդկային պարտուց
վրայ սորվեցնելու կերպը նոյն չէ : Մատուծոյ
և անոր ստորոգելեացը վրայ իր յայտնութիւն-
ները կընէ, գլխաւորաբար արդիւնքէն պատճա-
ռին տրամաբանելով : Ասկէ ի դատ ոմանք կըսե-
պեն թէ ամեն մարդ Մատուծոյ մը գոյութեանը
վրայ ի բնէ և անհրաժեշտ հաւանութիւն մ' ունի
իր մտացը մէջ : Նայց այս ինտոր օր ըլլայ՝ կար-
ծեմ թէ Մատուծոյ մը գոյութիւնը և անոր բը-
նական ստորոգելեաց շատին կառարելութիւնը
հիմա ճանչցուած բնութենէն կրնայ մակաբերուիլ :
Մնութեան և Քրիստոնէութեան այս ստորոգե-
լեացը վրայով միաբան ըլլալը արդէն ցուցուցած
եմ . իսկ անոր բարոյական ստորոգելեացը համար
աւելի դժուար է ըսել թէ Մնութիւնը ինչ կը
սորվեցնէ : Ատոյգ է որ մարդ բնաւ անանկ սոր-

ված չէ անոնք միայն անոր լոյսէն, որ կրօնական բարոյականութեան մէկ բանաւոր հիմ մ' ըլլայ. կամ խիստ իմաստուն միաբերը ազատէ մեծ և ներդացուցիչ անստուգութենէն:

Հաստ անգամ դժուար է ճիշդ գիտնալ թէ մեր գիտցածներուն ո՞րչափը բնական կրօնքին տալու է: Արժուի թէ հարկաւ մէկ նախնական յայտնութիւն մ' եղած էր որ կը հաղորդէր զոհերու գազափարը, և վերջի ժամանակներուն կրօնական ու բարոյական կարծիքներուն փոփոխութիւն կուտար, կարելի է որ շրէական և Քրիստոնէական յայտնութիւններէն եղած ճառագայթները մեր կարծածէն աւելի ընդարձակ տարածուած ըլլան, և շատ բաներ կան որ անգամ մը ծանուցուելէն վերջը այնչափ ընդունելի կը լլան բանականութեան՝ որ յառաջ կը բերեն մէկ զգայում մը թէ անոնք ինքնին ալ կրնային գտնուիլ: Ասանկով Աստուածեանները բանականութիւնով գտնուած կըսեպէն քանի մը սկզբունքներ, ինչպէս զգջումով մեղքին ներուիլը, որ միայն յայտնութեան արդիւնքն է: Բայց ինչ որ սորվեցընէ բնական կրօնքը՝ գիտենք որ չկրնար եղելութիւն սորվեցնել, այլ միայն օրէնքներ և հակամիտութիւններ: Ասանորոյ որչափ ալ կատարեալ սեպէնք անիկա, բնաւ չկրնար սորվեցուցած ըլլալ այն մեծ եղէտ-Քի-ննէրը, որոնց վրայ կրնայ հիմնուիլ ներողութեան դրութիւն մը. բայց ո՞րչափ պարտաւորութիւն ալ սորվեցնելը ճշգոթութեամբ չենք կրնար որոշել: Ասե գիտենք որ ամբողջ այն դրութիւնը բնաւ գտնուած չէր բա-

նահանութիւնով, և ո՛չ ամենափոքր պատճառ
կայ սեպելու թէ երբէք պիտի գտնուէր:

Վրո՞ք եթէ դրուծիւն մը՝ որ իրեն համար կըսէ
թէ երկինքէն եկած է, կը պարունակէ պատահա-
բար և բնականապէս բնական կրօնքի մէկ կա-
տարեալ դրուծիւն մը, իր մէջը ունենալով բը-
նութեան խօսած ամեն աղօտ ձայները, և յայտ-
նելով անոր գծած անորոշ գիծերը, եթէ ա-
նոր կանոնները շատ անգամ հակառակ կուգան
մարդոց դատմանը և զօրաւոր զգացմանցը, բայց և
այնպէս երբոր արդիւնքին ու հակամիտութեանը
նայուի, ընդհանրապէս կը տեսնուի որ ընդունելի
է բնական կրօնքին, եթէ իր ծագումը առած է
անանկ ժողովուրդի մը մէջ, որոնց վրայ տես-
նուած չէ փիլիսոփայական ուսման յօժարութիւն,
և գիտնական չեղող մարդոցմէ ուրեմն պատ-
շած է հարցնել թէ, Վստնք ո՞ւսկից ունին այս ի-
մաստութիւնը: Արչափ աւելի որ մտածենք բա-
ներուն ինչ հակամիտութիւններ ունենալը գըտ-
նելու յեափն գժուարութիւնը և այս բանը կա-
տարելապէս ընելու համար պէտք եղած մանրա-
մասն և ընդարձակ գիտութիւնը, թէ մարդոց և
թէ բնութեան վրայ, չմտնալով անձնասիրու-
թեան և կիրքին կուրցնող ներգործութիւնը ա-
սանկ խնդիրներուն մէջ, այնչափ աւելի բարձր
համարում պիտի ունենանք այն սքանչելի խո-
րագիտութեանը վրայ, որ կրնար ժողովել և մէկ
տեղ կազմել բնութեան ամեն ձայնը և օրէնքը,
անոնց ունենալիք արդիւնքներուն համեմատ:

Բայց այս բանը Քրիստոնէութիւնը արդեամբք

բրած է: Ասոր մէջ կըզգանք որ հաստատուն հիման
 վրայ կեցած ենք: Այս բանին մէջ անհաւա-
 տին սուր քննողութիւնը ատեան կըկանչենք:
 Արագհասնելնք որ ցուցնէ բնութեան մինչև ան-
 դամ անորոշ ձայնով մը խօսած մէկ պարտաւո-
 թիւնը որ Աոր Ատակարանին մէջ ալ հրամայ-
 ուած է. կըհրաւիրենք որ ցուցնէ Քրիստոնէ-
 ութեան մէկ կանոնը՝ անոր հրամայած վարմուն-
 քի մէկ կերպը որ բնական օրէնքին համաձայն
 է, անկէ յառաջ եկած օգտակար հետեւու-
 թիւններուն նայելով: Քրիստոնէական բարո-
 յականի ո՞ր սկզբունքը բարոյական փիլիսոփայու-
 թիւնը հիմա կըհամարձակի խնդիրի տակ դնե-
 լու: Ի՞նչ են քաղաքական տնտեսութեան
 ընդհանուր սկզբունքները, եթէ ո՛չ Քրիստո-
 նէութեան հրամայած բարի կենակցութեան և
 մարդասիրական ոգիին կանոններուն՝ ժողովուրդին
 արուեստաւոր կարգին հաղորդակցութեանը մէ-
 անկատար կերպով յարմարցնելը: Ի՞նչ է քա-
 ղաքական դիտութեան մեծ մասը, եթէ ոչ մարդոց
 մէջ այն արդիւնքները իրականացնելու մէկ տա-
 ժանելի և անկատար եղանակը, որոնք ինքնին
 պիտի յառաջ գային Քրիստոնէական բարոյակա-
 նի և Քրիստոնէական ոգիին ընդհանուր անցու-
 ղութենէն: Քրիստոնէութիւնը բարեխառն ըլլալ
 կըհրամայէ, գիտութիւնը հաղարութը հարիւր տա-
 ըիի չափ վերջը կըզտնէ որ բարեխառնութիւնը մի-
 այն համաձայն է իր Վնական օրէնք կոչածին. և
 քաղաքական տնտեսութիւնը կըհաշուէ անբարե-

խառնութենէն ելած աշխատութեան ու ստացուած քի կորուստը . և այնչափ բազմաթիւ ներդրութիւններ կրելէն վերջն ալ ի՛նչ է ըրածնին , եթէ ոչ ետ դարձնել այս հրամանին արձագանգը , թէ «Վիտութեանը վրայ ժուժկալութիւն աւելցուցէք» : Աթէ Աստուածաշունչը կը հրամայէ մարդոց որ եօթներորդ օրը գործ չընեն , և իրենց անասունները հանդիստ թողուն , հիմա կսկսի գտնուիլ որ ասիկա համաձայն կուգայ գործարանաւոր մարմնոց մէկ օրէնքին , և ասանկ ընելով թէ մարդիկ թէ անասունները աւելի առողջ պիտի ըլլան և աւելի գործ պիտի ընեն : Աւ այսպէս՝ մարդիկ ապերջանկութեան տանող ամեն ընթացքի կողմանէ Վրիստոնէութիւնը առաջէն ճամբաներուն սկիզբը կեցած է , և կազազակէ առաջուց զգուշացնելով անկէ անցնիլ ուղղուները : Ազգերը մտիկ չըլին , այլ դէմ դրնելով անցան ու յառաջ դացին , մինչև որ իրենց խելքին պտուղը քաղեցին բարոյականի խանգարումով , և բռնութեան ու ապօրինաւոր կառավարութեան պատճառաւ եղած շփոթութիւնով , և անատենը փիլիսոփայութիւնը խոնարհեցաւ այս չարիքները գտնելու , և եթէ բան մը ըրած է մարդկային ազգին մնայուն սիտիանք տալու , անիկա դարձեալ աւետարանին գիրին ու հոգիին բերելն է : Վորձառութեան դառն խրատները յայտնի կընեն և պիտի շարունակեն առաւել և առաւել յայտնի ընել , թէ Աստուածաշունչը Աստուծոյ կանոնագիրքն է իր բարոյական արարածոցը կառավարութեանը համար . և ինչպէս Աս-

տուճոյ բնական օրէնքները , անանկ ալ Նստուածաշունչին օրէնքները մէկը չկրնար աւելլ առանց պատիժը կրելու :

Եթէ Վրիստոնէութիւնը կրպարունակէր այն ժամանակը դիտցուած բնական կրօնքին բոլոր ազդումները , և ժողոված է բոլոր անկէ առաջ եղած ատենի մեծ և իմաստուն մարդոց դատողութեանը ամեն դատածները , և իբրև ալ յաւելումներ ըրած է , ամենէն տարօրինակ բանը եղած պիտի ըլլայ անիկա . և անանկ բան մը նարելու համար՝ ժամանակին ամենէն երևելի փիլիսոփային աշխատութիւնը պէտք էր : Նայց չէ թէ միայն կրնդունէր շատ բաներ որ այն ատենի ուսմունքն էին , և չէր մերժեր բան մը որ բարի էր , այլ միանգամայն կատարեալ գործեց դրութիւնը ամեն դարու համար բան մը չթողելով փիլիսոփայութեան ընելու , այլ անոր սկզբունքները հաստատել և անոնց օգտակարութիւնը որոշել : Եւ այս ըրած ատենը անանկ բաներ քարոզեց՝ որ բոլորովին հակառակ էին թէ շրէից և թէ շեթանոսաց ամեն ճաշակներուն և ամեն վարդապետութեանցը : Վրիստոնէական բարոյականի հիմնական սկզբունքներէն ոմանք՝ որ եթէ ընդունուէին պիտի փոխէին մարդոց վիճակը , Վրիստոնէ առին իրենց ծագումը , դէթ անոնք գործադրութեան բերելու մասին , և այնչափ հակառակ էին շրէից ամեն վարդապետութեանցը՝ որ շատ ծանր և դժուարութեամբ եղաւ անոնք բուն աշակերտներուն հասկըցնելը , և անոնց ընդունուելուն կարելիութեանը զանոնք համոզելը : Օր օրինակ

այնպէս կը դատապարտէր պատերազմը և անհատ
անձանց մէջ միասուց հատուցում ընելը՝ բազմակնութիւնը՝ և ամուսնական արձակումը եթէ
ոչ մէկ պատճառի մը համար, այնչափ խստիւ կը
պատուիրէր սրտի մաքրութիւն՝ հեղութիւն և խո-
նարհութիւն՝ սէր գէպ ի թշնամին և ընդհանրա-
կան բարեփոխութիւն, անանկ կը բռնէր աղքատը՝
որ անմահ ըլլալու մասին նոյն հաւատա-
րութիւնը ունի՝ հարուստին հետ, անանկ
սկզբունք ունէր այլոց համար անձնուրացութեան,
ու անանկ գերաստիճան նկատում՝ Նստուծոյ կամ-
քին և հոգիներուն բարելաւութեանը՝ քան մար-
մինին, որ Քրիստոս ոչ թէ լոկ բարեկարգու-
թիւն մ' ըրաւ, որ կարելի ըլլար սեպել թէ մէկ
բարձրաստիճան հանձարի մը գործ է, և ոչ
փիլիսոփայի մը տնկաբանութեան մէջ ըրածին պէս
նոր գրութիւն մը կամ կանոն մը դառաւ, որ նոր
գիտութեան ընդարձակ շտեմարաններ կը բանար իր
առջևը, այլ կենալով ճիշդ ուրիշ մարդոց մի-
ճակին մէջ, առանց կրթութեան՝ առանց Յունա-
կան և Հռոմէական գրականութեան վրայ սո-
վորական կերպով գիտութիւն ստացած ըլլալու,
ընդունեց անատենը տիրող գրութեանց մէջ ա-
մեն բարի եղած բաները, բայց և այնպէս այն-
չափ նոր բան ալ դրաւ, որ գրութիւնը իբրև ամ-
բողջ ո՛չ միայն կատարեալ էր, այլ և նոր գրու-
թիւն մըն էր: Նսիկա ընդունելը հակառակ կու-
գար ամեն անձնասիրական սկզբունքի, և կրթու-
էր թէ կեանքը անգամ մերժել կը պահանջէ
և յաճախակի պահանջեց ալ: Բայց այս գրու-

Թիւնք ո՛չ միայն սկզբունքներուն կողմանէ, այլ իր շարժառիթներուն կողմէն ալ նոր յօրինեալ էր: Շատերը համոզուեցան ընդունիլ անիկա. և հիմա կրտսնենք որ այն սկզբունքներովը և միայն անոնցմով է որ թէ անհատ անձինք և թէ ժողովուրդները կրնան երջանիկ ըլլալ. և յարգանք խոնարհութիւն կրնենք այն իմաստութեանը առջև՝ որով անոնք քարոզուեցան: Թող այս սկզբունքները ընդունուին և գործադրուին, և ունիցէ ուրիշ սկզբունքով քալող աշխարհէ բուրովին տարբեր աշխարհ մը կունենանք, աշխարհ մը՝ որմէն ապերջանկութեան գլխաւոր պատճառները վերցուած են:

Եւ միթէ կարելի է որ երբէք մարդկային խորագիտութիւն մը կարող ըլլար այնքան նոր բաներ ընտրելով՝ միանգամայն դուրս ձգել բոլոր վնասակար կամ չարիազանց եղած բաները: «Մարդ անանկ կերպով վարուող էակ մըն է, և մարդկային ընկերութեանը վիճակը անանկ բաղմակնձիւն», կրտսէ Արմենըր Ապիսկոպոսը, «որ որչափ դժուար՝ այնքան ալ վտանգաւոր է անոնց մէջ վարմունքի նոր կերպեր և գործքի նոր սկզբունքներ մտցունել: Ինչ մեծ ու անակնկալ արդիւնքներ երբեմն յառաջ կուգան մէկ օրէնքէ մը. զորօրինակ Ննգղիայի այն օրէնքը՝ որով աղքատաց պարէնը կըտրուի, մէկ կարգադրութեանէ մը, ինչպէս դատաստանները գատաւորներու ժողովքով ըլլալը. մէկ բան մը ընդունելէն, զորօրինակ Հռոմէական իշխանին գլխաւորութիւնը. մէկ սկզբունքէ մը, զորօրինակ Ղուտերի Աստուա-

ճաշունչին բողոքելու սկզբունքը՝ : Քայց՝ և այն-
պէս ահա նոր դրութիւն մը մարդկային ընկերու-
թեան ամեն յարաբերութիւնները իր մէջն ամ-
փոփոխ, որուն արդիւնքները առանց բացառու-
թեան կրփաւերացնէ փորձը :

Քրիստոնէութեան բարոյականին դէմ մի մի-
այն կարելի եղած՝ առարկութիւնը այս է թէ շատ
կատարեալ է այն . և թէ թէպէտ մարդիկ կրնայ
յարմարցնել երկնից համար, բայց հոս՝ անիկա
ընդունողները մնասի և անարգութեան ենթակայ
կրնէ : Քայց ինչ մնաս որ ըլլայ այս կերպով՝ ոչ
թէ Քրիստոնէութեան, այլ անոր արգիլած մէկ
չարութեան դրութեան մը արդիւնքն է . և ան-
շուշտ ինք պատասխանատու պիտի չըլլայ իր կա-
նոններուն անհնազանդ ըլլալէն ծագած արդիւնք-
ներուն : Իր պահանջմունքը ընդհանրական դրու-
թիւն մ՝ ըլլալ է : Թող ընդհանրական հնա-
զանդութիւն ըլլայ անոր, և առարկութիւնը կը-
հալածի :

Քայց ուրիշ փորձ մըն ալ կայ որով կրնայ փոր-
ձուիլ Քրիստոնէութեան բարոյականը . այսինքն
փորձել անիկա ոչ միայն իր հակամիտութիւն-
ներովը, այլ և մարդուն խիղձովը : Գործի մը
օգտակարութիւնը այլ է, անոր շիտակ ըլլալն այլ
է : Հասկացողութիւնը գործքերուն օգտակարու-
թիւնը կրդատէ, խիղձը շիտակութիւնը : Խիղձը
ամեն բանի մէջ անսխալ փորձ մը չըլլալը չու-
րացուի . անիկա ենթակայ է թէ տկարանալու թէ
խանդարելու : Քայց և այնպէս հիմակուան ու-
նեցած լուսովնիս ալ դժուար է որոշել ունիցէ

դրութեան համար անոր ինքզինքը մարդկային
խղճին ընծայելը կամ չընծայելը: Թող կենայ
մէկ դրութիւն մը մարդոց առջև դարէ ի դար, ա-
նանկ որ խղճին հետ մերձաւորութիւն ունենայ,
և այնչափ սերտ ըլլայ այս մերձաւորութիւնը, որ-
չափ աւելի որ կը զարգանայ խիղճը, և եթէ տես-
նուի որ կը սորվեցնէ այն կարգադրութիւնը և
վարուց այն կանոնները, որոնց խիղճը հաւա-
նութիւն կուտայ իբրև հիմնուած արդարու-
թեան յաւիտենական կանոններուն վրայ, անա-
տենը կամ Մատուծմէ եկած պիտի ըլլայ, կամ
ճիշտ Մատուծոյ յայտնելիք դրութիւնը պիտի ըլ-
լայ, վասն զի անտարակոյս՝ ուրիշ կերպ դրու-
թիւն մը չյայտնէր անիկա:

Եւ հոս պատշաճ կուգայ այս շատ կարևոր
խորհրդածութիւնն ալ յիշել, թէ Վրիստոսնէ ու-
թիւնը մարդուն բարոյական բնութեան յարմար է՝
ոչ միայն խղճին դատելու կարողութեան պա-
հանջումներուն պատասխանելովը, այլ և անոր
վրայ անիկա զօրացնելու և կատարելութեան բե-
րելու ազդեցութիւն ունենալովը: Անիկա կը տար-
բերի և կորոշուի ամեն ուրիշ դրութենէ իր այս
ճանաչումովը՝ թէ խղճին կատարեալ գործունէու-
թիւնը հարկաւոր է բարոյական կատարելութեան
համար, և իր ուղղակի ջանքերովը և հակամի-
տութիւնովը՝ որ թէ իր կանոններուն նայինք և
թէ իր եղելութիւններուն՝ կը տեսնենք թէ անի-
կա միանգամայն փափուկ և նուրբ ընտրող կընէ
խղճմտանքը: Ամեն գիտենք որ Վրիստոսնէ ու-
թեան բուն առաջին ներգործութիւնը՝ երբոր

կակսի ներգործել մտքին գործնականապէս, խիղճը արթնցնելն է, յանդիմանելով մարդիկ մեղքի՝ արդարութեան՝ և հանդերձեալ դատաստանի համար :

Արեմն Քրիստոնէութիւնը թէ վարդապետութեանց և թէ բարոյականի դրութիւն մը սեպելով՝ կատարելապէս կը պատասխանէ՞ խղճին ընտրողութեան կարողութեանը պահանջմունքներուն : Արպատասխանենք, Ա՛յո՛ : Մենք կըսենք թէ Չկայ բարոյական կառավարութեան մէկ սկզբունք մը՝ վարմունքի մէկ ընթացք մը՝ և մտքի մէկ վիճակ մը՝ որուն այն հաւանութիւն կուտայ, և մէկ լուսաւորեալ խիղճ մըն ալ անոր՝ հաւանութիւն չտայ, իբրև արդար և պատշաճ այն յարաբերութեանցը՝ որուն մարդ վիճակած է : Ասիկա Քրիստոնէութեան բարոյականին նկատմամբ վստահաբար կրնամ ըսել, վասն զի անհաւատները վկայած են անսիկա : Չկայ հիմա մէկ անաչառ և արթուն մարդ մը՝ որ չընդունի թէ Քրիստոնէութեան բարոյականը թէ անոր հակամիտութիւններովը և թէ խիղճով անսիկա փորձելով կատարեալ է. և եթէ կատարեալ գործադրութիւն ունենայ, երջանկութիւն պիտի յառաջ բերէ կենաց ամեն յարաբերութեանց մէջ, և անսիկա է այն միակ դրութիւնը՝ որ կրնայ նոյն բանը այն չափովը ընել :

Եւ այց այս փորձին մէջ Քրիստոնէութեան վրայ բեռ մը կայ վերջնելու, որուն դժուարութիւնը հազիւ երբէք ճանչցուած է : Հարկ էր որ չորս բան ընէր, որոնց ոչ մէկը երբէք ուրիշ դրութիւն մ'ըրած է :

Եւ նախ՝ հարկաւոր էր ոչ միայն մէկ բացար-
 ձակապէս կատարեալ կանոնադրութիւն մը ունե-
 նալ, որ ասիկայ որչափ ալ որ մարդոց երբէք ը-
 րածէն շատ հեռու բան մըն է, տակաւին բաղդա-
 տաբար դիւրին է. այլ պէտք էր մէկ կատարեալ
 օրէնք մը դնել այն խառն և անհունապէս այլ-
 այլեալ պարագաներուն և վիճակներուն՝ որ կը-
 ծագին երբոր օրէնքը կաւրուի: Ատարեալ է-
 ակներու կատարեալ բարոյական կառավարու-
 թեան մը համար կատարեալ օրէնք մը պէտք է:
 Եթէ Քրիստոնէութիւնը անգամ մը ասանկ օ-
 րէնքի մը վրայ ճանաչում ունեցող խղճին պա-
 հանջումներուն պիտի պատասխանէ, ոչ մէկ
 կանոն մը դնելու է անոր դէմ, ոչ մէկ բան մը
 մեր ըմբռնելու կարող եղածին չափ բարձր աս-
 տիճանի կանոնադրութեան մը դէմ: Արչափ ա-
 տեն որ մնար կատարեալ վիճակը՝ պարզ կատա-
 րելութեան օրէնքը, պիտի ըլլար մի միայն պա-
 հանջում հրամանը. և բաղդատաբար դիւրին
 պիտի ըլլար անոր նապանդիլը: Աստուծոյ կատա-
 րեալ օրէնքին բովանդակութիւնն է սէր դէպի
 Աստուած և մեր ընկերը. և ուր որ այս օրէնքը
 կատարելապէս պահուի, չկրնար բան մը պատա-
 հել գժտութիւն հանելու: Ասանորոյ երկին-
 քը ասանկ պատուէր չկայ թէ երբոր մէկ երե-
 սիդ ասպակ մը զարնէ, դարձուր մէկայն ալ:
 Բայց Քրիստոնէութիւնը բազմաթիւ պատուէր-
 ներ տուած է՝ մէկզմէկու վնաս ու զրկանք
 ընելու հակամիտեալ էակներուն իրարու հետ ու-
 նեցած հաղորդակցութիւնը ճշմարիտ կառավա-
 րութեան ոգիով կանոնաւորելու համար: Աւրեմն

միժէ բաներուն երևութական պահանջմունքը լե-
 ցնելու ու մարդկային նախապաշարմունքն ու կիր-
 քը իրեն միաբանելու համար երբէք այս երկրոր-
 դական կարգի պատուէրներուն մէկը իր բարձր
 պահանջումներէն կրխտորի՞, կամ թէ իր նախնա-
 կան ու հիմնական սկզբունքին ամբողջութենէն բան
 մը կրթողո՞ւ: Վիտենք որ անոր դէմը հակառա-
 կութիւն ելաւ, և այն հակառակութեան ճշմա-
 րիտ պատճառը իր բռնած բարձր կանոնադրու-
 թիւնն էր: Ա՛յն աշխարհէն ըլլար, աշխարհը պի-
 տի սիրէր իրենները: Աւրեմն ամենազօրաւոր
 փորձութիւն կար, եթէ Վրիստոսի ալ չէ՞ գոնէ
 անոր յաջորդներուն, այս նախնական սկզբունքը
 քիչ մը թեթեւցնելու և իրենց պահանջումնե-
 րը մեղմելու, որ չըլլայ թէ մէկ անգործադրելի
 բարոյական մը պատուիրելու ենթակայ ըլլան:
 Աւ ըրի՞ն ասանկ բան մը: Արբէք ըրած չեն.
 չկան ճիշդութեան բացառութիւններ և ծած-
 կոցներ: Աչ միայն Վրիստոս համաձայն էր իրեն
 իր փոքր պատուէրներուն մէջ, այլ և Մ. Բա-
 քեալներն ամեն բանի մէջ հաւատարիմ էին իրենց
 յանձնուած գործին, և ասկէ զօրաւոր ապացոյց
 չկրնար տրուիլ ոչ միայն արդարասիրութեան այլ
 և իմաստութեան: Մ. Բեռնակատարեալ արդարա-
 սիրութենէն ի զատ ոչ մէկ բան մը կրնար այն
 օրէնքը բոլոր իր ընդարձակութեամբը ճշդու-
 թեամբ քարոզելով անկէ բնաւ չխտորիլ. և
 Մ. Բատուածային իմաստութենէն ի զատ ոչ մէկ բան
 մը կրնար յարմարցնել անհիկա մարդուն այս աշ-
 խարհիս մէջ ունեցած կարգէ դուրս պարագանե-

րուն : Քրիստոնէութեան փոքր պատուէրները
ամենը համաձայն են իր հիմնական ու իր կա-
տարեալ օրէնքին հետ :

Եւ հոս կրճանուցանեմ թէ Քրիստոնէու-
թիւնը ոչ միայն կատարեալ օրէնքի մը հեղինա-
կութիւնն ունի, այլ դէպ ի զրկանք ընողին բրո-
նելու համար՝ հրամայած ընթացքին մէջ բուն
այն սկզբունքը դրած է, որ ճարկաւ պիտի ծա-
ռայէ զրկանքը հնար եղած ամենէն մեծ աստի-
ճանաւ պակսեցնելու : Բազ փորձուած ճշմար-
տութիւն մըն է՝ որ մէկ որպիսութիւն մը կամ
բնաւորութիւն մը քարոզելու ու մարդոց մէջ տա-
րածելու ամենէն զօրաւոր եղանակը՝ որոշ ու պայ-
ծառ կերպով այն բնաւորութիւնը անձամբ ցու-
ցնելն է : Բարկութիւնը՝ դիմացինին վրայ ալ
բարկութիւն կը դրդուէ. և հեղ ու ներողամիտ
ողին՝ թշնամութիւնը զինաթափ լինելու հակա-
միտութիւն ունի. և կրնէ ամէն ինչ՝ որ կրնայ
ըլլալ չարութիւնը արգիլելու համար : Ասան
որոյ եթէ մարդ մը հարցնելու ըլլայ թէ Իմա-
ցական փիլիսոփայութեան սկզբունքներուն նա-
յելով՝ միայն ի՞նչ կերպով կրնայ ամենէն աւելի
մերժել երկրէս չար ու անձնասէր կիրքերը, և
երկնից նման ընել «անիկա», պիտի պարտաւորի
ճիշդ՝ Ա՛րք Ատակարանին ցուցուցած ընթացքը
բռնել :

Բայց երկրորդ՝ Աստուծոյ բնական ստորո-
գելեացը՝ և բարոյականի վրայօք Քրիստոնէու-
թեան սորվեցուցածները ինչպէս առաջ ցուցուցի,
միաբան է բնութեան մէջ գտնուածներուն . բայց

այն քանի մը բաներ ալ կը յայտնէ՝ որ իրեն յա-
տուկ է . և քանի մը նոր պարտաւորութիւններ
ալ կը դնէ մարդոց վրայ : Աւրեմն այն նայելու է
թէ՛ միթէ՛ Աստուծոյ վրայօք յաւելուած յայտ-
նութիւնները բնութեան սորվեցուցածներուն զու-
գընթաց կերթա՞ն՝ թէ դէմ կուգան . և միթէ՛ կը-
պատասխանե՞ն իրենց յայտնած բարոյական ըս-
տորոգելիքները ունեցող կատարեալ Աստուծոյ վը-
րայօք խղճին ըրած պահանջումներուն . և
նաև անոր զրած պարտքերը համաձայն են բա-
նականութեան ու խղճի : Քրիստոնէութիւնը՝ որ-
չափ որ բնութեան հետ համաձայն է , բնութեան
նոյն եղած բաներուն մէջ ես ընդունուած կըսե-
պեմ որ անիկայ խղճին պահանջումները կը-
լեցնէ : Իսկ երբոր անցնի բնութենէն ալ ան-
դին՝ Աստուծոյ և մարդկային պարտուց վրայ այն
անկախ և կատարելագոյն յայտնութիւնները տա-
կաւին նոյնպէս կընէ՞ , անանկ որ մէկէն մէկալը
անցնելը նման ըլլայ աղօտ լոյսէն ցորեկուան
կատարեալ պայծառութեանը անցնելուն : Մենք
Աստուծոյ վրայ չափով մը գիտութիւն ունինք
բնութենէն ճիշդ անանկ՝ ինչպէս որ երկնից հաս-
տատութեանը վրայ ունինք լոկ աչքով նայե-
լէն : Աւրեմն չէ՞ որ Քրիստոնէութեան անոր վը-
րայ ըրած յայտնութիւնները բնութեան ըրած-
ներուն հետ զուգընթաց են , միայն թէ աւելի
աղղու և փառաւոր , ճիշդ ինչպէս որ գիտակիտ
երկնիքին վրայ ըրած յայտնութիւնները զուգըն-
թաց են լոկ աչքով տեսնուածներուն հետ , թէպէտ
չատ գերազանց են անոնցմէ :

Անք այնչափ սորված ենք մտածել զՎաստ-
 ուած զարդարուած բոլոր այն հայրական և բա-
 րոյական ստորոգելիքներովը, որով Քրիստոնէու-
 թիւնը զանհիկայ կը հագուեցնէ՝ կը ցուցնէ, և տես-
 նել անհիկա սրբազան թագաւորութեան և հայ-
 րական բարութեան փառաւոր երևոյթովը՝ որով
 Քրիստոնէութիւնը կը ներկայացնէ անհիկա, որ
 տիեզերաց Անքնակալին վրայ բարոյական ստորո-
 գելեաց այս կատարեալ կապակցութիւնը, ու բա-
 րոյական բնութեան այս կատարելութիւնը՝ ա-
 նանկ որ անոր կատարելութեանը վրայ բան մը
 աւելցնելու խորհուրդը անհուն միջոցի վրայ մի-
 ջոց աւելցնելու պէս կը լլայ, ոչ թէ մեծ նոր ու
 զարմանալի բան մը կերևայ, այլ իբրև դիւրին
 կը գիտցուի թէ հարկաւ անանկ պիտի ըլլար. և
 չենք յիշեր թէ ո՛րչափ դժուար պիտի ըլլար բը-
 նութեան անկատար յայտնութենէն անոր բացար-
 ձակ կատարելութիւնը դանել, և կապակցել այ
 ահաւոր բնական ստորոգելեաց հետ՝ որոնք բնան-
 կան զօրութիւններուն մէջ իբրև շուքով ցու-
 ցուած են, մեր Արկնաւոր օրը բնութիւնը կազ-
 մող բարեօրտութիւնը և ողորմութիւնը, արդա-
 բութիւնը և գութը: Արմոռնանք թէ բնութիւ-
 նը ունի նաև սոսկալի և ահարկու երևոյթներ
 վայրենի ու անապատ տեղեր՝ կայծակ ու որ
 տում՝ թաթառ ու երկրաշարժ և հիւանդութի
 ու ժանտախտ, իր ուրախ ձայներուն և արևո
 խաղաղ ու պայծառ ճառագայթներուն հետ՝
 իբրև երեսի խնդում արարածոց վրայ կը հանդէ
 ու իր ալիքներու պէս ծածանող հունձքերուն հետ

և թէ իր սոսկալի երևոյթներն են որ շատ տալա-
 ւորութիւն կրնեն մարդոց մտքին, և կրպատճա-
 ռեն տխուր գաղափարներ ստանալ Աստուծոյ
 վրայ, և շատ անգամ ալ չարին սկզբունքը անձնա-
 ւորել իբրև ինքնակալ Աստուած, որուն բարկու-
 թիւնը գլխաւորապէս կրփափաքին դադրեցնել :
 Կրմոռնանք այն մտատանջութիւնը՝ որ կրկրէին
 Տին ատենի ամենէն երևելի ու ամենէն աղէկ մար-
 դիկը Աստուծոյ բարոյական ստորոգելեացը վը-
 րայօք, և կրմոռնանք այն կարևոր եղելութիւնը՝
 թէ բնաւ անանկ ըմբռնում չէին ունենար Աս-
 տուծոյ վրայ՝ որ անիկայ սիրելը մէկ պարտաւո-
 րութիւն մ' ըլլար : Բոլոր ասոնք՝ կրսեմ, անանկ
 կրթութի թէ մենք կրմոռնանք և կրկարծենք թէ
 հարկաւ այնպէս ըլլալու և զիւրաւ գիտցուելու
 բան մըն է՝ որ Քրիստոնէութիւնը բնութեան Աս-
 տուծոյ վրայ ըրած աղօտ յայտնութիւնները այս-
 պէս յետին կատարելութեան պիտի հասցնէ : Ա-
 սիկա արդարև կրնէ անիկա անանկ դիւրութեամբ՝
 այնչափ անուղղակի կերպով՝ այնչափ քիչ փիլի-
 սոփայական հետադատութեան ձևերով և հպար-
 տութիւնով, որ հազիւ կիմանանք անոր ըրածնե-
 րը, թէպէտ բոլոր ասոնք ալ զարմանալի կրնեն
 բանը : Պատմութիւն մը կայ երևակայական էակ-
 ներու վրայ, թէ պալատ մը շիներ են որ մեծ ինք-
 նակալի մը բոլոր դանձերը անբաւական էին
 դիտամբ անկատար թողուած մէկ պատուհանը
 կատարելագործելու : Աւ երբ կրտեսնեմ թէ ո՛ր-
 չափ անկատար էր բնութեան թողուցած կրօնա-
 կան գիտութեան կառմութիւնը, երբ կրտեսնեմ

Թէ ո՛րչափ անբաւական եղան մարդոց բոլոր աշխատութիւնը անհիւսկա կատարելագործելու, և երբ կրնայիմ այն փառաւոր և կատարելագործեալ շէնքին վրայ որ Քրիստոնէութիւնը կառուցած է, չեմ կրնար չզգալ թէ մարդկային ձեռքէ իզատուրիչ ձեռք բանած է այն կազմութեանը վրայ: Կատարեալ կրօնքի մը առաջին և հիմնական պայմանը՝ կրօնքի մը (որ կրնայ ընել ամեն ինչ որ կրնայ ըլլալ բարոյական էակներու համար,) երկրպագութեան առարկային վրայ կատարեալ բնութիւնն է: Միտքը բնականապէս նմանութիւն կստանայ իր հաճութեամբ մտածած և մանաւանդ պաշտած առարկային. և բանականութեան սկզբունքներով կապացուցուի որ եթէ Քրիստոնէութեան Աստուծոյն բնութիւնը բացարձակապէս կատարեալ չէ, անատենը այն բնութիւնը ոչ միայն խղճին պահանջումներուն պիտի չպատասխանէ, այլ և մարդուն բնաւորութեանը բարձրանալուն ու կատարելութեանը մասին բնաւ պիտի չկրնայ ընել ամեն ինչ որ կրնայ ըլլալ անոր համար: Բայց որչափ որ քրննենք՝ այնչափ աւելի պիտի տեսնենք որ Աստուածաշունչին Աստուծոյն բնութիւնը բացարձակապէս կատարեալ է. և անոր համար կամ Քրիստոնէութեան Աստուածն է ճշմարիտ Աստուածը, կամ թէ չկրնար ըլլալ ուրիշ մէկ էակ մը որ Աստուած ըլլայ մեզի, ոչ մէկ էակ մը՝ որ պատասխանէ մեր միտքերուն մէջ կազմած՝ և անոր յատկացնելու պարտաւորութիւնն իս զգացած բացարձակ կատարելութեան գաղափարին:

Քրիստոնէութեան պահանջած նոր պարտաւորութիւններուն վրայ այս կրնայ ըսուիլ որ անոնք ընաւ ըստ քմաց և փոփոխական չեն, այլ ճշգիւ այն պարտաւորութիւններն են որ կը ծագին այն նոր յարաբերութիւններէն՝ որոնց մէջ Քրիստոնէութիւնը մեզ կը դնէ, և անանկ պարտաւորութիւններ են՝ որ խիղճը չկրնար չհաւանիլ այն յարաբերութիւնները ճանչցուածին պէս: Ինչպէս՝ եթէ Մատուած Քրիստոնէութեան ձեռքովը սիրոյ նոր վկայութիւն տուած է մեզի, ուրեմն մենք ալ նոր պարտաւորութեան տակ կը լլանք երախտագէտ ըլլալու անոր: Եթէ Քրիստոս նշանաւոր կերպով միջամուխ եղած է մեր կողմանէ օգնութիւն ընելու, մենք ալ անոր մեզի ըրածներուն համեմատութեամբը պարտաւոր կը լլանք իրեն: Եթէ Քրիստոնէութիւնը մեզի մեծ ուրախութեան աւերտիսներ յանձնած է, ուրեմն պարտաւոր ենք անոնք հրատարակելու ամեն մարդոց:

Մյայտ է եթէ Մատուծոյ և մարդկային պարտուց վրայ եղած Քրիստոնէութեան յաւելուած յայտնութիւններուն ալ նայինք, կը տեսնենք որ կատարելապէս կը պատասխանէ անիկա լուսաւորեալ խղճի մը պահանջումներուն:

Իայց այս վերոյիշեալ մասնաւոր բաներուն ոչ մէկուն մէջ կը տեսնենք այն ամենազգուար գործը՝ որ Քրիստոնէութիւնը ընելու էր եթէ խղճին պահանջումներուն պիտի պատասխանէր: Իր ծանուցած նպատակն էր մտցնել գթութեան դրութիւն մը: Եւ կարելի՞ ըլլաւ էր որ ասիկա ընէ,

և միանգամայն 'ասանկ դրուածիւն մը չմտցուցածի
 պէս խիստ ու պարտաւորիչ ցուցնէ այն կատար-
 եալ օրէնքը որ իր մէջը պահելու է, եթէ խղճին
 պահանջումներուն պիտի պատասխանէ. վասն
 զի երբոր անգամ մը խիղճը բացարձակ բարո-
 յական կատարելութեան ըմբռնումը կունենայ,
 այն կատարելութենէն ծագած պարտաւորութիւնը
 տկարացնող ո՛չ մէկ բան մը կրնայ յազե-
 ցնել անիկա: Ահա մէկ երևելի դժուարութիւն
 մը: Քրիստոնէութիւնը ինչ ալ որ քարոզէ,
 չէ՞ որ բնականապէս գթութիւնը կը ծառա-
 յէ տկարացնելու օրէնքին վճիռները, և ա-
 նոր պարտաւորիչ զօրութիւնը: Արեւի՞ է ըմ-
 բռնել մէկ օրէնսդիր մը որ կը ներէ յանցանքնե-
 րուն ապրտ պատիժը, և միանգամայն կը ցուցնէ
 անոնց վրայ այն նոյն զղուանքը, և անոնց գոր-
 ծագութեանը առաջն առնելու նոյն հոգը, որ պի-
 տի ունենար եթէ պատիժն ի գործ դնէր: Ամեն
 բարի մարդիկ կը միաբանին այս էական սկզբուն-
 քին մէջ, թէ Աստուծոյ օրէնքին կատարեալ իշ-
 խանութիւնը պէտք է պահուիլ: Բայց այս ի՞նչ-
 պէս կրնայ ըլլալ երբ թողութիւն կը շնորհուի:
 Ասիկա դժուարութիւն մըն է որ եթէ Քրիստո-
 նէութիւնը վերցուցած չէ՛ անոր համար չէ որ
 անիկա չէ իմացեր և ջանք չէ ըլեր: Առաքեալը
 կը ծանուցանէ թէ Աստուծոյ Քրիստոնէութիւ-
 նը մտցնելով բոլոր ըրածներուն մեծ վախճա-
 նը այս էր որ "ինքը արդար ըլլայ, և արդարա-
 ցնէ Յիսուսի հաւատքէն եղողը": Ասիկա է Քրիս-
 տոնէութեան բուն կեդրոնը և հոգին, և եթէ

կատարած չէ այս բանը, բուն իր առաջարկած
 վախճանին չէ կրցեր հասնիլ: Ասիկա անանկ
 խնդիր մըն է՝ որուն վրայ խօսուած ալ չէ ունիցե
 սուտ կրօնքի մէջ. որովհետեւ այն ամենահարկա-
 ւոր գաղափարը Աստուծոյ սրբութեանը վրայ՝ որմէ
 այն կրճագի, բաւական որոշ չէ որ անիկա յա-
 ռաջ բերէ: Այժմէ մարդիկ զոհեր կրմատուցա-
 նէին և անձերնուն տանջանք կուտային, ասոնք
 այն գաղափարովը կրնէին թէ Աստուած երկ-
 րաւոր իշխանի մը պէս գթութեան կըշարժի, և
 բնաւ անոր վրայ մէկ անկողմնական և անթե-
 քելի արդարութիւն ունեցողի մը գաղափա-
 րովը կամ մէկ մեծ սկզբունքով մը թողութիւն
 ստանալու նպատակովը չէ: Բայց կրօնք մը որ պի-
 տի յարմարի լուսաւորեալ մտքի՝ այս խնդիրը որո-
 շելու է. այս առաջարկութիւնը պէտք է որ լու-
 ծէ անիկա: Հիմա յարմար չէ ինձի խօսիլ այն
 կերպին վրայ՝ որով ես կրսեպեմ թէ Քրիստո-
 նէութիւնը լուծած է այս առաջարկութիւնը: Աս
 վիճաբանութեան տակ եղած վարդապետութիւն-
 ներու վրայ խօսքի մանելու միտք չունիմ: Աս
 կրսեպեմ թէ ամեն Քրիստոնեայ կրնդունի որ
 Աստուծոյ գթութիւնը բոլորովին համաձայն է
 իր կատարեալ սրբութեանը հետ: Թող ամեն
 մէկը իրենց ուղած կարծիքն ունենան ասոր ինչ-
 պէս ըլլալու կերպին վրայ: Աս կուզեմ ցուցնել
 միայն առաջարկութեան գթութեանը, և Քր-
 իստոնէութեան հեղինակներուն անիկա կատա-
 րելապէս ճանչնալը, և լուծած սեպելնին: Այժմէ
 ասիկա ըրած են, ուրեմն ի՞նչ Աստուածային ի-

մաստութիւն որ կրցաւ օրէնքով այնչափ կատարելապէս պատասխանել ամենէն լուսաւորեալ խղճին պահանջումներուն, և միանգամայն յանցաւորին կարօտութիւնները լեցնել: Ասանկ բարձր առաջարկութիւններ մարդկային դրութիւնները լուծելու ջանք չեն ըներ. ասանկ Աստուածային իմաստութիւն՝ որ հարկաւ պէտք է անիկա լուծելու համար, անոնց մէջ չտեսնուիր:

Մէկ բան մըն ալ կայ որ պէտք էր Վրիստոնէութեան ընել, խղճին դատող զօրութեանը պահանջումներուն պատասխանելու համար: Ասիկա էր յազկեցնել արդարութեան վրայ մեր ունեցած բնական ճանաչումը՝ նկատմամբ այս աշխարհիս անկարգութեանցը: Այս անկարգութիւնները իրենց բարձրացած աստիճանին մէջ, միշտ առեղծուած մը եղած է Աստուծոյ նախախնամութեան և բարոյական կառավարութեանը վրայ դատողութիւն ընողներուն: Ասոր վրայ շատ ժամանակ առաջ մինչև Յորին ատենը զօրաւոր զգացողութիւն կար, և զօրաւոր կերպով խօսուած է անոր վրայ: «Չարերը» կրսէ «սահմաններ կրփոխեն, հօտեր կը յափշտակեն ու զանոնք կարածեն: Արբերուն էշերը կառնեն կրտանին, այրիին եղը գրաւ կառնեն: Վիշերը առանց հանդերձի կը պառկեցնեն մերկը, ու ցուրտ ժամանակին առանց ծածկոցի կը թողուն: Արբը ծիծէն կը փրցնեն, ու աղքատէն գրաւ կառնեն: Քաղաքին մէջէն մարդիկները կը հեծեն ու վիրաւորուածներուն հոգին կաղաղակէ: Բայց Աստուած անոնց բրածը անզգամութիւն չհամարիր»: «Ամբ

բարիշտները ինչո՞ւ կապրին, կըծերանան, ու խիստ կուժովնան: Անոնց սերունդը հետերնին կը հաստատուի իրենց առջևը, ու անոնց զաւկրները աչքերնուն առջին: Անոնք օրերնին զուարճութիւնով կանցնեն, ու մէկ վայրկեանի մէջ գերեզմանը կիջնեն: «Արկիրը» կըսէ «ամբարշտին ձեռքը դրուեցաւ. Աստուած անոր դատաւորներուն երեսը կը ծածկէ. եթէ ոչ» որպէս թէ ըսէր, ասոր ասանկ ըլլալը ընդունելու է թէ կարող ըլլանք հաշտեցնել անիկա Աստուծոյ արդար կառավարութեանը հետ՝ թէ ոչ, «եթէ ոչ, ո՞վ է անիկա»: Այսպէս այս իմաստուն և բարի մարդը շիտած էր Քրիստոնէութեան լոյսը չծագած: Սաղմոսերգուն մտիթարութիւն չգտաւ այն դժուարութեան տակ՝ մինչև որ Աստուծոյ սրբաբանը չգնաց ու հոն չարերուն վախճանը տեսաւ: Սողոմոն ալ կըսէ, «Աւնախ արեւուն տակը տեսայ որ դատաստանի տեղը՝ ամբարշտութեան և արդարութեան տեղը՝ անօրէնութիւն կար: Աս իմ սրտիս մէջը ըսի՝, անատենը երբոր տեսաւ ասիկա իբրև այն դժուարութեանը միայն լուծմունք այս ըսաւ թէ, «Աստուած պիտի դատէ արդարն ու ամբարիշտը»: Աւ ոչ այս մթութիւնը կը պայծառանայ յետագայ դարերուն գալով: Պատմութիւնը լեցուն է բազմաթիւ սոսկալի ու անծածկոյթ եղեռնագործութիւններով որ մարդիկ մէկգմէկու կընեն: Այլ գերութեան առուտուրին. տես գերութեան հիմակուան վիճակը: Այլ Աւրոպիոյ գեղաշիններուն: Տես Ահաստանը: Այլ թէ եթէ դարձընենք մեր մտադրութիւնը

զօրաւորներուն յայտնի հարստահարութենէն՝ անհրաւութեան յաղթութիւններուն՝ խաբէութեան յաջողութեանը՝ այն կողոպուտներուն և անգութեղեռնագործութիւններուն՝ որ կրլան օրէնքի ձևերու տակ, և՛ այն անհրաւութիւններուն՝ անգթութիւններուն և մանր բռնութիւններուն որ կը գործուին ընտանեաց մէջ և հազարաւորներուն կեանքը կը դառնացնեն, մեր դժուարութիւնները պիտի չնուազին: Անշուշտ մէկ խոհուն մարդու մը՝ առանց յայտնութեան այս աշխարհը խիստ շփոթեցուցիչ և վհատեցուցիչ երևոյթ մը պիտի ներկայացնէ: Պիտի տեսնէ որ զրկանքներ կան՝ որոնց փոխարէն չկայ երկրիս վրայ. չորոշուած խնդիրներ՝ որոնց վրայ դատաստան չկայ հոս. և քանի որ յագեցուցիչ վկայութիւն չունի թէ դատաստանի ատեն մ՝ երբէք պիտի գայ, իր բարոյական բնութեանը զրկանք մը եղած պիտի զգայ, եթէ այս խնդիրները մահուամբ վերջանան և մնան յաւիտեան չորոշուած: Այս բնական և ընդհանրական շփոթութեան վիճակին՝ Վրիստոնէութիւնը կատարեալ դարման կրնէ. մեզի խիստ բացարձակ վստահութիւն կուտայ թէ այս խնդիրները մէկ անաչառ ատենի մը պիտի բերուին: Այն կը յայտնէ մեզի «ամեն» բաներուն կարգադրուելու՝ այն մեծ օրուան դատաւորը, և այն աւուր ըլլալու գործքերուն կանոնները, այն «ամեն բաներուն կարգադրութիւնը»: Արբոր կիմացուի թէ այս բանը պիտի ըլլայ, անատենը շոփթած ու տակնուվրայ եղած սիրտը կը հանգչի: Անատենը և միայն անատենը կը գացուի որ բա-

ներուն մէջ յարմարութիւն կայ, անոնց վերջին վախճանը մէկ տեղ առնելով. և մեր բարոյական կազմութեանը և խղճին պահանջումները բոլորովին լեցուած են:

Այս անորոյ այս կուզեմ ըսել որ Քրիստոնէութիւնը ինքզինքը կրնձայէ խղճի մը բոլորովին լուսաւորուած՝ ոչ միայն իր բարոյականովը, այլ միակերպ մէկ կատարեալ արդարութեան կանոնի մը յարելովը, և անանկ պարագաներու տակ՝ որ լոկ մարդկային իմաստութեան անհաշտելի պիտի երևայ անոր հետ: Մարդը ընդունակ է բարոյական կատարելութեան գաղափար ըմբռնելու, և անիկա իր մտացը մէջ մտնելովը՝ իր բարոյական բնութիւնը կը պահանջէ որ Աստուծմէ եկած ըսուած կրօնք մը ոչ հրամայելու է և ոչ յայտնելու է բնաւ մէկ բան մը այն գաղափարին անհամաձայն: Այս պահանջումը լեցնելու հարկաւորութիւնը՝ մարդը թէ միայն ընտրողութիւն ընելու կարողութիւն ունեցող էակ մը, և թէ բարձրանալու և իրմէն լաւագոյն ու գերաստիճան եղողի մը նմանելու էակ մը սեպենք, Քրիստոնէութիւնը՝ և այն միայն կատարեալ ճանչցած է. և պիտի տեսնուի որ բուն այս հարկաւորութիւնն էր որ իմ պատմած դժուարութիւններս ծագեցուց: Դժուարութիւններուն առաջինը այս էր՝ որ հարկաւոր էր որ անանկ պատուերնէր ըլլային, որ համաձայն ըլլան կատարեալ օրէնքի մը և միանգամայն այս աշխարհիս մէջ բաներուն վիճակին, անանկ որ պահանջուած վարքը ոչ անիրաւ ըլլայ և ոչ անգործադրելի: Վը-

րիատոսէն և անոր հետևողներէն զատ ո՞վ երբէք
 ըրած է ասիկա : Աւրիշ ո՞վ երբէք անիկա ընել
 ջանացած է , առանց մարդկային տկարութիւն
 ցուցնող և չնչին բաներ մեծ չափով մը մըա-
 ցնելու : Արկրորդ դժուարութիւնը կրկայանայ Ա՛ստու-
 ծոյ բարոյական բնութիւնը՝ բնութեան ըրած
 անկատար և շատ անգամ հակասական երևցած
 յայտնութիւններէն խղճին պահանջած կատարե-
 լութեանը տանելուն մէջ : Արկրորդը կրկայանայ
 դժութեան դրութեան մը այն նոյն կատարեալ
 օրէնքին հետ հաշտեցնելու մէջ : Աւ չորրորդ
 անանկ կերպ մը յայտնելու մէջ , որով Ա՛ստու-
 ծոյ կառավարութեանը մէջ այս աշխարհիս վրայ
 եղած անկարգութիւնները հաշտուին մէկ կատա-
 րեալ օրէնքի մը ներկայ գոյութեանը և վերջը
 ընելիք յազմութեանը հետ : Աւստի ասոնց ամեն
 մէկին մէջ սկզբունքը նոյն է . ճանչցուած է որ
 մէկ կատարեալ օրէնք մ՛ ըլլալու է Ա՛ստուծոյ թէ
 բնութիւնը և թէ հրամանները անոր հաստատու-
 թիւն տալով՝ և անիկա ընդունելով : Ա՛սիկա իբ-
 րև ընդունուած առնելով՝ դժուարութիւնը ուրիշ
 բաները անոր հետ հաշտեցնելն է . որոնք Ա՛ստ-
 ուածային իմաստութիւն մը միայն կրնար հաշտե-
 ցնել :

Աս կրտսեպեմ թէ այս պարագաներէն ելած
 ասպացոյցը շատ ծանրակշիռ է , բայց թողելով ա-
 սոնք մէկդի՝ Քրիստոնէութեան բարոյականը ձեռք
 առնելով կը հաստատեմ թէ կատարեալ է այն ,
 այսինքն «աւետարանին մէջ հրամայած առաքի-
 նութիւններն են միայն՝ որ կրնանք երեակոյցել

Թէ երկնային ուսուցիչ մը պիտի պատուիրէ՝ :
 Աւ մի՛թէ ընդունելի չէ՞ ասիկա : Անհաւատները
 կընդունին ասոր ասանկ ըլլալը , և վստահ եմ որ
 ամեն անաչառ մարդ հարկաւ պիտի ընդունի :
 Բայց եթէ այսպէս է , ո՞վ չընդունիր թէ մարդ-
 կային պարտուց մէկ կատարեալ դրութիւն մը
 Աստուծմէ եկած ըլլալու է հարկաւ : Ո՞վ չիմա-
 նար այն կարծիքին անտեղութիւնը թէ անիկա
 ծագում առած ըլլայ մէկ ստութեան ու խարէ-
 ութեան դրութեան մը հետ :

Աւ այս բարոյականը աւելի զարմանալի է ,
 վասն զի Քրիստոնէութեան մեծ ու նախնական
 նպատակը մարդոց երկրաւոր ընկերութեան յա-
 ռաբերութիւնները ուղղել , կամ այս կենաց մէջ
 անոնց բարելաւութեան հոգ տանիլ չէ . այլ
 «լոյսի բերել կեանքն ու անմահութիւնը» , և
 պատրաստել մարդիկ այն անմահութեանը համար :
 Ար հոգիին նայելով արդարեւ մեզի անանկ պիտի
 երեայ թէ այս բարոյականը երկնային վիճակին
 կրկնաբարի , բայց իր արդիւնքներուն շատին որ-
 պիսութեանը նայելով ուրիշ բան չէ , այլ Քրիս-
 տոնէութեան երկրային վերարկուն , և իբրև համ-
 բարձող մարգարէին վերարկուն որ վեր փոխա-
 դրուած ատենը իր վրայէն ինկաւ : Աւրեմն որչափ
 ալ որ մեծ է գործը , և որչափ մեծ պարգևալ որ
 է բարոյականի մէկ կատարեալ դրութիւն մը ,
 անիկա միայն անուղղակի արդիւնքն է . նման է
 անիկա Հնդկաստանի մէջ քաջածանօթ եղած այն
 տեսակ արմաւենիին բունին լոկ մէկ ճիւղին , որ տա-
 կաւին բունը անկէ վեր կըբարձրանայ և իր պատուղը

կուտայ գագաթին վրայ եղած միայն մէկ շքեղ ծաղիկէ մը: Այս բարոյականը մէկ անհուն պարգև մըն է. անիկա Քրիստոնէութեան պատուն է. բայց ասիկա անոր ստորին ճիւղերուն վրայ որպէս թէ կրկենայ, քանի որ փրկութեան՝ «չոյսի բերուած կենաց ու անմահութեան» այն մեծ վարդապետութիւնն է որ անոր գագաթին վրայ կը տարածուի և իր անուշ հոտը կը բուրէ ազգաց վրայ:

Արեւմտեան թող մարդիկ ինչ որ կուզեն ըսեն մարդկային մտաց բարոյական գիտութեան մէջ գիւտեր ընելու կարողութեանը վրայ. բայց ինչի անանկ կը թուի թէ մէկը չկրնար սեպել թէ ասանկ կրօնք մը՝ որ բնական կրօնքին բոլոր վարդապետութիւնները կատարեալ իր մէջն ունի և խղճին պահանջումները կը լեցնէ, Վալիլեայի գեղացիներէն ու ձկնորսներէն հնարուած ըլլայ, մինչև որ անհաւատի ընդարձակ դիւրահաւանութիւնը չունենայ:

Բայց միայն մէկ խնդիր մըն ալ կը ծագի այս նիւթին վրայ: Մէկ մարդ մը չկրնա՞ր Քրիստոնէութեան պահանջած բարոյականը ընդունիլ և կրօնքը մերժել: Վիւրին է ըմբռնել որ բարոյականի և կրօնքի դրութիւն մը մէկ տեղ կենան, բայց և այնպէս հարկաւորապէս մէկ տեղ կապուած չըլլան: Արնայ ըլլալ որ բարոյականը շիտակ ըլլայ, ինչպէս Աիկերոնի իր ՏԷ ՕՖիսի կոչուած գիրքին մէջ սորվեցուցածներուն շատը շիտակ էր, բայց և այնպէս անոր հետ կապուած կրօնքը բոլորովին սուտ ըլլայ: Արնայ ըլլալ որ մէկ կրօնքի մը պատուէրները կապակցութիւն չու-

նե՛նան անոր եղելութիւններուն կամ վարդապետութիւններուն կամ արարողութիւններուն հետ : Ասանկ են ամեն սուտ կրօնքները . այն կրօնքներուն վարդապետութիւնները և եղելութիւնները մարդոց բարոյական առաքինութիւն գործել տալու չեն ծառայեր : Հատ անգամ բարոյականը կրօնքէն աղէկ է , և դիւրաւ կըրնայ բաժնուիլ անկէ : Այլ եթէ ուրիշ կրօնքներն ասանկ են , ինչո՞ւ Քրիստոնէութիւնը անանկ չկրնար ըլլալ : Այս խնդիրը պարտաւորած եմ քննել , որովհետև անհաւատները ետ չեն քաշուիր ընդունիլ ինչ որ ըսինք Քրիստոնէութեան բարոյականի վրայ : Հատ գովաբանութիւնով կըխօսին Քրիստոսի լեռանը վերայ տուած քարոզին վրայ . բայց անոր իրեն յատուկ եղած վարդապետութիւններէն ո՛րչափին համար որ կրնան՝ պնդիւ կըհաստատեն թէ անոնք բնութեան սորվեցուցածներն են . և կըթուի թէ դժուարութիւն մը չեն տեսներ մինչև անգամ ընդունիլ թէ բարոյականը կատարեալ է , բայց և այնպէս կրօնքը կըմերժեն : Արչափ որ Քրիստոնէութեան վարդապետութիւնները՝ անանկ ալ անոր բարոյականը իրեն յատուկ է և զարմանալի . և քննելու բան մըն է թէ միթէ կըրնա՞նք տրամաբանութեան կամ բանականութեան դէմ չընելով ընդունիլ բարոյականը և մերժել վարդապետութիւնները : Արծեմ՝ ոչ . որովհետև՝

'Ախ' ինձի այսպէս կըթուի՝ ինչպէս արդէն ալ ջանացի ցուցնել , թէ մարդ կարող չէր ասանկ բարոյականի դրութիւն մը հնարել : Ար-

բոր կրկենամ երկրաշարժով ձեղքուած երկու
 գահավէժներուն մէջ տեղը, հարկ չէ որ մէկը ին-
 ծի ըսէ թէ այն բացուածքը մարդկային բաղուկ
 չէ գործեր: Արբոր կը տեսնեմ ծիածանին կա-
 մարը երկնից վրայ տարածուած, պէտք չէ որ ին-
 ծի ըսեն թէ մարդու ձեռք չէ քաշեր անիկայ:
 Այնպէս երբոր ասանկ դրութիւն մը մարդուն
 իմացական ու բարոյական կարողութեանը՝ և մա-
 նաւանդ անոր արդեամբ ըրած ամեն ջանքե-
 րուն հետ կըբաղ գատեմ, կըգամ թէ անոնց մէջ
 յետին աստիճան բաժանում կայ: Աւ անոր բա-
 րոյականին Աստուածային ծագումն ունենալը ըն-
 դունող ո՛չ մէկը կըտարակուսի ընդունիլ կրօն-
 քին ալ այնպէս ըլլալը:

Իայց երկրորդ՝ անհաւատալի և հակասական
 է, հակառակ մտքին բոլոր ծանօթ օրէնքներուն
 սեպել թէ այն մարդիկը՝ որոնց բարոյական ընտ-
 րողութիւնը այնչափ սուր էր, այնչափ դիւրադ-
 գաց էին՝ որ կարող եղան անանկ մաքուր՝ վսեմ
 և ամեն ստութեան բոլորովին հակառակ դրու-
 թիւն մը հնարել, միտքերնին գրին խաբել մարդ-
 կային ազգը անոնց ամենամեծ օգուտին վերաբե-
 րեալ բանին մէջ, որուն պատճառ մը կամ շար-
 ժառիթ մը չենք կրնար գտնել: Աթէ բարոյա-
 կանի դրութիւն մը ունէին մարդոց հաղորդելու,
 ինչո՞ւ համար ճշմարտասէր մարդոց պէս չհրա-
 տարակեցին անիկա իբրև մէկ վերացեալ դրու-
 թիւն մը առանց բեռնաւորելու վարդապետու-
 թիւններով, որոնք առաջուց գիտցած ըլլալու են
 թէ շրէից գայթակղութիւն ու շեթանոսաց

յիմարութիւն պիտի ըլլայ : Ինչո՞ւ անոր հետը
կապակցեցին անանկ եղերութիւններէ պատմու-
թիւն մը՝ որ եթէ սուտ ըլլան դիւրաւ կը հեր-
քուին : Արջափ աւելի ապահով ու պատուաւոր
պիտի ըլլար դրութիւնը իր վերացեալ ձևովը
քարոզելը փիլիսոփաներուն նման : Ինծի անկա-
րելի կը թուի որ ասանկ ընթացքէ մը երեցած
յիմարութիւնն ու չարութիւնը այն մտաւոր ու
բարոյական բարձրաստիճան որպիսութեանց հետ
դանուի, որով միայն ասանկ դրութիւն մը կրնայ
հնարուիլ :

Երբորդ՝ այն սերտ կապակցութիւնը որ ունե-
նալու է և բնականապէս կրկենայ բարոյականի և
կրօնքի մէջ, կարգիլէ ասանկ ենթադրութիւն մը :
Կան անանկ անձինք՝ որ կրսեն թէ մարդուն մէջ
եղած բարոյականութեան [հիմունքը կրօնքին հի-
մունքներէն տարբեր են, և ես կամք չունիմ ուրա-
նալու թէ կրօնքին մէջ մարդուն այն ինչ կա-
րողութիւնները մեծ չափով մը գործածութեան կը
բերուին, որ բարոյական պարտուց մէջ թեթեւ
շարժում մը կառնեն եթէ երբէք շարժուին : Իսկ
և այնպէս մարդուն պարտուցը նայելով՝ որ այս
է բարոյականին բոլորը և ունիցէ ճշմարիտ կրօն-
քին էական ու անբաժանելի մասը, անոնք եր-
կուքն ալ նոյն խղճին կը բողոքեն և միայն անոր :
Նոյնպէս ճշմարիտ կրօնքը և ճշմարիտ բարոյա-
կանութիւնը մէկ կարողութենէն կախեալ ըլլալով՝
հարկաւ մէկ էական միութիւն մ' ունենալու են,
և շատ տարակուսելի բան է թէ արդեօք մէկին
կատարեալ դրութիւնը կրնայ միւսին մէկ սուտ
դրութեանը հետ միանալ :

Յայտնի է որ մէկ կատարեալ կրօնք մը կատարեալ բարոյական մը պիտի ունենայ իր մէջը, որովհետեւ կատարեալ կրօնքը պարունակելու է ամեն կրօնական պարտաւորութիւն, և մենք պարտաւոր ենք կատարել մեր ընկերներուն ունեցած պարտաւորութիւննիս ո՛չ թէ պարզապէս մեր դէպի անոնց ՝ ունեցած յարաբերութիւններուն պատճառովը, այլ և այն պարտաւորութիւններնիս կատարելը Մատուծոյ կամքն ըլլալուն համար: Ուստի ամեն բարոյական պարտք իբրև կրօնական ալ պարտք կատարելու պարտաւորութեան տակ ենք և պիտի ըլլանք, վասնորոյ մէկ մարդ մը այնչափ Մատուծապաշտ կրնայ ըլլալ որչափ որ աղէկ բարոյականի տէր է: Քայց եթէ կատարեալ կրօնքի մը պարտքերը բարոյականի պարտքերը կը պարունակեն, կարելի է պիտի ըսեն թէ կատարեալ բարոյականին պարտքերը կըրօնքինը չեն պարունակեր: Չեն պարունակեր նոյն իմաստով, բայց և այնպէս բարոյականի պարտքերը մարդուն նոյն կարողութենէն և նոյն կերպովը վկայուած ըլլալով որ կրօնքինը կը վկայուի, և պարտաւորութեան սկզբունքը նոյն ըլլալով, չենք կրնար ըմբռնել ճշմարիտ բարոյականի տէր մարդ մը անանկ մէկը՝ որ կը կատարէ իր պարտքերը՝ իր պարտքն ըլլալուն համար, որ ինչ յարաբերութիւններ որ ինք գիտէ թէ ունի Մատուծոյ՝ այն յարաբերութիւններուն իրեն սորվեցուցած պարտքերուն չափ Մատուծապաշտ ալ չըլլար: Խիղճը իբրև խիղճ պատասխանելու է պարտաւորութեան հրամանին, ուրկէ որ ըլլայ այն հրամանը:

Եւ ոչ կրնանք անանկ ըմբռնել որ բարոյա-
կան պարտուց մէկ կատարեալ դրութիւն մը
միանայ ու համաձայնի սուտ դրութեան մը պա-
տուիրած կրօնական պարտաւորութիւններուն հետ.
որ անանկ սուտ դրութիւն մը պիտի ըլլայ Քրի-
ստոնէութիւնը եթէ Մատուծմէ եկած չէ : Իսկ
Քրիստոնէական դրութեանը մէջ բարոյական ու
կրօնական պարտերը յայտնապէս ասանկ կը միա-
նան և կը կազմեն մէկ անկախ ամբողջութեան մը
մէկ մասը : Մատուծաշունչին կրօնական բարո-
յականը՝ եթէ պատշաճ է այսպէս կոչել անիկա,
այն որ Մատուծոյ կը վերաբերի ճիշդ այնչափ
տարօրինակ է՝ որչափ որ մարդուն վերաբերեալ
բարոյականը, և ճիշդ այնչափ գերասափձան է ու-
իցէ ուրիշ դրութեան կրօնական բարոյականէն .
և ասոնք երբոր միանան և մէկզմէկ խառնուին՝
ինչպէս որ են Մատուծաշունչին մէջ, կը կազմեն
մէկ կատարեալ ամբողջութիւն մը : Մսկէ ի զատ
պատշաճ է տարակուսիլ թէ արդեօք սուտ կրօն-
քի մը հետ բարոյականի մէկ կատարեալ դրու-
թիւն մը կրնայ կազմուիլ, թող ըլլայ թէ մէկ
վերացեալ՝ կամ աղիւսակաձև կերպով . վա-
սընդի մեր ընկերներուն ունեցած պարտ-
քերնուս շատը՝ ինչպէս նաև անոնց պարտա-
ւորող շարժառիթներն ալ, կը ծագին այն յա-
րաբերութիւններէն որ մենք ունինք անոնց
իրբև մէկ հասարակաց ծնողքի զաւակներ . և այս
յարաբերութեանց գիտութիւնը միայն ճշմարիտ
կրօնքէն կուգայ : Ա ասնորոյ եթէ Մատուծա-
շունչին բարոյականը մեր հաստատածին պէս բա-

բոյական է, ուրեմն կրօնքն ալ ճշմարիտ պիտի ըլլայ:

Եւ այց դարձեալ այն բարոյականը որ Քրիստոնէութեան յատուկ է, անանկ կերպով մը անոր եղելութիւններէն և վարդապետութիւններէն կառնէ իր ծագումը, և անանկ կերպով անոնցմէ կրնդունի իր ոյժը որ անոնցմէ չկրնար զատուիլ: Անիկա անանկ չկենար կրօնքին մէջ, ինչպէս որ պատուական քարը ապառաժին մէջ, այլ կենդանի ամբողջութեան մը մէկ գործարանաւոր մասն է: Չեղքն ու ոտքը սրտին և ուղեղին ինչպէս որ է, այն ալ անանկ է: Աւ հասանուղի կերպով զօրաւոր վկայութիւն մը կրգտնենք Քրիստոնէութեան իմաստութեանը և Աստուածային ծագմանը: Աստուածային իմաստութենէն զատի՞նչ բան ասանկ կրօնքի մը բոլոր մեծ վարդապետութիւններուն և եղելութիւններուն կրնար մէկ ուղիղ բարոյական մը կազմել տալ թէ խրատով և թէ շարժառիժ տալով: Արչափի դժուար՝ և պատշաճ է ըսել ինչ անկարելի բան է՝ որ խաբեբայ հեղինակ մը դնէ Քրիստոսի պէս արտաքոյ կարգի անձ մը բարձրր գերբնական զօրութիւններով, բայց և այնպէս մէկ այլանդակ ու երեւակայական քաջութեան գործ մը չընծայէ անոր, ինչպէս որ ամեն հեթանոսաց չաստուածներուն պատմութեանը մէջ կրտեսնենք, ու անոր հրաշագործ զօրութեան մէկ փոփոխական կամ անձնասէր կամ անարժան գործադրութիւն մը չպատմէ, այլ անանկ շարադրէ այն կարողութեան ամեն գործադրութիւնները և

անոր կենացը ամեն դէպքերը՝ որ զօրաւոր կերպով
 գործեն իբրև շարժառիժ անատենը չսուած՝
 բայց կատարեալ բարոյականի մը գործադրութեան
 նը: Ինչպէս որ առաջ ըսի, կան շատ նոր պարտաւորութիւններ այն նոր յարաբերութիւններէն ծագած՝ որոնց մէջ Վրիստոնէութեան եղելութիւնները մեզ կրդնեն, բայց այս եղելութիւնները ոչ միայն այն նոր պարտաւորութիւններուն, այլ ամենուն նոր ու զօրաւոր շարժառիժներ կուտան, առանց որոց բոլոր դրութիւնը գործնական մասին բնաւ զօրութիւն չունենար: Հարկաւ Վրիստոնէութեան յայտնած Մատուցոյ բնութենէն և անոր դէպի մեզի ցուցուցած նոր յարաբերութիւններէն կրճագին ամենէն զօրաւոր շարժառիժները, մեր ընկերին ունեցած պարտքերնուս շատին կատարմանը: Մատուցոյ դէպի մարդիկ ունեցած հայրական յարաբերութիւնը՝ Վրիստոնէութիւնը միայն ճանչցուցած է իբրև գործնական վարդապետութիւն: Նշմարիտ է բարեպաշտ անձի մը ըսածը թէ՛ Աթէ Վրիստոս պարզապէս միայն «Հայր մեր» ըսել սորվեցնէր մարդոց, ամենէն մեծ բարերարը եղած պիտի ըլլար: Թէև հեթանոսները փոքր ինչ ծանօթութիւն ունէին գերագոյն զօրութեան բարեսիրութեանը վրայ ընդհանուր օրէնքներուն գործողութիւններէն, բայց և այնպէս երկինքը երկրէն որչափ որ հեռու է, այնչափ հեռու է անիկա այն ծանօթութենէն՝ որ կատարուի մասնաւոր նախախնամութեան և հայրական հոգողութեան վարդապետութենէն: Ալ որչափ ազդու

կերպով Վրիստոս ինք կըբանեցնէ այս վարդապետութիւնը և անոր հետ մէկ տեղ յայտնուած այն բարձր բարոյական որպիսութիւնները, որ գործնական պարտաւորութիւններուն ոյժ տայ : Արբոր կըհրամայէ մեզի սիրել մեր թշնամիները և օրհնել մեզ անիծողները, անոր համար է կըսէ որ մեր երկնաւոր Հօրը որդիքն ըլլանք որ «իր արևը կըծագեցնէ թէ չարերուն և թէ բարիներուն վրայ» : Այլ եթէ կըխրատէ մեզ ներել, անոր համար է որ Աստուած կըներէ մեզի : Աթէ տէրը կըներէ տասը հազար տաղանդի պարտքը, ծառան ալ իր ծառայակիցին ներելու է տասը դահեկանի պարտքը : Արբոր կըսորվեցնէ թէ սրտով սուրբ եղողը երանելի է, անոր համար անանկ կըսէ՝ որովհետև «ըԱստուած պիտի տեսնեն» : Աթէ կըխրատէ մեզ որ մեր լոյսը լուսաւորէ մարդոց առջին, անոր համար է որ փառաւորենք մեր Հայրը որ երկինքն է : Այլ երբ Առաքեալ մը կուզէր սորվեցնել մէկզմէկ սիրելու պարտաւորութիւնը, «Այս բանին մէջն է՝ ըսաւ «սէրը՝ որ չէ թէ մենք սիրեցինք զԱստուած, հապա որ անիկայ մեզ սիրեց, ու իր որդին խրկեց մեր մեղքերուն քաւութիւն ըլլալու : Մի՛րելիներ թէ որ Աստուած մեզ ասանկ սիրեց, ուրեմն մենք ալ կըպարտաւորինք մէկզմէկ սիրել» : Այլ նոյն կերպով Վրիստոսի գործքերը և բնութիւնը կըյիշուի : Արբոր Վեարոս Առաքեալ կուզէ մեզ յորդորել որ համբերութեամբ տանինք անիրաւութեան, կըցուցնէ մեզի այն Սուրբը՝ «որ կընախատուէր ու փոխարէնը չէր նախաատեր, կըչար-

չարուէր ու սպառնալիք չէր ընել . հապա ինքը-
 ղինքը արդարութեամբ դատողին կը յանձնէր" :
 Եւ երբ Պօղոս Մաքեալ կուզէ սորվեցնել
 մեզի խոնարհութիւն և ուրիշները մենէ վեր բըռ-
 նել , ինչ ապացոյց կուտայ , կըսէ թէ "Չեզմէ
 ամեն մէկը նոյն միտքը թող ունենայ , որ Յի-
 սուս Քրիստոսի մէջն էր . որ Մատուծոյ կերպա-
 րանքն ունենալով , յափշտակութիւն մը չսեպեց
 Մատուծոյ հաւասար ըլլալը . հապա անձը ունայ-
 նացուց ծառայի կերպարանք առնելով" : Ար-
 դարև որչափ որ քննենք , այնչափ աւելի զար-
 մացմամբ կը տեսնենք որ գրեթէ միայն Քրիստո-
 նէական կրօնքէն ծագած են Քրիստոնէական բա-
 րոյականի շարժառիթները . և անոր վարդապե-
 տութիւնները՝ եղելութիւնները և շարժառիթ-
 ները ու պատուէրները ամենը մէկզմէկու հետ
 կը միանան և անլուծելի կերպով կապուելով կը-
 կազմեն մէկ համաձայն ու կատարեալ ամբողջու-
 թիւն մը :

Ասանորոյ թող մէկը չսեպէ թէ կրնայ զա-
 տել Քրիստոնէական բարոյականը Քրիստոնէա-
 կան կրօնքէն : Արկէ որ առած ըլլայ այս կրօնքը իր
 ծագումը՝ սա յայտնի է որ անիկա տեսակ տեսակ
 բաներ խառն ի խառն մէկտեղ դրուած զան-
 դուած մը չէ , այլ մէկ ամբողջ մըն է , և կամ ըն-
 դունելու է կամ մերժելու է իբրև մէկ ամբողջ :
 Ասանորոյ բանին բնութենէն կրնանք ակնկա-
 լել , և բոլոր փորձն ալ այնպէս ցուցուցած է որ
 այս բարոյականը այս կրօնքէն բաժնելու և այն-
 պէս անոր զօրութիւնը պահելու ջանքը նման է

Ճիւղը իր բունէն բաժնել և տակաւին կենդանի պահելու ջանքին : Առաջուց այնպէս պիտի աշխատենք որ եթէ երբէք աշխարհիս անապատէն կատարեալ բարոյականի մը գալը պիտի տեսնենք, պիտի գայ ո՛չ թէ մինակ քալելով, այլ «իւր Աիրականին կոթնած» :

Ճ Ա Ռ Ե

Քրիստոնէութիւնը համեմատ է բնութեան . համաձայն կուգայ բնական կրօնքին և կը յարմարի մարդուն բարոյական բնութեանը : Քրիստոնէութիւնը այս յարմարութիւնն ունի կրնանք ըսել եթէ խղճին ընտրողութեան կարողութիւնը կը յագեցնէ, և եթէ հակամիտութիւն ունի անոր գործողութիւնը զօրացնելու և վսեմացնելու, մշակութեան կարօտ կարողութիւն մը բռնելով անիկա : Այս վերջին կէտը շատ կարևոր կըսեալեմ ես : Եթէ կրնայ ցուցուիլ որ ո՛րչափ որ մարդկային միտքը ենթակայ ըլլայ այսինչ գրութեան մը իրական ներգործութեանը, նոյն համեմատութիւնովը իր բարոյական կարողութիւնները կը զօրանայ և կը կատարելագործի, այն դրութիւնը Աստուծմէ եղած ըլլալու է : Մէկ սուտ դրութեան մը խղճին ընտրողութիւնը և հրամայող ու հաճութիւն տուող և խայթող զօրու-

թիւնը կատարելագործելու ծառայելը ոչ միայն
 անկարելի է, այլ անանկ բան մըն է՝ որով անանկ
 դրութիւն մը ինքզինքը պիտի կորսընցնէ: Ասանկ
 ընելով պիտի մաքրէ աչքը որ լաւագոյն տեսնէ
 բուն իր խօթութիւնները, և պիտի զօրացնէ
 բազուկին ջիղերը բուն իր կործանմանը համար:

Աստ այնմ Քրիստոնէութենէն զատ դրութիւն
 մը չկայ որ յառաջ բերէ մէկ մաքուր ու զօրա-
 ւոր խիղճ մը թէ անհատից վրայ և թէ հասար-
 ակութեանը: Աւրիշ դրութիւնները կրներգոր-
 ծեն մարդոց պատուէրներով՝ երկիւղով՝ ակնա-
 ծուծեամբ՝ յուսով և վախեր տալով, ոչ թէ
 ինքզինքնին Աստուծոյ առջևը ամեն մարդոց խղ-
 ճին իբրև արդար ընծայելով: Բայց Քրիստո-
 նէութիւնը՝ Աստուծոյ բնութեան և անոր օրինաց
 վրայ ցուցուցած կատարեալ օրինակովը, և արդար
 Աստուծոյ մը ընդհանրական և յարաժամ նկա-
 տողութեան և ապագայ դատաստանի վարդապե-
 տութիւններովը և ահռելի վճիռներովը, և մա-
 նաւանդ ամեն մեղք իբրև անհուն բարերարի մը
 դէմ գործուած ապերախութիւն ցուցնելովը կը-
 կատարէ ամեն ինչ որ կրնանք երևակայել թէ
 բնաւ մէկ դրութիւն մը կրնայ ընել բարոյական
 ճանաչողութեան ու գործոց կարողութիւնները
 զօրացնելու և կատարելագործելու համար: Արու-
 թիւնը կաղմուած՝ յարմար ու պատրաստ կըկենայ,
 կատարեալ է, միայն գործադրութեան կրկարօտի:

Այլ ասոր համեմատ կրտեսներք որ զուտ Քրիս-
 տոնէութիւնը որչափ որ կըտիրէ մէկ տեղ մը, ճիշդ
 նոյն համեմատութիւնովը կըգտնուի հոն զօրաւոր

ու լուսաւորեալ խիղճ. և պէտք է ասկէ իման. և թէ անոր կատարեալ ազդեցութիւնը պիտի մեծէ բարոյական չարիքը, ինչպէս որ արեգակը կը ցրուէ խաւարը: Քրիստոնէութեան վրայ դատողութիւն ընելու համար ունեցած կարողութիւնն իս, մեր բուն իրմէն ընդունած լոյսէն ու զօրութենէն առած ենք. և որչափ որ աւելի ազդեցութիւն ունենայ մեր վրայ, այնչափ աւելի կարող կըլլանք այն քննութիւններն ընելու, և այնչափ աւելի համոզիչ պիտի ըլլայ այն քննութենէն ելած վկայութիւնը:

Մ. Ես յաւելուած ծանօթութիւնները տալէն վերջը Քրիստոնէութեան խղճին ունեցած յարմարութեանը վրայ, հիմա կսկսիմ խօսիլ անոր իմացականութեան՝ կրից՝ երեւակայութեան և կամքին ունեցած յարմարութեանը վրայ:

Քրիստոնէութեան իմացականութեան ունեցած յարմարութիւնը ըսելով՝ ըսել կուզեմ անոր իմացականութիւնը պայծառացնելու և զօրացնելու հակամիտութիւնը: Շիշդ այն ըսել կուզեմ ինչ որ ըսել կուզենք երբոր կըսենք թէ բնութիւնը յարմար է իմացականութեան: Մարդուն իմացականութիւնը կըզարգանայ և կըզօրանայ իր կարողութիւնները պատշաճ առարկաներու վրայ բանեցնելով: Մտքի գործադրութիւնը երկու կերպով կրնայ յառաջ տարուիլ. մըտքին մէջ տեղեկութիւն գանձելով, կամ անիկա դասման ու խորհրդածութեան առաջնորդելով. և ասոնցմէ որուն որ նայինք՝ համարձակութեամբ կրնանք Քրիստոնէութիւնը բնութեան համեմատ

ներ իմացական կարողութիւնները զարգացնելու
զօրացնելու կողմանէ :

Եւ նախ տեղեկութեան վրայ : Այժմէ շին
տակարանը Քրիստոնէական յայտնութեան մէկ
ասը սեպեմք՝ որ այս պարագային մէջ արդարա-
էս կրնանք սեպել, չկայ գիրք մը որ կրնայ ա-
որ հետ համեմատիլ՝ անոր տուած այլ և այլ և
արևոր տեղեկութիւններուն կողմանէ, և ոչ բը-
ութիւնն անգամ կրնայ անկէ գերազանցել :
Սկէ և միայն ասկէ գիտենք ինչ որ գիտենք
աշխարհիս և մարդկային ազգին սկզբնաւորութեա-
ր վրայ, բնական և բարոյական չարեաց ծագմա-
ր վրայ, ջրհեղեղէն առաջ եղող մարդոց պատ-
նութեանը վրայ, և բուն իսկ ջրհեղեղին մարդ-
ային ազգին վրայ յառաջ բերած արդիւնքնե-
ուն վրայ, մարդոց աշխարհիս վրայ բնակութիւն
շատատելուն և տարածուելուն վրայ, շրէից
պատմութեանը վրայ, և Քրիստոնէութեան ծագ-
մանը և յառաջադիմութեանը վրայ : Առանց
ստուածաշունչի մէկ անժամիանցելի վարագոյր
մը ձգուած պիտի ըլլար մեր և Յոյներէն առաջ
եղած մարդկային ազգին ամբողջ պատմութեա-
ր մէջ. և ո՞վ չղգար որ ասանկ վարագուրի մը
ձգուիլը մտքին վրայ շատ ազդեցութիւն պիտի
ունենայ, ոչ միայն շատ ծանօթութիւն մեր տե-
ութեանէն խափանելուն համար, այլ գիտութեան
ամբողջ կազմութեանը կատարելութիւն տալու
համար, այն ծանօթութիւնները հարկաւոր ըլլա-
լով անոնց խափանուիլը մտքին վրայ մէկ ցուրտ
ու թմրած ներգործութիւն մը յառաջ բերելուն

Համար : Անոնց խափանուիլը նման պիտի ըլլայ այն ճանկը գերանի մը վրայէն հանելուն, որմէն կախուած է ամբողջ շղթայ մը : Այլ դարձեալ բնութենէն առնուած ինչ տեղեկութիւն կրնայ աւելի օգտակար և հաճելի ըլլալ, քան թէ այն որ Աստուածաշունչը կուտայ Աստուծոյ վրայ իբրև մեր Հայրը՝ անոր ընդհանրական նախախնամութեանը վրայ, մեր պատասխանատուութեանը վրայ, մեռելոց յարութեան ու Քրիստոսի երկրորդ գալստեան և յաւիտենական կենաց վրայ : Ո՞վ կրբունէ բնութեան տուած կարծեաց մառախուղը այն զօրաւոր կռթնելու տեղին տեղը, որ յայտնութիւնը կանգնած է ապառնիին հորիզոնը :

Բայց չխօսելով տեղեկութեան վրայ, որովհետեւ անկէ չէ որ միտքը իր գլխաւոր զօրութիւնը կատանայ, կը հաստատեմ թէ Քրիստոնէութիւնը յարմարացած է իմացականութեան, նախ՝ անոր և ճշմարիտ փիլիսոփայութեան ոգին նոյն ըլլալովը : Ասոր վրայ առաջ խօսած եմ :

2. Քրիստոնէութիւնը անուղղակի կերպով կօզնէ իմացականութեան, ազատելով մարդիկ հեշտասիրութեան և անարդ մոլութեանց իշխանութենէն՝ որոնցմով կարգիլուի և ետ կրմնայ մտքին աճումը : Արուց այն բարեխառնութիւնը և զգաստութիւնը՝ որ այն կը հրամայէ, էական պայմաններ են մտքին կատարեալ ընդարձակութեանը և զօրանալուն :

3. Քրիստոնէութեանը մտքին օգնելը յայտնի է ճշմարտութիւնը ինչ աստիճանի մէջ բունելէն : Ճշմարտութիւնը այս դրութեանը մէջ ամեն բա-

նին հիմը դրուած է : Քրիստոնէութիւնը ասով
 կրդանազանի Մատուծմէ եկած ըլլալ կեղծող ա-
 մեն ուրիշ դրութենէն : Քրիստոս ըսաւ թէ «Մս
 աշխարհ եկայ ճշմարտութեան համար վկայելու» :
 Մղթք ըրաւ որ Մատուծ սրբէ մարդիկ, բայց
 ճշմարտութեան ձեռօքը պիտի ըլլար : Քրիստոսի
 նպատակը կերևի թէ իր աշակերտները անանկ վի-
 ճակի մը մէջ դնելէ, որ կարող ըլլան ինչպէս սիրով
 անանկ ալ դատողութիւնով ինքզինքնին անոր և
 Մատուծոյ կառավարութեանը նուիրել : Ի՞նչ
 նշանաւոր են իր խօսքերը : «Մսկէ ետքը ձեզ
 ծառայ չեմ անուաներ, ինչու որ ծառան չգիտեր
 իր տէրը ինչ կրնէ . հապա ես ձեզ բարեկամ
 անուանեցի, ինչու որ այն ամեն բաները որ իմ
 Հօրմէս լսեցի ձեզի իմացուցի» : Սուրբ Գիորգը
 կանուանէ Քրիստոս լոյս՝ Հեթանոսները լու-
 սաւորելու : Պօղոս Մաքեալին նպատակը մար-
 դիկ ինչպէս Սատանային իշխանութենէն Մատու-
 ծոյ՝ անանկ ալ խաւարէն լոյսի դարձնել էր :
 Ինչպէս զգաստութեան՝ անանկ ալ ճշմարտութեան
 խօսքեր կրնէր : Այժմէ եկեղեցիի մը վարմունքէն
 սաստիկ շարժուեցաւ, անոր համար էր որ անիկա
 ճշմարտութեան չէր նազանդեր : Այժմէ Քրիստո-
 սի սիրելի աշակերտը կը յորդորէ ընտրեալ տիկիներ
 որ այսինչ անձինքը իր տունը չընդունի, անոնց
 համար է որ ճշմարտութիւնը չեն սորվեցներ :
 Ստրին լուսաւորութիւնը սրտին մաքրութենէն
 պակաս նպատակ մը չէ Քրիստոնէութեան մէջ .
 անոր բոլոր նպատակը և հակումը ճշմարտութեան
 յարգը աւելցնելու կրնայի : Քրիստոնէութեան

Թշնամիները անոր ոչ գրոյն և ոչ ոգիին մէջ
կրնան բան մը ցուցնել՝ որ կրխափանէ գիտու-
թիւնը կամ կրսանձէ իմացականութիւնը : Ար-
դարև մենէ կրպահանջուի հաւատք ունենալ, բայց
նաև կրպահանջուի «հաւատքին վրայ գիտութիւն
աւելցնել» : Մէկ կոյր հաւանութիւնով մը բան
մը ընդունելու չենք, այլ միշտ կարող ըլլալու
ենք մեր ունեցած յոյսին պատճառը տալ : Մենք
այնչափ կրպարծենանք Քրիստոնէութիւնով իբ-
րև մտաց լուսաւորութիւն տուող կրօնք, որչափ
որ իբրև սիրոյ կրօնք :

4. Քրիստոնէութիւնը իմացականութեան կօդ-
նէ, որովհետև ուր որ այն կրկենայ իր մաքրու-
թիւնովը, հոն հարկաւ կրօնական կարծեաց ա-
զատութիւն ալ պիտի կենայ, և ասիկա զօրաւոր
իմացականութեան մը ստացմանը մէկ մեծ պայ-
մանն է : Քրիստոնէութիւնը՝ ճշմարտութիւնը իբ-
րև հոգիին վրայ բարոյական իշխանութեան և
բարոյական փոփոխութեանց մեծ միջոցը ճանչնա-
լով՝ և մտքին համողումէն չծագած արտաքին ա-
րարողութիւններն ու արտաքին գործքերը բանի
տեղ չգնելով այդ ճշմարտութիւնը մարդկային
հոգիին իրաւունքը կրսեպէ : Ի՞նչ էր բարե-
կարգութեան հիմնական սկզբունքը, եթէ ոչ
ճշմարտութիւնը և բոլոր ճշմարտութիւնը ունե-
նալու համար ժողովուրդին ունեցած իրաւունքը,
և անոր աղբիւրին այսինքն Աստուածաշունչին ըն-
թերցմանը ազատութիւնը : Ալ ո՞րկէ ծագեցաւ
այն սկզբունքը, եթէ ոչ նոյն իսկ Աստուածաշունչէն,
այն՝ ուտերի դտած ու կարդացած Աստուածաշուն-
չէն : Անհաւատը բուն իր այն անարգած Վիլքէն

է որ աղատութիւն կը գտնէ անիկա անարգելու .
 վասն զի Մատուածաշունչը ազդեցութիւն ունե-
 ցած տեղերէն զատ ուր կը տեսնես կարծեաց ա-
 զատութիւն : Քորձով կը տեսնենք որ Քրիստո-
 նէութիւնը անանկ գերազոյն աստիճանի մը մէջ
 կը գտնէ զՄատուած և ճշմարտութիւնը մարդկային
 մտքին մէջ , որ խարդախ մարդիկ չեն կրնար ա-
 նոնք խաբել կամ իբրև գործիք գործածել . և
 ասկէ է գլխաւորապէս իրենց ջանքերը անիկա խա-
 փանելու և ժողովուրդին ձեռքէն առնելու :

5. Քայց յիշեցինք թէ Քրիստոնէութիւնը
 իմացականութեան կը պատշաճի նոյն կերպով՝ ո-
 ռով բնութիւնը կը պատշաճի : Առկեմ ապացու-
 ցանել ասիկա : Այս անորոյ ինչ կերպով է որ բը-
 նութիւնը կը մշակէ միտքը : Յայտնապէս միայն
 խորհուրդ ունենալովը : Միտքը չկրնար անկեն-
 դան նիւթին հետ հաղորդակցիլ , այլ միայն մըտ-
 քի հետ , և անոր համար բնութիւնը քննելը
 կրնայ միտքը մշակել՝ միայն անոր շեղինակին
 խորհուրդը իմանալովնիս : Արծեմ յայտնի բան
 մըն է որ ոչ մէկ բան մը թէ գիրք ըլլայ թէ մե-
 քենայ , թէ արուեստական գործ մը և թէ բնա-
 կան՝ ուսման օգտակար առարկայ կրնար ըլլալ
 եթէ խորհուրդ չպարունակէ իր մէջը . և երբոր
 այն խորհուրդին ամբողջութիւնը միտքը քաջ
 կը մտնէ , ալ մշակութիւն մը չկրնար ըլլալ այն
 առարկային ուսմանը : Այլ բնութիւնը անանկ
 կազմուած կերևի գրեթէ իր ամեն մասերուն մէջ
 (թերևս բուն իսկ միտքը կը թելու նպատակին
 համար) որ դժուար եղած է գտնել այն տիրող

խորհուրդը՝ որուն համեմատ այն մասերը կազմուած են : Արեւելն ամեն բան շիտթ ու անկանոն կերելի, բայց քանի որ խորունկը թափանցենք՝ թող ըլլայ թէ շատ դիտողութիւններով և տրամաբանութիւններով, կրտսնները որ կարգադրութեան և համաձայնութեան սկզբունք մը կրտիրէ անոնց ամենուն մէջ : Արկնային մարմիններուն շարժումներէն ու երևոյթներէն աւելի շիտթ ինչ կայ երևոյթին նայելով : Աւ տես ինչպէս կը քննէ նախնի աստեղաբաշխը այս երևոյթները, ինչպէս կըխարխափէ խաւարին մէջ, որչափ երևակայական ու այլանդակ են անոր ըրած կարծիքները : Յայտնապէս կրտսնուի որ իր ըրածը ուրիշ բան չէ, այլ դրութեան այն ճշմարիտ գաղափարին կամ խորհուրդին ետեւն խարխափել որ կըկենայ Աստուծոյ մտքին մէջ : Տուր անոր այս գաղափարը իր մանրամասն ճիւղերովը, և աստեղագիտութիւնը կատարեալ ունեցած կըլլայ. ալ բան մը չմնար իրեն սորվելու ասոր մէջ : Ահա այսպէս կազմուած են երկինք ու այսպէս կըշարժին : Ասկէ քիչ շիտթ չէր արարածոց բուսական կարգն ալ մարդկային աչքին դարերով, բայց վերջապէս իբրև մէկ լոյս մը ծագելով անոնց կարգերուն և տեսակներուն վրայ, որով հեաղհեառ մէկգմէկ յայտնեցին և լուսաւորեցին, դասակարգութեան ճշմարիտ սկզբունքը գտնուեցաւ : Այնպէս եղաւ քիմիաբանութեան և երկրաբանութեան, եթէ արդարև ճշմարիտ խորհուրդը գտնուած է ասոր մէջ :

Արտեսնուի ուրեմն որ բնութիւնը մարդկային

իմացականութեան յարմարութիւն ունի միայն
 երկու կերպով . նախ՝ Աստուծոյ խորհուրդը պա-
 րունակելովը , երկրորդ՝ անանկ կարգադրուած ըլ-
 լալովը որ այն խորհուրդը գտնելու ատեն միտքը
 կրգրգռէ և աշխատութեան կըշարժէ : Աս-
 ես իրաւունք չունիմ տակաւին անանկ բռնելու
 թէ Աստուածաշունչը կըպարունակէ Աստուծոյ
 ճշմարիտ խորհուրդը . բայց այս կըսեմ թէ անոր
 խորհուրդները բնութեան խորհուրդներէն քիչ
 վսեմ ու գրգռիչ չեն , և անոր ու բնութեան
 կազմութեանը մէջ մէկ եզական վերաբանու-
 թիւն մը կայ իմացականութեան յարմար ըլլալու
 կողմանէ : Այն երևութական անկարգութիւնը
 և նոյն ներքին ու խորին համաձայնութիւնը կայ
 բոլորին մէջ : Անհատ ճշմարտութիւններ՝ որ
 մէյմէկ դարու մէջ և մասնաւոր նպատակներով
 յայտնուած՝ ու ինքնին ընդհանուր մարդոց օգու-
 տին յարմար են , ամփոփուած կըկենան մէկը հոս
 մէկը հոն : Բայց բազդատելով կըտեսնուի որ ոս-
 կոր մը իր կից ոսկորին քովը դալուն պէս քովէ
 քով կուգան՝ մինչև որ ամբողջ կազմութիւնը
 կատարեալ մեր առջևը կըկենայ : Աստուածաշուն-
 չը կըպարունակէ Աստուածաբանութեան դրու-
 թիւն մը և կատարեալ դրութիւն մը . բայց կը-
 պարունակէ ինչպէս որ երկինքը աստեղաբաշխու-
 թեան դրութիւնը կըպարունակէ : Անոր ճշմար-
 տութիւնները տրամաբանական կարգով չեն կե-
 նար հոն : Անոնք առաջ կերևին մոլորակաց ե-
 րևութական շարժումներուն գծադրութեանը պէս ,
 որոնց ճամբաները կըթուի թէ ամեն կողմէն մէկ-

զմէկ կրկտրենն . բայց միայն ճշմարիտ կեդրոնը
գտնելու է, և ճշմարտութեան գունտերը իրենց
տեղերը կրքոնեն, և երկնից աստղերուն նման
կըսպտրտին անոր բոլորտիքը : Այլ կը համարձակիմ
ըսել թէ այս դրութեան կարգադրութիւնը գրա-
նելու համար պէտք եղած խորհրդածութեան
ջանքերը և մտաւոր ճիգերը ուրիշ ունիցէ գիտու-
թեան մէջ պէտք եղած ջանքէն աւելի օգուտ
կընէ մարդկային մտքին : Անոր խնդիրները գըր-
գռած են ոչ միայն փիլիսոփայից միտքերը, այլ
և ամեն խոհուն միտք : Աստուածաշունչը կը պա-
րունակէ բարոյականի դրութիւն մը, բայց կը պա-
րունակէ՝ ինչպէս որ երկիրը կը պարունակէ երկ-
րաբանութեան դրութիւնը, և անմտադիր ու ա-
նուս ընթերցողին աչքը կրնայ ըլլալ որ երկայն
ատեն հաստատուի անոր թերթերուն վրայ առանց
խմանալու թէ անանկ դրութիւն կայ, ճիշտ ինչ-
պէս որ մարդիկ վեց հազար տարիի մօտ պտրտե-
ցան երկրի վրայ առանց իմանալու թէ անոր մա-
կերևոյթը կանոնաւոր կաղմութիւն մ' ունի, և
ներքին կողմը այլ և այլ որոշ կարգեր մէկզմէկու-
տակ : Այլ թէ բնութեան թէ Աստուածաշունչին
մէջ կանոնաւոր դրութիւն մը կենալուն համո-
զուելու չափ պատճառ տեսնելէն վերջը, շատ ան-
գամ անանկ բաներ ալ կը տեսնենք որ կերելի թէ
մէկզմէկու հակառակ կուգան, որոնք կրնան մի-
այն յարատե մտադրութեամբ հաշտուիլ, և թե-
րևս մեր ունեցած գիտութեան ներկայ վիճակին
մէջ բնաւ չկրնար հաշտուիլ : Աւրեմն որչափ
զօրաւոր ապացոյց մը կենէ Աստուածաշունչին այս

կազմութենէն, որ անիկա մարդկային մտքի մէջ
 ծագում առած չէ: Միտքը միութիւն կրսիրէ.
 կրնայի որ ամեն բան կարգադրութեան վերածէ:
 Արեւելի մտքի տէր անձինք կատարելագործեալ
 դրութեան ձևով յառաջ կրբերեն իրենց գործ-
 քերը, բնաւ չթողելով որ մէկզմէկու անհամա-
 ձայն երեցած ճշմարտութիւններ քովէ քով կե-
 նան, և բնաւ չպահանջելով և չակնկալելով որ
 անոնք ընդունինք: Նայց Նստուածաշունչը այն-
 պէս կըթողու անանկ ճշմարտութիւնները, և կը-
 պահանջէ որ ընդունինք. նոյնպէս կրնէ և բնու-
 թիւնը: Ասանորոյ այս կըհետեցնենք թէ եթէ
 բնութիւնը յարմարացած է մարդկային մտքին,
 նոյնպէս և նոյն սկզբունքով յարմարացած է
 Նստուածաշունչը:

6. Վարձեալ Քրիստոնէութիւնը յարմարացած
 է իմացականութեան, որովհետեւ բնութեան տալ
 կարող եղածէն աւելի բարձր տեսակ գիտութիւն
 կուտայ: Արլուծէ տարբեր կարգի խնդիրներ, և
 անանկ խնդիրներ՝ որ հարկաւոր է մարդուն իր-
 բե իմացական էակ որ լուծուին: Արկու կարգ
 խնդիրներ կան յայտնապէս՝ որ կրնանք հարցնել
 Նստուծոյ գործքերուն վրայ, և ասոնց մէկ կար-
 գին վրայ փիլիսոփայութիւնը խորին լուութիւն կը-
 պահէ: Մէկը կըվերաբերի ամբողջ կազմութեան
 այլ և այլ մասերուն մէկզմէկու և այն ամբողջին
 ունեցած յարաբերութեանը. միւսը կըվերաբերի
 նոյն իսկ ամբողջին վերջին վախճանին: Աւսման
 ներկայ վիճակին մէջ առաջին կարգի խնդիրնե-
 րուն բաւական յագեցուցիչ պատասխան կըտրուի

ընդհանրապէս : Փիլիսոսիան կրնայ պատմել մարդկային մարմնոյն ոսկորները՝ մկանունքները՝ երակները՝ ջիղերը , և գիտէ անոնց համրանքը և անոնց ամենուն գործողութիւնները : Արեւի է նաև կրնայ բացատրել թէ ինչպէս ստամոքսը կրմարսէ , և երակները կրնետեն և մսանները կըղատեն , բայց այն մեծ նպատակը՝ որուն համար մարդը ինք ըստեղծուեցաւ , բան մը չկրնար գիտնալ : Իսկ Քրիստոնէութիւնը կուտայ այս գիտութիւնը : Անիկա նպատակ մը կուտայ Աստուծոյ որ կը վայելէ իրեն մեծութեանը , նպատակ մը որ կը յագեցնէ մարդուն միտքը և սիրտը , և այս գիտութիւնը հարկաւ ուրիշ կերպ գաղափար պիտի տայ մեզի բոլոր պատմութեան և մարդկային կենաց ամբողջ նկարագրութեանը վրայ : Անիկա կուտայ մեզի մէկ կայնելու նոր տեղ մը , աւրիկէ ամեն բան տարբեր յարաբերութիւնով և տարբեր համեմատութեամբ կրտեսները : Մենք առաջ միայն գետը կրտեսնէինք որուն վրայ կրնաւարկէինք , իսկ հիմա կրտեսնենք ովկիանոսը : Բոլորովին տարբեր պիտի ըլլայ մարդուն Աստուծոյ հետ ունեցած յարաբերութիւնները՝ թէ իբրև իմացական և թէ իբրև բարոյականէակ , երբոր գիտնայանոր խորհուրդները և կարող ըլլայ հասկացողութեամբ գործակից ըլլալ անոր : Աստուած՝ հիմա մեզի բարեկամ կըլլայ մեր Փրկչին ըսածին պէս : Անշուշտ ոչ մէկը կրնայ թեթև բան մը սեպել մտքին վրայ ասոր ունեցած ազդեցութիւնը :

Հիմա յիշուած ապացոյցներէն կրմակարեւորենք որ Քրիստոնէութիւնը յարմարացած է իմացա-

կանուժեան, և այս ապացոյցները փորձն ալ
 կը հաստատէ: Աչ մէկ գիրք մը և ոչ նոյն ինքն
 բնութիւնը երբէք Մատուածաշունչին չափ մտա-
 ւոր գործունէութիւն գրգռած է: Ճշմարտու-
 թեան պատերազմական դաշտին վրայ կուր միշտ
 ասոր վրայ սաստկացած է: Մատուածաշունչէն ի
 զատ ո՛ր գիրք երբէք այնչափ ուրիշ գրոց գրո-
 ուելուն պատճառ եղած է: Այժմ Քրիստոնէա-
 կան ազգաց գրատուններէն առնենք բոլոր այն
 գիրքերը՝ որոնք չեմ ըսեր անուղղակի՝ այլ ուղ-
 զակի անկէ ծագած են, այսինքն անոնք որ
 գրուած են կամ անոր դէմ կամ ի պաշտպա-
 նութիւն անոր, կամ թէ անիկա բացատրելու հա-
 մար, որչափ պիտի նուազէին անոնք: Այն ին-
 քն անհաւատութեան գիրքերուն բազմութիւնը
 վկայութիւն մըն է այն զօրութեանը՝ որով Մատ-
 ուածաշունչը իմացականութիւնը կը գրգռէ: Ին-
 չու համար չենք տեսներ որ նոյն աստիճան մը-
 փառք գործունէութիւն երևի և բաղխէ ու բոր-
 բոքի հեթանոսական պատգամի մը բոլորտիքը:
 Ալ ինչ արդիւնք որ կրնայինք ակնկալել այս
 գործունէութենէն՝ նոյնը յառաջ բերած է: Բնդ-
 հանրապէս Քրիստոնէական ազգաց ինչպէս բա-
 րոյական՝ անանկ ալ իմացական դերազանցութիւ-
 նը, և ան ալ ամեն մէկ ազգին բռնած Քրիստոնէ-
 ութեան մաքրութեան համեմատութիւնովը, այն-
 չափ յայտնի և արևին լոյսին պէս պայծառ կը-
 կենայ որ չկրնար խնդիրի տակ ձգուիլ կամ չտես-
 նուիլ: Աւր որ մտած է Մատուծոյ խօսքը իրականա-
 պէս՝ հոն լուսաւորութիւն տուած է, լուսաւորու-

Թիւն անհատ անձանց՝ լուսաւորութիւն հասարակութեան : Քրիստոնէութեան զարգացմանը նրապատեղած է . և միայն՝ անով մարդիկ հասած են այն կէտին՝ որ կարող ըլլան Փիղիքական գիտութեան գործիքները կազմել , և անոր հետադարձութիւնները հիմնական հասած աստիճանին տանիլ : Մէկ աղէկ կազմուած աստեղաբաշխական գիտարան մը կը կազմուի այնչափ մեծածախ գործիքներէ և անանկ ճարտարութենէ և անանկ կարգ մարդիկներէ՝ որ միայն Քրիստոնէական քաղաքականութիւնը կըրնայ յառաջ բերել : Ասոր համեմատ՝ ինչ ալ որ ըսուի դրականութեան վրայ , կը տեսնենք որ Փիղիքական գիտութիւնը Քրիստոնէական երկիրներէ ի զատ ամեն տեղ կամ դադրած կը մնայ , կամ ժամանակէ մը վերջը կսկսի ետ երթալ , և չկայ պատճառ սեպելու թէ այն անսահման յառաջագիմութեան շաւիղը՝ որ հիմա բացուած է այն գիտութեան առջին , կրնայ առանց Քրիստոնէութեան բացուիլ : Քրիստոնէութիւնը մերժող անհատ անձինք՝ որոնք տակաւին անոր ազդեցութեան ընդհանուր սահմանին մէջ կապրին , կրնայ ըլլալ որ երևելի ըլլան գիտութեան մէջ , և եղած ալ են . բայց ասիկայ բուն իրենց մերժած կրօնքին հաստատած սկզբունքներովը և պայմաններովն եղած է : Քրիստոնէութիւնը նոր մտաւոր կարողութիւններ չտար , և ոչ սեղալի զօրութիւն մը իմացականութեան , այլ անանկ ընդհանուր վիճակի մը մէջ կը դնէ մարդը որ յարմար է անոր մշակութեանը , և զարմանալի

չէ եթէ բաներուն այս վիճակին մէջ Քրիստոնէութեան բարոյական սանձերը մերժելով՝ միայն իմացականութեան կողմանէ երևելի ըլլալ փնտռող մարդիկ բարձրաստիճանի հասնին իրենց մտաւոր ջանքերովը :

Բայց եթէ Քրիստոնէութիւնը այս յարմարութիւնը ունի իմացականութեան, պէտք չէ որ ճշմարիտ Քրիստոնեաները ուրիշներէն գերազանց ըլլային գրականութեան և գիտութեան կողմանէ : Այս չհետևիր : Չափով մը՝ սրտին մէջ եղած Քրիստոնէութիւնը ստուգիւ մտքին յստակութիւն և ոյժ կուտայ, և շատ անգամ կը ըլլայ որ իմացական կարողութիւնները զարմանալի կերպով կը գրգռուին Քրիստոսի կրօնքին զարթուցած բարոյական բնութեան և բարոյական զգացումներուն ներգործութիւնովը, բայց երբոր կը մտածենք որ Քրիստոնէութեան յառաջ բերած փոփոխութիւնը բարոյական փոփոխութիւն է, անոր ներկայացուցած առարկաները բարոյական առարկաներ են, ասանկ կը ցուցնէ աշխարհը թէ հարկ չէ վերացեալ գիտութիւններու մէջ այնչափ շատ յառաջ երթալ, կամ գրականութեան նրբութիւններովը զուարճանալ, որչափ որ բարոյական ապականութենէն աղատիլ և Աստուծոյ դասնալ, կարծեմ զարմանալու չէ որ շատերը բոլորովին տարբեր տեսակ աշխատութեան մէջ զբաղեցուցած է, որոնք գիտութեան ամենաբարձր առաջնահանգի կրնային հասնիլ եթէ անանկ չըլլար :

Աւհիմա ճիշդ այս կէտին մէջ կարծեմ կրնանք տեսնել թէ ինչու համար ոմանց մտքին

մէջ անանկ դադարաւ մը ծագած է, թէ շատ բարեպաշտութիւնը մինչև անգամ արդելք է գիտութեանց և արուեստից բարձր աստիճանի մը շակութեան և ճաշակի կրթութեան : Եթէ այս ասանկ ալ ըլլար, որովհետև անանկ չէ, Քրիստոնէութեան դէմ բան մը չկար, և ոչ բնաւ պիտի անվաւերացնէր իմ առաջարկութիւնս թէ Քրիստոնէութիւնը իմացականութեան նպաստաւոր է : Կան գիտութենէն կամ գրականութենէն կամ կիրթ ճաշակէն աւելի կարևոր բաներ : Եւ ոչ ասոնց մէջ կրկայանայ մարդուն ճշմարիտ և ամենաբարձր վսեմութիւնը : Կարելի է Պօղոս Նաքեայ՝ եթէ Քրիստոնեայ չըլլար, կրնար իբրև փիլիսոփայ երևիլ : Փիլիսոփայէ վար եղած չեղաւ Քրիստոնեայ ըլլալովը . բայց իր մտքին ճիգերը տրուած չէին ոչ փիլիսոփայութեան և ոչ գրականութեան, այլ շատ աւելի բարձրագոյն բանի մը : Իր անձին վրայ մէկ ազնուական մոռացութեամբ մը ջանաց դարձնել մարդիկ «խաւարէն լոյսի և Սատանայի իշխանութենէն Նստուծոյ» : Եւ այսպէս հիմա ալ շատ նրբամիտ անձինք արգիլուած են ինքզինքնին գիտութեան տալէն, աշխարհիս հոգևոր կարօտութիւններէն ծագած դորձնական և անձնուրացութեան պարտաւորութիւններուն պատճառովը : Իայց միթէ ասիկա մտաւոր յառաջադիմութիւնը արգիլո՞ղ բան մըն է : Նմենեին ո՛չ, այլ ընդհակառակը ասոր մէջ գիտութեան խնդիրներէն աւելի բարձրագոյն խնդիրներու հետ կըլլան անոնք՝ թէև անանկ չըլլայ որ մարդիկ զմայլին ի-

րենց, և իրենք անուն ու համբաւ ստանան մարդոց մէջ, և ասանկով է որ շատ անգամ խոնարհ Քրիստոնեայի մը վրայ անանկ բարձր աստիճանի իմացականութեան նշաններ կրտսնենք, որ գրականութեան հետեւողներէն շատերուն վրայ չգտնուիր: Արնայ այն բանը որ մտայ յառաջադիմութիւնը արդիւնէ կը ցուցնէ մտքին իրական բաներ, որ աւելի վսեմ են քան թէ գիտութեան ցուցուցածները, և գիտութեան ու գրականութեան բնութեանը՝ ընթացքին և վախճանին վրայօք քաջ ճանաչում մը պարունակելով իր մէջը, տակաւին թէպէտ երկրորդական՝ բայց իրենց օրինաւոր աստիճանին մէջ կը բռնէ զանոնք: Այլ բնաւ. մինչև անգամ թէև անանկ ընդհանուր զգացում մը յառաջ բերէ որ մէկը յայտնեց ըսելով, թէ «ես հիմա իմ անմիջական պարտաւորութիւններու հոգ պիտի տանիմ, և աստեղաբաշխութեան ուսմունքը երկինք երթալու ատենս ճամբուն վրայ պիտի սորվիմ»: Այլ. մարդիկ ինչ որ կուզեն թող ընեն դպրատան դասագիրքեր տարածելով՝ և գիտութեան աժան տպագրութիւններ հրատարակելով, բայց զօրաւոր ու անկողմնական միտք մը ունենալու համար, ես յաւէտ կուզեմ որ իմացականութիւնը միայն Աստուածաշունչով կըրթուի, այսինքն անոր յարուցած զօրաւոր խրնդիրներուն և բարձր խորհրդածութիւններուն վրայ մտածելով, անոր պատմութիւններուն և անհամեմատ ճարտախօսութեանը ու բանաստեղծութիւններուն մտիկ ընելով, քանթէ բոլոր հասարակ գիտութիւններով և գրականութիւնով և

գիտութեան վրայ հրատարակուած ամեն գրութիւններով . և եթէ այս ջանքերը դորձնականապէս արտաքսեն Մատուածաշունչը, և յաջողին արգելք ըլլալ որ պատանիները ընդհանրապէս ընտանի և տեղեակ չըլլան Մատուածաշունչին, անոնք ժողովուրդին բարիք ըլլալու փոխանակ միայն չարիք պիտի յառաջ բերեն :

Մյս նիւթը չժողուցած, թերևս պէտք է նըկատել Մատուածաշունչին հրահանգութեան ուժը . ասիկա թէպէտ պղտիկ բան մըն է, բայց շատ օգտակար է: Մյս կողմէն ալ դարձեալ Մատուածաշունչը նման է բնութեան . և արդարեւ շատ զարմանալի գիւրք մըն է: Ինչ անլուծանելի առաջարկութիւն մը պիտի ըլլար յօրինել հիմա գիւրք մը՝ որ յարմար ըլլայ տղային ու չամահասին, ուսումնականին և ուսմիկին: Մարդ չէր կրնար ասանկ բան մը ընել: Բայց ասա ասանկ գիւրք մըն է Մատուածաշունչը, անանկ պարզութիւն՝ վսեմութիւն՝ գեղեցկութիւն և զանազանութիւն ունի, որ յարմար կուգայ ամենուն . և ինչպէս տղային աչքը կրնայ բան մը տեսնել բնութեան մէջ որ իրեն հաճելի դայ և բան սորվի, քանի որ փիլիսոփան աւելի կրնայ տեսնել թէպէտ ոչ թէ բոլորը, անանկ ալ ամենէն պղտիկ և խիստ տգէտ անձը որ կրնայ Մատուածաշունչ կարդալ, անոր թերթերուն վրայ կը գտնէ պատմութիւններ՝ առակներ և համառօտ խօսքեր ճիշդ իր ըմբռնմանը յարմար, քանի որ ամենէն խորամիտ Մատուածաբանը կամ ամենէն մեծ փիլիսոփան չկրնար անանկ զգացում

Ժ՛ ունենալ թէ բոլոր անոր խորութեանը թափանցած է : Այլ թերևս ասիկա է մէկ մեծ պատճառը Մատուծոյ յայտնութեանը այնչափ տարբեր անձանց ձևօք և տարբեր ժամանակներ՝ ու այնչափ տարբեր խորհուրդներով ու զգացումներով գրուելուն : Այս ան զի անիկայ բոլոր մարդկային ազգին կրթութեանը համար մէկ գիրք մը պիտի ըլլայ . և չէր կրնար ըլլալ եթէ մէկ ուժով գրուած ըլլար , կամ միայն մէկ մարդու մը մտքին նշաններուն տպաւորութիւններն ունենար վրան : Մ. յս բանին համար պէտք էր պարունակէր պատմութիւն՝ բանաստեղծութիւն՝ առածներ՝ նամակներ և խորունկ տրամաբանութիւն , որոնք քանի որ ամենը կը համաձայնին մէկզմէկու վարդապետութիւնով և հոգիով՝ տակաւին մէկզմէկէ զանազանին երկրի կանաչ լեռներուն ու ձորերուն պէս . և ներշնչութեան զուտ լոյսը՝ ցոլացնեն անանկ գոյներով որ ամեն աչքի զարնէ և ամենուն դիտողութիւնը իրեն գրաւէ : Օտարմանալի գիրք : Այլ թէ անոր մասերէն ոմանք Ռուբի քիչ ախորժելի երևի , յիշելու ենք որ բնութիւնն ալ ունի անանկ զանազանութիւններ իր մասերուն մէջ , և անիկա ամենուն համար շինուած է . և այս բանին նայելով քանի որ սորվինք անիկա՝ աւելի պատրաստ պիտի ըլլանք Մ. աքեալին հետ միաբանելու , ըսելով թէ «Բոլոր գիրքը Մատուծոյ շունչն է» :

Այս անորոյ կըսենք թէ Վրիստոնէութիւնը իմացականութեան յարմարացած է՝ անոր հոգին ճշմարիտ փիլիսոփայութեան հոգիին հետ նոյն ըլլալ

լուն համար, հեշտասիրութեան և անարդ մութեան թմրութիւնը վերցնելուն համար, ճշմարտութիւնը այն աստիճանին մէջ բռնելուն համար, աղատ բնութիւն պահանջելուն համար, անոր զօրաւոր ճշմարտութիւնները և դրութիւնները բնութեան ճշմարտութիւններուն և դրութիւններուն կերպովը մտքին ներկայանալուն համար, բնութեան լուծել կրցածներէն աւելի բարձր առաջարկութիւններ լուծելուն համար, և անանկ կերպով կազմուած ըլլալուն համար որ յարմարի ամեն մտքի :

Ի այց Քրիստոնէութիւնը որչափ որ յարմարացած է իմացականութեան իբրև լուսոյ կրօնք, նոյնչափ ալ յարմարացած է զգածմունքերուն իբրև սիրոյ կրօնք : Օգածումները մեր գոյութեան այն մասն է, որմէ ամենէն աւելի հաճոյք վայելելու և ցաւ կրելու ընդունակ ենք : Անոնք են ամեն անշահախնդիր գործոց և ամեն զուարթ ու ուրախ նազանդութեան աղբիւրը : Արևուն լոյսը իր թանձրը մարմինին քովը, և ծառին տերեւներն ու ծաղիկներն իր բունին քովը ինչպէս որ է՝ մարդուն զգածմունքներն իր ուրիշ կարողութիւններուն քովը անանկ է . և այն դրութիւնը՝ որուն մէջ անոնց նկատում չըլլար և իրենց պատշաճ աստիճանին մէջ չեն բռնուիր, Աստուծմէ չկրնար ըլլալ :

Օգածմունքները ինչպէս ամենս գիտենք կամքին անմիջական իշխանութեանը տակը չեն, այսինքն չենք կրնար մեր ընտրած առարկան սիրել լոկ անիկա սիրել կամք ընելով : Արնանք մէկ անարժան անձի մը հետ ինչպէս բռնաւորի մը հետ անանկ վարուիլ,

որպէս թէ կըսիրենք, բայց մինչև որ անոր վրայ իրօք գերազանց և սիրուն յատկութիւններ չտեսնենք, անկարելի է որ սիրենք անիկա: Նախան սէրը ի բնէ օրէնքներ ունի. իսկ մէկդի ձգելով անոնք, առաջին պայմանը որով հնար է մեզի սիրել մէկ բարոյական էակ մը իբրև բարոյական էակ՝ անոր բնութեանը վրայ մէկ գերազանցութիւն մը տեսնելն է: Այլ թէ մեր բնութիւնը ուղիղ վիճակի մէջ ըլլայ՝ պիտի սիրենք անիկա լոկ անանկ գերազանցութիւն մը տեսնելով վրան, թէ մեզի մասնաւոր վերաբերութիւն մ' ունենայ անիկա՝ թէ ոչ: Բայց մեր սիրոյն բոլոր դօրութիւնը միայն անատենը կը յայտնուի՝ երբոր անհատաբար մեզի բարերարութիւն կըլլայ: Մեր ամենազօրաւոր սէրը քաշողը յայտնի է որ պիտի ըլլայ կատարեալ բարոյական գերազանցութիւն ունեցող էակ մը, որ մեր աղէկութեանը համար ջանք կրնէ և բան կը զոհէ: Աւրեմն ունիցէ դրութիւն սիրոյ զգածումներուն յարմար ըլլալու համար՝ նախ այդ զգածումներուն էութիւնը ճանչնալու և անոնք զարգացնելու է. երկրորդ այդ զգածումները զարգացնելու պատշաճ առարկաներ ցուցնելու է:

Աւրեմն Վրիստոնէութիւնը յարմար է սիրոյ զգացումներուն, նախ՝ որովհետև անոնք կը պաշտպանէ և այն զգացումը ունենալու քաջալերութիւն կուտայ ներկայ կենաց յարաբերութեանց և փորձութիւններուն մէջ: Այլ հոս թերևս պէտք է յիշել թէ ընտանեաց կազմութիւնը՝ որ Վրիստոնէութիւնը և միայն այն կը հրամայէ և անարատ կը պահէ, հիմնականապէս

հարկաւոր է բնական և ընկերական սիրոյն մաքուր և զօրաւոր վիճակ մ' ունենալուն :

Անկարելի է որ ունիցէ ուրիշ դրութեան կամ վիճակի մէջ կենայ այն նոյն ամուսնական՝ ծնողական՝ որդիական և եղբայրական սէրը, որ կը լայ երբոր ընտանեկան կազմութիւնը Քրիստոնէութեան պատուիրածին պէս ճշդիւ կը պահուի : Ըստ կրտսենեք Քրիստոսի հեռատես իմաստութիւնը՝ որով մէկ պատ մը քաշեց, որուն նիւթը հիմա կրտսենեք որ բաներուն բնութեանը մէջ կայ, և շրջապատած պարտէզի պէս է սիրոյ զգացումներուն, ուր անոնց ճիւղերը և ծաղիկները կը տարածուին և կը բացուին ազատ ամեն յարձակմունքէ : Այլ ըստ այնմ ո՞վ կրնայ հաշիւի առնել այն խաղաղութեան՝ սրբութեան և սուրբ սիրոյ երանութիւնը որ այս կազմութիւնը վայելել կուտայ, և արդեամբք հիմա ամեն Քրիստոնէական երկիր հազարաւոր ընտանիքներ նոյնը կը վայելեն իրենց խաղաղ ու երջանիկ բնակարաններուն մէջ : Բայց ասկէ ի դատ Քրիստոնէութիւնը ուղղակի կը քաջալերէ ազգականութեան և բարեկամութեան բնական սէրը ունենալը . վիշտը բնաւ իբրև տկարութիւն չդատապարտեր . և շատ ազդու միսիթարութիւն կուտայ երբոր մեր մերձաւորները մահուամբ կը բաժնուին : Այս կողմէն ոչ միայն հակառակ է անձնասէր Ապիկուրեանութեան և զգայական հեշտասիրութեան, որով հեթանոսները «անգութներ» եղան, այլ մանաւանդ Ստոյիկեան հպարտ ոգիին, ոգի մը որ բնաւ չոչնչացաւ այն աղանդին հետ : Ըս-

տոյիկեանութիւնը անձկանօք կրցանկար մարդկային բնութիւնը ազնուացնել, բայց իրօք կտոր կտոր կը պառակտէ անիկա : Ասիկա ճիգ մըն էր կործանել այն բանը՝ որ չէին գիտեր թէ ինչպէս կառավարելու է : Այս ընելու համար պարտաւորուած էին բուն իրենց բնութիւնը ուրանալ և անզգայութիւն ի գործ դնել, երբոր անկարելի է որ մարդ չզգայ : Արդարեւ դժուար գործ մըն էր՝ որուն այս գրութիւնը ձեռք զարկած էր, այսինքն զգալ մահուան ցուրտ ձեռքը՝ որ կը դնէ մեր սրտին մէջ խորունկ արմատացած եռանդուն սիրոյ առարկաներուն վրայ, և կը թառամեցնէ անոնք և մենէ կը քաշէ կրտանի, բայց և այնպէս արտասուք չթափել : Իրենց խորհուրդները ասոր մղեցին զիրենք մահուան ժամանակ միսիթարութիւն գտնել կարող չըլլալուն համար : Անոնք ոչ գաւազանը ճանչցան, և ոչ անիկա որ սահմանեց այն գաւազանը, այլ յուսահատաբար իբրև հակառակորդ կեցան և կրցածնուն չափ ինքզինքնին խտացուցին անոր նետերուն դէմ՝ որ իրենք անողոքելի հարկաւորութիւն կը կոչէին : Արդարեւ այս գրութիւնը բնաւ չէր ծառայեր բնական սիրոյ աճմանը, և շատերը որ կը յարէին անոր՝ կը զսպէին իրենց սէրը որ մէկու մը հաստատուի, և ունիցէ մտերիմ ընտանութեան չէին մտնել : Բայց Քրիստոնէութիւնը ո՛չ կը կործանէ այն զգածումները՝ որով մեր կեանքը իբրև ծաղիկ իր գեղեցկութիւնը և անուշահոտ բուրումը կտանայ, ո՛չ ալ կը տածէ անոնք որ հարկաւ պիտի սիրար վիրաւորեն առանց վէրքը բժշկելու դարման

մը տալու : Անիկա կարեկից է մեր տկարութեանը
 և բնաւ չարհամարհեր տրամութեան բնական ար-
 տայայտութիւնները : «Յիսուս լացաւ» : Անտա-
 ղակոյս բուն մեր մահէն զատ չկայ տեղ մը՝ ուր
 այնչափ սփոփանքի կրկարօտինք, որչափ մեր մէկ
 բարեկամին կամ ամուսինին կամ զաւկին մա-
 հուան անկողինին քովը, և այն կրօնքը կամ դը-
 րութիւնը, Սոցիալեանութիւնը կամ Ակեպտի-
 կեանութիւնը՝ որ հոն չօգներ մեզի, ոչինչ է :
 Իայց ճիշդ հոս է որ Քրիստոնէութիւնը մէջ կը
 մտնէ իր զօրաւոր նեցուկներովը : Ասիկայ կընէ
 1. Իր հայթայթած կարեկցութիւնովը, վասն զի
 ո՛չ միայն կընդունի թէ տառապեալները կու-
 լան, այլ և կըպատուիրէ ուրիշներուն որ անոնց
 հետ լան : 2. Մեզի իմացնելով թէ մեր նե-
 րութիւնները մեր վրայ կուգան ո՛չ թէ մէկ կոյր
 բաղդէ մը, այլ մէկ իմաստուն և բարերար ծը-
 նողքէ մը : 3. Մեզի երջանիկ յոյսեր սրտերնուս
 մէջ տածել տալովը : Մենք ո՛չ թէ յոյս չու-
 նեցողներուն պէս կըտրտմինք. «քանզի թէ որ
 կըհաւատանք թէ Յիսուսը մեռաւ և յարութիւն
 առաւ, անանկ ալ Աստուած ննջեցեալները Յի-
 սուսով պիտի բերէ անոր հետ» : 4. Աւ մեզ
 քաջալերելով ու կարողացնելով՝ որ մեր սէրը աւելի
 բարձր և աւելի աղէկ առարկայի մը վրայ հաս-
 տատենք : Քանի որ բան մ' ունինք սիրելու՝
 սիրտը լքեալ չըլար. Քրիստոնէութիւնը անանկ
 առարկայ մը կըդնէ մեր առջևը, որ բնաւ մենէ
 չբաժնուիր : Արթողու որ մեր սէրը ճիւղ արձակէ
 հոս երկրի վրայ կարելի եղածին չափ սաստկու-

Թեամբ, բայց կրմշակէ այն ճիւղերը, և կրմշակէ մինչև որ յաւիտենական աթոռին պատուանդանին բոլորտիքը կապէ անոնք: Անատենը եթէ այս վարի ճիւղերը կտրին, անոնք գետինը չեն իյնար ու ոտքի տակ կոխուիր ու չորնար և փրատիր, անանկ որ սրտերնիս մեր ներսիդին նուաղին, այլ աւելի սերտ կը հաստատուին իրենց ամենաբաւական և յաւիտեան անկործանելի նեշուկին վրայ: Ախրին է իմանալ որ ամեն այս պարագաները, տառապանաց ձորին խաւարը՝ անշուշտ երբեմն եղածէն աւելի պիտի քիչցեն: Շշմարիտ Քրիստոնէին՝ բոլոր այն ճամբան լուսաւորէ, և անոր վախճանը լուսաւոր է: Այսպէս Քրիստոնէութեան նպատակը Ստոյիկեանութեան բարձրերը ելնել չէ: Անիկա մէկ կողմէն ո՛չ արմատաքի կրկնէ և ո՛չ կըզսպէ զգածումները, և ո՛չ ալ միւս կողմէն կըթողու մեր զգածումները որ յուսահատ տրամութեամբ կատաղի և անխորհուրդ գրգռութեան հասնին. այլ կը քաջալերէ մեզ որ անոնք զարգացնենք և միանգամայն տառապանքի ատեն անոնց պէտք եղած սիւսիանքը կուտայ:

Աւ ասկէ կը հետեւի երկրորդ՝ որ Քրիստոնէութիւնը յարմարացած է զգածումներուն, որովհետեւ անանկ առարկայ մը կը ներկայացնէ որ զգածումներնիս անոր վրան հաստատենք, որ անհուն՝ կատարեալ և անսիւսիտ է: Հոս կը տեսնենք այս կրօնքին գերաստիճան պատուականութիւնը զՎստուած իբրև մեր սիրոյ առարկան ներկայացնելովը, և անոր մէջ չեմ գիտեր աւելի սքանչելի բան մը՝ քան թէ Աստուծոյ վրայ անոր ցուցուցած միտ-

Թիւնը այն անհուն բնական ստորոգելեաց՝ որ մտքին մէջ ամենաբարձր ահի և ակնածութեան շարժումներ կը յարուցանէ, և այն սրբազան բարոյական ստորոգելեաց՝ որ հրեշտակներուն իրենց երեսները ծածկել կուտայ, այն գթութեան՝ խոնարհութեան և սիրոյն հետ, որ Քրիստոնէութիւնը կը ցուցնէ թէ այն կը յայտնէ առօրեայ յանցաւոր արարածներուն: Այս տեղ դժուար կէտ մը կայ: Առաջուց ես անկարելի պիտի կարծէի որ անհուն և սուրբ Աստուածը անանկ յայտնէ ինքզինքը մարդուն պէս ջնջին և յանցաւոր արարածի մը, որ տայ՝ իրեն վստահանալ և վերնայիլ ու ըսել, «ձայր մեր»: Այլ տակայն Քրիստոնէութիւնը այսպէս կը յայտնէ զԱստուած: Անիկա յայտնութիւն մըն է ոչ թէ հրեշտակներուն յարմարացած, այլ ճիշդ մարդուն պէս յանցաւոր էակի մը, որ մեղքին բնականապէս յառաջ բերած անվստահութիւնը ունենալով, տակաւին կուզէ ինքզինքը վստահայնել թէ այնչափ սուրբ և այնչափ ահաւոր և իրմէն անհունապէս վեր բարձրացած Աստուած մը՝ այսու ամենայնիւ կրնայ սիրել զինքը և իր սիրոյն առարկայ ըլլալ: Անշուշտ ասիկա Աստուծոյ անհուն վեհափառութեանը և սրբութեանը նուազութիւն մը չտար: Քրիստոնէութիւնը Աստուծոյ աթոռը կը զարդարէ ամեն բարձր և սրբազան ստորոգելիքներով, բայց և այնպէս ոչ մէկ բան մը կրնայ աւելի գերազանց ըլլալ այն գթութեան և ողորմութեան արտայայտութիւններէն, որով կուզէ իր արարածոց վստահութիւնը գրաւել: Այս

գրութիւնը անանկ կը ցուցնէ զՄատուած՝ թէ մէկ
 անպատմելի սէր մ' ունի մարդոց վրայ, և իր ընդ-
 հանրական նախախնամութեամբը ամենուն վրայ
 կը հսկէ, Հայր է անհայրին, և Մատուածն ու Ղա-
 տաւորն է սյրիին. «մարդոց ոյժ կուտայ տկա-
 րութեան անկողինին մէջը. անոնց ամեն անկողինը
 կը դարձնէ անոնց հիւանդութեան ատենը». կը-
 լսէ բանտարդեալին հառաչանքը, և խեղճին ու կա-
 րօտեալին աղաղակը, երբոր անոնք ջուր կը փն-
 տրուեն՝ բայց չկայ, և անոնց լեզուն ծարաւէն
 չորցեր է. կը լսէ ճշմարիտ աղօթքի ամենէն տկար
 ձայնը, և թէ բոլոր մեր հոգերը կրնանք անոր
 ձգել, որովհետեւ այն կը հոգայ մեզի համար. նաև
 կը մխիթարէ անոնք որ նեղեալ են, և բոլոր ար-
 տասուքը ամեն երեսէ պիտի սրբէ. և աւելի պատ-
 րաստ է մարդոց Սուրբ Հոգին տալու, (որ ամեն
 պարզեաներէն մեծ է) քան թէ երկրաւոր ծնող ք-
 ներ բարի բաներ տալու իրենց զաւակացը, և
 այնքան սիրեց աշխարհը՝ որ իր միածին որդին
 տուաւ, որ ամեն ով որ հաւատայ անոր, չկոր-
 սուի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Այժմէ
 ասանկ արտայայտութիւնները և ասանկ խոս-
 տումները չեն վստահացներ մարդիկ Մատուծոյ
 սիրոյն վրայ, և անոնց սիրտը դէպի անոր չեն քա-
 շեր, ալ ուրիշ ոչ մէկ բան մը կրնայ ընել:
 Պատշաճ է Ղաքեալին խօսքը թէ, «Այն որ իր
 Արդւոյն չխնայեց, հապա մեր ամենուն համար
 մատնեց զանիկա. ալ ի՞նչպէս անոր հետը ամեն
 բաները մեզի չպարզուեր»: Պատշաճ էր իրեն
 հրաւիրել մարդիկ որ «համարձակութիւնով մօ-

տենան շնորհաց աթոռին առջևը, որ ողորմութիւն ընդունին ու շնորհք գաննեն պէտք եղած ատենը օգնելու" : Ո՛չ մէկ բան մը կրնայ աւելի անոյշ և սրտաշարժ ըլլալ, աւելի մարդոց վստահութիւնը գրաւելու ծառայող և աւելի անպատմելի ազդու և ներգործիչ ըլլալ, քան թէ այն եղանակը՝ որով Աստուած իր Արդւոյն աւետարանին մէջ մեզի յայտնուած է :

Ի այց չենք կրնար չիմանալ որ Աստուած այսպէս ինքզինքը մարդուն իբրև սիրոյ առարկայ ներկայացնելովը, բուն բաներուն բնութեանը նայելով՝ անոր սրբութիւնը և երջանկութիւնը հայթայթած է : Անկարելի է որ ճշմարտութեամբ սիրենք Անիկա, առանց անոր բնութեանը յարմարելու և նմանելու : Այն բոպէն որ սիրոյ առջին շարժումը կըզգացուի, այն գործողութիւնը կսկսի՝ որուն վրայ Առաքեալը կըխօսի ըսելով, թէ Սենք ամենքս բաց երեսով Տէրոջը փառքը որպէս թէ հայելիի մէջ տեսնելով, նոյն պատկերին կընորոգուինք, փառքէ ի փառք, որպէս թէ Տէրոջը «ոգիէն» : Այլ երբոր անգամ մը այս գործողութիւնը սկսուի, պիտի յառաջ երթայ մինչև իր կատարմանը հասնի այն մեծ սկզբունքին ներգործութեամբը՝ թէ ինչ որ հաճութեամբ կըմտածենք բարոյականապէս անոր նման կըլլանք : Այս կերպին յառաջ բերած երջանկութիւնն ալ սրբութենէն վար չէ, եթէ կրնանք մէկըմէկէ անջատ մտածել անոնք, որովհետև զգացումներէն յառաջ եկած երջանկութիւնը անոնց գործածութենէն ծագած ըլլալու է, և որովհետև ամենէն

բարձր երջանկութիւնը որ կրնանք ըմբռնել՝ կը-
 ծագի Աստուծոյ պէս էակի մը վրայ եղած կա-
 տարեալ սէրէն : Միայն այս կերպով է որ Աստ-
 ուած հոգիին բաժինը կրնայ ըլլալ . և ասանկով
 կրնայ անոր անհուն և միակ յագեցուցիչ բա-
 ժինը ըլլալ . թող զգածունները հաստատուն մէկ
 կատարեալ էակի մը վրայ, և երջանկութիւնը՝ որ-
 չափ որ կրնայ ելնել անոնցմէ, կատարեալ պիտի
 ըլլայ . բայց եթէ այն զգածուններուն առարկան
 ոչ միայն կատարեալ ըլլայ, այլ անհուն և անփո-
 փոխելի, անասներ կրնայ յառաջ բերել ոչ միայն
 կատարեալ, այլ յաւիտեան մնայուն և աճեցող
 երջանկութիւն :

Այս տեղ ուրեմն կրտսնները Աստուծմէ եկած
 կրօնքի նշան մը : Վարդկային մտաւոր կարողու-
 թիւններուն վրայ և անոնց մէկզմէկու ունեցած
 յարաբերութիւններուն վրայ և անոնց մշակուե-
 լու և կատարելագործուելու մի միայն պայման-
 ներուն վրայ մեր հիմակուան ունեցած գիտու-
 թենէն կրտսնները որ մարդը աղնուացնելու և
 անիկա սուրբ կամ երջանիկ ընելու կրօնքը զԱստ-
 ուած իբրև սիրոյ առարկայ ներկայացնելու է և
 միջոց բանեցնելու է, մարդուն բնաւորութիւնը ա-
 նոր բնաւորութեանը նմանցնելու :

Նայց միթէ այս սէրէն երբէք մաս մը կը գտնուի
 կամ կարելի է գտնուիլ Քրիստոնէութենէն
 դուրս . բացարձակապէս ո՛չ : Աստուծոյ սէրը բնաւ
 հեթանոսական կրօնքի մը մէջ մտած չէ իբրև
 տարր . ոչ ալ կարելի էր որ կենայ այն սէրը՝
 Աստուծոյ վրայ իրենց ունեցած ըմբռնումներուն

Տես : Սէրը՝ ինչպէս որ առաջ ըսուեցաւ , յառաջ կուգայ բարոյական գերազանցութեանը տեսնուելովը , մանաւանդ երբոր նոյնը մեր բարելաութեանը համար ի գործ դրուած ըլլայ : Մի՛թէ կարելի՞ էր ուրեմն որ սիրոյ այս պատճառներուն ուիցէ մէկովը հին ատենի Արամազդը կամ Պղոտոնը կամ Քաբոսը սիրուի : Մի՛թէ անոնց բարոյական բնութիւնը գոնէ ինքնին գովելի՞ էր . մի՛թէ երբէք անշահախնդիր զոհեր ըրին մարդոց աղէկութեանը համար : Այլ կարելի՞ է որ սիրոյ այս պատճառներուն ուիցէ մէկովը հիմակուան Հնդկաստանցիք սիրեն իրենց երկրպագութեան առարկայ եղող էակներէն կամ բաներէն մէկը : Մեր մտաց բնական կազմութեանը նայելով անկարելի է : Այն երկրպագութեան առարկաները ո՛չ ինքնին և ոչ իրենց մարդուն ունեցած յարաբերութիւններովը յարմարութիւն ունին սէր յառաջ բերելու : Գարձեալ՝ կարելի՞ է որ Աստուածեանին ընդունած Աստուծոյն ալ սիրոյ զգացումները զօրաւոր կերպով շարժուին , որուն կարծեացը նայելով Աստուած ինքզինքը կը յայտնէ միայն այն ընդհանուր օրէնքներովը՝ որ ամեն բան միօրինակ կրնեն ամենուն . և բնաւ իր արարածներուն հետ չխօսիր , կամ չհիմացներ թէ աղօթք կըլսէ : Արձեամ թէ ո՛չ : Ա՛յլ լսած է թէ երբէք մէկ ջերմեռանդ Աստուածեան մը եղած է : Ա՛յլ լսած է որ երբէք մէկը յօժարեցաւ իր կեանքը առաքելական աշխատութեամբ անցնել ուրիշներուն աղէկութեանը համար : Մտքին կազմութեանը համաձայն չէ՛ որ ասանկ դրութիւն մը սէր զար-

Թուցանէ : Ալ այս դրութիւններն ինչպէս որ^ն են
ամեն սուտ դրութիւն ալ անանկ է : Այլոր ա-
սանկ դրութիւնները սիրտը պաղ կը թողուն , և ըստ
այնմ գրեթէ բնաւ նորոգիչ զօրութիւն մը չեն
ներգործեր մարդուն վարքին :

Ալ դարձեալ այս ալ մեզի ըսել կուտայ երրորդ
թէ Վրիստոնէութիւնը զգացումներու յարմարա-
ցած ըլլալը կերևայ խէրը գործքի վրայ ազդեցու-
թիւն ունենալու կողմանէ ինչ աստիճանի մէջ
բռնելէն : Աարոյսական կառավարութիւնը կը պա-
հանջէ նազանդութիւն : Աստուծոյ . բայց որն է
այն նազանդութիւնը որ կրնայ զԱստուած պա-
տուել , և ընողը երջանիկ ընել : Յայտնի է որ անձ-
նասէր և արտաքին նազանդութիւնը չէ՝ որն որ
չարութիւն է . և ոչ վախէն եղած նազանդու-
թիւնը , վասն զի ամեն «վախ տանջանքի ենթա-
կայ է» . այլ միայն ճանաչողութեամբ և սիրով
եղած նազանդութիւնը կրնայ ըլլալ : Ասանկ նա-
զանդութիւնը զԱստուած կը պատուէ և ընողը եր-
ջանիկ կընէ . անոր մէջ նուաստութեան և ծա-
ռայական հպատակութեան մաս չկայ . այլ ընդ-
հակառակն՝ որովհետեւ բոլոր իմացականութիւնը
խիղճը և սիրտը մէկտեղ կը միաբանին ասանկ
գործքի մը որ կը կատարուի անանկ Ասակի մը կամ-
քին համեմատ , վասնորոյ հարկաւ անիկա պիտի
ազնուացնէ միտքը : Միայն այս կերպով հնար
է մեզի ըմբռնել որ մէկ բանական արարած մը
անանկ գործէ , որ զԱստուած պատուէ և ինքզին-
քը երջանիկ ընէ . վասնորոյ այն կրօնքն որ
անանկ կազմուած է նկատմամբ մարդկային մտքին՝

որ յառաջ բերէ ճանաչմամբ և սիրով և զամբ
մենաբարձր աստիճան հնազանդութիւն՝ հարկաւ
ճշմարիտ կրօնք ըլլալու է, և ո՛չ ուրիշ մը կա-
րելի է որ ըլլայ: Ա՛րդ՝ անաբարակոյս կրնանք գիտ-
նալ որ ո՛չ մէկ հեթանոսական գրութիւն մը կըր-
նայ յառաջ բերել ասանկ հնազանդութիւն, և
Քրիստոնէական գրութիւնը յարմարացած է անի-
կա յառաջ բերելու ամենամեծ աստիճանաւ:

Այց սա ալ պէտք է նկատել որ Քրիստոնէ-
ութիւնը յարմարացած է զգացումներու՝ ապառնի
վիճակի վրայ իր ըրած յայտնութիւններով: Ա՛-
նիկա Հնդկաստանցւոց կամ Տիեզերականներուն
պէս չցուցներ թէ մարդը Աստուածութեան մէջ
պիտի խառնուի, և ոչ ուրիշ հեթանոսական գրու-
թիւններուն պէս թէ հեշտութեան մէջ պիտի
ընկզմի, այլ երկինքը կընտրկայացնէ իրրեւ զուտ
և սուրբ սիրոյ ընկերական վիճակ մը: Հիւրաւի
գիմացներ թէ մենք մեր երկրաւոր ազգականները
պիտի ճանչնանք հոն, թէպէտ տարակոյսի տեղ
ալ չթողուր ասոր վրայ, բայց կիմացնէ մեզի թէ
մեր Հօրը տունն է այն, և մէկ ընտանիք մը կայ
հոն ժողվելու բարի անձինքներէն կազմուած, ու-
րոնց հետ երկրի վրայ և զամ կապերէն աւելի մեր-
ձաւոր կապերով պիտի կապուինք: Օգաճումնե-
րով զարգարուած էակի մը ասջին ինչ բան կա-
րելի է գնել որ ասկէ աւելի յարմար ըլլայ, այսինքն
թէ անհուն Հայր մը և իր արարածներուն Քրկիչը
և ամեն բարի անձանց միացեալ ընտանիքը:

Հիմա կարողը կուգայ երևակայութեան: Ալ
Քրիստոնէութեան ասոր ունեցած յարմարու-

Թիւնը՝ խղճին՝ իմացականութեան և զգածութեան
 ունեցածէն վար չէ: Արեւակայութիւնը հա-
 ճոյքի աղբիւր մըն է, և գործունէութեան շարժիչ,
 և մէկ զորաւոր ներգործիչ մը բնաւորութիւնը
 ձեւակերպելու համար. և անոր յարմարացած է
 կրօնը այն դրութիւնը, որ՝ յարմարութիւն ունի
 ամենէն զուտ և ամենաբարձր աստիճան հաճոյք
 տալու անոր, և անանկ կառավարելու անոր շար-
 ժած գործունէութիւնը, որ մարդուն բնութիւնը
 ամենէն ազնու ձևի ձուլէ:

Արեւակայութեան վրայ իբրև լոկ հաճոյքի աղ-
 բիւր նայելով՝ այն դրութիւնն ամենէն ազէկ յար-
 մարացած պիտի ըլլայ անոր՝ որ ամենէն աւելի գե-
 ղեցկութեան և վսեմութեան տարրներ կրպարու-
 նակէ, և ամենընդարձակ սահման մը կրթողու-
 անանցմէ կապակցութիւններ հանելու: Աւ այս
 կողմէն անշուշտ ոչ մէկ բան մը կրնայ Վրիա-
 տոնէութենէն գերազանցել: Զենք կրնար ըմ-
 բռնել ընդհանրական դատաստանին և այս աշ-
 խարհիս վերջին սյրուելուն չափ ահաւոր ուրիշ
 տեսարաններ. և ոչ՝ Աոր Արուսաղէմին տեսա-
 րաններուն պէս գեղեցիկ տեսարաններ, և ոչ ա-
 նոնց բնակած տեղերուն ունեցած զբաղմունքնե-
 րուն պէս, որոնք պիտի ըլլան Վստուծոյ որդիք
 ու ժառանգներ, և որոնց պիտի տրուին բոլոր ա-
 րարած բաները, որչափ որ կրնան անոնց հաճոյ-
 քին ծառայել: Աւ եթէ ներկայ տեսարանները
 լցուած են այսչափ գեղեցկութեամբ ու վսեմու-
 թիւնով, ալ ո՞ր երեւակայութիւն կրնայ ըմբռնել
 այն աշխարհին շքեղութիւնները՝ որուն երեւոյթին

գեղեցկութիւններն իր հողերը փառքին համեմատ պիտի ըլլան : Աւրեմն թող մէկը չըսէ թէ Վրիստոնէութիւնը երեւակայութիւնը կը զսպէ, կամ Վստուած չուղեց որ Վրիստոնէութեան հետ կցէ երեւակայութիւն և բանաստեղծութիւն և ամեն այն մտաւոր կարողութեանց գործածութիւնը, որոնց հետ գեղեցկութիւն ու հաճոյք կուգայ : Անիկա ուղեց և անոր համար պատրաստութիւն ալ ըրաւ, և այն ալ ո՛չ միայն այս կենաց մէջ : Արկինքն ալ բանաստեղծութիւն պիտի կենայ, այն տեղն ալ բանաստեղծութեան տողերուն եղանակները պիտի գոռան : Ան պիտի կենայ երեւակայութիւն ալ . ասիկա մտաց մէկ անպիտան կարողութիւն մը չէ՛ ինչպէս ոմանք կը թուի թէ կըսեպէն տրուած միայն անարգելու և զսպելու համար : Ա՛չ, անոր սրածուիչ ընթացքը որչափ սաստիկ ալ որ է, միշտ բաւական միջոց պիտի գտնէ անսահման տիեզերքին և Վստուծոյ անվախճան կատարելութիւններուն մէջ : Մտքին այս կարողութիւնովը կրնանք անհատի մը ազնիւ բնաւորութեան գաղափարներ կազմել, և կատարեալ սեպած բաներու անանկ վիճակներ ըմբռնել, որ էականապէս օգնեն մեր աշխուժութեանը, և ներգործեն մեր բնաւորութեանն և ընթացքին : Վայց հոս՝ իմացականութեան համար հարկաւոր եղածէն ոչինչ պակաս ամէն փորձ կը ցուցնէ, որ հարկաւոր է գտնել Վստուծոյ խորհուրդը իբրև օրինակ և առաջնորդ այս ձևակերպող կարողութեանը : Անքնիրեն մնալով ո՛րչափ սուտ վարուց օրինակներ դրած է, և քանի քանի երեւակայական դրութիւններ նարած է :

Ա՛րբ ազնիւ բնաւորութեան գաղափար մը՝ կամ
 բաներու մէկ վերջին ու կատարեալ վիճակ մը
 ըմբռնած է, որ արժան ըլլայ Աստուծոյ, և մ'որդ
 ազնուացնելու ծառայէ: Այլէ հեթանոսաց չաստ-
 ուածներուն և երկինքի վրայ ըրած ստորագրու-
 թիւններուն, կեղծեալ պատմութիւններուն և մին-
 չև անգամ ապառնի կենաց վրայ Պղատոնին խորհր-
 դածութիւններուն. նայէ շնորհաց դիւցաբանու-
 թեանն և հոգեփոխութեան վարդապետութեանն
 և հեթանոսական դրախտին: Ասոնք հին աստե-
 ղաբաշխներուն կարծիքները և դրութիւնները
 ինտոր որ են Փիղիքական երկինքին ճշմարիտ դը-
 րութեանը քովը, անանկ են Աստուծոյ յայտ-
 նած երկինքին ու ապառնի վիճակին քովը: Ճշ-
 մարիտ գիտութեան յայտնած երկինքին մարդոց
 երևակայածէն ունեցած գերազանցութիւնը, կամ
 իրական Յարդգողին, որ է արեգակի նման աստ-
 ղերու խումբեր՝ մէկըմէկու ետև դիզուած, այն
 գաղափարէն ունեցած գերազանցութիւնը որ կը-
 դնէ անոր ծագումը շերքիւլէսի մանկութենէն
 երբ որ անիկա կըսնուցանէին, աւելի չէ հազա-
 րամեան դարուն փառքին, և Քրիստոնէական
 երկինքին մաքրութեան ու վստահութեանը մարդոց
 երբէք երևակայած և իբրև իրենց նաբած կրօն-
 քին հիմը դրած ուիցէ ապառնի կեանքէն ու-
 նեցած գերազանցութենէն: Արկուքին մէջն ալ
 այսինքն որչափ որ Փիղիքական երկինքին վրայօք,
 նոյնչափ ալ բարոյականին վրայ պէտք է որ շրջա-
 գիծը իբրև Աստուծմէ քաշուած տրուի մեզի, և
 անատենը երևակայութեան ամենազնիւ գործն է
 լցունել անիկա:

Վրիստոնէութիւնը միայն կատարեալ մարդկութեան օրինակ մը և ընկերական կատարելութեան ճշմարիտ տարրները կրդնէ մեր առջևը, անիկա միայն երևակայութեան առջևը կրդնէ երկրի վրայ մէկ կատարեալ վիճակի մը պատկերը, և կրքանայ երկնից գոները. և այն միայն կրնայ անոր դուռը կենալ և ազազակել. «Մ.Յն բաներն որ աչք չէ տեսեր, և ահանջ չէ լսեր, ու մարդու սրտին մէջ չէ ինկեր, Աստուած իր սիրելիներուն պատրաստեց» : Այնորոյ կատարելապէս յարմարացած է երևակայութեան, ըստ որում մտքին մէկ կարողութիւնը, որ մեր առջևը գերազանց գաղափարներ գնելով կրշարժէ աշխուժութեան, որ ջանանք իրական կենաց մէջ նոյնը իրականայնել :

Մ.Ես նիւթը չվերջացուցած պատշաճ է ըսել, թէ Վրիստոնէութիւնը ոչ թէ փիլիսոփայութեան դրութիւններուն պէս գաղափարական գերազանցութիւններ մեր առջևը կրդնէ, առանց ցուցնելու թէ ինչպէս ձեռք կրնանք ձգել անիկա : Նոր պատուերներուն նազանգիլը կիրականացնէ անոր ցուցուցած գերազանցութիւնը, և նշանաւոր եղելութիւն մըն է որ այսպէս և միայն այսպէս իրականութիւն կունենան իրական կենաց մէջ այն հին մարգարէներուն տեսիլ քները, որոնց երևակայութիւնը վառուած էր վսեմութեան ու գեղեցկութեան այս տեսարաններով :

Հիմա միայն կրմնայ խօսիլ Վրիստոնէութիւնը կամքին յարմարացած ըլլալուն վրայ : Մէկ դրութիւն մը մարդուն կրնայ յարմարիլ անոր հպարտութիւնը շողոքորթելով, անոր տկարութեանէն

պատե՛հ առնելով, և անոր ծուռ փափաքներուն
հաւանութիւն տալով. և այս խմաստով սուտ գը-
րութիւններ յարմարցած են անոր շատ վար-
պետութեամբ: Ասցց ճիշդը խօսելով մէկ գրու-
թիւն մը բանական ու բարոյական էակի մը կամ-
քին յարմարցած կըլլայ, երբոր անանկ կազ-
մուած է, որ հարկաւորապէս պիտի տիրէ կամքին՝
բանականութեան ու խղճին որոշումներուն հա-
մեմատ: Ասկա շատ կարեւոր կէտ մըն է, որովհե-
տե մարդուն կամքն ըլլալով իր անձնաւորութիւ-
նը և իր գործոցն որոշողը ոչ մէկ բան մը օ-
գուտ կամ ներգործութիւն կրնայ ունենալ մին-
չև որ բանը ասոր հասնի. և ըստ այնմ այն գրու-
թիւնը որ չկրնար օրինաւոր կերպով կամքին
վրայ իշխել, թող ըլլայ թէ ամեն ուրիշ յար-
մարութիւն ունենայ, և սակայն բանի մը չդար:

Աստի Քրիստոնէութիւնը յարմարացած է կամ-
քին, նախ որովհետե կը հայժայժէ մեղաց թողու-
թիւն և Աստուածային օգնութիւն այն մեծ ջանքե-
րուն մէջ, որ կը պարտաւորինք ընել իր մեր առջևը
հանած դժուարութիւններուն յաղթելու: Ամացա-
կանութեան վրայ խօսած ատենս յիշեցի թէ Քր-
իստոնէութիւնը յարմարացած է անոր, որովհետե
կադատէ զանիկա մոլութեան թմրութեանէն. անոր
շատ նման կերպով է որ Քրիստոնէութիւնը կամ-
քին ալ կրներգործէ: Վարդուն կամքը բնա-
չգործեր՝ երբոր իր առարկային ստացումը բացար-
ձակապէս անյուսալի է. և մեղքին ներուած
ըլլալու զգացումն և Աստուածային օգնու-
թեան յոյսը, եթէ անմիջական շարժառիժներ

ալ չըլլան՝ անանկ պայմաններ են, որոնցմով միայն կամքը կրնայ համոզուիլ Քրիստոնէական պատերազմին մէջ պէտք եղած մեծ ճիգերն ընելու։ Ա՛յժէ ասոնք չըլլան, ճշմարտապէս լուսաւորուած միտք մ' ալ պիտի դադարած մնայ անանկ վըհատութիւնով մը, որ յախտեան կըթուլցնէ ջանքը։

Արկրորդ՝ Քրիստոնէութիւնը յարմարացած է կամքին՝ զգածումներուն յարմարացած ըլլալուն համար։ Ա՛յս՝ ոմանց պէս կամքն և զգածումները նոյն չեմ սեպեր. թէպէտև սերտիւ կապակցած են մէկմէկու, և զգածումները՝ ինչպէս որ առաջ ըսի, անշահախնդիր գործքի և զուարթ բարոյական հնազանդութեան աղբիւրը միայն ըլլալով, յայտնի է որ մէկ դրութիւն մը որչափ ազդեցութիւն ունենայ անոնց վրայ, այնչափ յարմարութիւն կունենայ կամքը շարժելու։ Բաւական չէ ճանչնալ մեր պարտքը, և լոկ իբրև պարտք ուղել անիկա կատարել։ Ա՛յլ անոնց հետ մենք կարօտ ենք զգածումներուն օգնութեանն ալ, այսինքն պէտք է որ սէր առ Աստուած և սէր առ մարդ հաստատուի սրտին մէջ, որոնք են Քրիստոնէութեան առաջին ու երկրորդ բարոյական մեծ պատուէրները, որոնք ուր որ թագաւորեն, հարկաւ ուրախ հնազանդութիւն մը յառաջ կըբերեն։

Արկրորդ՝ Քրիստոնէութիւնը յարմարացած է կամքին անոր ցուցուցած անձնական մեծ օգուտներուն և իր ահաւոր վճիռներուն պատճառովը։ Քրիստոնէութիւնն այս մասին անզուգական է։ Ա՛յս՝ ամեն բան անհունութեան և յախտենականու-

թեան կերթայ : Հոս՝ մարդն իբրև հոգևոր և ան-
 մահ էակ իր մեծութեանը պատշաճ տեղը կառ-
 նէ, և մոռացութեան մէջ կրճգէ ամեն ժամանա-
 կաւոր շարժառիթներն և օգուտները : Հոս՝ այս-
 պէս կաղաղակէ Քրիստոնէութիւնը, «Ի՞նչ օ-
 գուտ է մարդուն որ բոլոր աշխարհը վաստրկի,
 և իր անձը կորսնցնէ. կամ իր անձին համար
 ի՞նչ ազատէք պիտի տայ մարդ» : Քրիս-
 տոնէութիւնն Աստուծոյ կամքը մեր կանոնը կը-
 նէ, և մեզ անոր ամենատես աչքին հայեցո-
 ղութեանը տակը կրդնէ. մեզի կըցուցնէ ամենա-
 կարող Աստաւորի մը ատեանը, և անխառն ար-
 դարութեան վճիռ մը, և անհամեմատ շնորհքնե-
 րու վարձք մը : Մարդկային վարուց հետևու-
 թիւններէն աւելի՝ մէկ կողմէն հրապուրիչ՝ միւս
 կողմէն ահարկու բան չկրնար ըլլալ : Աիմա-
 ցընէ թէ կայ «յաւիտենական կեանք», «Աստու-
 ծոյ որդիք ու ժառանգներ» ըլլալ, և «կենաց պը-
 սակ», ու «մէկ անեղծ, անարատ և անթառամ
 ժառանգութիւն մը» : Աիմացնէ նաև յաւիտեան
 պահուած խաւարի մէգ մը, «որդ մը որ չմեռնիր,
 և կրակ մը որ չմարիր» : Մէկդի ձգելով ուրե-
 մըն զգածումները, և անոր ցուցուցած պարտա-
 ւորութեան և անձնական օգուտի ուղղակի շար-
 ժառիթներուն միայն նայելով, անշուշտ ոչ ու-
 ըիչ դրութիւն մը կրնայ ասոր չափ յարմարու-
 թիւն ունենալ կամքը շարժելու, երբոր իրօք կը-
 հաւտացուի :

Ա երջապէս Քրիստոնէութիւնը յարմարացած
 է կամքին և մարդուն բոլոր յօժարական մասին,

որովհետեւ իր Աստուծոյ բնութիւնը և մարդկային պարտքը սոր/եցնելու կերպը ընդհանուր ու վերացեալ առաջարկութիւններով չէ, այլ եղելութիւններով և գործքով օրինակ ցուցնելով : Այս մասին Քրիստոնէութիւնը բոլորովին հակառակ կուգայ բնական կրօնքին և ամեն Տիեզերականութեան միտում ունեցող դադափարներուն : Ամեն այն զօրաւոր գործքերն որ Աստուած բրաւ Խորայէլացւոց համար, Ազիպտոսէն աղատելը՝ օրէնքը տալը՝ անասպատէն և Հորդանանէն անցունելը չէին կրնար անոնց սիրտերը և կա՛րքը Աստուծոյ վրայ ունեցէ ստորագրութիւններով և լոկ պատուէրներով հնար եղածէն անհունապէս աւելի չարժեղ : Հաւանական է որ անոնք ամեն բանէ աւելի յարմարութիւն ունէին այն ժողովրդին Աստուծոյ վրայ ուղիղ դադափարներ տալու, և զիրենք անոր պատուէրներուն կատարեալ և զուարթ հնազանդութեան առաջնորդելու : Այլ այսպէս՝ Աոր Ատակարանին պատմած այն մեծ եղելութիւնը թէ «Աստուած այնքան սիրեց աշխարհը որ իր միածին որդին տուաւ», և մեր Քրիստոնէութեան օրինակը, «որ մեզ սիրեց և իր անձը մեզի համար տուաւ», միշտ իր զօրաւոր շարժառիթներն եղած են : Ասոնք արդեամբք անանկ շարժառիթներ եղան, որոնք չըլլալով ուրիշներն օգուտ մը պիտի չընէին :

Արեմն Քրիստոնէութեան թէ առաջարկած թողութեանը և օգնութեանը նայինք, թէ զգածումներու հետ իր ունեցած կապակցութեանը նայինք, թէ իր ուղղակի շարժառիթներուն, կամ

Թէ իր ցուցուցած եղելութիւններուն և դորձքով
օրինակներուն, կըտեսնենք որ կատարեալ յար-
մարութիւն ունի մարդուն կամքին :

Ճ Ա Ռ Զ

Մարդը մէկ բաղադրեալ էակ մըն է : Փոքր
աշխարհ կոչուած է այն . որովհետեւ թէև մէկ
որոշ իրեն յատուկ բնութիւն մ' ունի, միան-
գամայն հաղորդ կըլլայ ստորին արարածոց ամեն
բաներուն : Անոր վրայ միացած են նիւթական և
հոգեղէն էութիւններ, ու կենդանական և բանա-
կան կարողութիւններ : Անի բնական ազդու-
մներ՝ հակամիտութիւններ՝ փափաքներ՝ կիրքեր,
որով կապակցութիւն կունենայ անբան կենդա-
նիներուն, ունի նաև բանականութիւն՝ խիղճ՝ ա-
զատ կամք, որով ալ մերձաւորութիւն կու-
նենայ բարձրագոյն կարգի լուսաւոր էակներուն և
Աստուծոյ : Ասանորոյ այն վախճաններն որ ըն-
դունակութիւն ունի ընտրելու, և այն սկզբունք-
ներն որոնցմով կրնայ շարժիլ, շատ զանազան
են : Մարմինն ու հոգին՝ բանականութիւնն ու
կիրքը՝ խիղճն ու փափաքը շատ անգամ մէկզմէ-
կու հակառակ կերեփն և հակառակ են : Տաս-
կալ կըսէ, «բանականութեան կրից դէմ ու-

նեցած ներքին պատերազմը՝ խաղաղութիւն փրկ-
 առողներուն մէջ երկու մէկզմէկէ տար-
 բեր ազանդներու կազմութեանը ծագումն տուած
 է : Մէկը կուզէր կիրքերն ուրանալ և չաստուած-
 ներու պէս ըլլալ . միւսը՝ բանականութիւնն ու-
 րանալ և անասուն ըլլալ : Մարդուն մտաւոր
 կարողութիւններն այսչափ բազմատեսակ ըլլա-
 լով, և անոնցմէ հետեւած ստիպումները և շար-
 ժառիթներն այնչափ զանազան, և մանաւանդ
 երբոր մտածենք անոր ընկերական յարաբերու-
 թիւններուն զանազանութիւններն, իրաւամբ կըր-
 նանք ըսել թէ, եթէ մարդկային ճարտարութենէն
 վեր եղած խնդիր մը կայ լուծելու, մարդուն հա-
 մար վախճաններու ընտրութիւնն և միջոցներու
 ու շարժառիթներու կարգադրութիւնն է, այս-
 ինքն արժեւորութիւն տուող՝ առաջնորդող և զըս-
 պող դրութեան կազմութիւն մը, որ ամեն այս
 մէկմէկու հակառակ գործող տարրերուն հա-
 մաձայնի, և մարդկային ընկերութեան այս ըն-
 դարձակ մեքենային մէջ ամեն անիւ ազատա-
 բար և միւսներուն արդեւք չըլլալով դառնալ տայ :
 Աւ ըստ այնմ մարդոց ամեն հնարած դրու-
 թիւններուն մէջ թէ անոնց զարթուցած կարո-
 ղութիւններուն նայինք, թէ այն վախճաններուն՝
 որոնց այն կարողութիւններ ուղղեր են, կամ թէ
 վրանին դրուած զսպումներուն՝ կրտեսներն որ
 մարդուն բնութեանը յարմարելու կողմանէ մեծ
 պակասութիւն կայ : Արժեւորութիւն, առաջնորդու-
 թիւն և զսպումն, ասոնք են որոնց մարդ կա-
 րօտ է, և այն դրութիւնը՝ որ անանկ կըրկապակցէ

զանոնք որ իր աղղեցութիւնովք մարդը իր ճշմարիտ կատարելութեանը և ճշմարիտ վախճանին հասցընէ, յարմարացած է անոր բոլոր բնութեանը : Աս արդէն խօսած եմ Քրիստոնէութեան՝ մարդուն գլխաւոր կարողութիւններէն ոմանք զարթուցանելու և առաջնորդելու զօրութեանը վրայ . հիմա քանի մը դիտողութիւններ պիտի ընենք անոր զսպող զօրութեանը վրայ :

Չկայ վարուց բնական սկզբունք մը որ պէտք է ջնջել , այլ կան շատերը որ պէտք է կառավարել՝ հպատակեցնել ու զսպել : Անանկ սկզբունքներ ունի մեր բնութիւնը՝ որ մեր բարելաւութեանը կրճառայեն միայն երբոր ներդործեն այսինչ որոշեալ խաճմաններու մէջ՝ որոնք մոլութեան և թշուառութեան աղբիւր կըլլան երբոր այն սաճմաններն անցնին : Այց ամեն մասնաւոր անիւի վրայ արգելք դնելը՝ ճիշդ այն կէտին որ անոր շարժումը ամբողջին ընթացքին նայելով չափէն աւելի արագ պիտի ըլլայ , կըպահանջէ մարդուն կարողութենէն վեր ճարտարութիւն մը :

Օրօրինակ այն սաճմաններն որոշելը՝ որոնց մէջ ամիսփութելու են մարդկային բաղձանքները որ անհատից և հասարակութեան ամենէն օդատակար ըլլայ , կըպահանջէ մարդոց կազմութեանը և անոնց յարաբերութիւններուն վրայ անանկ դիտութիւն մը , որ Աստուածաշունչով չուսաւորուած ոչ մէկ փիլիսոփայ մը երբէք յուցուցած է : Հարկ է ըսել թէ ո՛րչափ էական հարկաւորութիւն կայ ուրիցէ հասարակութեան բարելաւութեանը՝ որ

այս սահմաններն ուղիղ որոշուի : Այժմ է չափէն
աւելի զսպում ըլլայ , հասարակութիւնը դադանի
և շատ անգամ անյուսալի խանդարման մէջ
կըլլայ , ուրիշ մեղքերու վրայ կեղծաւորութիւնն
ալ կաւելնայ , և սրբակրօն անառակութիւնը
որ ամենէն զգուելի տեսակն է , ընդհանուր կըլ-
լայ : Իսկ եթէ չափէն քիչ ըլլայ զսպումը , մո-
լութիւն անամօթ երեսով ամեն կողմ կըտա-
րածուի և իր ամօթալի գործքերովը կըպարծե-
նայ : Ատիկան հեթանոսաց վիճակը նոյնմայե-
ցոյց Առաջին Ղլխուն մէջ Առաքեալը կստորագրէ :
Այն ստորագրութեան ճշգրութիւնը նշանաւոր
կերպով վկայուած է հեթանոս հեղինակներէն .
և ամեն անկողմնապահ ճամբորդի վկայութեանը
նայելով՝ այն գլուխը բառ առ բառ ճշմարիտ կու-
գայ ներկայ դարուս հեթանոսներուն վրայ ալ :
Մարդկային բնութեան ունեցած հեշտասիրու-
թեան հակամիտութիւնը այնչափ զօրաւոր է ,
որ ո՛չ մէկ սուտ կրօնք մը բնաւ համարձակած ու-
նի անոր ձեռք դպցնելու . և շատ տեղ ալ ամ-
ենաանարգ հեշտասիրութիւնը կրօնքի մէկ մասը
եղած է . և գրեթէ ամեն սուտ կրօնքի մէջ մո-
լութիւնը անսանձ թողուած է , կամ միայն ընծա-
ներով հատուցում ընել պահանջուած է եղած
մոլութեան փոխարէն :

Իսկ անոնք ալ՝ որ մարդուն ազնուագոյն բը-
նութեանը վրայ ճանաչում ունեցած են , և ըղ-
գացած են որ մէկ ազնուութիւն մը կայ մարդ-
կային կաղմութեան կենդանական մասը հպատա-
կեցնելուն մէջ , չափէն անգին անցած են : Ա-

խորժակները կանոնաւորելու տեղը՝ ջանացին բընաջինջ ընել անոնք . և անոնց հետեւողները եղան փառասէր՝ մոլի և կեղծաւոր : Ահրկայ դարուս մէկ երևելի հեղինակը կըսէ , թէ «Չկայ բան մը մարդկային մտաց պատմութեանը մէջ՝ որ ասկէ աւելի միօրինակ պատահած է , որ ուր որ կրօնական զգացումները գերազանցութիւն մը կստանան զգայական և ստորին կիրքերուն վրայ , հոն խստակրօնութիւնը յառաջ կուգայ իր ունիցէ մէկ կերպարանքովը . անիկա առաքինութիւնը երբեմն իբրև ճիւղ կընկերկայացնէ , երբեմն իբրև դիւահար , երբեմն իբրև մուրացկան , երբեմն ալ իբրև գերի , բայց ոչ երբէք իբրև երկնից լուսաւոր դուստր :

Բայց մարդիկ ոչ միայն անանկ կրօնական դրութիւններ կազմեցին որ արտօնութիւն կուտար զգայական հեշտութեան , ոչ միայն ջանացին բոլորովին խափանել կենդանական բնութիւնը , այլ և հեշտասիրութիւնը անձը տանջելուն վերայ պատուաստեցին : Մարդուն մէջ յանցանքի ճանաչում մը կայ . և ասոր կապակցած գրեթէ ընդհանուր եղաւ այն գաղափարը՝ թէ տանջանքը և անձնական զոհը մէկ կերպով մը մեղքը քաւելու զօրութիւն ունին : Ասկէ ելան հեթանոսաց մէջ ծանրագին զոհեր իրենց չաստուածներուն . ասկէ ելան անոնց արիւնահեղ արարողութիւնները , մարդկային զոհերը և մինչև անգամ բուն իրենց զաւակները զոհելը : Բայց երբոր անգամ մը այս սկզբունքը հաստատուեցաւ թէ անձը տանջելը կրնայ մեղքը վերցնել , անատենը մեղքի ազատութեան դուռը բացուեցաւ ,

Լ ասկէ յառաջ եկաւ այն այլանդակ և հակա-
սական երեցած տեսարանը՝ որ շատ անգամ կը-
տեսնուի որ հեշտասիրութիւնը անձը տանջելուն
հետ ձեռք ձեռքի տուած կերթան :

Եւ յս ծուռ ու պիղծ գաղափարներուն հակառակ
որչափ պարզ՝ որչափ պայծառապէս Եստուծոյ
յայտնի դիտաւորութիւններուն և նախնական սահ-
մանադրութիւններուն համաձայն են Քրիստոնէու-
թեան սկզբունքները : Քրիստոս սրբութիւն մը չը-
ցուցուց իր վրայ անանկ անտարբեր բաներու մէջ՝ ո-
րով Փարիսեցիք կրփնտուէին նշանաւոր ընել ինք-
զինքնին : Եւ անց վարանման և ուրիշներուն համո-
զուելուն նայելու, սրբեց վերցուց Ասաբբիական սը-
նապաշտութիւնները ու ծառայական պահանջում-
ները, որ աւելցած էին Հրէական օրէնքին վրայ :
Ենիկա «կուտէ ու կըխմէ» : Իմացուց թէ այն որ
բերանը կըմանէ՝ մարդը չպղծեր : Եմուսնութիւնը
վաւերացուց, և պատիւ ու սրբազնութիւն մը տուաւ
անոր, որ առաջ ծանօթ չէր, իմացնելով որ ա-
նիկա Եստուածային ծագումն ունեցող հաստա-
տութիւն մըն է՝ որ սկիզբէն սահմանուեցաւ :
Հոգիին մարմինէն գերազանցութիւնը իր քա-
րողութեանը բուն նպատակն էր, կըսէ վերոյի-
շեալ հեղինակը, բայց և այնպէս մարմինը չէր
մաշեցնէր խտակրօնութիւնով : Ենձնուրացու-
թիւնը սաստիկ կը պատուիրէր միշտ, բայց և այն-
պէս կեղծեալ ժուժկալութիւններ չբանեցուց :
Եւ յս՝ առաքինութեան և ոչ թէ ճգնութեան ուսու-
ցիչը, այս՝ մոլութեան ու ոչ թէ հաճոյքի յան-
դիմանիչը ինքը անանկ յօժարութեամբ և հա-

մարձակութեամբ մտաւ ու ելաւ հասարակ կե-
 նաց ընկերական ուրախութիւններուն մէջ, որ
 կեղծաւորներուն չարակամութեանը ծածկոց մը
 եղաւ, որ անիկա ցուցնելով ըսին, «Մ. հա ու-
 տող և արբեցող մարդ մը՝ մաքսաւորներու ու
 մեղաւորներու բարեկամ» : Նայց երբոր այս կը-
 նէր, բնաւ չէր զիջաներ այն դարուն նախապա-
 շարումներուն և մոլութիւններուն, այլ կար-
 գիլէր ամեն անմաքրութիւն մինչև անգամ խոր-
 հրդով ալ : Նոյն իմաստութիւնը կրտեսնուէր նաև
 Մ. Լաբելոց քարոզութեանը և ընթացքին մէջ :
 Պօղոս Մ. Լաբելալ ուտելիքի վրայով կը հաստատե-
 թէ Մ. ստուծոյ ամեն արարածները բարի են. և
 գոհութեամբ ընդունուելու են. և ամուսնութեան
 համար կրսէ, թէ բոլորովին պատուական է. որ
 ատեն գինեմոլութիւնը և պղծութիւնը այն մեղ-
 քերուն մէջ կը դասէ՝ որոնք մարդը երկնից թա-
 դաւորութենէն դուրս կընեն : Մ. նիկա ինչպէս
 արդարութեան ու գալու դատաստանի՝ անանկ ալ
 ժուժկալութեան քարոզիչ էր. և միշտ նոյն
 ժուժկալութիւնը ամեն բանի մէջ կը պատուիրէր :

Ոչ ալ ասոնցմէ քիչ նուրբ որոշում կընէ
 Քրիստոնէութիւնը՝ չար ու անձնասէր կիրքե-
 րուն վրայ, ինչպէս են բարկութիւն՝ ատելութիւն՝
 նախանձ և վրէժխնդրութիւն՝ չար եղողները, և
 սնապարծութիւն՝ հպարտութիւն՝ փառասիրու-
 թիւն՝ անձնասէր եղողները : Մ. սոնք՝ բարկութե-
 նէն ի դատ բացարձակապէս կարգիլէ, և այն ալ
 կարգիլէ որչափ որ չարակամութեամբ ըլլայ : Մ.
 նիկա կորոշէ այն սուրբ սրտմտութիւնը որ չա-

բուժիւնը հարկաւ կը զարթուցանէ, ու իցէ մէկ ընկ անձնական զգացումէ մը կամ փափաքէ մը որ մարդ կունենայ դիմացինը վնասելու բուն իրեն համար. և անոր համար կըսէ թէ Վրիստոս «բարկութեամբ շուրջանակի անոնց վրայ նայեցաւ, անոնց սրտերուն կուրութեանը համար տրտմած» :

Չար զգացումները բացարձակապէս արդիւն չուն պատշաճութեան վրայ հաւանականաբար քիչ մարդ պիտի գտնուի տարակուսող հիմակուան ատենը: Անոնք ընկերութեան խանգարիչ են, և թէ իրենց սրտին մէջ պահողներուն, և թէ անոնց՝ որոց դէմ որ կըլլան, երկու կողմէն ալ երջանկութեանը միօրինակ խափանող: Անկարելի է որ երջանիկ ըլլայ այն մարդը՝ որուն սրտին մէջ անոնք կըտիրեն, և հարկաւ ուրիշին ալ երջանկութեանը արգելք կըլլան այն զգացումները՝ որչափ որ իրենց ազդեցութիւնը անոնց կըհասնի: Չենք կրնար մտածել որ անոնք երկինք մտնեն, որ հոն ըլլալովսին ալ երկինք պիտի չըլլայ այն տեղը, և ոչ երկրի վրայ կատարեալ ժողովուրդի մը մէջ տեղ ունենալնին կրնանք մըտածել:

Եւ ոչ՝ եթէ ազէկ քննելու ըլլանք, տարակոյսի տեղ կըմնայ անձնասէր կոչած կիւրքերը՝ ինչպէս են սնափառութիւն՝ հպարտութիւն և փառասիրութիւն, արդիւնելու պատշաճութեանը վրայ: Սնափառութիւնը ամենը կը դատապարտեն, գոնէ իբրև տկարութիւն, եթէ ո՛չ իբրև չարութիւն, և եթէ հպարտութիւնը ու փառասիրու-

Թիւնք նկատենք իբրև իր անձին ուրիշներէն վեր ըլլալու և անոնց վրայ տիրելու սէրը, հարկաւ կիմանանք որ միանգամայն անձնասէր և մնասակար են: Հպարտութիւնը ճշմարիտ վսեմութեան հետ՝ և փառասիրութիւնը ազնուասիրութեան հետ շփոթելով՝ ոմանք կարծեցին թէ ասոնք մարդկային բնութիւնը կատարելագործող և ազնուացընող հարկաւոր տարրներէն են: Քայց Քրիստոնէութիւնը կատարեալ ճանաչում ունի ասոնց մէջ եղած որոշումին վրայ, և քանի որ ուրիշ կրօնքներէ շատ աւելի մարդը ճշմարտապէս վսեմ կը ցուցնէ, քանի որ անոր առջև կը դնէ մէկ ազնիւ զբաղմունք մը և փառասիրութեան առարկաներ՝ որոնք ամեն ճիգ գործադրութեան կը շարժեն, թէպէտ ասոնց ստացումը նուաստութիւն չբերեր ուրիշ մարդոց, միանգամայն կարգիլէ և իր քարոզութիւնովն ու բուն իր կազմութեամբն ալ բնաջինջ կընէ սովորաբար հրպարտութիւն և փառասիրութիւն կոչուած զգացումներուն ամեն անձնասէր տարրները: Արդարև մեծ փառք ու պատիւ է Քրիստոնէութեան որ անոր ջանքի առարկաները և հաճութեան աղբիւրները արեգակին լոյսին և օդին նման են, որոնք ձրի են ամենուն, և մէկը որչափ որ վայելէ անոնք՝ ուրիշներուն երջանկութիւնը չպակասեցնեն:

Արդ՝ կը յիշեմ վարուց ուրիշ զօրաւոր սկզբունք մը՝ այսինքն ստացուածքի փափաք, որ Քրիստոնէութիւնը իմաստութեամբ կը կանոնաւորէ: Ճանչնալով ստացուածքին հոգևոր էակի մը կա-

բօտութիւնները լեցնելու անկարողութիւնը, կարգիլէ ազահութիւնը իբրև կռապաշտութիւն, և կը յորդորէ հարուստները անստոյգ հարստութեան չվտասհիլ, այլ կենդանի Մատուծոյ: Միանգամայն կարգիլէ ծուլութիւնը, և կը պատուիրէ աշխատասիրութիւն և չափաւորութիւն, և երբ ասանկով կամ ինչևիցէ ուրիշ միջոցներով ստացուածք ձեռք ձգուի, կը հրամայէ ուրիշներուն աղէկութիւն ընել, և «առատաձեռն ու ուրիշին պիտոյիցը հաղորդ ըլլալ»: Մ. յն որ կը գողնար, ալ գողնալու է, այլ աշխատելու է իր ձեռքերովը գործելու՝ որ կարող ըլլայ տալ որու որ պէտք է: Մ. յսպէս Քրիստոնէութիւնը հասարակութեան մէջի ծոյլերը՝ գողերը, ժիր՝ օգտակար և առատաձեռն մարդիկ կուղէ ընել: Մ. յս ալ դիտողութեան արժանի է թէ ո՛րչափ հոգ ունի Քրիստոնէութիւնը իր պաշտօնեաները արժաթասիրութեանէն զգուշացնելու. և բոլորովին հեռու է՝ «Նոր Ատակարանին նայելով, ժողովուրդը բնաւ համոզելէն որ բազմաճախ և շքեղ կրօնական շէնքեր կանգնեն»: Իր պաշտօնեաները վերակացու ըլլալու են հօտին՝ ո՛չ թէ անարգ շահախնդրութեամբ, այլ յօժարութեամբ: Պօղոս Մ. քերալ թէ Տիմոթէոսին և թէ Տիտոսին ինչպէս անձինք ձեռնադրել պէտք ըլլալը զրուցած ատենը՝ կը յիշէ արժաթասիրութիւնը և անարգ շահախնդրութիւնը իբրև արգելիչ պատճառ: Ալ քանի որ պաշտօնեային կողմէն ասանկ շարժառիթ մը արգիլելու է, և հակառակ Քրիստոնէութեան ամբողջ ոգւոյն, նոյն ատենը բնաւ անոր ստակ տալու:

վրայ չխօսիր իբրև յարկապէս իր աշխատութեանը
 փոխարէն ըլլալու համար, այլ կը հողայ անոր
 ապրուստը, և այդ հողը մէկ պարզ հասարակ
 պարտաւորութիւն մը կը դնէ: Անոր յորդորանք-
 ները անանկ կերպով են՝ որ բոլորովին ընդհա-
 նուր մարդասիրական գործքերու կը տանին մար-
 դը, այսինքն կը յորդորէ տալ ունիցէ մէկու մը
 որ կարօտ է. և այսպէս ստակը ինչպէս առնողին
 բարիք մը կը ըլլայ, տուողին ալ հողեւոր հրահան-
 գութեան պատճառ ըլլալ կուտայ Քրիստոնէ-
 ութիւնը:

Ալ հարկ չէ խօսիլ Քրիստոնէութեան ար-
 գիլած ու կանոնաւորած մասնաւոր բաներուն վը-
 րայ: Անոնց ամենուն վրայ երեք շատ կարևոր
 ծանօթութիւն կայ յիշելու: Առաջինը սա է որ
 այս արգելքները ո՛չ թէ արտաքին գործքին վրայ,
 այլ միշտ այն ոգիին և բնաւորութեանը վրայ
 դրուած են՝ որմէն արտաքին գործքերը կը ծագին:
 Նան մը ասկէ յայտնի չկրնար ըլլալ, որ Քրիս-
 տոնէութիւնը մարդուն վրայ դատողութիւն կընէ
 իբրև հողեւոր էակ և հպատակ մէկ թագաւորու-
 թեան մը, որուն մէջ ամեն գաղտնի խորհուրդ
 յայտնի է, և ամեն չար ու ազահ և պիղծ փա-
 փաք յանցանք է: Ասիկա շատ անգամ յիշուած
 է իբրև ապացոյց Քրիստոնէական բարոյականին
 իմաստութեանը և գերազանցութեանը, վասն զի
 արտաքին գործքը կառավարելու միմիայն նարա-
 ւոր կերպը ոգին կառավարելն է: Նայց՝ որչափ
 իմաստուն և հարկաւոր ալ ըլլայ բարոյականի
 դրութեան մը մէջ, Քրիստոնէութիւնը այս ըն-

Թացքը կը բռնէ՝ ոչ թէ իբրև բարոյականի դրու-
 թիւն մը, այլ անոր համար որ անիկա մարդը
 մէկ հողևոր թաղաւորութեան մը անդամը կը-
 ճանչնայ, որուն մէջ կամքը ինքը գործք է, և
 բուն իսկ բնութիւնը, ու ոչ թէ անոր արտայայտ-
 ութիւնները դատաստանի տակ կուգան: Ինչաւ
 արտաքին գործքերը զսպելու համար հարկաւոր
 ըլլալուն համար չէ որ Քրիստոնէութիւնը չարու-
 թեան արմատին կը հակառակի, այլ որովհետև ա-
 նոր գործը իրական բաներու հետ է՝ և ոչ երևոյթ-
 ներու, կը պատերազմի նոյն իսկ չարութեան հետ,
 որ արդեամբ գոյութիւն չունի իբրև իր արմատէն
 որոշ:

Երկրորդ ծանօթութիւնը՝ որ առաջինին հետ
 սերտիւ կապուած է, այս է որ Քրիստոնէութիւ-
 նը իր արդիւող բնութեանը նկատմամբ ոչ թէ լոկ
 պատուէրներէ՝ այլ սկզբունքներէ բաղկացած կը-
 բօնք մըն է: Աոր Ատակարանը կը պարունակէ
 կենսական սկզբունքներ՝ ոչ թէ միշտ որոշ զրու-
 ցուած, այլ մէկզմէկու ետեւէ պարզուելով՝ և
 Քրիստոնէական ազգաց հետզհետէ ունեցած
 կարծեացը և սովորութիւններուն վերաբերութիւն
 ունենալով, արդեամբ կը վերցնեն անոնցմէ այն
 բորբոքեալ չարիքները՝ որ ժամանակ անցնելով
 դուրմարուած են, և քանի որ կը մնան շատ կը խա-
 միանեն կրօնական զգացումները, մինչև անգամ
 անոնց որ շատ խղճահար են: Աոր Ատակարանը
 իբրև աշխարհի համար բարոյականի դրութիւն
 մը բռնելով, դրութիւն մը՝ որ կամաց կամաց ին-
 քը զինքը պիտի պարզէ, մինչև որ մարդկային ըն-

տանիքը անով խաղաղութեան և սրբութեան ճամբուն առաջնորդուի, յառաջ կրտանի այս մեծ նպատակը, ո՛չ թէ այնքան շատ խօսքերով վերջապէս վերցնելիք չարիքները արգիլելով, այլ անանկ դիւրին ներգործող ազդեցութիւններ ի գործ դնելով՝ որ վերջը բան մը կարող պիտի չըլլայ անոնք արգիլելու: Ասանկով է որ Քրիստոնէութիւնը ըրաւ այն մեծ փոփոխութիւնը՝ որ կրճառայէր կանանց վիճակը բարելաւցնելու. վերցուց նախնի խաղարկութիւնները և մենամարտութիւնը, մեղմեց պատերազմին արհաւիրքը, և երկրի մեծ մասին վրայ գերութիւնը բնաջինջ ըրաւ, ու հիմա կրփութայ կատարեալ վախճանի մը բերել: Քրիստոնէութեան այս յատկութիւնն է որ տարածուելու զօրութիւն մը կուտայ անոր, և ամեն պարագաներու յարմարելու զօրութիւն մը, որով Քրիստոնէութիւնը յարմար կըլլայ մարդուն իբրև մարդ:

Արրորդ ծանօթութիւնը այս է որ Քրիստոնէութիւնը արգիլող և զսպող դրութիւն մըն է, միայն իր զարթուցանելու և առաջնորդելու յատկութիւնովը: Յայտնի է որ երկու կերպ անձնուրացութիւն կայ. մէկը վախով, որ է արտաքին՝ ծառայական և անարդիւնք. միւսը՝ սիրով, որ պարզև մըն է հոգիին և ոյժ կուտայ անոր առաքինութեան մէջ: Արչափ որ Քրիստոնէութիւնը անձնուրացութիւն կըստահանջէ, միօրինակ և միայն այս վերջին տեսակէն է: Անիկա մարդը աշխարհէն մէկգի չառներ, որ նստի տխրութեամբ և նախանձի այլոց զուարճութիւններուն՝

որոնց ինքը մասնակից չկրնար ըլլալ : Աթէ մէկդի կառնէ երբէք՝ աւելի բարձր՝ աւելի զուտ՝ աւելի աղնիւ և աւելի երջանիկ բանի մը կրկանչէ անոնք : Անոր անձնուրացութիւնը նման է իր մօրը ապրուստին և մխիթարութեանը համար աշխատող որդիի մը, և իր որդիին կրթութեանը կարող ըլլալու համար ինքզինքը զրկող մօր մը, և աղատութեան համար պատերազմի գացող զինուորի մը անձնուրացութեանը : Աման է մեծն Հովարտի անձնուրացութեանը, որ գրեթէ բոլոր Աւրոպա ճամբորդեց ստորերկրեայ բանաւերը մանւրով, որ «մարդկային թշուառութեան չափը առնէ», այնչափ հոգ ունենալով այս պաշտօնին վրայ՝ որ արուեստական ճարտարութեանց վրայ նայելու անգամ ժամանակ չէր ծախեր : Այս ո՞վ կրսէ թէ ունիցէ արուեստական գործքի մը տալ կարող եղածէն աւելի բարձր՝ և իր բնութեանը աւելի համաձայն հաճութիւն չէր վայելեր : Վերիստոնէութիւնը մարդը իր ամենամեծ օգուտին նպաստող ոչ մէկ հաճոյքէ մը կրղրկէ : Արդարեւ անհամաձայն բաները չկրնար հաշտեցնել, չկրնար զինուորութիւնը մէկ մարդու մը պարտքը ընել, և միանգամայն ընտանեկան հանգստութիւնը վայելել տալ. չկրնար մէկը ասպարէզին մէջ վազող ընել, և միանգամայն թողուլ որ հանգիստ նստի ասպարէզին մէկ քովը : Անիկա արդեամբ կրկանչէ մարդիկը որ զինուոր ըլլան, բայց իրենց փրկութեան Օրագլուխին զօրքին մէջ է որ կրկանչէ : Արդարեւ վազող կրնէ անոնք, բայց անմահ պսակ մը նպաստակ կրդնէ անոնց առջև :

Մտորովին սխալ կրթունեն Վրիստոսի կրօնքը ա-
նոնք՝ որ անիկա արտաքին կերպով արգելքներ
և սանձեր դնող դրութեան մը պէս տխուր ու խիստ
կրկարժեն : Ա՛յ անոր անձնուրացութիւնը սէրէն
է . անիկա արգելքի և զսպումի դրութիւն մըն
է՝ միայն զարժուցանող և առաջնորդող ըլլալով :
Թող Վրիստոնեաները կատարելապէս ազդուին
իրենց կրօնքին իրական գաղափարներէն և շար-
ժառիթներէն , և անկարելի է որ անոնց վարմուն-
քին մէջ Վրիստոսի և անոր առաքելոց վրայ ե-
ղածէն աւելի խիստ կամ սրբակրօն կամ տխուր
բան մ՝ ըլլայ : Միայն սէրէն յառաջ եկած անձն-
ուրացութեան ազդեցութիւնովն է որ ամենէն
բարձր աստիճանի բնաւորութիւնը կրնայ կազմուիլ :

Եւ ո՛չ Վրիստոնէութեան զարժուցանող և
զսպող բնութեանը վրայ խօսած ատեննիս , պէտք
է զանց ընել անոր շարժառիթներու զարմանա-
լի հաւասարակշռութիւնը և ամեն տկար կողմը
պաշտպանելու կերպը : Ասոր մասնաւոր օրինակ-
ներուն վրայ ըստ պատահման խօսած եմ . բայց
ընցուն է այս դրութիւնը անոնցմով : Այսպէս՝
ինչպէս որ հիմա յիշեցինք , երբ անձնասէր հը-
պարտութեանը դէմը կռնէ և կրվերցնէ՝ մար-
դուն ճշմարիտ վսեմութիւնը կը հաստատէ , երբ
ուրիշներէն վեր ըլլալու փափաքը կը զսպէ՝ ազ-
նուութեան փափաքը կը զոյգէ . երբ ամենախորին
ակնածութիւն կը պահանջէ դէպ ի Աստուած՝ ա-
նանկ կերպով է որ խանդակած և որդիական
վստահութեան դէմ չգար . երբ կը յորդորէ խո-
նարհութեան՝ որ այնչափ մասնաւորաբար Վր-

րիստոնէական առաքինութիւն մըն է, բնաւ մօտ
 չգար նուաստութեան կամ ծառայութեան: Անոր
 հետևողները «արամածներու պէս, ու միշտ ու-
 րախ» են, անիկա կը պահանջէ բարերարութեան
 գործքեր, բայց և այնպէս կարգիլէ պարծանքը.
 պնդիւ կը պատուիրէ բարեպաշտութեան և առ
 Աստուած ջերմեռանդութեան պարտքեր, բայց կը-
 մերժէ միանձնութիւն և անոր նման դրութիւննե-
 րը, հաւասարապէս մեր առ մարդ ունեցած պարտ-
 քերն ալ պատուիրելով. կը յորդորէ ընդհանրա-
 կան մարդասիրութեան, չժուլցնելու ընտանեկան
 և ազգակցութեան կապերը:

Արեւմն ելժէ այս յարմարութիւնը ունի Քրի-
 րիստոնէութիւնը մարդուն, ելժէ յարմար է անոր
 խղճին՝ իմացականութեանը՝ զգածումներուն՝ երե-
 ւակայութեանը և կամքին, կը զարթուցանէ և
 ուղղութեամբ կառաջնորդէ անոնք. ելժէ կը զսպէ
 միայն չար բաները՝ և այն ալ իր արմատէն, ելժէ
 անոր շարժառիժները զարմանալի կերպով հա-
 ւասարակչիւ են, անանկ որ անոնց յառաջ բե-
 րած բնաւորութիւնը շատ սիրուն ու վայելուչ
 ըլլայ, ուրեմն կը հետևի որ անիկա մարդը կա-
 տարելութեան ամենաբարձր աստիճանի պիտի հաս-
 ցնէ, ոչ միայն իբրև Քրիստոնեայ, այլ և իբրև
 մարդ: Արդարև կան մարդկօրէն ընժացքներ՝
 որ որոշակի Քրիստոնէաբար վարմունք չեն բայց
 ոչ մէկը կրնայ Քրիստոնեայ ըլլալ առանց աւելի
 աղէկ մարդ ըլլալու, կամ Քրիստոնէութեան մէջ
 յառաջ երթալ առանց մարդկութեան մէջ աւելի
 յառաջ երթալու. և ճշմարիտ մարդկութեան գա-

զառիարը Քրիստոնէական բնաւորութեան կա-
 տարելութեանը մէջ միայն կը բովանդակի : Աւ-
 ասկէ ինչ որ կը հետեւի անհատին վրայ, նոյն իսկ
 պատճառով հասարակութեան վրայ ալ կը հետեւի :
 Այժմէ կրնանք ենթադրել որ Քրիստոնէութիւնը
 հասարակութեան մը ամեն անհատին վրայ իր
 ներգործութիւնն ըրած է, այն անհատները՝ լեռը
 Սողոմոն թագաւորին բանուորներուն պատրաս-
 տած քարերուն ու գերաններուն նման, պիտի ըլ-
 լան պատրաստ՝ մէկ կատարեալ ընկերութեան
 շքեղ տաճար մը կազմելու առանց կացինի կամ
 մուրճի ձայնի : Աւ ինչ ներգործութիւն որ պէտք
 է՝ անհատները իբրև անհատ կատարեալ ընելու,
 և միանգամայն հոս մէկ երջանիկ ընկերութիւն
 մը կազմելու յարմարցնելու համար, հարկաւ նոյնը
 կը յարմարցնէ զանոնք այն կատարեալ ընկերու-
 թեանը որ կայ երկինքը : Այս մասին Քրիստոնէ-
 ութիւնը ինքզինքը մեր դատողութեանը կը յանձ-
 նէ : Անիկա ուրիշ կրօնքներու պէս ճէսերու՝ ար-
 տաքին ձևերու և արարողութիւններու վրայ հոգ-
 ջըներ, այնչափէն իզատ՝ որ կրնէ որչափ որ անոնք
 ազդեցութիւն ունին մեր բնաւորութեանը : Չգնեք
 բանին բնութիւնը չպահանջող կանոններ, որոնց
 պահանջութեանը համար վարձք խոստանայ հա-
 տուցման կերպով կամ սկզբունքով, այլ անոր
 բռնած ընթացքին վախճանը որոշ բնաւորութիւն
 մը կազմել է, և դժուար չէ հասկընալ որ անոր
 կազմած Բնաւորութիւնը իր խոստացած երկինքին
 պատրաստութիւն մ' ըլլալու համար ճիշդ պէտք
 եղած բնաւորութիւնն է : Արժանուցանէ թէ սուրբ

երկինք մը կայ, և իր մեծ նպատակը հաս մարդիկը սուրբ ընել է, որ յարմար ըլլան հոն մտնելու: Անոր գլխաւոր նպատակն այս է. բայց այս ընելու ատենը՝ մարդը երկրի բնակիչ ըլլալովը իր ունեցած ընկերութեան յարաբերութիւններուն պիտի յարմարցնէ, և այս նկատմամբ ամենարարձր կատարելութեան պիտի հասցնէ ամենալաւ կերպով:

Ասիկա անանկ նիւթ մըն է՝ որուն վրայ կը պընդեմ թէ մենք բաւականութիւն ունինք գատուութիւն ընելու: Ասիկա էականապէս հարկաւոր կէտ մըն է ամեն անոնց՝ որ կուզեն մարդկային ընկերութեան իր ներկայ վիճակէն յառաջ տանելու համար օգուտ մ' ընել: Մենք չափով մը մարդուն բնութեանը վրայ գիտութիւն ունինք, և կրնանք ստուգիւ դիտնալ թէ ինչ ներգործութիւն պիտի ընէ անհատին և հասարակութեանը, երբ Աստուածաշունչին տուած այն մեծ օրէնքին՝ որ է սիրոյ օրէնքին, ընդհանրական նազանդութիւն ըլլայ, և անոր պնդիւ հաստատած սկզբունքներն առ հասարակ պահուի: Վիտենք թէ ինչ կերպ ցուցուցած է Աստուածաշունչը երկինքը, և ստուգութեամբ կրնանք դիտնալ թէ անանկ վիճակի մը պատրաստուելու համար Վրիստոսի հետեւիլը բնական և հարկաւոր է: Իմ նպատակս Վրիստոնէութիւնը մարդուն բնութեանը հետ բաղդատել էր, որ տեսնուի անոնց մէկմէկու ունեցած յարմարութիւնը, և իմացուի թէ ինչ պիտի ըլլար այն բնութիւնը թէ բոլորովին զիջանէր անոր ազդեցութեանը: Այլ թէ և ասիկա

անկատար կերպով ըրինք, բայց և այնպէս եթէ
կրտեսնենք որ ամեն անհատ անձի կարողութիւն-
ները միայն Քրիստոնէութեան ազդեցութեանը
տակ իրենց ճշմարիտ զօրութեանն և համեմատու-
թեանը կրհասնին, եթէ կրտեսնենք որ հասարա-
կութեան վիճակը կատարեալ չկրնար ըլլալ ա-
ռանց անոր օրէնքներուն համաձայնելու, և եթէ
կրտեսնենք որ անիկա մարդը մէկ սրբութեան ու
սիրոյ երկինքի մը կը յարմարցնէ, միանգամայն
անոր ամեն կարողութեան ամենաբարձր աս-
տիճանի աշխուժութիւն և զարգացումն տալով,
ուրեմն պատշաճ է ըսել թէ եթէ այս կրօնքն
Մատուճմէ չըլլայ, տակաւին ճշմարիտ ըլլալու է,
և թէ եթէ Մատուճ կրօնք մը պիտի յայտնէ՝
ասկէ բարձր և ասկէ աղէկ բան մը ոչ կրնայ ա-
ռաջարկել ոչ ալ կրնայ ընել:

Հոս՝ Քրիստոնէութիւնը մարդուն բնութեա-
նը հետ բազմատեղէն եղած փաստը կրկնըմանայ:
Այս ուրիշ մը սովորաբար ֆորձառական ապա-
ցոյց Քրիստոնէութեան կոչուած՝ որ սերտիւ կա-
պուած է ասոր հետ, որովհետեւ եթէ այս կրօնքը
արդարեւ յարմարութիւն ունի այսպէս կատա-
րեալ ու զօրաւոր ներդործութիւն ընելու մտքին,
չկրնար ըլլալ որ ինքզինքը անոր ազդեցութեանը
տակ դնողը չստանայ բուն այն ազդեցութենէն
եղած մէկ խորին համոզում մը այն կրօնքին իմաս-
տութեանը, և անոր բնութեանն ու կարօտու-
թիւններուն ունեցած յարմարութեանը վրայ:
Եյս փաստին վաւերականութեանը վրայ այլև-
այլ կարծիքներ եղած է: Ամանք բոլորովին կը-

մերժեն անիկա իբրև մտքի ցնորք, իսկ ուրիշները կըսեպեն թէ անիկա Վրիստոնէին իրեն միայն վաւերական կրնայ ըլլալ, բայց ուրիշի մը համոզմանը հիմն ոչ պէտք է ընել՝ և ոչ կրնայ ըլլալ: Արեմն ինչպէս է այս փաստը. ինչ ըլլալու է անոր ներգործութիւնը՝ նախ Վրիստոնէից, և երկրորդ ուրիշներուն մտքերուն վրայ: Այս հարցումներուն պատասխանովս նիւթը վերջացընենք:

Ինչ է ուրեմն այս փաստին բնութիւնը, և հետեապէս ինչ ներգործութիւն ունենալու է Վրիստոնէին մտքին վրայ: Վրիստոնէան կը հաստատէ թէ ես Վրիստոնէութեան վրայ գիտութիւն մը, և անոր ճշմարիտ ըլլալուն վրայ համոզում մը ունիմ որ տրամաբանութիւնով ստացած չեմ, և անոր համար տրամաբանութիւնը չկրնար շարժել, և պէտք չէ որ շարժէ այն համոզումը: Արդ՝ միւթէ այն կրնայ ասանկ գիտութիւն և վստահութիւն ունենալ բանաւոր կերպով: Հատերը տրամաբանութիւնը բանականութեան հետ շփոթելով կարծեցին թէ բանաւոր վստահութիւն չենք կրնար ունենալ այն բանին վրայ, որ չենք կրնար տրամաբանութիւնով ապացուցանել: Ասկէ մեծ սխալմունք չկրնար ըլլալ. վասն զի մեր գիտութեան մեծ մասը տրամաբանութիւնով ոչ կստացուի, և ոչ անկէ կախում ունի: Այսպէս են բանականութեան բոլոր ներքին ճանաչումները և բոլոր զգայարանքով և փորձառութիւնով ստացուած գիտութիւնը: Արդէք գիտութիւն ստանալու բուն իսկ պայմանն ուղղակի զգայութեան

կարողութիւնն է, և ուր որ այս չկայ՝ տրամաբանութիւն չկրնար ըլլալ: Անչպէս մէկը չկրնար գիտնալ ապրելուն ինչ ըլլալը, առանց ապրելու, ոչ մէկը կրնայ գիտնալ տեսնելուն ինչ ըլլալը՝ եթէ ինք երբէք չտեսնէ, և զգալուն ինչ ըլլալը՝ առանց բնաւ զգալու, և ընդհանրապէս ոչ մէկը կրնայ գիտնալ թէ ինչ է այսինչ բան ըլլալը՝ առանց ինք այն բանն ըլլալու: Այսպէս ստացուած ուղղակի գիտութիւն է բոլոր տրամաբանութեան հիւմը, և անիկա խնդիրի տակ առնելը տրամաբանութեան յատուկ եղած սահմանէն դուրս է: Այն գիտութիւնը տրամաբանութիւնով չստացուիր՝ բայց ամենաբարձր աստիճանի բանաւոր է անիկա ընդունել և անոր համեմատ գործելը: Հիմա այս պէտք է հարցնել թէ կայ՞ Քրիստոնէութեան վրայ մէկ գիտութիւն մը՝ որ այս կերպով կստացուի. և Քրիստոնեայ ըլլալու համար պարզապէս հաւատալով է բանի մը, թէ բան մ' ըլլալու է:

Այս բանին համար կըսեմ՝ թէ եթէ Քրիստոնէութիւնը ճշմարիտ ըլլայ, ասանկ գիտութիւն մ' ունենալու է: Քրիստոնէութիւնը իրաւամբ կը հաստատէ իրեն համար թէ ծէսերու՝ արարողութիւններու և կամ փիլիսոփայական գաղափարներու դրութիւն մը չէ, այլ կեանք մը. և եթէ այսպէս է, այն կեանքը միայն վարելով կրնայ ճանչցուիլ. և եթէ այսպէս է, այն կեանքը վարելով անմիջական զգայութիւն և փորձառութեան գիտութիւն ստանալու է անոր վրայ, ինչպէս որ կստանանք բնական կեանքը վարելով:

Մտանց ասոնց՝ անսիկա պիտի ըլլայ մէկ ծէս մը՝
կամ դաւանութիւն մը հասկացողութեան մէջ տը-
պաւորուած, կամ մէկ արտաքին կանոն մը. այս-
ինքն մեռեալ ու երեւութական բան մը, և ոչ թէ
“Զուրի աղբիւր մը՝ որ յաւիտենական կենաց հա-
մար կըրդիսէ” : Մտանց ասոնց՝ անկարելի է որ
Քրիստոսի խօսքերը “հողի ու կեանք” ըլլայ :

Քրիստոնէութիւնը շատ անգամ իբրև մար-
դուն բարոյական հիւանդութիւններուն դեղ՝
մարմնաւոր հիւանդութեանց դեղերուն կրնաման-
ցուի, և որչափ որ ես կրնամ հասկընալ իրա-
ւամբ է : Հայտնի է որ մարմնաւոր հիւանդութեան
համար դեղ առնողը կրնայ ըլլալ որ անանկ ըղ-
գայութիւն և համողում մ՝ ունենայ դեղիններ-
գործութեանը վրայ՝ որ բոլորովին անկասի ըլ-
լայ մարդու վկայութենէ կամ տրամաբանու-
թենէ, և ասոնց մէկին կամ երկուքին մէկէն
տալ կարող եղած վստահութենէն աւելի յազե-
ցուցիչ : Այնչափ զանազան եղանակաւ կրնայ
փորձել դեղը, և անանկ կրնայ հսկել իր հիւան-
դութեան վրայ դեղն առած կամ չառած ատե-
նը, որ անոր ներգործութեանը վրայ արեւուն ծա-
ղելէն և մտնելէն աւելի տարակոյս չունենայ :
Ասիկա անանկ մէկ բան մըն է որ ներքին ճանաչման
և ուղղակի ստացուած գիտութեան առարկայ է,
և ի դուր է այսպէս յառաջ եկած վստահութիւնը
վերջնելու ջանքը : Մտէ՛ անոր թէ՛ Ղուկ հիւանդ
չես, և բնաւ հիւանդ եղած ալ չես, և քու առած
դեղդ մէկ կաթիլին հարիւր հազարերորդ մասն
էր, վասնորոյ քեզի օգուտ մը չէր կրնար ընել,

բայց անանկ փորձառութիւն մը կրնայ ունեցած ըլլալ, որ բանականութեան հակառակ և յիմարութեան անդիմ ծայրը պիտի ըլլար անոր իր դեղը մէկդի ձգելը ուրիշ տրամաբանական պատճառով մը : Այս պէտքերը միտքը կարծննայ իր հոգեւոր վիճակին վերաբերեալ իրական բաներուն . եթէ՛ քանի որ խիղճը դժբանայ և բարոյական աչքը մաքրուի, իմացուի որ մէկ զարմանալի համաձայնութիւն մը կայ մարդուն իր անձին վրայ ըրած դիւտերուն և մարդկային սրտին վրայ Աստուածաշունչին մէջ դաժանեցողութիւններուն մէջ, եթէ՛ այս համաձայնութիւնը տեսակաւ նոյն է մարդկային բնութիւնը քաջ ստորագրողներուն գրութեանցը մէջ դաժանեցողութիւն հետ, բայց աւելի կատարեալ եթէ՛ քան անանկ է որ մէկ չկրճուած մարդ մը Աստուածաշունչը նոր ձեռք առած ատենը իրեն անանկ կուգայ որ յարմար-կըլլայ իրեն ըսել, ինչպէս մէկը մօտերս ըսաւ, թէ «Արտեսնեմ որ մարդու մը պատմութիւնը իր ծնանելէն առաջ գրուած կըլլայ եղեր», եթէ՛ կրտեսնէ իր անձին մէջ անանկ կարօտութիւններ և հոգիի անօթութիւններ և ծարւութիւններ որոնք յազեցնելու համար Քրիստոնէութիւնը՝ և ոչ ուրիշ բան պատրաստութիւն կրնէ, և կողմայ որ այն պատրաստութիւնը ճիշդ իր կարօտութիւններուն յարմար է, եթէ՛ կրտեսնէ ինքզինքը մէկ պատերազմի մը մէջ որուն յարմար զէնք միայն Քրիստոնէութիւնը կուտայ, եթէ՛ աղօթքի պատասխաններ կրնդունի, և շնորհք կըգտնէ պէտք եղած ատենը օգ-

նելու, անանկ որ իր չար յօժարութիւնները կը-
 յաղթուին և իր առաքինութիւնները կը զօրանան,
 անատենը Քրիստոնէական կրօնքին ճշմարտու-
 թեանը վրայ տարակուսիլը իր զգայարանքին վկա-
 յութեանը տարակուսելէն աւելի բանաւոր պիտի
 չըլլայ իրեն : Աթէ Քրիստոնէութիւնը ճշմարիտ
 է, բնականապէս յարմար է ակնկալել որ Քրի-
 ստոնեան փորձառութեամբ իր սրտին և Աս-
 տուածաշունչին մէջ ասանկ համաձայնութիւններ
 և ասանկ կարօտութիւններ, ու անոնք յագեցնող
 պաշարներ՝ անանկ օգնութիւններ և անանկ յաղ-
 թութիւններ պիտի իմանայ. և կը համարձակիմ
 ըսել թէ ոչ մէկ կրօնք մը կրնար Քրիստոնէու-
 թեան ընելու առաջարկածները ընել մարդուն՝
 առանց իր աղգեցութեանը տակ եղողներուն այս
 տեսակ վկայութիւն տալու :

Աւ ոչ միայն կրնանք բանաւորապէս ակնկալել
 վստահութեան ասանկ հիմ մը, այլ Քրիստոնէու-
 թիւնն ինքը ճանչնալով իր բնութիւնն և այն հի-
 մունքը՝ որով անոր կը հաւատացուի, կը խոստանայ
 տալ անիկա ամեն անոնց՝ որ ինքզինքնին անանկ դիր-
 քի մը մէջ կը գնեն որ անոր օգուտը վայելեն : «Թէ
 որ մէկը կուզէ», կըսէ Քրիստոս, «անոր կա՛մքը
 ընել, պիտի գիտնայ այս վարդապետութեանս հա-
 մար» : «Ան որ», կըսէ Յովհաննու թուղթը, «Աս-
 տուծոյ Արդիին կը հաւատայ, վկայութիւնը իր մէ-
 ջը ունի» : «Այն ինքն շողին», կըսէ Պօղոս Ա-
 ռաքեալ, «վկայութիւն կուտայ մեր հողիին, թէ
 մենք Աստուծոյ որդիքն ենք» : Քրիստոնէութիւ-
 նը այս վկայութիւնը անհրաժեշտ հարկաւոր կը-

սեպէ : Մինչև որ այս վկայութիւնը չընդունուի , Վրիստոնէութիւնն օգուտ մը ըրած չսեպեր ինքզինքը : Մինչև որ այս չըլլայ , նման է անիկա այն բժշկին՝ որ կրկենայ հիւանդին քօլն և կըցուցնէ իր ճարտարութեան վկայութիւնները , բայց բան մը չըներ և՛ թէ հիւանդն այնչափ առտէ այն դեղը՝ որ աւելի ընտրէ ցաւը քաշել և ախտին հետևութիւններուն ենթակայ ընել ինքզինքը , բան թէ դեղն առնել : Արդարև հոս է դժուարութեան մեծ կէտը , մարդիկ ոչ թէ այնչափ Վրիստոնէութեան ճշմարտութեանը վերայ իմացական կերպով համոզուած չեն , որչափ որ զանց կրնեն անիկա իրենց անձին վերաբերելը , որով կըզրկեն ինքզինքնին վստահութեան ամեն հնարաւոր հիմերէն բարձր եղածէն , որ է փորձառութեան հիմը :

Այլ ինչպէս որ այս վկայութիւնը բանին բընութենէն կը յուսացուի թէ պիտի ըլլայ , և Սուրբ Վրոց մէջ կըխոստացուի , ըստ այնմ կըտեսնենք որ ամեն ճշմարիտ Վրիստոնեայ ունի անիկա , թէպէտ աստիճանաւ . ո՛չ երբէք իրենց ուսման ու տաղանդին համեմատութեամբ , այլ իրենց հաւատքին անկեղծութեանն և իրենց հնազանդութեան կատարելութեանը համեմատ : Աւստի անիկա գիտութիւն պահանջող զանազան վկայութիւններուն աննման՝ ամենուն բաց է . և կըկազմէ ամեն դարու և ամեն աստիճան կրթութիւն ունեցող Վրիստոնէից համար մէկ վստահութեան հիմ մը , որ թերևս իրենք չեն բերեր իբրև ապացոյց , բայց ապացոյց մըն է բանա-

ւոր և յագեցուցիչ ամենուն : Քիչիսուիային յագեցուցիչ է , որովհետև կրնայ վերածել անիկա անոր սկզբունքներուն , և կրնայ իմանալ որ անոր վստահելովը ճիշդ այն տեսակ վկայութեան վստահած կրլայ , որով մարդ կրվստահի ամեն ուրիշ ներքին իմացման առարկայ եղող նիւթերուն վրայ . և ոչինչ նուազ յագեցուցիչ է ռամկին ալ՝ այն ողջամիտ վստահութիւնովը՝ առանց մանուածոյ մտաւոր գործողութիւններու , որով կստանանք բոլոր մեր նախնական գիտութիւնը , այսինքն ներքին հմտութեան վերաբերեալ գիտութիւնը : Միայն ռսուամնական մարդիկ զբժուար կրնդունին՝ որ ռամիկ մարդկանց միտքերն ալ կրնան բանաւոր ճանաչում ունենալ մեծ և բարձրը խորհրդածութիւններ պարունակող ճշմարտութիւններու վրայ : Չեն որոշեր բուն մեր հոսքիւններուն կազմութիւնը և զգածութիւններուն ազդեցութիւնը գիտնականներուն ըրած սկզբունքներու գեղեցիկ վերլուծութիւններէն , անոնց տուած ճիշդ սահմաններէն ու հանած տրամաբանական հետեւութիւններէն և լուծած խրթնութիւններէն : Արոշում չեն ըներ բնազանցական գիտութեան վերայ իրենց ունեցած տեսական գաղափարներուն՝ և այն նախնական ճշմարտութեանց ու բանականութեան թելադրութիւններուն մէջ , որոնք ամենուն սրտին մէջ դրուած են ի բնէ . և կը պատրաստեն մարդիկ որ տեսնեն աւետարանին փառքը , և զգան անոր ազդեցութիւնը , և երկուքովն ալ տրամաբանելով գտնեն Քրիստոնէութեան Նստուծմէ ըլլալը : Մէկն իմացականութեան ազնուացնող գործաւ

ծուծիւնն է, միւսը բոլոր իմացական և բարոյա-
կան դիտութեան արմատն և սերմն է, որ կրմնայ
անգործ և թաղուն՝ մինչև որ առիթները յայտ-
նեն անհկա . և անատենը կենդանութեամբ և
ուժով երևան կելնէ :

Այս վկայութիւնն այսպէս ընդհանրական
ըլլալով՝ կը ցուցնէ թէ ի՞նչ է ճշմարիտ պատճա-
ռը որ Քրիստոնէութիւնը մարդոց մտքերը կը-
բռնէ, և այնքան բարձր աստիճան մ' ունի՝ երկրի
վրայ տարածուելու և խմորելու կարողութեան մա-
տին : Ասով է որ տկարը զօրաւոր կըլլայ և վախ-
կոտը քաջ . և ամեն կարգի անձինքներէ մար-
տիրոս եղած է, միանգամայն այս կրօնքին սկզբ-
նաւորութեանն և զօրութեանը նոր եղած ատե-
նը, և իր ծագումն առած տեղը, և Վատագաս-
կար հեռաւոր կղզիին և անոր կէս բարբարոս
բնակիչներուն մէջ : Վիտեմ որ կըսեն թէ Ամեն
կրօնք իր մարտիրոսները կրնայ ցուցնել, և մէկ
մարդու մը իր կրօնքին համար մեռնիլը՝ միայն իր
անկեղծ ըլլալը կը ցուցնէ, և ոչ բնաւ կրօնքին ճշ-
մարտութիւնը : Վայց ինձի կերևի թէ Քրիս-
տոնէական կրօնքն այս մասին ուրիշ կերպ է՝ մեր
հիմակուան քննած կէտին պատճառաւ, և անոր
մարտիրոսութիւնն անկէ աւելի բան մը կը ցուցնէ :
Մարտիրոսութիւնն արդարև բան չցուցներ մաս-
նաւոր կարծիքներու, զորօրինակ Քրիստոնէա-
կան այլևայլ աղանդներուն ճշմարտութեանը
կողմանէ : և պատշաճ է տարակուսիլ թէ ուրիշ
կրօնքներ ունեցած են մարտիրոս եղող անձինք՝
բառին ճիշդ նշանակութիւնովը : Ի հաստատու-

Թիւն ասոր՝ ուրիշ ո՞ր կրօնքէ ինչևիցէ նշանաւոր
 Թիւով անձինք կրնայ ցուցուիլ թէ իրենց կեանքը
 դրած ըլլան լոկ կրօնքին վրայ իրենց ունեցած
 հաւատքին համար, առանց փառասիրութեան
 և կողմնականութեան ոգիի. ես մէկ կրօնք
 մը չեմ գիտեր: Ա՞ր ուրիշ կրօնք կրնար
 Մատաղասկար կղզին երթալ, և կրնար համոզել
 մարդիկ որ առանց պատուոյ կամ շահու
 գրգռին, այլ ընդդէմ բոլոր այս տեսակ շարժա
 ութներուն և բարեկամներուն թախանձանք
 ներուն փոխեն իրենց կրօնքը, և յետոյ լոկ իրենց
 ընդունած նոր կրօնքին պատճառաւ անդին աս
 դին պարտին, խեղճ՝ տառապեալ՝ չարչարուած, և
 վերջապէս իրենց կեանքն ալ զոհեն: Այս հոս կր
 տեսնուի որ նոյն սկզբունքի ներգործութիւնն է
 միայն՝ որ Հռովմայեցւոց Ապստոլուն ժամանակը
 ամեն կարգի մարդոց յանձն առնել տուաւ ամ
 մեն բանի կորուստը և մարտիրոսութիւնը: Աս
 անկ մարտիրոսներ՝ որ էին շատ լուսաւորեալ
 փիլիսոփաներ և դիտնականներ, հասարակ ժողով
 րոցոց՝ կանանց և մինչև անգամ տղոց բազմութիւններ
 յայտնապէս նոյն հաւատքովը հաստատուած՝ վատահո
 ւթեամբ կրսեմ թէ Վրիստոնէական կրօնքին յատուկ են:
 Աշխարհիս պատմութիւնը այս մարտիրոսութեան նման
 բան չկրնար ցուցնել, և ով որ անաչառութեամբ կր
 քննէ անիկա՝ պիտի խոստովանի որ ոչ միայն անիկա
 կրօնքին անկեղծութիւնը, այլև այն կրօնքին մարդկային
 միտքը հաստատ բռնելու յարմարութիւն՝ և հիմա իմ
 խօսած կերպովս մտքի համոզում

յառաջ բերելու կարողութիւն ունենալը կը-
ցուցնէ. եւ այս կարողութիւնովը կը պարծենանք ։
Արցունքնք անիկա անհաւատին , և կըսենք ի-
րեն թէ Վանի որ այս կարողութիւնը կըմնայ ,
Վրիստոնէութեան դէմ իր հակառակութիւնը
պարսպ է . դուն տրամաբանէ՝ ծաղր ըրէ՝ նախատէ ,
և Պլինիոսի պէս անանկ սեպէ թէ «ասանկ ան-
պարտելի յամառութիւնը պէտք է պատժել» , և հա-
լածէ ու մեռցուր , բայց բնաւ պիտի չկրնաս ճշմա-
րիտ Վրիստոնէին իր հաւատքն ուրանալ տալ ,
կամ արգիլել այն գաղտնի՝ բայց զօրաւոր քար-
շումներուն ներգործութիւնը , որով Վրիստոն-
եան աւելի կը յարի իր կրօնքին , քան թէ իր
մերձաւորներուն կամ հարստութեանը կամ կեան-
քին :

Արեմն եթէ այս վկայութիւնն անանկ բը-
նութիւն մ՝ ունի՝ որ դեղի պէս ամեն վործող-
ներ կըտեսնեն անիկա , եթէ Սուրբ Վրոց մէջ
խոստացուած է , եթէ Վրիստոնէից վարքին մէջ
կըտեսնենք որ անոնց քովը կայ անիկա , իրա-
ւամբ կրնանք հետեցնել որ անիկա կրօնքին ճշ-
մարտութեանը վստահանալու բանաւոր և յազե-
ցուցիչ հիմն պիտի ըլլայ իրենց :

Բայց անհաւատը կրնայ ըսել՝ թէ Այս ամենը
չատ աղէկ կուգայ Վրիստոնէին իրեն , բայց
ինձի վկայութիւն մը չկրնար ըլլալ : Արեմն նա-
յիւք թէ վկայութիւն չըլլար անաչառ մարդուն ,
և նայիւք թէ՛ ինչպէս շատ անգամ կրնեն , ա-
սիկա ալ կրօնքին վրայ՝ ուրիշ բանի վրայ եղա-
ծէն տարբեր կանոնով և անկէ տարբեր դատո-

զուժիւն ընել ուզել չէ՞: Ինձի անանկ կըթուի
 թէ պարզապէս փնտռելու բանը սա է թէ այս
 տեսակ վկայութիւնը Վրիստոնէին իրեն բաւակա՞ն
 է, վասնզի եթէ բաւական է՝ ուրեմն անկողմնա-
 կան քննիչը այնչափ պարտաւոր է ընդունիլ անոր
 վկայութիւնը, որչափ որ կընդունի հիւանդ եղող
 մարդու մը վկայութիւնը մէկ դեղի մը զինքը բժշ-
 կելուն վրայ: Այժմէ վկայութիւննին ընդունուող
 շատ մը մարդիկ ըսեն թէ Մենք մէկ ախտէ մը այս-
 ինչ դեղովը բժշկուեցանք, չկայ մարդ որ ըսէ թէ
 Անոնց վկայութիւնն այն դեղին համար իմ միտ-
 քըս համոզելու օգուտ չունի. թէև ինք անձամբ
 ըրած չէ այն փորձը՝ որուն վրայ հիմնուած է այն
 վկայութիւնը: Այժմէ ըսեն թէ Վրիստոնէին ի-
 րեն բաւական եղած ապացոյցը հիմնական չէ, և
 յուզեալ մտքի ցնորմունք է, բարի. այդ կէ-
 տը առաջ աղէկ մ'որոշելու է: Իսկայց եթէ ա-
 ղէկ ապացոյց է անոր՝ ուրեմն այս նիւթին վրայ
 ալ անոր տուած վկայութիւնը ուրիշ նիւթերու
 եղածին պէս ընդունելու է: Այս վկայութիւնը
 շատ վկաներու վկայած վկայութիւն է. և ես հա-
 մոզուած եմ որ եղելութիւնները քաջ քննելով՝
 և անոնցմէ Պարօն երևելի հեղինակին օճովը
 զգոյշ հետևութիւն հանելով՝ այս փաստին վա-
 ւերականութիւնը բոլորովին կը հաստատուի, և այս
 վկայութեան բուն ինչ զօրութիւն ունենալը կըս-
 տուգուի: Ամեն պարագայ միաբան կը ծառայեն
 անոր ոյժ տալու. անիկա միայն ճշմարիտ ևն-
 թաղրելով կընանք մեկնել՝ անոր սքանչելի միօ-
 թինակութեամբ և նոյնութեամբ ամեն դարու և

ամեն երկրի մէջ 'և ամեն կերպ' տաղանդի և մը-
տաւոր մշակութեան տէր անձինքներէ վկայուի-
լը: Մտադրապէ մեկզմէկու հետ աւետարանին զօ-
րութեանը վրայ Արուեստանապի և Վանտուիչ կղզիին
դարձի եկած Վրիստոնեաներուն և Մեգղիացի
ու շօղենդացի Վրիստոնեաներուն ըսածները, 'և
անոնց ամենուն մէջ մէկ էական նոյնութիւն մը
պիտի տեսնես: Մեծնք ամենը զղջումէ ըրեր են,
հաւատացեր են՝ սիրեր են՝ հնազանդեր են | և
ուրախացեր են, անոնք ամենը նոյն դժուարու-
թիւններուն և նոյն օգնութիւններուն վրայ կը-
խօսին: Աւ այս բաներուն վրայ անոնց խօս-
քերն աւելի զօրութիւն ունին՝ անոնց իբրև վը-
կայութիւն չըրուցուելովը, այլ յաւէտ երաժշտա-
կան ներդաշնակ ձայներու կրնմանին, որ ար-
դարև կըզանազանին մեկզմէկէ կատարելութեան
և ուժգնութեան կողմանէ, բայց և այնպէս՝ կը-
ճանչցուի որ մէկ նուազարանի վրայ մէկ ձեռ-
քի զարկած ձայներ են: Աթէ պատշաճ է յիշել
հօս Վրիստոսի՝ Սուրբ շօղին հովի նմանցը-
նելը, պիտի ըսեմ թէ Մեն կլիմայի մէջ և ամ-
են պարագայի տակ այն Մատուածային զօրու-
թիւնը նոյն քաղցր ձայները կըհնչեցնէ, ամեն
որ ասին որ նորոգուած հողի մը օղեղէն նու-
ազարանին կըզպչի: Աւ այս միակերպ վկայու-
թիւնը ներքին զգացումները լոկ իմացնել չէ,
այլ իբ հետը կայ վարուց փոփոխութիւն և ա-
պաշխարութեան արժանաւոր պտուղ, որ կըցուցնէ
սկզբունքի տեղական փոփոխութիւն: Այս և այս
վկայութիւնը ճշմարտութիւնը յայտնելու ամենա-

յարմար պարագաներու տակ դրուած է , այսինքն
 տառապանաց ու աղքատութեան մէջ և մահուան
 անկողինի վրայ : Արչափ անձինք և ո՛րչափ բազ-
 մաթիւ անձինք իրենց վերջին ժամուն վկայու-
 թիւն տուին աւետարանին միսիթարիչ զօրու-
 թեանը : Այլ միթէ մէկն եղա՞ծ է , միթէ մարդ
 լա՞ծ է անանկ մէկը որ Քրիստոնեայ ըլլալուն
 զղջացած է այն ժամուն : Ինչո՞ւ չես ընդունիր
 ուրեմն այս վկայութիւնը : Միթէ քու փոր-
 ձառութիւնդ ինչ բանի հաւատալիքդ որոշելու
 կանո՞նը կուզես ընել : Աւրեմն կը հրաւիրենք
 քեզ որ Քրիստոնեայ ըլլաս , և ստանաս այս փոր-
 ձառութիւնը : Այն մարդուն նմա՞ն կուզես ըլ-
 լալ՝ որ Առնթագին լուսին ունենալուն չէր հա-
 ւատար , բայց և այնպէս չէր ուզեր Վալիլէօսի դի-
 տակովը նայիլ՝ վախնալով որ կը տեսնէ անոնք :
 Վայէ հաւատոյ աչքով աւետարանին , և եթէ
 չտեսնես նոր բարոյական երկինքներ , ալ բան
 չունիմ ըսելու : Չես հաւատար որ այնինչ տեղը
 ձայնը արձագանք կընէ , ու պէտք եղած տեղէն
 ահանջ դնելով մտիկ չե՞ս ըներ , որ անձամբ
 փորձես այս իրողութիւնը : Ահանջ դիր աւետա-
 րանին , և եթէ չես երեք աշխարհներէ եկած
 ձայներ , ալ բան չունիմ ըսելու : Չես հաւա-
 տար որ ծիածանին գոյները ջուրի կաթիլին մէջ
 կը տեսնուի , ու չե՞ս նայիր այն ուղղութիւնովը ո-
 ռով միայն կրնայ տեսնուիլ : Աամ թէ եթէ կը-
 կարծես որ ասոր նման բան չկայ իմացական բա-
 ներուն մէջ՝ որ անտարակոյս կայ , խաբուած ու ջը-
 նորա՞ծ պիտի կարծես այն մարդիկը որ անանկ կը-

խօսին թէ բարձր աստիճանի հաճոյք կրկայեղեն արուեստական գործքերը զննելով, մինչև որ քուճաշակդ ալ այնչափ չմշակուի որ նոյն հաճոյքն զգաս : Արդարև ասկէ յիմարական բան չըլլար մարդոց՝ որ ասանկ բաներու մէջ լոկ իրենց փորձառութիւնը իրենց ինչի հաւատալիքը որոշելու կանոնը ընեն, բայց և այնպէս մերժեն այն պայմաններն՝ որով այն բաները կրնան փորձուիլ :

Այսպէս ևս ջանացի ցուցնել նախ թէ Քրիստոնէութեան մէջ ինքզինքը ապացուցանող զօրութիւն մը կայ, և Քրիստոնէին փորձառութեան գիտութիւնը իրեն վաւերական հիմ մըն է հաւատոյ. և երկրորդ՝ թէ կատարեալ միտքի տէր մարդ մը պիտի ընդունի անոր այն գիտութեանը վրայ տուած վկայութիւնը, ինչպէս որ ջուրի կաթիլին մէջ եղած գոյներուն՝ կամ մէկ մասնաւոր տեղի մը արձագանք ընելուն՝ կամ ճաշակի հաճոյքներուն՝ կամ ուրիշ ուրիշ բանի վրայ, որուն անձամբ փորձն ընելու յարմար պարագաներու մէջ չէ գտնուեր :

Քրիստոնէութեան մարդուն կազմութեանը յարմարութիւն ունենալուն հետ կից կապակցած ապացոյց մըն ալ կայ, որ հիմա պիտի քննենք : Աստուծմէ բոլոր մարդոց համար եղած կրօնքի մը վրայ ընդհանրական ըլլալու յարմարութիւն մը և հակում մը տեսնուելու է. և եթէ Քրիստոնէութիւնը մարդուն կազմութեանը իմ հաստատած յարմարութիւնս ունի, ուրեմն ընդհանրական ալ ըլլալու յարմարութիւն և հակում պիտի ունենայ :

Բայց Վրիստոնէութեան ընդհանուր ըլլալու յարմարութիւնը կը ծագի այնչափ իր չունեցած յատկութիւններէն՝ որչափ որ ունեցածներէն . և կատարելապէս կրնայ իմացուիլ անոր առարկային՝ մարդուն ամեն կերպ վիճակին ունեցած վերաբերութեանը միայն նայելով : Այս առարկան բարոյական առարկայ է , առանց բնաւ երկրաւոր բանի մը շուքն ըլլալու անոր վրայ . և Վրիստոնէութեան այս առարկային հետեւելու համար բնաւ հարկ չէ քաղաքական կամ տեղական խնդիրներու խառնուիլ : Անիկա մարդը կրնկատէ իբրև լոկ բարոյական և հոգևոր էակ Աստուծոյ կառավարութեանը տակը . և սկիզբէն որոշակի գրուցուած է որ անոր նպատակը փրկել է մարդիկ այն կառավարութեանը տակ գործուած յանցանքներուն հետեւութիւններէն :

“Անոր անունը՝ Յիսուս դնես . քանզի անիկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ” :

Ոչ թէ Հռովմայեցւոյ լուծէն , և ոչ մէկ երկրաւոր շարիքէ մը նախնականապէս , այլ իրենց մեղքերէն : Այս եղական առարկային վրայ անընդհատ կը պահէ Վրիստոնէութիւնն իր աչքը : Արդի մարդոց եկաւ “կորսուածը փրկելու” :

Անիկա պարզապէս Աստուծոյ կառավարութեանը տակ գործուած մեղքէն ու անոր հետեւութիւններէն ազատութեան կարգադրութիւն մըն է . և մէկ մարդ մը որ հասակի մէջ որ ըլլայ ինչ լեզու որ խօսի՝ կամ ո՞ր երկիր ու ինչ տեսակ կառավարութեան տակ որ բնակի , Վրիստոնէութիւնը միօրինակ յարմարութիւն ունի ա-

մեն Մ. դամի զաւակ եղողին որ կը համոզուի ընել
սա հարցումը՝ թէ «Վնձի ինչ պէտք է ընել, որ
փրկուիմ» : (Սողութիւն և յոյս կը բերէ իր հե-
տը այն ամենուն որ կզգան մեղքին գէշութիւնը
կամ «որ մահուան վախովը միշտ ծառայութեան
մէջ կ'ապրին» :

Կան քանի մը երևելի բարոյական առարկա-
ներ՝ որոնք առ. հասարակ ամեն մարդու բարե-
լաւութեանը կը վերաբերին, անանկ լարեր մարդ-
կային սրտին մէջ, որ կը ճոճեն երբ որ զարնուին,
և զարմանալի է որ Վրիստոնէութեան գործը
միայն այն առարկաներուն հետ է և միայն այն
լարերը կը զարնէ : Իր գործը անհատներու հետ՝
Մ. ստուծոյ կառավարութեանը տակ իրենց յան-
ցաւոր ըլլալուն նայելով է, առանց անոնց երկ-
րաւոր յարաբերութիւններուն նայելու, վասնորոյ
զօրութիւն ունի իբրև նոր տարր մէջ մանելու և
ամեն կերպ ընկերութեան մէջ տարածուելու, և
անիկա լուսաւորելու՝ ինչպէս որ արևուն լոյսը
մթնոլորտին զանգուածը կը թափանցէ և անոր
մէջ կը տարածուի : Աւ անոր համար նոր տարա-
ծուիլ սկսած ատենը՝ երկնից հովին պէս համար-
ձակ յառաջ խաղաց անցաւ ամեն քաղաքական
ու ազգային սահմաններէն : Բոլոր ուրիշ կրօնք-
ները մասնաւոր կլիմաներու կը յարմարին, և Հրէից
կրօնքին պէս մասնաւոր տեղերու հետ կցուելով
կրնան բռնուիլ, բայց որովհետև Վրիստոս վե-
րին ճշմարիտ խորանը մտաւ, վասնորոյ անուշա-
հոտ և սուրբ պատարագ կրնայ մատուցուիլ ամեն
տեղէ : Բոլոր ուրիշ կրօնքները կառավարութեան

Հետ կապակցած են . և նշան մը չկայ կարծելու
 թէ առանց այս կապակցութեանը կրմնան անոնք :
 Բայց «Վրիստոնէութիւնը իբրև հոգևոր դրու-
 թիւն մը միշտ ամեն մարդկային կարգադրու-
 թիւններէ վեր է» : Այլ քանի դրութիւններ
 Վրիստոնէութեանը յառաջադիմութեանը դէմ
 ուրիշներն աւելի մեծ արգելքներ կրնան դնել ,
 բայց ոչ մէկը կրնայ Վրիստոնէութիւնն ըլլալ ,
 և անոնցմէ մէկը անոր բան մը չկրնար ընել , եթէ
 ոչ համարձակութիւն տալ անոր որ ընէ իր յա-
 տուկ ներդործութիւնը անհատից որպիսութեանը
 վրայ : Վրիստոնէութիւնը ոչ միապետութիւն է
 և ո՛չ ռամկապետութիւն , ոչ եպիսկոպոսականու-
 թիւն և ոչ երիցականութիւն , այլ մէկ բան մըն է որ
 կրտարածուի և հասարակութիւնը կրբարելաւցնէ՝
 անոնցմէ որն որ հոն գտնուի . և եթէ վերցուի և
 այս դրութիւններէն ուրիշ մէկը մինակ թողուի ,
 մարդկային կիրքերը և սրտին խանգարումը անոր
 մէջ իրենց արգիւնքը պիտի ընեն , առանց բարի
 բան մը անոնց հետ խառնուելու և անոնք մեղմե-
 լու : Անոր համար նաև Վրիստոնէութիւնը ո՛չ
 մէկ մարդկային սահմանադրութեան մը ուղղակի
 կը հակառակի : Անիկա կերթայ գերիին՝ և կըսէ ա-
 նոր թէ՛ Ղուն Տիրոջը՝ յազատն ես . կերթայ անոր
 տիրոջը և կըսէ՝ Վրիստոսի ծառան ես . տիրոջը և
 գերիին միանգամայն կըսէ՝ թէ՛ Ղուք եղբայր էք .
 կերթայ թագաւորին և կըսէ անոր՝ Ղուն հպա-
 տակ ես բարձրագոյն իշխանութեան մը . կերթայ
 հպատակին և կըսէ թէ՛ Ղուք կրնաք թագաւոր
 ու քահանայ ըլլալ Աստուծոյ : Անիկա ամեն մարդ

ընդհանրական անմահութեան հաւասարութեանը
 կը հանէ . և կիջեցնէ անոնք ամենը ընդհանրա-
 կան մեղանշականութեան և դատաւարութեան
 հաւասարութեանը . ամենը ընդհանրական պա-
 տասխանատուութեան ենթակայ կընէ . ամենուն
 կառաջարկէ մէկ ընդհանրական փրկութիւն մը . և
 անոնց ամենուն առջևը կը դնէ մէկ կատարեալ
 իրաւանց օրէնք մը և ընդհանրական սիրոյ սկզ-
 բունք մը . և անատենը կը թողու որ այս սկզբունք-
 ները և շարժառիժները գործեն իրենց արդիւն-
 քը , անտարակոյս ըլլալով որ ո՛րչափ որ ի գործ
 դրուին անոնք՝ հարկաւ պիտի փոխեն իր ոգիին
 հակառակ եղած ամեն մարդկային սահմանադրու-
 թեան բնութիւնը , եթէ ոչ անունը : Անիկա կա-
 ռող է առնել մարդկային սահմանադրութիւնները ,
 ինչպէս որ մշակութիւնը ձեռք առաւ դեղձին
 ծառը՝ երբոր անիկա կարճ թուր մըն էր , և պտուղը
 թունաւոր , և ուրիշ հիւթեր ու կենսական հե-
 ղուկներ անոնց ծակտիքներուն մէջէն քալեցնել
 և շատ տարբեր պտուղ մը անոնց ճիւղերէն
 կախուիլ տալ : Անիկա կատարելապէս կը հասկընայ
 որ ո՛չ մէկ արտաքին ձևի փոփոխութիւն մը մէկ
 տեղական յարգ մը ունի , առանց ոգիի փոփո-
 խութեան . և կընայի որ (ո՛ւր էր որ մարդիկ սոր-
 վէին այս դասը) ձևի փոփոխութիւնը միայն հո-
 գիին փոփոխութենէն յառաջ գայ : Ասանորոյ
 կը գործէ խմորի նման , որ կանցնի մասունքէ մա-
 սունք և տեղ մը չկենար մինչև բոլոր զանգուա-
 ծը խմորի : Անոր համար այս ալ կը ծանուցանեմ
 որ Քրիստոնէութիւնը բռնաւորներուն և ամեն

կերպ հարստահարութեան բոլոր թշնամիներուն
ամենէն ահաւորն է: Պատեր կամ պատնէշներ
կամ զինուորեալ զունդեր չեն կրնար անիկա ետ
պահել, և ոչ զէնքը կրնայ անիկա վերաւորել:
Մարդոց խիղճերուն լռիկ մը ներգործելով ան-
կարելի է գիտնալ թէ ուր է կամ ո՞ր աստիճան
յառաջ գացած է, և հակառակորդը չգիտեր ո՞ր
կողմէն զարնէ: Աոյն ինքն դահիճ ընտրուած
անձը համոզուելով՝ յանձն կառնէ ինքն ալ մեռնիլ
մարտիրոսին հետ, և երբ կըսեսպուի թէ երկու
վկաները մեռան, և շատ ուրախութիւն կըլլայ,
անոնք յանկարծ կեղնեն ոտքի վրայ կըկայնին:

Իայց Քրիստոնէութեան ընդհանրական կրօնք
մ' ըլլալու յարմարութիւնը ոչ միայն այս կամ
այն յատկութիւնը չունենալէն, և ընդհանրական
ըլլալու կարելիութենէն կեղնէ, այլ բոլոր անոր
մարդկային վիճակին ունեցած յարմարութիւննե-
րէն՝ որով կըտեսնուի թէ այն կըպարունակէ Աս-
տուծոյ բարոյական օրէնքները, և կըդնէ այն
պայմանները՝ որով միայն կըլլայ անհատից ու
հասարակութեան բարելաւութիւնը: Այս յար-
մարութենէն ոմանց վրայ խօսած եմ, և ներկայ
նպատակիս համար բնաւ հարկ չէ որ աւելի խօ-
սիմ, որովհետեւ ինչ ալ որ խօսին մարդիկ Քրի-
ստոնէութեան Աստուածային ծագմանը վրայ,
և որչափ ալ որ դժկամակ ըլլան անոր պահանջ-
մունքները գործադրել, գրեթէ առհասարակ կը-
խոստովանին թէ անոր ներգործութիւնը բարի է.
և որչափ որ տիրէ այն մէկ տեղ մը, նոյնչափ կը-
մշակուի հոն հասարակութիւնը: Ասիկա կընդու-

նին փիլիսոփաները՝ քաղաքագէտները և աշխարհասէր մարդիկ, և անհաւատներն իրենք ալ, անոնցմէ ամենանուաստ ու կոյր եղող մէկ քանիէն ի դատ : Անոնք չեն կրնար ուրանալ անոր աշխատասիրութիւն՝ արդարասիրութիւն և ժուժկալութիւն, խաղաղութիւն ու բարեկարգութիւն յառաջ բերելու ազդեցութիւնը : Ալ եթէ այսպէս է, ուրեմն յայտնի յարմարութիւն ունի Վրիստոնէութիւնը ընդհանուր ըլլալու այն նոյն կերպով՝ որով ունիցէ ճշմարտութիւն կամ գործնական դիտութիւն կըլլայ. և եթէ երբէք ընդհանրական բարեկարգութիւն ըսուած բանը պիտի ըլլայ, Վրիստոնէութիւնը անոր մէկ մասը պիտի ըլլայ :

Ի այց եթէ Վրիստոնէութիւնը ընդհանրական ըլլալու յարմարութիւն ունի, ուրեմն հակամիտութիւն ալ պիտի ունենայ, եթէ ոչ՝ ո՛չ հակամիտութիւն ունի մարդը յառաջադիմութեան, և ոչ յառաջադիմութեան օրէնք կայ : Անոր յոյսին ամբողջութիւնը հիմնուած է այս հաւատքին վրայ՝ թէ կայ բաներուն կազմութեանը մէջ մէկ բնական հակամիտութիւն մը, որով երջանկութիւն յառաջ բերելու յարմարութիւն ունեցող բաները կամաց կամաց պիտի յաղթեն արդելքներուն՝ և ընդհանրական ըլլան : Վրիստոսի դիտաւորութիւնն իր կրօնքը ընդհանրական ընել ըլլալը յայտնի է, որովհետեւ իր աշակերտացի պարտք դրաւ որ անիկա ամեն արարածոց քարոյնն : Հաւասարապէս յայտնի է նաև՝ որ մէկ բարեսէր միտք մը երբոր ճանաչու՞մ ունենայ անոր ճշմարտութիւններուն և անոնց մարդկային ազգին ու-

նեցած յարգին վրայ, չկրնար չուզել որ այլոց հա-
 ղորդէ անիկա. և անոր համար կըսենք՝ թէ Վր-
 քիստոսի հրամանէն և նոյն իսկ Վրքիստոնէական
 ճշմարտութեանց ու Վրքիստոնէական շարժա-
 ութիւններուն բնութենէն Վրքիստոնէաները բնաւ
 չեն կրնար հանդարտ կենալ, մինչև որ աւետա-
 րանը երկրի վրայ տարածեն: Ասոց այս ալ կը-
 սենք որ Անչ հակամիտութիւն որ ունի բանա-
 կանութիւնը անբաններուն զօրութեանը տիրելու,
 կամ առաքինութիւնը մոլութեան և ճշմարտութիւ-
 նը ստութեան յաղթելու, և ինչ հակամիտութիւն
 որ ունին խաղաղութեան՝ արդարութեան՝ կամ
 քաղաքական անտեսութեան վերաբերեալ ուղիղ
 վարդապետութիւնները սուտ եղածներուն յաղթե-
 լու, նոյն հակամիտութիւնն ունի Վրքիստոնէութիւ-
 նը տիրելու: Մարդը կարող է ուսումնական տեսու-
 թիւն ունենալու բաներուն վրայ, և կուզէ երջանիկ
 ըլլալ. և Աստուծոյ քանի մը քարոյական օրէնքները
 կան Ֆիզիքական օրինաց չափ հաստատուն ու
 անփոփոխ, որ անոնց համեմատ միայն կրնայ եր-
 ջանիկ ըլլալ: Այս օրէնքները կըսենք թէ Վրքի-
 տոնէութեան մէկ մասն են. և հասարակութեան
 մէջ եղած ամեն ճշմարիտ յառաջադիմութիւն
 հարկաւ պիտի ըլլայ՝ այն օրէնքներուն ուղիղ ճա-
 նաչմանը և հաստատութեանը յառաջադիմութիւ-
 նը: Արդոյական և քաղաքական գիտութեանց յա-
 ռաջադիմութեան մէջ անուած ամեն քայլը կը-
 ցուցնէ, թէ վերջը՝ անոնց կատարելագործուած
 առեներ պիտի տեսնուի որ անոնք ուրիշ բան չեն,
 այլ լոկ Վրքիստոնէական օրէնքներուն և կանոննե-

բուն ուսումնական կերպով ցուցուածքը : Ասանորոյ Քրիստոնէութիւնը ոչ թէ իբրև փրկութեան ճամբայ մը, այլ իր երկրաւոր երևոյթներուն նայելով նոյն հակամիտութիւնը ունի ընդհանրական ըլլալու, ինչ որ բարոյականութիւնը՝ քաղաքականութիւնը կամ քաղաքական տեսութեանն ունի մշակուելու և յառաջադիմութիւն ընելու : Ասոնց ճշմարիտ օրէնքները և անոնցմէ կախում ունեցող մարդկային երջանկութիւնը պիտի տեսնուի որ նոյն է Քրիստոնէական ոգիին հետ, և անոնք բնաւ չեն կրնար գործադրուիլ առանց այն ոգիին տիրելու :

Այսպէս կրտեսներք որ Քրիստոնէութիւնը մարդուն իբրև մարդ ունեցած բնութեանը և կարօտութիւններուն յարմարութիւն ունենալովը, և Քրիստոսի հրամանովը և Քրիստոնէական սիրոյ և Քրիստոնէական շարժառիժներուն բնութիւնովը, և Քրիստոնէութեան իր մէկ քանի երևոյթներովը նոյն ըլլալով բարոյական ու քաղաքական գիտութեան հետ, պատրաստութիւն մը կայ իր այն վերջին ու ընդհանրական յաղթութեանը՝ որ մարդարէները գուշակեցին և եկեղեցին կսպասէ տեսնել. և այս միջոցներով և այն Աստուածային օգնութիւնովը՝ որ խոստացուած է ու ետ չառնուիր, բանաւոր կրտսեպներ ոչ միայն ակնկալել թէ մինչև վերջը պիտի տևէ անիկա, այլ թէ «Տերօջը տանը լեռը՝ լեռներուն գլխուն վրայ պիտի հաստատուի, ու բոլոր հեթանոսները հեղեղի պէս պիտի դիմեն անոր» :

Քրիստոնէութեան մինչև վերջը տևելուն վրայ

այսպէս խօսելէն ետքը՝ կրկերջացնեմ ճառս սա
 ալ ըսելով թէ թէպէտ ոչ թէ արտաքին ձևով,
 այլ արդեամբ սկիզբէն հետէ շարունակած է:
 Կրօնքի մը Մատուծմէ ըլլալուն մէկ նշանը կրսե-
 պէ Ռասքալ անոր աշխարհիս վրայ միշտ կենալը:
 Մսիկա մէկ նշան մըն է՝ որ իրաւամբ կրնանք ա-
 կնկալել որ ճշմարիտ եղող կրօնքը պիտի ունե-
 նայ, և այս նշանը Քրիստոնէութիւնը և միայն
 այն ունի: Նահապետական՝ Հրէական և Քրիս-
 տոնէական տնտեսութիւնները յայտնի է որ միև-
 նոյն դրութեան հետզհետէ բացուիլն է: Առա-
 ջինին վրայ կրտեսներնք չբացուած կոկոնը, երկ-
 րորդին վրայ՝ տարածուած տերւը, և երրոր-
 դին վրայ ծաղիկը և պտուղը: Այլ արդ՝ ինչ
 վսեմ է այս դաղափարը որ կրօնք մը այսպէս
 աշխարհիս սկիզբէն սկսած՝ և իր ընթացքը
 շարունակած է մարդկային ազգին փոփոխութիւն-
 ներուն և թագաւորութեանց բոլոր յեղափոխու-
 թիւններուն մէջէն. նոր ձևերու մէջ մտնելով,
 բայց ոգիով միշտ նոյն մնալով, և վերջապէս ըն-
 դարձակելով, և մարդոց բոլոր ընտանիքը մէկ
 մեծ եղբայրութեան մը մէջ ամփոփելով: Այլ
 կրնայ տարակուսիլ ասանկ կրօնք մը Մատուծմէ
 ըլլալուն:

Աթէ ուղէինք փաստաբանել այս խնդիրին
 վրայ թէ ովկիանոսը Մատուծմէ՞ եղաւ թէ մար-
 դոցմէ շինուած արուեստական աղի լիճ մըն է ,
 երկու կերպով կարող պիտի ըլլայինք բանը ցու-
 ցնել . մէկ կողմէն պիտի ցուցնէինք թէ Մատուծոյ
 մեծութեանը արժան բան մըն է անիկա , և անոր
 ուրիշ գործքերուն համաձայն . և միւս կողմէն՝
 թէ անկարելի է որ մարդոցմէ շինուած ըլլայ :
 Անոր ընդարձակութեան և խորունկութեան վե-
 րաբերեալ ամեն իրողութիւն կը ցուցնեն թէ Մա-
 տուծոյ արժան բան մըն է , և ամեն այն յարա-
 բերութիւնները՝ որ կրնայ տեսնուիլ անոր և Մա-
 տուծոյ ուրիշ գործքերուն մէջ , կը ցուցնէ թէ նոյն
 ձեռքը կազմած է անիկա : Անշուշտ չկրնար ըլ-
 լալ որ մէկը տեսնէ արեւին անոր ջուրերը շոգի-
 ացնել և մթնոլորտին մէջ ամպ ձևացնելը , և
 այն ամպերուն՝ վարը սպասող բուսական արա-
 ղածոց վրայ թափիլը , և մարդոց ու անասուննե-
 րուն պիտոյքին ծառայելու համար անոնց ջուրի
 ակեր ըլլալ և գետնէն բղխիլը , ու չհամոզուի որ
 ովկիանոսն ալ այն արեւը՝ օդը՝ անասունները և
 մարդը շինողը շինած է : Անկէ Վակի գործքե-
 րուն զանազան կարգերը միայն կրնան ըլլալ որ
 ասանկ փոփոխակի կախում ունենան մէկզմէկէ :

Մինչև հիմա ջանացի ցուցնել որ Քրիստո-
 նէութիւնը Մատուծոյ արժան բան մըն է , և ա-

նանկ կը համաձայնի անոր ուրիշ գործերուն՝ որ հարկաւ բնութիւնը և միտքը շինողը պիտի ըլլայ Վրիստոնէութեան հեղինակը : Հիմա կանցնիմ ցուցնել թէ մարդոցմէ չէր կրնար հնարուիլ : Արդարեւ գրեթէ նոյն բանն է ջանալ ցուցնել թէ Վրիստոնէութիւնը Աստուծմէ եկած ըլլալու է, կամ թէ մարդիկ չէին կրնար հնարել . բայց քանի որ բաղդաստութեան միջոցները տարբեր են, այն բոլորովին տարբեր կերպով պիտի ներկայացնէ :

Ար շարունակեմ ես ապացոյց բերելու այս ոճը՝ մարդկային մտքին քովը դնելով Վրիստոնէութիւնը զանազան յարաբերութիւններով, որովհետեւ ամեն խելքը դուրսը եղող մարդ թէ գիտնական ըլլայ թէ ուսմիկ կրնայ կատարելապէս հասկրնալ : Մենք գիտենք մարդկային մտքին կարողութիւնները, և կրնանք այսինչ սահմաններուն տակ վստահութեամբ դատել անոր ինչ կրնալ կամ չկրնալ ընելը : Արչափ որ մարմինին՝ այնչափ ալ մտքին կարողութիւնները սահմանեալ են, և ինչպէս որ կրնան որոշուած պարագաներու մէջ դատել թէ ինչ կրնայ ընել մարդիւր Փիդէքական ուժովը, և բան կայ որ կրնանք վստահիլ մեր դատողութեանը շիտակ ըլլալուն, անանկ ալ կրնանք դատել թէ իմացական ու բարոյական կողմանէ ինչ կրնայ ընել որոշուած պարագաներու մէջ, և բան կայ որ կրնանք վստահիլ մեր դատողութեանը շիտակ ըլլալուն : Աւտի այս է փնտռուելու բանը, միթէ կարելի՞ է որ մարդկային միտքը իր եղած պարագաներուն

մէջ նաբաճ ըլլար Քրիստոնէական դրութիւնը :
Սարդը ինքնիրեն կարող է ասանկ դրութիւն մը
հնարել : Անր շարժառիժ մը որ անոր հաստա-
տութեանը համար աշխատէր : Այս նիւթին
վրայ պատահաբար խօսած եմ արդէն , բայց
պէտք է աւելի մտադրութիւն տալ անոր :

Այս հոս այս կրտսմ թէ Քրիստոնէութեան
ծաղմանը վրայ եղած խնդիրը մեկդի ձգել չըլ-
լար , ընդհանուր կերպով մը բնելով թէ Սար-
դիկ դիւրին կրխարուին , և այնչափ բաղմամբի
խարէութիւններ կան աշխարհիս վրայ : Այս կըլ-
լայ երբոր տեղական ու ժամանակաւոր բանե-
րու վրայ խօսուի , բայց ո՛չ թէ երբոր կրմօտեանք
երկրի վրայ երբէք պատահած ամենէն խորին ու
հզոր շարժմունքին : Արնդունիք որ խարէու-
թիւն շատ կայ , և կոյր նախանձաւորութիւնը ու
մտքի յուզմունքը , և շահն ու խարդախութիւնը ,
և կարելի է ասոնք ամենը մեկտեղ կապուած
մեծ չափով մը կրնան ներգործել ստութիւններ
յառաջ բերելու , բայց կարելի՞ է որ ասանկ հը-
նարուած բան մը խիստ խորին արմատացած դը-
րութիւններ կործանէ , և պատիւ ընդունի աշ-
խարհիս մէջ երբէք տեսնուած ամենէն բարձր ի-
մացականութեան տէր , և ամենէն զիտնական ան-
ձինքներէ , և հակառակութիւնով աւելի զօրանայ ,
և հազար ութը հարիւր տարիէն աւելի ապա-
հով մնայ մարդոց վիճակին ամեն փոփոխութիւն-
ներուն մէջ . անկէ վերջն ալ մարդկային ազ-
գը բարձրագոյն վիճակի մը տանող ներգործու-
թիւններուն ամենէն գլխաւորն ըլլայ : Ասանկ կը-

բօնքի մը կամ խարէութեան մը կամ դէպքի մը պատահմունքը հասարակ պատահմունք մը չէ : Մարդկային ազգին պատմութեանը մէջ բոլորովին աննման բան մըն է, և անոր ինչպէս ծագումն առնելուն խնդիրը՝ Մարդիկ դիւրին կրխարութիւն ըսելով մէկդի ձգելը, շատ նման է Ալլֆ Սդրիմ* կոչուած հոսանքին ծագմանը վրայ եղած խնդիրը՝ ըսելով թէ ջուրը դիւրաւ ամեն կողմ շարժող տարր մըն է : Արդարեւ ջուրը անհաստատ և վազող տարր մըն է, ջուրը անանկ է ըսելով չմեկնուիր ովկիանոսին մէջ այն լայն հոսանքին գոյութիւնը՝ որ միօրինակ կը շարունակէ ժամանակը սկսելէն հետէ . ոչ ալ բնաւ կը մեկնուի մարդոց խորհուրդին և զգացումներուն հազար ութը հարիւր տարիէն աւելի մէկ ուղղութեամբ միօրինակ հոսելը, ըսելով թէ մարդկային միտքը յեղյեղուկ ու անհաստատ է, և մարդիկ շատ անգամ կրխարութիւն, և մեծ չափազանցութիւններ եղած են հաւատքի մէջ : Ասանկ դէպքի մը ծագումը քննելու է, մտախուզի մէջ պատելու չէ : Աոր Ատակարանը անոր մէկ կատարեալ ու յագեցուցիչ պատմութիւնը կուտայ, և այն պատմութիւնը չոնգունողներուն կը վայլէ որ անոր տեղը ուրիշ մը գնեն, որ գոնէ խելքի մօտ ըլլայ . ասիկա ընել կըցած

* Ասիկա մէկ լայն ու մշտահոս հոսանք մըն է Ադրանդեան ովկիանոսին մէջ, որ Ամերիգայի եզերքէն Մեքսիքայի ծոցին բերնէն կսկսի, և կը վայլէ առաջ հիւսիսային արեւելեան՝ և վերջը արեւելեան ուղղութեամբ, մինչեւ Եւրոպա :

չեն : Չերևար թէ այս բանն ընելու Արարչոնէն
աւելի կարող ու աւելի յաջողող մէկն ե-
ղած է . բայց և այնպէս Քրիստոնէից նախանձա-
ւորութիւնը՝ ապագայ կենաց վրայ իրենց վարդա-
պետութիւնը՝ նախկին եկեղեցւոյ տրուած հրա-
շալի կարողութիւնները՝ իրենց մաքուր ու խիստ
բարոյականն ու իրենց միութիւնը , որ ասոնք իբ-
րև հինգ պատճառներ յառաջ կը բերէ Արարչոն
այն կրօնքին տարածմանը՝ որուն ո՛չ թէ պատ-
ճառները , այլ արդիւնքներն են յայտնապէս :

Այս երբոր մարդկային ազգին ամենէն կանուխ
դարէն այս կրօնքին ծագմանը կէտէն սկսելով
անոր վրայ կը նայիմ , երբոր բնութեան համեմատ
կը գտնեմ անիկա , քանի որ կը տեսնեմ թէ ա-
նիկա բնական կրօնքին բոլոր սորվեցուցածը կը-
սորվեցնէ , և անանկ նոր դրութիւն մը մարդոց
մէջ կը մտցնէ , որ թէև բնական կրօնքին հետ
կատարեալ ներդաշնակութիւն ունի , բայց ան-
կէ յառաջ եղած ըլլալը անկարելի է , քանի որ
ես կը տեսնեմ թէ Քրիստոնէական կրօնքն ին-
քըզինքը մարդոց խղճին կը նծայէ , բարոյականի
ամեն օրէնքները կատարելապէս կը պարունակէ ,
ու մարդուս բարոյական կարօտութիւնները լե-
ցնելու կարող է , իր մէջը միայն ունի տնտեսական
ու քաղաքական գիտութեան ճշմարիտ սկզբունք-
ները , երբոր անոր մէջ մեր բոլոր կարողութիւն-
ներուն պէտք եղած թէ՛ գրգռմանը և թէ՛ սան-
ձահարութեանը համար անանկ դրութիւն մը կը-
տեսնեմ որ անկէ առէկը չկրնար ըլլալ , քանի որ
ես կը գիտեմ թէ այս կրօնքը՝ թէև այնչափ պարզ

Է սկզբունքով, ինչպէս հաղարաւոր ճամբաներով
 մարդկային գործառնութիւններուն մէջ կրմանէ ու
 կրխառնուի, և կը շարժուի անոնք աղէկ ընե-
 լու համար, անանկ որ անիկա տիեզերական կը-
 րօնք մ' ըլլալու յարմար ըլլալը կը տեսնուի, քա-
 նի որ կը դիտեմ թէ բաներուն վերջաւորութեան
 պատմութիւնն ըրած ատենը Մատուծոյ արժան և
 բանականութեան համաձայն կերպով մը կը խօսի,
 քանի որ ես այս բաները կը տեսնեմ ու կը դի-
 տեմ ինձի կերևի թէ նաք է որ ուկիանօսը մար-
 դէ շինուած ըլլայ, քան թէ այս գրութիւնը մար-
 դէ սկզբնաւորած և մարդէ պահպանուած ըլլայ.
 Թէպէտև ասոնք՝ այս կրօնքին Մատուծ մէ կեած
 ըլլալը ցուցնող խորհրդածութիւններուն կարգէն
 ըլլալով՝ յատկապէս մեր ներկայ նիւթին շին վե-
 րաբերիք, բայց պէտք է անդամ մըն ալ յիշել
 երբոր յառաջ կը բերեմ սա խորհրդածութիւնը
 թէ որչափ որ քննենք շրէից և բոլորափքի աղ-
 դաց մէջ եղած կարծիքներուն վիճակը՝ Քրիս-
 տոնէութեան ելած ատենը, այնչափ աւելի պի-
 տի ըլլայ մեր զարմանքը անոր վրայ, նկատմամբ
 դրեթէ բոլոր այն զլխաւոր կէտերուն՝ որոնք ո՛չ
 այնչափ իբրև նոր բան կը յայտնէ, որչափ որ
 իբրև արդէն ընդունուած բաներ կը բռնէ. այս-
 պէս են Մատուծոյ միութիւնը և հոգեզննութիւ-
 նը՝ անոր սրբազան բնութիւնը՝ իրեն մատու-
 ցուելու պաշտամունքին հոգեւորութիւնը՝ իր մե-
 զի ունեցած հայրական յարաբերութիւնը՝ յարու-
 թեան և մարդկային պատասխանատուութեան
 վարդապետութիւնը՝ որ ասոնց շատր ո՛չ այն-

չափ իբրև դրութեան կանոնաւորութիւնով ցուցուցած են Վրիստոնէութեան մէջ, որչափ որ զօրութեամբ իմացուած . ոչ միայն համաձայն են բանականութեան, այլ անհրաժեշտ պայմաններ են Վրիստոնէութեան իր առջևը դրած նպատակին :

Եւ այս բանն ինձի սա խորհիլ կուտայ՝ թէ չկրնար ըլլալ որ մոլեռանդ կամ խաբերայ մարդ մ՝ ընտրած ըլլայ Վրիստոնէութեան նպատակ դրած վախճանը, որն որ իսկզբանէ որոշակի աւետեցին, և որուն յարեալ անխախտ կեցան : Եւ ետարանին ամենէն առաջին աւետման ժամանակը այսպէս ըսաւ հրեշտակը, «Նոր անունը Յիսուս կոչես, քանզի անիկա իր ժողովուրդն իրենց մեղքերէն պիտի ազատէ» : Վրիստոս ինքն ըսաւ թէ «Աորսուածը փնտուելու ու փրկելու եկայ» — «անանկ որ աշխարհ անով փրկուի» : Աետրոս կաղաղակէ մարդոց ըսելով «Վ. պաշխարեցէք և Յիսուս Վրիստոսի անունովը մկրտուեցէք մեղաց թողութեան համար» : Վարձեալ կրսէ «Վ. պաշխարեցէք և դարձի եկէք, որ ձեր մեղքերը ջնջուի» : Վրիստոնէութեան մեծ վախճանն Վ. ստուծոյ կառավարութեանը տակը անարժանապէս պատահած մեղքին զօրութենէն և հետեանքներէն մարդիկ ազատելն ըլլալը այնչափ յայտնի է որ անկէ յայտնի բան չկրնար ըլլալ : Աեր հիմակուան ունեցած լուսովը կրնանք իմանալ որ Վ. ստուծ մէ եղած կրօնքի մը նպատակը սրտին վիճակը ուղղել ըլլալու է . բայց մոլեռանդ մարդը ասիկա իրեն նպատակ բնաւ չկրնար դնել : Վ. յս նպատակին :

տակը մոլեռանդութիւն զարթուցանող նպատակ
 չէ, վասն զի անոր մէջ յանցանքը ճանչնալ կայ.
 ասկէ ի զատ կրպարունակէ մէկ պայծառ տեսու-
 թիւն մը այն գերագոյն և ամենէն հիմնական
 ճշմարտութեան վրայ՝ որմէն կախուած է աշխար-
 հիս բարեկարգութիւնը: Աշխարհին խեղճու-
 թիւնները չկրնար վերցուիլ, մինչև որ առաջ
 անոնց պատճառը գիտցուի. և ասիկա անանկ մէկ
 ներքին տեսութիւն մը կուտայ մարդուն ողորմելի
 վիճակին պատճառին վրայ՝ որ ուրիշ տուող չկայ:
 Մարդիկ ապերջանիկ են, և թերևս խեղճ ալ. և
 իրենց ասանկ ըլլալուն յանցանքը կամ բաղ-
 դին՝ կամ ուրիշներուն՝ կամ առողջութիւն և
 արտաքին յաջողութիւններ չկենայուն, կամ թէ
 կառավարութեան ու հասարակութեան վիճակին
 կուտան: Եւ այց Վրիստոնէութիւնը իբրև ըն-
 դունուած կրքոնէ այս բանը թէ մեղքը և բա-
 րոյական յանցանքն է մարդոց ապերջանկութեանը
 ճշմարիտ պատճառը, ուրիշ ամեն պատճառներուն
 պատճառը, և Վրիստոնէութիւնը մարդը ասկէ
 ազատելովը՝ բանական էակի մը ամեն վախնալու
 բաներէն ազատած կրլայ. և անանկ չէ՞, մի՞թէ
 մարդ ինք իր մեղքով չ'բերեր իր վրայ քաշած
 չարիքներուն մեծագոյն մասը: Ա կերցուր պատե-
 րազմը և անոր երկիւղը, վերցո՛ւր ամեն տեսակ
 անիրաւութիւնը, վերցո՛ւր ծուլութիւնը, մոլու-
 թիւնը, անառակութիւնը, նախանձութիւնը և
 բամբասանքը, վրէժխնդրութիւնը, հպարտութիւնն
 և անձնասիրական փառասիրութիւնը, և թող ա-
 տոնց հակառակ առաքինութիւնները տիրէ, վեր-

քո՛ւր նաև այն խղճին կասկածները և արհա-
 շիրքը որ մեղքէն յառաջ կուգայ, ու այս աշ-
 խարհը հիմակուան վիճակին նայելով դրախտ պի-
 տի ըլլայ: Վրիտտոնէութիւնը՝ ուրեմն, մարդուն
 խեղճութիւններուն արմատին կը դարնէ, փոխա-
 նակ ջանալու որ չարին մանր առուներն արգիլէ
 և զսպէ, անիկա կերթայ շիտակ այն աղը՝ որմէ
 ամեն առուները յառաջ կուգան, և կուղէ այն
 կտրել ու գոցել մշտնջենաւորապէս: Իմ մըտ-
 քիս՝ աշխարհիս խեղճութիւններուն ճշմարիտ
 պատճառը բարոյական չարիքն ըլլալէն պայծառ
 բան չկրնար ըլլալ. բայց մի՞թէ մարդոց թշուա-
 ռութեան պատճառին վրայ՝ այս խորին ու խո-
 հական և փիլիսոփայական տեսութիւնը մոլեռան-
 դութեան արգիւնք կրնայ ըլլալ: Ամեն զգա-
 ցումներէն՝ յանցանքի ճանաչումն է որ ամենէն ա-
 ւելի կըխափանէ մոլեռանդութիւնը. վասնորոյ
 մոլեռանդ մարդը չէր կրնար միայն անոնց գալ՝
 որ կըխոստովանին իրենց յանցաւոր ըլլալը, և
 դնել անոնց վրայ զղջման՝ իրենց սիրած հաճու-
 թիւնները և սովորութիւնները մէկդի ձգելու
 անհաճոյ պարտքը. չէր կրնար ըսել, թէ «Առողջ-
 ներուն բժիշկ պէտք չէ, հասպա հիւանդներուն»:
 «Այս արդարները կանչելու չեկայ, հասպա մեղա-
 ւորները ապաշխարութեան»:

Աւելի թէ ասանկ նպատակ մը մոլեռանդ մէկը
 չէր կրնար ընտրած ըլլալ, աւելի անկարելի էր
 որ խաբերայ մ՝ ընտրած ըլլար անիկա. խաբե-
 բան մէկ անձնական ու անձնասիրական շարժա-
 ութի՞թ մ՝ ունենալու է: Բայց ըսենք թէ այն նպա-

տակը կատարուէր, ի՞նչ օգուտ պիտի ըլլար անոր. մի՞թէ հակասութիւն չէ՞ սեպել թէ խաբերայ մէկը քարոզէ մարդոց որ ամեն մեղքէն ապաշխարեն, որ ատեն բուն իսկ այս քարոզութիւնը անոնց ընելը՝ մարդոց գործելու կարող եղած ամենէն մեծ մեղքերուն մէկն է: Ասկէ ի դատ խաբերան յաջողութեան հաւանականութիւնը հաշիւի կառնէ, բայց թող մէկ մարդ մը մտածէ թէ ինչ վիճակի մէջ էր բանը երբոր Վրիստոս երեցաւ, և տեսնէ թէ ինչ հաւանականութիւն կրնար ըլլալ խաբերայի մը առջևը որ ասանկ նպատակ մը յաջողի, այն վարդապետութիւնները՝ որոնց վրայ կը հիմնուի զղջումը, շատ անկատար կերպով ճանչցուած էին. սնապաշտութիւնը և արտաքին ծէսերը գրեթէ բոլորովին արտաքսեր էին՝ ճրջմարիտ կրօնքի մը ոգին թէ բնական ըլլայ և թէ գերբնական. մեղքը իբրև մեղք զլուելի կամ ցաւալի բան չէր, և եթէ ոմանց ալ անանկ ըլլար, շրէաները իրենց կարծեօքը Աստուծոյ սահմանուած ճամբայ մը ունէին մեղքը վերցնելու, որ անով գոհ կրնէին ինքզինքնին. իսկ շեթանսները իրենց կրօնքներուն յարած էին, և կատէին ու կանարգէին շրէաները: Արդ՝ ինձի Աստուածաշունչին մէջ պատմուած ուսիցէ հրաշքէն աւելի անհաւանական կերևի, որ քանի որ բանը այս վիճակին մէջ էր, խաբերայ մը՝ որ էր պատանի մը առանց ուսման, առանց հարստութեան և առանց խօսքերնին անցնող մարդիկ իբրևն բարեկամ ունենալու, և շրէայ ըլլալով բրնականաբար իր աղգակիցներուն նախապաշա-

ըուճներուն և ազգային զգացումներուն մասնա-
 կից ըլլալու էր, ելնէ և քարոզէ ընդհանուր մար-
 դոց որ ապաշխարեն և իրեն հաւատան, միան-
 գամայն ոչ քաղաքական և ոչ եկեղեցական ու-
 ըռ զբուժիւն մ' առաջարկելով, և չուզղելով
 իրեն հետեողներուն ջանքերը երկրի վրայ բնաւ
 բանի մը՝ որ կրնար յագեցնել իրենց փառասի-
 բութիւնը կամ շահու ու հեշտութեան սէրը. և
 առաջարկելով անանկ վարձք մը՝ որ միայն բա-
 րոյականապէս բարի մարդիկ կրնան վայելել հան-
 դերձեալ աշխարհին մէջ, բայց և այնպէս անանկ
 ազգեցութիւն մը ընէ այս քարոզութիւնը աշխար-
 հի մէջ՝ որ դարերով կեցած դրութիւնները կոր-
 ծանէ: Ա՛յժէ մէկ մարդ մը ուզէր մինակ իր ու-
 ժով: Ա՛րարագ լեռը տեղէն վերջնել, գործած-
 ուած միջոցին և յառաջ գալու արդիւնքին մէկզ-
 մէկու անհամեմատութիւնը ասկէ մեծ պիտի չըլ-
 լար: Ա՛նդքը վերցնել և սրտին վիճակը Ա՛ստու-
 ծոյ առջևը ուղղելը իրեն նպատակ դնելու կող-
 մանէ՝ Ա՛րիստոնէութիւնը մինակ կըկենայ. և
 մենք հիմա կրնանք իմանալ որ միայն այս կրնայ
 ըլլալ Ա՛ստուծմէ եղած կրօնքի մը յիտին նպա-
 տակը: Ա՛սանորոյ իմ մտքիս պարզապէս անանկ
 նպատակի մը ընտրութիւնը՝ որ բաներուն վրայ
 այնքան ընդարձակ և ճիշտ տեսութիւն մը ունե-
 նալով կրնար ընել մէկը, և անկարելի էր որ մո-
 լեռանդ կամ խաբերայ մէկն ընտրած ըլլար,
 մեկտեղ առնելով Ա՛րիստոնէութեան յառաջ
 բերած շարժումը, բաւական ապացոյց մըն է որ
 Ա՛ստուծմէ իր ծագումն առած է, և Ա՛ստուածա-
 յին զօրութիւն կայ անոր հետ:

Բայց թերևս ըսեն թէ Մ.յս նպատակին յառաջ տանելու յաջողութիւնը՝ վարպետութեամբ այն դրութեան մէկ քանի մասերը ժամանակին նախապաշարումներուն և կարօտութիւններուն ու վարժութիւն եղած խորհելու կերպին յարմարցնելով եղած է փասնորոյ՝ մի՞թէ Վրիստոս յարմարցոց իր դրութիւնը Հրէից նախապաշարումներուն և ակնկալութիւններուն քանը շատ հեռու էր ասկէ, Վրիստոսի վարդապետութիւններուն չափ հակառակ քան մը չկար Հրէից և միանգամայն հեթանոսաց երկայն ժամանակէ հետէ սրտերնուն մէջ պահած ակնկալութիւններուն, ու միտքերնուն մէջ պտրտած երևակայութիւններուն ու իրենց վարժութիւն եղած խորհելու կերպին: Մ.յս նիւթին վրայ շատ ընդարձակ խօսած է Սրմնրր անուն Նպիսկոպոս մը՝ որուն աշխատութիւններէն օգնութիւն պիտի առնեմ անոր վրայօք յառաջ բերելիք ծանօթութիւններու մէջ:

Հրէաները երեք մեծ աղանդի բաժնուած էին. Փարիսեցի՝ Սադուկեցի և Վասէն: Վ.նքի երկուքին գաղափարները և խորհելու ոճերնին բաւական ծանօթ են: Վասէնները համեմատաբար փոքր աղանդ մըն էին, որ ստացուածքի հասարակաց ըլլալը և խիստ ճշգրութեամբ ամուրի մնալը իրենց պարտաւորութիւնը կրճանչնային: Մ.յս աղանդներուն մէջն էին ազգին երևելի ու խօսքերնին անցնող մարդիկը, բայց Վրիստոս ամենափոքր ջանք մը չըրաւ անոնց բնաւ մէկին հաճելի ըլլալու, այլ անոնք ամենը միօրինակ կը յանդիմանէր:

իր դրութիւնն ամբողջ ուղղակի հակառակ էր
 Մարդուկեցւոց գաղափարներուն և թոյլ բարոյա-
 կանին . և ամենս գիտենք թէ որչափ սաս-
 տիկ էին իր յանդիմանութիւնները , և որչափ ա-
 հարկու իր սպառնալիքները Փարիսեցւոց և դպիր-
 ներուն գէմ , անոնց կեղծաւորութեանը և լոկ
 ծիսական բարեպաշտութեանը և Նստուծոյ օրէն-
 քին վրայ սնտոյի բաներ աւելցնելուն համար :
 Մարդուս սրտին մէջ գրգռուած ամենէն դառն
 ու ամենէն սաստիկ զգացումներուն մէկն է կողմ-
 նապահակութեան ոգին . բայց Քրիստոս ասկէ ի-
 րեն օգուտ հանելու համար մէկ աղանդի վր ին-
 քրդիմքը բարեկամ ցունելուն տեղը , իրեն գէմ
 ղինեց ամեն աղգեցութիւն որ կրնար ելնել ա-
 սանկ առիթներէ :

Բայց թէպէտ Հրէաները այլ և այլ աղանդի
 բաժնուած էին , սակայն շատ կէտեր կային որ
 հասարակ էր ամեն Հր'ի , և իրենց զօրաւոր ու
 յատուկ աղգասիրութեան պատճառներն էին :
 Մինչև անգամ եթէ կարող ըլլանք կարելի բան
 մը սեպել որ Քրիստոս այնչափ խօսքն անցնող
 մէկն ըլլար որ իր աղգեցութիւնն իր ազգին նա-
 խապաշարումներէն և ակնկալութիւններէն ա-
 ւելի ըլլար , տակաւին եթէ իրրե մոլեռանդ կամ
 խարերայ մէկը բռնենք անիկա , չենք կրնար սե-
 պել թէ այնքան հակառակ պիտի երթար յատ-
 կապէս աղգային եղած ամեն զօրաւոր զգացում-
 ներուն . և աւելի անհար է սեպել թէ պիտի ջա-
 նար վերջացնել այն դրութիւնը՝ որ բոլոր իր աղ-
 գակիցներուն հետ ինքն ալ անձամբ կըխօսաւովա-

նէր թէ Նստուծմէ է, և այն արարողութիւններն որ ինքն ալ կը կատարէր. սակայն ասանկ ըրաւ Վրիստոս :

Ասանորոյ կըսեմ թէ երբոր Վրիստոս ինքզինքը Հրէից սպասած Մեսիան կը կոչէր, իր բոլոր երևոյթը՝ բնութիւնը և նպատակը ամբողջապէս հակառակ էին մարգարէութիւններուն վրայ անոնց տուած բոլոր մեկնութիւններուն, ու իրենց փափաքներուն և վաղուց հետէ ունեցած ակնկալութիւններուն : Մէկուն ըսածին պէս՝ «Նստնք կընայէին մէկ մարմնաւոր ու յաղթող թագաւորի մը, և սոր լած էին անոր գալուստը գուշակող ամեն մարգարէութիւնները այս միտքով մէկնել : Հրէաներն այն ատենը կընեղուէին մէկ օտար լուծի մը տակ, որ կը տանէին մեծ անհանգստութեամբ և անհամբերութեամբ. և Վրիստոս՝ թէ խաբերայ և թէ մոլեռանդ մէկը սեպենք, բնականապէս իր ընելիքն այս պիտի ըլլար. եթէ մոլեռանդ ըլլար՝ իր միտքը պիտի լեցուէր հասարակաց կարծիքներովը, և իր երևակայութիւնը պիտի վառէր յաղթութեան և փառքի ազգային գաղափարներով : Եթէ խաբերայ ըլլար՝ հասարակութեան ակնկալութիւնը համաձայն պիտի գար անանկ մէկու մը մի միայն ունենալիք շարժառիթին՝ որ անշուշտ պիտի ըլլար փառասիրութիւն և բարձր աստիճանի հասնելու փափաք : Նստնք կընանք մեկնել ուրեմն սկիզբէն հետէ և բոլոր իր ընթացքին մէջ բոլոր այն օգնութիւնը մերժելը՝ որ կընար հանել ժողովուրդին արդէն ունեցած ակնկալութեանէն և մինչև

անդամ այն ակնկալութեանը պատճառաւ ժողովուրդն իրեն ու իր փաստին դէմ գրգռելը . ինք ալ շրէայ մ' ըլլալով՝ ինչո՞ւ համար բոլոր ուրիշ շրէաներէն բոլորովին տարբեր պիտի մեկնէ Սուրբ գրոց մարգարէութիւնները . և խաբէքայ ըլլալով՝ ինչո՞ւ պիտի զրկէ ինքզինքը իր նպատակէն յառաջ գալու բոլոր անձնական օգուտներէն" :

Գարձեալ՝ «Մէկ զգացում մ' աւելի զօրաւոր և լաւագոյն հիման վրայ հաստատուած չլլանար ըլլալ, քան թէ շրէից յարգութիւնը Սովսիսական օրէնքին վրայ . անոր ծագմանը պատմութիւնն որ եկած էր իրենց նախահայրերէն , անոր եղականութիւնը , և այն ազդեցութիւնն որ այդ եղականութիւնը յառաջ բերած էր իրենց՝ և ուրիշ ազդաց մէջ մէկ մեծ բաժանում մը հաստատելով , ամենէն աւելի այն երեւելի արդիւնքները՝ որ կը յուսային թէ պիտի վայելէն անոր նազանդելով , այսինքն պիտի ստանային Նստուծոց հաճութիւնը և պաշտպանութիւնը . բոլոր այս պարագաները միացան շրէից վրայ միաքէ դուրս սաստիկ ընելու իրենց ազգին օրէնքին այն յարումը , որ ամեն ազգի հասարակ է" : Այց և այնպէս Վրիստոս նոյն այն շրէաներուն ըսաւ , «()րէնքը և մարգարէները մինչև Հովհաննէս էին" : Օրիսական օրէնքը՝ ինքն ալ ընդունելով որ Նստուծ մէ է , տակաւին խափանեց և նոր մեկնութիւններ տուաւ բարոյական օրէնքին . այս երկուքին մէջ եղած զանազանութիւնը քաջ կը ճանչնար , վասն զի երբ մէկը վար կը զարնէ , ծա-

Նուցանելով թէ եկած է այն ժամը՝ որ պէտք է որ մարդիկ Արուսաղէմ Աստուծոյ երկրպագութիւն ընեն, այլ ամեն տեղ ճշմարիտ երկրպագութիւնը պիտի երկրպագութիւն ընեն ՝օրը հոգիով և ճշմարտութիւնով, տակաւին կիմարութիւն թէ աւելի դիւրին է որ երկինքը և երկիրը անցնի, քան թէ բարոյական օրէնքէն մէկ գիր մը պարապնելն է: Այս օրէնքը թէպէտ կը հաստատէր իբրև տիեզերաց բարոյական կանոնը, սակայն խափանեց անիկա իբրև յատկապէս ՝ըրէից օրէնքը, և նկատմամբ օրէնքին այն ամեն յատկութիւններուն՝ որոնցմով որ ՝ըրէայք գլխաւորապէս կը յարգէին անիկա:

Վասն ՝ըրէից մէկ հաճելի դաղափարը՝ իրենց պատմութեանն ամբողջ ընթացքովը հաստատուած, այս էր որ իրենց ազգը ճշմարիտ Աստուծոյ յատուկ խնամքը և պաշտպանութիւնը կը վայելէր. բայց Քրիստոնէական կրօնքին առաջին սկզբունքը կը ծառայէր իջնելու ՝ըրէաները այս բարձր պարծանքներէն, և անխտիր Աստուծոյ եկեղեցիին սահմանին մէջ ընդունիլ ուրիշ ամեն ազգերը”:

Աւ դարձեալ՝ “Ան հասարակ անանկ կը հաւատային թէ Արուսաղէմ քաղաքը Աստուծոյ յատուկ խնամքին տակը ապահով է, մի միայն ճշմարիտ կրօնքին աթոռն ըլլալով և Աստուածային տնօրէնութեամբ և նախնի սովորութեամբ Աստուծոյ յատուկ ծառայութեանը նուիրուած տաճարը հոն ըլլալով. բայց Քրիստոս և իր աշակերտները կը ծանուցանէին թէ ամբողջական

կործանուի՞ր շուտով պիտի հասնի թէ տաճարին
 և թէ քաղաքին՝ :

Մ. յսպէս՝ Վրիստոս ոչ միայն կողմնապահու-
 թեան ոգին իրեն դէմ զինեց, այլ և այն ազ-
 գասիրութիւնը որ շրէից մէջ ամեն ազգերէն
 զօրաւոր էր: Վայց և այնպէս քանի որ ասանկ կը-
 նէր, և քանի որ սկիզբէն ծանուցուած էր թէ ին-
 քը լոյս մը պիտի ըլլար հեթանոսները լուսա-
 ւորելու, ինքն անձամբ բնաւ չգնաց հեթանոսնե-
 րուն, այլ ըսաւ թէ Այս միայն խորայէլի կոր-
 սուած ոչխարներուն զրկուած եմ: Վոչոր ասոնք՝
 վտասահութեամբ կրնանք ըսել թէ ոչ մոլեռանդ
 և ոչ խաբեբայ մէկը կրնար ընել:

Մ. Ու քանի որ Վրիստոնէութեան ծագումը այն-
 չափ այլանդակ և անմեկնելի կըլլայ՝ անոր հեղինակ-
 ները լոկ մարդկային շարժառիթներէ շարժուած
 սեպելով, ամեն բան իսկոյն կատարելապէս համա-
 ձայն և բանաւոր կըլլայ երբ կըսեպենք թէ ա-
 նոնք Մատուծոյ պաշտօնեաներն էին նոր ու ընդ-
 հանրական կրօնք մ' աշխարհիս մէջ մտցնելու
 համար: Այժմէ ասանկ կրօնք մը պիտի մըտ-
 նէր՝ հարկաւ ամբողջ շրէական տնտեսութիւնը
 վերցուելու էր. բայց մի՞թէ մէկ գեղացի շրէայ
 մը որ ուսումնականութեան մէջ մտած չէր և ու-
 ըիչ երկիր պտըտած չէր, այլ միայն տարուէ տա-
 րի իր ազգակիցներուն հետ Արուսաղէմ կեր-
 թար, կրնա՞ր ասիկա առաջուց իմանալ. մի՞թէ
 անանկ խելքէ դուրս յանդգնութիւն մ' ունէ՞ր
 որ ձեռք զարնէր վերցնել այն տնտեսութիւնը՝ որ
 միանգամայն ինքն ալ կընդունէր Մատուծ: Ինչ ըլլալը՝

Մ.րդ՝ անցնինք ուրիշ կէտի մը . որչափ ալ Վրիստոսի բնութիւնը տարօրինակ որ էր , և իր վարքն անմեկնելի իր ողջ եղած ատենը , սակայն՝ եթէ սեպեմք որ կամ մոլեռանդ և կամ խաբերայ մըն էր , իր մահէն վերջն իր աշակերտներուն մէջ մէկն ըլլալու է՝ որուն բնութիւնը և վարքն աւելի տարօրինակ և անմեկնելի պիտի ըլլայ . վասն զի յիշելու է որ այս ենթադրութեամբ բնաւ պատշաճութիւն մը չկայ ըսելու՝ թէ Վրիստոս իր անուամբը կոչուած դրութեան հեղինակն եղած է , ասիկա մէկ կէտ մըն է՝ որուն բաւական նկատում եղած չէ , եթէ արդարեւ երբէք եղած է :

Մտիկա չուրացուիր որ Վրիստոսի յարութիւնը անոր դրութեանը մէկ հիմնական մասն է . ասանկ էր Պօղոս Մռաքեալին միտքին մէջ երբ որ Աորենթացոց գրեց , թէ Աթէ Վրիստոս յարութիւն առած չէ՝ ձեր հաւատքը պարապ է , և անկէ հետէ ասանկ հիմնական սեպուած է Վրիստոնէից մէջ : Արեմն Վրիստոս գիտէ՞ր՝ թէ չէր գիտեր որ իր մահը և իր յարութեանը պատմութիւնը ինչ աստիճան պիտի բռնուի Վրիստոնէական դրութեան մէջ . եթէ սեպեմք որ ինքն ինչ որ իրեն համար կրտէր՝ այն չէր , ինչ որ ըլլար՝ չէր կրնար գիտնալ ասիկա . առանց մարգարէական հոգի ունենալու չէր կրնար գիտնալ որ Հռովմէական իշխանը մահուան վճիռ պիտի տար իրեն համար : Մտիկ ի զատ անտեղի բան մըն է սեպել թէ մոլեռանդ կամ խաբերայ մէկը կրնայ դրութիւն մը հնարել՝ որուն մէկ էական մա-

սը ըլլայ իր՝ խաչին վրայ մեռնիլը և իր յարու-
 թեանը պատմութիւնը, ուրիշներէն հանած և ի-
 ռականացուցած. վասնորոյ եթէ Քրիստոս ան-
 հաւատին կարծածին պէս մէկը բռնենք, իր մա-
 հը առաջուց չկարծուած բան մը պիտի ըլլայ թէ
 իրեն և թէ իրեն հետևողներուն. և այսպէս իր
 գաղափարները ինչ որ էին՝ իրեն հետ կորսուած
 պիտի ըլլան. վասն զի հնար չէ որ Քրիստոս գա-
 ղափար մը ունենար այն Քրիստոնէական դրու-
 թեանը վրայ որ Աոր Ատակարանին մէջ կը գտ-
 նուի հիմա, պարունակելով իր մահը և յարու-
 թիւնը. այս դրութիւնը հնարաւոր եղաւ միայն
 իր մահէն վերջը. անկէ առաջ՝ բուն իսկ անոր
 հիմը չկար և ո՛չ երբէք կրնար ըլլալ, թէ որ ա-
 նոր մահը հրատարակուած չըլլար, վասն զի
 եթէ անանկ չըլլար՝ իր մահը ստոյգ պիտի չը-
 լար, և յարութեան պատմութիւնն ալ բա-
 նի տեղ պիտի չդրուէր: Արեմն ո՛վ էր այս ա-
 ռագամիտ և նարագէտ մարդը՝ Քրիստոնէութեան
 ճշմարիտ հեղինակը՝ որ այն բոպէին երբ շրէա-
 ները կարծեցին թէ իրենք յաղթեցին, երբ Քրի-
 ստոսի բուն իր խորհուրդները՝ ինչ որ էին,
 պարապ ելան, շուտ մը խորհեցաւ որ կրնայ յա-
 ռութեան պատմութիւն մը շինել, և անանկ կա-
 պակցել Քրիստոսի առջի վարուց և խօսքերուն ու
 շրէական Աստուածաշունչին՝ որ մէկ նոր կրօնքի
 մը հիմն ըլլայ. ո՛վ էր այս գործին գլուխ եղողը,
 վասն զի դրութեան միութիւնը կը ցուցնէ որ մէկ
 միտքի մը արդիւնքը եղած ըլլալու է. ո՛վ այնչափ
 յանդուգն էր որ իր Տէրոջը ահարկու խաչելութիւ-

նր և յարութեան տարօրինակ պատմութիւնը անանկ կապէր անոր առջի վարուցը և վարդապետութիւններուն, որ ամենը կազմեն ամբողջ մէկ դրութիւն մը: Ավ կրկին ժողովեց ցրուած ու վստահատաճ աշակերտները և բացաւ անոնց իր խաբէութեան խորհուրդը, ամեն մէկուն ընկելքը կարգադրեց, և համոզեց անոնք որ հաստատ կենան այս փաստին վրայ մինչև ի մահ: Անշուշտ եթէ Վրիստոս այն չէր՝ ինչ որ ինքն իրեն համար կրտէր, մէկը կար՝ Վրիստոնէական դրութեանը ծագմանը մէջ գործը յառաջ տանող, որ անկէ մեծ և աւելի տարօրինակ էր, և այս դրութեան ճշմարիտ հեղինակն անձանօթ է:

Ի այց հոս ասիկա հարցնեմ թէ Վսենք որ ասանկ դրութիւն մը նարուեցաւ, խելքը գլուխը եղող մարդ մը կրնա՞ր յուսալ որ անիկա յաջողի. խենդերէն ի դատ ուրիշ մէկը կրնա՞ր համոզուիլ որ այն գործին մէջը մտնէ. վասն զի ինչ էր այս դրութիւնը. ուրիշ բան չէր, այլ համոզել բոլոր մարդկային ազգը որ ընդունին մէկը իբրև Վրկիչ, և հաւատան անոր իբրև աշխարհին վերջին դատաւորը, որ իրենք կրխոստովանին թէ երկու գողերու մէջ խաչուելով սպաննուած է: Աւ ասիկա ինչ բանի ձեռք զարնել ըլլալը կատարելապէս միտք առնելու համար՝ նաև յիշելու է նախ՝ թէ որչափ օտար և հեռու բան ըլլալու է յարութեան պատմութիւնը թէ քիչից և թէ անթանոսաց խորհուրդներէն, և բոլորովին անհաւատալի. երկրորդ՝ միտքերնուս դուրս ձգելու ենք խաչին հետ կապուած բոլոր այն գաղափար-

Ներքը՝ որ մենք հիմա ունինք, և խաչին վրայ այն
 ատենի համարումը միտք առնելու ենք. յիշելու
 ենք որ խաչը ոչ միայն մասնաւորապէս ահարկու
 գործիք մըն էր մահուան դատապարտուածները
 սպաննելու, այլ և մասնաւորապէս ալ անարգա-
 կան. օրինաւոր չէր Հռովմէական քաղաքացի մը
 այս կերպով մեռցնել, ասիկա միայն գերիհնարուն
 և ամենանուաստ աստիճանի մարդոց տրուելու
 պատիժ մըն էր:

Այլ արդ՝ այս իրողութիւնները մեր առջև ու-
 նենալով կը հարցնեմ թէ այս կերպով սպան-
 նուած մարդու մը յարութիւն առնելուն, և անոր՝
 մարդոց Վրկիչը և բոլոր աշխարհի դատաւորն
 ըլլալուն դաղափարը, առանց երկինքէն յայտնու-
 թիւն ըլլալու, մարդկային խորհուրդի օրէնքնե-
 րուն համաձայն է. մի՞թէ կարելի է որ ասանկ
 պատմութիւն մը մարդոց հաւտացնելու՝ և բուն
 իսկ Հրէաներուն՝ որոնք նոր խաչը հաներ էին
 անիկա, և Հեթանոսներուն՝ որ ամեն Հրէա-
 ները անարգ կը բռնէին և աւելի պիտի ար-
 համարէին և զղուէին խաչուած Հրէայէն ի-
 րենց կրօնքը ձգել և ասանկ Վրկիչ մը ու դա-
 տաւոր մը դաւանել տալու ջանքը յարմարի այն
 օրէնքներուն՝ որով գիտենք թէ մարդիկ կընեն
 իրենց գործքերը: Արնա՞նք ըմբռնել այնքան այ-
 լանդակ մօլեռանդ մէկը, կամ այնքան յիմար խա-
 բերայ մը որ խորհի թէ Արնամ ասանկ պատմու-
 թիւն մը և ասանկ առաջարկութիւն մը հիմն ը-
 նել կրօնքի մը՝ որ պիտի կործանէ բոլոր ուրիշ-
 ները և ինքն ընդհանրական ըլլայ: Արնա՞նք ըմ-

բըռնել որ ոչ միայն ասանկ ջանք մը ըլլայ, այլ յաջողի : Այն մարդն որ ասոր կրնայ հաւատալ, կրնայ հաւատալ ամեն բանի :

Աւ հոս դարձեալ ինչ որ այսպէս բողոքովին անմեկնելի կըլլայ եթէ Աստուածային ներդործութիւնը դուրս հանենք, իսկոյն կատարելապէս կըմեկնուի երբ ընդունինք թէ այս մարդիկն ինչ որ իրենք իրենց համար ըսին՝ անանկ էին և վերէն զօրութիւն ունէին :

Արնայի այս խորհրդածութիւնը շատ երկնցընել՝ վերաբերելով անիկա առաջին Վրիստոնեայներուն թէ անհատաբար և թէ իբրև մէկ միաբանութիւն ըրածներուն, և մանաւանդ Պօղոս Առաքեալին դարձի դալուն և յետագայ վարուցը : Այս բանը խաբերայութիւն կամ մոլեռանդութիւն սեպելով, (վասն զի եթէ կրօնքին ճշմարտութիւնը ընդունինք՝ ուրիշ բան չկրնար ըլլալ), կրնայ ցուցուիլ որ այս մարդոցը ըրածը այնքան հակառակ էր մարդոց ինչպէս շարժելուն ծանօթ ու ստոյգ օրէնքներուն՝ որչափ որ երբէք հրաշք մը կրնայ հակառակ ըլլալ բնութեան օրէնքներուն : Վայց ես կանցնիմ ցուցնելու որ մէկ մոլեռանդ կամ խաբերայ մէկը ոչ պիտի ուզէր և ոչ կրնար յառաջ բերել շրէական կրօնքին և Վրիստոնեականին մէջ այն մասնաւոր կապակցութիւնը վարդապետութեան՝ օրինակներու և մարդարէութեան կողմանէ որ հիմա կրկենայ, ասիկա ոչ մէկ մարդ մը պիտի ուզէր ընել, վասն զի քանի որ՝ ինչպէս հիմա ըսի, կըմերժէին շրէից կրօնքին այնքան ու անանկ

մասերը որ շրէից թշնամութիւնը յետին աստի-
 ճան կրգրգուէր, տակաւին կրսէին թէ հոգիով
 նոյն է այն կրօնքին հետ, և ասանկով շատ ան-
 հաճոյ ըրին փրատը շեթանոսներուն : Աստ այնմ
 կրտսնենք որ շոտվմէական իշխանները ամենա-
 անարգ կերպով կրխօսին բոլոր բանին վրայ, իբրև
 մէկ շրէական սնապաշտութեան վերաբերեալ
 խնդիր մը . այսպէս փեստոս Պօղոսի վրայով ե-
 դած բանը Ագրիպպասին պատմելու ատենը ըսաւ,
 «Անոր դատախաղները ներկայանալով, իմ կաս-
 կած ըրած յանցանքներէս մէկն ալ յառաջ չէին
 բերեր . հասցա մէկ քանի խնդիրներ ունէին անոր
 հետ իրենց կրօնքին վրայ, և Յիսուս անունով
 մեռածի մը վրայ, որուն համար Պօղոս կրսէր թէ
 կենդանի է" : Այսպէս նաև Աքայիայի փոխա-
 նորդ բզեշխին Վաղիոնին օրերը երբոր շրէաները
 Պօղոսը անոր առջևը քաշեցին, և երբոր Պօղոս
 ինքզինքը պաշտպանելու համար պիտի խօսէր, Վա-
 ղիոն ըսաւ շրէաներուն, «Թէ որ անիրաւութեան
 մը կամ շար գործքի մը համար ըլլար՝ ո՞վ շրէա-
 ներ, արժան էր ինձի՝ որ ձեզի մտիկ ընէի . բայց
 թէ որ վէճը խօսքի ու անուններու և ձեր օրէն-
 քին վրայով է, դուք ձեզմէն տեսէք . ինչու որ
 ես ասանկ բաներու դատաւոր ըլլալ չեմ ուզեր .
 և զանոնք ատեանէն վնասեց . անատենը բոլոր
 Յոյները Սոսթենէս ժողովրդապետը բռնեցին ու
 ատեանին առջևը կրծեծէին . և այս բաներուն վը-
 րայ Վաղիոն բնաւ հոգ չէր ըներ" : Այս զգա-
 ցումը կատարելապէս բնական էր, և Վրիստոնէ-
 ութեան հեղինակը կամ հեղինակները զիտցած

ըլլալու էին որ այն զգացումը պիտի ծագի եթէ
 շրէից կրօնքին ու նորին մէջ ասանկ կապակցու-
 թիւն մը հաստատուի : Ասանորոյ թէ շրէից
 զգացումները նկատենք և թէ շեթանասացը բըռ-
 նուած ընթացքը այնչափ յիմար կերևայ՝ որ ան-
 կէ աւելի յիմարականը չէր կրնար ըլլալ :

Տայց ասկէ դժուարը կայ . ոչ մէկ խաբերայ
 մը կամ մոլեռանդ մէկը կրնայ ասանկ ընթացք
 մը բռնել՝ եթէ ուզէր ալ . վասն զի նախ՝ բնա-
 մարդկային իմաստութիւն մը չէր կրնար առնել
 շրէից դրութեան պէս մանուածոյ դրութիւնը , և
 անանկ անսխալ դատումով ճշդութեամբ բաժ-
 նել մերժուելու մասերը մնալու մասերէն , այսինքն
 նոր դրութեան հետ համաձայն եկողները չհա-
 մաձայնողներէն : Աւ երկրորդ՝ ինծի խելքէ դուրս
 բան մըն է որ ասանկ դրութիւն մը՝ որ այնչափ
 եղելութիւններէ կախում ունի , որոնք փոխելը
 անոր հեղինակին ձեռքը չէր , ինչպէս է Վրիստո-
 սի ծննդեանը տեղը , և անոր մահուանը ժամա-
 նակը և կերպը , դրութիւն մը՝ որ բնաւ առաջուր-
 նէ խորհուած և պատրաստութիւն եղած չէր , այլ
 մոլեռանդութեան կամ խաբերայութեան առի-
 թով մը ծագումն առած , այնչափ համաձայնու-
 թիւններ ունենայ հաղարաւոր տարի առաջ ծա-
 գումն առած դրութեան մը հետ , և այս համա-
 ձայնութիւնը շրէից բուն իրենց Նստուածաշուն-
 չէն ապացուցանելով , ցուցնելով թէ այսպէս գը-
 բուած է , անոնք ընդհանրապէս դարձի դան և
 Աբրայեցւոյ թուղթին պէս գիրք մըն ալ գրուի :
 Աւ ոչ ասկէ աւելի խելքի մօտ է առջի ճառը

զուս մէկուն մէջ խօսածս՝ որ մարդ կարող ըլլայ
 անանկ կրօնք մը նարել, որուն ջատագովները կա-
 ռող ըլլան անցնիլ շրէից ժողովարանէն՝ ուր ի-
 բնեց բոլոր փաստաբանութիւնը շին Ատակարա-
 նին վրայ հիմնուած է, Աթինացի փիլիսոփաներու
 խումբի մը, և նոյն վտահաճութեամբ՝ համարձա-
 կութեամբ և դորութիւնով փաստաբանել անոնց
 հետ բնութեան գիրքէն և մարդուն բարոյական
 կազմութենէն ու կարօտութենէն: Չկրնար ըլլալ
 աւելի նշանաւոր բան մը՝ քան թէ Պօղոս Առա-
 քեալին՝ Արիստոտոլին մէջ խօսածին աննմանու-
 թիւնը՝ Անտոք շրէից ժողովարանը խօսածին,
 որ Վործք Առաքելոցին տասներեքերորդ գլուխը
 պատմուած է. և մինչև անգամ Ագրիպպասի առ-
 ջըր խօսածին, որուն մէջ անոր դատմանը կը բողո-
 քէր այսպէս, «մարգարէներուն կը հաւատաս Ագ-
 րիպպաս արքայ»։

Արդ՝ մէկդի ձգելով այն նմանութիւնները և
 յարմարութիւնները՝ որով կը ցուցուի թէ Վրիս-
 տոնէութիւնը Աստուծու կեանք ըլլալու է, և առ-
 նելով միայն այս ճառին մէջ յառաջ բերուած
 խորհրդածութիւնները, բաւական պատճառ չու-
 նի նք եզրակացնելու թէ անիկա մարդէ նարուած
 չէր կրնար ըլլալ։

Մինչև հոս յատկապէս Վրիստոնէական դոգմա-
 նէան լրաց խօսեցայ. իսկ այս ճառին մնացած խոր-
 հրդածութիւնը քանի մը ապացուցական նիւթե-
 բու վրայ պիտի ըլլայ, որ կելնէ այն դրութեան
 եղելութիւնները և վարդապետութիւնները պա-
 ռունակող գիրքերէն, բայց անանկները միայն

պիտի ընտրեմ որ մեր առջի քննածներուն նման
կերպով պիտի քննուի. այս գիրքերը դաշտ մը
կրբանան առջևնիս անանկ ապացոյցի՝ որոնք ամեն
խելքը տեղը ու անաչառ մարդ կրնայ դատել,
դաշտ մը՝ որ գրեթէ բուն իսկ դրութեան չափ
ընդարձակ ու հարուստ է. բայց իմ ժամանակս
չներեր երկայն խօսիլ ասոր վրայ:

Ասանորոյ այս ճառին ընդհանուր ոճին համեմատ
կրտեմ թէ Արարեբայ կամ մոլեռանդ մէկը
ոչ կուզէր և ոչ կրնար գրել 'Աոր Ատակարանի
Գիրքերը':

Եւ նախ՝ անանկ մարդ մը պիտի չուզէր գրել
անոնք, վասն զի անոնք անանկ գիրքեր էին
որ անկարելի է շարժառիթ մը տալ ասանկ խաբէութեան
մը: Շարժառիթը շահ էր կրնար ըլլալ.
վասն զի ի՞նչ յարաբերութիւն ունէին այս
գիրքերը Վրիստոնէութեան. յայտնի է որ անոնք
արդէն գոյացած դրութեան մը գիրքերն էին, ինչու
որ անտեղի է սեպել թէ այս գիրքերը ինքնին
մէկ լոկ՝ պարզ և մերկ խարդախութիւն մը ըլլալով
կարելի էր որ շրէաները և շեթանոսները
ընդունէին, և այն գիրքերով հասարակութեան
վիճակը փոխուէր, և այն ալ անանկ դարու մը
մէջ՝ որ տպագրութիւն անձանօթ էր և գրոց թիւն
ու ազգեցութիւնը քիչ էր: Արեւմն Վրիստոնէութիւնը
յառաջ եկած՝ և շատ կամ քիչ ընդարձակութեամբ
տարածուած ըլլալու է, և յետոյ այս գիրքերը
գրուած ըլլալու են անոր ծագումը և յառաջագիմութիւնը
պատմելու: Արեւմն եթէ շահ ըլլար նպատակը՝
հարկ էր անանկ պատմել բանը

որ հաւատալու արժանի ըլլայ . վասնորոյ եթէ
խարդախութիւն ընէին այս գործին մէջ, չէր կրն-
նար ըլլալ որ մարդիկ չանարգէին ու մէկգի չը-
ձգէին անիկա :

Այլ ոչ համբաւ կրնար ըլլալ շարժառիթը .
ոչ մէկը Մատթէոսի աւետարանը կարդալով
կրնայ կարծիք մը ընել հեղինակն ով ըլլալուն .
չատ քիչ կըխօսի իր վրայ, և կըյիշէ թէ ինքն այն
կարգը մարդոցմէ էր՝ որոնք շրէաները կանար-
գէին ու կատէին . միթէ երբէք մարդ մը համբաւի
համար լեռան վրայի քարոզը կըյօրինէր և երեւա-
կայական մարդու մը կամ խաբեբայ ճանչցած մէ-
կուն անունին կընուիրէր, (կամ կրնա՞ր յօրինել
անանկ գործ մը՝ որ իր գեղեցկութեանը և վսեմ
պարզութեանը և բարոյականին կողմանէ նմանը
եղած չէ աշխարհի սկիզբէն հետէ) :

Այլ ոչ անոր շարժառիթը իշխանութիւն ու
պատիւ կրնար ըլլալ . բնաւ գիրք մը ասանկ նպա-
տակի համար աւելի անարուեստութեամբ կազ-
մուած չէ . քաղաքական խնդիրներու կամ կու-
սակցութիւններու հետ բան չունի . և ոչ իր հե-
ղինակը երևելի կամ պատուաւոր ընելու բնաւ
բան մը կըպարունակէ : Աւրեմն ի՞նչ խելքով ա-
սանկ՝ բարոյականի և թափանցող խելքի կող-
մանէ ամեն նախնի փիլիսոփաները գերազանցելու
ընդունակ մարդ մը ինքզինքը բոլորովին պիտի
ծածկէ խաբեբայի մը անուն իր տեղը դնելով .
ինտո՞ր կրնար համողել աշխարհը որ այն խաբե-
բան զինքը կարծեն :

Այլ ինչպէս որ Աւետարաններն ու Առաքելոց

Գործքերը, նոյնպէս են թուղթերն ալ. քանի մը պարագաներ կան որ արդարեւ յատկապէս անհատապէս կրնեն ասոնց կեղծիք ըլլալը :

Ըստնք տարօրինակ գրութիւններ են, և խելքէ դուրս բան է որ մէկ մարդ մը ասանկ նամակներ հանէ սուտ տեղը եկեղեցիի ուղղելով անոնք, և այն սքանչելի գաղափարներուն հետ յիշէ նաև անոնց մասնաւոր ներդրութիւնները, և շատ մարդոց բարեւներ զրկէ անունովսին : Թող մէկ մարդ մը կարգայ Հոովմայեցւոց թուղթին վերջին գլուխը (որ գրեթէ բոլորովին ողջոյն ու բարե է) և ինքնիրենը հարցնէ թէ խաբէութեան համար նամակ գրող մարդ մը կրնա՞ր գրել անիկա. տեսինչ մասնաւոր բաներ կրխօսի : Աւ Պօղոս Առաքեալ մինակ ինքը բարե չղրկեր շատ մարդոց, այլ և Տիմոթէոս իր գործակիցը և Ղուկիոս ու Յասոն և Վասիպատրոս իր ազգականները, նաև Տերափոս որ այն թուղթը գրեց, և Վայիոս իր հիւրընկալը, ու Արաստոս բաղաքին գանձապետը և Աուարտոս անուն եղբայր մը :

Իայց եթէ ըսուի թէ Առաքէն խարդախութիւն եղած է, կըպատասխանեմ թէ Ամեն երևելի հեղինակութիւն և մեծ յարգ ունեցող հարազատ գրութիւն իր նմանութիւնը և սուտը շինելու գրգիռ կուտայ, բայց բուն իսկ հեղինակութիւնը սուտ տեղը շինելու գրգիռ չկայ. բնաւ ասանկ կեղծիք մը ըլլալը չկրնար ցուցուիլ :

Մակայն այս բանին մէջ զօրաւոր կէտը սա է որ ոչ մէկ մոլեռանդ կամ խաբերայ մէկը կրնա շինել այս գիրքերը. ասիկա յայտնի է այն ար-

դարասիրութեան նշաններէն որ անոնց վրայէն
 կերևայ. գիրքերը մարդոց պէս են այս մասին :
 Մենք մարդոց երևոյթէն կը դատենք անոնց որպի-
 սութիւնը, առանց ինքնիրեննիս այն դատողութեա-
 նը հիմն որոշելու. ոմանց վրայ մէկ պարզութեան
 անաչառութեան և արդարութեան երևոյթ մը կայ
 բոլոր իրենց ըրածին ու ըսածին մէջ, որուն վրայ
 գրեթէ չկրնար ըլլալ որ մարդ խաբուի : Հաստ ան-
 դամ վկայի մը խօսուածքին ու երևոյթին մէջ
 անանկ բան մը կը ըլլայ, և արդարասիրութեան կամ
 խարդախութեան անանկ նշաններ կան որ խօսքով
 չգրուցուիր, բայց շատ աղէկ կը նշմարուի, որ ա-
 սանկ բաներ գիտելու վարժուած մէկին շատ ներ-
 գործութիւն կրնէ անոր վկայութեանը ինչ յարգ
 ունենալը որոշելու կողմանէ : Արդ՝ Աոր Ատակա-
 րանին գրուածքներն ալ նշանաւոր կերպով ա-
 սանկ են. եթէ գլուխ մը բան կարդանք՝ չենք կըր-
 նար չղգալ որ իրական բաներ են կարդացածնիս :
 Եղինակներուն միտքին մէջ անանկ խորհուրդ մը
 չերևար թէ կարելի է որ իրենց ըսածին տարակոյս
 ըլլայ : Անոնք կատարեալ աղէկ գիտցած բաներ-
 նին ըսող մարդոց երևոյթն ունին. զարմանք չեն
 ցուցներ, և չերևար վրանին անանկ կարծիք մը
 թէ իրենց ըսածները՝ որ այնքան տարօրինակ է,
 երբէք գրգռութիւն պիտի հանէ. բացատրութիւն-
 ներու չեն մտներ, գժուարութիւնները վերցնելու
 կամ խափանելու ջանք չեն ըներ, համարձակ կը-
 խօսին իրենց պակասութիւններուն և տկարու-
 թիւններուն վրայ, մէկու մը շողօքորթութիւն չեն
 ըներ, մէկու մը չարիք չեն կամիր : Անղեցիկ ո-

Ճով շարադրութեան փափաք չկայ, և ոչ մասնաւոր ջատագովութիւններ. իրենց դէմ երեւցած պարագաները ծածկելու ջանք չկայ, ինչպէս Վրիստոսի տագնապը Վեթսեմանի պարտէզը՝ որ այնքան ենթակայ է տկարութեան տրուելու, խաչին վրայ Նստուծոյ երեսէն ինկած ըլլալը, Պետրոսի զինքն ուրանալը և աշակերտներուն զինքը թողուլ փախչիլը. բաները մանրամասնաբար և պարագաներովը ու որպէս թէ պատկերացնելով կը պատմեն, մարդոց անունները և դէպքերուն ժամանակը և տեղը զրուցելով. ամեն տեղ ինքզինքնին անպաշտպան թողուցած են յայտնուելու՝ եթէ իրենց պատմածները՝ չըսեմ շինծու, այլ ինչ և իցէ կողմանէ սխալ է: Արբոր կը պատմեն լեռանը վրայ Վրիստոսի տուած քարոզը՝ կըսեն թէ բաղմութիւններ լսեցին անիկա. երբոր կը պատմեն Պաղարոսի յարութիւնը՝ կը ցուցնեն անոր տեղը և ընտանիքը և այլ և այլ կարգ անձանց վրայ ինչ ներգործութիւն ընելը. երբոր կը խօսին Հռովմէական իշխանի կամ քահանայապետի վրայ՝ անունը կուտան. հոն կը յիշուին Վալիլեայի ծովը՝ Վափառնայումը՝ Արուսաղէմը՝ և տաճարն իր դեղեցիկ քարերովը. կը յիշուին Հրէական տօները՝ անոնց աղանդները և աւանդութիւնները. ամեն բան բոլորովին Հրէական է, բայց և այնպէս մաքսաւոր ու Հռովմայեցի զինուոր ալ կայ: Նստնք ամենը կենդանութեան յատակութեամբ կը կենան մեր առջևը, ոչ թէ ճարտասանական նկարագրութեան ուժով, այլ ճշմարտութեան պարզ պատմութիւնով:

Բայց այս գիրքերը կեղծեօք շինելու մեծ դը-
ժուարութիւնը պատմուած բաներուն զատ զատ
ճշմարտութեան երևոյթ տալը չէ՛ որչափ ալ յայտ-
նի ու կենդանի ըլլայ, այլ այնչափ պատմութիւն
մէկզմէկու համաձայնելու՝ այնչափ պատահական
նշաններով կազմելը որ բոլորովին վերջնէ խաբէու-
թեան կարծիքը: Այլ հոս պէտք է յիշել որ գիրքերուն
թիւը այնչափ ըլլալը ինքնին զօրաւոր պատճառ մըն
է սերպելու թէ խաբէութիւն չկայ. խաբէութիւն
ընել ուզող մը բնականապէս աղէկ քննուած
ու աղէկ կարգադրուած պատմութիւն մը պի-
տի հրատակէր. այսպէս եղած են բոլոր ասանկ
խաբերայ գիրքերը: Բայց ասոր մէջ քսանեօթը
Վիրք ու նամակ կայ, ու թ անձինքներէ գրուած,
ամեն մէկը միւսներուն շատին ճշմարտութիւնը ցու-
ցընելով, և ասանկով յարմար ըլլալով մէկզմէկու
հետ բաղդատելու և փաստաբաններուն խոտորնակ
քննութիւն կոչած կերպով քննելու, որ բնաւ
գիտցուած բան չէ որ խաբերայութիւնը ինքզին-
քը ենթակայ ընէ այն կերպ քննութեան: Չորս
հատ մէկզմէկէ անկախ պատմութիւն կայ Վրիս-
տոսի վրայ. ասոնց մէջ քանի մը անանկ երևու-
թական տարբերութիւններ կան թեթև բաներու
վրայ՝ որ միշտ կը պատահի երբոր վկաները մէկզ-
մէկէ անկախաբար բուն իրենց գաղափարը կը զրու-
ցեն այնչափ դէպքերու վրայ. ասոնք անանկ տար-
բերութիւններ են՝ որ դիւրաւ կրնար շտկուիլ, և
խաբերայութիւն ընողը անշուշտ պիտի շտկէր.
ասոնք կը ցուցնեն որ վկաները անկախ են՝ խօսք
մէկ ըրած չեն. և նոյն ատենը միաբանած կէտեր-

նին այնչափ շատ է և անանկ կէտեր են՝ որ մի-
այն ճշմարիտ սեպելով կը մեկնուի բանը :

Քրիստոնէութեան հակառակորդները այս ա-
ռիթմները մեծ ուրախութեամբ իրենց հակառա-
կութեանը նիւթ ըրին . բայց կը ջանան ծածկելու ,
չեն ըսեր՝ եթէ միտքերնուն մէջ ալ կը խորհին ,
որ այս առիթներուն կենալը կը ցուցնէ ճշմար-
տութեան ինքզինքը ապահով ճանչնալը ու հա-
մարձակութիւնը . և նար եղածին չափ զօրաւոր
վստահութիւն կուտայ թէ անոնցմէ բան մը չեղ-
ներ : Թէպէտև Քէյն անուն հեղինակին խելքէն
եղող՝ և Նոր Ատակարանին վրայ անոր չափ տե-
ղեկութիւն ունեցող մարդիկ՝ որ Վուկաս Մե-
տարանիչը տասնևմէկ Վոաքելոց մէկը կը կարծէր ,
այս տարբերութիւնները փոքր առարկութիւննե-
րու առիթ ըրած են . զոր օրինակ այս մարդիկը
գտեր են որ Մետարանիչները մէկըմէկէ տարբեր
ըսած են Քրիստոսի խաչուած ատենը գլխուն
վրայ դրուած գիրը . նաև երբոր մէկը կըսէ Նը-
րորդ ժամուն խաչեցին՝ միւսը կըսէ Ա եցերորդ
ժամուն . ընդհանրապէս ասանկ առարկութիւն-
ներուն դիւրին է պատասխանելը : Մտնք՝ սխալ-
մամբ ձգուելով կամ տեղւոյն սովորութեանը տե-
ղեակ չըլլալով կըլլայ . և ասոնց թիւը միշտ կը քիչ-
նայ աւելի կատարեալ քննութիւնով . հիմա՝ յի-
շուածներուն առաջինին հարկաւոր չէր բառական
ճշդութիւն , այլ բառական էր գրուածքին հիմա-
տը ըսել . բայց յիշելու է որ երեք լեզուէ գրուած
էր , և խօսքին ձևերը մէկըմէկէ զանազան կրնայ
ըլլալ . կամ թէ եթէ Նըրայեցեբէնը Յունարէնի

Թարգմանեցին, որ շատ հաւանական է, ամենը գիտեն որ զրուցուածքը տարբեր կըլլայ. եթէ երկու մարդ անանկ խօսք մը Վատիներէնէն Հայերէնի Թարգմանելու ըլլան, հաւանական է որ երկուքն ալ ճիշդ նոյն ձևով պիտի կազմեն խօսքը: Արկորորդին դժուարութիւնը կը վերնայ՝ սեպելով թէ Վեւտարանիչներուն մէկը Հռովմայեցոց՝ միւսը Հրէից կերպովը կը հաշուէ ժամանակը. կամ թէ սեպելով որ Յովհաննէսի Վեւտարանին ձեռագիրներէն ոմանք օրինակելու ատեն սխալմունք մը եղած է թուական գիրը քիչ մը փոխուելով, որովհետեւ երկու Յունական թուանշանները շատ նման են մէկըմէկու. «էրրորդ ժամ», զրուածը հին ձեռագիրներէ և հեղինակներէ կը հաստատուի, և գրեթէ Յունական Ատակարանին ամեն կըրիստոսը հրատարակիչը կընդունի: Վսանկ տարբերութիւնները քիչ են թուով, և ուղելու չենք որ աւելի քիչ ըլլան, վասնզի անոնց գոյութիւնը արդարասէր մտքերուն աւելի աղէկ ապացուցական ներգործութիւն կընէ. որ ատեն չորս Վեւտարանիչներուն՝ և Վեւտարանիչներուն ու Վաքելոց Վործքերուն մէջ եղած համաձայնութիւնը՝ որ յայտնի է թէ խորհուրդով չէ, այնքան շատ են որ ժողովուած գիրք մ՝ եղած է:

Եւ այց այս տեսակ ապացոյցի ամենէն յարմար առարկան Պօղոս Վաքելային պատմութիւնն է, որ կատարելապէս ու մանրամասն գրուած է Վաքելոց Վործքերուն մէջ, և նոյն Վաքելային տասներեք նամակը կայ, որ այն պատմութեան եղած բաներուն ժամանակը գրուած է կըսուի, վասնորոյ եթէ պատ-

մութիւնը և նամակները երկուքն ալ հարազատ են՝ պատմութեան մէջ ինչ բնութիւն որ կը ցուցուի անոր վրայ, իր նամակներուն մէջ երեւալու է. և գտնուելու է նամակներուն մէջ պատմութեան մէջ յիշուած եղելութիւններուն վերաբերութիւն ունեցող բազմաթիւ մանր ու խորհուրդով չեղած խօսքեր՝ որոնց կեղծեալը չկրնար ըլլալ: Աւ բոլոր ասոնք կան: Պօղոս Նաբեալին բնութիւնը յայտնի կերեայ, և մէկը չկրնար տարակուսիլ իր անունովն եղած նամակները պատմութեանը մէջ իր վրայ ցուցուած բնութեանը տէր մէկէ մը դըրուած ըլլալուն: Որչափ տարբեր են Պօղոս՝ Պետրոս և Հովհաննէս Նաբեալներուն բնութիւնները մէկըմէկէ. և որչափ կատարեալ կը համաձայնին իրենց անունովն եղած գրութիւններն ամեն մէկուն իր բնութեանը: Աթէ Հովհաննէս Նաբեալին պէս մէկու մը բնութիւնը պատմուէր և այս նամակներն անորն են ըսուէր, որչափ տարբեր աստիճան պիտի ըլլար մեր ունեցած ապացոյցը:

Նայց այլևայլ (մուղթերուն ու (մուղթերուն ու Նաբեալոց Վործքերուն մէջ եղած համաձայնութիւններէն ելած ապացոյցը կատարեալ ու ճարտար կերպով ցուցուցած է Նէյլի իր Հօրէ Նօլինէ անուն գիրքին մէջ, գիրք մը՝ որուն իմ գիտցածիս նայելով անհաւատները խելացութիւնը բնաւ պատասխանելու ջանք չընելը սեպած են: Նոյս ապացոյցին մէջ Նէյլի չնայիր այն համաձայնութիւններուն որ յայտնի և ուղղակի են, և կրնան շինծու եղած ըլլալ, այլ անոնց որ յայտնի է թէ խորհուրդով

չեն . և այնչափ հեռաւոր ու շրջուն՝ և այնչափ մա-
նուածոյ ու մէջէ մէջ պարագաներով է , որ անկա-
րելի է կարծել թէ բնաւ վարպետութիւն կամ
խաբէութիւն կրնայ սղմիլ անոնց մէջ : Այս ապա-
ցոյցը օրինակներով շատ աղէկ կը բացատրուի :
Այսպէս կը տեսնենք հետեւեալ խօսքը Աորնթա-
ցոց Առաջին (Թուղթին մէջ . « Կինչև աս օրուան
ատենը կանօթենանք ալ , կը ծարուինք ալ , մերկ ալ
կը մնանք , կը ծեծուինք ալ , աստանդական ալ կը պը-
տրտինք . և մեր ձեռքովը կաշխատինք » : Պատմու-
թեան մէջ յայտնի զրուցուած է որ Պօղոս Առա-
քեալ Աորնթոս իր ձեռքովը կաշխատէր . « Ալ գտաւ
Ակիւղաս ու Արիսկիշա . և որովհետև ինքը արհես-
տակից էր՝ անոնց քովը կեցաւ , և կը բանէր . ինչու
որ արհեստով վրանագործ էին » : Իսկ վերոյի-
շեալ խօսքին մէջ կըսէ թէ կաշխատինք « մինչև
աս օրուան ատենը » . այսինքն մինչև Արիստոսի
մէջ այն (Թուղթը գրելու ատենը : Արդ՝ Պօղոս Առ-
աքեալին Արիստոսի մէջ ըրածներուն պատմու-
թեանը մէջ՝ որ Առաքելոց Աործքերուն տասնևին-
ներորդ գլուխը բան մը ըսուած չէ իր ձեռքովը գոր-
ծելուն վրայով , բայց քսաներորդ գլխուն մէջ
գրուած է որ հունաստանէն դառնալու ատեն զրկեց
Արիստոս եկեղեցիին երէցներուն որ իրեն գան Աե-
լիտոս , և անոնց խօսած ճառին մէջ հետեւեալ
խօսքը կայ . « Կէկու մը արծաթին՝ կամ ոսկիին՝
կամ հագուստին չցանկացայ . դուք ձեզմէ դիտէք
որ ինձի և իմ հետս եղողներուն պէտք եղածը
աս ձեռքերս հոգացին » : Ասանորոյ այն ձեռքի
աշխատութիւնը որ ի գործ դրել էր Աորնթոս՝

շարունակեր է Նփեսոս ալ. և ոչ միայն այս-
չափ, այլ այն անգամին Նփեսոս կեցած բո-
լոր ժամանակը շարունակեր է որ այն վերջե-
րուն մօտ այս թուղթը գրուեր է, անանկ որ
բոլոր ճշմարտութեամբ կրնար այն թուղթը
գրելու ատենը ըսել թէ, «Մինչև աս օրուան
ատենը մեր ձեռքերովը կաշխատինք»: Արե-
մքն բաւական ոյժ ունի ասոնց մէկզմէկու ու-
նեցած համաձայնութիւնը խորհուրդով չըլա-
լու կողմանէ: Իմ դատմանս յայտնի բան մքն է
որ այս Առաքելոյ Վորձքերուն քսաներորդ գլխուն
մէջ յիշուած՝ իր ձեռքով աշխատելուն վրայ եղած
խօսքը եթէ անոր թուղթէն առնուած ու նմանցու-
ցած ըլլար, բուն իր տեղը պիտի դնէին անիկա, այս-
ինքն Առաքելին Նփեսոս ըրածներուն ուղղակի
պատմութեանը մէջ: Աւ ոչ միւս կողմանէ ալ հա-
ւանական է որ Առաքելին Նփեսոսի մէջ ունեցած
դէպքերուն պատմութեանը մէջ չեղած մէկ պա-
րագային համար սուտ ակնարկութիւն ըլլայ նա-
մակի մը մէջ՝ որ կըսուի թէ ինքն ան տեղէն գրեր
է, թող որ եղած ակնարկութիւնը ինքնին՝ մա-
նաւանդ ժամանակին նայելով այնչափ անուղղա-
կի և ընդհանուր է որ ինչևիցէ խարէութեան նպա-
տակի չճառայեր:

Գարձեալ կըտեսնենք որ թե սաղոնիկեցւոյ Արկ-
րորդ թուղթին երրորդ Վլուխ ութերորդ տունը
այսպէս գրուած է, «Աչ ալ մէկուն հացը ձրի կե-
րանք, հապա ջանքով և աշխատանքով դիշեր ու
ցորեկ կըդորձէինք՝ ձեզմէ մէկուն ծանրութիւն
չտալու համար, չէ թէ որ մենք իշխանութիւն չու-

նէինք, հասցա որ անձերնիս ձեզի օրինակ ընենք՝
 որ մեզի նմանող ըլլաք: Հոս ալ դարձեալ իր
 ըրածը, և՛ այն որ շատ աւելի ճիշդ է, այն գործին
 մէջ ունեցած դիտաւորութիւնը նոյն իսկ այն է որ
 Ափեսոսի եկեղեցիին երէցներուն խօսած ճառին
 մէջ իր վրայ ցուցուած է, վասն զի առաջ կրսէ,
 «Ղուք ձեզմէ գիտէք՝ որ ինձի և իմ հետս
 եղողներուն պէտք եղածը աս ձեռքերս հո-
 գացին», վերջը այս ալ կաւելցնէ, «ամէն
 բան ձեզի ցուցուցի, եթէ ասանկ պէտք է աշ-
 իատիլ, «սպարնեբան զմեռնիւն ընել: Տնուղ-
 թին և ճառին մէջ պարունակուած դաղա-
 փարները թէ գործին և թէ նպատակին նայե-
 լով այնչափ նման են մէկզմէկու, և միանգամայն
 այն դաղափարները տուող խօսքերն այնչափ աննը-
 ման, որ անոնց մէկզմէկու համաձայն դալը ուրիշ
 բանի չտրուիր, այլ թէ այն ճառը և այն նամակը
 ճշմարտապէս նոյն անձէն յառաջ եկած ըլլալուն:

Արբ կրտեսներնք որ Մ.Ռաբեալը համառօտաբար
 և առանց բացատրութեան Տիմոթէոսին կրգրէ
 թէ, «Մ.Յրին այրիներուն կարգը թող սեպուի, որ
 վաթսուն տարուրնէ պակաս չէ»: Ասե կրտես-
 ներնք Մ.Ռաբելոց Վործքերէն որ սկիզբէն կարգա-
 դրութիւն եղած էր Վրիստոնէական եկեղեցւոյ
 մէջ գտնուած աղքատ այրիներուն պիտոյքը հո-
 գալու համար: Արբոր Մ.Ռաբեալը կրսէ Տիմոթէոսին
 թէ Ղուն տղայութենէ Սուրբ Վիլքերը գիտեա,
 Վործք Մ.Ռաբելոցն ալ կիմացնէ թէ անոր մայրը
 շրէայ էր: Մ.Ռաբեալը կը յորդորէ Աորնթացի-
 ները որ Տիմոթէոսը չարհամարհեն. Տիմոթէոսին

ալ կրսէ թէ Չըլայ որ անարդէ մէկը քու մանկու-
 թիւնդ, և դարձեալ թէ, « երիտասարդական ցան-
 կու թիւններէն ալ փախիր » : Այլ թէ Առաքեալն իր
 նամակին մէջ Տիմոթէոսին կը յիշեցնէ Անտիո-
 քի՝ Իկոնիոնի և Լիւստրիայի մէջ իրեն պատահած
 նեղութիւնները, պատմութենէն ալ ըմբռնել նար
 եղածին չափ անուղղակի կերպով կը տեսնենք որ
 Տիմոթէոս այս քաղաքներուն մէկուն մէջ բնակած
 ըլլալու է, և այն հալածանքներուն ատենը դարձի
 եկած : « Դարձեալ Առաքեալը Հռովմայեցւոց
 թուող թին մէջ անոնց աղօթքը կը խնդրէ, որ Հրէ-
 աստանի մէջ աղատի անոնցմէ՝ որոնք հաւտացած
 չեն . Առաքելոց Կորնթեբուն մէջ ալ նոյն ճամբոր-
 դութեանը վրայ խօսելով կրսէ, « Այլ հիմա ահա ես
 հոգւով կասրուած՝ Արուսաղէմ կերթամ, և հոն
 ինչ որ ինձի պիտի պատահի՝ չեմ գիտեր, միայն թէ
 Հոգին Սուրբ ամեն քաղաքի մէջ ինձի կրթկայէ
 ու կրսէ թէ կապեր ու նեղութիւններ ինձի կը-
 սպասեն » :

Դարձեալ երբոր կը տեսնենք որ Հռովմայե-
 ցւոց թուող թին մէջ Առաքեալը անոնց կը յանձնէ
 փիբէն՝ Անքրացւոց եկեղեցիին սպասաւորը, պատ-
 մութենէն ալ միայն հետեւեալ խօսքէն կիմանանք
 որ Առաքեալը Անքրա գացած էր . « Անքրայի
 մէջ իր գլուխը փոքրած, ինչու որ ուխտաւոր էր », ²
 Ասանկ համաձայնութիւններ թերեւ հարիւր հատ
 ցուցուցեր է Նէյլի, և շատ ուրիշներ ալ կան :

Այլ ոչ միայն այս թուող թերը կը տեսնենք եկե-
 ղեցիներուն ղրկուած, որ ամենէն անյարմար տե-
 սակ գրութիւն է խաբերայի մը՝ համար . որ իր

միտքէն կրնայ անցնիլ շինել թէ եկեղեցի կեցած թէ չկեցած ատենը, այլ և մէկ երկու անգամ ալ երկու նամակ ղրկուած է նոյն եկեղեցիին. վերջինը ունենալով առաջինին վերաբերեալ խօսքեր՝ ինչպէս որ կը յուսացուի: Արտեսնենք որ գրուած ալ է թէ մէկ եկեղեցիին նամակը միւսին մէջ ալ կարդացուի. նաև կը հասկցուի որ եկեղեցիներուն մէկը Առաքեալին նամակ գրած է, և Առաքեալին նամակը ըստ մասին անոնց պատասխանն է. կըրտեսնենք անանկ խնդիրներու վրայ խորհուրդ ու քննութիւն ըլլալը որ բնականապէս կը ծագին անանկ ընկերութիւններու մէջ. և վերջապէս կըրտեսնենք անանկ գորաւոր անձնական ըզգացում, և անանկ խորին սէր ու հոգ, անանկ համարձակութիւն՝ արժան եղած յանդիմանութիւնը տալու, և իշխանաբար ընթացք մը, ու այնքան բարեներ ու մէկզմէկու վրայ ծանօթութիւններ, որ միայն կենայ իրական գործառնութիւններուն մէջ կրնան յառաջ գալ: Աւրեմն միթէ իրաւունք չունիմ մինչև անգամ լոկ այս ներքին վկայութիւններէն դատելով որոնք այնչափ համառօտաբար և անկատար կերպով ցուցուեցան, հաստատելով թէ ոչ մէկ խաբեբայ մը կուզէր կամ կրնար շինել այս գիրքերը:

Աւարդ՝ եթէ նայինք այն յարաբերութիւններուն որ Քրիստոնէութիւնը ունենալու է թէ Հրէից և թէ Հեթանոսաց հետ, և կամ Քրիստոսի կամ Առաքելոց բռնած ընթացքին, կամ թէ Քրիստոնէական ու Հրէական դրութիւններուն մէկզմէկու ունեցած կապակցութեանը, և թէ Աոր

Կտակարանի Վիրքերը սուտ շինելու անձարու-
թեանը, կարծեմ իրաւամբ կրնանք եզրակացը-
նել թէ այս կրօնքն ու այս Վիրքերը մարդէ յա-
ռաջ եկած չեն :

Ժ Ա Ռ Ը

Մինչև հոս մեր քննութիւնը Քրիստոնէութեան դրոշմները վրայ էր . այսինքն անոր անցած սքանչելի յարմարութիւններուն՝ և անոր մարդէ յառաջ եկած ըլլալուն անձարութեանը վրայ : Իսկ հիմա կը դառնանք դրութեանէն՝ անոր ներդինակին : Ա՛վ էր այս դրութեանը հերկնակը . ի՞նչ էր անոր վիճակը, ի՞նչպէս մէկն էր, և ինքն ի՞նչ կըսէր իրեն համար : Ա՛ռաջ իմացանք որ անոր առաջագրած նպատակը և անոր քարոզած դրութիւնը Աստուծոյ արժան են, և կատարելապէս կը համաձայնին մարդուն բնութեանը : Բայց մի՞թէ իր կենաց վիճակն իրեն համար ըսածները և իր ցուցուցած որպիսութիւնը անանկ է՝ որ մենք հիմա կրնանք գտել թէ Վարդկային ազգին հոգևոր դրոշմն եմ ըսող մէկու մը վրայ գտնուելուն : Մի՞թէ նա՞ր է որ խաբեքայ մէկն եղած ըլլայ անիկա : Մի՞թէ չե՞նք տեսներ այնչափ բազմաթիւ տարօրինակ բաներ միայն անոր վրայ հարուած՝ որ այդ ենթադրութեանը տեղի չմնայ :

Վերկայ ճառիս նպատակը պիտի ըլլայ այս հարցումներուն պատասխանել:

Եւ եթէ մէկ առարկայ մը կայ՝ որուն վրայ կըրնանք բանեցնել ոչ միայն տրամաբանական քննութիւնները, այլև ընդաբոյս բանականութեան և ընդհանուր մարդկութեան բոլոր բարձրագոյն ընդացումներուն վճիռները, այն անձին կենաց վիճակը՝ քարոզած բաները և առաջադրած նպատակն է, որ ինքզինքը Վրիստոսի իրեն համար ըսածին պէս մէկու մը տեղ կը դնէ: Վարդիկ իբնէ մէկ ներքին տեսութիւն մը կունենան ուրիշին որպիսութեանը: Աշխարհիս պատմութեանը մեջ ասոր փորձը շատ կայ ամեն կերպով: Մենք ամենս կարող ենք՝ երբ մեր բարոյական բնութիւնը զօրանայ, դատելու թէ Վիթէ մտքի և միանգամայն սրտի հպատակութիւն պահանջող մէկու մը որպիսութիւնը ասանկ պահանջման մը համաձայն է թէ ոչ, «Աս մարդիկը կը ճանչնամ» ըսաւ Վարդէոն Պոնաբարդ, և քեզի կըսեմ որ Յիսուս Վրիստոս մարդ չէր»: Մենք ալ կը ճանչնանք մարդիկը, և Աւետարանիչները Վրիստոս մեզի ոչ թէ պատմելով և դովելով՝ այլ իր գործքերովը և խօսքերովը իբրև մեր առջևը կեցած ցուցնելով անանկ որ կը թուի թէ կենդանի է ու կը խօսի, կը զգանք որ կարող ենք դատել թէ իր պաշտօնին ճշմարիտ նշանները կը կրէ իր վրայ՝ թէ խաբարայի նշաններ: Աթէ իր պահանջմունքը ուրիշ բան ըլլար, բանը տարբեր կը ըլլար: Ստացուածքի կամ արտաքին պատիւի կամ եղած բանի մը հաւատալու պահանջումը արտաքին վկայութեամբ

կարդարանայ, բայց երբոր ինձմէ կրպահանջուի որ մէկու մը խօսածներուն հաւատամ, և իմ հօրս՝ մօրս՝ եղբայրներուս՝ քոյրերուս՝ կնկանս ու զաւկրներուս ունենալու սէրէս աւելի սէր ունենամ անոր վրայ, ուսիցէ արտաքին վկայութիւնով ոչ միայն չեմ դներ ասանկ վստահութիւն ու սէր անոր վրայ, այլ չեմ կրնար և պարտաւոր ալ չեմ դնել: Ասանկ սիրոյ արժանի եղող առարկայ մը ցուցուելու է ինձի՝ որ կարող ըլլամ ընել ասիկա:

Չենք կրնար մեր սէրը մէկ բանի մը դարձընել՝ եթէ ոչ մեղի ճանչցուած գերազանցութեան, և որովհետև ոչ մէկը Քրիստոնեայ կրլայ որ Քրիստոս ինքը սիրոյ առարկայ չըներ իրեն, վասն որոյ յայտնի է որ ինչպէս անոր քարոզածը՝ ասանկ ալ անոր որպիսութիւնը նախնական կարեւորութիւն ունեցող նիւթ մըն է:

Ալ դարձեալ ինչպէս ամէն կողմանէ՝ այս բանին մէջ ալ Քրիստոնէութիւնը մինակ կրկենայ. եթէ ուրիշ դրութիւնները չափով մը իրենց հեղինակներուն որպիսութենէն կը վնասուին, չկայ ուրիշ մը՝ քրիստոնէութենէն ի զատ, որ այնչափ ենթակայ է այնպէս վնասուելու իր հեղինակին որպիսութենէն: Վիլիսուիայական վերացեալ դրութեան վրայօք չենք հարցներ անոր հեղինակին ինչպէս ըլլալը: Պղատոնին կամ ուրիշ փիլիսոփայից դրութիւններուն ճշմարտութիւնը իրենց աղէկ կամ գէշ մարդ ըլլալու ինդիքէն կախում չունի. բայց ոչ միայն եթէ կարելի ըլլար ցուցուիլ թէ Քրիստոս գէշ մարդ էր, այլ մինչև անգամ եթէ միայն մէկդի առնենք իր որպիսու-

Թիւնն ու գործերը , բոլոր դրու.թիւնն իսկոյն կիյնայ : Անոր որպիսու.թիւնը կը կենայ իբրև դրու.թեան կեդրոնը , և առանց անոր ոչ իրական լոյս պիտի կենայ և ոչ տաքու.թիւն : Ասիկա երկու պատճառէ յառաջ կուգայ : Առաջինն է այս զարմանալի բանը՝ Քրիստոնէու.թեան կեդրինակը կը պահանջէ ոչ միայն հաւատք , այլ և սէր , որ ասոր բաւական դիտողու.թիւն եղած չէ Քրիստոնէական ապացոյցներու վրայ քննու.թիւն եղած ատենը : Ի՞նչ պիտի խորհէին մարդիկ Սկրատեսի և Պլատոնի վրայ , եթէ անոնք ոչ միայն իրենց գաղափարները սորվեցնէին մարդոց , այլ և թէ իրենք և թէ իրենց աշակերտները ասանկ պահանջմունք մը հանէին՝ թէ բոլոր մարդկային ազգը սիրելու են զիրենք , մերձաւորներու եղած սէրէն գերազանց սիրով մը . այս սէրը Քրիստոս պահանջեց , և անոր աշակերտները պահանջեցին անիկա . անոր համար Առաքեալը կրսէ , « Թէ որ մէկը Տէր Յիսուս Քրիստոսը չսիրեր , նպովեալ ըլլայ » , որով կիմացնէ թէ այն սիրոյն լոկ չըլլալը չարու.թիւն է . բայց եթէ բոլոր մարդոցմէ այսպէս պիտի սիրուի , առաջ ինքզինքը անձամբ բարերար ընելու է անոնց՝ և ետքը բուն իսկ սիրոյ օրէնքներուն համեմատ անանկ որպիսու.թիւն մը տեսնուելու է վրան՝ որ անոնց սէրը քաշէ : Քրիստոսի որպիսու.թիւնը այնչափ էական բան մը ըլլալուն երկրորդ պատճառն այս է՝ որ մտաւոր կարողու.թիւնը և բարոյական շարժումը միայն գործողու.թիւնով կը յայտնուի : Յիրաւի բարոյական դրու.թիւնը ուրիշ ամէն բանի պէս իմացականու.թեան

առարկայ ըլլալու է . բայց ոչ մէկ բարոյական ճշմարտութեան վերացեալ դրութիւն մը , և ոչ լոկ հրամայուած , բայց իրական վարքով չցուցուած ու չնիւթականացած պատուէրները բնաւ չեն կրնար աշխարհին բարոյական վարուց միջոց ըլլալ : Մարդոց պէտք է ոչ միայն ճշմարտութիւն , այլև վարք , ճշմարտութիւնն ու վարքը միացած : Անոնց պէտք է առաջնորդ մը , մէկը որ իրենց առջևէն երթայ , իբրև իրենց փրկութեան Առաջնորդը , որուն ձայնը կրնան լսել որ կրսէ , « Կամ ետևէս եկուր » : Ասան որոյ քանի որ բոլոր ուրիշ դրութիւններու մէջ հիմնադրին որպիսութիւնը մեծ բան մը չէ , ասոր մէջ էական կարևորութիւն ունի : Իայց ամենը կրնան դիւրաւ իմանալ խաբեբայ դրութեան մը մէջ ասանկ տարր մը խօթելու անհուն դժուարութիւնը և վտանգը . ասիկա կրբանայ յարձակելու կէտ մը որուն դէմ բնաւ ասանկ դրութիւն մը չէր կրնար մէկ իրական պատնէշ մը կանգնել :

Աստի ինչպէս առաջադրուեցաւ՝ առաջ նայինք Քրիստոնէութեան ներկինակին կենաց վիճակին , և ան վիճակին՝ մարդոց ուսուցիչը և հոգևոր ազատիչն ըլլալու մէկու մը ունեցած յարմարութեանը : Այլ արդ՝ գրեթէ հարկ չէ ըսել որ մեր Փրկիչը նուաստ վիճակի մը մէջ էր , և բոլորովին զուրկ ստացուածքէ . այս իրողութիւնը կրտեսնենք որ ինքն ամենապարզ և ամենազգու կերպով կը յայտնէ . չխօսիր անոր վրայ՝ ներդուելու ու դանդատելու ոճով . ոչ ալ հարստութեան վրայ կրնայի Ստոյիկեան անհոգութեամբ և արհամարհանօք ,

այլ կըզրուցէ մարդասիրական խօսքի մէջ, երբոր
կուզէր արգիլել մէկու մը՝ յոյսէն պարապ ելնել-
լիքը, որ իր թագաւորութեան ճշմարիտ բնու-
թիւնը չհասկընալով կուզէր անոր ետեւէն երթալ.
անոր համբաւն ելած էր միանգամայն իբրև հրաշք
գործելու կարողութիւն ունեցող և իբրև մեծ վար-
դապետ մը. բազմութիւններ անոր ետեւէն կեր-
թային, և մէկ մարդ մը՝ անտարակոյս աշխարհա-
յին շահու յոյսով, ըսաւ անոր, «Տէր քու ետեւէդ
գամ՝ ուր որ երթաս: Աւ Յիսուս ըսաւ անոր,
Ազուէսները որջեր ունին, ու երկնից թռչուններ-
ըը բոյներ, բայց Արդին մարդոյ տեղ մը չունի,
որ հոն իր գլուխը դնէ»: Ղաշտին գազանները և
երկինքին թռչունները հանգչելու և պատասպարե-
լու տեղ ունէին, բայց մարդոց ամենամեծ բարե-
բարն երբոր եկաւ անոնց մէջ բնակելու, բան մը
չունէր որ կրնար իրը կոչել. քաղաքական օրէն-
քով բանի մը տէր չէր, և ստացուածք ըսուած
մէկ բանի մը վրայ իշխանութիւն չունէր. և ոչ
միայն իր պաշտօնը սկսած ատենէն վերջը աղ-
քատ էր, այլև իր տղայութեան օրերէն հետէ.
անոր ծնողքը չունէին այնչափ հարստութիւն ու
պատիւ որ երբ Անթիէհէմի մէջ բազմութիւն
կար՝ պանդոկի մէջ տեղ մը գտնէին, և ըստ այնմ
մտուրն եղաւ անոր օրօրոց. իր երախայութեան
ատենը օտար երկիր մը արքայութեան, և երբոր
ետ գարձաւ՝ անոր ծնողքը վախնալով գարձան
բնակեցան անանկ տեղ մը՝ ուր ոչ հարստութիւն
կար և ոչ փափկութիւն, ոչ պատուաւոր ընկեր-
ներ՝ որոնց մէջ մարդ կրնար բարձր աստիճանի

Տասնիչ . անիկա Վաղուվուցի կրկուցուէր նախա-
տական կերպով , և կը հարցուէր թէ «Մի՞թէ Վա-
ղարէթէն կարելի՞ է որ աղէկ բան մը ըլլայ» . այն-
չափ աղքատ էին Յովսէփ և Մարիամ՝ որ կա-
րող չէին հասարակ կրթութեան համար պէտք
եղած միջոցները տալ իրենց զաւակին , վասն զի ը-
սուած է թէ երբոր Քրիստոս կը կարգար՝ Հրէ-
աները կը դարմանային ու կը սէին , «Վնտո՞ր ասիկա
գիրքերը գիտէ , որ սորված չէ» : Վաւ աղքատ ու
անուս մարդիկ իրենք ընկեր ընտրեց , և տեղէ տեղ
գացած ատենը իր պիտոյքը չէ՞ որ ողորմութիւն-
նով կը հոգացուէր , այո՛ . բայց երկու տեսակ ո-
ղորմութիւն կայ . անիկա չէր ապրեր այն տեսակ
ողորմութիւնով որ յառաջ կուգայ տառապանք
տեսնելէն , և մեղքընալով կը ըլլայ . այլ ուր որ կեր-
թար՝ կային անանկներ որ կընդունէին զինքը իր
պաշտօնին նկատմամբ , և իրենց շնորհալի խօս-
քեր էին անոր խօսքերը . և անոնք իրենց պատիւ
ու առանձնաշնորհութիւն մը կը համարէին իրենց
ունեցածէն անոր բան տալը . ասանկ աղբիւրէ
բղխած օգնութիւնը՝ որ ուրիշ բան չէր , այլ լոկ
իր ցուցուցած ոգիին անդրադարձութիւնը , յօժար
էր այն ընդունելու , և ընդունեց . ու չերեւիր թէ
երբէք ուրիշ կերպ բան մը ընդունեց :

Վ. յսպէս էր Քրիստոնէութեան Հեղինակին
կենաց վիճակը . և հարկաւոր ու յարմար էր որ
այսպէս ըլլար . նախ՝ ցուցընելու որ անոր թա-
գաւորութիւնը այս աշխարհէն չ'էր , և անանկ ար-
դելք մը գնելու՝ որ մէկը չ'յարի անոր աշխար-
հային շարժառիթներով : Վան նիւթական բա-

ներ որ կրկառավարուին ծանրութեան ու յարակցութեան օրէնքներով . և կան զգայութիւններ և զգայական բարիք՝ որոնք կրկառավարուին փափաքով և երկիւղով . և կայ բարոյական ու հոգեւոր թագաւորութիւն մը : Այս թագաւորութեանը մէջ կառավարութիւնը տրամաբանական շարժառիթներով՝ արդարութեան ու անիրաւութեան ճանաչումով և բարոյական սիրով կրլայ : Այն շարժառիթները՝ որով մարդ այս թագաւորութեանը հպատակ կրլայ , բնաւ ունիցէ նիւթական բանի հետ բան չունի . անոր տեսանելի սահմանին մէջ մտնելու մէկը համոզելու ատեն՝ հարստութեան ու իշխանութեան խորհուրդը մէջ մտածին պէս , բուն իսկ անոր բնութիւնը կրփոխուի . անհուն կարեւորութիւն կար որ այս բանին առաջն առնուէր , և ոչ մէկ կերպով մը կրնար կատարուիլ այս բանը այնչափ ազդու կերպով՝ որչափ որ Քրիստոնէութեան ներդինակին նուաստ վիճակովը , և հարստութեան ու իշխանութեան ամեն կապակցութիւններէ բոլորովին զատուած ըլլալովը . ասանկ զատուիլ մը հարկաւոր էր իր խօսքին անդամ համաձայն ըլլալու համար , որ ըսաւ թէ իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ :

Արկրորդ՝ հարկաւոր էր Քրիստոսի ասանկ վիճակ մը ունենալ , որ երևար իր անձնական մեծութիւնն իբրև գլուխ հոգեւոր թագաւորութեան մը , և ամենաբարձր վկայութիւն մը ըլլար այն թագաւորութեան իրականութեանը : Այժմ Քրիստոս իրեն համար իր ըսածին պէս մէկն էր , չէր կրնար մարդոցմէ ընդունիլ իր իշխանութեան

վաւերականութեանը վկայութիւնը : Ինքն Աստուծմէ մեծ պաշտօնով մը եկաւ՝ իբրև դեսպան մէկ անհուն ու յաւիտենական թագաւորութեան մը . և ոչ միայն այն պաշտօնին ոգիին պիտի դրայէր , այլև անպատմելի չափով մը պիտի ցածցընէր և նուաստացընէր անիկա , եթէ հարստութիւնը բանի մը տեղ դնէր , կամ ունիցէ մասնակցութիւն մը ունենար ժամանակաւոր իշխանութեան համար մարդոց ըրած նուաստ ջանքերուն հետ : Ասկէ ի դատ՝ եթէ ասանկ չըլլար , յայտնի պիտի չըլլար որ անոր ճշմարիտ թագաւորութիւնն ինքնին կրնայ կենալ , և կարօտ չէ այն հրապոյրներուն և նեցուկներուն որ միայն անոնց մարդիկ սովորած են նայիլ . եթէ Քրիստոս ունենար հարստութիւն կամ իշխանութիւն՝ ինծի շատ դժուար պիտի դար այս ապացոյցն յառաջ տանիլ :

Արրորդ՝ ասանկ վիճակ մը հարկաւոր էր , որ անով ոչ միայն ցուցուի իր ինչ միտք ունենալը հարստութեան ու իշխանութեան վրայ , այլև ուղիղ գաղափար տայ և ուղիղ ոգի մը առթէ իրեն հեռեւորներուն՝ անոնց վրայ և անոնցմէ յառաջ եկած բարձր աստիճանին վրայ . անոնք հոգիին վերաբերութիւն չունեցող բաներ են . բան չունին հոգիին ան վիճակին հետ՝ որմէն կախուած է մարդուն որպիսութիւնը և ճշմարիտ պատիւն ու երջանկութիւնը : Քրիստոս եկաւ մարդիկ պատրաստելու անանկ թագաւորութեան մը՝ որուն մէջ ոչ ստացուածք կայ և ոչ հարստութիւն իբրև հաճութեան առարկայ , այլ ամեն բան օգին ու արեւին լոյսին պէս պիտի ըլլայ . և հոն եթէ իմա-

ցական ու բարոյական էակները մէկզմէկէ կը զանազանին, այս զանազանութիւնը լոկ մէկ աստղին միւս աստղէն փառքով զանազանելուն նման պիտի ըլլայ. վասնորոյ անհար է որ ճշմարտապէս Քրիստոսի ոգին ստացող մէկը այն բաներուն՝ ունենայ այն անձնասիրական ու կռապաշտական յարումը՝ որ այնչափ անկարգութեան ու ասկերջանկութեան պատճառ եղած է մարդոց մէջ :

Եւ դարձեալ Քրիստոսի այս վիճակը հարկաւոր էր՝ մարդոց իբրև մարդ ունեցած ճշմարիտ արժէքն ու պատիւը ցուցնելու համար : Անանկ աշխարհի մէջ՝ ուր որ մարդուն իբրև Աստուծոյ պատկերը ունեցող անմահ էակ ունեցած յարգը այնչափ փոխուած է հարստութեան ու պատուոյ յարգին, առաջին կարևորութիւն ունեցող բան մըն էր որ հոգևոր ուսուցիչ մը ինքն անձամբ կենայ ճշմարիտ ու կատարեալ մարդկութեան պարզ վսեմութեամբ : Քրիստոս այս ընելով ամեն դարու աղքատներուն՝ որոնց շատն իր աշակերտները պիտի ըլլային, անձնական պատուոյ մէկ օրինակ մը ու ձամբայ մը ցուցուց. և անանկ ըրաւ որ ուր որ իր կրօնքին ոգին տիրէ՝ հոն անհար ըլլայ որ ամեն մարդկային էակի ճշմարիտ յարգութիւն մը չըլլայ : Համակրութիւն չունէր մարդուն այն համարմանը՝ որով կը հպարտանայ տաղանդի՝ հարստութեան կամ իշխանութեան վրայ : Մարդուն իբրև հոգի կրնայէր, և անմահութեան կշիռին մէջ ամեն մարդ հաւասար կրնուէր. և իր քարոզութիւնները՝ ըրած աշխատութիւնները և քաջածները հաւասարապէս ամենուն համար էին :

Այլ կրնայ տեսնել կենաց այս խոնարհ ընթացքը և չզգալ որ բոլորը մէկ եղբայրութիւն մըն են, և չյօժարիլ միաբանութեան՝ համակրութեան և օգնութեան, ձեռնտու ըլլալ այն ամենուն՝ որոնց վրայ Քրիստոս այնպէս համարում ունէր և անոնց համար այնպէս հոգ կրտանէր: Ասանորոյ որչափ ալ որ տարօրինակ և անհաճոյ էր սկիզբէն՝ և միշտ ալ անանկ եղաւ շատերուն, բայց և այնպէս ընդունելու է որ եթէ Քրիստոս հոգևոր աղատիչ պիտի ըլլար՝ որ վերցնէ հպարտութիւնն և անձնասիրութիւնը և ամեն մարդ մէկ եղբայրութիւն ընէ, էականապէս հարկ էր որ նոյն իսկ այն պարագաներուն և վիճակին մէջ երևար՝ որով որ երևցաւ:

Ասկէ վերջը կը հարցնենք՝ թէ ի՞նչ գաղափար կը պահանջէր որ մարդիկ ունենան իր վրայ այս անձը՝ որ այնչափ վար վիճակ ունէր, ու այնպէս զուրկ էր ուսմունքէ՝ հարստութենէ ու պատուաւոր բարեկամներէ՝ որուն հասարակութեան մէջ գործելը հազիւ թէ երեք տարիէն աւելի տևեց, և խաչուելովը վերջացաւ: Ընդհանուր խօսելով՝ իրեն համար այնպէս կըսէր և կը պահանջէր որ այնպէս ընդունին մարդիկ թէ ինքն է Մեսիան, Աստուծոյ Արդին և շօր Աստուծոյ հաւասար ու մարդոց Փրկիչը. իսկ մասնաւոր կերպով խօսելով կըսեմ,

1. Թէ ինքն իրեն համար այնպէս կըսէր և այնպէս կը պահանջէր՝ որ մարդիկ ընդունին զինքը թէ ինքը կատարեալ ուսուցիչ մըն է:

2. Աւ կատարեալ օրինակ է մարդոց, և ցու-

ցուցած է անոնց թէ մարդն ինչպէս ըլլալու է :

3. Այլ թէ ինքը կատարելապէս անմեղ էակ մըն է :

4. Թէ ամեն մարդ սիրելու և հաղանդելու է իրեն :

5. Թէ կրօնը չէ հրաշքներ որ ուրիշ մարդ երբէք ըրած չէ :

6. Թէ իրմով շին Ատակարանին մարգարէ-
ութիւնները կրկատարուին :

7. Թէ յարութիւն պիտի առնէ մեռելներէն :

8. Այլ ինքը պիտի ըլլայ աշխարհին վերջին Ղա-
տաւորը :

Ասոնք էին իր պահանջումները, պահան-
ջումներ՝ որուն օրինակն եղած կամ լսուած չէր
անկէ առաջ, և մինչև անատենը ամենէն այլան-
գակ ու կարգէ դուրս ելեակայութեան տէր ե-
ղողն անգամ երազած չէր :

Շիմա այս պահանջումներուն ինչպէս պաշտ-
պանելը նայինք, որչափ որ միջոց ունինք բանն ու-
րոշելու: Այս ընելու ատեն հարկաւ ինչպէս որ
առաջագրած ենք, պիտի քննենք այն պահան-
ջումներն ընողին ինչպէս մէկն ըլլալը: Իսկ հոս՝
վերը ցուցուած մասնաւոր բաժանումներուն վրայ
զատ զատ չխօսած՝ երեք ընդհանուր ծանօթու-
թիւն պիտի աւելցնեմ հեղինակի մը խօսքերէն,
որուն ճարտասան ձայնը մահը ընդցուցած է: «Ան-
միջական զարմացում կուտայ մեզի Քրիստոնէ-
ութեան հեղինակին վրայ գտնուած այս եղական
բանը՝ որ երբ ամեն ուրիշ մարդիկ իրենց մտքին
կազմութիւնը ժամանակին ոգիէն առած են չա-

փով մը, Յիսուսի վրայ իր ծաղկած ժամանակին մէկ նշանը չտեսնուիր: Նաւական ճշդութեամբ գիտենք Յիսուսի ծնած ու մեծցած երկրին հասարակութեան փիճակը, անոնց խորհելու ոճը և անոնց ունեցած յոյսերն ու ակնկալութիւնները, և այնչափ հեռու է անոնցմէ՝ որպէս թէ կապրէր ուրիշ աշխարհի մէջ, կամ ամեն զգայարանք իր բոլորտիքի առարկաներէն դոցած. իր որպիսութեանը մէջ նոյն տեղին և ժամանակին բնութենէն յառաջ եկած բան մը չկայ: Անոր որպիսութիւնը չես կրնար իր ժամանակին մէկ բանին տալ. իր պատմութիւնը կրցուցնէ մեզի զինքը մէկ եզակական անձ մը՝ որ կապրի անանկ նպատակներու համար՝ որ իրմէ զատ մէկը չհասկընար, և մէկ եզակական անձի մը համակրութիւնը անգամ չվայելեր: Անոր առաքեալներն՝ իր ընտրեալ ընկերները եկան իրեն ժամանակին ոգիովը, և ուրիշ բանով աւելի յայտնի չերևար այս ոգիին զօրութիւնը՝ որչափ որ տեսնելով թէ որչափ ծանր կրգիջանէր այն ոգին այս արդարասէր անձանց վրայ՝ «Յիսուսի վարդապետութիւններուն»:

Ղարձեալ՝ «Յիսուսի վրայ զարմանալի եզականութիւն մըն է իր գաղափարներուն ընդարձակութիւնը: Քանի որ ամեն իր բոլորտիքն եղողները Մեսիայի մը կը սպասէին որ աղատէ Աստուծոյ հին ժողովուրդը, քանի որ ամեն շրէայի՝ շրէաստանը հոգարտութեան ու յուսոյ բացարձակ առարկան էր, Յիսուս եկաւ ինքզինքը բոլոր աշխարհին աղատիչը և լոյսը քարոզելով. և իր բոլոր քարոզութեանը և վարքին մէջ ամբողջ մարդ»:

կային ազգին յարարերութեան մէկ զգացում մը
կրտեսնուի անընդհատաբար : Այս մարդկային
ազգն երջանիկ ընելու՝ ընդհանրական կրօնք մը
տարածելու գաղափարը ամենէն վսեմ ու փառա-
ւոր գաղափարն էր որ երբէք մարդու միտք մտած
չէր : Անկէ առջի ամեն կրօնքները մասնաւոր ազ-
գերու տրուած էին . ոչ մէկ աշխարհակալ մը՝ օ-
րէնսգէտ մը կամ փիլիսոփայ մը փառասիրութեան
չափազանցութեամբ երբէք երազած էր ամեն ազ-
գերը մէկ հաւատքի մը հպատակեցնել :

Աւ դարձեալ՝ «Չեմ կրնար չաւելցնել Յի-
սուսի վրայ ուրիշ զարմանալի պարագայ մըն ալ,
և այս է այն անդրդուելի վստահութիւնը՝ որով
միշտ յառաջ կրնայէր իր նպատակին կատարուե-
լուն : Աղէկ տեղեակ ըլլալով այն կիրքերուն և
իշխանութիւններուն զօրութեանը՝ որոնք իրեն դէմ
ելած էին , և աղէկ գիտնալով որ իր կեանքը բրո-
նի պիտի կարծրնայ , բայց և այնպէս մէկ խօսք մը
չելներ բերնէն որ իր կրօնքին վերջապէս յաղթա-
նակ կանգնելուն տարակոյս մը ցուցնէ :

Նանին անմիջապէս յաջողելուն այսպէս բնաւ
անհամբեր չըլլալ , այլ բոլորովին թողուլը , ու միշտ
այնպէս ճանչնալը թէ ինքն՝ իր կրօնքը յառաջ չգա-
ցած պիտի մեռնի , և այս շատ ատենէ վերջն ըլ-
լալու անսահման յաղթութեան վրայ ունեցած
հանդարտ և անդրդուելի վստահութիւնը՝ նշանա-
ւոր բաներ են , որ մէկ փափուկ և շքեղ վսեմու-
թիւն մը կը դնեն մեր Տէրոջ վրայ , և բոլորովին
անմեկնելի են մարդկային սկզբունքներով կամ իր
ունեցած պարագաներովը :

Հիմա կանցնիմ քննել յերտազայ բաները, նախ՝
 Քրիստոսի այն ընդհանուր պահանջմանը մեջ՝
 որուն որ այս ծանօթութիւնները կրկերաբերին,
 այս կայ որ Քրիստոս իրեն համար այնպէս կը-
 սէր և կը պահանջէր՝ որ մարդիկ այնպէս ընդունին
 թէ ինքը կատարեալ ուսուցիչ է. ոչ միայն աշ-
 խարհի լայն մըն է՝ այլ աշխարհի լայն է: Այլ ո՞վ
 կրնայ անոր քարոզութեանը մեջ պակասութիւն մը
 ցուցնել, թէ բուն բանին նայելով և թէ եղած
 կերպին: Իբրև կրօնքի ուսուցիչ՝ իր քարոզու-
 թիւններովը մեր առջևը դրաւ Աստուծոյ հայրա-
 կան և սրբազան բնութիւնը. և մեզի սորվեցուց
 սիրել անիկա՝ և երկրպագութիւն ընել անոր հո-
 գիով ու ճշմարտութիւնով: Յայտնապէս անձնար
 է որ Աստուծոյ վրայ՝ թէ իր ստորագելեացը և
 թէ իրեն մատուցուելու պաշտօնին նայելով, Քր-
 իստոսի տուածէն աւելի բարձր գաղափար մ' ու-
 նենանք: Իբրև ուսուցիչ նաև սորվեցուց մեզի կա-
 տարեալ մարդկային պատասխանատուութեան՝ հո-
 գւոյ անմահութեան՝ մեռելոց յարութեան և ար-
 դարոց վարձքին ու չարերուն պատիժին մեծ վար-
 դապետութիւնները: Իբրև բարոյականի ուսուցիչ
 հաստատեց դրութիւն մը՝ որուն գլխաւոր յատկու-
 թիւններն ասոնք են, որ նախ՝ բարոյական օրի-
 նաց մէկ կատարեալ սկզբունք մը կը հաստատէ:
 Արկրորդ՝ սրտին վիճակը հաշիւի կաննէ: Ար-
 բորդ՝ կարգիլէ ամեն չարակամ և խանգարում
 տուող կիրքերը: Չորրորդ՝ կարգիլէ բոլոր լոկ անձ-
 նասիրական կիրքերը, ինչպէս են փառասիրութիւ-
 նըն ու հպարտութիւնը: Հինգերորդ՝ կարգիլէ

ամեն պիղծ կիրքերը: Ա եցերորդ՝ ամեն իր դրա-
կան պարտաւորութիւնները կը բովանդակէ առ
Մատուած և առ մարդ սիրոյ երկու մեծ պահան-
ջումներուն մէջ, որոնք՝ հիմա ամեն բարոյականի
հեղինակ կը միաբանին թէ մարդկային պարտուց
բովանդակութիւնն է: Ա թէ մարդուն իբրև գործ-
նական էակ նայինք, ո՞ր կէտ կայ՝ որուն վրայ բա-
ւական լուսաւորութիւն չտուաւ Քրիստոս, որ թէ
այս աշխարհիս և թէ հանդերձեալին մէջ իր ճշշ-
մարիտ երջանկութեանը չառաջնորդէ անիկա:

Առ ոչ իր քարոզութեան կերպն ասկէ քիչ զար-
մանալի է: Այն կը քարոզէր իբրև իշխանութիւն
ունեցող մէկը, և ոչ դպիրներուն պէս կամ փի-
լիսոփաներուն պէս՝ որոնք նուրբ որոշումներու
կըմանէին, և ամեն բան՝ բանին բնութենէն կը
հետեցնէին. իր ժամանակին ու իր ազգին բոլոր
ուսմունքին և իշխանութեանն ու նախապաշա-
րումներուն դէմ ինքը պարզապէս կըսէր, «Ճշշ-
մարիտ կըսեմ ձեզի»: Արիսօսէր անանկ հանդարտ
վսեմ՝ ու վճռողական ոճով մը՝ որ մարդոց կա-
տարեալ հպատակութիւն ու յարգութիւնը գրա-
ւող ամեն նշան վրան կրող մէկը պիտի խօսի: Վայց
իր ոճը եթէ իշխանաբար էր՝ նաև քաղցր ու հեղ
էր, եթէ վեհանձն էր՝ նաև անուշ էր, եթէ
հանդարտութեամբ՝ նաև եռանդով: Վանի որ
իր քարոզութիւններն երբէք քարոզուած բանե-
րուն ամենէն բարձր նիւթերուն վրայ էր, անանկ
պարզութեամբ խօսուած են և առակներով ա-
նանկ զարդարուած ու հասարակ առարկաներու
օրինակներով բացատրուած՝ որ միանգամայն շատ

դիւրբմբունելի եղած են. չկրնար ըլլալ իր զբու-
ցուածքներուն և առակներուն մէկ քանիէն գե-
րազանց՝ կամ անոնց հաւասարող բան, խորին և
ծանրակշիռ իմաստներ պարունակելու կողմանէ,
բայց և այնպէս պարզ ու գեղեցիկ են. յարմար
են՝ աղքատին ունակութիւն եղած խորհելու կեր-
պին, յայտնի ու բաց են անոր ընդունակութեա-
նց և դժուարին ու վերացեալ կէտերէն հեռու,
և միայն իր պարտաւորութիւններուն և յոյսերուն
նկատող վերաբերութիւններովը ցուցուած: Ա-
մենէն բարձր աստիճանի իմացականութեան տէր
եղողը չկրնար անոր տուած հրահանգութեան վախ-
ճանք առնել, բայց և այնպէս ամենատկարին ալ
յարմարութիւն ունի: «Արբէք մէկը այս մարդուն
պէս խօսած է» : Աչ մէկ ուսուցիչ մը բնաւ այն-
պէս միացուց իշխանութիւնն ու խոնարհութիւնը,
վեհանձնութիւնն ու քաղցրութիւնը, նախանձն ու
ճշդութիւնը, վստիմութիւնն ու պարզութիւնը, ի-
մաստի խորութիւնն ու ամենուն հասկանալու դիւ-
րութիւնը:

Արկրորդ՝ եթէ կատարեալ ուսուցիչ ըլլալու
պահանջմունքը այսքան բարձր էր, շատ աւելի
բարձր էր կատարեալ օրինակ ցուցնելը ու աշխար-
հին առջևը իբրև մարդու օրինակ մը կենալը:

Ամեն գործնական գիտութեան մէջ հրահան-
գութեան կատարեալ դրութիւնը՝ պարունակելու
է միանգամայն կանոն և օրինակ: Աթէ Աստուած
պիտի հաստատէր կատարեալ դրութիւն մը մար-
դուն կրթութեանը և հրահանգութեանը համար,
որ է մտածական և միանգամայն գործնական էակ

մը , հարկ էր որ ոչ միայն կատարեալ պատուէրներ տայ անոր , այլ կատարեալ օրինակ մըն ալ դնէ անոնց առջևը : Մարդուն կազմութիւնը կրպահանջէ ասիկա : Մարդը օրինակով աւելի կընէրգործուի՝ քան թէ պատուէրով , և պէտք է որ անանկ ըլլայ . ճիշտ գիտութիւններու մէջ անգամ երբոր կանոն մը կըտրուի , թէպէտ արդեամբք կըբովանդակէ ամեն նարաւոր խնդիր , սակայն հարկաւոր է օրինակներ տալ որ գործնականապէս տեսնուի անոր գործածութիւնը : Հատ աւելի պէտք պիտի ըլլայ ասիկա բարոյական յարաբերութիւններուն անհունապէս զանազանող կարգադրութիւններուն մէջ : Անծ օրինակ մը թէպէտ լուծեամբ բայց զօրաւոր կըխօսի համակրութեան զգացումներուն , և կօգնէ երեւակայութեան՝ կատարելութեան վրայ անոր ունեցած գաղափարներուն յստակութիւն տալով և ճամբայ ցուցնելով :

Եւ հոս՝ Քրիստոնէական կրօնքին մէկ մեծ յարմարութիւնը կերեւայ մարդուն բարոյական վիճակին և կարօտութիւններուն , որուն նմանը ուրիշ կրօնքներու մէջ հաստատելու խորհուրդն ալ եղած չէ : Ասոր վրայ չերկարեցի յարմարութեան նիւթը քննած ատենս , վասն զի միտքս դրեր էի հոս խօսիլ անոր վրայ : Քրիստոնէութեան հեղինակը իբրև մարդոց ասանկ օրինակ մը տուող ընդունուիլ պահանջելովը դոնէ կատարեալ դրութեան մը ինչ պահանջելուն վրայ ունեցած գիտութիւնը կըցուցնէ . եթէ արդեամբ տուաւ՝ ոչ միայն ըրաւ ինչ որ անօգնական մարդ մը չէր կըր-

նար ընել, այլ և ինձի կրթութի թէ այն որ չէր
 կրնար ալ խորհիլ: Մարդ չէր կրնար Քրիստոս
 չերեցած անոր որպիսութեանը վրայ գաղափար մը
 կազմել: Աւրիշ բան է մէկ կատարեալ որպիսու-
 թիւն մը ցուցուած ատենը անանկ ըլլալը ճանչ-
 նալը, և բոլորովին ուրիշ բան է յատկութիւնները
 անանկ կապակցելը որ անանկ որպիսութիւն մը
 կազմուի, և վարքով ալ ցուցնելը: Այս կէտին
 մէջ է որ կրտսններք գեղարուեստից մէջ ճարտա-
 րամտութեան արդիւնքներուն վրայ դատողութիւն
 ընելու հասարակ կարողութեան՝ ու նոյն արուեստ-
 ներուն մէջ գերազանց օրինակներ յօրինելու կա-
 րողութեան մէջ եղած բոլոր տարբերութիւնը, և
 առանց տարակոյսի կրտսմ՝ թէ իբրև արուեստա-
 կան գործ և ճարտարամտութեան արդիւնք, ըմ-
 բռնել նար եղածին չափ բարձր աստիճանի ճար-
 տարութիւն է մարդկային բնութեան մէկ կատար-
 եալ օրինակը գործքերովը նկարագրելով պարզա-
 պէս ցուցնելը: Մտքի ճարտարութիւն ունի այն
 մարդը որ կրնայ նիւթական բաներուն կատարեալ
 ձևն իր երևակայութեանը մէջ ըմբռնել, ու այն
 ձևերը իբրև կենդանի ցուցնել մեր առջևը մար-
 մարիոնի՝ լաթի կամ տպեալ թերթերու վրայ՝
 իսկ աւելի ճարտարամտութիւն ունի այն որ կրնայ
 մարդկային որպիսութեան տարբերը նոր՝ բայց
 բնական կարգով շարել, և իր նկարագրութիւնը
 իբրև կենդանի և բնականի համեմատ մեր առջևը
 խօսիլ ու գործել տալ: Արքոր Միքայէլ Ան-
 կելօն յառաջ կրբերէ արձան մը, կամ Ալթմանը
 նկար մը, կամ Միլտոնը տեղի մը և Շէքսպիրը

մարդկային որպիսութեան նկարագրութիւնը, մենք կրնանք դատել անոնք, թէպէտ չէինք կրնար յօրինել: Արդարեւ մտաց կարողութեան բարձր աստիճան մըն է՝ յառաջ բերել անանկ մարդկային խորհուրդներ ու շարժումաձևեր և որպիսութիւններ՝ ու հոս պիտի աւելցնեմ գործեր, որ ուրիշ մարդիկ կրճանչնան դերագանցութիւնը, բայց չէին կրնար յառաջ բերել: Այն կաւելցնեմ գործեր, որովհետեւ եթէ վարմունքի ընթացք մը սկիզբէն մտքին մէջ ծագեցնել և յօրինելու համար ճարտարամտութիւն պէտք է, նոյնը հաւասարապէս պէտք է նաև հետը բարձր աստիճան գործնական կարողութիւններ ալ՝ այն ըմբռնումը գործքով և արդեամբ ալ նիւթականացնել համարձակելու համար: Այսպէս վարուելու կարողութիւնը միշտ և թերևս ընդհանրապէս անանկ վերըմբռնման կարողութիւն չպարունակեր, այլ կրպարունակէ մտքի ճարտարութեան բուն իսկ ամենաբարձր տեսակը, և անկէ աւելի բան. և այն ինքզինքը մեծ գործքերով յայտնող ճարտարամտութեանը կենալուն համար է միայն վերըմբռնման կարողութիւնը յարգ կամ արժէք կունենայ:

Արդ՝ ինչպէս որ արձանագործութեան արուեստին մէջ ճարտարամտութեան վերջին աստիճանի ջանքը մէկ կատարեալ մարդկային կազմութեան ձև մը յառաջ բերելն է, անանկ ձև մը՝ որուն համար կրնայ ըսուիլ թէ թէպէտ բնութեան մէջ ոչ մէկ կազմութիւն մը բնաւ կը հաւասարի անոր, բայց ամեն կազմութիւն անոր որչափ որ մօտենայ՝ նոյն համեմատութեամբ կատարեալ կըլլայ, անանկ

ալ մէկ կատարեալ մարդկային էակ մը իբրև բա-
 ղադրեալ կազմութիւն մը ամեն մասն իրարու
 յարմարած ներկայացնել, և մեր առջևը կենաց ա-
 մեն բազմատեսակ յարաբերութիւններուն մէջ խօ-
 սիլ ու գործել տալը պիտի ըլլայ ճարտարամտու-
 թեան ըմբռնել նար եղածին չափ բարձր
 աստիճանի ճիգը, միանգամայն մէկտեղ առ-
 նելով այն ճարտարամտութեան խիստ մանուա-
 ծոյ տարրերը. այսինքն ներկայացնել անանկ
 էակ մը՝ որուն համար կրնայ ըսուիլ թէ թէ-
 պէտ ոչ մէկը երբէք նոյն գերազանցութիւնը
 ցուցուցած ունի, սակայն ամենը գերազանց կըլ-
 լան այն համեմատութիւնովը որ անոր կըմտե-
 նան: Փիլիսոփաներ՝ ճարտարամտութեան ու ճա-
 շակի տէր մարդիկ՝ ահա գործ մը ձեզի. ձեզ
 կըհրաւիրենք որ ընէք անիկա. ոչ թէ լոկ
 ընդհանուր խօսքերով պատմելու է բանը, այլ
 մէկ կատարեալ ու ամեն մասն իրարու հա-
 մաձայն բարեպաշտութեան մը խօսքերն ու գործ-
 քերը մանրամասնաբար նկարագրելու է. ասիկա
 կընէք և կընա՞ք ընել. ոչ չէք ըներ և չէք կրնար.
 շատ անգամ ջանք եղած է մարդկային որպիսու-
 թեան մէկ կատարեալ օրինակ մը նկարագրել,
 բայց չերևիր թէ մարդկային ճարտարամտութեան
 կարողութեանը տակ կիշնար այդ բանը. և եր-
 բոր Վրիստոսի այն վեհափառ՝ պարզ՝ գեղեցիկ ու
 կատարեալ որպիսութիւնը երևցաւ, անատենը
 տեսնուեցաւ թէ որչափ անզօր էին այն ջանքերը:
 Անշուշտ՝ ամենաբարձր փիլիսոփայական կանոն-
 ներուն նայելով, եթէ Աստարանիչները ներկային

այս որպիսութիւնը, ուրեմն երբէք երկրի վրայ
գանուած ամեն մարդոցմէ աւելի բարձր աստիճան
ճարտարամտութիւն ցուցուցած են անոնք: Իսկ ե-
թէ ասանկ որպիսութեան մը լոկնկարագրութիւնը
այսչափ գծուար է, ալ ո՞վ կրնար խորհիլ որ ի-
րօք ասանկ անձ մը ըլլայ և ցուցնէ այն որպիսու-
թիւնը իր կենացն ու դորձքերուն մէջ:

Արդ՝ մարդկութեան ճշմարիտ օրինակը իրօք
այսպէս ցուցուած ըլլալուն կամ չըլլալուն խնդիրը
իմ մտքիս ոչ միայն կրօնական՝ այլ և ամենախո-
րին փիլիսոփայական կարևորութիւն ունեցող խըն-
դիր մըն է: Այժմէ մարդկային ազդը իմացականա-
պէս երբէք յառաջագիմութիւն պիտի ընէ գերա-
զանցութեան մէջ, ճշմարիտ օրինակն ունենալու
է իր առջևը. առանց ասոր՝ ճշմարիտ յառաջագի-
մութիւն չկրնար ըլլալ թէ անհատի և թէ ընկե-
րութեան: Մինչև հիմա մարդկային ջանացողու-
թեան ամենամեծ գումարը բնաւ չկրցաւ մարդ-
կութեան փաստը յառաջացնել, և բնաւ չկրնար՝
մինչև որ մարդիկ մէկ շիտակ օրինակ մը չունե-
նան և ինքզինքնին անոր նմանցնելու ջնային. մենք
ասանկ օրինակի մը ինքզինքնիս նմանցնել կրցան-
կանք, ամեն ատեն որ մէկ փափաք մը կրզգանք
բարի ըլլալու. կայ մէկը որ այս օրինակը ձեռք
ձգելու փափաքող զրգիռ մը զգացած չէ իր ներսի-
դին: Մարդկային բնութիւնը որչափ որ աղնուա-
ցած բան մը ունի իր մէջը, նոյնչափ այս է անոր
փնտռածը. ասոր ետեւէն է որ մարդկային բնութիւնը
իր կուրութեանը և բարոյական կործանմանը մէջ
աակաւին կրխարխարէ. այս է որ շատերը՝ շատերը

ու խիստ շատերը երբոր նկատեցին Քրիստոսի որպիսութիւնը, փիլիսոփային ուրախութենէն աւելի մեծ ուրախութիւնով աղաղակեցին «Ն'ըրեգա՛ Ն'ըրեգա՛» դտայ՛ դտայ՛:

Մ.Յո՛ կը հաստատենք թէ այս օրինակը իբրև Քրիստոնէական դրութեան մէկ մասը ցուցուեցաւ Քրիստոսի վրայ՝ մարդկային բնութեան այս խորին կարօտութիւնը կրսենք թէ այն լեցուց . քանի որ նայինք Քրիստոսի որպիսութեանը վրայ, այնչափ աւելի պիտի համոզուինք որ մեր փնտրուածը հոն է, և աւելի պատրաստ պիտի ըլլանք աղաղակել, «Ո՛վ է ասիկա որ կուգայ իր շատ դօրութեամբը պանծալով քալելով»: Տայտնի է որ անոր կեանքին ամեն մասերը մարդուն օրինակ ըլլալու համար չեն, այլ միայն այն մասերը՝ որոնց մէջ մարդոց հասարակ եղած յարաբերութիւնները ունէր, և այն բաներուն նայելով մարդոցմէ մէկուն պէս կը շարժէր և կը պտրտէր. և ազատաբար կը մտնէր և կը խառնուէր ամեն կարգի և ամեն վիճակի մարդոց մէջ: Մ.Յնքան բազմատեսակ կերպերով մարդկային շահուց ու կիրքերուն դէմ կուգար, որ բոլորովին փորձուի և կատարելապէս յայտնուի ինչպէս մէկն ըլլալը, և օրինակ մը ըլլայ ամենուն: Մ.Յս օրինակը պիտի քննենք հիմա համառօտապէս:

Աստի կը տեսմ' նախ՝ թէ Մ'նոր բարեպաշտութիւնը եղական էր. ամեն բանի մէջ զՄ'ստուած կը դաւանէր, և Տէր այն բաները կրնէր՝ որ Մ'նոր հաճելի էին. ծիսական օրէնքը կը կատարէր, Սուրբ Վերքերը կը մեկնէր, և կը պատուէր անիկա իբրև

Աստուծոյ խօսքը, Շարաթ օրերը կրօնական պաշտամունքի ներկայ կրգանուէր, և անանկ նշաններ կան՝ որմէ կերևի թէ կանոնաւոր սովորութիւն ունէր առանձին աղօթքի, և ամեն մեծ գործքերը ներու ատենը աղօթք կրնէր. վեց անգամէն պահաս չէ որ պատմուած է թէ գոհութիւն տուաւ Աստուծոյ՝ կերակուր կերած ու բաժնած ատենը. մկրտուելու ատենը աղօթք ըրաւ. իր տասներկու աշակերտները ընտրելէն առաջ լեռը գնաց աղօթք ընելու. երբոր առաջին անգամ հրապարակաւ շատ բժշկութիւններ ըրաւ, «առաւօտուն շատ կանուխ ելնելով դեռ չուսցած՝ ելաւ ու գնաց անապատ տեղ մը, և հոն աղօթք ըրաւ» : Արբոր շատերը մէկտեղ կուգային որ անոր մտիկ ընեն, և իրենց տկարութիւններէն բժշկուին, անապատ տեղեր կառանձնանար և աղօթք կրնէր. երբոր կերակրեց հինգ հազար հոգին հինգ նկանակ հացով և երկու ձուկով, բաղմութիւնն արձակեց և լեռն ելաւ առանձին՝ աղօթք ընելու. անգամ մը բոլոր գիշերը աղօթքով անցուց. Պետրոս Առաքեալին համար աղօթք ըրաւ. Վազարոսի դերեղմանին վրայ աղօթք ըրաւ, եթէ աղօթք կրնայ կոչուիլ. հաղորդութեան խորհուրդին հաստատութիւնը լմնցած ատենը աղօթք ըրաւ. իր տագնապին ատենը աղօթք ըրաւ. խաչին վրայ աղօթք ըրաւ. իր աշակերտներուն սորվեցուց աղօթք ընել, և տուաւ անոնց աղօթքի այն օրինակը՝ որուն համար Մէյլի կրսէ թէ «Վսեմ խորհուրդներու յաջորդութիւն՝ և մտադրութիւնը քանի մը երևելի կէտերու ուղղելու՝ և ամեն վիճակի յարմար ու բաւական ըլլա»

ըու, և առանց խրթնաբանութեան համառօտ ըլլալու, և իր մէջը պարունակուած խնդրուածքներուն ծանրակշիռ և իրականապէս կարևոր ըլլալուն կողմանէ նմանը չկայ, և պիտի չըլլայ”։ Ամեն բանի մէջ Աստուծոյ կամքին կրնայէր, անանկ որ կրնար ըսել թէ իմ կերակուրս անոր կամքն ընելն է. Աստուծոյ կամքը կատարելապէս ընելը յայտնապէս իր կեանքը սնուցանող գլխաւոր տարրն էր։ Աւ այս բարեպաշտութիւնը մէկ բանաւոր բարեպաշտութիւն մըն էր, որուն մէջ չկար ճշդ-նաւորութեան կամ ծանր ու տխուր վարմունքի կամ մոլեռանդութեան կամ չափազանցութեան բնաւ երևոյթ մը։ Այսին զի՝

Արկրորդ՝ իր բարեպաշտութեանը հաւասարող բան միայն իր բարեսիրութիւնը կար։ Ասոր վրայ անկարելի է որ հարկըլլայ ինծի մասնաւոր օրինակներ յառաջ բերել. այս բանին նկատմամբ անոր ամբողջ պատմութիւնը երեք բառի մէջ կամփոփուի, “կրպարաէր բարիք ընելով”։ Առոր իր գործքերը բոլորովին անշահախնդիր էին։ Ննաւ չհրաժարեցաւ մէկու մը նեղութիւնը վերցնելէն, բայց բնաւ իր հրաշագործ կարողութիւնը իր օգուտին համար կամ գովութիւն ստանալու համար չգործածեց։ իր բարեսիրութիւնը՝ իր ժամանակին և ազգին ոգիին ուղղակի հակառակ, ընդհանուր էր, և կը բովանդակէր ոչ միայն շրէաները, այլ Սամարացիները և շեթանոսները։ իր բարեսիրութիւնը զրկանքէ վեր կը բարձրանար, այսինքն զրկանք կրելով չէր խափանուեր։ Այլ կրնախառնէր՝ ոչ կը գանգատէր և ոչ կը գաղթէր մարդոց ա-

դէկուսթեանը համար իր ըրած աշխատութիւններէն և քաշած նեղութիւններէն, երբոր մեծ անգթութիւններ կրնէին իրեն :

Աւ ոչ միայն բարեւէր էր, այլ և գթած : Արգթար բաղմութեանը՝ երբոր անոնք անօթի և յողնած կըլային : Արուսադէմի վրայ լացաւ : Արեկցութիւնով լեցուն էր : Արբոր տեսաւ որ Մարիամ կուլար և անոր հետ եկող Հրէաներն ալ կուլային, «Տիսուս լացաւ» : Նոյրովին քաղցրաբարոյ ու հեղ էր, գիրկը կառնէր պղտիկ տղաքը և կօրնէր անոնք, բայց և այնպէս աներկիւղ ու սաստիկ էր մեծամեծ անձանց անօրէնութիւնները յանդիմանած ատենը : «Այն եկաւ՝ կուտէր ու կըխմէր» և հեռու էր ամեն խստակրօնութենէն, բայց և այնպէս սրտով մաքուր էր : Հատ քաղցրութիւն ու խոնարհութիւն ունէր իր վրայ, ամենաբարձր վեհանձնութեան զգացումով մը մէկ տեղ՝ որ յայտնի կերևի թէ ունէր, իր աշակերտներուն ոտքերը լուաց նոյն ատենը՝ որ անոնց կըսէր թէ Աս ձեր Տէրը ու վարդապետն եմ. իր կողմնականներուն շատութիւնով չէր բարձրամտեր, և ոչ իր հետեւողներուն ետ երթալովը կըլհատէր : Իր սրտին մէջ նախանձ մը կըկրէր որ իր բարեկամներուն ըսել տուաւ թէ խելուած է, բայց և այնպէս իր խոհեմութիւնը՝ որ կըտեսնուէր զինքը վարպետ խօսքերով բռնել ուղղողներուն տուած պատասխաններէն, հաւասար էր իր նախանձին : Աւ ոչ իր նախանձը անխորաբար էր, վասն զի քանի որ պնդիւ կըհաստատէր հոգիով ու ճշմարտութիւնով եղած պաշտամունքին օրինաւոր ըլլա-

լը, միանգամայն արտաքին արարողութեան ալ
 պատշաճութիւնը կրնդ ունէր, մինչև անանուխին
 անգամ տասանորդ տալը, և կը յանդիմանէր իր
 միաստին համար եղած նախանձը, երբ որ զուտ շարժ-
 առիթէ յառաջ եկած չէր: Արդո՛ւթիւնը սաս-
 տիկ կը զգար, բայց և այնպէս կը տանէր առանց
 տրտնջալու: Մանկութեան ատենը իր ծնողացը
 հպատակ էր, և խաչին վրայ իր մայրը կը խորհէր:
 Չկայ առաքինութիւն որ եղականապէս չունենայ
 իր վրայ, և մարդ չկրնար ըլլալ անանկ վիճակի
 մը մէջ որ անոր օրինակն իրեն չյարմարի: Բայց
 Քրիստոսի օրինակին վրայ ըսուածները մէկ տեղ
 ամփոփելով՝ կըսեմ թէ Շատ անգամ ինծի զար-
 մանալի կուգայ անոր անանկ վիճակներու մէջ
 դրուիլը՝ որ նար եղածին չափ բարձր աստիճանաւ
 յայտնուի թէ իր բարեպաշտութիւնը և թէ բա-
 րեսիրութիւնը, և առիթ ըլլայ իրեն որ նար եղա-
 ծին չափ բարձր աստիճանի օրինակներ տայ եր-
 կուքէն ալ: Ենտարակոյս այս՝ Եստուծմէ այսպէս
 կարգադրուած էր: Արուց այն երկու մեծ սկզ-
 բունքները՝ որ մարդիկ կը կարօտին միշտ իրենց առ-
 ջլեն ունենալ, ասոնք են, այսինքն սէր և հպատա-
 կութիւն առ Եստուծ, և բարեսիրութիւն առ
 մարդ: Ալ միթէ առ Եստուծ կատարեալ սէր և
 հպատակութիւն չցուցնուց, որ իր ահարկու
 չարչարանքները և իր տագնապին ժամը իր առ-
 ջլեն ունենալով կրնար ըսել, «Ա՛յ թէ իմ կամ-
 քըս, այլ քուկդ թող ըլլայ»: Աւրիշներն իր ան-
 ձին պէս չէ՞ր սիրեր, և այն իր հրամայած՝ զրկանքի
 ներելու ամենագիտար պատուէրը, գործքով ալ

չկատարեց, այն որ աղօթք ըրաւ խաչին վրայ իր սպաննիչներուն համար. «Վհա այն մարդը» :

Եւ հոս այս կուզեմ ըսել թէ չեմ սեպեր որ ճիշդ խօսքով պարտաւորութիւն կոչուած ամեն բանի նայելով կատարեալ օրինակ մը ցույնելը՝ կատարեալ մարդկութեան վերաբերեալ ամեն բան մէջը կը պարունակէ. կատարեալ մարդկութիւնը ունենալու է դիւրազգայութիւն՝ փափկութիւն՝ վայելչութիւն և որպիսութեան գեղեցկութիւն, որոնք չկրնար ըսուիլ թէ իբր պարտաւորութիւն կը պահանջուի. և բոլոր ասոնք ալ ամենաբարձր աստիճանաւ ունէր Քրիստոսը. չկայ մաքուր և կարեւոր շարժութիւն մը որուն բոլորովին արժուն չըլլար. և ամեն փափուկ ու մեղմ բաները այն բարձրագոյն ու սաստիկ բաներուն հետ իր վրայ միացունեն ինչ որ զինքը յարմար օրինակ մը կրնէ ոչ միայն արանց համար, այլ և կանանց: Արչափ ճիշդ ու կատարեալ եղած պիտի ըլլայ բնութեան գեղեցկութիւններուն վրայ իր ճանաչումը, որ դաշտին շուշաններուն համար կրնար ըսել թէ Սողոմոն բոլոր իր փառքին մէջ անոնցմէ մէկուն պէս չհագուեցաւ, Քրիստոսի բոլոր ըրած շարժուածքներուն և բոլոր ըսած խօսքերուն մէջ ուղիղ ճաշակի անվայել ու անհաճոյ եկող բան մը չկար: Թէ ուրախութեան և թէ նեղութեան իր ունեցած զգայութիւնը սուր էր, հոգիով կուրախանար, և իր ուրախութիւնը սաստիկ կը բողբէր եռանդուն գոհութիւնով, շուտով գթութեան կը շարժէր, և քանի անգամ լացաւ. տղոց անմեղութիւնը իր սէրը կը քաշէր. իր սիրտը բաց էր բա-

ընկամութեան ազդեցութիւններուն . «Յիսուս կը սիրէր Մարթան և անոր քոյրը ու Ղալարոսը» . սիրելի աշակերտ մը ունէր . երբոր տեսաւ բարեբարոյ պատանի մը՝ սիրեց անիկա . անհաւատութեան վրայ կը վշտանար , և ազնուամիտ սրտմտութիւն մ' ունէր մոլութեան դէմ :

Ըստպէս ամեն կողմէն այսինքն թէ իր բարեպաշտութեանը՝ բարեսիրութեանը և ուրիշ առաքինութիւններուն , և թէ իր ունեցած կիրթ ախորժակին և փափկութեանը նայելով՝ յարմար օրինակ մըն է մեղի : Բայց որչափ ալ որ դժուար ըլլալու է ամեն այս մարդկային գերազանցութիւնները մէկտեղ գործքով ցուցընելը , շատ աւելի դժուար պիտի ըլլայ կապել անոնք անանկ որպիսութիւններու և անանկ վարմունքի մը հետ՝ որ յարմար գայ իր Մեսիա և աշխարհին վերկիչն ըլլալուն ալ . նարաւոր բան է որ Այս Առդումնէն մեծ եմ , հրեշտակներու խումբերուն կը հրամայեմ , մեռեալ կը յարուցանեմ , Ըստուծոյ Արդին և աշխարհին վերջին դատաւորն եմ ըսող մէկը անանկ շարժի և խօսի ու գործէ՝ որ իր ցուցուցած որպիսութիւնը պատշաճ գայ այս բարձր պահանջումներուն , և միանգամայն ունենայ Վրիստոսի ունեցած հեղ և մեղմ բնաւորութիւնը և խոնարհութիւնը : Բայց և այնպէս ասանկ է Աւետարանիչներուն ներկայացուցած որպիսութիւնը . պակաս կամ անհամաձայն բան չըկայ . իր առանց կարի պատմութեանին պէս իր որպիսութիւնը մէկ էր . կերեւի որ կատարեալ դիւրութեամբ կրնար այս մէկը մէկու անյարմար ե-

ընցած տարրները մէկտեղ կապել : Ասիկա կը խոստովանիմ որ իմ զարմանքս կը շարժէ . ցած վիճակի մը մէջ կատարեալ մարդկութիւն մը ներկայացընելը՝ մարդկային ճարտարամտութեան կարողութենէն վեր բան էր . բայց երբոր ասոր հետ կրկապուի հասարակութեան վերաբերեալ գործունեցող անձի մը և աշխարհի Անսիան ու դատաւորն ըլլալու պէս բարձր պաշտօնի մը պատշաճող ու հարկ եղող որպիսութիւնները , անատենը մէկ ներքին ընդաբոյս համոզում մը կունեննամ որ մարդկային նարք չկայ առջևս . անատենը այս որպիսութիւնը կը ներկայացնէ ինքրդինքր բարձրաբերձ լեռներուն և աստղալից երկիրներուն պէս վսեմութեան և զարմանքի ըզգացումներ զարթուցանելով :

Ա՛յժէ անհաւատը կըսէ թէ Ա՛յս գաղափարները տպաւորուած են առաջուց անոնք ընդունելու հակեալ միտքի վրայ , և ոչ թէ բնականապէս ծագած են , թող լսէ թէ ինչ ըսաւ իր մարդաբէներուն մէկը , «Արխոստովանիմ որ» , կըսէ Վ՛ուսո , «Սուրբ Արոց վսեմութիւնը զիս կը զարմացնէ . Ա՛ւետարանին սրբութիւնը սրտիս կը խօսի . տն՛ս վիլիստիայից գիւրքերը , բոլոր իրենց շքեղութիւնովը որչափ քիչ բան ունին ասոր հետ բաղդատելով , նա՛ր է որ միանգամայն այնչափ վսեմ ու այնչափ պարզ գիւրք մը մարդու գործըլայ . նա՛ր է որ այն անձը՝ որուն պատմութիւնը այն գիւրքը կընէ , լոկ մարդ ըլլայ . մի՛թէ մոլեռանդ կամ փառասէր ազանդաւորի ո՞ճ է այս . ինչ քաղցրութիւն ու ինչ սրբազնութիւն կայ իր վարմուն-

քին մէջ, ինչ շնորհալից խօսքեր են իր քարոզած-
 ները, և ինչ վսեմութիւն կայ իր խօսած առած-
 ներուն մէջ. ինչ խորին իմաստութիւն կայ իր
 ճառերուն մէջ, և ինչ արժնութիւն՝ փափկութիւն
 ու շիտակութիւն կայ տուած պատասխաններուն
 մէջ, և ինչ կատարեալ իշխանութիւն ունէր իր
 կիրքերուն վրայ: Ա՛ւր է այն մարդը՝ ո՛ւր է այն
 փիլիսոփան որ գիտէ գործել՝ չարչարուիլ ու
 մեռնիլ, առանց տկարանալու և առանց հպարտա-
 նալու: Յիսուս իր քաղաքացիներուն մէջ
 ո՛ւրկէ կրնար առնել այն վսեմ ու սրբազան բա-
 րոյականը, որուն՝ ինքը միայն գործնականը բրաւ
 և պատուէրները տուաւ. ամենաբարձր աստիճան
 իմաստութիւն կրլսուէր ամենակատաղի կոյր նա-
 խանձաւորութիւն եղած տեղէն, և խիստ դիւցազ-
 նական առաքինութեանց պարզութիւնը կրպատ-
 ուէր մարդոց մէջէն ամենէն անարդ ժողովուրդը:
 Սկրատէսի՝ անխռով իր բարեկամներուն հետ
 փիլիսոփայական քննութիւններ ընելով մեռնիլը,
 մեր փափաքիլ կրցած ամենէն ազնիւ բանն է. իսկ
 Յիսուսի՝ ամբողջ ժողովուրդ մը իրեն զրկանք՝
 երդիճանք և նախատինք ընելով, տանջանքներով
 մեռնիլը, մեր վախցած ամենաահարկու բանն է:
 Արքայ Սկրատէս կառնէ թոյնին գաւաթը՝ կօրհ-
 նէ անիկա բերողը որ միանգամայն կուլար, իսկ
 Յիսուս սոսկալի պատուհասի մը մէջ իր զայրա-
 ցած գահիճներուն համար աղօթք կընէ: Ա՛յն,
 եթէ Սկրատէսի վարքն ու մահը փիլիսոփայի
 վարք ու մահ էր, Յիսուսինն ալ Ա՛ստուծոյ վարք
 ու մահ էր՝:

3. Հատերուն գաղափարին նայելով վարքի
 կատարեալ օրինակը կատարեալ անմեղութիւն ալ
 կը պարունակէ իր մէջը, բայց մէկ քանի կողմէն՝
 անմեղութիւնը մարդկութեան կատարեալ օրինակ
 մը ցուցնելէն աւելի բան կը պարունակէ. որովհե-
 տե այս ցոյց քը արտաքին երևոյթին կը վերաբերի.
 Ե ո՞վ կրնայ ըսել թէ անանկ ցոյց ք մը չկրնար
 կենալ մէկ ծուռ զգացումի մը կամ անիրաւ հա-
 ճութեան մը հետ: Այլ ուրիշ կողմերէն ալ մար-
 գու կատարեալ օրինակ ըլլալը կատարելապէս ան-
 մեղ ըլլալէն աւելի ընդարձակ է. մարդկային է-
 ակ մը կրնար անմեղ ըլլալ և Քրիստոսի որպի-
 սութեան կատարելութիւններուն շատէն զուրկ
 ըլլալ: Այլ դարձեալ Քրիստոսի այս օրինակ ըլ-
 լալը և անմեղ ըլլալը՝ այնչափ տարբեր կողմերու
 կրնային և անանկ բոլորովին տարբեր առարկա-
 ներու կը վերաբերին, որ պատշաճ է անոնք
 զատ զատ քննել. կատարեալ մարդկութեան
 օրինակ տալը՝ մարդուն կարօտութիւններուն վե-
 րաբերութիւն ունի, իսկ անմեղ ըլլալը անոր
 Աստուծոյ ունեցած յարաբերութեանը և մեղ-
 քէն ազատիչ ըլլալու յարմարութեանը կը վերա-
 բերի: Արձեւմ հարկաւ ընդունելու է որ մեղքին
 զօրութենէն ուրիշները ազատելու անձը՝ ինքն ազատ
 ըլլալու է անոր զօրութենէն, և բոլորովին անոր
 սահմանէն դուրս ու հեռու: Այս անորոյ թէպէտ
 կրնանք մեր բնութեանը մէկ ցոյց+ը ըմբռնել, որ
 մեղի առանց պակասութեան երևի, երբ կրնայ ըլ-
 լալ որ վտահ չըլլանք թէ անմեղ է, բայց չենք
 կրնար իբրև մեղքէն ազատիչ ու վերկիչ եկող

մէկն ըմբռնել որ ինքը բարոյական ուղղութեան
խորհուրդով կամ զգացումով անգամ երբէք
չեղած ըլլայ: Բայց որովհետեւ Վրիստոսի գալուն
մեծ նպատակը «իր ժողովուրդը իրենց մեղքերէն
փրկելն էր», ուստի հարկ եղաւ որ ինքը մեղքէն
բոլորովին ազատ ըլլայ, և պահանջէ որ անանկ ըն-
դունին զինքը:

Վրդ՝ Վրիստոսի այս պահանջումն ընելուն՝
և իր Վաքեալներուն ալ նոյնը իրեն համար ը-
նելուն տարակոյս մը չկրնար ըլլալ: Վնոնք զօրու-
թեամբ իմացնելով ալ, ու որոշ խօսքով ալ ըրին
այն պահանջումը: Վրիստոս ըսաւ, «Չեզմէ
ով կրնայ զիս յանդիմանել մեղքի համար». նաև
կրսէր թէ Վս միշտ այն բաները կրնեմ որ շօր
Վստուծոյ հաճոյ է. և թէ Վս շօրը հետ մէկ եմ.
Պետրոս առաքեալ պարզապէս կրսէ թէ «Վսն
մեղք մը չգործեց», և թէ «այն սուրբ ու արդար»
է. և Պօղոս առաքեալ կրսէ թէ, «սուրբ է և ան-
մեղ՝ անարատ՝ և մեղաւորներէն զատուած»:

Բայց ինչ պահանջում մըն է այս, պահան-
ջում մը՝ որ բնաւ ուրիշ մարդկային էակ մը եր-
բէք ըրած չէ: Վսանկ պահանջում մը՝ որ եր-
բէք եղածներուն ամենէն տարօրինակն ու պաշտ-
պանելու ամենէն դժուարն է, որ միանգամայն
մեղքէ ազատիչ ըլլալուն մէջ ալ կրպարունակուի,
մահաբեր բան մը պիտի ըլլայ խաբեբայի մը նա-
րած գործքին: Վրդ՝ այս պահանջումը կրնգուն-
ուի՞ թէ կրմերժուի. և թէ ընդունուի՞ Վրիստո-
նէութեան պահանջումներն ալ անոր հետ կրն-
գունուին: Այժմէ մերժուի՞ Վրիստոնէութեան ալ

իրբև կրօնք ունեցած պահանջումները կրմեր-
 ժուին, վասն զի կրօնքին փրկութեան ու մեղքէ
 ազատութեան կողմէն ունեցած բոլոր արժէքն ա-
 սոր վրայ կրդառնայ. մարդիկ որչափ գիտութիւն
 որ կուզեն թող ստանան արտաքին վկայութեանց
 և լոկ եղելութիւններուն վրայ, բայց այս բնաւ
 չկրնար հոգևոր նորոգութիւն մը գործել. պէտք
 է որ Քրիստոսի դան և հաւատան անոր իբրև
 անմեղ էակ մը, եթէ ո՛չ չկրնար իրմէ զօրու-
 թիւն մը ելնել իրենց հոգևոր բժշկութեանը հա-
 մար:

Քրիստոսի անմեղ ըլլալուն ապացոյցը կը հիմ-
 նուի նախ՝ այն նոյն իրողութիւններուն վրայ, որ
 կը հաստատեն անոր կատարեալ օրինակ մ' ըլ-
 լալը: Այս բանին մէջ պատշաճ է ընդունիլ բուն
 իր վկայութիւնն ալ, որովհետև ինքը չէր կրնար
 խաբուած ըլլալ այս կէտին վրայ: Անոր կատար-
 եալ անմեղութիւնը նաև կը մակաբերուի իր ա-
 շակերտացը վրայ իր վարքին ըրած ներգործու-
 թիւններէն, աշխարհին վրայ ըրած ներգործու-
 թիւններէն, և այս բանէն՝ որ մէկու մը միտքը
 որչափ որ մաքրուի և բարձր աստիճանի հասնի,
 հետզհետէ աւելի մեծ մաքրութիւն և գերազան-
 ցութիւն կը տեսնէ Քրիստոսի որպիսութեանը վը-
 րայ, անանկ որ ի՛նչ բարձրութեան որ հասնի՝
 տակաւին կը տեսնէ որ Վրկչին վեհափառ կազ-
 մութիւնն իր առջևը կը շարժի:

4. Քրիստոս կը պահանջէր նաև որ ամեն մարդ
 զինքը սիրէ և նազանգի իրեն: Ինչպէս որ ա-
 ռաջ ըսի՝ բոլորովին եզակիան բան մըն էր Քրիս-
 տոսի:

տոսի ասանկ գերագոյն և հոգևոր տիրապետութեան մը իրաւունք պահանջելը՝ ոչ միայն մէկ ցեղի մը կամ մէկ դարու մը վրայ միայն, այլ և ամեն յաջորդ դարերու մէջ բոլոր մարդկային ազգին վրայ, ասոր մէջ կը պարունակուի որ ամեն մէկուն անձնական բարերարի յարաբերութիւն պիտի ունենայ, և անանկ որպիսութեան տէր ըլլալու է՝ որ մարդոց սէրը քաշէ: Աւ Քրիստոսի ուրիշ պահանջումներէն վերջը պէտք չէ ասոր վրայ զարմանալ: Քայց ի՞նչ սիրոյ փառաւոր թագաւորութիւն մը կը բանայ այս մեր առջեր: Ա՛հայն սիրոյ թագաւորութեան հիմը՝ որուն վրայ Վափուէոն խօսեցաւ Քրիստոսի թագաւորութիւնն իրենին հետ բաղդատելով: «Ա՛նձն Ա՛ղէքսանդր՝ Արսար և ես», ըսաւ, «դրութիւններ հիմնեցիմք. բայց ի՞նչ հիման վրայ հաստատեցիմք մեր ճարտարամտութեան նարքները, ու՞ժի վրայ: Յիսուս Քրիստոս միայն հիմնեց իր թագաւորութիւնը սիրոյ վրայ. և միլիոնաւոր մարդիկ այս ժամուն պատրաստ են մեռնիլ անոր համար. . . . ես կը մեռնիմ իմ ժամանակէս առաջ, և իմ մարմինս երկրին ետ պիտի տրուի որ որդերուն կերակուր ըլլայ. այս է անոր վիճակը որ մե՞ծն Վարդուէոն կոչուեցաւ. ի՞նչ անդունդ մը կայ իմ խորին թշուառութեանս ու Քրիստոսի յաւիտենական թագաւորութեանը մէջ տեղը, որ ան կը քարոզուի կըսիրուի՝ կը պաշտուի և բոլոր աշխարհ կը տարածուի»:

5. Քրիստոս իրեն համար հրաշագործ եմ կըսէր, և այնպէս կը պահանջէր որ մարդիկ ընդու-

նին զինքը : Աս կը յիշեմ ասիկա՝ ո՛չ թէ անոր
 համար որ այն միայն ըրած է այս պահանջուի՞ր՝
 կամ այն միայն հրաշք գործած է , այլ անոր
 համար որ ամեն մէկ պարագաներուն նայելով
 այս կողմէն բոլորովին մինակ կը կենայ . ես ար-
 դէն խօսեր եմ անոր հրաշքներուն որպիսու թեա-
 նը վրայ , թէ ինքնին բաւական են իր Աստուա-
 ծային առաքելութիւնն հաստատելու : Անոնցմէ
 մէկն իր անձնական օգուտին համար կամ ցոյց-
 քի համար կամ հետաքրքրութիւն յազեցնե-
 լու համար կամ թէ խելքին փշած կերպո՛ւ չը-
 գործուեցաւ . անոնց ամենը բարեփրական և
 Աստուծոյ արժանավայել էին : Իր հրաշքներուն
 թիւին ալ նայելով եղական էր իր ընթացքը . ե-
 ղած պատմութիւններէն հաւանական է որ մէկ
 անգամին՝ սկիզբէն հետէ բոլոր մարգարէներուն
 ձեռօքը գործուածներէն աւելի հրաշք գործեց .
 նաև բոլորովին պարզութիւնով և գիւրութեամբ
 ըրաւ անոնք , և ընդհանրապէս՝ որչափ որ կ'ե-
 բեի , բուն իր իշխանութիւնովը . « կը հրամայէր
 պիղծ դեւերուն՝ և անոնք կ'ենէին » . ծովուն ը-
 սաւ . « Աադրէ՛ լուս կեցիր » : Արբոր մեռեալը
 յարուց՝ պարզապէս այս ըսաւ , « Ա՛յ պատանի՛
 քեզի կըսեմ ելի՛ր » : Առաքեալները Վրիստոսի
 անունովը կընէին իրենց հրաշքները , և մարգա-
 րէներուն կերպը բոլորովին տարբեր էր , որ շէր
 տար ասանկ իշխանութիւն ու վեհանձնութեան
 տպաւորութիւններ :

6. Վրիստոս նաև կըսէր իրեն համար՝ թէ շին
 պատկարանին մարգարէութիւններն իր վրայ կը-

կատարուին : Այս պահանջումը որ խոստովա-
նելու ենք թէ ըրաւ , կը յիշեմ միւս պահան-
ջումներուն հետ , բայց անոր վրայ պիտի շերկա-
րեմ հոս , վասն զի միտքս աւելի կատարեալ կեր-
պով խօսիլ է անոր վրայ ուրիշ ատեն : Ինչ և
իցէ՛ թեթեւ պահանջում մը չէ կենալ իբրև հին
անտեսութեան սկիզբէն հետէ եղած բոլոր մար-
գարեութեանց ենթական և ամեն տիպերուն նա-
խատիար , պահանջում մը թէ ինքն այնչափ երե-
ւելի անձ մըն է՝ որ առաջուց սուրբ մարդիկները
իրեն համար խօսած են և Սուրբ Վիթքերն իրեն
կը վկայեն :

7. Վրիստոս կըսէր իրեն համար թէ մեռել-
ներէն յարութիւն պիտի առնէ : Ի՞նչ միտքով
ասանկ տարօրինակ բան մը կըսէ իր վրայ : Բայց
և այնպէս այս յայտարարութիւնը ստուգելու հա-
մար , այնչափ վկայութիւն ունինք որ հաղու թէ
ուրիշ հին եղելութեան մը համար այնչափ ունինք :

8. Վրիստոսի իր աշխարհիս վերջին դատա-
ւորն ըլլալուն վրայ բան մը պիտի չըսեմ , վասն
զի բանին բնութենէն անսկա ստուգելու միջոց
չունիմ . ինչև իցէ իմ ներկայ փաստաբանութիւնս
բոլոր հարկաւոր եղածը՝ անոր իր վրայ ասանկ
բան մ' ըսելն է . և ասոր վրայ միայն այս պիտի
ըսեմ որ ասիկա՝ իր վրայ ուրիշ ըսածներէն տար-
օրինակ է , և կատարեալ համաձայնութիւն ունի
անոնց հետ . եթէ իր վրայ ուրիշ ըսածներն չե-
ղունինք՝ հետեաբար այս ալ պիտի ընդունինք :

Այսպէս է Վրիստոսի վիճակը՝ պահանջում-
ներն ու որպիսութիւնը : Աւ արդ՝ նախաւոր է

որ ասանկ մէկը խարուած կամ խաբեբայ ըլլայ .
 մի՛թէ անկեղծութեամբ էր այս պահանջումներն
 ընելը՝ թէ ոչ . եթէ անկեղծութեամբ ըրաւ ան-
 ոնք՝ և հիմն չունին , ուրեմն կը հարցնեմ՝ Արնայ
 ըլլալ որ մէկ աղքատ՝ անուս՝ աննշան գիւղի մը
 մէջ մեծցած , և մէկ վար աստիճան արուեստի մը
 վարժուած պատանի մը ասանկ պահանջումներ
 ընէ , և բոլորովին խենդեցած չըլլայ . ասկէ այլան-
 դակ խենդութիւն կրնանք երեւկայել , մեր յի-
 մարանոցներուն մէջ ասկէ տարօրինակ մէկը կը-
 գտնուի : Անանկ մէկու մը՝ իր վրայ ասանկ բա-
 ներ ըսել և անանկ պահանջումներ ընելը չկրնար
 ընկ փառասիրութիւն կամ մոլեռանդութիւն ըլ-
 լալ , և ոչ ուրիշ բան մը՝ եթէ ոչ պարզ խենդու-
 թիւն : Ասոր վրայ աւելի կը խօսիմ , որովհետեւ
 կը յիշեմ որ իմ տղայութեանս՝ Աոր Ատակարանը
 կարդացած ատենս ասիկա ինձի շատ ներգործած
 է : Արբոր այս այնչափ նուաստ երեցող մարդը
 լսեցի , որ կրսէ՝ թէ Աս աշխարհի լոյսն եմ . « թէ
 որ մէկը ծարաւ է թող ինձի գայ , ու խմէ » . նաև
 կրսէ թէ Աս Աստուծոյ հետ մէկ եմ , թէ Ամեն
 բան իմ շօրմէս ինձի տրուեցաւ , և այն որ զիս
 կրտեսնէ շայրը կրտեսնէ , և թէ Անչ որ իմ ա-
 նունովս խնդրէք՝ պիտի ըլլայ ձեզի . և երկնից ամ-
 պերովը հրեշտակներու խումբերու հետ պիտի գամ
 աշխարհը դատելու , զգացի թէ ասոնք կը հաստա-
 տեն կամ այն պահանջումներուն իրաւացի ըլ-
 լալը՝ կամ անոնք ընողին յետին խենդութիւնը .
 Օարմանք չէ չհաւատացողներուն անոր համար
 ըսելը՝ թէ « Իւ կայ ասոր ներսիդին՝ ու խելը ուժ

է, ինչո՞ւ ատոր մտիկ կընէք" : Բայց անատենը՝
 ինչպէս հիմա ալ, կար այս անհակառակելի պա-
 տասխանը՝ թէ "Վ.Յս խօսքերը դիւահարի խօս-
 քեր չեն, միթէ դեր կոյրերուն աչքերը կրնայ
 բանալ" : Արբոր կրնայինք իր խօսած ճառերուն՝
 անոնց ոճին մէջ տեսնուած մտքի հանդարտու-
 թեանը՝ անոնց մէջ պարունակուած խորին թա-
 փանցող իմաստութեանը, երբոր կըտեսնենք որ
 ամեն դարու մէջ եղած գիւտերը ուրիշ բան չեն
 ըներ անոր՝ այլ միայն անոնց մէջ պարունակուած
 իմաստութիւնը աւելի կըպայծառացնեն, և այս
 դարու մարդոց ամենէն իմաստուն և ամենէն լաւ
 մասը անոր ոտքը կընստին իբրև իրենց ուսուցիչը,
 երբոր կըտեսնենք իր ընթացքին մէջ ցուցուցած
 այն դերաստիճան պատշաճութիւնը՝ որ է ամենա-
 ճախող պարագաներու մէջ իր վրայ տեսնուած
 անձնապատրաստութիւնն ու վեհանձնութիւնը,
 կըզգանք որ եթէ երկինքէն ձայնով զրուցուէր՝
 աւելի ստոյգ պիտի չըլար անոր միտքին խանդար-
 ուած կամ տկարացած չըլլալը : Վ.Յս բանը ինքիր-
 մէ կըվկայուի, բուն իր լոյսովը կըփայլի :

Արեմն միթէ առողջ միտքով ասանկ պահան-
 ջումները ըրաւ ուրիշները խաբելու դիտաւորու-
 թիւնով : Վսիկա՛ ինչպէս որ հիմա ակնարկեցի,
 ես անշարին կըսեպեմ : Աչ մէկ խելքի տէր
 խաբեբայ մը կրնայ այնչափ յիմար ըլլալ, որ ընտ-
 րէ ասանկ պահանջումներ ընելու և իր-վրայ
 անանկ բարձր գաղափարներ յայտնել : Բայց ե-
 թէ այս խորհրդածութիւնը համողական է, ո՞ր-
 չափ աւելի Քրիստոսի բարոյական որպիսութեա-

նը վրայ եղած խորհրդածութիւնը . տե՛ս իր անկեղծ և կատարեալ բարեպաշտութիւնը , իր ընդհանրական և անձնուրաց բարեսիրութիւնը , տե՛ս իր սրբութիւնը և աշխարհին վիճակէն դերաստիճան դերազանցութիւնը . մտի՛կ ըրէ խաչին վրայ իր սպանողներուն համար ըրած աղօթքը , և խորհէ՛ թէ նարաւո՞ր է որ բոլոր անոնց մէջ ինքը մտածած ըլլայ խաբէութեան խորհուրդ մը այնչափ խորին՝ այնչափ ընդարձակ և ընդունողին այնչափ կորուստի և տանջանքի և մարդկային յոյսերուն այնչափ յուսահատութեան պատճառ եղող՝ որմէ աւելին չկրնար ըլլալ : Մի՛թէ վե՞նք գիտեր որ ասանկ չէր : Ա՛յլ կարող ըլլայինք ասանկ բանի մը հաւատալու , բարութեան վրայ ունեցած այն վստահութիւննիս , որ մեր բարոյական կենաց կենսական տարրն է , պիտի վերնար : Ալ ի՞նչ պիտի մնար մեզի , եթէ ոչ մէկ կաշկանդող՝ նեղացուցիչ և կործանիչ կարծիք մը թէ վստահութեան հիմ մը չկրնար ըլլալ ուրիշ բարութեան նշաններու : Մենք ասոր չենք կրնար հաւատալ , չենք ուզեր հաւատալ : Ա երցուր եթէ կուզես օդին կենսական տարրը , մերկացուր արևը իր ճառագայթներէն , բայց մի վերցնէր ինձմէ այս բանը որ իմ կեանքս է . ինձի՛ թող Քրիստոսի՝ արդարութեան արեգակին որպիսութեան կատարեալ ու անարատ պայծառութիւնը :

Իմա կըմնայ աչքէ անցնել ինչ որ արդարև կըրպարունակուի նախընթաց ճառին մէջ , այսինքն է այնչափ՝ այն աստիճան տարօրինակ

պարագաներուն Վրիտանի վրայ հաւաքուիլը, և
 Մատուծմէ եկած պատգամաւորի պատշաճող այն-
 չափ զարմանալի ու բազմազան յատկութիւննե-
 րուն և նշաններուն անոր վրայ մեկտեղ դալը,
 ան ապացոյցներուն գումարումը՝ որ կուգան որ-
 պէս թէ աշխարհիս չորս կողմէն, և կըլլան իբրև
 աստղալից թագ մը Քրիչին գլխուն վրայ: Արո-
 շարար նկատելու արժան բան մըն է ապացոյցին
 արժէքը չափելու ատեն՝ որ մեր յիշած զարմա-
 նալի պաշտօններուն և յատկութիւններուն միայն
 մէկը չէ որ կատարելապէս կըկրէ այն, այլ ա-
 նոնց ամեն մէկը: Այն նոյն մեծ Աւուցիչն է՝
 որուն հաստատած դրութեանը բոլորտիքը կըկայ-
 նին բնական կրօնքն ու հին անտեսութիւնը, և
 բոլոր մարդկային դիտութիւնները, և խոնարհու-
 թիւն կընեն անոր, ինչպէս որ Յովսէփին եղ-
 բայրներուն որաները կընէին անոր որային, որ
 նաև կատարեալ օրինակ տուաւ մեզի, և կըկենայ
 մեր առջև իբրև մարդու օրինակ կամ նախա-
 տիպ: Այն անձն է որ «մեզք մը չգործեց»,
 հրաշքներ ըրաւ, մարդարէից գուշակութիւննե-
 րը լեցուց, մեռելներէն յարութիւն առաւ, և
 իր բոլորտիքը՝ ինչպէս որ վերջը պիտի ցուցնենք,
 կըշողշողէ արտաքին վկայութիւններուն պայծա-
 ութիւնը, և իր կեանքէն ու մահէն այնչափ
 զարմանալի արդիւնքներ յառաջ եկած են: Ա-
 թէ դիպուածի՝ վարդապետութեան կանոնովը հա-
 շուելու ըլլանք այն այնչափ բազմաթիւ տարօրի-
 նակ պարագաներուն մէկէն մէկ անձի մը վրայ
 պատահելու հաւանութիւնը, որոնց ամեն մէկը

կը հաստատուին այսչափ գորաւոր վկայութիւնսով, այս հաւանականութիւնը ցուցունող կոտորակը անհունապէս փոքր պիտի ըլլայ: Աթէ այս յատկութիւններուն ուրիշ մէկը միայն ուրիշ մէկ անհատի մը վրայ գտնուէր, ամենէն նշանաւոր անձը պիտի ըլլար պատմութեանց մէջ. բայց երբոր անոնք ամենը այն խոնարհ Յիսուսին՝ այն խաչեալին վրայ դիզուած կրտսնները, առաջիններէն մէկուն հետ ըսելու ենք, «Ղտանք Մեափան» ւ

Ճ Ա Ռ Թ

Արբոր աշխարհք եկանք Քրիստոնէութիւնը հաստատուած գտանք. իբրև անկախ դատող՝ մեր գործն էր քննել անիկա իր մարդկային վիճակին ու բարելաւութեանը ունեցած վերաբերութիւններուն նայելով, ասիկա նախընթաց ճառերուն մէջ ըրինք, վասնորոյ եթէ այս գրութիւնը ցուցուածին պէս ըլլայ, շատ փափաք պիտի ունենանք դիտնալ անոր ծագմանը և պատմութեանը վերաբերեալ ամեն բան, որ է արտաքին վկայութիւններ կոչուածը: Աւստի հիմա կը գտնանք այս վկայութիւններուն:

Վկայութեանց այս կարգին մէջ մեր փնտուելու բաները յարմարութիւններ կամ վարդապետութիւններ կամ կարծիքներ կամ մակաբերութիւններ չեն, այլ պարզապէս պատմական եղելութիւններ:

Միթէ կա՞ր Յիսուս Քրիստոս ըսուած անձ մը.

և խաչուեցա՞ւ, յարութիւն առա՞ւ: Ասոնք ճիշդ այն կերպով որոշուելու խնդիրներ են՝ որով պիտի որոշենք սա խնդիրները թէ (Օգոստոս Աեօար ըստուած մէկը կա՞ր՝ թէ ոչ, և Հոովմէական կայսրութեան ինքնակալը եղա՞ւ այն՝ թէ ոչ. ասոնք վերացեալ խնդիրներ չեն. և թողելու չենք որ ասոնց հետ կցուին այն անստուգութիւնները որ շատ անգամ հարկաւ կրլան անանկ խնդիրներու քննութեանը հետ: Այս ապացոյցի գիտութիւն մը, կան ապացոյցի օրէնքներ, և մեր ուղածըն ալ այս է որ այն օրէնքները Քրիստոնէութեան եղելութիւններուն վրայ գործածուին, ճիշդ ինտոր որ կը գործածուին ուրիշ եղելութիւններու վրայ: Մենք պնդիւ կը հաստատենք թէ ապացոյցը՝ պարզապէս իբրև ապացոյց, ինքնին քննուելու է. և թէ մէկ մարդ մը իրաւունք չունի առաջ եղելութիւնները քննելու, և առաջուց դատելու թէ անհաւանական են, և յետոյ այս անհաւանականութեան զգացումը ապացոյցին անցընելու: Մենք կը յարինք Պրոքըր անուն հեղինակին սկզբունքին՝ թէ մարդուն պէս էակի մը Քրիստոնէութեան դէմ եղած առարկութիւնները, որոշ անոր ապացոյցին դէմ եղածներէն իրօք ոչինչ են, եթէ չցուցուի թէ յիրաւի կը պարունակէ կամ ամբարիշտ կամ անտեղի բան մը:

Արդարև Քրիստոնէական կրօնքին մէկ զարմանալի յատկութիւնն է որ իր վարդապետութիւններուն ճշմարտութիւնը, և իր տուած շարժառիթներուն ոյժը անբաժանելի կերպով կապուած է այսինչ եղելութիւններուն ճշմարիտ ըլլալուն հետ,

որոնք առաջ կրնային զգայարանքով դատուիլ, և հիմա նոյն տեսակ պատմական ասպարոյցով հաստատուիլ՝ որ կրքանեցնենք ուրիշ եղելութիւններու վրայ դատողութիւն բրած ատեննիս : Արչափ ալ որ կատարելապէս քննեցի ներքին վկայութիւնները, որչափ ալ որ յագեցուցիչ կրսեպեմ ես անոնցմէ ելած ասպարոյցը, և որչափ ալ որ անպիտան սեպեմ սոսկ պատմական կրօնքը՝ որ ի հարկէ զուրկ կըլլայ ձեռնառու զօրութենէ, տակաւին որոշակի կրսեմ որ ես չեմ հաւատար պատմական փաստով չհաստատուած կրօնքի մը եթէ : Յիսուս Քրիստոս աշխարհ եկած և հրաշքներ գործած ու խաչուած և յարութիւն առած չէ, Քրիստոնէութիւնը խաբէութիւն մըն է, արդարեւ գեղեցիկ և բոլորովին անմեկնելի, բայց և այնպէս խաբէութիւն :

Թերևս բաւական խորհուած չէ թէ այս մասին ո՞րչափ հակառակ կուգայ Քրիստոնէութիւնը ոչ միայն ուրիշ կրօնքներուն, այլ և բոլոր փիլիսոփայական դրութիւններուն և խնդիրներուն : Քրիստոս ըսաւ, « Թէև ինձի չէք հաւատար, գոնէ գործքերուն հաւատացէք », ուրիշներն այսպէս չըսին : Այն եղելութիւնները՝ որոնց վրայ իրենց դրութիւնն իբրև կրօնք հաստատուած են, մէկ մարդու մը վկայութենէն միայն կախուած են : Ասանկ չըսեր ուրիշ փիլիսոփայական դրութիւն : Բոլորովին տարբեր բան մըն է փիլիսոփային՝ այսինչ վարդապետութիւնները մեզի ներկայացնելը, որ ընդունինք անոնք իր փաստաբանութեան ուժովը, և ականատեսի մը

վկայելը թէ, « Լն՝ որուն համար լսեցինք, որն
 որ մեր աչքերովը տեսանք, որուն նայեցանք, ու
 մեր ձեռքերը շօշափեցին, ձեռի կրպատմենք » :
 Քրիստոնէութիւնը արդարեւ հոգեոր կրօնք մըն
 է. բայց հոգեորութիւն մըն է եղելութիւններ
 րով յայտնուած և նիւթական ձևերու մէջ առ-
 նուած : Չհաւատացողին կըսէ, « Կատր հո՛ս
 բեր, և նայէ իմ ձեռքերս, ու բե՛ր քու ձեռքդ՝
 և իմ կողս խոթէ » , այս ըսելովը մէկ նոր կերպ
 քննութեան մը տակ կըդնէ ինքզինքը, քննութիւն
 մը՝ որուն ո՛չ ուրիշ կրօնք մը տակը կրնայ իյնալ :
 Բայց Քրիստոնէական կրօնքը ոչ մէկ քննութե-
 նէ մը կրտախօչի. կուղենք որ կատարեալ կերպով
 փորձուի անիկա. գիտենք որ զուտ ոսկիի նման՝
 որչափ փորձուի այնչափ պայծառապէս կըտեսնուի
 հարազատ ըլլալը : Կարգոց համար եղած կրօնքի
 մը իմ հիմա յառաջ բերելու տեսակ վկայութեա-
 նըս կարօտիլը յայտնի է. բայց դժուարութիւնը
 անհամեմատ կաճի՝ երբոր մէկը ջանայ մէկ խարէ-
 ութիւն մը պաշտպանել այս տեսակ վկայութիւ-
 նով, միանգամայն աղատաբար բայց ամենուն
 առջ՛ւր ձգելով անիկա :

Աւրինս որովհետեւ մեր նպատակը՝ այս կամ այն
 բաներն եղան ըսուած եղելութիւններուն իրակա-
 նութիւնը ստուգել է, թերևս աղէկ կըլլայ նայիլ
 այն հիմերուն՝ որոնց վրայ կը հիմնենք ուրիշ՝ և ա-
 նոնց նման եղելութիւններու ընծայած հաւատք-
 նիս : Ընդհանուր կերպով կրնայ ըսուիլ թէ այն
 միակ հիմը՝ որուն վրայ կրնայ հիմնուիլ մեր հա-
 ւատքը մեր անձամբ ականատես չեղած եղելու-

Թիւններնուն վրայ, այլոց տուած վկայութիւնն է: Ասիկա թէպէտ երբեմն ասանկ է, բայց շատ բաներու մէջ միայն ասիկա հաւատքի հիմն ըլլալը չիմ կրնար սեպել: Արքոր մէկ մարդ մը անապատի մը մէջ մէկ հին պատով գոցուած տեղ մը կը գտնէ, և անոր մէջ մարդկային ոսկորներ և քաղաքականութեան կարասի և գործիքներ, վկայութեան ուժ ունէ է որ կը հաւատայ թէ ատեն մը հոն մարդ բնակած է, որ հիմա բնաջինջ եղած են: Աւ թէ դարձեալ եթէ հարկ ըլլայ ինձի ապացուցանել թէ մեծն Նաբոլէոն ըսուած անձ մը իրօք աշխարհ եկած և հասարակարար իր վրայ պատմուած գործքերը կատարած է, միթէ լոկ վկայութեան վրայ հիմնելու եմ իմ փաստաբանութիւնս: Այլերևս վկայութեան փաստը կը պարունակուի անոր անունին օրը աղգային սովորութեամբ իրրեւ ուրախութեան օր պահուելուն մէջ, բայց ասիկա սոսկ վկայութեանն աւելի է: Մասայնմ երբոր երթամ այն տունը՝ ուր կըսուի թէ այն կրքնակէր, և այն գերեզմանը՝ որ կըսուի թէ հոն թաղուած է, և կըսեսնեմ այն թուրը՝ որ կըսուի թէ այն կըկրէր, սոսկ վկայութեանն որոշ փաստ մը կըսեսնեմ անատենը գերեզմանին և թուրին գոյութեանը մէջ: Ամեն օրէնս գետ գիտէ սոսկ վկայութիւն ու պարագայական ապացոյցով հաստատութիւն առած վկայութեան մէջ եղած տարբերութիւնը:

Արեմն այս տեղ կըսեսնենք որ ապացուցուելու եղելութիւններուն մէջ մեծ որոշում մ' ընելու պատճառ կայ. մէկ կարգը անոնք են՝ որ միայն

ականատեսներուն վկայութեանը վրայ կը հիմնու-
 ին , և միւսը անոնք՝ որոնք ո՛չ թէ լոկ վկայու-
 թեան վրայ կը հիմնուին , այլ յառաջ բերած են
 աշխարհիս վրայ մնայուն արդիւնքներ՝ որ հիմա
 ակներև կը տեսնուին , և բանաւոր կերպով վկա-
 յութեան ցուցուցածէն զատ ուրիշ պատճառներ
 ըու չեն կրնար տրուիլ : Աւ այս վերջին տեսա-
 կէն մասնաւորապէս ոմանք այսչափ հաստատ կա-
 պացուցուին՝ որ ոչ մէկ հրաշք մը կրնայ աւելի
 տարօրինակ ու հաւատալու աւելի դժուար և մեր
 փորձառութեան միօրինակ ընթացքին մէկ աւելի
 աստիճանաւ եղծումը ըլլալ , քան թէ այս տեսակ
 ապացոյցի մը մեզ խաբելը : Օրօրինակ Պոնա-
 բարդի գոյութիւնը և պատմութիւնը Աւրոպայի
 մէջ , բաներուն ներկայ վիճակին հետ այնչափ
 կապակցած է , ու անոր ապացոյցը այնչափ աղ-
 բիւրներէ կուգայ , և այսչափ բաներու վերաբե-
 ռութիւն ունի , որ այս ուրանալը գործնական ան-
 տեղութիւն մը պիտի ըլլայ . անանկ որ քաղա-
 քականութեան դէմ պիտի չսեպուի ասանկ ա-
 պացոյցը խնդիրի բերել ուղողի ըսել թէ Ղուն
 անկեղծաբար չես խօսիր :

Արդ՝ այս ընդհանուր հիմանը վրայ է որ
 Քրիստոնէութեան ապացոյցը կը հիմնուի . և կը-
 սենք թէ ոչ մէկը կրնայ խախտել այն սիւները՝
 որոնց վրայ այն կը հիմնուի , առանց պատմական
 ապացոյցի բոլոր շէնքը իր գլխուն կործանելու :
 Արտեմք թէ այս ապացոյցը չկրնար սուտ ելնել
 առանց ընդհանրական և բացարձակ պատմական
 սկեպտիկեանութեան . Քրիստոնէութիւնը կը կե-

նայ բոլոր իր կարգադրած հաստատութիւններով
 վը . Քրիստոնէական ժողովուրդները կրկենան ,
 և կարևոր բան մըն է մեր տրամաբանութեանը
 որ այս իրողութեան մեծութիւնը անտես չըլլայ :
 Աշխարհիս պատմութեանը մէջ մեծ եղելութիւնը
 այն է : Ա՛հա՛ կրօնք մը՝ մարդկային ազգին մեծ
 մասէն ընդունուած , այն ալ այն մասէն՝ որ քա-
 ղաքականութեան և արուեստի մէջ առաջին է .
 մէկը չուրանար որ անիկա յաղթեց միւս կրօնք-
 ներուն , և անոնց տեղը բռնեց , և մարդոց կար-
 ծիքներուն և սովորութիւններուն մէջ անանկ յե-
 ղափոխութիւն մը յառաջ բերաւ՝ որուն նմանը
 աշխարհիս պատմութեանը մէջ չկայ : Այս միայն
 կրօնական ու բարոյական յեղափոխութիւններ
 ըրած է , այլ անուղղակի կերպով ընկերական և
 քաղաքական փոփոխութիւններ ալ , անանկ որ
 բոլորովին ուրիշ կերպ ըլլայ մարդկային ազգին
 վիճակը : Այս անանկ մեծ ընդդիմութիւններով
 և հալածանքներով այս աստիճանին եկաւ , որոնց
 ոչ մէկ ուրիշ կրօնք մը կրցաւ կամ կրնար դի-
 մանալ . և հիմա ալ կրմնայ՝ ոչ թէ մարդոց բը-
 նական կիրքերը հաճեցնելով , կամ թող տալով
 անոնք և կորուստ ընել չպահանջելով . ուրիշ կը-
 րօնքներու պէս իր դոյութիւնը և զօրութիւնը
 կառավարութենէն կախում չունի . վասն զի թէ
 և շատ անգամ կառավարութեան հետ կապակ-
 ցած է , և անոր մէկ ձևը կառավարութենէն
 պաշտպանութիւն առած է , սակայն և այնպէս
 անիկայ շատ աղէկ կրճաղկի երբոր ինքն իրեն
 թողուի որ իր ճամբան երթայ և տիրէ մարդոց
 սիրտերուն իր յատուկ ուժովը :

Արդ՝ ասանկ կրօնքի մը աշխարհի վրայ դոյու-
թիւնը պէտք է որ մեկնուի : Անտեղի բան մը պի-
տի ըլլայ սեպել՝ թէ բարձր աստիճան մշակութիւն
եղած դարու մը մէջ այն ելնէ և կործանէ ուրիշ
կրօնքները, ու մարդկային ազգը անսկա քննու-
թեան չկանչէ, և իր ճշմարիտ ըլլալուն նշանները
չպահանջէ, և իր պատմութիւնը չգիտնայ : Տայց
եթէ այն եղելութիւնները՝ որոնց վրայ կրօնքը
հիմնուած է, անգամ մը ծանուցուի, յետին աս-
տիճան անհաւանական է որ այն եղելութիւններ-
ուն գիտութիւնը կորսուի և կրօնքը մնայ. կամ
այն որ շատ աւելի տարօրինակ պիտի ըլլար, ոչ
միայն այն եղելութիւններուն թէ աւանդութեամբ
եղած և թէ գրուած բոլոր գիտութիւնը կորսուի,
այլև այն ճշմարիտին տեղը մէկ սուտ ու շատ ման-
րամասն պատմութիւն մը անցնի, և սկիզբէն հե-
տէ ընդունի :

Վարձեալ մարդկային ազգին վիճակին վրայ
ծանրակշիռ ազդեցութիւն ընող եղելութիւններ-
ուն հետ է գլխաւորապէս որ աւանդութիւնը ին-
քըզինքը կրկապէ. և ասիկա՝ մարդկային ընկե-
րութեան կազմութեանը կից վերաբերութիւն ու-
նեցող հաստատութիւններովը, և այն եղած բա-
ներէն մնացած յիշատակներովը, և այն արարողու-
թիւններովը՝ որոնք շարունակուած են անընդհա-
տաբար յաջորդող և այն նոյն եղելութիւններուն
վրայ խորին զգացում ունեցող անձանց ձեռքով,
չկրնար ըլլալ որ չպահէ այն դէպքերուն գլխա-
ւոր մասերուն պատմութիւնը՝ որչափ ատեն որ այն
արարողութիւնները և յիշատակները կը մնան : Ար-

բոր կրտսենենք Քրիստոնէական եկեղեցի մը, որ
կրօնքին ծագման ատենէն հետէ կրկենայ իբրև
զատ և անկախ ժողովուրդ մը, և կրկատարէ արա-
րողութիւն մը շարատր անգամ մը կամ ամիսը կամ
երկու ամիսը անգամ մը ի յիշատակ Քրիստոսի
մահուանը, թէև աւանդութենէն զատ ուրիշ ա-
պացոյց չունենայինք, շատ զօրաւոր պիտի ըլլար մեր
կարծիքը թէ դոնէ Քրիստոս ըսուած մէկը աշ-
խարհ եկած ու մեռած, և սեպուած է թէ երևե-
լի օգուտ մը ըրաւ, և այս բանին մէջ ապացոյցը
մասնաւոր զօրութիւն մը ունի արարողութիւնն այն-
չափ յաճախ կրկնուելուն և այնչափ ընդարձակ
տարածուած ըլլալուն համար: Ազգային հպար-
տութենէ կամ տեղի մը յատուկ եղած մէկ զգա-
ցումէ մը ծագած խաբէութիւն ըլլալու կասկած
չկրնար ըլլալ, վասն զի նոյն աւանդութիւնը և նոյն
արարողութիւնը կրտսենենք ամենէն հեռաւոր եր-
կիրներուն մէջ ալ, միլիոնաւոր Քրիստոնեաներ
հիմա ասիկայ մէկ ամենասրբազան արարողութիւ-
նը կրտսեպեն այն կրօնքին՝ որուն համար պատրաստ
են իրենց կեանքը տալու. իրենք ալ ընդունեա-
ծ են անոնցմէ՝ որոնք հաւասարապէս յարած էին ա-
նոր, և այնպէս եղած պիտի ըլլայ մինչև մէկ կէտ
մը՝ որ կատարելապէս որոշ է պատմութեան մէջ,
որմէ այն աւանդութիւնը և գրաւոր պատմութիւ-
նըն ու այն արարողութիւնը մէկտեղ սկսեցին շա-
րունակուիլ:

Այս տեղը ուրեմն՝ կրտսենենք Քրիստոնէական
եկեղեցին որ ունիցէ ուրիշ ժողովուրդի պէս ո-
րոշ կազմութիւն մը և սերտ կապակցութիւն ու-

նի , և Քրիստոնէութիւնը իր հաստատութիւններովը՝ աւանդութիւններովը և պատմութիւններովը ամենը կատարելապէս մէկզմէկու համաձայն : Այս պատմութիւնները ճշմարտութեան նշանները կրկրեն իրենց վրայ . բան մը դիտցուած չէ որ ասոնց հակառակ գայ . ասոնք կը պարունակէ Քրիստոնէական եկեղեցւոյ ծագմանը մէկ պատշաճ ուխելքի մօտ պատմութիւնը . ընդունէ այն պատմութիւնը՝ և ամեն դժուարութիւն կը վերնայ , մերժէ անիկայ՝ և կը կործանեն բուն իսկ պատմական ապացոյցի հիմերը ուսիցէ եղելութեան համար . արդարև աշխարհին ներկայ վիճակէն այնչափ կիմացուին Քրիստոնէութեան ընդհանուր եղելութիւնները , և այնչափ կուտայ բանի մը աշխարհածանօթ ըլլալէն յառաջ եկած վստահութիւնը , այն վստահութիւնը՝ որուն թէև մասնաւոր կերպով չենք կրնար ինչպէս յառաջ դալը ցուցնել , բայց չենք կրնար տարակուսիլ , որ համարձակութեամբ կը սեմ թէ Հուադի արքեպիսկոպոսին Վարդէոն Պոնաբարդին գոյութեան և ընդհանուր պատմութեանը դէմ բերած առարկութիւնները որչափ որ խելքի մօտ են , և ինչ հաւանականութիւն որ ունին , այնչափ կրնայ ըլլալ Քրիստոսի գոյութեանը և ընդհանուր պատմութեանը դէմ բերուած ուսիցէ առարկութիւն :

Աւելի ևս անանկ հաստատուած եղելութիւնները ընդունելու ենք , երբոր կը յիշենք թէ ինչ կատարեալ վստահութիւնով կը հաւատանք այն բաներուն՝ որ լոկ վկայութիւնով հաստատուած են : Ասիկա՝ ինչպէս առաջ ճառի մը մէջ ըսուե-

ցաւ կրնայ այնչափ կատարեալ վստահութեան հիմն
 ըլլալ որ անկէ աւելին չենք կրնար ըմբռնել :
 Մի թէ ես կրնամ տարակուսիլ շուտ ըսուած
 քաղաք մը կամ Ա իկտորիս Թագուհի ըսուած
 անձ մը կենալուն, կամ թէ ժամանակով Պոնա-
 բարդ անունով մէկը եկած ըլլալուն . բայց և այն-
 պէս ես եղելու թիւնները ընկ վկայութիւնով գիտ-
 ցած եմ . ո՞վ կրտարակուսի կամ կրնայ տարա-
 կուսիլ () գոստոս Աեսար շուտմայ կայսրը ըլլա-
 լուն : Ո՞վ կրվախնայ ըսելու թէ Աս իմ կեանքս
 կուտամ եթէ Մեծն Աղէքսանդր ըսուած մար-
 դը չկար : Բայց և այնպէս մարդոց ստորութիւն-
 ներուն և ներկայ վիճակին մէջ այդ իրողութեան
 մէկ նշանը մնացած չէ , և անոր համար գրա-
 նուած աւանդութեամբ և գրութեամբ եղած վը-
 կայութիւնը Քրիստոնէութեան ունեցածին քոլը
 ոչինչի պէս է :

Արեմն վկայութիւնը երբեմն մեզ խաբելը ա-
 մեն տեսակ վկայութեան համար չէ : Արնայ այն
 տեսակ վկայութիւն ըլլալ՝ որ բնաւ սուտ եղած
 չէ , և չկրնար ըլլալ . և շատ ծուռ տրամաբանու-
 թիւն մըն էր շիւմին՝ ամեն վկայութեան վրայ
 առնելը այն անստուգութիւնը՝ որ վկայութիւնը
 ունի միայն այսինչ պարագաներու մէջ : Մենք
 կը հաստատենք թէ Քրիստոնէութեան համար
 եղած վկայութիւնը ինքնին առնելով անանկ վը-
 կայութիւն մըն է՝ որ նար չէ որ սուտ ելնէ ,
 ինչպէս որ գիտցուած չէ աշխարհի սկիզբէն հետէ
 երբէք ելնելը . և կը հրաւիրենք անհաւատները որ
 ցուցնեն ասանկ խաբէութիւն մը . երբոր ասանկ

բան մը ցուցնեն, անատենը թող ըսեն թէ վկայ-
յութիւնը անստոյգ է :

Շոս պատշաճ է յիշել վկայութեան վրայ ու-
րիշ սովորական եղած ծուռ տրամաբանութիւն
մ' ալ, որ նոյն մասին վրայօք եղած բանը ամ-
բողջին վրայ առնելու սկզբունքին վրայ հիմնուած
է, որն որ չափով մը ներդործութիւն ըրած է :
Նսիկա այս է թէ վկայութիւնը ժամանակ անցը-
նելով իր ոյժը կը կորսնցնէ, ամեն դար մէջ-
մէկ քիչ կը գողնայ անոր հաւանականութենէն :
Որպէս թէ ատեն մը ճշմարիտ եղող վկայութիւ-
նը միշտ ճշմարիտ պիտի չըլլայ, իսկ վկայութիւ-
նը՝ շատ կամ քիչ ժամանակ անցնելովը մարդոց
միտքերուն աւելի կամ քիչ հաւանական երևալը,
պարագաներէն որոշելու բան մըն է. չկրնար այս
ընդհանուր հաստատութենէն աւելի ծուռ բան մը
ըլլալ, որ կրնեն առ հասարակ. և բնաւ չեմ' ըն-
դունիր Վրիստոնէութեան համար եղած վկայու-
թեան վրայ նոյնը ըսելը : Նարը իբրև դար ինք-
նին վկայութեան ոյժը տկարացնելու յարմարու-
թիւն չունի, և շատ անգամ կը պատահի որ ստակ-
ներ՝ աւերակներ կամ նշանակներ՝ խորհրդաւոր
պատկերներ՝ փորագրութիւններ կամ ձեռագիր-
ներ գտնուելով՝ դարերով տարակուսելի եղած
վկայութիւնը կատարելապէս հաստատուած է :
Եւ արդարև Վրիստոնէութեան համար պատ-
մութեան տուած վկայութիւնը անցեալ հարիւր
տարուան միջոցին՝ փոխանակ աւելի տկարանալու
շատ աւելի աճած ու զօրացած է այս կերպով :

Բայց որչափ որ ալ վաւերական է վկայու-

Թեան ապացոյցը, մենք չենք սեպեր թէ միայն ա-
նոր կը վստահինք, այլ Քրիստոնէութեան եղե-
լութիւնները հաստատուած են ամեն տեսակ ապա-
ցոյցով՝ որով նար է մէկ անցեալ դէպք մը հաս-
տատել: Աստուծոյ թեանց մէջ անանկ մեծ եղելու-
թիւններ շատ քիչ կան, և իմ միտքս մէկ հատ
մըն ալ չգար, որ Քրիստոնէական կրօնքիններուն
պէս՝ իրենց նշանները և արդիւնքները աշխար-
հին քաղաքաւարեալ մասին ներկայ վիճակին մէջ
տեսնուի. անիկա նման է Օսմանցւոց Աոստան-
դնուպօլիսը առնելը՝ այն քաղաքին ներկայ վիճա-
կին նայելով հաստատելուն: Այս կէտը աւելի
կատարեալ կերպով բացատրելու համար ըսենք
թէ Օսմանցւոց վրայ բնաւ լսած չեղող մէկու մը
ձեռքը դիրք մը անցնի, որ կը պարունակէ անոնց
պատմութիւնը և Աոստանդնուպօլիս քաղաքը առ-
նել և իրենց մայրաքաղաք ընելը. եթէ այն դիր-
քը իր վրայ կը կրէ իր ճշմարիտ պատմութիւն մը
ըլլալուն ապացոյցը, կրնայ ըլլալ որ այն մարդը
ընդունի անիկա, և ասիկա պիտի ըլլայ լոկ վկայու-
թիւն: Նայց եթէ վերջը նոյն քաղաքը երթայ և
տեսնէ որ այն նոյն ազգը այն անունով քաղա-
քը իրենց մայրաքաղաք են ըրեր, և տեսնէ ալ որ
անոնց մէջ կը բնակին մէկ հպատակեալ ժողովուր-
դի մը մնացորդը, և թէ Օսմանցւոց թէ ուրիշնե-
րուն մէջ գտնէ միօրինակ նոյն աւանդութիւնը
այն նոյն դիպուածներուն վրայ, և տեսնէ ալ որ
ուրիշ անկախ պատմութիւններ ամեն կերպով կը
համաձայնին առաջ իր ձեռքը անցածին և այն
օրերը եղող զօրքին հրամանատարներուն բուն

Տեղինակութիւնը եղած նամակներուն, պիտի զգայ թէ տարակոյսի տեղ բնաւ չմնաց: Իսկ բոլոր այս ապացոյցը՝ և ասկէ աւելին պիտի ունենայ այն որ Մատթէոսի Աւետարանը և Քաթեղոց Կործքերը իր ձեռքը կանցնի, և յետոյ նոր կըտեղեկանայ աշխարհի ներկայ վիճակին և Նոր Կտակարանի միւս Գիրքերուն:

Այսպէս ընդհանուր կերպով խօսելէն վերջը ապացոյցին բնութեանը վրայ, կանցնիմ մասնաւոր կերպով քննել Նոր Կտակարանին Գիրքերուն արժանահաւատութիւնը և վաւերականութիւնը: Արժանահաւատութեանը խնդիրն է մեծ խնդիրը, բայց ներկայ պարագային մէջ վաւերականութեան խնդիրն անանկ սերտ կապակցած է ասոր հետ, որ զանց չառնուիր:

Ուստի հարցնենք թէ Ինչ ապացոյց ունինք որ Նոր Կտակարանին Գիրքերը գրուած են այն անձինքներէն՝ որոնց անուններն որ կըկրեն, և այն ժամանակը՝ որ կըցուցնեն թէ գրուած են:

Նոր Կտակարանին մէջ քսան և եօթը հատ զատ զատ Գիրքեր կան ութը հեղինակէ գրուած: Այս Գիրքերէն ոմանք կանոնաւոր պատմութիւն են, մէկը անձնական պատմութիւն է, բայց անոնց շատը միաբանեալ Քրիստոնէական ժողովուրդներու գրուած նամակներ են: Այս Գիրքերը՝ ըսուած ժամանակին և ըսուած անձինքներէն գրուած ըլլալուն կըհաւատանք:

Նախ՝ որովհետեւ այն ժամանակէն մինչև հիմա յաճախ և անընդհատ յաջորդութեամբ շատ հեղինակներ այն Գիրքերը կըյիշեն, և անոնցմէ առած խօսքեր մէջ կըբերեն:

1. Արտեսներք որ մէկ Մ. աքեալը միւսին գրութիւնները կը յիշէ: Պետրոս Մ. աքեալ Պողոսին գրութիւնները կը յիշէ, ճիշտ ինչպէս որ շատերը կըսեն, հասկընալու դժուար բաներ կը պարունակէ ըսելով. և նկատելու բանը այս է որ Սուրբ Վրոց ուրիշ Վիրքերուն հետ նոյն հեղինակութիւն ունեցող կը ճանչնայ անոր գրութիւններն ալ: Պետրոս Մ. աքեալին Պողոսին գրութիւնները այսպէս պատահաբար յիշելուն ոյժը ըստ բաւականին իմացուած չէ՝ երկուքին գրութիւնն ալ մէկ տեղ կազմուած ըլլալուն համար, բայց իրօք այնչափ մեծ է, որպէս թէ Պետրոս Մ. աքեալին թուղթը նոր գտնուած ըլլար:

2. Հինգ անձինքներու անունները կրող գրութիւններ կան, որոնք Մ. աքեալոց ժամանակակից ըլլալով կը կոչուին «Մ. աքեալական» հայրեր. և ասոնց երեքը Նառնարաս՝ Աղեմէս և Արմաս՝ անունով յիշուած են՝ Աոր Ատակարանին մէջ Սայց Նառնարասի և Արմասի տուած գրութիւններուն հարադատութեանը տարակոյս ըլլալով՝ անոնցմէ անուած խօսքեր յառաջ պիտի չբերեմ. վար աստիճան ապացոյցի կարօտութիւն չունինք:

Աղեմէսի նամակը Աորնթոսի եկեղեցւոյն գրուած է, և նախնիք իբրև անորը ըլլալը ամենէն ընդունուած կը խօսին անոր վրայ: Արենէոս կըսէ, «Մ. նիկայ գրեց Աղեմէս, որ երանելի Մ. աքեալները տեսած ու անոնց հետ խօսած է, և Մ. աքեալոց քարոզութիւնը տակաւին իր ականջը կը հընչէր, և անոնց աւանդութիւնն իր աչքին առջևն էր»: Աւ Վիտնէսիոս՝ Աորնթոսի եպիսկոպոսը,

այն թուղթին գրուելէն ութսուն կամ իննսուն տարի վերջը՝ որ է 170 երորդ թուականին, կը վկայէ թէ հին ատենէն սովորութիւն կար այն եկեղեցիին մէջ կարդալ անիկայ: «Մանաւանդ», կըսէ Աղեմէս, «յիշելով Տէր Յիսուսի խօսքերը՝ որով կըսորվեցնէր հեղութիւն և երկայնամտութիւն. վասն զի այսպէս կըսէ, Աղորմած եղիք որ ողորմութիւն գտնէք, ներեցէք որ ձեզի ներուի, ինչպէս որ դուք կընէք՝ ձեզի ալ անանկ պիտի ըլլայ, ինչպէս որ դուք այլոց մարդասիրութիւն կըցուցնէք՝ անանկ ձեզի մարդասիրութիւն պիտի ցուցուի. ինչ չափով որ չափէք՝ անով պիտի չափուի ձեզի: Այս հրամանով և այս կանոններով ինքզինքնիս հաստատենք որ միշտ իր սուրբ խօսքերուն նազանդութեամբ քալենք»: Աս այս հատուածը մէջ կըբերեմ այն միտքով որ այս հայրապետներուն՝ Սուրբ Վիրքէն առած ամեն խօսքերը յիշելուն վրայ եղած մէկ պարագան տեսնուի, որ այս է թէ խօսք մը առած ատեննին Աւետարանիչին անունը չեն տար, և այս պատճառաւ կրնայ ըլլալ որ ըսուի թէ անկէ առնուած չէ. բայց Աղեմէս Հայրապետ այս խօսքը Վատթէոս Աւետարանիչէն առնելը յայտնի է՝ խօսքերը մէկզմէկու նմանելէն և Հոսովմայեցոց և Արարնթացոց թուղթերէն ալ առածները արդարեւ նոյն կերպով ըլլալէն: Բայց ուրիշ օրինակ մը տանք. միթէ մէկը կրնայ տարակուսիլ յետագայ խօսքին ուրկէ առնուած ըլլալուն. «Յիշեցէք Տէր Յիսուսի խօսքերը, վասն զի ըսաւ. Այս այն մարդուն՝ որուն ձեռքովը կուգան գայթակ-

դուժիւնները . աւելի աղէկ կըլլար անոր որ ա-
ղօրիքի քար մը կապուէր ճիտէն և ծովը ձգուէր ,
քան թէ այս պղտիկներէն մէկը դայթակղեցընէր" :
Մ.Յս Աղեմէսի թուղթը գիտնալու է որ Հոսի-
մայեցւոց եկեղեցւոյն անունովը Աորնթացւոց ե-
կեղեցիին դրուած էր , և ասով կրնանք սեպել
թէ այն եկեղեցիին դատողութիւնը կը ցուցնէ
այն թուղթը :

Իզնատիոս Մետիոքի եպիսկոպոսն էր , և Քը-
րիստոսի համբառնալէն վերջը հարկաւ երեսուն-
ուեօթներորդ տարիէն հետէ նոյն եկեղեցւոյ մէկ
անդամը : Մ.Յս հայրապետը Սատթէոսի և Յով-
հաննէսի Մետարանէն խօսքեր մէջ կը բերէ , և
Պօղոս Մաքեալին Ափեսացւոց դրած թուղթէն
ալ կը բերէ՝ անիկա անունովը յիշելով :

Պողիկարպոս՝ Մաքեալներէն կը թուած՝ Քրիս-
տոսը տեսնող շատերուն հետ խօսած և Օմիւռ-
նիոյ եկեղեցւոյն վրայ դրուած էր Մաքեալներուն
ձեռքովը : Իրենէսոս՝ որ տղայութեանը տեսեր է
ղինքը , կըսէ " Իմ միտքս է այն տեղը՝ ուր երա-
նելի Պողիկարպոս կրնատէր , և անոր ելնել ու
մտնելը և իր վարուելու կերպն ու կերպարանքը
և ժողովուրդին խօսած ճառերը , և ինչպէս Յով-
հաննէսի և ուրիշ Տէրը տեսնողներուն հետ անոր
թէ հրաշքներուն և թէ վարդապետութիւններուն
վրայ ըրած խօսակցութիւնը պատմելը , ինչպէս որ
Աննայ Ղանին ահանատես վհաներէն ընդունեց ,
որ ասոնք ամենը Պողիկարպոս կը պատմէր Մ-րք
Վրոց համայնս " : Պողիկարպոսէն մէկ անտարակու-
սելի թուղթ մը մնացած է , և ասոր մէջ թէպէտև

կարճ թուղթ մըն է, քառասունի չափ խօսքեր կան որ յայտնի վերաբերութիւն ունին 'Աոր Ատակարանի Վերքերուն :

Իսպիսա Յովհաննէս Աւետարանիչին ունկընդիւներէն մէկն էր և Պողիկարպոսի մէկ ընկերը : Ասոր գրութիւններէն մնացած բան մը չունինք, բայց Աւետիոս անոր գիրքերէն հատուած մը մէջ կը բերէ, որուն մէջ Մատթէոս և Մարկոսի Աւետարաններուն մէկուն համար Մատթէոսինը և միւսը Մարկոսինն է կըսէ :

Ոս' ուրեմն ունինք անանկ հեղինակներու վկայութիւններ' որ ամենն ալ Առաքելոց հետ ապրած ու խօսած են, և իրենց գրութիւններուն մէջ բազմաթիւ խօսքեր ունինք' որոնք առնուած են 'Աոր Ատակարանի Վերքերուն շատերուն մէջէն, կամ թէ յայտնի վերաբերութիւն ունին անոնց, և նշանաւոր բան մըն է որ անոնք ամենն ալ միօրինակ ներշնչեալ գիրքերու վայլած յարգութեամբը կը խօսին անոնց վրայ :

Մտ ժամանակս բոլոր այս գրութիւններուն վաւերականութեանը տարակոյս եղած է, ինչպէս որ կը կարծուի թէ անանկ պիտի ըլլայ կարգ մը կրիտիսականներու և փիլիսոփաներու մէջ, որոնք կը տարակուսին բուն Քրիստոսի գոյութեանը, և կը տարակուսին բնաւ բան մը կենալուն և երբէք կեցած ըլլալուն . բայց որչափ որ ես կը հասկընամ բանը՝ չկայ տարակոյսի պատճառ մասնաւորապէս իմ յառաջ բերածներուս նկատմամբ :

Աւ հոս ծանօթութիւն մը պիտի տամ՝ որ պէտք է միտքերնիս ըլլայ ժամանակի խօսք ըրած ատեն :

նիս՝ երբոր կրխօսինք Քրիստոնէութեան սկսած
ատենին պատմութեանը վրայ : Ար այս է թէ ա-
ռաջին դարը Քրիստոսի ծնունդէն կսկսի , քանի
որ կրօնքին պատմութիւնը երեսունեւերեք տարի
վերջը կսկսի . անանկ որ առաջին դարուն վերջը
տակաւին վաթսունեւօթը տարի էր որ Առաքեալ-
ները սկսեցին ջանք ընել այն նոր կրօնքը հաս-
տատելու : Աւ երբոր մտածենք որ Յովհաննէս
Աւետարանիչ գրեթէ մինչև այս դարուն վերջը
սպրեցաւ , կրտսնուի որ ամեն բան ստուգելու
միջոցները շատ առատ էին :

Պողիկարպոսէն քսանեօհինգ կամ երեսուն տա-
րի վերջը կուգայ Յուստինոս վկան , որ առ հա-
սարակ ճանչցուած էր նախնի եկեղեցւոյ մէջ , և
նշանաւոր էր իբրև փիլիսոփայ՝ իբրև Քրիստոն-
եայ և իբրև հեղինակ : Անոր գրութիւններէն
մնացած ունինք միայն Քրիստոնէից համար եր-
կու ջատագովութիւն , մէկը՝ Հռովմայ Տիտոս
Անտոնիոս Պիոս Վայսրին , և միւսը՝ Վարկոս Ան-
տոնիոս Վայսրին և ծերակոյտին ու ժողովուրդին
դրուած . և իր շարադրած Հարցպատասխանին
Թրիֆօ անուն Հրէային հետ : Այց ասոնց մէջ
կրտսնները որ երեսունեօհինգ տեղ յայտնի Վատ-
թէոս Աւետարանիչէն միայն առնուած խօսքեր
կան , և մէկ տեղ մը լեռանը վրայի քարոզին մէկ
մասը բուն Վատթէոսի խօսքերովը : Առաքելոց
Պործքերէն և գրեթէ բոլոր թուղթերէն խօսքեր
կաննէ , կամ անանկ որ պայծառ կրտսնուի թէ
միտքը անոնց կրնայի , և յայտնապէս կրսէ թէ
Յայտնութիւնը Յովհաննէս Աւետարանիչ գրեց :

Այն գիրքերը որոնցմէ որ կաննէ իր մէջ բերած
 խօսքերը, կրկոչէ « Առաքելոց շարադրած պատմութիւնը » . « Առաքելոց և անոնց ընկերներուն
 շարադրած պատմութիւնը » , որ այս անունները
 մանաւանդ վերջինը ճիշդ կը համաձայնին Աւետարաններուն և Առաքելոց Գործքերուն հիմա
 կրած անուններուն : Այս կերպ յիշելը կը ցուցնէ
 որ այն գիրքերը բոլորովին ծանօթ եղած էին , և չկային անատենը Վրիստոսի վրայ այնպէս
 ընդունուած և յարգութիւն գտած ուրիշ
 պատմութիւններ՝ որ հարկ ըլլար ասոնք անոնցմէ
 որոշել : Յուստինոսն ալ իր առաջին Չատագովութեանը մէջ կըսէ թէ Առաքելոց պատմութիւնները
 և մարգարէից գրուածքները կը կարգացուին և կը մեկնուին Վրիստոնէից պաշտամունքի
 համար ըրած ժողովքներուն մէջ , որ կը ցուցնէ
 թէ Աւետարանները քաջ ծանցուած էին անատենը
 աշխարհի մէջ : Յուստինոսի այս վերջապետութեանը
 այն որ Վրիստոնէական կրօնքին վրայ իր
 ունեցած հաւատքը իր արիւնովը կնքեց , չկայ
 ուրիշ առարկութիւն , այլ միայն այս թէ հեղինակներուն
 խօսքերը իրենց անուններովը չըլիշեր . բայց
 սկեպտիկեանութիւնը ինքն ալ չըկրնար
 սեպել թէ այն գիրքերը որ այնքան ընդհանուր
 կը կարգացուէին և կը մեկնուէին Վրիստոնէական
 եկեղեցիներուն մէջ , որ Այսրին ուղղուած
 ջատագովութեան մէջ յիշէ անոնք , անանկ
 բոլորովին կորսուին որ անոնց մէկ նշանը
 կամ յիշատակութիւնը չմնայ , և սուս՝ ուրիշ
 գիրքեր շինուին և անոնց տեղն անցնին : Այս

Տեղինակին գրութիւններուն մէջ Քրիստոսի գրութեան ամբողջ պատմութիւնը կը գտնենք, բայց և այնպէս միայն երկու պարագայ կը յիշէ որ մեր Աւետարաններուն մէջ չգտնուիր :

Յուստինոս վկայէն ետքը կուգայ Տատիանոս անոր մէկ աշակերտը : Ասիկա ծաղկեցաւ 170 երորդ թուականին մօտ, և յօրինեց Աւետարաններուն համաձայնութիւն մը, որ ինքը կը կոչէր «Տիադեսարոն» որ ըսել է չորեքեան, որմէ կիմացուի թէ չորս և միայն չորս Աւետարան կայ եղեր անատենը :

Անատենը Վաղղիոյ եկեղեցիները իրենց մարտիրոսներուն չարչարանքներուն մէկ պատմութիւնը ղրկեցին Ասիայի և Փոխգիայի եկեղեցիներուն, և այն թուղթը պահուած է Ալեսքիոսի գրութիւններուն մէջ : Իրենց եպիսկոպոսը Պողինոս էր, որ անատենը իննսուն տարեկան էր, անանկ որ իր վկայութիւնը Առաքելոց վկայութեանը յաջորդը պիտի ըլլայ : Այս վկայութեանը մէջ կը տեսնենք Տեոկեալ խօսքը, «Անատենը կատարուեցաւ Տէրոջմէն ըսուածը՝ թէ ո՛վ որ ձեզ սպաննէ, պիտի սեպէ որ ծառայութիւն կընէ» . հանգերձ ուրիշ ասոր նման խօսքերով Առկաս Աւետարանիչէն և Վործք Առաքելոցէն :

Իրենէսոս՝ որ տղայութեանը Պողիկարպոսի աշակերտն էր, յաջորդեց Պողինոսին, որ ինն գաղաքին եպիսկոպոսն էր . ասիկա շատ զիրք գրեց, բայց իր՝ Տերեալիստութիւններու դէմ գրած հինգ զիրքն է բոլոր մնացածը : Ասոնց մէջ կը ցուցնէ որ կատարեալ տեղեկութիւն ունէր թէ ինչ և

թէ՛ Նոր Ատակարանին . Մեծատարաններուն տա-
 րածութեան ատենէն միայն դար մը վերջը ըլլալով ,
 և Մուսթեալներէն մէկ կարգ վերջը , իրեն և իր ժա-
 մանակակիցներուն համար կրսէ թէ Արնանք բոլոր
 գլխաւոր եկեղեցիներուն մէջ սկիզբէն հետէ ե-
 դած եպիսկոպոսներուն յաջորդութիւնը համբել :
 Ինչպէս շին Ատակարանը՝ անանկ ալ Նորը կը-
 յիշէ , և մէկն ալ միւսին պէս Մատուծոյ պատգամը
 կրկնէ : Եւ կատարեալ ու յայտնի վկայութիւն
 կուտայ Նոր Ատակարանի բոլոր Գիրքերուն հա-
 մար , Փիլիմոնի՝ Յուդայի և Յովհաննու երրորդ
 թուղթէն ի դատ : Եւ հոս կը գտնենք առաջին ան-
 գամ այն որ կը յուսացուի թէ ալ հիմա պիտի
 դանուէր , որ այս գիրքերուն բողոք կըլլայ իբրև
 հիմն Քրիստոնէական հաւատոյ : «Մենք մեր վեր-
 կութեան ճամբուն գիտութիւնը՝ կրսէ Իրենէոս
 «ուրիշ մէկէն չընդունեցինք , այլ անոնցմէ՝ որոնց
 ձեռքով որ Մեծատարանը մեզի բերուեցաւ . որ այն
 Մեծատարանը առաջ քարոզեցին , վերջը Մատուծոյ
 կամքովը գիրի անցուցին , որ մեր հաւատոյ հիմը և
 սիւնը ըլլայ դալու ատենները : Ինչու որ մեր Տէ-
 րոջը յարութիւն առնելէն վերջը անոնք շողոյն
 Արքայ զօրութիւնը առին վերէն իրենց վրայ եկած ,
 և ամեն բանի վրայ կատարեալ գիտութիւն ըն-
 դունեցին : Մնատենը գացին բոլոր երկրի ծայրե-
 ըր ու քարոզեցին մարդոց երկնային խաղաղու-
 թեան պարգևը , իրենցմէ ամէն մէկը միօրինակ
 Մատուծոյ Մեծատարանը ունենալով : Մյն ատե-
 նը Մատթէոս շրէից մէջ Մեծատարան մը գրեց
 անոնց լեզուովը , երբ Աետրոս ու Պողոս Մուս-

եալները ուսով՝ Վետարանը կը քարոզէին և հոն
եկեղեցի մը կը հաստատէին : Այլ անոնց վախճա-
նելէն վերջը Սարկոս ալ՝ Պետրոս Վաքեալին
աշակերտը և մեկնիչը , գրութեամբ մեզի նուիրեց
այն բաները որ Վաքեալը կը քարոզէր . և Ղու-
կաս՝ Պօղոս Վաքեալին ընկերը , գրեց անոր քա-
րոզած Վետարանը . վերջը Յովհաննէս՝ Տերօջը
աշակերտը , որ նաև անոր կուրծքին վրայ ինկաւ ,
նմանապէս հրատարակեց Վետարան մը երբոր
Նփեսոս կրքնակէր Վսիայի մէջ : Անշուշտ ասկէ
աւելի յայանի բան մը չէինք կրնար ուզել . և կան
ուրիշ խօսքեր ալ ասոր չափ յայանի : Ծանօ-
թութեան արժանի բան մըն է այս ալ որ թէ-
պէտ այսչափ ընդարձակ կը խօսի Սուրբ Վրոց վը-
րայ , բայց ոչ մէկ տեղ մը կը յիշէ հիմա անվա-
ւեր ճանչցուած գիրքերուն մէկը :

Իրենէստէն վերջը կուգանք Վթեմազորասին՝
180 թուականին մօտ , և թէոփիլոս Վնտիոքի ե-
պիսկոպոսին , և Վղէքսանդրիոյ Աղեմէս եպիսկոպո-
սին , մէկ նշանաւոր հեղինակ մը՝ որ Վոր Ատա-
կարանի գրեթէ բոլոր Վիրքերէն այնչափ խօսք կը-
յիշէ , որ եթէ ժողովուրի հատոր մը կը լեցնէ . ասիկա
Վետարաններուն ինչ կարգով գրուիլը կիմացնէ
մեզի , և վերջը կըսէ թէ Այս այս ծանօթութիւնը
չատ հին ատենի երէցներէն առած եմ :

Աղեմէսի ատեններուն մօտ ծաղկեցաւ Տերտու-
ղիանոս՝ Աարթագինէի եկեղեցւոյն մէկ երէցը , որուն
վկայութիւնը շատ ընդարձակ և բացայայտ է :
Վաքեալական եկեղեցիները համբելէն ետքը կըսէ ,
« Աստի ես կըսեմ թէ ասոնց մէջ և ոչ միայն

անոնց մէջ որ Առաքելական են, այլ անոնց ընկերակից եղողներուն մէջ ալ այդ Ղուկասու Աւետարանը նոր հրատարակուելէն հետէ ընդունուած է, որն որ մենք այնչափ նախանձաւորութեամբ կրնգունինք՝ : Ար յաւելլու նաև, «Առաքելական եկեղեցիներուն նոյն իշխանութիւնը կը հաստատէ՝ մեր իրենցմէ ընդունած միւս Աւետարանները, այսինքն Յովհաննէսին և Մատթէոսինը, թէպէտ և Մարկոսին հրատարակածն ալ Պետրոս Առաքելակները կը ստուգուի, վասն զի Մարկոս անոր մեկնիչն էր» : Աւրիշ տեղ մը Տերտուղիանոս կըսէ թէ միւս երեք Աւետարաններն սկիզբէն հետէ եկեղեցիներուն ձեռքն էր : Ալ այս վկայութիւնը չերևար թէ Վիրքերուն հրատարակութենէն հարիւր յիսուն տարիէն աւելի վերջն է :

Տերտուղիանոսի վկայութեամբը կը վերջացնեմ երկրորդ դարու հեղինակներուն խօսքերը մէջ բերելը, որոնց համար իրաւամբ ըսուած է թէ այնչափ բաղմամբիւ են Վոր Ատակարանէն իրենց առած խօսքերը, որ եթէ այն Վիրքը կորսուէր՝ գրութէ նորէն կրնար ժողովուիլ անոնց գրութիւններուն մէջէն :

Ալ հոս կրնանք Վէյլիյին հետ ցուցնել «Աւետարաններուն և Վորձք Առաքելոցին համբաւը որչափ ընդարձակ տարածուիլը, և այս նիւթին վերայ հեռաւոր և անկախ ժողովրդոց կատարեալ հաւանութիւնը : Հիմա՝ Վրիստոսի խաչելութենէն հետէ հարիւր յիսուն տարիի չափ էր, և այս միջոցին՝ թողելով Առաքելական հայրերը, կան Ահապօլիսի Յուստինոս վկան, Անտիոքի Թէոփի-

ըստ, Վաղղիոյ Իրենէոսը, Աղեքսանդրիոյ Աղեմէ-
 ար, և Արթաղինէի Տերտուղիանոսը, որոնք Սուրբ
 Վրոյ նոյն Վիրքերուն պատմական մասերէն, և
 կրնամ ըսել միայն անոնցմէ խօսքեր առած են" :
 Այս մարդիկը նաև եպիսկոպոսներ ու երէցներ
 ըլլալով՝ որ ասիկա կարևոր կէտ մըն է, իրենց
 վկայութեանը մէջ կրողարունակուի բաղմատիւ
 ժողովրդոց վկայութիւնն ալ : Ասիկա հասարա-
 կաց հաւանութեան հեղինակութիւնը կուտայ մե-
 զի : Աւ անշուշտ այս վարկումն ունեցող գիր-
 քերուն վրայ ասանկ հեղինակութիւն ու միաբա-
 նութիւն՝ որ հաղարաւոր մղոններու կը հասնի, ա-
 ռանց շատ աղէկ հիմն կենալու չկրնար ստացուիլ :
 Չիան ուրիշներ որ կրնան երբէք բաղդատուիլ
 անոնց հետ այս մասին :

Սովորական եղած է մինչև չորրորդ դարու հե-
 ղինակներու խօսքերը մէջ բերել . բայց ինչ
 հարկ կրնայ ըլլալ ասոր . ես կըսեպեմ թէ հարկ
 չկայ . մանաւանդ որ հիմա ամեն կողմէն կը շատ-
 նան այս վկայութիւնները : Սովորական եղած է
 նաև՝ և թերևս աւելի ճշդութեամբ համաձայն
 կուգայ տրամաբանութեան, աւելի սկիզբէն ըս-
 կել վկայութիւնները մէջ բերել, բայց մեր
 փաստաբանութեան ներկայ վիճակին մէջ ասիկա
 հարկաւոր չկրնար ըլլալ :

Իսկ երկրորդ՝ այս կըսեմ թէ Աջ միայն այս-
 չափ խօսքեր առնուած է այս Վիրքերէն, այլ և
 առնուած ատենը յարգութեան յատուկ տիտ-
 ղոսներ ու նշաններ տալով առնուած է . ինչպէս
 թէ ուրիշոս Անտիոքի Ապիսկոպոսը, որ այն Վիրքե-

բուն գրուելէն դարէ մը քիչ մ' աւելի վերջը ծաղկեցաւ, այսպէս կրսէ, "Այս բաները Սուրբ Գիւրքը և բոլոր Սուրբ Հոգիէն շարժուած մարդիկը կը սորվեցնեն մեզի, որոնցմէ Յովհաննէս Աւետարանիչ կրսէ, 'Սկիզբէն էր Տանը'": Որոգիներէս կրսէ թէ "Սեր կրօնքին՝ իմաստութեան ետեւէ ըլլալ սորվեցնելը, կը ցուցուի թէ Հրէից նախնի Աստուածաշունչէն որ մենք ալ կը գործածենք, և թէ Յիսուսէն հետէ գրուածներէն, որոնք եկեղեցիները կը հաւատան թէ Աստուածային հեղինակութիւն ունին":

Նաև այս գրուածները՝ ինչպէս առաջ ըսուեցաւ, հին ատենէն կը կարդայուէին Քրիստոնէից պաշտամունքին ատենը: Յուստինոս վկան՝ որ Քրիստոսի խաչելութենէն միայն հարիւր տարիի չափ վերջը գրեց, Քրիստոնէական պաշտամունքին մէկ ստորագրութիւնը տալով՝ այս նշանաւոր խօսքը կրնէ, "Առաքելոց պատմութիւնները կամ մարգարէից գրուածները կը կարդայուին որչափ որ ժամանակը կրներէ, և երբոր ընթերցողը կը գաղբի՝ նախադասը մէկ ճառ մը կը խօսի": Այս խօսքը մեծ ծանրութիւն ունի, որովհետև Յուստինոս՝ Քրիստոնէական եկեղեցւոյ ընդհանուր սովորութեանը վրայ կը խօսի հոս, և կը խօսի անոր վրայ իբրև շատոնցուրնէ հաստատուած սովորութիւն մը: "Առաքելոց պատմութիւնները" ըսելով մեր Աւետարանները ըսել ուզելը յայտնի է, որովհետև ուրիշ տեղ մը կրսէ, Աստուծոյ "Աւետարան" կոչուածներն են, և բաղմամբ խօսքեր առած է անոնցմէ՝ և ոչ ուրիշներէն:

Մեր հիմակուան ունեցած Սուրբ Գիրքը որ ատեն ժողովուրդ ու մէկ որոշ Գիրք մ'ըլլալը ստուգութեամբ գիտցուած է, բայց տարակոյս չկայ որ շատ կանուխ եղած է, և սկիզբէն հետէ այս ալ շին Ատակարանի հետը դասուած է: Պողիկարպոս՝ Նաաքելոց մէկ ընկերը, կրօն, «Աստահեմ որ դուք աղէկ վարժուած էք Սուրբ Գրոց մէջ, որովհետեւ այն Սուրբ Գրոց մէջ ըսուած է, Քարկացէք ու մեղք մի դորձէք»: Պողիկարպոսին՝ այս խօսքը այսպէս մէջ բերելը կըրցուցնէ որ իր ատենը Քրիստոնէական գրուածքներ կային իբրև «Սուրբ Գիրք» ճանչցուած. ասիկա բոլորովին համաձայն կու գայ Պետրոս Նաաքելին՝ Պօղոսի գրութիւնները իբրև Սուրբ Գրոց մասը ճանչնալուն: Պողիկարպոս ալ նոյն կերպով խօսքեր առած է Սատթէոսի Նետարանէն՝ Գործք Նաաքելոցէն՝ Պօղոս Նաաքելին տասը թուղթերէն՝ Պետրոսի և Յովհաննէսի առաջին թուղթերէն: Յուստինոս վկան ալ իր գրած ջատագովութեանը մէջ որուն վրայ առաջ խօսեցայ, (որ Պողիկարպոսի թուղթէն երեսուն տարիի չափ վերջը գրուած է) կրսէ, «Ասան զի Նաաքելներն իրենց յօրինած պատմութեանը մէջ որ «Նետարան» կըկոչուի, այսպէս աւանդեցին թէ Յիսուս այսպէս հրամայեց իրենց որ հացն առնեն և գոհութիւն տան»:

Ես այս նիւթին վրայ կըխօսիմ, որովհետև ըսուած է թէ «Նոր Ատակարան ըսուած Գիրքը չորրորդ դարէն առաջ չկար, և այս կէտին վրայ մեր ունեցած ապացոյցը ճիշդ մեր ուղածին պէս է, այսինքն ինչպէս որ պիտի սեպէինք թէ պիտի ըլլար

բանին բնութենէն, եթէ ճշմարտապէս չորրորդ
դարէն շատ առաջ կենային այն Վիրքերը. ճիշդ
անանկ է: Քսանեւոթը կտոր գրուածներ կան
վաթսուն տարուան միջոցին մէջ գրուած. սեպե-
լու չէ թէ մէկէն այս ամեն կտորներն ամեն ե-
կեղեցի պիտի ունենան, կամ թէ մէկէն կատար-
եալ միաբանութիւն մը պիտի ըլլայ անոնց ամե-
նուն վրայ: Պատշաճ է այսպէս ակնկալել թէ
այն գրութիւններէն օրինակներ պիտի առնուի և
հաւաքումներ պիտի ըլլայ, որոնց վրայ խնդիր
չկայ, և անոնց խօսքերը պիտի յիշուին գրու-
թիւններու մէջ, և վկայութիւն պիտի բերուին
ճիշդ մեր գիրքերուն պէս, մինչև որ խնդիր ծա-
գի ուրիշ գիրքի մ' ալ այն հաւաքմանը մէջ ըն-
դունուելուն վրայ, կամ այն հաւաքմանը մէկ մա-
սին հեղինակութեանը և վաւերականութեանը
վրայ: Ասեւ այնպէս պիտի ակնկալենք որ ան-
ատենը պիտի տեսնենք՝ որ այն Վիրքերն ինչ հի-
ման վրայ ընդունուիլը պիտի զրուցուի, և ընդու-
նուածներուն կանոնաւոր ցանկը պիտի շինուի:
Աւրեմն եթէ Չորրորդ դարէն առաջ ասանկ Վիրք
չկար ըսելով՝ ըսել կուզեն թէ Աանոնական Վիր-
քերը մինչև անատենը ժողովքով կանոնաւոր կեր-
պով որոշուած չէր, այդ ճշմարիտ է. բայց եթէ
ըսել կուզեն՝ ինչպէս որ հետուէն խօսքերով ա-
նանկ իմացնել կուզեն, թէ այդ գրութիւննե-
րը անատենը հրատարակուեցան, մէկը ասանկ
հաստատութիւն մը չկրնար ընել, եթէ ոչ յետին
ազիտութիւնով և յօժարակամ ստութիւնով:

Ճշմարիտն այս է որ մեր Արքազան Վիրքերէն

առնուած և անոնց վերաբերութիւն ունեցող
 երկու հարիւրէն աւելի խօսքեր կան առաջին դա-
 րուն մէջ Առաքելոց ժամանակակիցներուն գը-
 րուածքներուն մէջ, որոնց մէջ ունինք պատահա-
 կան ու անուղղակի վկայութիւն մը՝ որ աւելի յա-
 գեցուցիչ է, քան որչափ ունիցէ կանոնաւոր վը-
 կայութիւն մը կրնայ ըլլալ. և այս խօսքերուն
 մէջ մեր հիմակուան ունեցած Վիրքերուն տասնե-
 ինը կամ քսան հատին վրայ ծանօթութիւն կե-
 րելի: Արկրորդ դարուն մէջ աւելի բացայայտ ու
 ընդարձակ կրգտներէք վկայութիւնը. և առնուած
 խօսքերն այնքան բազմաթիւ՝ որ Աոր Ատակարա-
 նին մէկ մեծ մասը կրնար ժողվուիլ անոնցմէ:
 Արեւունեւից հեղինակ կայ այս դարէն՝ որոնց գը-
 րուածքներէն մէկ մասը մեզի հասած է. երրորդ
 ու չորրորդ դարերուն մէջ հարիւր հեղինակէն
 աւելի կայ՝ որոնց գրութիւնները կը վկայեն այս
 Վիրքերուն վաւերականութեանը, այս երկու դա-
 րերուն մէջ վաւերական գրուածքներուն ցանկեր
 շինուեցան և համաձայնութիւններ հրատարա-
 կուեցան, շատ լեզուներու թարգմանութիւններ ե-
 ղան, և Աանոնական Վիրքերը կատարելապէս ո-
 թոշուեցան: Այս որոշումն ըլլալու ատենը Ալես-
 բիոսէն կիմանանք 315 թուականին որ եօթը
 Վիրք կային՝ որոնց վրայ քիչ մը վարանում կար,
 և տարակոյսին պատճառներն ամբողջապէս ցու-
 ցուած են: Ալեսբիոս Սուրբ Վրոյ առ հասա-
 րակ ընդունուած Վիրքերուն ցանկն այսպէս կը-
 սկսի ցուցընել, «Չորս Արբաղան Աւետարաններն
 առաջին դասուելու են, յետոյ Վործք Առաքե-
 »

ըցը , անկէ վերջը Պօղոս Նաբեալին թուղթերը ,
 վերջը Յովհաննէս Նաբեալին թուղթը և Պետրոս
 Նաբեալին թուղթը հոչուածները վաւե-
 րական սեպուելու են . ասոնցմէ վերջը պիտի
 գրուի Յովհաննու Յայտնութիւնը՝ որուն վրայ ե-
 ղած այլ և այլ կարծիքները յարմար ժամանակին
 պիտի խօսինք : Ա իճարանութեան տակ եղած՝
 սակայն քաջ ծանօթ և շատերէն ընդունելի ե-
 ղածներէն Յակոբոս և Յուդա Նաբեալներուն
 թուղթերը , և Պետրոս Նաբեալին երկրորդ ու
 Յովհաննէս Նաբեալին երկրորդ ու երրորդ
 թուղթերը հոչուածներն են , թէ Նւետարանիչը
 գրած ըլլայ և թէ նոյն անունով մէկ ուրիշը” :
 Սակայն այս վերջի յիշուածներուն վրայ հետ-
 զհետէ ամեն տարակոյս վերցուեցաւ , անանկ որ
 Էրոնիմոսի և () գոստինոսի ատենը՝ որ է 342—
 420 թուականին , շատ ցանկեր շինուեցան , որոնց
 մէջ կը պարունակուէին բոլոր մեր հիմակուան ու-
 նեցած Վիրքերը , և ոչ ուրիշը :

Ա ասն որոյ թէպէտ կը տեսնուի որ ‘Նոր Ատա-
 կարանի գրութիւնները՝ մէկ քանիներէն ի զատ ,
 Նաբեալական ժամանակները ժողովուեցան մէկ
 հատոր մը եղան Նւետարաններ և Նաբեալներ
 անունով , և գրեթէ անթիւ են երկրորդ գարուն
 մէջ այս հատորէն առնուած խօսքերը , և թէ և
 տարակոյս մը երբէք ելած չէ անոնց ամբողջու-
 թեանը վրայ , սակայն մեր հիմակուան ընդունած
 Վիրքին վրայ՝ նախնի վկայութիւնը զգուշութեամբ
 քննելով իր ամեն մասովը կանոնաւոր կերպով
 միարանութիւն եղած չէր մինչև Վրիստոսի ծը-

Նունգէն վերջը երեք հարիւրերորդ և չորս հարիւրերորդ տարուան միջոցին : Եւ այց յիշելու է որ եթէ բարորակն վերցուին Վոր Առաջարանին բոլոր այն մասերն որոնց վրայ անատենը վէճ կար, Քրիստոնէութեան ճշմարտութեանն ապացոյցը բնաւ պիտի չտկարանայ, վասն որոյ ուղղակի փաստ կայ՝ բանին բնութեանը ներածին չափ կատարեալ, որ այն գրութիւններն՝ որոնց վրայ հիմնուած է Քրիստոնէական կրօնքին ճշմարտութիւնը, սկիզբէն կային և առանց տարակոյսի ընդունուած էին :

Վ. յնչափ կատարեալ ու անհակառակելի է հին հեղինակներէն այսպէս տրուած վկայութիւնը՝ որ եթէ անոր ընդդիմութիւն մը կամ փոքր ինչ անվստահութիւն տուող բան մը չըլլայ, անանկ պիտի երևի թէ ասկէ աւելի վկայութիւն պէտք չկրնար ըլլալ : Յիրաւի եթէ հոս կենանք և խօսքը երկրնցնենք, այս գրութիւններուն վաւերականութեանը համար եղած ապացոյցի զանգուած մը պիտի ունենանք, որ հաւասար նութեամբ ոչ մէկ ուրիշ գրութեան մը համար կրնայ մէջ բերուիլ : Ահկերօնի խօսքերը կը յիշէ Առինատիլիանոս իր գրութեանը մէջ, որմէ կերևի որ անատենը այն գրութիւնները կային և Ահկերօնինը կը սեպուէին : Եւ այց Ահկերօնի գրութիւնները ոչ վիճարանութիւն և ոչ ընդհանրական հակառակութիւն գրողուցին, և ոչ աղանդներ կամ բաժանումներ հանեցին. վասնորոյ չկայ միջոց գիտնալու թէ ինչ համարում ունէին այն Վիրքերուն վրայ թշնամիները, և անոնց հեղինակութեանը բողոքող հա-

կառակ կողմերը, ասիկա՝ երբոր կրնայ ձեռք ձգուիլ ամենաբարձր տեսակ ասպացոյցն է, և Վրիստոնէական գրուածքներուն նկատմամբ խիստ կատարեալ ու յաղեցուցիչ է: Յիրաւի հերետիկոս հեղինակները կուրանան երբեմն Վ.ռաքեալին կամ հեղինակին անսխալ ըլլալը. բայց բնաւ չեն ուրանար որու գրուածքներն որ կըսուին՝ արդեամբք անոնցը ըլլալը: Վ.յսպէս Աերինթիւեաններ և Վալիոնիտեաններ՝ որոնք ելան երբ տակաւին Յովհաննէս Վ.ւետարանիչն ողջ էր, ուղեցին Մախիսական օրէնքը պահել, և անոր համար մերժեցին Պօղոս Վ.ռաքեալին թուղթերը, երբ կրնգունէին Մատթէոսի Վ.ւետարանը: Աւ Մարկիոն՝ 130 թուականին, որ մերժեց ին Ատակարանը և բանադրուեցաւ, թէպէտ շատ բարկացաւ և շատ անպատուութեամբ կըխօսի քանի մը Վիրքերու վրայ, բայց և այնպէս մէկ տեղ մը այն իմաստով խօսք մը չըներ թէ անոնք սուտ շինուած են: Աոյնը կրնանք ըսել բոլոր հին աղանդներուն վրայ: Աւնինք նաև Վրիստոնէութեան թշնամիներուն անուղղակի վկայութիւնը, ինչպէս Աելսոս՝ Պորփիրիոս և Յուլիանոս. որոնցմէ Աելսոս՝ Վ.ւետարաններուն հրատարակուելէն միայն հարիւր տարիի չափ վերջը ծաղկեցաւ, և մէկ սաստիկ ու դառն թշնամի մըն էր, և բոլորովին անհնար կերևի որ այն Վիրքերէն մէկը կամ մանաւանդ բոլորը սուտ շինուած ըլլայ, բայց և այնպէս այն չգիտնայ կամ չկասկածի: Արխօսի Վիրքերուն դէմ, կըջօնայ անոնց մէջ հակասութիւններ և դժուարութիւններ ցուցնել, բայց բնաւ փոքր

ինչ կասկած մը չցուցներ թէ անոնք սուտ շինուած են :

Այսին զի կրսէ, « Աւստի ես այս բաները ձեր գրութիւններէն ձեզի դէմ կրբերեմ, ուրիշ զէնք հարկ չըլլալով » : Պորփիրիոսի գրութիւններուն մէջ (որ ծնած էր 233 թուականին, և հին ատենները գտնուած՝ Վրիստոնէութեան ամենանրբամիտ և սաստիկ հակառակորդն էր) մէկ նշան մը չկայ անանկ կասկածի մը թէ Վրիստոնէական գրուածքները վաւերական չըլլան : Թէպէտ Վանիէի մարգարէութիւնը (ինծու կրկոչէ : Պորփիրիոս մինչև անգամ Վեետարանին պատմածներուն ճշմարիտ ըլլալը չուրացաւ, կրնդունէր որ Վրիստոս հրաշքներ ըրաւ, բայց անոնք մոգութեան կուտար, որ կրսէր թէ Ագիպոս սորվեցաւ : Յուլիանոս՝ որ սովորաբար ուրացող կրկոչուի, ծաղկեցաւ 331 էն մինչև 363 թուականին միջոցին : Վսիկա չորս Վեետարաններէն և Վործք Վռաքելոցէն խօսքեր կրսիշէ, բայց ոչ մէկ տեղ մը բնաւ կասկած մը կըցուցնէ անոնց բոլորին կամ մէկ մասին շինծու ըլլալուն :

Վպացոյցի ուրիշ աղբիւր մըն ալ հին թարգմանութիւններուն և ձեռագիրներուն մէջ կայ : Վսորերէն թարգմանութիւնը հաւանական է որ երկրորդ դարուն մէջ եղած է, և Վատինական առաջին թարգմանութիւնը գրեթէ նոյն ատենները : Հարկաւ այս թարգմանութիւնները չեղած՝ Վոր Ատակարանը կեցած և իբրև Վրիստոնէական կրօնքին ճշմարտութեան հիմը ընդունուած ըլլալու է : Վոր Ատակարանին կամ անոր մէկ մասին

Տին ձեռագիրներէն հաղարաւորները կան • ասոնց
երկելիներէն Տինդ հարիւրի չափը մեծ խնամ-
քով մէկզմէկու հետ բաղդատած են, որոնցմէ շա-
տր խիստ Տին են : Ա ասիկանեան կոչուած ձե-
ռագիրը շատ յազեցուցիչ ապացոյցներով կը հաւ-
տացուի որ չորրորդ դարու գործ է . և Ա ղեքսան-
դրեան կոչուածը Տինգերորդ , և գուցէ երկուքն
ալ շատ աւելի Տին : Աստի այս ձեռագիրները
գրեթէ ժամանակակից են անոնց որ Հերոնիմոս և
Նւսերիոս բաղդատեցին 315 թուականէն մինչև
420ին միջոցին , որոնք ղգուշութեամբ քննուած
Վոր Ատակարանի օրինակներ հրատարակեցին
անատենը Տին եղած ձեռագիրներէ : Այս ձեռա-
գիրներուն անթիւ բազմութիւնը , այն հետու եր-
կիրները՝ որոնցմէ անոնք ժողովուած են , և իրենց
պարունակածներուն նոյն ըլլալը , այլ և այլ դարու
հայրապետներուն իրենց գրութիւններուն մէջ
մէջ բերած խօսքերուն հետ , Վոր Ատակարանը
վաւերականութեան մասին ամեն Տին գիրքերէն
անհամեմատ վեր կը դասեն :

Արհարցները ուրեմն , թէ կայ մարդուն մտքէն
անցած մէկ տեսակ արտաքին ապացոյց մը՝ որ մեր
Արքայան Գիրքերը չունին :

Եւ այց որչափ զօրաւոր ալ ըլլայ արտաքին ապա-
ցոյցը՝ գրեթէ հաւասարի բանին պարագաներէն
և ներքին տեղիքներէ ելած ապացոյցին :

Ա ասն ղի եթէ այս գրութիւնները վաւերական
չեն՝ սուտ շինուած պիտի ըլլան . իսկ ասոնք ա-
նանկ գրութիւններ են և անանկ պարագաներուն
մէջ գրուած կըցուցնեն՝ որ սուտ նարելը աննար

կըլլայ . զորօրինակ ինք Տաաի չափ նամակ կայ
 իբրև բաղմամբիւ ժողովրդոց դրուած և անոնցմէ
 ընդունուած . և մէկ մարդ մը կրնայ Տաաաալ որ
 Տին Քրիստոնեաները կրնային ընդունիլ և կար-
 դալ՝ որ գիտենք թէ ըրին, եթէ շինծու ըլլային :
 « Եկուր Տիմա՝ կըսէ Տերտուղիանոս, եկուր Տի-
 մա, դուն որ կուզես քու Տետաքրքրութիւնդ շա-
 Տաւէտութեամբ բանեցնել քու փրկութեանդ
 դործին մէջ, աչքէ անցուր Առաքելական եկե-
 ղեցիներն՝ որոնց մէջ բուն Առաքելոց ամբողջը
 տակաւին կրկենան և անոնց վաւերական նամակ-
 ները կրկարդացուին, որպէս թէ բուն իրենց ձայնը
 նշեցնելով և անոնց դէմքերը ներկայացնելով » :
 Մէկ մարդ մը կրնայ խորհիլ որ այնչափ Տին
 ատենն այսպէս վրան խօսուած նամակները շինծու
 կրնան ըլլալ . ասկէ ի դատ՝ երբ շինուած կրնային
 ըլլալ . անշուշտ ոչ թէ Առաքելոց կենդանութեա-
 նը ատենը, վասն զի անոնք ստութիւնը կը յայտ-
 նէին . և անոնց մասէն վերջն ալ բարոյականա-
 պէս անկարելի է որ բնաւ մէկ ժողովուրդ մը ա-
 սանկ նամակներ իբրև անոնցմէ եկած ընդունի :

Այս ալ պէտք է յիշել որ Քրիստոնէութիւ-
 նը ծագեցաւ Տակառակութեան՝ ու սրատես և ան-
 մեղկելի Տակառակութեան մէջ : Անոր դէմ էր
 շեթանստութիւնը և շրէականութիւնը . նաև
 միշտ իր մէջը կային ումանք՝ որ սրտերնին ծուռ էր և
 պատրաստ էին Քրիստոնէութիւնը խայտառակելու .
 երբ Տարիւր տարիէն աւելի Քրիստոնէութիւնը
 սաստիկ ու արիւնահեղ Տալածանքի ենթակայ եղած
 էր յարատև . և ասանկ պարագաներու մէջ բարո-

յականապէս անկարելի է որ քսան և եօթը Վիրք սուտ նարուի և թէ բարեկամ ու թէ թշնամի խարուին անոնց վրայ իբրև վաւերական, և առաջին չորս հարիւր տարուան մէջ մէկը բնաւ մէկ կասկածի նշան մը չցուցնէ այն Վիրքերէն մեծ մասին վաւերականութեանը վրայ : Արբոր Աելսոս երկրորդ դարուն մէջ կը յանդիմանէ Քրիստոնեաները անմիաբանութեան համար, Արոզինէս կընդունի թէ այդ ամբաստանութիւնը ճշմարիտ է . բայց և այնպէս՝ կըսէ, չորս Աւետարաններն երկինքին տակը Աստուծոյ բոլոր եկեղեցին կընդունի :

Գարձեալ Նոր Ատակարանին լեզուն և գրութեան ոճը կը հաստատեն անոր վաւերականութիւնը : Հրէայ ծնած և Արուսաղէմի կործանումէն առաջ եղող մարդոցմէ միայն գրուած կընայ ըլլալ անիկա . իրենց հրէական նախապաշարումները և սովորութիւն եղած խորհելու կերպն ամեն կողմը կը տեսնուի : Արուսաղէմին ու տաճարին կեցած ատենին վերաբերեալ խօսքերով անանկ մանուած ու խառնուած է պատմութիւնը՝ որ մարդ կըրդայ թէ անկարելի է որ անատենը գրուած չըլլայ : Աւ աօիկայ աւելի յայտնի կըլլայ այն մասնաւոր լեզուէն՝ որով գրուած է Նոր Ատակարանը : Յունարէնն անատենը տեսակ մ' ընդհանրական լեզու եղած էր . բայց Պաղեստինումէ խօսուած Յունարէնը Յունաստանի Յունարէնը չէր, այլ Աբրայական Յունարէն էր այն, այսինքն Յունարէն մը՝ անատենը Պաղեստինումէ զործածուած Աբրայականի մասնաւոր ոճերովը

խառնուած • և ասանկ Յունարէն լեզուով գրուած են Մետաբարանները : Արուսաղէմի կործանումէն վերջն այս մասնաւոր կերպ Յունարէնը վերջացաւ • հաւանական չէ որ Յովհաննէս Առաքեալին մահէն վերջն ողջ մնացած մէկ մարդ ըլլար՝ որ կրնար այն երկու լեզուին մասնաւոր տարրերը մէկ տեղ խառնել, ինչպէս որ Աոր Ատակարանին մէջ է • բայց եթէ այս Վիրքերն Արուսաղէմի կործանումէն առաջ գրուած են՝ վաւերական ըլլալու են, վասն զի չէր կրնար ըլլալ որ Առաքելոց անունով զիրքեր շինուին սուտ՝ անոնց կենդանութեանը ատենը, և չյայտնուի ստութիւնը :

Այս ալ դիտողութեան արժանի է՝ որ Ակեղեցիները Աոր Ատակարանին Վիրքերուն ամեն մէկուն վրայ զատ զատ դատողութիւն ընելով կընդունէին • անոնք Սատթէոսի Մետաբարանն ընդունեցին բուն իր արժանաւորութեանը նայելով, և անոր ընդունելութեան խնդիրն ուիցէ գիրքի վրայ եղած խնդիրին հետ շիտածած չէր • նոյնպէս Պողոս Առաքեալին թուղթը Հռովմայեցոց Ակեղեցիին՝ այն Ակեղեցիին վաւերական դատեց, առանց Ափեսացոց թուղթին վերաբերութեանը • վասնորոյ եթէ Աոր Ատակարանը շինծու է՝ միայն մէկ խաբէութիւն մը չէ որ յաջողեր է, այլ մէկ մէկէ որոշ քսան և եօթը խաբէութիւն՝ որով խաբուած են իմացականութեան տէր մարդիկ, որոնց ուզած բանն էր խաբէութիւնը յայտնելը • Արդ՝ եթէ մտածենք թէ շատ քիչ եղած է որ շինծու գրութիւն ընելու ձեռք զարնուի, և թէ գրեթէ բնաւ եղած չէ ասանկ խաբէութիւն, միայն

Թէ մէկ մեծ անունի մը պատիւովն եղած ըլլայ, և թէ չկայ նարաւոր շարժառիթ մը՝ որ կրնայ տրուիլ խարդախութեամբ ասանկ քերտեր շինելու, եթէ միտք առնենք այն դժուարութիւնն՝ որ կայ ասանկ խարէութիւն մը ընելու, ինչ և իցէ պարագայով որ ըլլայ, նաև անոր բարոյական ան- նարութիւնն ասանկ գիրքերու նկատմամբ, և այս ալ միտք առնենք որ աշխարհիս կրթուած մասին յարգութիւնն արդեամբք գրուած է, կարծեմ պիտի զգանք որ վաթսուն տարուան միջոցին քոան և եօթը խարէութիւն յաջողելը մէկ կարծիք մըն է՝ որ բոլէ մ' անգամ միտքերնիս շնք կրնար պահել:

Գարձեալ՝ գրութեան մը վաւերականութիւնը կասկածելի ընող պատճառներն այսպէս կը շարէ Միքայէլ անուն Գերմանացի հեղինակը: 1. Ար- բոր մէկ գրութիւն մը նոր երևնալէն հետէ կաս- կածներ եղած է, թէ արդեօք անիկա իր համ- բաւեալ հեղինակին գործքն է: 2. Արբոր հե- ղինակին անմիջական բարեկամներն ուրացած են անոր գործն ըլլալը: 3. Արբոր հեղինակին մա- հէն վերջը տարիներու երկայն յաջորդութեան մը մէջ գիրքն անձանօթ մնացած է, որ ատեն գիր- քը կամ անոր խօսքերը պիտի յիշուէր ուրիշ տեղ, եթէ կեցած ըլլար անանկ գիրք մը: 4. Արբոր ոճը տարբեր է անոր ուրիշ գրութիւննե- րէն, կամ եթէ ուրիշները մնացած չէ, իրաւամբ անկէ յուսացուածէն: 5. Արբոր պատմուած են անանկ գէպքեր՝ որ կեղծեալ հեղինակին ժամա- նակէն վերջը պատահած են: 6. Արբոր յառաջ

բերուած են կարծիքներ՝ հակասական անոնց , որ պիտոցուած է թէ հեղինակը յառաջ բերած է իր ուրիշ գրութիւններուն մէջ : Այս անհարազատութեան նշաններէն ոչ մէկը 'Աոր Ատակարանին մէկ 'Վիրքին վրայ կրնայ տրուիլ :

Այս ապացոյցն՝ եթէ նար ըլլայ , կըղորանայ մեր 'Վիրքերուն և անհարազատ ճանչցուածներուն մէջ ամեն կողմանէ եղած աննմանութիւնովը : Ասանկ գիրքերը ըլլալը ցուցնելով՝ կըջանան երբեմն սա դադարիարները տալ մարդոց , թէ անոնք ատեն մը գրեթէ մերիններուն հաւասար հեղինակութիւն ունէին , և դժուարութիւն ու անըստուգութիւն կար այն որոշումն ընելուն մէջ , որ ասկէ աւելի ճշմարտութենէ հեռու բան չկրնար ըլլալ : Այսան զի , 1 . Ապացոյց չկայ այս անհարազատ կամ անկանոն գիրքերուն առաջին դարուն մէջ կենալուն . ճշմարիտը՝ անոնք ամենը վերջի դարերու նարքներ են : 2 . Վրիստոսի 'Սնունդէն վերջն երեքհարիւր տարուան միջոցին՝ մեր հիմնական պիտոցած ոչ մէկ հեղինակը՝ մեր Աւետարաններէն և 'Վործք Առաքելոցէն ի դատ , մէկ Վրիստոնէական պատմութենէ մը խօսք մը առած ու յիշած ունի : 3 . Այս անկանոն գիրքերուն ոչ մէկն եկեղեցիներուն մէջ կըկարդացուէին : 4 . Անոնցմէ մէկը 'Աոր Ատակարանին մէջ երբէք խօսեալ չէ : 5 . Ալ ոչ կըտեսնուին բնաւ մէկ ցանկի մը մէջ : 6 . Ալ ալ վիճարանութիւններու մէջ հակառակ կողմերը վերկայութիւն կըբերէին անոնցմէ իբրև հեղինակութիւն ունեցող գրուածներ : 7 . Ալ ոչ անոնց

վրայ մեկնութիւններ և բացատրութիւններ կըլար
 և ոչ թարգմանութիւններ : Տ . Ոչ ալ երբէք
 վերջի դարերու Վրիստոնեաներն ընդունեցին ,
 այլ գրեթէ առ հասարակ կըմերժէին անարգանօք :
 Աւարդ՝ միթէ այս կէտը չապացուցուեցա՞ւ .
 կարծեմ ձանձրալի էր քիչ մը այս փաստաբա-
 նութիւնը , բայց միթէ բանը չապացուցուեցա՞ւ :
 Ատարեւապէս չապացուցուեցա՞ւ թէ այս Վիր-
 քերը գրուեցան այն անձինքներէն՝ որոնց որ ա-
 նունները կըկրեն , և անատենը՝ որ կըցուցընեն
 թէ գրուեցան :

Արվերջացնեմ այս ճառը շատ համառօտա-
 բար յիշելով միայն մէկ կէտ մըն ալ՝ որ պատ-
 շաճապէս այս տեղին կըվերաբերի : Ինչէ՞ն դի-
 տենք որ Աոր Ատակարանի Վիրքերուն անարա-
 տութիւնը պահուած է : Արպատասխանեմ նախ
 թէ Ռանին բնութենէն դիտենք : ()գոստինոս՝
 չորրորդ դարուն մէջ , հերետիկոսի մը հետ փաս-
 տաբանութիւն ընելով ասիկա աղէկ կըցուցընէ ,
 « Աթէ մէկը , կըսէ , քու վրագ այս յանցանքը
 դնէր , թէ դուն քու քովէդ դրած ես Աւետարա-
 նին մէջ՝ քու վկայութիւն բերած խօսքերդ , իս-
 կոյն պիտի չպատասխանէիր թէ Աննար է ինձի
 ատանկ բան մ՝ ընել ասանկ Վիրքերու մէջ՝ որ
 ամեն Վրիստոնեայ կըկարգայ . և եթէ ասանկ
 ջանք մը ընէի՝ շուտ մը պիտի տեսնուէր և հեր-
 քուէր , հին օրինակներուն հետ բաղդատելով :
 Ռարի՛ ուրեմն , այն նոյն պատճառով որ դուն չես
 կրնար աղաւաղել Սուրբ Վիրքը , ուրիշ ունիցէ

մէկն ալ չկրնար աղաւաղել” : Արկրորդ գիտենք՝
 Տին հարց գրութիւններուն մէջ Սուրբ Վիրքէն
 առնուած խօսքերուն՝ հիմա մեր ունեցած Սուրբ
 Վիրքին հետ համաձայն գալէն : Այս խօսքերն
 այնչափ շատ են որ գրեթէ ամբողջ՝ Աոր Ատա-
 կարանն անոնցմէ կրնայ ժողովուիլ . սակայն և
 այնպէս այն խօսքերը՝ վեց եօթը տունէ ի զատ
 ամեն կարևոր բաներու նայելով , կատարե-
 լապէս կը համաձայնին մեր Վիրքերուն այն մա-
 սերուն՝ որոնցմէ առնուած են : Արկրորդ գիտենք՝
 մեր Վիրքերուն՝ Տին թարգմանութեանց հետ
 բոլորովին համաձայնելէն : Ասոյգ է որ Տին Ա-
 սորերէն թարգմանութիւնը՝ որ Ռէշիթօ կրկոչուի ,
 կը գործածուէր երկրորդ դարը չվերջացած : Ասի-
 կա ծանօթ չէր Ալերոպայի մէջ մինչև տասնևվեց-
 երորդ դարուն վախճանը . ասիկա եկաւ մէկ յա-
 ջորդութեամբ մը որ բոլորովին անկախ էր անկէ՝ ո-
 ռով մեր հունարէն Ատակարանն եղած է , սակայն
 երբոր երկուքը մէկտեղ բերուելով բաղդատուե-
 ցան՝ բնաւ մէկ նշանաւոր տարբերութիւն մը
 չտեսնուեցաւ : Միթէ նարաւոր է որ ապացոյց
 մը ասկէ աւելի յագեցուցիչ ըլլայ :

Չեռագիրներուն մէջ եղած տարբերութեան
 խնդիրն ատեն մը անանկ կըցուցուէր որ բանին
 եղելութեանը տեղեակ չեղողները կը շփոթէին ու
 կըխռովէին : Արբոր մէկ մարդ մը կըլսէ որ կըսեն
 թէ Մէկ անգամ մը երբոր՝ Աոր Ատակարանը
 տպուելու համար ձեռագիրները բաղդատուեցան՝
 հարիւր յիսուն հազար տարբերութիւն տեսնուե-
 ցաւ անոնց մէջ , հաւանական է որ իրեն անանկ

պիտի դայ թէ ամեն բան անստոյգ վիճակի մէջ
 ըլլալու է : Իսկ բանին եղելութիւնը զրուցելով՝
 ամեն դժուարութիւն կը վերնայ : Ճշմարիտն այս
 է որ հազարէն մէկը մէկ զգալի կամ գոնէ մէկ
 կարևոր տարբերութիւն մը չընէր իմաստին մէջ .
 անոնք գրեթէ ամենն ալ մանր և յայտնապէս
 գրագիրներուն ըրած սխալմունքներն են . ինչպէս
 մէկ գիրի տեղ ուրիշ մը դնել, կամ գիր մը զանց
 ընել, քերականական սխալներ, մէկ բառի տեղ
 ուրիշ նոյնանշան բառ մը դնել, և մէկ պարբե-
 րութեան մը մէջ բառերուն դիրքը փոխել : Իայց
 բոլոր ձեռագիրներուն մէջ պարունակուած ամեն
 զանցառութիւններով և աւելագրութիւններով՝
 ոչ մէկ եղելութիւն մը կամ վարդապետութիւն
 մը և կամ հրամայուած պարտաւորութիւն մը
 մութ կամ տարակուսելի եղած է ընդունուած
 բնագրին մէջ :

Այս նաև անանկ տեսն մը երբ այս մեր ապա-
 ցոյցին սիւներուն տակը ժողովուած էին հին ա-
 տեններէ գումարուած անպիտան մանր կտորներ
 ու տաշեղներ . և անհաւատին սրատես աչքը տե-
 սաւ անիկա , և յուսաց որ ցուցնէ թէ այն սիւնե-
 ըը այն կտորուանքներուն վրայ միայն հիմնուած
 են . բայց թէ այս և թէ ամեն ասոր նման ջան-
 քերը քաջ քննուելով՝ այս միայն կը տեսնուի թէ
 սրչափ հաստատ է այն ժայռը՝ որուն վրայ կը կե-
 նայ այն Ակեղեցին , որ է « սիւն և հաստատու-
 թիւն ճշմարտութեան » :

Ճ Ա Ռ Ժ

Մեր յաջորդ ճառը պիտի ըլլայ՝ ինչպէս բանը կը ցուցնէ, Նոր Ատակարանի Վիրքերուն արժանահաւատութեանը վրայ . և ես հիմա ուղղակի քննութեան կը բնութարարեմ :

Նա առաջին խորհրդածութիւնը՝ որ յառաջ կը բերեմ այս Վիրքերուն արժանահաւատութեանը կողմանէ, անոնց հարադատութիւնն է : Նա տարանիս պատմութիւններուն հարադատութիւնը հաստատելու համար նախընթաց ճառին մէջ յառաջ բերուած ամեն վկայութիւն՝ իբրև անոնց ճշմարտութեանն ալ վկայութիւն մը սեպելու համար էր որ այնչափ երկարօրէն և մանրամասնաբար խօսեցայ այն նիւթին վրայ : Հայրապետները ոչ թէ այն Վիրքերուն Առաքելական մարդոց գրուածք ըլլալուն համար այնչափ կը յիշէին անոնց խօսքերը, այլ անոնք ճշմարիտ և ամենէն դերազանց հեղինակութիւն ունեցող սեպելուն համար . վասնորոյ նախնեաց՝ այս Վիրքերուն հարադատութեանն այս կերպով վկայութիւն տալը, անոնց պարունակած եղելութիւններուն իրական ըլլալուն վկայել է :

Նսկէ ի զատ երբոր մարդիկ կը հրատարակեն իրենց անունովն եղելութիւններու պատմութիւն մը, մանաւանդ անանկ եղելութիւններու՝ որ իրենց ընթերցողներուն մեծ մասին անմիջական դիտութեանը տակ կիյնան, նաև անանկ եղելութիւններու՝ որ մեծ չափով մը մարդոց մտադրութիւնը

գրգռած են, հարկաւ ինչ որ նիւթականապէս ճշմարիտ է՝ այն պիտի հրատարակեն, եթէ ոչ իրենց ձեռքովն և առանց շարժառիթի պիտի կորսնչեն իրենց համբաւը և պատիւը: Չկայ պատմութիւններուն մէջ գրուածը որ մէկը հրատարակաւ եղած և նոր պատահած ու հասարակութեան մէջ մեծ գրգռութիւն հանող բաներու պատմութիւն մը հրատարակէ իր անունովը, և բողբոջին ճշմարիտ չըլլայ: Բայց ահա չորս մարդ՝ որ կրսեն թէ իրենց պատմած դէպքերուն շատին իրենք ականատես եղած են, և չեղածներնուն վրայ ալ կատարեալ գիտութիւն ունեցած են: V, 10 դէպքերն ինչպէս իրենց՝ անանկ ալ թէ բարեկամ և թէ թշնամի ուրիշ հաղարարներու ծանօթ եղած ըլլալու էին: Աւ ոչ մէկ բան մը կրնար ստութեան անմիջապէս յայտնուիլն արդիւնը, բայց և այնպէս այս մարդիկը հրատարակեցին իրենց պատմութիւններն աշխարհին առջևը՝ բաներուն եղած տեղն ու եղած ատենը: V, 10 խորհրդածութիւնը մինակ վճռողական ըլլալու էր, և պիտի ըլլար ուրիշ ունեցէ դէպքի մէջ:

Բայց երկրորդ՝ այս Բիրքերն արժանահաւատալի են, որովհետև անոնց հեղինակները նար եղածին չափ աղէկ միջոյ ունէին իրենց պատմած բաները գիտնալու: Բայց մեծի մասին իրենք անձամբ գիտէին անոնք: Բաղդատէ մեր ապացոյցն այս կողմանէ ուրիշ հին դէպքերուն հետ: Բըլխաւոր եղելութիւններն անանկ բաներ չէին՝ որ անկիւններու մէջ պահուած կամ դատաստանական վարպետութիւններով ծածկուած ըլլայ, այլ

քանի մը բաներ էին, և անանկ բաներ՝ որ ամենը կրնան զխոնալ: Նայց մեծն Մղեքսանդրի կենաց գէպքերը պատմող ժամանակակից պատմիչ չկայ, սակայն և այնպէս անոնց վրայ տարակոյս ընող չկայ:

Ալի և Տակիտոս իրենց գրած պատմութիւններուն մէջ եղած գէպքերուն որչափ քիչին վերայ անձամբ զխոնալութիւն ունէին, և Պլուտարքոս՝ այն մարդոցմէ՝ որոնց պատմութիւնները գրեց, որչափ քիչին հետ անձնական ընտանութիւն ունէր. յիրաւի ոմանք բաներու մէջ՝ ինչպէս Քսենոփոնին Տասր հաղարին ետ քաշուիլը՝ և Աեսարին պատմութիւնները՝ բանին անձամբ ներկայ և ականատես եղողը կը պատմէ. և մէկը չկրնար չզգալ որ այս պարագան այն պատմութիւններուն արժանահաւատութիւնը մեծապէս կ'աճեցնէ: Նայց այս յիշեալ գէպքերուն վկայողները մէյմէկ անձ են. և հեղինակները բուն իրենք՝ իրենց ըրած պատմութեանը նիւթն են, սակայն և այնպէս այս գրուածքները կատարեալ վստահութեամբ կրնգունուին: Աւայս՝ սա խորհրդածութիւնը յառաջ կը բերէ,

Արրորդ՝ թէ մեր Վիրքերուն մէջ պատմուած գէպքերը վաւերական ու հաւատարմութեան արժանի են վկաներուն թիւին համար: Ըսոր ճշմարիտ արժէքը ցուցնելու համար՝ ըսենք թէ հիմա ներքիւլանիում քաղաքին աւերակներուն մէջ Աեսարի հետ ընկերացող մէկ պաշտօնատարին գրուածքները գտնուին, որ կը պարունակեն անոր ըրած կռիւններուն և պատերազմներ-

րուն ստորագրութիւնը . ըսենք թէ ասոնք՝ էական
 բաներու նայելով, կը համաձայնին միւս պատմու-
 թիւններուն, բայց ունին անանկ պատահական
 տարբերութիւններ՝ որ կը ցուցնեն թէ մէկմէկէ
 բոլորովին անկախ գրուածքներ են, անատենը՝ ե-
 թէ առաջ քիչ մը միտքերնիս եկած էր այն
 պատմութիւնները սուտ սեպելու, կամ մէկ բան
 մը Արտարի տգիտութեանը կամ նախապաշարմա-
 նը կամ փառասիրութեանը տալու, անատենը
 այն երկուքին համաձայնած կէտերուն վրայ մեր
 բոլոր տարակոյսները պիտի վերնան : Աւ եթէ
 ասկէ վերջը գտնենք ուրիշ անկախ ձեռագիր մը՝
 որ ոճին ու գրութեան ընդհանուր կերպին նա-
 յելով բոլորովին տարբեր են՝ բայց եղելութիւն-
 ներու նայելով միաբան, ասկէ ի զատ եթէ ան-
 ատենը գրուած նամակներ գտնուին՝ որ անուղղակի
 կերպով կը հաստատեն այս պատմութիւնները, ա-
 նոնց վերաբերութիւն ունեցող շատ խօսքերով և
 խորհուրդով չեղած համաձայնութիւններով, պիտի
 զգանք որ ասկէ աւելի պատմական վկայութիւն
 չկրնար ըլլալ, և ասոր վրայ սկեպտիկեանութիւն
 ընելը յիմարական բան է : Աթէ այսպէս ըս-
 տուգուած դէպքերուն չհաւտացուի, ապացոյցի
 պակասութեան համար պիտի չըլլայ . եթէ ասոնց
 հաւատալու չէ, ոչ մէկ հին պատմութեան մը
 կրնայ հաւատք ընծայուիլ . չկայ մէկ դէպք մը՝
 որուն համար ասոր մօտ ապացոյցի գումար մը
 բնաւ ունենանք . իսկ բոլոր այս ապացոյցը կայ
 Աւետարանին եղելութիւններուն համար : Ար-
 բելի չէ որ չորս Աւետարաններուն և Վործք Ա-

և արքեւոյցին մէկտեղ կազմուիլը անոնց մէկզմէկէ
 որոշ վկայութիւններ ըլլալու զօրութիւնը տկա-
 րացնէ : Այս խորհրդածութիւնը՝ պատմական
 վկայութեան հասարակ դէպքերու վրայ ինչ ար-
 ժէք ունենալուն վրայ է . բայց Քրիստոնէու-
 թեան եղելութիւններն անանկ եղելութիւններ
 են՝ որ ասկէ ալ աւելի հաստատութիւն կրնան ու-
 նենալ և ունին : Այժմէ Արարի պատերազմները
 բաժանմունքներ հանած ըլլային , և այն մէկզմէ-
 կու հակառակ կողմերը ամենն այս գրուածքնե-
 րուն բողոքէին իբրև անտարակուսելի հեղինա-
 կութիւն , և ասկէ ի զատ եթէ Արարի թշնամի-
 ներն ոչ թէ վերջին ատենները , այլ նոյն ատե-
 նին մօտ՝ որոշաբար ընդունէին թէ այս գիրքե-
 րուն պատմած դէպքերը հաւատարմութեան ար-
 ժանի են . անատենը կարծեմ կրնանք մտածել
 որ ասկէ աւելի բան մը չէր կրնար ըլլալ , և բո-
 լոր այս ասպացոյցը կայ՝ Աոր Ատակարանին դէպ-
 քերուն համար : Այժմէ մէկդի գնենք դէպքե-
 րուն որպիսութեանը վրայ եղած բոլոր խորհրդ-
 ղածութիւնները և նայինք միայն ասպացոյցին , կը-
 տեսնենք որ ունի բոլոր այն ոյժը՝ որ պատմական
 ասպացոյցն իբրև պատմական ասպացոյց կրնայ եր-
 բէք ունենալ :

Չորրորդ՝ այս ասպացոյցը զօրաւորապէս կը հաս-
 տատուի , այս Վիրքերուն ճշմարտութեանը՝ ա-
 նոնց հեղինակներուն տուած մասնաւոր վկայու-
 թիւնովը : Յագեցուցիչ ասպացոյց կայ որ Քրիս-
 տոնէական հրաշքներուն ականատես եմ ըսող
 շատ մարդիկ՝ իրենց կեանքը աշխատութիւններու

վտանգներու և տանջանքի մէջ անցուցին , որոնք
 այս բաները յօժարութեամբ յանձն առին ի
 հաստատութիւն իրենց պատմած բաներուն , և լոկ
 այն պատմութիւններուն հաւատք ընծայելուն
 համար . նաև նոյն շարժառիթներով վարուց նոր
 կանոններ և նոր ընթացք բռնեցին : Արնայինք
 երկար խօսիլ անոնց այս աշխատութիւններն ը-
 նելը և այն տանջանքները քաշելը ապացուցա-
 նող փաստերուն վրայ , բայց անանկ ժամանակ
 մը թէ շրէութեան և թէ շեթանոսութեան՝ ու
 նաև մարդոց բնական յօժարութիւններուն և
 կիրքերուն բոլորովին հակառակ եղող մէկ նոր
 կրօնք մը տարածելու ջանք ընող մարդոց՝ իրենց
 անկեղծութեան ու եռանդին համեմատ աշխա-
 տութիւն ու տանջանք յանձն առնելու պարտա-
 ւորելնին այնչափ յայտնի է , որ ինծի կերևի թէ
 ապացոյցի կարօտ չէ : Արձեալ այս գաղափարն
 անանկ խառնուած է բոլոր պատմութեանը մէջ ,
 և այնչափ բնականապէս և ստուգապէս ըլլալու
 քանի մը պէս բռնուած է ասիկա Արիստոսի՝ իր
 աշակերտներուն տուած յորդորանքներուն՝ խոստ-
 մունքներուն և միսթարութիւններուն մէջ ու Ա-
 ռաքելոց նամակներուն մէջ , և այնչափ առատա-
 պէս վկայուած է շեթանոս հեղինակներէն , որ
 չեմ կրնար սեպել թէ ասոր վրայ երկարել պէտք
 է : Արեմն եթէ այս մարդիկն աշխատեցան՝ չար-
 չարուեցան և վերջապէս մեռան ի հաստատութիւն
 իրենց պատմածներուն ճշմարտութեանը , ուրեմն
 մեր Վիրքերը նար եղածին չափ բարձր աստի-
 ճանաւ հաստատուած են , որուն պէս ոչ մէկ

պատմական գիրք մը երբէք հաստատուած է :

Իսկոյն հիմա կուգանք Քրիստոնէական կրօնքին ունեցած վկայութեան ամենազօրաւոր կէտերուն մէկին , որ այս է թէ միայն այն պատմութիւնները շարադրողները չեն որ այսպէս կուտան իրենց վկայութիւնը , այլ և ուրիշ հաղարարներ ալ , և թէպէտ անոնց վկայութիւնը գրութեամբ չէ , սակայն անանկ խառնուած է բանին պարագաներուն հետ , որ այն պատմութիւններուն ճշմարտութիւնովը իրենց ձեռօքն և զմուռովը ատորազրածի չափ ոյժ ունի : Ամեն Քրիստոնեայ որ այն առաջին ժամանակները թողուց իրեն վարժութիւն եղած նախապաշարունները և իր բարեկամներն ու ստացուածքը՝ որ Քրիստոնեայ ըլլայ , մանաւանդ ամեն մէկն որ հալածուեցաւ և մահու մատնուեցաւ այն փաստին համար , նար եղածին չափ ազգու կերպով Աւետարանի դէպքերուն համար վկայութիւն տուած է մեզի : Պօղոս Առաքեալէն թուղթ ընդունող և անոր ընթերցմանը ունկնդիր եղող մէկ եկեղեցիի մը ամեն մէկ անդամը՝ վկայ մըն է այն թուղթին վաւերականութեանը և Քրիստոնէութեան դէպքերուն ճշմարտութեանը , որոնք իր ամեն թուղթերուն մէջ կը պարունակուին : Եւ ուր տրամաբանութիւն մըն է որ մենք շատ անգամ կը խորհինք թէ շեթանոսաց վկայութեան ոյժը դերագանց է Քրիստոնէից վկայութեանէն , իբր թէ այն աստիճան զօրաւոր վստահութիւնը՝ որ կը պարտաւորէ մարդը Քրիստոնեայ ըլլալ , չցուցներ ամենալաւ կերպով անոր անկեղծութիւնը :

նրն ալ : Հակասական բան մըն է որ Հեթա-
 նոսը վկայէ կրօնքին ճշմարտութեանը՝ առանց
 Քրիստոնեայ ըլլալու . և անշուշտ դատողութեան
 դէմ է մէկ մարդու մը այն գործքը՝ այսինքն Քրիս-
 տոնեայ ըլլալը պատճառ ընել իր վկայութիւնը
 չընդունելու , որով ամենաբարձր աստիճանաւ ան-
 կեղծութիւնը և իր գործքը խօսքին համաձայնե-
 լը կը ցուցնէ : Քրիստոնէից տուած այս վկա-
 յութեանը դէմ կրնայ ըլլալ որ մէկ առարկու-
 թիւն մը բերեն . կարելի է կրսեն թէ՛ Նոր Ար-
 տակարանին ութը հեղինակները նոր աղանդի
 հիմնադրողներ ըլլալու , կամ թէ անգամ մը ըսած-
 նին ետ չառնելու փափաքով շարժուած էին իրենց
 աշխատութիւններուն և տանջանքներուն մէջ .
 բայց ասանկ շարժառիթ մը չկրնար տրուիլ ան-
 առնելու եղող ընդհանուր Քրիստոնէից ժողով-
 քին , որոնց ամեն մէկը գիրք մը գրածի չափ աղ-
 դու կերպով և արդեամբ ցուցուցած են իրենց
 հաւատքը Նոր Արտակարանին դէպքերուն վրայ .
 մարդիկ կրնայ ըլլալ որ խաբերայ ըլլալու շար-
 ժառիթ ունենան , բայց խաբուելու շարժառիթ չեն
 կրնար ունենալ , մանաւանդ երբոր այն խաբուի-
 լը սովորաբար մարդոց պատուական սեպած ամեն
 բաներէն կը զօրկէ զիրենք : Ասանորոյ երբոր կը-
 տեսնեմ թէ Նաաբեալներն և անոնց ընկերները ,
 ու մանաւանդ երբոր կը տեսնեմ որ միջակ աստի-
 ճանի մարդոց մեծ բաղմութիւն մը ամեն բանէ
 կանցնին և ամեն բան յանձն կառնեն ու չեն
 ուրանար այս դէպքերուն ճշմարտութիւնը . երբ-
 որ կը տեսնեմ որ անոնք մէկիկ՝ կամ թերևս շա-

տը մէկտեղ ծեծուելու և տանջուելու կերթան . երբոր կրտեսներմ որ անոնք կրկենան իբրև մարտիրոս , և այս ընելովնին որպէս թէ իրենց մեռնող ձեռքն երկինքը կրվերցնեն և երգում կրնեն իրենց անկեղծութեանը վրայ , անատենը կրգիտնամ որ անոնք հաւատացած են այն եղելութիւններուն՝ որոնց համար որ մեռան . անատենը կարծեմ բանը շիւմ անուն հեղինակին ըսածին պէս դատած կըլլամ , որ կըսէ , « Ասկէ աւելի յագեցուցիչ ապացոյց մը չենք կրնար տալ » , (մէկու մը խարդախ չըլլալուն համար) « որ ցույցնենք թէ այսինչ մարդոց վրայ տրուած գործքերը հակառակ են մարդկային բնութեան ընթացքին , և ոչ մէկ մարդկային շարժառիթ մը կրնար երբէք համոզել անոնք այս պարագաներուն մէջ որ ասանկ բան մ' ընեն » :

շինգերորդ՝ մեր Վիքթորը հաւատարմութեան արժանի են՝ որովհետև կրնայ ցուցուիլ որ անոնց հեղինակներն ոչ խաբող էին և ոչ խաբուած . և հարկաւ այս երկուքին մէկը պիտի ըլլայ՝ եթէ կրօնքը ճշմարիտ չէ : Ամենէն առաջ Վասկալ յառաջ բերած է այս խորհրդածութիւնը թէ՛ եթէ Քրիստոս և անոր Վաքեալներն իրենց համարինչ որ կըսէին՝ անանկ չէին , անոնք կամ խաբեբայ էին , կամ դիւրահաւան ու խաբուած էին , և անոր ժամանակէն հետէ շատ անգամ ամբողջ Քրիստոնէութեան խնդիրին վրայ այս խորհրդածութիւնովը փաստաբանութիւն եղած է : Արդեամբք նոյն բանն է որ երբեմն ստորասական կերպով կըհաստատեն՝ թէ նախնական վկաները կա-

բող էին բանը գիտնալ, և միանգամայն արդարասէր էին, միայն այս բաները կրնայ հարցուիլ վկայի մը վրայ թէ Ա կայած բանին աղէկ տեղեակ է, և թէ արդարասէր մարդ է, ճշմարտոր գիտէ^օ և կուզէ^օ անհիկա ըսել՝ և ոչ ուրիշ բան, և յայտնի է որ երկուքը նոյն է թէ ցուցնենք որ Առաքեալներն աղէկ տեղեակ էին բանին՝ և արդարասէր մարդիկ էին, կամ թէ ցուցնենք որ անոնք ոչ խաբող էին՝ և ոչ խաբուած, ասոնց որն որ ընենք՝ կրօնքին ճշմարտութիւնը կը հաստատուի :

Անոնց խաբերայ ըլլալուն ենթադրութեանը՝ նախընթաց հատուածին մէջ անոնց աշխատութեանցը և տանջանքներուն վրայ բոլոր ըսուածը կը պատասխանէ : Մարդկային բնութեանը մէջ անանկ բան չկայ, ասոր նմանն եղած չէ, որ մինչև անգամ մէկ մարդ մը գիմանայ բոլոր իր կեանքին մէջ և յանձն առնէ ամեն աշխատութիւն ու տանջանք, և վերջապէս մեռնի ի հաստատութիւն այն բանին՝ որ ինքը գիտէ թէ սուտ է, և ըստ այնմ խիստ դժուար բան է սեպել որ տասներկու մարդ՝ և մանաւանդ հարիւրաւորներ ու հազարաւորներ կրնան ասանկ բան մ' ըրած ըլլալ : Միւս կողմերէն Քրիստոսի և անոր Առաքելոց որպիսութիւնը և անոր քարոզած կրօնքին բնութիւնը չուներեր անանկ ենթադրել թէ անոնք խաբերայ էին : Անտեղի կարծիք մըն է սեպել թէ աշխարհի մէջ երբէք գիտցուած ունիցէ բարոյականէ աւելի կատարեալը քարոզող, և շատ պարզ ու անձնուրաց և բարեսէր կեանք վարելով անհիկա իրենց վարուցը մէջ ցուցնող, և ստութեան ու անիրա-

ւուժեան դէմ ապառնի կենաց մէջ ամենածանր
պատիժներ սպառնացող մարդիկ՝ առանց իրենց
շահու մէկ նարք մը կենալու մեռնին իբրև մար-
տիրոս , ի հաստատութիւն այն բանին՝ որ գիտեն
թէ սուտ է :

Ղարձեալ՝ եթէ խաբերայ էին , մէկզմէկու հետ
խօսք մէկ ըրած ըլլալու էին . բանին բնութենէն
այս այսպէս ըլլալու է . և այն գաղտնիքին տեղ-
եակ եղողները քիչուոր չեն կրնար ըլլալ : Նայց
բարոյականապէս աննար է որ այն փորձութիւն-
ներուն մէջ՝ որ գիտենք թէ դուրսէն անոնց վը-
րայ կը յարձակէին , և այն գժտութիւններուն մէջ՝
որ իրենց բերնովը կըխոստովանին թէ իրենց մէջ
կըծագէին , խարդախութեան մը ասանկ միաբա-
նութիւնն անքակտելի մնայ : Ղարբելու յօժարու-
թիւնը միշտ անձնասիրութիւն կըցուցնէ , և ասանկ
խաբերաներու՝ ընկերութեան մէջ մէկը պիտի
գտնուէր՝ որ խարդախութիւնը յայտնէր , եթէ
կենար անանկ բան մը : Հոս զանց կընեմ ևս
ուրիշ ճառի մէջ շատ համառօտապէս յիշածս՝ որ
է ճշմարտութիւնն ու անկեղծութիւնը այն պատ-
մութիւններուն վրայ տեսնուիլը , անոնց պարզ
անաչառ և մանրամասն ոճը , ու մանրակրկիտ և
կենդանի նկարագրութիւնները : Նայց ասիկա կը-
սեմ՝ որ մարդկային վարուց բոլոր այլայլութիւն-
ներուն մէջ ալ կան մէկ քանի սկզբունք՝ Ֆիզի-
քական բնութեան օրէնքներուն չափ հաստատուն .
և մարդոց ասանկ պատմութիւն մը շինել և տա-
րածելը՝ և իրենց կեանքն այս նպատակին նուի-
րելը , և՛ քանի որ իրենք գիտեն թէ սուտ է , լռիկ

ի հաստատութիւնն անոր՝ մեռնիլը , այնչափ հակա-
 աակ է հաստատունն և միակերպ փորձառութեան՝
 որ բնաւ հրաշք մը անկէ աւելի չկրնար ըլլալ :
 Ուստի այս մարդիկը խաբերայ չէին կրնար ըլլալ :
 Եւ ոչ ալ կրնար ըլլալ որ խաբուած ըլլային :
 Ասիկա յայտնի կըլլայ եղելութիւններուն բնու-
 թենէն՝ և վկաներուն ինչպէս անձինք ըլլալէն ,
 որ կիմացուի իրենց գրութիւններէն . և հոս միտ-
 քերնիս պահելու ենք որ եղելութիւններու եղած
 վկայութիւնը ուրիշ բան է , ու եզրակացութիւն-
 ներու՝ վարդապետութիւններու և կարծիքներու
 համար տրուած վկայութիւնը ուրիշ : Առաքեալ-
 ներն անշուշտ գիտէին թէ Յիսուս Քրիստոս ըս-
 ւած անձը կա՞ր՝ թէ ոչ . միթէ այն զիրենք իր
 աշակերտները կրկոչէ՞ր՝ թէ ոչ . իրենց գրած քա-
 ռոզներն այն խօսեցա՞ւ՝ թէ ոչ . միթէ բազմու-
 թիւններ անոր ետեւէն կերթայի՞ն՝ թէ ոչ . և մի-
 թէ խաչուեցա՞ւ՝ թէ ոչ : Այլ և՛ թէ մտածենք
 հրաշքներուն որչափ և ինչպէս հրաշքներ ըլլալը
 և ինչ կերպով կատարուելնին , բնաւ նարառ-
 ութիւն մը կայ որ անոնք խաբուին անոնց վրայ :
 Արկարդանք ամեն տեսակ հիւանդութիւնով ախ-
 տաւորած հիւանդներու մեծ բազմութիւններ անոր
 բերելնին՝ և անոնց ամենուն բժշկելը , կոյրերուն
 և կոյր ծնածներուն տեսնել տալը , մեռելներ յա-
 րուցանելը . և բոլոր ասոնք յայտնապէս ըրաւ թէ
 բարեկամներու և թէ՛ թշնամիներու առջև : Արդ՝
 աննար է որ այդ մարդիկը խաբուին այս տեսակ
 գործքերու վրայ , որ կատարուեցան կրկին և կրկին
 ու տեսակ տեսակ պարագաներու մէջ՝ և քանի մը

տարի, անանկ գործքեր՝ որ ամեն զգայարանքներու փորձին տակը կիյնան. զորօրինակ չկրնան գիտնալ Սաղարօսին մեռած ըլլալը՝ երբ իրենք գացին անոր գերեզմանը, կամ թէ վերջը ողջընցած ըլլալը՝ երբ անոր հետ խօսեցան ու հաց կերան: Այս տեղը սխալ հասկըցած ըլլալու բան չկրնար ըլլալ, ասոնք լոկ վայրկենական գործքեր չեն, և եթէ այս բաներն եղան, հրաշք ըլլալուն տարակոյս չկրնար ըլլալ: Բայց ոչ միայն Քրիստոս ինքը հրաշք գործեց, այլ և իր աշակերտացն ալ տուաւ այն կարողութիւնը, որոնց մէջ մնաց անիկա՝ համբառնալէն շատ ատեն վերջը. և չէին կրնար խաբուած ըլլալ թէ իրենք ըրին այն պատմուած բժշկութիւնները, եթէ չըրին: Կամ դադրելու ենք մեր զգայարանքներուն տուած վկայութեանը հաւատալէն, կամ ընդունելու ենք որ ասանկ փորձի տակ ինկած դէպքերն արդեամբք եղած են: Մոլեռանդութեան ոչ մէկ աստիճանը կրնար անոնց հաւատալ տալ որ տեսան ասանկ բաներ, եթէ չտեսան: Բնաւ մոլեռանդութիւն մը բաւական չէ մեկնելու այնչափ մարդոց անանկ հաւատալը՝ թէ իրենք Ֆրկիչը տեսան յարութիւն առնելէն վերջը, և խօսեցան ու հաց կերան հետը, և կրնային Թովմասին պէս անոր ձեռքերն ու կողը շօշափել: Եթէ Քրիստոս յարութիւն չառաւ, խաբուած ըլլալու ենթադրութիւնով հաւասարապէս անկար է մեկնել թէ անոնց յարութիւն առած հաւատալը, և թէ Զրէաներուն՝ Քրիստոսի մեռած մարմինը չհանել ցուցընելը:

Բայց եթէ այս մարդոցը գրութիւններուն նա-
յինք՝ սնապաշտական տկարամտութեան կամ մո-
լեռանդական բորբոքի նշան չենք տեսներ . անոնց
վրայ հրաշալի դէպքերու վերաբերութիւն ունե-
ցող գործքերէն՝ և իրենց վկայութիւնն ամեն վը-
տանդի դէմ հաստատ պահելէն ի դատ բան չկայ
մոլեռանդութեան երևոյթ ունեցող . այլ ընդհա-
կառակն քաջ դատողութիւն և զգաստութիւն
յայտնի կրտսնուին իրենց գրութիւններուն մէջ :
Չկան չափազանցական զրուցուածքներ , կամ չա-
փէ դուրս զգացումներ ցուցնող խօսքեր , կամ
զարդարուն ստորագրութիւններ , կամ փառաւոր
գովութիւններ , կամ սաստիկ կշտամբանք : Մէկ
պարզ զրուցուածքով պատմել մը կայ Քրիստոսի
կենաց դէպքերը և անոր խօսածները : Ասանկ
մարդիկ չէին կրնար այնչափ ատեն խաբուած ըլ-
լալ ասանկ եղելութիւններու վրայ :

Բայց թէ որ ոչ խաբերայ էին՝ և ոչ խա-
բուած , ուրեմն այն դէպքերն եղած են , և կրօն-
քը ճշմարիտ է :

Հիմա կուգանք մեր Վիրքերուն մէջ պարու-
նակուած եղելութիւններուն համար մէկ փաստի
մը , որուն բնաւ պատասխան տրուած չէ , և չկր-
նար տրուիլ : Անհաւատները կրկին և կրկին հը-
րաւիրուեցան ասոր պատասխան աալու , բայց բը-
նաւ ձեռք չղարկին անոր : Այս փաստը բողո-
քովին հիմնուած է Քրիստոնէական կրօնքին հը-
րաշքներուն վրայ , որոնք անանկ բաներ են՝ որ
եղած ատենը մարդիկ կրնային իրենց զգայա-
բանքներուն վկայութիւնովը գիտնալ . նաև եկե-

դեցուց մէջ այն եղած բաներուն յիշատակ այս-
ինչ արարողութիւնները կենալուն վրայ . այսպէս
մեր կրօնքին ճշմարտութիւնը ամփոփուած կըլլայ
այն սահմանադրութիւններուն մէջ՝ որ հիմա կը կե-
նան , և այն արարողութիւններուն մէջ՝ որ մեր
աչքին առջևը կը կատարուի : Վիւրին է ցուցը-
նել բանին բնութենէն , (քանզի ասոր մէջ՝ գը-
րուած վկայութեան հետ բան չունինք գրեթէ)
որ Աստուածաշունչին մէջ պատմուած եղելու-
թիւնները չէին կրնար ընդունուիլ այն ժամանակը՝
եթէ ճշմարիտ չըլլային . և այն ճէսերը չէին կրնար
մէկ ժամանակ մը նարուիլ , առանց այն եղելու-
թիւններուն՝ որոնց իբրև յիշատակը կը պահուին
անոնք : Ասիկա ցուցնելու համար՝ չորս կանոն
կուտանք , և կը հաստատենք թէ ինչ եղելութիւն
որ գտնուի այս չորս կանոնովը՝ հարկաւ ճշմարիտ
ըլլալու է . և կը հրաւիրենք բոլոր աշխարհ՝ որ մէկ
օրինակ մը ցուցնեն սուտ դէպքի մը , որ այնպէս
վաւերացած ըլլայ :

Չորս կանոններն ասոնք են : 1 . Աղած բանն
անանկ բան մ' ըլլայ որ մարդոց զգայարանքին՝
ինչպէս անոնց աչքին և ականջին զգալի ըլլայ :
2 . Հրապարակաւ աշխարհին առջևը գործուած
ըլլայ : 3 . Աչ միայն անոր հրապարակական յի-
շատակները պահուած ըլլան , այլ մէկ քանի ա-
րարողութիւններ կատարուին անոր յիշատակ : 4 .
Այս յիշատակներն ու արարողութիւնները եղե-
լութեանն եղած ատենէն սահմանուած ու սկը-
սուած ըլլան :

Առջի երկու կանոններովն աննար կըլլայ որ ան-

ասեալի մարդիկ խարուին ասանկ եղելու թիւններու
 վրայ. որովհետեւ մարդոց աչքը՝ ահանջը և զգա-
 յարանքը անոր հակառակը պիտի վկայեն. զոր-
 օրինակ եթէ մէկ մարդ մը բսէ թէ Աստանդնու-
 պօլիս քաղաքին բոլոր բնակիչները երէկ կամ
 անցեալ տարի ցամաքի վրայ քալելով Աւսկիւտար
 անցան՝ ու ետ եկան, և ջուրերն անոնց երկու կող-
 մը բաժնուած ու դիզուած կրկենային, անհար
 պիտի ըլլայ որ անոր հաւատան. որովհետեւ ամեն
 մարդ՝ կնիկ ու տղայ պիտի դիտնան անանկ չըլլա-
 ը: Անիկա պիտի ըլլայ այն բաներէն մէկը՝ որոնց
 վրայ ռամիկներն ու տղաքներն ալ կրնան ուսում-
 նականներուն ու փորձառուներուն պէս դա-
 տողութիւն ընել: Այնպէս անհար է որ Խորա-
 յէլի որդիքը՝ այսինքն անասեալի մարդիկը հաւատա-
 յին, թէ իրենք Աարամի ծովէն անցան ու դային,
 մանանա ժողովեցին ամեն առաու, կամ ապառա-
 ժէն ջուր խմեցին, կամ թէ օրէնքը տրուեցաւ Աստ-
 ուածաշունչին մէջ պատմուած ահարկու և սոս-
 կալի կերպովը, եթէ այս բաներն ասանկ չեղան:
 Այնպէս նաև անհար է որ այն հինգ հազարը
 հաւատան թէ Քրիստոս իրենք կերակրեց, կամ
 թէ Վաղարոսի մերձաւորները և անիկա ճանչցող
 շրէաները հաւատան՝ թէ անիկա ողջնցաւ, կամ
 թէ ծնունդէն կոյր եղող մարդուն ծնողքը և բա-
 րեկամները կարծեն թէ կրտսնէ, կամ թէ այն
 բաղմութիւնը՝ որոնց առջևը բժշկեց կաղերը և
 ամեն տեսակ հիւանդները, հաւատայ թէ այն բա-
 ներն եղան, եթէ չեղան: Այս հրաշքներն ա-
 նանկ բաներ են՝ որ եթէ իրօք գործուած չըլլա-

յին , անհար էր որ մարդիկ անատենը հաւատա-
յին անոնց :

Ասանորոյ այս միայն կրմնայ՝ որ ասանկ բաներ
կրնայ ըլլալ որ հարուին ատենէ մը վերջը , երբ՝
Մ.յս բաներն եղան ըսուած ատենի մարդիկը ա-
մենն անցած դացած են , և վերջի դարերու դիւ-
րահաւան մարդիկը խաբուին թէ հին ատեններն
ասանկ բաներ եղեր են՝ որ չեն եղեր :

Եւ այս բանէն՝ վերջի երկու կանոնները մեզ
կապահովցնեն , ինչպէս առաջինները կրնեն առջի
բանին մէջ , վասն զի երբոր ասանկ բան մը հա-
րուելու ըլլայ , եթէ ըսուի որ Աչ միայն անոր յի-
շատակները մնացած են , այլ և նմանապէս հրա-
պարակական գործքեր և ծէսեր միշտ կրկատա-
րուին Մ.յն բանն եղաւ ըսուած ատենէն հետէ ,
ստուծիւնը պիտի յայտնուի անանկ յիշատակներ
չտեսնուելով՝ և ամեն մարդ կնիկ ու տղայ գիտ-
նալով որ բնաւ անանկ գործքեր կամ ծէսեր կա-
տարած չունին իրենք : Չորօրինակ , ըսենք թէ
ես հիմա հարեմ հազար տարի առաջ եղած բա-
նի մը պատմութիւնը , թերեւ կրնամ գտնել մէկ
քանին որ հաւատան անոր . բայց երբոր ըսեմ թէ
ոչ միայն ասանկ բան մ՝ եղաւ , այլ այն օրուը-
նէ մինչև հիմա ամեն մարդուն պզտիկ մատին մէկ
յօդուածը կտրած է իր տասներկու տարեկան ե-
ղած ատենը , և այն ազգին մէջ եղող ամեն մարդ
այն մատին մէկ յօդուածը չունի . և այս սահ-
մանադրութիւնն այնքան տարի առաջ եղած բա-
նին մէկ մասն է , ու սահմանուած է անոր վկայու-
թեանը և հաստատութեանը համար , իջած՝ ան-

ընդհատ յաջորդութեամբ, ու այն եղելութեան պատահած ատենէն հետէ միշտ ի գործ դրուած ի յիշատակ անոր, կրսեմ թէ Աննար է որ ինծի հաւատան ասանկ բանի մը մէջ. որովհետեւ ամեն մէկը կրնան ինծի հակառակ վկայել մատին յօդուածը կտրած ըլլալուն նկատմամբ, և ասիկա իմ պատմած եղելութեանս մասն ըլլալովը պիտի ցուցընէ որ բոլորը սուտ է:

Ասիկա՝ թէ Մովսէսի Վիրքերուն և թէ Նոր Ատակարանի մէջ պատմուածներէն զօրաւ որ չէ, վասն զի որ ժամանակ որ ջանք ընէին Մովսէսի Վիրքերը նարել ու մէկ վերջի դարու մը մարդոց հաւտայնել, աննար պիտի ըլլար. որովհետեւ անոնք կը պարունակեն շրէից օրէնքները և քաղաքական ու եկեղեցական կարգադրութիւնները, որոնք՝ Վիրքերուն ըսածին նայելով, ընդունուած էին Մովսէսի ժամանակը, և այն ժամակէն հետէ միշտ կը պահուէր, և կը պարունակեն պատեքի սահմանադրութեան ստորագրութիւնը, որուն պահպանութիւնը՝ այն Վիրքերը կրսեն, թէ մէկ մասնաւոր եղելութենէ մը յառաջ եկած էր: Աւրեմն եթէ դիրք մը յառաջ բերուի մասնաւոր ժամանակ մը՝ որ կրսէ թէ շրէաները Մովսէսի ժամանակէն հետէ այսինչ մասնաւոր տեսակ օրէնքներ ունին, ու քահանայութեան այսինչ կարգը և պատեքի տօնը կը պահեն, երբ բնաւ բան մը ըսած չեն այն օրէնքներուն ու քահանայութեան կարգին և պատեքի վրայ, աննար է որ այն դիրքն ընդունուի: Նան մը չկայ որ կրնայ ազատել անանկ դիրք մը՝ նախատուիլ ու բոլորովին երեսէ ձգուելէն:

Նայց Ղևտական օրէնքը և քահանայութիւնը ու պատեքը ինչ որ էր շրէից, նոյն էր Մկրտութիւնը՝ Քրիստոնէական պաշտօնէից կարգը ու Տէրօջն Նշմրիքը Քրիստոնեաներուն : Աւետարանին պատմութիւններուն մէկ մասն է որ ասոնք Քրիստոս սահմանեց, և պատուիրեց որ շարունակուին մինչև աշխարհի վերջը. և արդեամբ շարունակուեցան և պահուեցան Աւետարանները գրուած է ըսուած ժամանակը, այսինքն Արուսաղէմէն կործանումէն առաջ : Նայց եթէ այս Քիրքերը սուտ ըլլային՝ Քրիստոսի ժամանակէն վերջը նարուած, անատենը անոր սահմանադրութիւնովն եղած ոչ Մկրտութիւն՝ ոչ ալ Քրիստոնէական պաշտօնեաներու կարգ և ոչ Նշմրիքի խորհուրդը պիտի կենար, և միայն ասիկա պիտի ցոյցընէր որ բոլորը սուտ է. մեր Քիրքերը կենթադրեն թէ այս սահմանադրութիւնները կային, և անոնց ծագմանը ստորագրութիւնը կրնեն, ուստի աննար է որ այն բաները չկեցած տեղը այն գիրքերն ընդունուին : Ասան որոյ եթէ այն դէպքերն իրօք չեղան, աննար է որ այս գիրքերն ընդունուին, թէ անոնց Աղան ըսուած ատենը, և թէ վերջի ժամանակ մը : Անք Տիմա Նշմրիքին խորհուրդը կրօնքին մէկ էական մասը կրսեպենք, այսպէս կրսեպէին մեր Տայրերը. և ոչ կրնանք մտածել թէ մինչև բուն իսկ կրօնքին Տիմագրուած ժամանակն անանկ եղած չըլլայ : Ասանկով մեր կրօնքին ճշմարտութեանը մէկ տեսանելի նշան մ' ու գրաւ մը ունեցած կրնանք դարէ ի դար իջած՝ գրուած վկայութենէ անկախարար,

որուն զօրութիւնը դարը չկրնար նուազեցնել :

Թերևս բաւական ընդարձակ չենք խորհիր Քրիստոնէական փաստաբանութեան մէջ այս փաստին ունեցած մեծ ոյժին վրայ, կամ չենք նկատեր այն մեծ տարբերութիւնը՝ որ կրկնայ Քրիստոնէական դէպքերուն ու հասարակ պատմութեան դէպքերուն ապացոյցներուն մէջ : Ա՛չ միայն անձնար է ցուցնել այս չորս նշաններն ունեցող եղելութեան մը պատմութիւն մը՝ որ կրրնայ ցուցուիլ թէ սուտ է, այլ և հին պատմութեանց ամենէն աղէկ վաւերացած դէպքերուն և ոչ մէկը այս նշաններուն ամենն ունին : Այս Քրիստոնէական կրօնքինն աւելի զօրաւոր է հասարակ դէպքերուն ապացոյցէն, որովհետև ասոր մէջ քանի մը սահմանադրութիւններ կան՝ որ հարկաւ իր ճազմանն ատենը սահմանուած ըլլալուն . վասն զի Մկրտութիւնն ու Տէրօջն Նստիքը այնչափ յաճախ ի գործ կրդրուին, և վերջինը միշտ գլխաւոր մէկ արարողութիւնը սեպուած է այն կրօնքին, որուն՝ մարդիկ աւելի յարած են, քան թէ ազատութեան ու կեանքի :

Այսպէս՝ մէկ տեղ եկան այս երկու մեծ ապացոյցները, որ ասոնք են՝ թէ Անձնար էր որ Առաքեալները թէ խաբերայ և թէ խաբուած ըլլային . նաև այն Վիքքերը չէին կրնար ընդունուիլ թէ՛ անոնց՝ Վրուեցաւ ըսուած ատենը, և թէ՛ վերջի ժամանակ մը, եթէ պատմուած դէպքերն եղած չըլլային :

Ի այց դարձեալ մեր Վիքքերը հաւատարմութեան արժանի են, որովհետև ուրիշը չկայ : Գաւառա-

լու բան չէ որ ասանկ՝ Քրիստոնէութեան պէտ-
 շարժում մ' ըլլայ, որն որ այնչափ նոր սահմա-
 նադրութիւններու ծագմանն ու այնչափ եկեղե-
 ցական ու ընկերական փոփոխութիւններու պատ-
 ճառ եղած է, և անանկ ժամանակ մը ու անանկ
 տեղ մը իր ծագումն առնէ, ու անոնց յիշատա-
 կութիւնը՝ գիրի առնուած, չմնայ: Աւ անհար է
 որ ճշմարիտ պատմութիւնը կորսուի մէկ նշոյլը
 չթողելով, և ասանկ սուտ պատմութիւններ անոր
 տեղն անցնին. մենք կակնկալենք որ այս սահմա-
 նադրութիւններուն ինչպէս ծագումն առնելուն մէկ
 պատմութիւնն ըլլայ. և մեր Վիրքերուն ըրած
 պատմութիւնը պատշաճ ու յագեցուցիչ է: Ա-
 նոր հակառակ բան մը չկայ, վասն զի անկանոն
 գիրքերն անգամ մեր Վիրքերուն ճշմարտութիւնը
 կը հաստատեն, և ուրիշ պատմութեան մը նշոյլը
 չկայ:

Այս միայն կուզեմ աւելցնել փաստաբանու-
 թեան այս ընդհանուր հատուածին մէջ, որ մեր
 Վիրքերը հաւատարմութեան արժանի են՝ անանկ
 հրաշքներ ու պատմութիւններ պարունակելուն
 համար: Արկրորդ ճառին մէջ ըսի թէ հրաշք-
 ներն Աստուծմէ եկող պատգամաւորին յատուկ
 ու մի միայն պատշաճ կնիքն է. նաև ցուցուցի՝ Վի-
 կողեմոսի խօսքերուն նշանաւոր իմաստը, որ կը-
 սէ, «Վիտենք որ . . . մէկը չկրնար ընել աս
 հրաշքները՝ որ դուն կրնես, թէ որ Աստուած իր
 հետը չըլլայ». որ աս խօսքին մէջ կը թուի որ սա
 իմաստը կը պարունակուի, թէ ինչպէս լոկ հրաշք
 մը գործուելէն՝ անանկ ալ անոր ինչպէս հրաշք

ըլլալէն կախում ունի բան մը ապացուցանելու
 կողմանէ իր ունեցած ոյժը : Ա՛լ որ պէտք եղա-
 ծին պէս ծանօթ է հին ժամանակները մարդկա-
 յին ազգին վիճակին, և գիտէ Յունաց՝ Զուսի-
 մայեցւոց և Նսիացւոց մէջ (Շրէաներէն ի զատ՝
 որոնց գաղափարներն ուրիշ աղբիւրէ ծագած էին)
 խօսուած գերբնական գէպքերուն կամ սքանչե-
 լիքներուն միշտ ամենը մէկ կերպ ըլլալը, պիտի
 ընդունի թէ այն հրաշքներն որ կը պատմուի թէ
 Քրիստոս և անոր Նաբեալներն ըրին, բոլորովին
 տարբեր են ամեն ասանկ նշաններէն և սքանչե-
 լիքներէն. կեանք փրկելու և ոչ թէ կորսնցնե-
 լու եկողին լոկ խօսքովը կամ մէկ դպչելովը յա-
 ուաջ եկած բարերար բժշկութիւնները՝ եթէ նե-
 րելի է ասանկ ըսել, բոլորովին Նարիչին գործե-
 լու ոճովն եղած են. աշխարհիս նիւթական բա-
 ներուն վրայ մէկ բացարձակ իշխանութեան մը
 անանկ ցոյցքեր կը ներկայացնեն, որ շատ պայծառ
 կը յայտնեն այն ուսմունքը հոգիին առողջութիւն
 տալու զօրութիւն ունենալը : Այժմէ Քրիստոսի
 քարոզած բարոյականին գաղափարը բացարձա-
 կապէս նոր էր, նմանապէս նոյնը հաստատելու
 համար կատարած հրաշքներուն գաղափարն ալ :

Այժմէ տեղի ըլլար տարակուսելու մօլեռանդ-
 ներուն՝ կրօնամոլներուն և շահախնդիր կարգա-
 ւորներուն ընդարոյս երեւակայութիւնն ինչ ըլլա-
 լուն, երբոր կը յաջողին իրենց՝ մարդոց խիղճերը
 մոլորցնող խարդախութիւններուն պատիւ գտնել
 տալու, կրնայինք կարդալ հին Ագիպտացւոց՝
 Զնդկաստանցւոց կամ Յունաց սնասպաշտու-

Թեան պատմութիւնը, կամ՝ եթէ այդ բաւական
 չէ, կրնայինք դառնալ այն « սուտ հրաշքներու-
 թուն » որով կը հաստատեն շոտլանդական կրօնքին
 արդի պաշտօնեաներն իրենց պատիւը : Շնորհաս-
 տանէն եկող քարոզիչ մը ինծի ըսած է որ այն
 երկրին աւանդական հրաշքները՝ հիմակուան ա-
 տենն ընդհանրապէս կապակցած են խիստ այլան-
 դակ ու անտեղի պատմութիւններու հետ, և մէկ
 սկզբունք մ' ապացուցանելու համար գործուած
 չեն, այլ շատ անգամ անգթութիւններու և
 ցանկութիւններու նպատակաւ :

Ասան որոյ Վերտարանին հրաշքները սուտ
 կրօնքներուն միօրինակ պատմութեան կարգէն
 դուրս կը կենան, ճիշդ ինչպէս որ Վերտարանին
 բարոյականը բոլոր ուրիշ վարուց կանոններու
 պատմութիւններէն զատ կը կենայ : Միայն անոնք
 են Վրարիչին վայլող հրաշքները, և միայն այն
 է Վերագոյն օրէնսդրին վայլող բարոյականը :
 Ուստի մենք՝ փոխանակ այսպէս ընդունելու թէ
 հասարակ պատմութեան համար բաւական սե-
 պուածէն աւելի ապացոյց պէտք է՝ Վոր Ատակա-
 րանին մէջ պատմուած տարօրինակ դէպքերն ա-
 պացուցանելու համար, կը հաստատենք թէ անոնք
 է բնէ անկախ են արտաին ապացոյցի . և ոչ մէկ ող-
 ջամիտ ու գիտնական անձ մը կրնայ անոնք Վս-
 տուածային զօրութեան չտալ, թէ և ամենեւին
 պատմական ապացոյց չկենար : Չկայ այնչափ
 բանաւոր դատողութիւն մը՝ որչափ հաւատալ թէ
 Յիսուսի հրաշքները և քարոզութիւնը Վստուծմէ
 են . և այնչափ անտեղի կարծիք մը՝ որչափ սե-
 պել թէ անոնք մարդէ են :

Ահա ուրեմն հինգ վաւերական պատմութիւն
 կայ . չորսը՝ նոյն դէպքերուն պատմութիւնն ըլ-
 լալով, և գրուած զատ զատ անձինքներէ՝ որոնք
 իրենք ականատես էին, կամ թէ իրենց պատմա-
 ծը գիտնալու ամենէն աղէկ միջոցն ունէին : Ան
 նաև բուն Առաքելոց գրած նամակներն այն ժա-
 մանակը գրուած՝ թէ ժողովուրդներու և թէ ան-
 հատ մարդոց, որոնք կը պարունակեն այլ և այլ
 անուղղակի՝ և անոր համար ամենազօրաւոր վկա-
 ցութիւն : Արտեսներք որ այս Վիրքերը ճշմար-
 տութեան ամեն նշաններն ունին վրանին . և կը-
 տեսներք որ պատմուածներն անանկ դէպքեր են՝
 որ վկաները չէին կրնար անոնց վրայօք խաբուիլ,
 և կը տեսներք որ իրենց կեանքը կուտան վկայե-
 լու՝ թէ իրենք ուրիշները չեն խաբեր : Արտես-
 ներք որ հիմա կը կենան այն սահմանադրութիւն-
 ները՝ և կը կատարուին այն ծէսերը, որոնք ինչ-
 պէս որ այն Վիրքերուն մէջ ցուցուած է, անանկ
 յարաբերութիւն մ՝ ունին Քրիստոնէութեան
 դէպքերուն, որ հարկաւ այն Վիրքերը ճշմարիտ
 ըլլալու են : Արտեսներք դարձեալ որ չկայ ու-
 րիշ պատմութիւն և ոչ պատմութեան մը մէկ նը-
 շոյն այն մեծ յեղափոխութեանը վրայ՝ որուն
 նմանը աշխարհիս մէջ տեսնուած չէ, քանի որ
 մեր պատմութիւններն ամեն կողմանէ պարզ բը-
 նական և կատարելապէս յադեցուցիչ են, պատ-
 շած ու բանաւոր պատճառներ միայն տալով այն
 արդիւնքներուն՝ որ գիտենք թէ յառաջ եկած են,
 և վերջապէս այս Վիրքերուն մէջ կը տեսներք
 միայն Աստուծոյ վայլող հրաշքներու ստորագրու-

Թիւններ : Միժէ մէկ մարդ մը կրնայ չհաւատալ այսպէս հաստատուած եղելութիւններու : Բայց և այնպէս ուրիշ անցեալ դէպքի մը ճշմարիտ ըլլալուն հաւատք ընծայէ : Արնայ ասանկ ընել՝ և տակաւին ծածկել ջանալ իր՝ ոչ թէ ապացոյցէ, այլ ուրիշ խորհրդածութիւններէ շարժուած ըլլալը :

Բայց կայ ուրիշ կէտ մըն ալ՝ որուն վրայ չխօսեցայ : Մինչև հիմա բոլոր բերուած ապացոյցները կամ մեր Պիրքերէն՝ կամ բանին բնութենէն հանած են . հիմա դառնանք Հեթանոս հեղինակներէ և ուրիշ աղբիւրներէ ծագած ապացոյցներուն : Այս ապացոյցը նկատելու է, որ րովհետև անոր վրայ մասնաւոր յարգ մը դնողներ կան : Ան անանկներ՝ որ այնչափ ծանրակշիւ կրթունեն Հեթանոս Տակիտոսին վկայութիւնը՝ որ անոր չափ պիտի չբռնէին Քրիստոնեայ Տակիտոսինը . ասիկա ապօրինաւոր է՝ որովհետև եթէ Տակիտոս Քրիստոնեայ ըլլար, նոյն պարագաներուն մէջ անկեղծութիւն և միանգամայն աւելի ուղիղ գիտութիւն մը պիտի ցուցնէր : Այն իսկ իր Քրիստոնեայ ըլլալը՝ այն ամենազօրաւոր վկայութիւնը պիտի ըլլար իր կողմանէ, որ կրնար տալ Քրիստոնէութեան դէպքերուն վրայ իր ունեցած հաւատքին, ինչպէս ամեն դարձի եկած Հեթանոսներուն Քրիստոնեայ ըլլալն եղած էր : Բայց և այնպէս կան անանկներ՝ որոնք ուրիշ մեծ ճշմարտութեան մը հաւատալն ու պաշտպանելը կողմնականութենէ չեն որոշեր, և անանկներ՝ որ Քրիստոնէից վկայութիւնը կասկածելի կրտսեպեն :

Այնպէս որ թէպէտ կրտսերք՝ թէ Մ. յն պարագան՝ որ անոնք կրտսերեն թէ Քրիստոնեայ հեղինակաց տուած վկայութեան ոյժը կրտկարացնէ, բուն իսկ այն՝ որ է անոնց Քրիստոնեայ ըլլալը, ոյժ կուտայ այն վկայութեանը. սակայն և այնպէս պէտք է յառաջ բերել այս ապացոյյն անոնց համար, ինչպէս նաև անոր ինքիրմէ ունեցած արժէքին համար ալ:

Եւ ինչպէս միւս կէտերուն մէջ անանկ ալ հոս Քրիստոնէութեան ապացոյցն և զանազան պայծառութեամբ կը փայլի: Իրաւամբ կրնայ ըսուիլ գրեթէ՝ որ մեր Վիրքերը հաւատարմութեան արժանի են, բուն իսկ իրենց ծագում առած ժամանակէն ու տեղէն: Թերևս քիչ անձինք արժան մտադրութիւն ըրած են այս բանին, որ Քրիստոնէական պատմութիւնը ճիշդ այն կէտին վրայ կրկենայ՝ ուր մէկտեղ պատահելով մէկըմէկ կրկարեն երեք որոշ պատմութեան շարունակութիւն, այսինքն՝ Հրէից՝ Յունաց և Հռոմայեցւոց: Հին գրականութեան այս երեք ճիւղը՝ միայն իջած է անընդհատ յաջորդութեամբ հիմակուան ատենիս. և այս երեքը պարագաներու խիստ տարօրինակ կասկածութիւնով մը մէկ տեղ եկան Քրիստոնէութեան ծագումը բացատրելու: Այժմէ պատմութեան ընդարձակ դաշտին վրայ կը ծագէ ցորեկուան հասարակ լոյսը, ճառագայթներուն մէկ կէտին ամփոփեալ պայծառութեան սաստկութիւնը կը փայլի այն կէտին վրայ՝ ուր նոր կրօնք մը արուեցաւ մարդուն: Հրէաներն ունէին իրենց յատուկ գրականութիւնը, անոնք առաջուց յաղ-

Թուեր էին Յոյներէն , և Յունարէն լեզուն սովորական եղած էր իրենց մէջ : Վաւ շնորհակցեցող կառավարութեանը տակն էին , և մէկ դարէն աւելի Պաղեստինու գործքերը շնորհակցեցող կառավարութեան մասնաւոր մտադրութիւնն իրենց քաջեցին , որ այն դարուն մէջ տեղը կիյնար Վրիստոսի քարոզութեան ժամանակը : Էին աստի ուրիշ ժողովուրդ մը չկրնար՝ ցուցուիլ՝ որուն պատմութեանը և ունեցած դաղափարներուն վրայ պատմական լուսոյ ասանկ եռապատիկ հեղեղ մը հասած է , և այս միակ ժողովուրդին պատմութեանը ոչ մէկ միջոցին վրայ այն եռապատիկ ճառագայթներն անանկ ճշդիւ մէկզմէկու կը պատահին , ինչպէս այն նոյն բոպէին՝ երբ մէկուն ձայնը կը լսուէր Յորդանանու անապատին մէջ՝ ըսելով , « Պատրիստեցէք Տէրոջը ճամբան » : Պատշաճ էր ուրեմն Նաքեալին ըսածը թէ , « Նոյն քանի մէկ անկիւնի մը մէջ եղած չէ » : Էնդկայ առասպելաբանութիւններուն նման , ժամանակը ետ մի՞թէն և առասպելական դարերու ձգուած չէ . ոչ ալ բաղդատմամբ մօտ աստիներն եղող Քաւար դարեր կոչուած ժամանակն էր , այլ քաղաքավարեալ և լուսաւորեալ դար մըն էր այն , ուսումնական դար , բանաստեղծներու՝ փիլիսոփաներու և պատմիչներու դար : Այս ոչ քաղաքավարեալ ազգայ անձանօթ եղած՝ կամ անոնց հոն չյաճախած՝ և բնակիչներն ու լեզուն նոյն եղած մէկ քաղաքի մը մէջ էր որ Վրիստոս ելաւ : Այլ Փոքր Նսիոյ Արուսաղէմ քաղաքին մէջ , որ է սկիզբէն հետէ պատմութեան թատրոնը , և անանկ

ժողովուրդի մը մէջէն՝ որուն ամեն արարողութիւնները և սովորութիւնները մեզի կատարելապէս ծանօթ են : Թերևս մի միայն ասիկա էր երկրի վրայ այն տեղը՝ ուր Հռովմէական իշխանն մը նախնի քաղաքավարեալ ազգաց գրականութիւնը պարունակող երեք լեզուները հարկաւոր պիտի սեպէր Քրիստոսի դէմ եղած ամբաստանութիւնը և միանգամայն անոր արդեամբ ինչպէս մէկն ըլլալը հրատարակելու համար : « Տախտակ մըն ալ գրեց Պիղատոս , ու դրաւ խաչին վրայ . և այսպէս գրուած էր՝ ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎԲԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ : Ու գրուած էր Երբայեցերէն՝ Յունարէն և Լատիներէն » :

Ուրեմն այս տեղը մէկ խառնուրդ ժողովուրդ մը կար այլ և այլ նախապաշարումներ և շահակնդրութիւններ ունեցող , ու այլ և այլ լեզուներ խօսող , ու ժամանակին ընթերցասէր ժողովուրդը , և անանկ քաղաքի մը մէջ՝ որուն կրդիմէին տարուէ տարի իբրև Մատուծոյ մատուցուելու մի միայն ուղիղ պաշտօնին կենդրոնն ու ակտիւ երկրի վրայ : Եւ միթէ այս էր ընտրելու տեղը շինծու գրութիւններ ընելու համար , կամ թէ ունիցէ տեսակ խաբէութիւն մը անանկ ուժովցնելու համար՝ որ բոլոր աշխարհ տարածուի :

Մտաշուց ըսած եմ թէ Քրիստոնէական վեկաներուն բազմաթիւ և զանազան կարգէ ըլլալը՝ որչափ պատեհութիւն կուտար հակառակ կողմին մէկ խիստ քննութիւն մ' ընելու , և կրտսններք թէ ինչպէս յաղթող ելած են ասանկ քննութիւններէն : Եւ դարձեալ այս բանին մէջ ալ

փորձի մը տակ կիյնան այս անձինքը, որ գրեթէ միւսներուն չափ վտանգ ունէր յայտնուելու՝ եթէ քանին մէջ խաբէութիւն մ'ըլար: Ա կրոյիչեալ երեք լեզուով ալ թէ շրէայ և թէ շեթանոս ժամանակակից հեղինակները շատ էին. և ինչ ծանօթութիւն որ կատանանք անոնց գրութիւններէն Պաղեստինու և բոլորտիքն եղող դաւաններուն բնակիչներուն սովորութիւններուն՝ աղանդներուն կամ կառավարութեան կերպին և ընդհանուր վիճակին վրայ, անով կրկարողանանք մէկ խիստ և վճռական փորձի մը տակ գնել անոնք՝ որ կատորագրեն այն տեղը, և այն ատենները պատահած կարևոր դէպքեր, քիչ մը՝ քաները մասնաւորելով:

Ուստի Աբրայական գրականութենէն թալմուտները կան՝ որ են շրէական աւանդութիւններուն հաւաքումը, որոնք երկրորդ դարէն սկըսուած են հաւաքուիլ: Ասոնք կը յիշեն Քրիստոս և աշակերտներէն մէկ քանին անունով. կը պատմեն նաև անոր խաչելութիւնը, և կընդունին որ շատ ու մեծ հրաշքներ ըրաւ այն, բայց անոր այս կարողութիւնն Աստուծոյ անբարբառելի անուանն ուղիղ հնչմունքը սորված ըլլալուն կուտան՝ որ կըսեն թէ Տաճարէն գողցեր է, կամ մոգութեան արուեստին՝ որ կըսեն թէ Ագիպոս սորվեր է: Այս գրութիւնները մասնաւոր կերպով կըխօսին Արուսաղէմի կործանմանը վրայ, և շատ լոյս կուտան շրէից աղանդներուն և սովորութիւններուն վրայ:

Յոյն հեղինակներէն կը յիշենք նախ Յովսե-

պոս որ թէպէտ ճնունդով շրէայ՝ և ընկերակցու
 թիւնով և սովորութիւնով շնորհմայեցի, բայց
 Յունարէն գրեց, որ մէկտեղ առնելով՝ Նոր
 Կտակարանին՝ եթէ բոլորը չէ, մեծ մասը նոյն լե-
 զուով գրուիլը, կըրցուցնէ թէ սրչափ ընդհանուր
 եղած էր այն լեզուն անատենը: Յովսեպոս այն
 դէպքերուն շատին՝ Աղաւ ըսուած ատենն ողջ էր,
 և ներկայ էր Արուսաղէմի կործանմանը: Այս
 որոյ անով մեծ միջոց ունեցած կըլլանք շրէից
 աղանդներուն՝ սովորութիւններուն և կարծիքնե-
 րուն վերաբերեալ ամեն բան ստուգելու, և շատ
 ժամանակներու ու մարդոց ու տեղերու անուն-
 ներու վրայով մեր Վիրքերուն ճշդութիւնը փոր-
 ձելու:

Եւ ամեն կողմանէ ընդունուած է որ ինչ որ
 Յովսեպոս կըսէ՝ ամեն բանի մէջ մեր Վիրքե-
 րուն ճշդութիւնը կըհաստատէ: Ամեն ինչ որ
 ըսուած է շրէից աղանդներուն՝ և շերովդէսին ու
 Պիղատոսին և դաւառներու բաժանման, ու Ֆե-
 լիքսին և Արուսիղային ու Ներինիկէին և Յով-
 հաննէս Վերտիչին վրայ, ճիշդ այն համաձայնու-
 թիւնն ունի մեր պատմութիւններուն հետ՝ որ կը-
 յուսացուի անկախ պատմիչներէ: շերովդէսի
 մահուանը վրայ Յովսեպոսի տուած պատմութիւ-
 նը նշանաւոր կերպով նոյն է՝ Ղուկաս Աւետա-
 րանիչին պատմածին հետ: Այս բանին վրայ Ա-
 ւետարանիչին ըրած պատմութիւնը գիտէք: Իսկ
 Յովսեպոս կըսէ թէ շերովդէս առտուն կանուխ
 թատրոնն եկաւ վերարկու մը հագած բոլորովին
 արծաթէ, և ծագող արևին ճառագայթներուն

արծաթին վրայէն ցոլացումը՝ մէկ վեհափառ ու
 ահարկու երևոյթ մը տուած էին անոր, և շուտ
 մը իր շողոքորթողները մէկը մէկ կողմէն միւսը
 մէկալ կողմէն աղաղակեցին՝ թէ 'Իսկ Նս-
 տուած մըն ես, թէպէտ իրեն աղէկ չէր անանկ
 ընելնին, և կաղաչէին որ ներողամիտ ըլլայ իրենց :
 Եւ կը յաւելու, թէ "Նսկէ վերջն իսկոյն փորու
 ցաւ մը բռնեց զինքը՝ յետին աստիճան սաստիկ,
 և տարին պալատը" : Առկաս ցաւին պատճառը
 կուտայ ըսելով՝ Արդնալից եղաւ : Եթէ Նոր կտա-
 կարանին մէջ կրտեսները որ շրէաները Պիղա-
 տոսին կրկանչեն որ Յիսուսը խաչը հանէ, և կը-
 սեն, թէ Մենք մարդ մեռցնելու իշխանութիւն
 չունինք : Յովսեպոս ալ կըսէ՝ թէ Նոնք բոլորո-
 վին ազատ էին իրենց կրօնքը բռնելու, և ամբաս-
 տանութիւն ընելու ու դատի քաշելու, բայց ոչ
 թէ մարդ մեռցնելու : Եթէ կրտեսները որ Պո-
 դոս Նաքեալին բռնուած ատենը հաղարապետը
 կը հարցնէր անոր, թէ "Չէ՞ որ դուն այն Ն-
 դիպտացին ես, որ այս օրերէս առաջ չորս հաղար
 սրիկայ մարդիկ աստամբեցուցիր ու անապատը
 հանեցիր" : կրտեսները որ Յովսեպոս ամբողջ
 պատմութիւնը կրնէ սյս եղած բանին, որ պա-
 տահեցաւ Փելիքս դատաւորին օրովը, և այն որ
 զարմանալի է՝ Յովսեպոս անոր անունը չյիշեր,
 այլ ամեն տեղ "Նդիպտացին" ու "Նդիպտացի
 սուտ մարդարէն" կը կոչէ անիկա : Եթէ մեր Վիր-
 քերը կը յիշեն Փարիսեցիք՝ Վադուկեցիք և շե-
 ղովդէսեաններ, Յովսեպոս կը հաստատէ ասոնց
 վրայօք ամեն ինչ որ ըսուած է՝ մանրամասնաբար :

Աթէ Ղուկաս Մեծաբանիչ Յովհաննէս Մկր-
 տիչին գացող զինուորներ կը յիշէ, անանկ բառ
 մը (στρατεύομενοι) գործածելով՝ որ կը ցուցնէ թէ
 զինեալ էին և պատերազմի երթալու վրայ, Յով-
 սեպոս կը պատմէ թէ շերտիգէս անատենը պա-
 տերազմ ունէր իր աներոջը Անթիպասին հետ, և
 խուճի մը զինուորներ ան նոյն ատենը Յովհան-
 նէսին եղած տեղէն կը կոչուէին: Աթէ նոյն Մե-
 տաբանիչը կը յիշէ շերտիգէսին Յովհաննէսին
 յանդիմանուիլը՝ իր Փիլիպպոս եղբօրը կնկանը
 շերտիգիային համար, Յովսեպոս կը պատմէ թէ
 այն կնկանը համար էր՝ որ շերտիգէս իր կնիկը
 ետ դրկեց, և պատերազմը ծագեցաւ: Աթէ Պօ-
 դոս Առաքեալ՝ երբոր յանդիմանուեցաւ թէ Մս-
 տուծոյ քահանայապետը կը նախատես, Անանիա-
 յին համար ըսաւ, թէ «Չէի գիտեր որ քահա-
 նայապետ է», Յովսեպոսէն կիմանանք որ Անա-
 նիան պաշտօնէն հանած էին, և անոր յաջորդն
 սպաններ էին. և այն միջոցին՝ երբ իրօք քահա-
 նայապետ չկար, Անանիան յափշտակած էր ա-
 թոր: Աթէ Ղուկաս Մեծաբանիչ Աեսարիայի-
 մէջ եղած գունդ մը զինուորներ կը յիշէ՝ որ Ռատ-
 լացի կը կոչուէր, Յովսեպոս կըսէ թէ թէպէտ այն
 տեղի զինուորներն ըստ մեծի մասին Մտրեատան-
 ցի էին, բայց շուրջմէական զինուորներու փոքր
 խումբ մը կար հոն՝ որ այն անունով կը կոչուէր,
 և նոյն՝ Մեծաբանիչին գործածած Յունարէն
 բառը կը գործածէ անոր: Այնչափ ճիշդ ու կա-
 տարեալ են այս համաձայնութիւններն՝ որ ոչ մէ-
 կը կը կրնայ մերժել իր միտքէն այս վստահութիւնը

Թէ մեր Վիրքերուն հեղինակներն այս բաներուն
 ատենը ողջ էին, և իրենք անձամբ անոնց մէջ էին ։
 Յայց կրսուի թէ Յովսեփոս Քրիստոսի և Քր-
 իստոնէութեան վրայօք լուռ է ։ Ասիկա ճշմարիտ
 է, եթէ իբրև վաւերական ընդունինք ամեն ձե-
 ոագիրներու մէջ գտնուող և զօրաւոր արտաքին
 վկայութիւն ունեցող խօսք մը, այն խօսքը հե-
 տեւեալն է . « Արդ՝ այս ատենները Յիսուս անու-
 նով իմաստուն մարդ մը կար, եթէ օրինաւոր է
 անիկա մարդ կոչել, վասն զի այն շատ զարմա-
 նալի գործքեր ըրաւ . անիկա ուսուցիչ էր անանկ
 մարդոց՝ որոնք ուրախութեամբ կրնդունէին ճշմար-
 տութիւնը . անիկա իրեն քաշեց շրէաներէն և
 շեթանոսներէն ալ շատերը . ասիկա էր Քրիս-
 տոսը ։ Աւ երբոր Պիղատոս մեր մէջն եղած գլը-
 խաւոր մարդոց գրդումովը դատապարտեց անիկա
 խաչի մահուան, անոնք որ կրսիրէին զինքը՝ չդադ-
 րեցան անոր յարելէն . ինչու որ երեք օրէն կրկին
 կենդանի երեցաւ անոնց, Աստուածային մարգա-
 րէններն այս բաները և ուրիշ հաղարաւոր զար-
 մանալի բաներ անոր վրայօք գուշակած ըլլալով ։
 Աւ Քրիստոնեայ ժողովուրդը՝ որ իր անունէն
 այսպէս կոչուեցան, մինչև այս ժամանակը
 կրկենայ » ։ Ասկէ վերջը ուրիշ տեղ մըն ալ այս-
 պէս կրսէ, « Անանիան շրէական Սանհիտրիմ
 կոչուած ժողովքը հաւաքեց, և անոր առջև բե-
 րաւ Քրիստոս կոչուած Յիսուսի եղբայրը Յա-
 կոբոսը՝ մէկ քանի ուրիշներուն հետ, որոնք մատ-
 նեց որ քարկոծուին իբրև օրինադանց » ։ Այս
 յօդուածին վաւերականութիւնը վէճի տակ ին-

կած է. բայց եթէ Յովսեպոս լուռ սեպենք այս նիւթին վրայ, անատենը Տակիտոսէն յայտնի է որ անոր լուսթիւնը տգիտութենէն եղած ըլլալու չէր. և որովհետեւ շրէայ մնաց՝ այսպէս մէկ անուղղակի վկայութիւն մը կը ըլլայ անոր լուսթիւնը: Չէր կրնար մեր Վիրքերուն դէմ բան մ'ըսել. մեր պատմիչներուն խօսքէն տարբերող բան մը չըսեր, բնաւ ստութեան յանցանք չդնէր անոնց վրայ. ամեն անուղղակի կէտերու մէջ անոնց ըսածը կը հաստատէ:

Իայց՝ դարձեալ, եթէ Ղուկաս Մետարանիչ Մթենացիներուն համար կըսէ թէ Իրենց ժամանակը նոր բան ըսելով և լսելով կանցնէին, կըտեսնենք որ Թեմոսթենէս շատ առաջուց անոնց կը հարցնէ թէ՛ Չեր միակ փնտրուած պատիւը հրապարակ տեղեր պտրտիլ, և մէկը մէկու՝ Ինչ լուր կայ, հարցնելն է: Այն ժամ Պօղոս Մաքեալ Արեւտացիք Սուտորուց կը կոչէ, կըտեսնենք որ մէկու մը «Արեւտական» ըսելը առաձական անուն մ'եղած էր հիներուն մէջ ստախօսութեան համար:

Շիմա Վատին հեղինակները յիշելու կանցնիմ. առաջ Պիղատոսի ըրած վկայութեանը վրայ խօսք մը պիտի ըսեմ: Աերեւի որ շուրջմէական իշխաններն իրենց իշխանութեան տակն եղած տեղերը պատահած նշանաւոր դէպքերուն պատմութիւնը կը դրկէին Այսոբերուն, և այն պատմութիւնները կը պահուէին այն կառավարութեան Վարժեբը անունով: Աւերբիոս այս սովորութեանը վրայ խօսելով, կըսէ «Մեր Փրկչին յարութիւնը Պաղեստինու մէջ ամեն կողմը շատ խօսուած ըլ-

լալով՝ Պիղատոս անոր վրայ ծանօթութիւն տուաւ Վայսրին՝ : Այս պատմութիւնները բնաւ չըհրատարակուեցան , բայց Յուստինոս Ա կան իր առաջին ջատագովութեանը մէջ՝ որ տուաւ Մետոնինոս Պիոս կայսրին և Հռովմայ ծերակոյտին , Վրիստոսի մահէն միայն հարիւր տարիի չափ վերջը խաչելութիւնը և անոր հետ եղող պարագաներուն մէկ քանին յիշելով կը յաւելու , թէ « Այս քաներուն ասանկ ըլլալը կրնաք իմանալ Պոնտացի Պիղատոսին ժամանակը գրուած Վործքերէն » : Այս գարձեալ Վրիստոսի հրաշքներուն վրայ խօսելով՝ նոյն Պիղատոսի Վործքերը կը յիշէ նոյն անունը տալով : Տերաուղիանոս ալ յայտնի կը խօսի անոնց վրայ , և անոնց պարունակած մէկ քանի քաները կը պատմէ : Այժմէ ասանկ Վործքեր չկային՝ յանդգնութիւն եղած պիտի ըլլար Յուստինոսին յիշել անանկ Վործքեր այն նոյն անձին ուղղուած գրութեան մը մէջ որուն ձեռքն է այն յիշատակարանները , և եթէ կային՝ որչափ կատարեալ է ապացոյցը :

Բայց կանցնիմ՝ Տակիտոսին՝ որուն վկայութիւնը Աիպպոն անգամ կը վկայէ , թէ ընդունելի է : Հռովմ քաղաքն այրելուն պատմութեանը հետ՝ որ պատահեցաւ՝ Աերոնի տասներորդ տարին , և Աերոն Վրիստոնեաներուն վրայ դրաւ անիկա , կը պատմէ թէ Վրիստոս իբրև չարագործ սպաննուեցաւ Պոնտացի Պիղատոսին ձեռքը , որ Տիբերիոսէն գործակալ գրուած էր , և Վրիստոնեայ կոչուած ժողովուրդն անկէ առին իրենց անունը , և այս մոլորութիւնը Հրէաստանէն ելաւ և Հռովմ

տարածուեցաւ, ուր որ անատենը՝ որ Քրիստոսի մահէն երեսուն տարիի չափ միայն վերջն էր, Քրիստոնեաները շատ բազմաթիւ էին: Տակիտոս անոնց վրայ խօսած ատենը բուն իր գործածած խօսքն է՝ *ingens multitudo*, այսինքն է մեծ բազմութիւն: Տակիտոսի պատմութենէն յայտնի է նաև որ Քրիստոնեաներն ենթակայ եղած էին անարդանաց ու խիստ ահարկու չարչարանքներու: «Անոնց տանջանքները» կրսէ «անանկ կերպերով կը գործադրուէր՝ որ նախատինքի ու անարդանքի ենթակայ ըլլան. ոմանք վայրենի անասուններու մորթերով կը պատէին որ շուներէն փառատուին, ոմանք խաչը կը հանէին, երբ ուրիշներուն վրայ դիւրավառ նիւթեր քսելով գիշերուան ատեն իբրև ջահ կը վառէին ու կը մեռցնէին»: Այս պատմութիւնը կը հաստատեն Սուեանիոս և Վարդիալ ու Նիւվէնալ:

Տակիտոսի այս վկայութիւնն՝ որ այնպէս վաւերացած է, բոլորովին վճռական է Քրիստոնէութեան ծագման գլխաւոր եղելութիւններուն և ժամանակին նկատմամբ:

Այս տեղը յարմար պիտի ըլլար Պլինիոսի Տրաքիանոսին զրկած այն համբաւաւոր նամակը և պատասխանն ամբողջ յառաջ բերել, բայց ասիկա շատ քաջածանօթ բան մ' ըլլալով երկու համառօտ խօսք պիտի յիշեմ միայն անոնցմէ. մէկը Քրիստոնէից ինչպէս անձինք ըլլալուն՝ և միւսը անոնց որքան ըլլալուն վրայ: Պլինիոս՝ Պոնտոսի ու Ռիւթանիայի իշխան էր, որ Ասիոյ՝

Երէաստանէն հեռու մէկ մասն էր , և նամակը
 Քրիստոսի մահէն եօթանասուն տարիէն քիչ ա-
 ւելի վերջը գրուած էր : « Նոնք կը հաստատեն »
 կըսէ , այսինքն անոնք որ կըսէին թէ Մենք ատեն
 մը Քրիստոնեայ էինք , բայց հիմա չենք , « որ
 մեր բոլոր յանցանքը և սխալմունքն այս բանին
 մէջ կը կայանար » որ սովորութիւն ունէինք մէկ
 որոշեալ օր մը առտուն չուսցած մէկտեղ գալու ,
 և մեր մէջը փոփոխակի երգ մ' ըսելու Քրիստո-
 սի իբրև Նստուծոյ , և երգումով ուխտ ընելու
 որ ոչ թէ մէկ չարութիւն մը գործենք , այլ ոչ
 գողութիւն ընենք՝ ոչ յափշտակութիւն՝ ոչ շնու-
 թիւն , և բնաւ խօսքերնիս ետ չառնենք . ոչ ալ
 մեզի յանձնուած աւանդն ուրանանք՝ երբոր ետ
 ուղուի : Արբոր այս բաները կը լինային , մեր սո-
 վորութիւնն էր բաժնուիլ և նորէն մէկտեղ գալ
 կերակուր ուտելու , որ կուտէինք մէկտեղ առանց
 մէկ անկարգութեան մը » : Այս բանն այնչափ
 տարօրինակ թուեցաւ Պլինիոսին որ երկու կնկան
 տանջանք տուաւ , բայց ուրիշ բան չգտաւ :

Քրիստոնէից թիւին նկատմամբ եղած խօսքն
 այս է . « Ա ասնորոյ ձգելով բոլորովին՝ ասոնք
 դատի վարելը քեզմէ խրատ կուզեմ . վասն զի
 խորհրդածութեան շատ արժանի բան երեցաւ
 ասիկա , մանաւանդ վնաս կրելու վտանգի մէջ
 եղող անձինքներուն խիստ շատ ըլլալուն համար .
 քանզի շատերը կամքաստանուին և պիտի ամ-
 բաստանուին , ամեն հասակէ և ամեն աստիճանի
 անձերէ թէ այր և թէ կին : Աւ այս մտորու-
 թեան ախտը ոչ քաղաքներուն մէջ միայն տա-

ըսածուած է, այլ փոքր գիւղաքաղաքներն ալ ու
գիւղերն ալ՝ : Հոս՝ կրտեսներնք որ կրօնքին յա-
ռաջագիմութեանը վրայ մեր Վիրքերուն մէջ տը-
րուած վկայութիւնը բոլորովին կը հաստատուի :
Պոնտոս ու Յիւթանիա հեռու դաւաններ էին, և
չերեիր որ Քրիստոնէական կրօնքն ուրիշ տեղե-
րէն աւելի հոն տարածուեր էր : Արշափ զօրա-
ւոր ըլլալու է Քրիստոնէութեան ունեցած անա-
տենի ապացոյցը՝ որ կրնար համոզել խելքը գը-
լուիսը՝ ու ամեն կարգէ անձինք, որ թողուն իրենց
նախահարցը կրօնքը, և այնպէս՝ արքունական իշ-
խանութեան դէմ՝ յարիչ մնալ գերիի մահուամբ
սպաննուող մէկու մը :

Արնայինք յիշել նաև Աելասու և Ղուկիանոս
և Եպիկտետոս և Մարկոս Լնտոնիոս Կայսրը, և
Կալէն ու Պորփիրիոս՝ որոնք ամենը լոյս կուտան
Քրիստոնէութեան նախնի պատմութեանը. և ա-
նոր վերաբերեալ բոլոր ըսածնին մեր Վիրքե-
րուն պատմութիւնները կը հաստատեն :

Մէկ ապացոյց մըն ալ կայ՝ որ հիմա պիտի
յիշեմ, այն որ կելնէ հին դրամներէն՝ միտալներ-
րէն և փորագրութիւններէն : Լսոնց ամենէն ե-
րեւելին Հին Ատաղարանին արժանահաւատու-
թեանը կը վերաբերի, թէ և Նորին ալ հաստա-
տութիւն տուող պատուական բաներ սպակաս չեն,
և ես կը յիշեմ՝ որովհետեւ ասիկա կը ցուցնէ թէ
ինչպէս փաստարանութեան ամեն նարաւոր կող-
մը նոյն կէտին կը նայի : Ղուկաս Լեւտարանիչ
Աերգիոս Պօղոս ըսուած մարդուն անանկ պա-

տուանուն մը կուտայ՝ որ միայն մեծ աստիճան ունեցող մարդու կը վերաբերի . և տարակոյս կըլլած է Արարոսի իշխանութեանն այնչափ մեծ աստիճան մ'ըլլալուն . բայց մէկ դրամ մը գտնուած է՝ որ կոխուած է Աղոդիոս Աեսարի թագաւորութեան ատենը , (որ Պօղոս ալ անոր տիրած ատենը Արարոս կը կենար ,) և Նրոզլոս անուն իշխանին ատենը , որ Աերգիոս Պօղոսին յաջորդն էր . այն դրամին վրայ բուն իսկ Մետարանիչին գործածած տիտղոսը տրուած է Նրոզլոսին : Մետարանիչը Փիլիպպէին համար Վաղթականաց տեղ կըսէ , և անանկ բառ մըն է՝ որմէ կիմացուի թէ Հռովմեական գաղթականաց տեղ մըն էր . ուրիշ պատմիչ ասանկ բան մը յիշած չէր , վասնորոյ Մետարանիչին հեղինակութեանը վրայ խնդիր եղաւ . բայց միտալ մը գտնուեցաւ՝ որ կըրցուցնէ թէ Յուլիոս Աեսար այս պատիւը տուած է այն քաղաքին : Գործք Մռաքելոց տասնևիններորդ գլուխէն կիմացուի որ մեծ նախանձ մը կար Ափեսոսի քով Մրտեմիս չաստուածին պաշտամունքին համար . և երկայն փորագրութիւն մը գտնուած է հոն՝ որմէ կերևի թէ անգամ մը ամբողջ ամիս մը խաղեր ու տօն ըրեր են ի պատիւ անոր :

Գտնուած են նաև Հռովմայ այրերուն մէջ անանկ փորագրութիւններ՝ որ Արպպոնի և ուրիշ արդի հեղինակներուն բանեցուցած միտքերուն հակառակ , ազդու կերպով մը կըրցուցնեն նախնի հալածանքներուն անգթութիւնը՝ և մարտիրոս եղողներուն թիւը : Արնայինք շատ ուրիշ այս տեսակ ապացոյց ալ տալ :

Մ. յապէս՝ կայ ամեն տեսակ թէ ներքին և թէ արտաքին պատմական ապացոյց որ նար է ըմբռնել : Մ. յապէս քարերն անգամ կաղաղակեն : Եւ՝ ընթերցող, եթէ տկար ու կամակոր դիւրահաւանութիւն կայ, նոյնչափ տկար և կամակոր սկեպտիկեանութիւն ալ չըլլար :

Ճ Ա Ռ Փ Ա

Մարդարէութեան նիւթը՝ որուն հիմա ձեռք կըղարնենք, մեծ նիւթ մըն է, որ կըղարունակէ բազմաթիւ դժուարին՝ և միանգամայն խիստ կարևոր խնդիրներ. և չեմ գիտեր ինչ կրնամ ըսել անոր վրայ մէկ ճառի մը մէջ միայն : Մարդարէ թառ՝ նախնականապէս կրնշանակէ մէկը՝ որ Մատուծոյ խօսքերը կըխօսէր, հարկաւորապէս ապառնի դէպքեր գուշակել չպարունակելով. բայց երբոր ես կըխօսիմ մարդարէութեան վրայ՝ իբրև ապացոյց յայտնեալ կրօնքին, ըսել կուզեմ գուշակել ապառնի բաներ այնչափ անյուսալի՝ որ մարդկային իմաստութիւնը չէր կրնար նախատես ըլլալ անոնց, և այնչափ շատ ու մանրամասն՝ որ գիտուածով չէին կրնար անանկ գուշակուածին յարմար պատահիլ : Մասնկ դէպքեր գուշակել ու անոնք կատարել տալը՝ Մատուծոյ ամենագիտութեանը և ամենակարողութեանը ամեն նարաւոր յայտնութիւններուն ամեն նշանաւորներէն է : «Նանի մը ըլլալիքը» կըսէ Յուստինոս վկան «ըլլալէն շատ ատեն առաջ ծանուցանել, և վերջը

նոյն բանը եղած ծանուցմանը համեմատ կատարելը՝ եթէ Մատուցոյ գործը չէ, չկայ ալ ուրիշ բան մը որ անոր գործն ըլլայ”։ Անհաւատները քաջ ճանչցած են այս տեսակ ապացոյցին ոյժը, և իրաւամբ հրաշքներուն հետ դասած են մարդարէութիւնները, Մատուժէ եղած յայտնութիւն մը ապացոյց ըլլալու կողմանէ։ Արդարեւ մեր աչքերուն առջևը կատարուած մարդարէութիւնը մէկ ներկայ հրաշք մըն է։ Թող անգամ մը յայտնուի թէ հարազատ մարդարէութիւնով կրօնք կապացուցուի, և չեմ գիտեր թէ ինչպէս նար է որ անկէ աւելի կատարեալ և յագեցուցիչ ապացոյց ըլլայ։

Մարդարէութիւնը փաստաբանութեան հիմն դնելու կողմանէ ալ Քրիստոնէութիւնը բոլորովին մինակ կրկենայ։ Քրիստոնէական փաստաբանութեան երկու մեծ սիւներուն՝ այսինքն հրաշքներուն ու մարդարէութեան վրայ բնաւ ուրիշ կրօնք մը հիմնելու ջանք եղած չէ։ Խաբեբանները կեղծեցին և կրկեղծեն ալ հրաշքներ գործել, արդէն հաստատուած մոլորութեան ու հեթանոսութեան դրութիւններ պաշտպանելու համար, և նոյն կերպով սուտ պատգամներ կրտրուէին, որոնք շատ աւելի հիմակուան բաղդ նայողներուն ըրածին կրնմանին՝ քան թէ Սուրբ Վրոց մարդարէութեանը։ Արդարեւ Քրիստոնէական հրաշքներուն նեթանոսաց ծաղրալի զարմանալիքներէն ունեցած տարբերութիւնը Սուրբ Վրոց մարդարէութիւններուն նեթանոսաց պատգամներէն ունեցած տարբերութենէն մեծ չէ, այն պատգամ-

ները կըտրուէին շահու համար՝ երբոր մասնաւոր
 խնդիր կըլլար, և հետաքրքրութիւն յազեցնելու
 համար, կամ թէ քաղաքական կամ զինուորա-
 կան փառասիրութեան նպատակներու օգնելու
 համար. ասիկա կատարուելու բոլոր պարագա-
 ները խաբէութեան օգնող պարագաներ էին,
 և տրուած պատասխաններն ընդհանրապէս անանկ
 երկդիմի էին՝ որ բանն ինտոր որ դառնար երկու
 կողմին ալ կը յարմարէր: Այսպէս՝ երբոր Արեւ-
 սոս Ղեղքեան պատգամին խորհուրդ հարցուց իր՝
 Պարսկաց դէմ պատերազմ ընելու դիտաւորու-
 թեանը նկատմամբ, իրեն ըսուեցաւ թէ մէկ մեծ
 տէրութիւն մը պիտի կործանէ: Ասիկա ինքը բնա-
 կանապէս Պարսիկները յաղթելու վրայ մեկնեց,
 թէպէտ պատգամն անանկ շինուած էր որ հակա-
 ռակ իմաստն ալ յարմարի: Արեւսոս Պարսկաց
 հետ պատերազմ ըրաւ և յաղթուեցաւ, և պատ-
 գամին պատիւը տակաւին հաստատ մնաց: Մայց
 Սուրբ Կրօց գուշակութիւններն եղած են խնդիր
 չեղած ատենը, և ոչ բնաւ անձնասիրական վախ-
 ճանի մը համար: Անոնք՝ ոմանք անհատ անձանց
 և ոմանք ազգերու վերաբերեալ բաներ են. և
 մեզի մէկ ընդարձակ տեսութիւն մը կուտան Աս-
 տուծոյ թագաւորութեանը վրայ՝ թէ անոր ծագ-
 մանը և թէ յառաջադիմութեանը նկատմամբ, և
 անոր հետ խիստ սերտիւ կապակցութիւն ունեցող
 դէպքերուն վրայ՝ մինչև աշխարհիս վերջը: Անոնք
 մէկ ամբողջ մեծ ու ներդաշնակ դրութիւն մըն
 են, որոնց ոչ մէկը կրնայ ցուցուիլ որ չկատար-
 ուեցաւ, որոնք կսկսին Ադեմի պարտէզէն և

մէկզմէկէ խիստ տարբեր անձինքներէ զըուցուած
էն , ու ընդարձակած չորս հազար տարուան մի-
ջոցին : Չենք կրնար ըմբռնել շարժառիթ մը՝ ա-
սանկ մէկ խաբեբայութեան դրութիւն մը կազմել
ձեռք զարնելու , և ոչ մէկ մարդկային կարողու-
թիւն մը կրնայ անիկա ի գործ դնել :

Նսիկա անանկ տեսակ ապացոյց մըն է՝ որ Վր-
րիստոնէական կրօնքին՝ մանաւանդ Վրիստոսի
գալստեանը մասնաւոր վսեմութիւն մը կը հա-
գուեցնէ : Ըստ որում անոր գալուստն այն մեծ
դէպքն էր՝ որուն պէտք է միշտ նայի Վրիստոնե-
եան , նոյնպէս մարդարեւութիւնն այն մեծ դէպ-
քը կընէ անիկա՝ որուն միշտ կընայէր հին ե-
կեղեցին : Մարդարեւութիւնն զՎրիստոս կընէ
այն դրութեանը կենդրոնը և բարոյական ցորեկին
արևը , իսկ մարդարեւները և հին սուրբ մարդիկն
այն աստղերուն և համաստեղութիւններուն կը-
նամանցնէ՝ որոնք անկէ առաջ կուգան և կաւետեն
անոր գալուստն պայծառութիւնը :

Վարձեալ՝ մարդարեւութեան ապացոյցը միշտ
կաճի : Նսիկա շէշներ բուն իսկ մարդարեւութենէն՝
մարդարեւութիւնը ինքնին նկատելով , այլ որչափ
և ինչպէս չկատարուած մարդարեւութիւններ կե-
նայէն , որոնցմէ այնչափ շատ կան թէ Հին և
թէ Վոր Վտակարանին մէջ : Աթէ մարդարեւ-
թիւնը մինչև վերջն ըլլալիք բաներուն մէկ պատ-
կերը նկարագրած է , ուրեմն անկէ ելած ապա-
ցոյցը հետզհետէ աւելի կատարեալ պիտի ըլլայ ,
քանի որ Նստուածային Վախտինեմութեան
ծալքը բացուի և նոյն պատկերին համաձայն զըստ-

Նուի : Նսուած է թէ մարգարէութեան այս աճեցող ապացոյցը՝ հրաշքներուն նուազող ապացոյցին տեղը լեցնելու համար եղած է . բայց հրաշքներուն ապացոյցին վրայօք ես ասանկ նուազում մը չեմ ընդունիր . հրաշքներ դործուելուն՝ անոնք աչքովնին տեսնողներուն չափի վստահ կրնանք ըլլալ, ճիշդ ինչպէս որ աչքովնին տեսնողներուն չափի վստահ կրնանք ըլլալ որ Նրուսապէմ քաղաքը պաշարուեցաւ ու անուեցաւ . բայց երկու դէպքերուն վրայօք ալ մեր հոգին վրայ եղած արարութիւնը՝ թէ միջոցի և թէ ժամանակի հեռաւորութեան հասարակ եղող մէկ օրէնքով մը կենդանի չըլլար այնչափ՝ որչափ պիտի ըլլար եթէ դդայարանաց վկայութիւնովը կամ թէ մօտ ատեն մը կամ մօտ տեղ մ' եղած բանէ մը յառաջ եկած ըլլար այն տպաւորութիւնը : Նանին եղելութեանը նոյնչափի վստահ կրնանք ըլլալ՝ եթէ Չինաստան երկրաշարժ մ' եղած ըլլայ, որչափ որ եթէ Պօլիս երկրաշարժ մ' ըլլալով կործանած ըլլայ . բայց որչափ քիչ կենդանի պիտի ըլլան մեր մտաց վրայ եղած տպաւորութիւնները Չինաստանի մէջ եղած դէպքին նկատմամբ՝ Պօլիս եղածին հետ բաղդաատելով :

Մարգարէութենէն ելած ապացոյցն այսպէս վճռական ու եղական՝ վսեմ ու աճող ըլլալով, չենք կրնար զանց ընել . թէպէտ և եթէ անանկ բունենք թէ Քրիստոնէութեան լոկ տրամաբանական փաստ հարկաւոր է, ասոր կարօտութիւն պիտի չկենայ : Նայց մարդոց միաքերը զանազան կերպ ևն, ոմանց մէկ ապացոյց մը՝ և ոմանց ուրիշ մ' աւելի կազդէ . և կըթուի որ Նսուածոց

դիտաւորութիւնն այն էր՝ որ իր յայտնութիւնն
 ունենայ ամեն տեսակ ապացոյց որ իրաւամբ
 կրնայ պահանջուիլ, և գտնուի ամեն մտքի յար-
 մարող փաստ: Իմ մտքիս՝ ներքին ապացոյցներ
 ըով եղած փաստաբանութիւնը վճռական է,
 նոյնպէս է ականատեսներուն վկայութեանը վրայ
 եղածը. և այս ալ ուրիշ մըն է՝ թերևս հիմա
 անգամ անոնցմէ վար չմնացող, որ սահմանուած
 է որ ահագին կերպով մեծնայ այսուհետև: Աս-
 տոնք մէկզմէկէ անկախ են. զատ զատ ուռկան-
 ներու նման են, որոնք Աստուած հրամայած է
 «մարդոց որսորդ» եղողներուն՝ որ բանան հոսան-
 քին դիմացը, այսինքն անհաւատութեան Մեռ-
 եալ Օրով տանող հոսանքին, որ եթէ մէկը առ-
 ջինէն ազատի՝ երկրորդէն բռնուի, և եթէ երկրոր-
 դէն կերպով մը ազատի՝ երրորդէն չկրնայ ազատիլ:

Անանկ կրտսեպուի ընդհանրապէս թէ մարդա-
 րէութիւնը՝ որ եզական ու զօրաւոր ապացոյց մըն
 է կրօնքին, այսպէս ապացոյց ըլլալու նպատակաւ
 տրուած է. բայց եւ մարդարէութեան մէկ նպա-
 տակն այս ըլլալուն չեմ կրնար տարակուսիլ, մին-
 չև անգամ կրնայ ըլլալ որ քանի մը մասնաւոր
 մարդարէութեան մի միայն նպատակն այս եղած
 ըլլայ, ինչպէս երբոր Քրիստոս ըսաւ իր աշա-
 կերտներուն Յուդայի ընելիք մատնութեանը հա-
 մար, թէ «Հիմակուրնէ կրտսեմ ձեզի՝ քանի որ
 չէ եղեր, որ երբոր ըլլայ՝ հաւատաք թէ ես այն
 եմ»: Եւ այց որչափ ալ որ կարևոր նպատակ մըն է
 ասիկա, բայց և այնպէս պատահական է: Մարդա-
 րէութիւնը՝ կըլծուի թէ Քրիստոսի անմեղութեանը

նման, հարկաւորապէս այս դրութեանը մէջ կը
 մտնէ, և կըլլայ մէկ մասը՝ ոչ միայն այն դրութեանն
 ապացոյցին, այլև բուն իսկ դրութեանը: Աս
 հիմա այս կամ այն մասնաւոր մարդարէութեանը
 վրայ չեմ խօսիր, այլ կըսեմ թէ այս կրօնքին
 մարդարէական մասը՝ բոլոր դրութեանը տարբեր
 վերաբերութիւն մ'ունենալ կուտայ մարդկային
 մտքին, և բոլորովին ուրիշ բան մը կընէ անիկա՝
 բարոյական մշակութեան ու կրթութեան միջոց
 ըլլալու կողմանէ. այլ է զինուորին՝ իր անյնելու
 տեղերուն վրայ ու ընելիք գործքերուն վրայ և
 պատերազմին նպատակին վրայ բան մը չգիտցած
 յառաջ երթալը, այլ է որ գոնէ մէկ ուրուական
 պատկերն ունենայ երթալիք տեղերուն՝ իր անց-
 նելու գլխաւոր քաղաքները նշանակուած, և գիտ-
 նայ պատերազմին վերջին նպատակը և ինչպէս
 վերջանալիքը. յայտնի է որ եթէ այս վերջի կեր-
 պով ըլլայ՝ ուրիշ մէկ բարձր աստիճան եռանդ
 մ'ու համակրութիւն պիտի ծագի զինուորին
 սրտին մէջ. ան ատենը զինուորը կրնայ իր հրա-
 մանատարին հետ գործակից ըլլալ շատ աւելի
 խորհուրդ բանեցնելով. շատ տարբեր զգացում-
 ներ պիտի ունենայ՝ երբոր առաջուց խորհուրդ ե-
 ղած կէտերու կըհասնի, և շատ աւելի պիտի ըլ-
 լայ իր եռանդը՝ երբոր իր ճամբուն վախճանին
 կրմօտենայ և վերջին մարտին ժամը կուգայ:
 Աւ Մտուած իր մեծ խորհուրդներուն և նպա-
 տակներուն նոյն այս յարաբերութիւնն ունենա-
 լու վիճակին մէջ դրած է մեզ, իր յայտնու-
 թեանը մէջ մարդարէական մասը գնելովը: Աս

Նանկ պատրաստութիւն ըրաւ որ ամէն զինուոր
 իր ձեռքն ունենայ զինուորական եկեղեցիին՝ իր
 փրկութեան Վ. առջնորդին հետեւելու համար բըռ-
 նելիք ընթացքին մէկ ուրուական պատկերը . և այս
 ուրուական պատկերը բոլոր ճամբան կըցուցնէ ,
 մինչև կրտեսներք որ դրօշակակիր խումբը կանցնի
 այն յաղթական կամարներէն՝ ուր վերին Արուսա-
 ղէմին յաւիտենական դուռները վեր վերցուած
 են : Վ. սիկա լոկ հեռաքրքրութիւն յագեցնելու
 համար է . ոչ թէ լոկ անանկ ապացոյց մը տալու
 համար է , որ միայն ալ պէտք չեղած ատենը կը-
 կատարելագործի . այլ մեզի հաւատոյ ու սիրոյ ա-
 դարկայ՝ և ջանքի շարժառիթներ տալու համար ,
 և մարդուն միտքն այն յարաբերութեանը մէջ
 դնելու Վ. ստուծոյ մեծ խորհուրդին՝ որ յատկապէս
 անոնց կրվայլէ՝ որոնք ինքն իր զաւկները և իր բա-
 րեկամները կրկոչէ :

Մարգարէութեանց մթութեանը դէմ առար-
 կութիւն եղած է . այս առարկութիւնն անոնց
 դէմ չկրնար ըլլալ՝ սեպելով անոնք բաներուն
 ընդհանուր ընթացքը ցուցնող , և ասանկով կա-
 տարող այն մեծ վախճանը՝ որուն համար որ ես
 կըսեպեմ թէ անոնք տրուած են : Այլ ոչ կրնայ
 մասնաւոր մարգարէութիւններէն ոմանց դէմ ըլ-
 լալ՝ որոնցմէ աւելի ուղղակի և բացայայտ բան
 չկրնար ըլլալ : Վայց միւսները մութ են . որոնց-
 մով եղած յայտնութիւնները նշանակներով են ,
 և անոնց մեկնութիւնն իրենց յատուկ եղած մեկ-
 նութեան օրէնքներուն տակը կիյնան , և նշանա-
 կութիւնը մարգարէներն իրենք անդամ միշտ

չէին հասկանար: Քայց բուն այս ճիշդ իրենց
 եղած աստիճան մթութիւնովն է՝ որ այս մարգա-
 րէութիւններն իրենց հարազատութեանը նար
 եղածին չափ բարձր աստիճան ապացոյց կուտան:
 Աթէ նպատակն այն եղած ըլլայ որ կատարելա-
 պէս ապացուցուի թէ այս ինչ մարգարէութիւն-
 ները ներշնչեալ են, ասիկա կրնար ըլլալ միայն
 այն աստիճան մութ ընելով անոնք, որ բանը չե-
 ղած՝ ստուգութեամբ չճանչցուի ինչ ըլլալիքը,
 բայց և այնպէս այնչափ պարզ՝ որ չկրնայ ուրիշ
 բանի մը տրուիլ: Աւ ճիշդ այս է այն սկզբունքն՝
 որով մարգարէութեանց շատը կազմուած են.
 այս կողմէն նայելով՝ անոնք Աստուածային ճար-
 տարութիւն մը կը յայտնեն. եթէ մարգարէու-
 թիւնը պատմութեան պարզութիւնն ունենար, ան-
 շուշտ պիտի ըսուէր թէ ասիկա եղած է բուն իր
 կատարմանը պատճառը. անհատ անձինք ուղեղով
 անոր կատարուիլը՝ կրնայ ըլլալ որ ինքզինքնին
 մարգարէութեանը յարմարցնեն, կամ թէ կրնայ
 ըլլալ որ ջանան կատարումն արգիլել, ինչպէս ա-
 սոր մէկ հռչակաւոր օրինակն* եղած է: Ինչ
 եռանդով այս առարկութեանը բռնուելիքը՝ կրնայ
 իմացուիլ ասկէ՝ որ անհաւատ մը մինչև անգամ
 հիմա կըսէ թէ Քրիստոս ինքզինքը կամաւ մա-
 հուան մատնեց որ իր աշակերտները պարծենան
 թէ մարգարէութիւններն անոր վրայ կատարուե-
 ցան: Քայց երբոր մարգարէութիւնը՝ քանի որ

* Ար է Յուլիանոսի ջանք ընելը՝ որ կրկին շինուի Ե-
 րուսազէմի տաճարը:

կրչափէ՝ որպէս թէ լուսափայլ աղեղով մը, ժամանակին ամբողջ կամարը, և կը յայտնէ ոմանք դէպքերը կատարեալ յատկութեամբ, նոյն ատենն այնչափ կը ծածկէ միւսները՝ որ միայն անոնց ընդհանուր ձևը ցուցնէ, բայց և այնպէս այնչափ կը յայտնէ զանոնք՝ որ չկրնար մէկը սխալի այնոնց վրայ՝ իրօք կատարման լոյսովը կեցած ատեննին, երբոր այսպէս է մարգարէութեանն ատենը՝ կը ատենենք Վստուածային ձևքի մը ստոյգ նշանը՝ ատիկա կը լայ ամենէն աղէկ ապացոյցն՝ որ մարգարէութիւնը Վստուծմէ է:

Թերևս պէտք է խօսք մըն ալ զընցել ուրիշ կէտի մը վրայ: Շատ բան խօսուած է շին և Վոր Ատակարանին մէկզմէկու հետ ունեցած կապակցութեանը վրայ. ոմանց անանկ երեցած է թէ շին Ատակարանը լոկ մէկ անկենդան ծանրութիւն մըն է, և Քրիստոնէութիւնն աւելի յաղթանակաւ յառաջ պիտի երթար՝ եթէ անգամ մը պատշաճ կերպով մ'անկէ բաժնուի լով ազատէր. անոր բարոյականն իրենց բարբարոսական երեցած է, և անոր պատմութիւններն անհաւանական. թերևս չեն ուզեր հաստատարար ըսել թէ անանկ բաներ չեղան, այլ մեծ տարակոյս ունին ըլլալուն, և անոնց վրայ խօսած ատեննին՝ «Վ. յն հին արասպէլները» կը կոչեն անոնք: Բայց ես անանկ վախ չունիմ թէ շին Ատակարանը Վորին յառաջադիմութիւնը ետ բռնէ. ես չեմ ուզեր որ Քրիստոնէութիւնն ունիցէ կապակցութիւնը կարէ շին Ատակարանէն, այլ յաւէտ կուզեմ որ այն կապակցութիւնն առաւել

սերտ ըլլայ : Ինձի՛ շին Ատակարանին բարոյա-
կանը՝ Տասը պատուիրանքներուն բարոյականն է .
անոր մէջ բան մը չեմ տեսներ ես հաւանութիւն
տրուելով վաւերացած՝ որ այս պատուիրանքնե-
րը արգիլած ըլլան . և ասկէ ուրիշ բան չեմ ու-
զեր ես : Ինձի՛ անոր պատմութիւններն իրողու-
թիւններ են . և կը յիշեմ որ Փրկիչն ըսաւ այս
Վիճակներուն համար՝ թէ անոնք են որ կը վկայեն
Իրեն համար :

Այսպէս նկատում ունենալով բանին վրայ ,
թէ և կընդունիմ որ դժուարութիւններ կան մար-
գարէութիւններէն ոմանց պատշաճ մեկնութեանը
վրայ , և մէկ քանի տեղ Վոր Ատակարանի հե-
ղինակներուն անոնցմէ վկայութիւն բերելու կեր-
պին վրայ , բայց և այնպէս ես կը խորհիմ որ խիստ
մեծ ապացոյց կայ որ , 1. Քրիստոսի ժամանա-
կէն առաջ պատահած դէպքերուն վերաբերեալ
մարգարէութիւնները կատարուեցան : 2. Քրիս-
տոս և անոր Առաքեալները կը հաստատէին թէ
շին Ատակարանին մարգարէութիւններուն շատն
իր վրայ կատարուեցան : 3. Այլ այն մարգարէ-
ութիւններն իրօք կատարուեցան : Այլ 4. Ոչ
միայն շին Ատակարանի մարգարէները , այլ
և Քրիստոս և անոր Առաքեալները գուշակու-
թիւններ ըրին , որոնք անոր ժամանակէն հե-
տէ կատարուած են՝ ու կատարուելու վրայ են
հիմա :

Արդ՝ նայինք Քրիստոսի ժամանակէն առաջ
պատահած դէպքերուն վերաբերեալ մարգարէ-
ութիւններուն կատարմանը . ասոնց թիւը շատ մեծ

է, որոնք կրվերաբերին Հրէաներուն՝ և անոնց հետ կապակցութիւն ունեցող ազգերուն : Հրէաներուն վրայ եղածներէն անոնք միայն պիտի յառաջ բերեմ որոնք իրենց Տաբիլոն գերի երթալուն և դառնալուն կրվերաբերի, և ասոնցմէ՝ որ շատ են, քանի մ'օրինակ միայն կրնամ տալ : Արեմիա մարգարէն կրսէ (Վ.Տ. 28), «Անոր համար Տէրը այսպէս կրսէ. Ահա ես այս քաղաքը Քաղզէացոց ձեռքը Տաբիլոնի Աարուգոգոնոսոր թագաւորին ձեռքը պիտի տամ. ու զանիկա պիտի առնէ» : Այս խօսքը բաւական պարզ կըցուցնէ թէ քաղաքը պիտի առնուի : Ղարձեալ կրսէ (Եւ.Վ. 10), «Քանզի Տէրը այսպէս կրսէ. Արբոր Տաբիլոնին եօթանասուն տարին լմննայ, ձեզի այցելութիւն պիտի ընեմ, և ձեզ այս տեղս դարձնելով իմ բարի խոստմունքս ձեր վրայ պիտի կատարեմ :» Հիմա մտիկ ըրէ Ասայի մարգարէին՝ որ գուշակած բաներուն ըլլալէն հարիւր վաթսուն տարի առաջ անունովը կրկանչէ, և կըցուցնէ անանկ մէկուն գործը՝ որ տակաւին չկար : Ա.Վ. Եւ.Վ. 28 : «Ալ Աիւրոսին համար կրսեմ. իմ հովիւս է, և իմ ամեն կամքս պիտի կատարէ : Ալ Արուսաղէմին կրսեմ՝ թէ պիտի շինուիս, և տաճարին՝ թէ Քու հիմերդ պիտի ձգուին» : Հիմա մտիկ ընենք այս նոյն Աիւրոսին վճիռն որ ըրաւ եօթանասուն տարին լմնցած ատենը : Ա.Վ. Ա.Վ. 2. 3. «Այսպէս կրսէ Աիւրոս՝ Պարսից թագաւորը. Արկնից Ահուրայ Աստուածը երկրիս բոլոր թագաւորութիւնները ինձի տուաւ. ու անիկա ինձի պա-

տուիրեց, որ Յուդայի Արուսաղէմին մէջ անոր տուն մը շինեմ: Չեր մէջը ո՛վ որ անոր բոլոր ժողովուրդէն է, իր Աստուածը հետը ըլլայ, ու Յուդայի Արուսաղէմը ելնէ, և Իսրայէլի Ահոփայ Աստուծոյն՝ այն Արուսաղէմի մէջ եղող Աստուծոյն տունը շինէ": Իսկ իսկ պատմութիւնն ասկէ աւելի պարզ կամ մասնաւոր չէր կրնար ըլլալ. և յայտնի է որ մարդկային ճարտարամտութիւնն ասանկ դէպքեր չէր կրնար ի գործ դնել տալ:

Էրէից հետ գլխաւորաբար կապակցութիւն ունեցող ազգերը, 'Աինուէացիք՝ Մովաբացիք՝ Ամոնացիք՝ Փղշտացիք՝ Ագովմայեցիք՝ Տիւրացիք և Իսրայէլացիք էին. և ասոնց ամենուն վրայ ալ բազմաթիւ մասնաւոր մարգարէութիւններ կան:

Այն ընդարձակ երեք աւուր ճամբու մեծ քաղաքին՝ 'Աինուէի վրայ մարգարէն կրսէ, ('Աստուծ. Ա. 9) "Ահոփային դէմ ինչ կըլտորհիք. բնաջինջ ընողը անիկա է. նեղութիւնը երկրորդ անգամ պիտի չելնէ": Աւ ուրիշ մարգարէ մը կրսէ, (Մով. Բ. 13. 15) "Աւ 'Աինուէն աւերակի ու անապատի պէս չոր երկրի պիտի դարձնէ: Օրօսասէր քաղաքը ասիկա է, որ ապահովութեամբ կրբնակէր, որ իր սրտին մէջ կրսէր՝ թէ Աս կամ ու ինծմէ ուրիշ չկայ, ինչպէս աւերակ ու դաղանաց խշտի եղաւ": Մովաբացուց ու Ամոնացուց համար մարգարէն կրսէ (Մով. Բ. 8. 9), "Մովաբին նախատինքը, ու Ամոնի որդւոցը հայհոյութիւնները ըսեցի, որ

անոնք իմ ժողովուրդս նախատեսին, ու անոնց
սահմանին դէմ հպարտացան: Անոր համար իս-
րայէլին Աստուածը՝ Օօրաց Տէրը այսպէս կրսէ.
Կենդանի եմ ես որ Մովաբը Սողոմի պէս, ու
Ամմոնի որդիքը Գոմորի պէս՝ եղինճներու կա-
լուածք, և ալի հանք, ու յաւիտեան ամայու-
թիւն պիտի ըլլայ”:

“Աւ Մովաբը” կրսէ ուրիշ մարգարէ մը, (Ե-
բե՛. 101, 42) ժողովուրդ ըլլալէն պիտի կոր-
սուի”: Ահնուէի՝ Մովաբի՝ և Ամմոնի վրայ բո-
լոր այս ըսուածները նկարագրապէս կատա-
րուած են: Փղշտացւոց համար մարգարէն կրսէ,
(Սոփոն. 13, 4) “Գազան պիտի թողուի, Աս-
կաղոնը ամայի պիտի ըլլայ. Աղովտոսը կէս օր-
ուան ատենը պիտի վռնտեն. և Ակկարոնը ար-
մատէն պիտի խլուի”։ Աղովմի վրայ եղած մար-
գարէութիւններն աւելի նշանաւոր են. վասն զի
Աստուածաշունչի մեկնիչները շատ ատենէ հե-
տէ կրնեղուէին, ու չէին գիտեր թէ ինչպէս մեկ-
նեն անոնք, և անոնց նկարագրական ու ճիշդ
կատարումը քանի մը տարի է որ ծանուցուած է:
Այս երկիրն ատեն մը շատ բանուկ ու վաճառաշահ
տեղ մըն էր, և այն գուշակութիւններն ըլլալէն
շատ ատեն վերջն այնպէս մնացին: Բայց ահա Աս-
պառաժ Արաբիան, որ է այն քաղաքը՝ որուն աւե-
րակները մօտ ատեններս այնչափ հռչակաւոր ե-
ղան: Արբոր այն յետին աստիճան կործանած տե-
ղէն ասիկա գտնուեցաւ, անատենը և միայն անա-
տենը հետեւեալին նման խօսքերուն իմաստը յայտնի
եղաւ: Եբե՛. 101, 16 — 18, “Բու ահաւորու-

Թիւնրդ՝ քու սրտիդ հպարտութիւնը քեզ խաբեցին, ո՛վ վէմին խոռոչներուն մէջը բնակող, ու բարձր բլուրներուն փակչող: Աւ Ադուլմը ամայի պիտի ըլլայ, անկէ ամեն անցնողը պիտի հիանայ. և անոր բոլոր հարուածներուն համար պիտի սուշէ: Սողոմի ու Գոմորի և անոր շրջակայ քաղաքներուն կործանմանը պէս՝ կրսէ Տէրը: Հոն ալ մարդ մը պիտի չնստի, ու անոր մէջ մարդու զուակ պիտի չընակի: Այս երկրին ու անոր աւերակներուն գտնուիլը, ուր որ կը թուի թէ հազար տարիէն հետէ ճամբորդ գացած չէր, նման էր մեռելի մը յարութիւն առնելուն՝ որ ելնէ վկայէ Աստուծոյ մարգարէութիւններուն կատարելապէս ճշմարիտ ըլլալուն: Ազիպտոսի վրայ՝ որ այնչափ զօրաւոր էր ատեն մը, այսպէս ըսուած է, (Աւէի . Ի . Թ . 15 . 13) « Թագաւորութիւններուն խիստ ցածր պիտի ըլլայ, ու մէյմըն ալ աղգերուն վրայ պիտի չբարձրանայ. վասն զի անոնք պիտի պղտիկցունեմ, որ աղգերուն վրայ չտիրեն: Աւ մէյմըն ալ Ազիպտոսի երկրէն իշխան պիտի չըլլայ »: Ազիպտոսի ամբողջ պատմութիւնն այս խօսքին մեկնութիւնն է: Տիւրոսի և Քաբիլոնի վրայ եղած մարգարէութիւնները յայտնի են: Տիւրոսի վրայ ըսուած է (Աւէի . Ի . Թ . 4 . 5) թէ « Աւ անոնք Տիւրոսին պարիսպները պիտի աւրեն, ու անոր աշտարակները պիտի փլցունեն, ու ես անոր հողը պիտի աւլեմ անկէ, ու զանիկա չոր ապառաժի պիտի դարձընեմ: Անիկա ծովուն մէջը ուռկաններ փռելու տեղ պիտի ըլլայ »: Աղէքսանդր աւլեց

Տին քաղաքին եղած տեղէն աւերակները, նորին
 ճամբան լեցնելու համար, և Առնէյ անհա-
 ւատը՝ որ այն տեղերը ճամբորդութիւն ըրաւ, կի-
 մացնէ մեղի թէ հիմա ձկնորսներուն ուռկան
 փռելու տեղ է այն: Տաբիլոնի վրայ՝ որ էր « թա-
 դաւորութիւններուն փառքը », այսպէս ըսուած է,
 (Ն^ս. Ժ. Գ. 20. 21) " Հոն յաւիտեան բընա-
 կութիւն պիտի չըլլայ, և ազգէ ազգ մարդ պի-
 տի չբնակի. ու հոն Արաբացիք վրան պիտի չը-
 կանդենեն, և հովիւները իրենց հօտը հոն պիտի
 չսպառկեցնեն: Հապա հոն վայրենի կատուներ
 պիտի պառկին. ու անոնց տուները ոռնացող ա-
 նասուններով պիտի լեցուին. և հոն ջայլամներ
 պիտի բնակին. ու հոն այծամարդեր պիտի կա-
 քաւեն " : Տաբիլոնի բաղդին ու վիճակին վրայ
 ասկէ աղէկ ստորագրութիւն մը չէր կրնար դրո-
 սիլ հիմա: Այս մարդարէութիւնները նկարա-
 գրական էին, և նկարագրապէս կատարուեցան:
 Այս մարդարէութիւնները զրուցուած ատենն ա-
 սանկ բաներ պատահելու հաւանականութիւն
 ցուցնող բան չկար: Աշխարհ անատենը իշ-
 խանութեան ու քաղաքականութեան աթոռը մէկ
 տեղէ ուրիշ տեղ փոխուելու փորձը տեսած չէր:
 Ինչ տարօրինակ բան՝ որ այս քաղաքներն և
 ազգերը կորսուին: Ինչո՞ւ Ասլաբացիք կամ Ամ-
 մոնացիք մէկ զատ ժողովուրդ մը պիտի չմնային,
 Հրէաներուն ու Իսմայէլացիներուն պէս: Աւ-
 թէպէտ հիմա հոն ալ մարդարէներ չկան, այ-
 սու ամենայնիւ Աստուած ինքզինքը առանց վկա-
 յութեան թողուցած չէ: Այ մէկ ձայն մը կըր-

նար աւելի ազդու ըլլալ՝ քան թէ այս կործանած քաղաքներուն և աւերակ եղած թագաւորութիւններուն ձայնը, որ կը վկայեն թէ ի՞նչ ահաւոր բան է Մատուցոյ բարկութեանը տակն իյնալ, և ո՞րչափ ստուգիւ անիկա պիտի ի դործ դնէ բոլոր իր սպառնալիքները:

Հիմա կանցնիմ ցուցընել թէ Վրիստոս և իր Մաքեալները կը հաստատին թէ Հին Ատակարանի մարդարէութիւններուն շատն անոր վրայ կատարուեցան: Մ. յս հաստատութիւնն եթէ լեզուով կրնար ըլլալ, ինձի կը թուի թէ եղած է: Պիտի յիշեմ քանի մը խօսքեր, և ընթերցողներուն կը թողում դատել: Վրիստոս կըսէ (Յ. Գ. Ե. 39) «Վիրքերը քննեցէք, ինչու որ բուն անոնք են որ ինձի համար կը վկայեն»: Յ. Գ. Ե. 46. «Թէ որ դուք հաւատայիք Մովսէսին, ինձի ալ պիտի հաւատայիք. ինչու որ անիկա ինձի համար գրեց»: «Արդին մարդոյ կերթայ» ըսաւ (Մ. Գ. Ե. 24) «ինչպէս որ գրուած է իրեն համար»: Մ. Գ. Ե. Թ. 11. «Գրուած է Արդւոյ մարդոյ համար որ շատ չարչարանքներ պիտի կըրէ»: Ղ. Գ. Ե. Ժ. Գ. 31. «Մարդարէններուն ձեռքով ըստ Արդւոյ մարդոյ համար բոլոր գրուածները պիտի կատարուին» Ղ. Գ. Ե. Ի. Գ. 25—27 «Ըսաւ անոնց. Ո՛վ անմիտներ ու թուլասիրտներ հաւատալու այն բոլոր բաներուն՝ որ մարդարէնները խօսեցան: Չէ՞ որ այս բաներով պէտք էր Վրիստոսի չարչարուիլ, և իր փառքը մտնել: Աւսկսելով Մովսէսէն և բոլոր մարդարէններէն՝ կըմեկ-

նէր անոնց, ինչ որ իրեն համար բոլոր Գիրքե-
րուն մէջ գրուած էր": Եւ Սուրբ Գիրքերը
այսպէս մեկնած ատենն էր որ սիրտերնին իրենց
ներսիդին կը բորբոքէր: Կարձեալ ըսաւ (44—46)
«Պէտք է որ կատարուի այն ամենը՝ որ Մովսէսի
օրէնքին մէջ ու մարգարէներուն մէջ և սաղմոս-
ներուն մէջ ինծի համար գրուած են: Ընտանեւը
անոնց միտքը բացաւ՝ որ գիրքերը հասկանան:
Եւ ըսաւ անոնց՝ թէ Ըսանկ գրուած է, և ասանկ
պէտք էր Քրիստոսին չարչարուիլ, ու երրորդ
օրը մեռելներէն յարութիւն առնել": Միթէ
Քրիստոս կրնա՞ր ըրածէն աւելի պարզաբար հաս-
տատել, թէ իրեն համար մարգարէութիւն եղած
է՝ ոչ միայն Սուրբ Գրոց մէկ մասին մէջ, այլ
բոլոր Սուրբ Գրոց մէջ: Պատմութենէն յայտնի
է որ զինքը ողջ տեսնելուն ազգեցութիւնը Սուրբ
Գիրքերն իրենց մեկնելէն յառաջ եկած ազգե-
ցութենէն գրեթէ աւելի չէր:

Իսկ Ընաբեալներն ինչ կըսեն. «Պօղոս ա-
նոնց մէջը մտաւ», (Գործ. ԺԼ, 2. 3) «և ե-
րեք շաբաթ օր խօսեցաւ անոնց հետ Գիրքերէն,
մեկնելով և առջևնին դնելով՝ թէ պէտք էր
Քրիստոսի չարչարուիլ, ու մեռելներէն յարու-
թիւն առնել": Եւ ազնիւ Ներիացիները «ամեն
օր Իերեւել կը քննէին՝ թէ այս բաներն ասա՞նկ
են": Կարձեալ (Գործ. ԻԲ, 23) Ընաբեալն
«Ըստուծոյ թագաւորութիւնը կը ծանուցանէր
վկայութիւնով, և կը համոզէր զանոնք Յիսուսի
վրայով Մովսէսին օրէնքէն ու մարգարէներէն":
Այն Ընաբեալն Ըգրիպպասին առջևը վկայեց

(Գործ. Ի.Օ. 22) թէ « ես բան մը չգրուցեցի այն բաներէն դուրս՝ որ մարգարէները և Մովսէս խօսեցան թէ պիտի ըլլային » : Լսողոս (Գործ. Ժ.Բ. 28) « Տրապարակաւ սաստիկ կը յանդիմանէր Հրէաները, Սուրբ Գիրքերէն ցուցնելով թէ Յիսուսը Քրիստոսն է : Պետրոս Լուսաբեալ մինչև անգամ իր հեթանոսներուն խօսած առաջին ճառին մէջ ըսաւ, թէ (Գործ. Ժ. 43) « Լնոր կը վկայեն բոլոր մարգարէները » : Եւ դարձեալ (Գործ. Գ. 18) « Լստուած՝ ինչ որ Քուր մարգարէներուն բերնովը առաջուց յայտներ էր Քրիստոսին չարչարուելուն վրայով, այսպէս կատարեց » : Դարձեալ (24 համար) կըսէ, « Ու Քուր մարգարէները՝ որ Սամուէլէն ի վեր խօսեցան, այս օրերուս համար ալ իմացուցին » : Եւ նոյն Լուսաբեալը յայտնապէս կըսէ (Լ. Պե. Լ. 10. 11) « Փնտուցին ու քննեցին մարգարէները. կը քննէին թէ երբ կամ ինտոր ատեն կիմացնէր իրենց մէջ եղած Քրիստոսի Հոգին՝ որ առաջ կը վկայէր Քրիստոսի չարչարուիլը, ու անկէ ետեւ փառաւորուիլը » :

Ինծի անանկ կը թուի թէ այս խօսքերն ամենակատարեալ կերպով կը ցուցնեն ոչ միայն Քրիստոսի և անոր Լուսաբեալի հաստատելը՝ թէ Հին կտակարանի պատգամն իր վրայ կը կատարուի, այլև կը ցուցնեն թէ երբոր կը ջանային Հրէաները դարձի բերել, անոր այսպէս կատարուիլն էր մեծ խնդիրը :

Մեր յաջորդ խնդիրն է թէ Միթէ կա՞ն Հին

Ատակարանին մէջ մարդարեւութիւններ՝ որ այս-
 պէս կատարուեցան Քրիստոսի վրայ : Այս կէտին
 վրայ Սուրբ Գիրքը Սուրբ Գիրքին հետ բաղ-
 դատելով ելնելու է փաստը . ասանկով միայն կըր-
 նանք համոզուիլ բանին վրայ : Ուստի կընկերեն
 ընթերցողք՝ որ համառօտիւ յառաջ բերեմ շին
 և Նոր Ատակարանին մէկզմէկու համեմատող
 քանի մը խօսքերն այս նիւթին վրայ , թողելով որ
 Սուրբ Գիրքը խօսի իրեն համար : Իմ նպատակս
 է անանկ խօսք յառաջ չբերել՝ որ աղէկ չյար-
 մարիր բանին . բայց եթէ բերեմ՝ ատիկա ընդ-
 հանուր փաստաբանութիւնը անվաւեր չընէր :
 Ասիկա բարակ քննութիւններով եղած խնդիր
 մը չէ . այլ անանկ է՝ որպէս թէ ցորեկուան պայ-
 ծառ լոյսին մէջ կայնած ենք : Թերևս պէտք է
 խոստովանիլ որ կրնայ անանկ մութ անկիւններ
 ըլլալ՝ ուր մարդ վաղէ և բան մը չտեսնէ . նաև
 խոստովանիլ թէ ձեռքին չափ փոքր բան մը մէկ
 մարդու մը աչքէն բոլոր հորիզոնը կրնայ ծածկել :
 Այս բանին մէջ ալ խնդիրն այն չէ՝ թէ Արդ-
 եօք մէկ մարդ մը չկրնար քանի մը մութ կէտեր
 կամ քանի մը առարկութիւններ՝ որն որ ինքն ա-
 նանկ դիրքի մը կրնայ բերել , որ ամբողջ մար-
 դարեական երկինքին փառքը խաւարեցնէ , այլ
 այս է թէ Արդեօք անաչառ մտքին՝ կայ շին
 Ատակարանին մարդարեւութիւններէն հօսող լու-
 սոյ ընդարձակ հեղեղ մը , որուն ճառագայթները
 կերթան կըմփանան՝ փառաց պսակ մը կազմելով
 Փրկչին գլխուն բոլորափքը : Մենք կը հաստատենք
 թէ կայ , և այս լոյսն սկսեց ծագիլ մինչև ան-

գամ մեր նախածնողքն Ադեմէն չլինառած :

Մեծիայի վրայ առաջին ծանօթութիւնը կը գտնենք այն խոստմունքին մէջ թէ «կնկանը սերունդը պիտի ջատջախէ օձին գլուխը» : Ծանոթ . Գ . 15 : Նոր Ատակարանին մէջ ըսուած է թէ «Խորկեց Աստուած իր Արդին՝ որ կնիկէ մը եղաւ» . Գաղ . Գ . 4 : Աւ դարձեալ « Մարմինի ու արիւնի հաղորդ եղաւ, որ իր մահովը փճացնէ աշխիւս՝ որ մահուան իշխանութիւնը ունէր, այսինքն է Սատանան » : Աբր . Բ . 14 : Յաջորդ ծանօթութիւնն Աբրահամին և անոր ընտանիքին գուշակուեցաւ ընդհանուր կերպով մը : « Աւ երկրի բոլոր ազգերը քու սերունդովդ պիտի օրհնուին » : Ծանոթ . ԻԲ . 18 : Պօղոս Առաքեալ կըսէ . « Արդ՝ խոստմունքները Աբրահամին ու անոր սերունդին եղան . չըսեր, Աւ քու սերունդներուդ՝ որպէս թէ շատերու համար, հասլա որպէս թէ մէկու մը համար, Աւ քու սերունդիդ . որ այն Քրիստոսն է » : Գաղ . Գ . 16 : Նաև Յուդայի ցեղէն պիտի ըլլար : « Իշխողութիւնը Յուդայէն պիտի չալակսի, ոչ ալ անոր ոտքերուն մէջտեղէն օրհնադիրը, մինչև որ Աելովը գայ . ու ժողովուրդները անոր պիտի նազանդին » : Ծանոթ . ԽԹ . 10 : « Քանզի յայտնի է », կըսէ Պօղոս Առաքեալ, « թէ Յուդայի ցեղէն յառաջ եկաւ մեր Տէրը, որ այն ցեղին վրայով Մովսէս բան մը չզրուցեց քահանայութեան համար » : Աբր . Բ . 14 : Նաև թիւն տունէն պիտի ըլլար : « Աւ այն օրը Յեսսէին մէկ արմատը պիտի ըլլայ, որ պիտի կայնի ժողովրդոց գրօշակ ըլլալու համար .

զանիկա ազգերը պիտի փնտռեն, ու անոր հան-
 գիտը փառաւոր պիտի ըլլայ" : Ե. Ժ. 10 :
 " Եւ հա օրեր կուգան՝ կըսէ Տէրը, որ Դաւիթէն
 արդարութեան շառաւիղ մը պիտի հանեմ, որ
 թագաւորի պէս թագաւորութիւն պիտի ընէ, ի-
 մաստութեամբ պիտի վարուի, ու երկրի վրայ ի-
 րաւունք ու արդարութիւն պիտի ընէ : Եւ այս
 է անոր անունը՝ որով պիտի կոչուի, ՏԷՐԸ ՄԵՐ
 ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ" : Երեմ. Ի. 0, 5. 6 : Պօղոս
 Լ. աքբեալ կըսէ, " Իր Որդւոյն մեր Տէր Յի-
 սուս Բրիստոսին վրայով՝ որ մարմնոյ կողմանէ
 Դաւիթի սերունդէն եղաւ" : Հ. Բ. Լ. 3 :
 Լ'նոր ծննդեանը տեղը որոշուած էր : " Եւ դուն՝
 ում Բեթլէհէմ Եփրատա, թէ և Յուդայի հա-
 զարաւորներուն մէջը ըլլալու պատիկ ես, բայց
 քեզմէ պիտի ելնէ ինձի այն՝ որ Խորայէլի վրայ
 իշխան պիտի ըլլայ, ու անոր ելքը ի նուց յա-
 ւիտենական օրերէն է" : Մի. Ե. 2 : " Աւ եր-
 բոր", կըսէ Մատթէոս Լ. ետարանիչ, " Յիսուս
 ծնաւ Հրէաստանի Բեթլէհէմի մէջ" : Մ. Կ. Բ. 1 :
 Եւալ ժամանակն որոշուած էր. ոչ միայն
 իշխողութիւնը Յուդայէն պակսած պիտի չըլլար,
 այլև երկրորդ տաճարին կեցած ատենը : " Եւալ
 ամեն ազգերը պիտի շարժեմ . . . Եւ այս տունը
 փառքով պիտի լեցնեն կըսէ զօրաց Տէրը" :
 Լ. Ե. վերջի տանը փառքը առջինէն մեծ պիտի
 ըլլայ, կըսէ զօրաց Տէրը" : Լ. Բ. 7. 9 :
 Դանիէլ մարգարէն ալ ըսաւ, " Յանցանքը
 վերջացնելու, ու մեղքը հատցնելու, և անօրէ-
 նութիւնը քաւելու, ու յաւիտենական արդաւ-

բուժիւնը բերելու, և տեսիլքն ու մարդարէութիւնը կնքելու, ու սրբոց Սուրբը օծելու համար՝ քու ժողովուրդիդ վրայ, ու սուրբ քաղաքիդ վրայ եօթանասուն եօթնեակ որոշուած է" : Դան. Թ. 24 : Եւ ըստ այնմ՝ թէ Հրէայ հեղինակներէն և թէ Տակիտոսէն ու Սուետոնիոսէն շատ յայտնի խօսքեր կը գտնենք, թէ մէկ ընդհանուր ակնկալութիւն մը կար, թէ մէկ տարօրինակ անձ մը պիտի ելնէ Հրէաստանի մէջ այն ատենները : Այնչափ զօրաւոր էր այս ակնկալութիւնը Հրէից մէջ՝ որ ասիկա քաջալերութիւն մ' եղաւ շատ սուտ քրիստոսներ ելնելու, և կարողացուց զիրենք հետևողներ գտնելու. և այնչափ վստահ էին Հրէայք թէ Մեսիան չեկած տաճարը չկրնար կործանիլ, որ Տիտոս զօրապետին առաջարկած ամեն պայմանները մերժեցին, և անյուսարար կռուեցան մինչև վերջը : Իրմէն առաջ Աղիային նմանող նշանաւոր անձ մը պիտի գար : "Ահա ես իմ դեսպանս կըղրկեմ, ու իմ առջև ճամբայ պիտի պատրաստէ" : Մատ. Գ. 1 : "Ահա ես՝ Աղիա մարդարէն ձեզի պիտի զրկեմ, դեռ Տերօջը մեծ ու ահեղ օրը չեկած : Մատ. Գ. 5 : "Անպատի մէջ կանչողին ձայնը. Տերօջը ճամբան պատրաստեցէք. ու ամայութեան մէջ մեր Աստուծոյն համար շաւիղ շիտկեցէք" : Ես. Խ. 3 : "Այն օրերը Յովհաննէս մկրտիչը եկաւ, ու Հրէաստանի անապատին մէջ կը քարոզէր, ու կըսէր, Ապաշխարեցէք, ինչու որ երկնից թագաւորութիւնը մօտեցած է" : Մատ. Գ. 1. 2 : Եւ հրաշքներ պիտի գործէր, "Անատենը կոյ-

ընթացին աչքերը պիտի բացուին, ու խուլերուն
ականջները պիտի բացուին: Անատենը կաղը եղ-
ջերուի պէս պիտի ցաթկրտէ, ու համրին լեզուն
օրհնութիւն պիտի երդէ՞: Եւ. 1. 6. 5. 6:
Ասոնք ճիշդ այն հրաշքներն են՝ որ պատմուած
է թէ Քրիստոս ըրաւ այնչափ բազմաթիւ անգամ
որ չենք կրնար յիշել: Փառքով Արուսաղէմ
պիտի մտնէր, իշու ձագի՝ աւանակի վրայ հեծած:
«Մեծապէս ուրախացիր ո՛վ Սիօնի աղջիկ .
ցնծութեամբ աղաղակէ ո՛վ Արուսաղէմի աղջիկ .
ահա քու թագաւորդ քեզի կուգայ . անիկա ար-
դար ու փրկիչ է. հեղ է ու իշու վրայ հեծած,
և իշու ձագի՝ աւանակի վրայ»: Օւ. 1. 9:
Այս մարգարէութեան ճշգրտութեամբ կատարուե-
լուն պատմութիւնը կայ Մատթէոսի քօան և մէկ-
երորդ գլուխը: Աւ բուն իր քաղաքացիները
զինքը պիտի մէրժէին: «Աւ անիկա ձեզի սրբա-
րան պիտի ըլլայ . բայց Խորայէլի երկու տունե-
րուն՝ դայթակղութեան քար և գլորելու վէմ»: Եւ.
1. 14: Անիկա կերպարանք կամ վայել-
չութիւն չունէր՝ որ անոր նայէինք, ոչ ալ անանկ
երևոյթ մը՝ որ անկէ ախորժէինք: Անիկա մար-
դոցմէ անարգուեցաւ, ու երեսէ ձգուեցաւ . վըշ-
տաց տէր ու ցաւոց տեղեակ եղաւ . և անկէ երես
դարձընելու մարդու պէս եղաւ . անարգուեցաւ ու
ղանիկա չյարդեցինք»: Եւ. Օւ. 1. 2. 3: «Ի-
րեններուն եկաւ», կրտէ Յովհաննէս Աւետարա-
նիչը, և իրենները զինքը չընդունեցին»: Յւ. 1.
11: «Աւ դարձեալ թէպէտ այնչափ հրաշք-
ներ ըրած էր անոնց առջևը, բայց անոնք չէին

Հաւատար իրեն, որ կատարուի Ասայի մարգարէին խօսքը՝ որ ըսաւ, Տէր՝ ո՞վ Հաւատաց մեր տուած լուրին” . որ Ասայեայ յիսուն երեքերորդ գլխուն առաջին համարը յիշելով՝ կրցուցնէ թէ անիկա Մեսիայի վրայ խօսուած կրտսէ : Աւուրիչ մարգարէութիւն մըն ալ յիշելէն վերջը՝ կրտէ Առաքեալը, “Այս խօսքը ըսաւ Ասայի՝ երբոր տեսաւ անոր փառքը, ու խօսեցաւ անոր վրայով” : Յ՝Գ . ԺԻ . 37 . 38 . 41 : Գուշակութիւն եղած է նաև որ պիտի ծեծէին զինքը, ու ծաղր ընէին, և երեսը թուքնէին : “Իմ կունակըս՝ զարնողներուն, ու այտերս՝ փետտողներուն տուի . իմ երեսս նախատինքէն ու թուքէն չծածկեցի” : Ա՝ . Ծ . 6 : “Աւ Յիսուսը ծեծելով՝ անոնց ձեռքը տուաւ որ խաչուի” : Մատ . ԻԿ . 26 : “Անատենը անոր երեսը թուքին, ու բռունցով ծեծեցին անիկա . ոմանք ալ աստակ զարկին” : Մատ . ԻԳ . 67 : Անոր ձեռքերն ու ոտքերը պիտի ծակէին : “Այսան զի շուները չորս կողմն առին, չարերուն ժողովքը զիս պատեցին, ձեռքերս ու ոտքերս ծակեցին” : Մալ . ԻԻ . 16 : Այս մարգարէութիւնը զարմանալի է, որովհետև խաչը հանելու պատիժը շրէից մէջ գիտցուած չէր : “Ասա յանցաւորներու հետ պիտի սեպուէր : “Աւ յանցաւորներու հետ սեպուեցաւ . և շատերուն մեղքը վերցուց, ու յանցաւորներուն համար միջնորդութիւն ըրաւ” : Ա՝ . ԾԻ . 12 : Խաչին վրայ ծաղր պիտի ընէին և նախատէին զինքը : “Ամեն զիս տեսնողները զիս ծաղր կրնեն . շորթուկը կրբանան, գլուխ կերերցնեն, ըսելով .

Տէրոջը յուսացաւ, ու թող փրկէ անիկա. թող
 ազատէ զանիկա, ինչու որ անոր հաւնեցաւ: Մատ.
 ԻՒ. 7. 8: Այոնպէս քահանայապետները դպիր-
 ներուն ու ծերերուն հետ ծաղը ընելով՝ կրսէին.
 ուրիշները ազատեց, ինքզինքը չկրնար ազատել:
 Աստուծոյ յուսացել է, հիմա թող իրէ արիւն՝ էլի
 հոսկէ արիւն. ինչու որ ըսաւ, թէ Աս Որդի Աս-
 տուծոյ եմ": Մատ. ԻՕ. 41. 42. 43: Աւ-
 լերդի ու քացախ պիտի տային խմելու. "Աերա-
 կուրի տեղ թոյն տուին ինծի. ու ծարուած ա-
 տենս քացախ խմցուցին ինծի": Մատ. ԿԹ. 21:
 "Աւ եկան Աողգոթա ըսուած տեղը, որ է դան-
 կի տեղ. և վերստի խառնած քացախ տուին անոր՝
 որ խմէ": Մատ. ԻԼ. 33. 34: Անոր հանդերձ-
 ները պիտի բաժնէին և պատմուճանին վրայ վի-
 ճակ պիտի ձգէին: "Իմ հանդերձներս իրենց մէ-
 ջը կը բաժնեն. ու պատմուճանիս վրայ վիճակ
 կը ձգեն: Մատ. ԻԲ. 18: "Աւ զինուորները երբոր
 Յիսուսը խաչը հանեցին, անոր հանդերձները ա-
 ուին, ու չորս բաժին ըրին՝ ամեն մէկ զինուորին
 բաժին մը. նաև պատմուճանը. իսկ պատմուճանը
 առանց կարի էր վերէն ի վար բոլորը հիւսուած.
 ուստի ըսին իրարու, Ատիկա չպատուենք, հապա
 վիճակ ձգենք ասոր վրայ՝ թէ որով պիտի ըլլայ.
 որ կատարուի այն գրուածը": ՅԷ. ԺԹ. 23.
 24: Չարաչար մահուամբ պիտի մեռնէր. "Վան-
 զի անիկա կենդանեաց երկրէն կտրուեցաւ": Ա.
 ԾԳ. 8: "Աւ վաթսուներկու եօթնեակէն
 ետքը () ծեալը պիտի կտրուի, բայց ոչ թէ իրեն
 համար": Դան. Թ. 26: Աւ պիտի խոցէին.

Եւ Ղաւիթի տանը վրայ, ու Երուսաղէմի բը-
 նակիչներուն վրայ՝ շնորհաց և աղօթից շողին
 պիտի թափեմ, և անոնք ինձի՝ իրենց խոցածին
 պիտի նային": Օւփ. ԺԲ. 10: "Շապա զինուոր-
 ներէն մէկը գեղարդով անոր կողը խոցեց, և
 շուտ մը արիւն ու ջուր ելաւ": Յու. ԺԹ. 34:
 Ենոր գերեզմանը հարուստներուն հետ պիտի ըլ-
 լար: "Եւ անոր գերեզմանը ամբարիշտներու հետ
 դրուեցաւ. բայց երբոր մեռաւ, հարուստին հետ
 եղաւ": Եւ. ՆԼ. 9: "Ու երբոր իրիկուն եղաւ,
 Երեմաթիայէն հարուստ մարդ մ'եկաւ՝ որուն ա-
 նունը Յովսէփ էր, որ ան ալ Յիսուսի աշակերտ
 էր: Եսիկայ Պիղատոսին քովը երթալով՝ Յի-
 սուսին մարմինը խնդրեց, ան ատենը Պիղատոս
 հրաման ըրաւ՝ որ մարմինը տրուի: Եւ Յովսէփ
 մարմինը առաւ, մաքուր կտաւով պատնեց, ու
 դրաւ իր նոր գերեզմանին մէջ՝ որն որ քարէ
 փորած էր": Մատ. ԻԿ. 57, 58, 59, 60: Եւ
 ապականութիւն պիտի չտեսնէր: "Ասան զի իմ
 անձս գերեզմանին մէջը պիտի չթողուս, ու քու
 Սուրբիդ ալ ապականութիւն տեսնել պիտի չտաս":
 Մա. ԺՕ. 10: "Մարգիկ եղբայրներ"՝ կըսէ
 Պետրոս Եռաքեալ այս դուշակութիւնը յիշելէն
 վերջը, "արժան է համարձակ զրուցել ձեզի՝ Ղա-
 լիթ՝ Սահապետին համար, թէ մեռաւ ու թա-
 դուեցաւ. և անոր գերեզմանը մինչև աս օրս մեր
 մէջն է: Երդ՝ որովհետև անիկայ մարդարէ էր,
 և գիտէր, թէ Եստուած հաստատ երդում ըրաւ
 իրեն, թէ իր երիկամանցը պտուղէն մարմնոյ կող-
 մանէ Քրիստոսը պիտի յարուցանէ՝ որ իր աթո-

ուր նստի . ինքը կանխատեսութեամբ խօսեցաւ Քրիստոսի յարութեանը համար , թէ անոր հոգին դժոխքը չթողուցաւ , և անոր մարմինը ապականութիւն չտեսաւ." : Վերջ Բ. 29, 30 31 :
 Աւտակաւին կան ոմանք՝ որ կ'ըսեն թէ Մ. յս մարգարէութիւնները մարգարէութիւն չեն . և բնաւ իբրև մարգարէութիւն ցուցուած չեն : Բայց կարծեմ յայտնի է որ Աետրոս Մ. աքեալ Վերմանացւոց այն դպրատուններէն չէր , իբրև մարգարէութիւններուն մեկնիչ մը :

Մ. յս խօսքերը ոչ թէ բոլորն են , այլ շատ ուրիշներ ալ կրնայինք յառաջ բերել : Բանին վրայ առաջուց տեղեկութիւն չունեցող մէկը , անոնցմէ մէկ քանիին համար՝ անոնց վրայ լոկ եղածին պէս նայելով , Աթէովպացի ներքինիին ըրած հարցումը պիտի ընէ , թէ « Աաղաչեմ քեզի , մարգարէն որո՞ւ համար կրսէ աս . իրե՞ն համար , թէ մէկ ուրիշի մը համար" : Բայց երբոր անոնք մէկտեղ բերուած կը տեսնենք . երբոր կը տեսնենք թէ ինչ զարմանալի կերպով ամենը մէկ առարկայի մը կը նային , անանկ որ Քրիստոսի պատմութիւնն իր հրաշալի ծնունդէն՝ որուն նախագուշակուելուն վրայ բան չխօսեցայ , մինչև իր մահը ուրիշ բան չէ , այլ անոնց օրինակը . երբոր կը տեսնենք որ Հրէաներն իրենք այն խօսքերէն շատը Աեսիայի վրայ կ'առնեն , և Քրիստոս ու իր Մ. աքեալներն ալ պարզապէս կը հաստատեն թէ անոր վրայ կը կատարուին անոնք , անատենը ընդհանուր փաստաբանութիւնը խիստ զօրաւոր կըլլայ : Արչափ զօրաւոր ըլլալը կրնայ տեսնուիլ եթէ մէկը ջանք

ընէ այս խօսքերուն տասներորդ մասը յարմար-
 ցընել ուրիշ ունիցէ մէկ անձի մը՝ որ երբէք աշ-
 խարհ եկած է : Թող մէկը ջանա զանոնք Տիտո-
 սի զօրապետին յարմարցընել, որուն վրայ Յով-
 սեպոս կըսէ թէ Մնիկա նախագուշակուած տար-
 օրինակ անձն էր, և տեսնէ թէ պիտի յաջողի :
 Աթէ կընդունիք որ այս մարդարէութիւնները
 Քրիստոսի գալէն առաջ կային, (որ ասոր՝ կա-
 տարեալ ապացոյց ունինք, վասն զի ինչպէս հին
 հայրապետ մ' ըսեր է, շրէաները՝ որ Քրիստո-
 նէութեան թշնամի էին, Քրիստոնեաներուն գրա-
 պահէն էին,) և եթէ այս բոլոր պարագաները մէկ
 անձի մը վրայ պատահելու հաւանականութիւնը
 դիպուածի վարդապետութիւնով հաշուենք, Աստ-
 ուածաբանի մը ըսածին պէս՝ ասանկ բան մ' ըլ-
 լալու խիստ մեծ անհաւանականութիւնը ցուցը-
 նելու համար թիւ չէինք կրնար օգտեցընել :

Իայց այս խօսքերուն Քրիստոսի յարմարիլը որ-
 չափ ալ որ յայտնի է, որ անոնցմէ շատը եթէ
 անոր վրայ չառնուի, բնաւ իմաստ մը չեն ունե-
 նար, փաստաբանութեան բոլոր ոյժն ասոնց վրայ
 չէ, այլ ասիկա մէկ փոքր մասն է, վասն զի ոչ
 միայն անոր կենացն ու մահուանը պարագաները
 մանրամասնաբար ցուցուած էին, այլև անոր պաշ-
 տօններն ստորագրուած էին : Գուշակութիւն կայ
 թէ Մովսէսի պէս մարդարէ պիտի ըլլար անիկա .
 « Քեզի պէս մարդարէ մը պիտի հանեմ անոնց՝
 իրենց եղբայրներուն մէջէն, և իմ խօսքերս անոր
 բերանը պիտի դնեմ. ու ինչ որ անոր պատուի-
 րեմ, անոնց պիտի զրուցէ » : Բ. Օրեն. ԺԷ. 18 :

Լ. Եւսեբիոսը որոշաբար մէջ կը բերէ Պետրոս Լուսա-
 քեալ՝ (Գործ. Գ. 22) իբրև Քրիստոսի վրայ կա-
 տարուած: «Նաև քահանայ պիտի ըլլար. «Տէրը
 երգում ըրաւ, ու պիտի չղղջայ. Գուն յաւիտեան
 Մելքիսեդեկի կարգին պէս քահանայ ես»: Սու-
 ճժ. 4: «Լստուծմէ կոչուեցաւ» կըսէ Պօղոս Լու-
 սաքեալ, «Քահանայապետ՝ Մելքիսեդեկի կարգին
 պէս»: Եբր. Ե. 10: Եւ թագաւոր պիտի ըլլար.
 «Ես օծեցի իմ թագաւորս իմ սուրբ լեռանս
 Սիօնին վրայ»: Սու. Բ. 6: «Երկուրդդ քու
 զօրութեանդ օրը յօժարակամ պիտի ըլլայ սրբու-
 թեան զարդարանքներով»: Սու. Ճժ. 3: «Լմէն
 իշխանութիւն» կըսէ Քրիստոս, «ինձի տրուեցաւ
 երկինքի ու երկրի մէջ»: Սու. ԻԲ. 18: Եւ
 Պօղոս Լուսաքեալ կըսէ. «Ինչու որ անոր պէտք
 է թագաւորութիւն ընել, մինչև որ բոլոր իր թըշ-
 նամիները իր ոտքերուն տակը դնէ»: Լ. Արժ. Ժ. Ե.
 25: Եւ որ թագաւորութիւնը խաղաղութեան թա-
 գաւորութիւն պիտի ըլլար. «Վասն զի մեզի մա-
 նուկ մը ծնաւ, մեզի որդի մը տրուեցաւ, և իշ-
 խանութիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ, ու
 անոր անունը պիտի կոչուի Սքանչելի, Խորհրդա-
 կից, շքօր Լստուած, Յաւիտենականութեան
 շայր, Խաղաղութեան իշխան: Եւ իշխանութիւն
 վրայ ու անոր թագաւորութեանը վրայ, անոր իշ-
 խանութեանը մեծնալուն ու խաղաղութեանը սահ-
 ման չկայ, որ հիմակուրնէ մինչև յաւիտեան ի-
 րաւունքով ու արդարութիւնով հաստատէ և զօ-
 րացընէ զանիկա»: Լու. Թ. 6. 7: «Ու անոնք ի-
 րենց սուրերը խոփելը՝ և իրենց նիզակները յօ-

տոցներ պիտի շինեն . ազգ ազգի վրայ սուր պիտի
 չվերցունէ , և ալ պատերազմ պիտի չսովորին” : Ա՛ի .
 Գ . 3 : “Ա՛նոնք պիտի չվնասեն ու չապականեն իմ
 բոլոր սուրբ լեռանս վրայ” : Ա՛ . Ժ . 9 : Ա՛նոր
 թագաւորութիւնը շեթանոսներն ալ մէջ պիտի
 առնէր : “Ա՛յսպէս կրսէ , Յակոբին ցեղերը նո-
 րէն հաստատելու համար , ու Խորայէլին ազա-
 տուածները դարձունելու համար , իմ ծառաս ըլ-
 լալդ քեզի քիչ է . ահա քեզ ազգերուն լոյս պի-
 տի դնեմ , որ մինչև երկրին ծայրը իմ փրկութիւնս
 ըլլաս” : Ա՛ . Խ . 6 : “Բ՛ու լոյսիդ ազգեր պիտի
 դան , և քու վրայ ծագած պայծառութեանը՝ թա-
 գաւորներ : Ծ՛ովուն առատութիւնը քեզի պիտի
 դառնայ . ազգաց հարստութիւնը քեզի պիտի դայ” :
 Ա՛ . Կ . 3 . 5 : Ա՛սիկա մասնաւոր կերպով զարմա-
 նալի է , որովհետև մարդարէին ժամանակն Խորա-
 յէլացւոց զգացումներուն՝ կամ անոնց իրենց բո-
 լորտիքի ազգերուն ունեցած յարաբերութիւննե-
 րուն մէջ չկար անանկ հողևոր ու ընդհանրական
 թագաւորութեան նարաւորութիւն մը ցուցնող
 բան մը , որուն շեթանոսները կցորդ ըլլալով՝
 շրէից հետ հաւասար արտօնութիւններ պիտի
 ունենային :

Ա՛հա՛ ուրեմն , երեք մեծ պաշտօն կայ , մարդա-
 րէութիւն՝ քահանայութիւն և թագաւորութիւն ,
 որոնք մարդարէութիւնը մէկ անձի վրայ կը միա-
 ցընէ . խաղաղութեան թագաւորութիւն մը կայ ,
 և այն ալ անանկ թագաւորութիւն մը՝ որ բոլոր
 շեթանոսները պիտի մէջ առնէր : շարկ չէ ինձի
 ըսել՝ բոլոր ասոնց որչափ կատարելապէս Քրիստոս

տոսի անձին ու թագաւորութեանը վրայ կատարուիլը, նաև այս խօսքերն ունիցէ ուրիշ անձի թագաւորութեանը յարմարիլն որչափ անհնար ըլլալը:

Եւ ոչ միայն այս երեք մեծ պաշտօնները մէկ անձի վրայ միացած էին, այլ անոր վրայ եղած մարդարէութիւններն այնչափ մէկզմէկու անյարմար, ու հակասական էին, որ առաջուց անհնար երևցած պիտի ըլլայ որ կատարուին անոնք. և մեծ շիտթութիւն տուած պիտի ըլլայ անոնց միտքերուն՝ որ յօժար չեն Մատուծոյ խօսքն ընդունելու և միամիտ հաւատքով անոր վստահելու: Մէյմը կը ցուցուի իբրև յաղթող՝ իբրև թագաւոր, որ կը նստի Ղաւթի թի աթոռին վրայ և կը տիրէ բոլոր ազգերուն, մէյմըն ալ՝ իբրև «մարդոցմէ անարգուած ու երեսէ ձգուած», իբրև «անիրաւութիւն կրող ու չարչարուող»: Մեսիային վրայօք ըսուած է, «Այս օժեցի իմ թագաւորս իմ սուրբ լեռանս՝ Միօնին վրայ», և «անոր իշխանութեանը մեծնալուն ու խաղաղութեանը սահման չկայ»: Նաև ըսուած է անոր վրայ, թէ «վաթսունուերկու եօթնեակէն ետքը () ծեալը պիտի կտրուի»: Նաև հասութիւններ կան ասոր մէջ: Կրնար շրէայ մը ըսել: Թագաւոր մը՝ որ մշտնջենաւոր իշխանութիւն պիտի ունենայ, և պիտի իշխէ՝ մինչև որ բոլոր թշնամիներն իր ոտքին տակը դնէ, բայց և այնպէս պիտի անարգուի և երեսէ ձգուի ու անիրաւութիւն կրէ: Մեսիա մը՝ որ պիտի սպաննուի, բայց և այնպէս յաւիտեան պիտի տիրէ: Մայս խօսքերն՝ արդարև զատ զատ իբրև Մատուծոյ

խօսքը կընդունուի հաւատքով. խոհեմ շրէայ մը այսպէս պիտի ընդունէր զանոնք, բայց բանն ըլլալէն առաջ չէր կրնար հասկանալ ու հաշտեցընել անոնք մէկզմէկու հետ, իսկ Քրիստոսի վրայ մարդարէութեան այս ցոյցերուն ամեն մէկը կը համապատասխանուի :

Արեւմն ինչպէս կրնանք այս եզրակացութիւնը չհանել՝ թէ Մ.Յս մարդարէութիւններն Մատուծոյ ներշնչութեամբը տրուած են : Մ.Յս եզրակացութիւնը չենք կրնար չհանել, անանկ ենթադրելով՝ թէ Մ.նոնք կատարուեցան մարդկային նարքով, վասն զի Քրիստոսի բարեկամներէն շատ աւելի՝ թշնամիներուն ձեռօքն եղան անոնց կատարումը. ինչպէս Պօղոս Մուսքեալ ըսաւ, (Գործ. ԺԿ. 27) « Երուսաղէմ բնակողները՝ և անոնց իշխանները ոչ անիկա ճանչցան, ոչ ալ մարդարէնութուն ձայները, որ ամեն շաբաթ օրերը կը կարդացուին, հապա զանոնք կատարեցին զինքը դատապարտելով » : Մ.նոնք էին՝ որ ծեծեցին անիկա և փայտէն կախեցին, և անոր հանդերձները իրենց մէջը բաժնեցին և վիճակ ձգեցին, ու կողը խոցեցին : Մ.նոնք էին՝ որ « երեսուն արծաթ վճարեցին, այն վայելուչ գինը՝ որ իրենք անոր համար կտրեցին, և ծախու առին արեան գինովը բրուտին արտը » : Աչ ալ կրնանք չհանել, ենթադրելով թէ Ղիպուածով եղան, վասն զի՝ ինչպէս արդէն ըսուեցաւ, ասանկ մարդարէութիւններուն պատահամբ կատարուելուն յետին անհաւանականութիւնը ցուցնելու թիւ չօգտեր :

Աչ ալ այս է բոլորը. ինչու որ դիւրաւ կը-

տեսնուի որ ամբողջ Հին Ատակարանի տնտեսութիւնը՝ որ է ուխտին տապանակը բոլոր իր կարգադրութիւններովը, պասեքը՝ զոհերը՝ ծէսերը՝ քահանայութիւնը, բոլոր օրինակ էին, վասնորոյ գուշակութիւն են. և բոլոր ասոնց ճշմարիտ իմաստը և էութիւնը Քրիստոնէական տնտեսութեան մէջ կրգտնուի, թէպէտև ասիկա մեծ նիւթ է, և չեմ կրնար ձեռք զարնել անոր:

Հիմա կուգանք վերոյիշեալ չորրորդ կէտին, որ այս է թէ Քրիստոս և անոր Առաքեալներն անանկ գուշակութիւններ խօսեցան՝ որ կատարուած են իրենց ատենէն հետէ, և հիմա ալ կրկատարուին. այս առաջարկութիւնը կատարելապէս բացատրելու համար ճառ մը հարկաւոր է, բայց մենք համառօտիւ պիտի անցնինք:

Արովհետև Արուսաղէմի կործանման վրայ Քրիստոսի ըրած մարգարէութեանը մէկ նպատակն իր հետևողներուն նախազգուշութիւն մը տալ էր որ քաղաքէն փախչին, վասնորոյ խիստ ուղղակի և պարզ խօսքով ըսաւ անիկա Քրիստոս: Քրիստոսի ժամանակէն առաջ և անոր կենդանութեանն ատենը սուտ քրիստոս չեղաւ, և ոչ պատերազմ կար, ոչ ալ պատերազմի նշան, և Տաճարն ու Արուսաղէմը ամենն իր կատարեալ զօրութեանը մէջ կեցեր էր: Բայց այն առաջուց ըսաւ որ Աստ քրիստոսներ պիտի ելնեն և պիտի խաբեն շատերը, երկրաշարժեր ու սով պիտի ըլլայ, ու երկինքէն սոսկալի բաներ, պատերազմներ ու պատերազմներու լուրեր, և մեծ նեղութիւն

որուն նմանն աշխարհի սկիզբէն հետէ եղած չէ՝
 և պիտի չըլայ. և Արուսաղէմը զօրքերով պիտի
 պաշարուի, և պատնէշ պիտի շինուի անոր բոլոր-
 տիքը, և Տաճարին քարը քարի վրայ պիտի շինայ,
 և Հրէաները գերի պիտի տարուին բոլոր աղգե-
 րուն մէջ: Պօղոս Առաքեալ ալ կը գուշակէ այն
 մեծ ուրացութիւնը՝ և մեղաց մարդուն գալը. և
 Յովհաննէս Աւետարանիչ խօսած է բաներուն ըն-
 թացքին վրայ՝ մինչև ժամանակին վերջը:

Արուսաղէմի կործանման և նախընթաց դէպ-
 քերուն վրայ Քրիստոսի ըրած մարգարէութիւն-
 ներն ստուգելու համար՝ այն ատեններուն պատ-
 մութիւնն ունինք Յովսեպոսէն գրուած, որ ահա-
 նատես էր և Հրէայ. և զարմանալի համաձայ-
 նութիւն կը տեսնուի, երբոր բաղգատուին գուշա-
 կութիւնը մարգարէութեան հետ: Յովսեպոս
 մասնաւոր կերպով կը պատմէ սուտ քրիստոսներն
 և սուտ մարգարէները, և անոնց՝ շատերը խաբելը.
 կը խօսի այն երկիրներուն պառակտեալ վիճակին
 վրայ, ինչպէս որ մարգարէութիւնը կըսէ, պատե-
 րազմներու և պատերազմի լուրերու վրայ, և կը-
 սէ թէ՝ «Եւոր Ասորեստանի խառնակութիւններն
 ահարկու էին. վասն զի ամեն քաղաք մէկզմէկու
 դէմ զինեալ՝ կողմերու բաժնուած էր, և մէկ կող-
 մին ապահովութիւնը՝ միւսին կործանումէն կախ-
 եալ էր. ցորեկները մէկզմէկ ջարդելով՝ և գիշեր-
 ները սոսկումով կանցնէին»: Արպատմէ նաև սու-
 վեր և ժանտամահ, երկրաշարժեր և «երկին-
 քէն սոսկալի բաներ, և մեծ նշաններ»: Արսէ թէ
 Ճիշդ պատերազմէն առաջ սուրի նման աստղ մը

Երևցած կրկենար քաղաքին վրայ, և գիսաւոր մը՝
 որ ամբողջ տարի մը մնաց, և «արևը մտնելէն
 առաջ կառքեր ու սպառազինեալ զինուորներու
 խումբեր կրտեսնուէին՝ որ ամպերուն ու բոլորտիքի
 քաղաքներուն մէջ անդին ասդին կը վազվառէին» :
 Նաև կըսէ, Պենտէկոստէի տօնին՝ երբոր քա-
 Տանաները գիշերը Տաճարին ներքին գաւիթը
 կերթային, շարժում մ' իմացան, և լսեցին մեծ
 ձայն մը՝ որ կըսէր, «Մսկէ հեռանանք» : Այլ ոչ
 միայն Յովսեփոս է որ այս պատմութիւնները կընէ,
 Տակիտոս ալ կըսէ, թէ «Եւստ սքանչելիք եղան՝
 որ առաջուց կակնարկէին անոնց կործանումը . ու-
 թուն՝ այն ժողովուրդին բոլոր զոհադործութիւննե-
 ըր և ուխտերը չկրցին առաջն առնել : Չինուոր-
 ներու խումբեր կրտեսնուէին՝ որ օդին մէջ կը-
 պատերազմէին շողշողող զէնքերով : Մամպերէն
 կրակ մը ինկաւ Տաճարին վրայ, Տաճարին դուռ-
 ները յանկարծ բացուեցան, նոյն ատենը բարձր
 ձայն մ' ելաւ՝ որ կը ծանուցանէր թէ աստուած-
 ները կը չուէին, և անոր հետ բազմութեան մը
 դուրս ելնելու ձայնը : Ար բոլոր այս բաները կը-
 սեպուէին մէկ քանիներէն՝ թէ մեծ չարիքներ կը-
 նախագուշակեն» : Արիստի նաև այն եղելութեանը
 վրայ ալ՝ թէ Արուսաղէմը զօրքերով պաշարուե-
 ցաւ պատերազմին սկիզբը, և հակառակ կողմերուն
 վիճակին համար գլխաւոր մարդոց շատը դուռնե-
 ըր բանալու վրայ էին, բայց կըսէ, թէ «նով-
 մայեցի զօրապետն ետ կանչեց զինուորներն այն
 տեղէն՝ առանց բնաւ աւրուելու, և ետ քաշուե-
 ցաւ այն քաղաքէն՝ առանց բնաւ պատճառ տես-

նուերլու: Ա երջը կը յիշէ թէ Արքոր Հոովմայե-
 ցուց զօրքը նորէն մօտեցաւ՝ շատ մարդիկ լեռները
 փախան. ասանկով պատեհու թիւն եղաւ Քրիս-
 տոսի աշակերտներուն փախօջելու, և այն կործան-
 ման մէջ անոնցմէ մէկը կորսուիլը գիտցուած չէ.
 Իրօք կը թուի թէ չարերուն վերջին կործանումը
 կը պատկերացնէ ասիկա առաջուց, որ ատեն ար-
 դարներն անոնց մէջէն պիտի ժողվուին: Յովսե-
 պոս նաև մասնաւորաբար կը խօսի Արուսաղէմի բո-
 լորտիքը Տիտոս զօրապետին շինել տուած պատ-
 նէշին և պատին վրայ: Ասիկա մեծ դժուարու-
 թիւնով եղաւ, և քաղաքը քիչ մ' աւելի շուտով
 առնելէն իզատ օգուտ մը չունէր, և Տիտոս ի գըլ-
 խաւոր մարդոց տուած խրատին գէմ էր: Մայց
 այնպէս գրուած էր: Այն օրերուն ներդութեանը
 վրայ՝ որուն վրայով մեր Քրիկիջը շատ հաստատու-
 թեամբ կը խօսի, եթէ Յովսեպոսի միտքը՝ եղած
 մարդարէութիւնը հաստատել եղած ըլլար, չէր
 կրնար ասկէ աւելի բան մ' ըսել ճիշդ կէտին
 նայող: «Նաև ուրիշ քաղաք մը» «ասանկ խեղ-
 ճութիւններ քաշած չէ, և ոչ մէկ ազգ մ' եղած
 է աշխարհի սկիզբէն հետէ չարութեան մէջ ասկէ
 աւելի արդիւնաւոր»: Վարձեալ՝ «Ինձի կը թուի
 թէ եթէ աշխարհի սկիզբէն հետէ բոլոր մարդոց
 դժբաղդութիւնները բաղդատուին Հրէաներուն
 եղածին հետ, անոնք այսչափ մեծ պիտի չըլլան:
 Ասան զի իրօք Աստուած էր որ կը դատապար-
 տէր բոլոր ազգը, և իրենց ապահովութեանը հա-
 մար ամեն բռնուած ընթացքներն իրենց կործան-
 մանը կը դարձնէր»: Աւ դարձեալ՝ «Կորսուողնե-

րուն բաղմուծիւնը աշխարհի վրայ մարդու կամ
 Մատուցոյ ձեռքք երբէք բերուած բոլոր կործա-
 նումները գերազանցեց” : Ազգին խիստ մեծ մասը
 քաղաքին ներսի կողմը ժողովուած էին, և բաժ-
 նուած էին հակառակ կողմերու, որոնք մեկզմէկու
 դէմ կրկուռէին թշնամիի կատաղութիւնով :
 Սովը կրկատարէր իր լռիկ՝ բայց ահարկու դործը,
 անանկ որ եղած է որ կնիկներ իրենց զաւկրները
 կերած են : Այլ քանի որ ներսն եղողները որս
 եղեր էին սովի և մեկզմէկու, դուրս ելնելով փախ-
 չիլ ջանացողները՝ շուովմայեցի զինուորները կը-
 բռնէին և դուրսի կողմէն պարիսպին բոլորախփը
 խաչերու վրայ կը դամէին, մէկը մէկ կերպով՝ միւսն
 ուրիշ կերպով, որպէս թէ կատակով, մինչև որ
 այնչափ շատցան՝ որ տեղ չէր գտնուեր խաչ դնե-
 լու համար, և խաչ չէր գտնուեր վրան մարդ գա-
 մելու համար : Արբոր Տիտոս նայեցաւ այն մեռած
 մարմիններուն՝ որ պատերուն վրայէն ձորերը կը նե-
 տէին, “ ձեռքերն երկինք վերցուց և զՄատուած
 վկայ կանչեց որ ասիկա ինքը չէր ընողը” : Ասոնք
 վրէժխնդրութեան օրեր էին. և Յովսեպոս մէկ
 միլիոն երեք հարիւր հազար հոգիէն աւելի կը
 հաշուէ, միայն Արուսադէմի պաշարման ատենը
 կորսուած. և ոչ միայն այսչափ՝ այլ երբոր քա-
 ղաքն առնուեցաւ, բոլորովին կործանման մատ-
 նուեցաւ. և Քրիստոսի մարգարէութիւնը՝ թէ
 հաճարին քարը քարի վրայ պիտի շինայ, բառ
 առ բառ կատարուեցաւ :

Միւս մարգարէութիւններուն վրայ երկայն կը լ-
 լայ խօսիլը, բայց շրէաները գերի տարուեցան

բոլոր ազգերուն մէջ, և անոնց վիճակն այն ժամանակէն մինչև հիմա մէկ մնայուն և զարմանալի վկայութիւն մ' եղած է մարդարէական դրուածոց ճշմարտութեանը. և միանգամայն իրենց ներկայ վիճակը մէկ յայտնի պատրաստութիւն մըն է այն աւելի զարմանալի մարդարէութիւններուն կատարմանը՝ որոնք կրկենան հիմա՝ խոստման աղեղին նման, հասնելով մինչև ապառնին: Այրմանալի աստիճան ճիշդ մարդարէին ըսածին համեմատ, անոնք իսպախուեցան բոլոր ազգերուն մէջ, սակայն և այնպէս իրենց վիճակին նման եղող բոլոր հին ազգերուն մէջէն միայն անոնք պահեցին իրենց ազգային նոյնութիւնը, և հիմա կրթութիւն թէ կրպատրաստութիւն այն վերանորոգութեանը՝ որ ոչ միայն մարդարէութեանց կատարումը պիտի ըլլայ իրենց, այլ իբրև կեանք պիտի ըլլայ մեռելութենէ հետեանոս ազգերուն:

Այսպէս՝ թէ Քրիստոսէն առաջ եղող դէպքերուն վերաբերեալ, թէ իրեն վերաբերեալ մարդարէութիւններուն նայինք, թէ իր ըրած գուշակութիւններուն, և թէ Հրէից՝ ու արդարև արժան է ըսել, աշխարհի ներկայ վիճակին՝ մարդարէութիւններուն կատարելապէս կատարումը ցուցնելուն նայինք, կատարեալ պատճառ կրտսններք հաւատալով թէ «մարդարէութիւն մը երբէք մարդոց կամքին պէս չարուեցաւ, այլ Աստուծոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն շարժուած՝ խօսեցան»:

Եւ արդ՝ այս պիտի յաւելում միայն, իբրև գեղեցիկ օրինակ մը բոլոր Սուրբ Գրոց համաձայնութեանը, թէ երկրի ապագայ երջանիկ վի-

Ճակին վրայով մարգարէից ըրած շքեղ ստորագրութիւնը ճիշդ անանկ է՝ որ միայն Քրիստոնէութիւնն ամեն տեղ բոլորովին հաստատուելովը կրնայ ըլլալ, և ոչ ուրիշ բանով: Այս ստորագրութիւններն առանց յատուկ խորհուրդի՝ կամ ընդհանուր խօսքերով շարադրուած չեն, այլ ճիշդ և որոշ խօսքերով: Ասոնք կրներկայացնեն խաղաղութեան՝ սրբութեան և սիրոյ վիճակ մը, բարձր աստիճան ընկերական հաճութեան և ընդհանրական յաջողութեան վիճակ մը: Աւ Քրիստոնէութեան հաստատուելովն է որ աշխարհ այս վիճակին կրնայ հասնիլ: Թող Քրիստոնէութիւնն առ հասարակ հաստատուի՝ ոչ միայն իր ձեռովը, այլ իր հոգիովը, և անատենն ալ ազգ ազգի դէմ սուր չիւրցներ, և ոչ ալ պատերազմ կըսորովին անատենը գայլը գառին հետ կըբնակի, ու ինձը ուլին հետ կըպառկի, անատենն անապատն ու չոր երկիրը կուրախանայ, և անբնակ երկիրը կըցնծայ անատենը թուփին տեղը՝ մայր, և դժնիկին տեղը մրտենի պիտի բուսնի, անատենը վէմի բնակիչները յաղթանակի երգով լեռներուն գլխէն ձայն կուտան, և մարդիկ ամենն արդար պիտի ըլլան, և ժառանգեն երկիրը յաւիտեան:

Մ Ա Ռ Թ Բ

Այս ճառերու կարգին մէջ իմ փափաքս այս էր՝ որ ձեռքէս եկածին չափ յառաջ բերեմ Քրի-

ընդհանուր թեան հաստատական ապացոյցները :
 Առ առաջին ճառը սկսեցի՝ հրաւիրելով ընթերցողներն որ ինծի հետ մեր Միօնին բոլորապէս պըտրտին ու աշտարակները համրեն : Այս աշտարակներուն ամենը տակաւին համրուեցան : Տակաւին հաղիւ թէ խիստ հասարակ ու դիւսաւոր փաստերուն մէկ քանին յիշեցինք , և տրամաբանական կարգին նայելով՝ պէտք էր որ հիմա անոնք քննելու ձեռք զարնէի . ասիկա խորհեցայ ընել և բան մը չխօսիլ : Բրիստոնէութեան դէմ եղած առարկութիւններուն վրայ : Եւ այց եթէ ժամանակը ներէ , կուզեմ գոնէ մէկ ճառ մը նուիրել առարկութիւններուն քննութեանը . վասն զի թէպէտ կան առարկութիւններ որ պատասխանելու արժանի չեն , և կան առարկութիւն ընողներ որ աւելի մօտ պիտի չգան : Բրիստոնէայ ըլլալու , եթէ իրենց առարկութիւնները բոլորը վերցուին . բայց կան նաև անանկ առարկութիւններ՝ որոնց զօրութիւնը թէպէտ կը վերցուի կարծեմ , բայց ծանր կը ճնշեն անկեղծութեամբ ճշմարտութիւն փնտրողներուն ումանց միտքին վրայ : Ամեն սանկներուն կուզեմ իմ ձեռքս տալ , կուզեմ ընել ամեն ջանք որ զանոնք նեղութենէ ազատեմ : Աս գիտեմ ինչ է տարակոյսի խորունկ ջուրերուն տակը պտրտիլը , և իմ ժայռ սեպածս գտնելու երջանկութիւնը : Այս վիճակին մէջ եղողներուն համար ուրախութեամբ կուզէի խօսիլ այս նիւթին վրայ երկարօրէն , բայց որովհետև ասիկա հիմա խնդիրէն դուրս է , քանի մը դիտողութիւններ պիտի ընեմ առարկութեանց նիւթին վրայ ընդհան-

րապէս, և վերջոյ յառաջ երթամ փաստարանու թեանս մէջ :

Եւ հոս՝ եթէ ինձի կրներէք, մէկ ընտանի կերպով մը խօսք մը ձգեմ անաչառ ու գործնական քննութիւն ընողին ականջին՝ իմ փորձառութիւնս ցուցնելով, կուզեմ ըսել որ Ես շատ օգուտ դատած եմ սպասելու յօժար ըլլալէն, որ ասիկա դաս մըն է՝ որն որ ամեննիս ալ ծանր ենք սորվելու : Բիւջանգամ եղած չէ ինձի՝ որ մէկ առարկութեան մը վրայ միտքս անանկ վիճակի մէջ եղած է, (թերևս ամիսներով կամ տարիներով,) որ անիկա վերջընելու կերպ մը չեմ տեսեր, մինչև որ վերջապէս լոյսը ծագեր, և ես կարող եղեր եմ տեսնելու թէ բան մը չկայ եղեր անոր մէջ : Բնթերցողներուն շատերուն ալ եղած չէ՞ որ յանկարծակի անանկ բան մը պատահեր է որ իսկոյն վերցուցած է անանկ առարկութիւններ՝ որ տարիներով ծանրացած կրմնային իրենց միտքերուն վրայ : Աղէկ միտքս է որ ատեն մը ինձի անանկ կրթութիւն թէ ուղղակի հակասութիւն կայ Պօղոս և Յակոբոս Առաքելոց գրածներուն մէջ՝ հաւատքի և գործքի վրայ : Այսպէս կրթութիւն նաև Ղուտերի, և չկրնալով զանոնք հաշտեցնել, և սպասել չուզելով՝ մերժեց Յակոբոսի թուղթը, յարդեղէն թուղթ կոչելով անիկա : Իմա կրնամ հասկանալ որ այն գրութիւններն ոչ միայն մէկզմէկու հակասական չեն, այլ կատարելապէս համաձայն են : Ես երբեմն կըսեմ թէ Անկեղծութեամբ քննութիւն ընողին ընթացքը՝ լեռներու մէջ պտրտող ճամբաներուն կրնամանի, ո՞վ տեսած չէ որ լեռներ

րը ճամբու մը վրայ գալով՝ անանկ կերպով մը
 կը գոցեն որ կերևի թէ նար չէ անկէ անցնիլ .
 և ո՞վ զարմացած չէ անիկա տեսնալու յարմար
 կէտին հասած ատենը, տեսնելով որ ճամբան մէկ
 չկարծուած պտոյտ մ'ընելով՝ իր հարթ ընթաց-
 քը կը շարունակէ: Աւ ես կը կարծեմ թէ պիտի
 հասնի ասանկ կէտի մը ամեն անկեղծութեամբ
 քննութիւն ընող որ յօժար է՝ իր առջևն եղած
 շիտակ ճամբան քանի որ յառաջ երթայ՝ անոր
 հետեւելու և սպասելու, առ Աստուած վերցնելով
 Աղիուսին խնդրուածքը, և ընելով անոր որոշումը,
 թէ «Չտեսածս դուն ինձի սորվեցուր, եթէ ամ-
 բարշտութիւն գործեցի՝ ալ չեմ գործեր»: Աս
 կատարելապէս համողուած եմ թէ ոչ միայն ճըշ-
 մարիտ է, այլ խորին փիլիսոփայութիւն կը պարու-
 նակէ մեր Վրկչին այն խօսքը, թէ «Եթէ որ մէկը
 կուզէ անոր կամքը ընել, պիտի գիտնայ այս վար-
 դապետութեանս համար, թէ արդեօք Աստուծմէ՞
 է, թէ ես ինքիրմէս կը խօսիմ»:

Նայց ասիկա թողելով՝ նախ սա կըսեմ թէ
 Քրիստոնէական կրօնքին վրայ մեր ունեցած վըս-
 տահուութիւնը շարժելու չէ՝ լոկ անոր դէմ առար-
 կութիւն ըլլալէն: Այն՝ որ կը թուի թէ այնպէս
 կը խորհին, որ երբ մէկ առարկութիւն մը կը լայ՝
 իսկոյն չափով մը անստուգութիւն կը մտնէ քանին
 մէջ, և ան ատենը որ կողմն աւելի հաւանակա-
 նութիւնը կենալը կը ռելուէ: Նայց ասանկ չէ .
 երբոր մէկ բան մ'աղէկ կապացուցուի, ալ ա-
 ռարկութիւնները բնաւ ներգործութիւն ընելու
 չեն. շատ ճշմարտանման առարկութիւններ կըր-

նան ըլլալ շատ բաներու՝ որ գիտենք թէ ճշմարիտ են. զորօրինակ անանկ առարկութիւններ եղած են նիւթին գոյութեանը և զգայարանաց տուած վկայութեան ճշմարտութեանը, որ պարզամիտ մարդու մը դժուար է պատասխանել, բայց և այնպէս իրեն բնաւ ներգործութիւն չընէր։ Ամենս կը հաւատանք որ շարժում ըսուած բան կայ. սակայն և այնպէս կարելի է ունեց դժուար պիտի ըլլայ պատասխանել անոր դէմ եղած մէկ հասարակ տրամաբանական առարկութեանը՝ որ հոս պիտի դնեմ։ Արժեք մամենը կընդունին որ եթէ մէկ բան մը շարժի, հարկաւ կամ իր եղած տեղը պիտի շարժի, կամ իր չեղած տեղը. բայց անշուշտ բան մը իր եղած տեղը չկրնար շարժիլ՝ որովհետեւ ատիկա չշարժիլ է. և նոյնչափ ստոյգ կերևի որ բան մը իր չեղած տեղն ալ չկրնար շարժիլ, վասնորոյ շարժում չկայ։

Արկրորդ՝ եթէ արդարապէս պիտի քննենք Քրիստոնէութեան դէմ եղած առարկութիւնները, յատկապէս Քրիստոնէութեան դէմ եղածներն որոշելու ենք անոնցմէ՝ որ առհասարակ ու իցէ կրօնքի կամ դրութեան դէմ են։ Այս աշխարհը մէկ տարօրինակ վիճակի մը մէջ է. բաներուն վիճակը շատ տարբեր է անկէ՝ որ պիտի սեպէինք առաջուց թէ պիտի ըլլայ մէկ անհուն կարողութիւն՝ իմաստութիւն և բարութիւն ունեցող Աստուծոյ կառավարութեանը տակը. և անսովոր բան չէ մարդոց՝ Քրիստոնէութեան բռնցրնել բոլոր այն դժուարութիւններն որ կան չարիքին ծագմանը և Աստուծոյ նախագիտութեան

վարդապետութեանը՝ մարդկային անձնիշխանու-
 թեան հետ ունեցած կապակցութեանը վրայօք :
 Քայց ասոնք անանկ խնդիրներ են՝ որ ընդհանուր
 մարդկային ազգին կը վերաբերին , և մի օրինակ
 Յոյն փիլիսոփային՝ Պարսիկ մոգին և Վրիստոն-
 եայ Աստուածաբանին միտքը յոգնեցուցած են :
 քեզի՝ իբրև մարդ , այնչափ կիյնայ լուծել ասանկ
 խնդիրներէն ելած դժուարութիւնները , որչափ որ
 ինձի՝ իբրև ուսուցիչ Վրիստոնէութեան : Վրիս-
 տոնէութիւնը չարիքին ծագմանը հետ բան չունի .
 անիկա իբրև ընդունուած բան մը կը բռնէ , ան որ
 ամենս հարկաւ ընդունելու ենք թէ չարիք կայ .
 Վրիստոնէութիւնը ջլանար մեկնել անոր ծա-
 գումը , այլ դարման մը կառաջարկէ անոր հա-
 մար : Աստի եթէ մարդիկ առարկութիւն պիտի
 ընեն Վրիստոնէութեան դէմ , թող ընեն անոր
 այս չարիքներուն դարման ըլլալուն դէմ , թող
 ցուցնեն որ երբոր բոլոր մարդիկ սրտանց ընդու-
 նին և կատարելապէս ի գործ դնեն անիկա , իր
 հաստատածին պէս դարման պիտի չըլլայ , և ա-
 նատենն իրենց առարկութիւնները վաւերական
 կըլլան : Ինչ օգուտ ունի անհաւատներուն և Աստ-
 ուածեաններուն՝ անանկ նետեր նետել Վրիստո-
 նէութեան դէմ՝ որ կրնայ ժողովուրդ ու նոյն ղո-
 րութեամբ ետ բուն իսկ իրենց դրութեանը դէմ
 նետուիլ . և սակայն Վրիստոնէութեան դէմ ե-
 ղած առարկութիւններուն սովորաբար կարծու-
 ածէն շատ աւելի մեծ մասը ասանկ առարկու-
 թիւններ են :

Արրորդ՝ միտքերնիս պահելու ենք առաջուց

յիշուած զանազանութիւնը՝ Քրիստոնէութեան
 դէմ եղած առարկութիւններուն և անոր ապա-
 ցոյցներուն դէմ եղած առարկութիւններուն մէջ :
 Քրիստոնէութեան ապացոյցին վրայ բաւական
 նութիւն ունինք դատողութիւն ընելու : Աս կը-
 պնդեմ այս բանը թէ Ապացոյցի օրէնքներ կան ,
 որոնց համեմատ դատողութիւն կընենք , և ըստ
 այնմ կըզործենք ուրիշ բաներու մէջ . և այս
 միայն կուզեմ որ այն նոյն օրէնքները ճիշդ այն
 կերպով բանեցընենք նաև Քրիստոնէութեան
 վրայ , իբրև եղելութիւն մը բռնելով անիկա՝ ու-
 թուն համեմատ մեր ընթացքը պիտի ուղղենք ,
 ինչպէս որ ո և իցէ ուրիշ բաներու վրայ կընենք :
 Քայց Քրիստոնէութիւնը բարոյական կառավա-
 րութեան մէկ անհուն դրութեան մասն ըլլալով՝
 և վերաբերութիւն ունենալով միանգամայն ան-
 ցեալ ու ապագայ յաւիտենականութեան , և թեր-
 ևս ուրիշ աշխարհներու և ուրիշ կարգի էակ-
 ներու , բուն իսկ անոր վրայ խորհած ատեննիս
 պարտինք այնչափ ակնկալել՝ որ մեր հասկացողու-
 թենէն վեր և մեզի տարօրինակ ու անհաւանա-
 կան երևցող բաներ պիտի գտնուին անոր մէջ ,
 որչափ պիտի ակնկալենք բնութեան մէջ անանկ
 բաներ ըլլալը : Աւ եթէ Քրիստոնէութեան դէմ
 եղած առարկութիւններն այն տեսակ են որ բը-
 նութեան դէմ ալ կընան ըլլալ , անատենը նոյն
 իսկ այն առարկութիւնները փաստ կըլլան ի հաս-
 տատութիւն անոր , որովհետև Քրիստոնէութիւնը
 և բնութիւնը նոյն ձեռքէ եկած ըլլալը հաւանա-
 կան կը ցուցնեն : Քրիստոնէութեան դէմ բեր-

ուած գլխաւոր առարկութիւնները հաւասարապէս բնութեան կազմութեանը և ընթացքին դէմ ալ կրքերուին, և նոյն օրինակ կրցուցնեն թէ բնութիւնը Աստուծմէ չէ: Այժմ կրնան ցուցնել որ բուն իսկ Քրիստոնէութիւնը բարոյականի դէմ կամ անտեղի բան մըն է, կրմերժենք անիկա. բայց ասանցմէ ի զատ մարդուն պէս էակի մը կողմանէ բուն իսկ Քրիստոնէութեան դէմ՝ ոչ թէ անոր ապացոյցին դէմ եղած առարկութիւններն ընդունայն են: Ալ ոչ այս ըսելով բանականութիւնը կանարգենք, կամ իր ճշմարիտ պատիւը չենք տար անոր, այլ երևելի հեղինակի մը ըսածը կրկնելով՝ «բանականութիւնը մեկդի չձգենք. և եթէ կրնան ցուցնել որ Քրիստոսով աշխարհի փրկութեան վրայ Աւերբ Վրոց տուած ստորագրութիւնն իրօք հակառակ է անոր, թող Աւերբ Վիրքն ալ չընդունուի Աստուծոյ անունովը, բայց թող մեզի պէս խեղճ արարածներն անհունապէս ընդարձակ խորհուրդի մը դէմ առարկութիւն չընեն կենան, անոր ամեն մասերուն հարկաւորութիւնն և օգուտը չտեսնելուն համար, և ասիկա բանականութիւն կոչեն»:

Բայց չորրորդ՝ պէտք է նկատել որ միայն Քրիստոնէութիւնը չէ որ անոր դէմ առարկութիւն կրնայ ըլլալ: Քրիստոնէութեան բունած դիրքին և ունեցած յաջողութեանը և անողոքելի պահանջումներուն համար, սկիզբէն հետէ իր դէմը ելած են ամեն առարկութիւն, որ մարդուս՝ հեշտութեան սիրով և սանձի ատելութիւնով զօրացած ճարտարութիւնը կրնայ նարել, և այս առար-

կութիւններն անընդհատաբար դէմ պնդուելով՝
 շատերուն անանկ եկած է թէ Քրիստոնէութիւնը
 մասնաւոր կերպով առարկութեան ենթակայ է .
 վասնորոյ շատ Քրիստոնէից սովորութիւնը պաշտ-
 պանողական դիրք մը բռնելն է . և անհաւատներ
 ըր կարծած են թէ իրենք յարձակողական դիրքի
 մէջ են : Մէկ դրութիւն մը իր վրայ որչափ որ ի-
 րական կամ հաստատողական՝ ոչ թէ մերժողական
 վարդապետութիւն որ ունի , հարկաւ նոյն համե-
 մատութիւնով առարկութեան ենթակայ ըլլալու
 ընդունակութիւն կունենայ , և ուրիշ դրութիւն-
 ներն ալ իրենց վրայ ունեցած հաստատողական
 բանին համեմատութեամբ՝ անոնք ալ Քրիստոնէ-
 ութեան հետ նոյն օրինակ ենթակայ են առար-
 կութեան . և անոր ունեցածին չափ ալ ապացոյց
 չունին . և այն դրութիւններուն դէմ այնչափ ա-
 ռարկութիւն չըլլալուն միայն պատճառն այն է՝ որ
 մարդիկ անոնց համար հոգ չունին այնչափ : Աթէ
 մէկ անհաւատ մը հաստատողական բան չունենայ
 իր հաւատքին մէջ , բնականապէս անոր դէմ ա-
 ռարկութիւն մը չկրնար բերուիլ : Բայց եթէ նար
 ըլլար (որ չէ) որ մէկ մարդ մը անանկ դիրք մը
 բռնէ , այս առարկութիւնը պիտի ընէինք անոր
 դէմ . կրսենք թէ Մտիկա անանկ վիճակ մըն է
 մտքի՝ որմէ բնաւ օգուտ մը յառաջ չկրնար գալ
 թէ անհատի թէ հասարակութեան . մէկ խեղճ
 պաղ ու անսիրտ վիճակ մըն է , որ ոչ յուսոյ հիմ
 մը և ոչ ջանքի շարժառիթ մը կուտայ , ու ոչ
 մարդը կազնուացնէ . և մարդուն կարօտութիւն-
 ներուն յարմարութիւն չունի , մինչև անգամ յա-

ջողութեան ատեն, և բոլորովին անպիտան պիտի
 ըլլայ իրեն այն փորձութեան ժամերուն, որ ատեն
 անանկ օգնութեան կարօտ է ինքը, որ կրօնքը
 միայն կրնայ տալ: Արնայ ցուցուիլ բուն մտաց
 օրէնքներէն որ մեծ գործառնութիւնները՝ զօրա-
 ւոր ճիգերն ու անձնուրացութիւնով եղած աշ-
 խատութիւնները և զոհերը մէկ կենդանի հա-
 ւատքէ մը ծագելու է, և մէկ հաւատքի մը կամ
 կրօնքի մը մերժողական բաներէ բաղկանալուն
 համեմատութեամբն իմացական և մանաւանդ բա-
 րոյական կենաց ոյժն ալ պիտի տկարանայ: Տայց
 թող մէկ մարդ մը ունիցէ հաստատողական բան մը
 ունենայ իր հաւատքին մէջ, թող յառաջ բերէ
 իր լուծումն այն մեծ խնդիրներուն՝ որ հարկաւ
 խոհուն մարդոց միտքին մէջ գտնուելու է մարդ-
 կային կենաց ու վախճանին վրայօք, և դժուար բան
 մը չէ, տղայ մըն ալ կրնայ անանկ առարկութիւն-
 ներ հանել այն լուծմանը դէմ, ինչ որ կըլլայ՝ ըլ-
 լայ այն լուծմունքը, որ ամենէն իմաստուն անհա-
 ւատը պիտի ներդուի անոնց պատասխանելու: Ուս-
 տի ես երբեմն զուարճացած եմ մէկ մեծաբան ու
 պարծենցող առարկութեան մը վրայ՝ բուն իր
 հաւատքին վրայօք իրեն մէկ երկու հանդարտ հար-
 ցում ընելուն ըրած ազդեցութիւններովը: Աս
 տեսած եմ անանկներ՝ որոնց միտքէն ալ անցած
 չէր թէ մենք անանկ աշխարհի մը մէջ դրուած
 ենք որ մեծ դժուարութիւններ կան ամենուս հա-
 սարակ, և թէ ինչպէս մենք՝ անանկ ալ ուրիշ
 մարդիկ կրնան մեզի դժուար հարցումներ ընել:
 Արդարեւ՝ ո՛ր ժամանակ որ անհաւատութիւնն այս-

պէս հաստատողական ձև մ' առած է՝ յաղ-
թուած ու դաշտէն վնասուած է . և հիմա դը-
ժուար է ըսել թէ ինչ է անոր տիրող ձևը : Միշտ
Խամայէլական է անոր սովորութիւնը , կանգնելով
իր վրանք երբեմն հոս և երբեմն հոն , և միշտ փո-
փոխելով իր յարձակման եղանակը : Մէկ դա-
րու անհաւատութիւնը միւսինը չէ , քանի որ Քրի-
ստոնէութիւնը միշտ նոյնը կրմնայ . և այնպէս
պիտի ըլլայ կրկարծենք անհաւատութիւնը՝ քանի
որ մարդկային սիրտն իր եղածին պէս կրմնայ . ան-
հաւատութիւն պիտի կենայ . հիմա երեցածէն
աւելի կայ . բուն ձևովը համբաւաւոր չըլլալովը՝
ինքզինքը այլևայլ քողերու տակ կրճածկէ .
բայց սրտէն ծագած անհաւատութեանը ներգոր-
ծութիւն չընեն Քրիստոնէութեան ապացոյցներ-
ընն վրայ ձառելը , այլ՝ ինչպէս առաջ ըսած եմ ,
փաստը յառաջ չբերաւ և փաստը պիտի չվեր-
ցընէ անիկա . այդ բանին համար բարձրագոյն
կարողութեան մը կրնայինք :

Հիմա դառնանք ապացոյցին , որովհետև տա-
կաւին բան մ' ըսած չեմ Քրիստոնէութեան տա-
րածուելու կերպէն և պարագաներէն ելնելու փաս-
տին վրայ . և միայն պատահաբար յիշած եմ ա-
նոր արդիւնքներն և հակումները : Ասոնց երկուքն
ալ որոշ փաստեր են , և երբոր պէտք եղած կեր-
պով ցուցուի , ինքնին բաւական են Քրիստոնէա-
կան կրօնքին ճշմարտութիւնն ապացուցանելու .
բայց մնացած տեղին նայելով՝ այս փաստերուն ինչ
աստիճան արժէք ունենալը ցուցնելէն շատ աւելի

քան ընկելու, և անոնց՝ իրենց պատշաճ ընդարձակութիւնն և ոյժը տալու կարող պիտի չըլլամ : Այս փաստերը բոլորովին որոշ են իրենց բնութիւնովը, բայց անանկ կապուած են քանի մը կէտերու մէջ՝ որ դժուար է մէկուն վրայ խօսիլ, առանց միւսին վերաբերեալ խորհրդածութիւններ ալ հետը խառնելու :

Աստի նախ Քրիստոնէութեան տարածուելուն վրայ, և այս նիւթին վրայ խօսելու ատեն պիտի նայինք 1, եղելութեանը, 2, դժուարութիւններուն, 3, միջոցներուն : Արդ՝ կերևի որ Քրիստոսի մահէն վերջը յիսուներորդ օրը Առաքեալներն սկսեցին իրենց աշխատութիւնը, սկսելով Արուսաղէմէն՝ որ էր հալածանքին բուն կենդրոնը, կանգնեցին իրենց դրօշակը առաջ Յիսուսի խաչելութեանը մէջ առաջին եղող և այն չարագործութեան յաղթանակովը հպարտացողներուն մէջ : Այ մէկ ժողովուրդ մը կրնար աւելի հակառակութիւն ունենալ անոնց բերած պատգամին, քան թէ այն՝ որուն որ առաջ ուղղեցին իրենց քարոզութիւնը, և ինչ կերպ քարոզութիւն. « Յիսուս Ազովընցին » կրսէ Պետրոս Առաքեալ, « Աստուծոյ որոշած խորհուրդովը և կանխադիտութեամբը սահմանուած ըլլալով՝ առիք և անօրէն ձեռքով փայտի վրայ դամելով սպաննեցիք, որն որ Աստուած յարուց . . . Աստի բոլոր Իսրայէլի տունը ճշմարտապէս թող դիտնայ, որ Աստուած անիկա Տէր ալ ըրաւ՝ () ձեալ ալ, այն Յիսուսը՝ որ դուք խաչեցիք » : Վարդ կրկարծէ թէ այն ձեռքերն որ իր Տէրօջը արիւնովը շաղախեցան՝ հիմա

այս համարձակ՝ և բոլոր մարդկային դատումով
խիստ անբաղաքավար Առաքեալին արեանք վրայ
պիտի թափեն իրենց բարկութիւնը: Բայց ինչ
եղաւ, երեք հազար հոգի յարեցան այն նորահաս
եկեղեցիին, քանի մը աւուր մէջ թիւը հինգ հա-
զարի ելաւ, և տարի ու կէսի չափ միջոցին մէջ՝
թէպէտ Աւետարանը միայն Արուսաղէմի մէջ և
անոր մօտերը կը քարոզուէր, բայց բազմաթիւ էրիկ
մարդիկ ու կնիկ մարդիկ և քահանաներէն ալ շա-
տերը նազանդ եղան հաւատքին: Աւ այն ատենը
դարձի եկողները՝ մէկ դառն հալածանքով մը
քշուելով Արուսաղէմէն՝ ամեն տեղ կերթային
խօսքը քարոզելով, և երեք տարի շեղած՝ եկեղե-
ցիներ հաւքուեցան բոլոր Հրէաստանի ու Վա-
լիլեայի և Սամարիայի ամեն կողմերը, և կը շատ-
նային: Ասկէ երկու տարի և գործին սկսուելէն
եօթը տարի վերջը՝ Աւետարանը նոր քարոզուե-
ցաւ Հեթանոսներուն, և անանկ յաջողութիւն ե-
ղաւ որ Քրիստոսի մահը երեսուն տարի չանցած,
իր եկեղեցին տարածուեր էր Պաղեստինէն բոլոր
Ասորեստան՝ Փոքր Ասիոյ գրեթէ բոլոր բազմա-
թիւ դաւառները, Յունաստան և Ադրիական
ծովուն կղզիները, Միսիկէի եզերքները, և մին-
չև անգամ Իտալիա ու Հռոմ: Ամեն մէկ
քաղաքներուն մէջ եղող դարձի եկածներուն
թիւը կը ցուցուի՝ «բազմաթիւ մարդիկ», «մեծ
բազմութիւն», և «շատ ժողովուրդ» խօս-
քերով: Ինչ ընդարձակ ներգործութիւն ընե-
լը յայտնի է Թեսաղոնիկէի մէջ հակառակորդ-
ներուն ըրած աղաղակէն՝ թէ «անոնք որ աշխար-

Տը տակն ու վրայ ըրին, հոս ալ հասեր են" :
 Դեմետրիոս՝ որ թշնամի մըն էր, կըզանգատի Պո-
 ղոս Առաքեալին վրայ, թէ " ոչ միայն Նիկեոս,
 այլ գրեթէ բոլոր Ասիացեաց շատ ժողովուրդները
 համողելով միտքերնին դարձուց" : Այն ատենը
 Հրէական թշնամութեան կենդրոն Արուսաղէմը
 Աւետարանին մայրաքաղաքն էր, և իր մէջն ունէր
 հազարաւոր հաւատացեալներ : Այս տեղեկու-
 թիւնները Վործք Առաքելոցէն առնուած է. բայց
 որովհետեւ այս Վիրքը գրեթէ յատկապէս Պոլոս
 Առաքեալին և անոր անմիջական ընկերներուն
 վրայ կըխօսի, շատ քիչ բան ըսելով միւս Առա-
 քելոց վրայ, շատ հաւաստի է որ երեսուն տար-
 ուան մէջ Աւետարանի տարածութեանը վրայ մեր
 տուած գաղափարը շատ անկատար է : Վործին
 սկսելէն վերջը երեսուներորդ տարին՝ Աերոնի իշ-
 խանութեան ներքեւ այն սոսկալի հալածանքը
 բորբոքեցաւ. անատենը Քրիստոնէաները այն-
 չափ շատցած էին չուլմ՝ որ հակիտոսի վկա-
 յութեամբը՝ "մեծ բաղմութեամբ" մարդիկ բըռ-
 նուեցան : Անկէ քառասուն տարի վերջը՝ Պոն-
 տոսի և Ռիւթանիայի վրայ չուլմէական կառա-
 վարիչ Պլինիոսին հռչակաւոր նամակէն կիմա-
 նանք որ Քրիստոնէութիւնն երկայն ատենէ ի
 վեր կըկենար այն գաւառներուն մէջ, որ այնչափ
 հեռու էր Հրէաստանէն : Ամեն հասակէ և ամեն
 աստիճանէ շատ մարդիկ և միանգամայն կնիկներ
 կամբաստանուէին Պլինիոսին՝ Քրիստոնէութեան
 համար : Այն սնապաշտութեան ախօսին վարա-
 կումը (որ Քրիստոնէութիւնն այսպէս կոչելովը

քաջ կըցուցնէ անոր անարգել ու արագ յառա-
 ջադիմութիւնը,) բռնած էր ոչ միայն քաղաքները,
 այլև գիւղաքաղաքները և գիւղերը, անանկ որ
 հեթանոսական տաճարները «գրեթէ պարապ մնա-
 ցած էին», շատ քիչ կենդանի կը ծախուէր զոհի
 համար, և սրբազան տօներու երկայն ընդմիջա-
 հատութիւն մը եղաւ: Յուստինոս վկան՝ որ Պլե-
 նիոսէն երեսուն տարի վերջը՝ և Ն. Ետարանն ա-
 ռաջին անգամ Հեթանոսներուն քարոզուելէն
 հարիւր տարի վերջը գրեց, այսպէս կատորագրէ
 Քրիստոնէութեան ընդարձակութիւնն իր ժամա-
 նակը: «Չկայ ազգ մը, թէ Յոյն ըլլայ թէ բար-
 բարոս կամ թէ ուրիշ անունով, մինչև անգամ
 ցեղերով թափառական ապրող և վրաններու մէջ
 բնակողներուն մէջ, որ անոնց մէջ աղօթք և դո-
 հութիւն չմատուցուի շօրը՝ տիեզերքին Նորարի-
 չին՝ խաչեալ Յիսուսի անունովը»: Աղեմէս Աղեք-
 սանգրացին՝ անկէ քանի մը տարի վերջը, այսպէս
 կը գրէ: «Յոյն փիլիսոփաները Յունաստան ամ-
 փոփեալ են, բայց Քրիստոնէութեան հեղինակին
 վարդապետութիւնը Հրէաստանի մէջ չմնաց, այլ
 տարածուած է բոլոր աշխարհ և ամեն ազգի մէջ
 ու ամեն գիւղ և քաղաք, և դարձի կուգան թէ
 ամբողջ ընտանիքներ և թէ անհատ անձինք, և
 արդէն նոյն իսկ փիլիսոփաներէն ալ ոչ թէ քի-
 չերը նազանդեցան հաւատքին: Այլ թէ Յունական
 փիլիսոփայութեան արդելք դրուի՝ իսկոյն կոչըն-
 չանայ, երբ մեր վարդապետութեան նոր քարոզ-
 ուելէն հետէ թագաւորները՝ բռնաւորներն և իշ-
 խանները բոլոր իրենց պաշտօնեաներն և հասա-

րակութիւնն իրենց կողմն ունենալով ջանացին բոլոր իրենց կարողութիւնովք ջնջել անիկա, բայց անիկա առաւել և առաւել կըծաղկի" : Այս տարածումն ինչ կերպով ըլլալուն՝ մեր Փրկչին՝ Քրիստոնէութիւնը խմորի նմանցնելէն աղէկ բացատրութիւն չըլլար. անիկա անանկ յարակցութիւն մը ունի մարդկային մտքին՝ որով անհատն անհատ կանցնէր, ինչպէս որ խմորելու ներդործութիւնը մասնիկէ մասնիկ կանցնի. և ոչ մարդկային կարողութիւն մը կրնար արգիլել անոր յառաջադիմութիւնը : Քանի որ աշխարհ կեցած է՝ անանկ յեղափոխութիւն մը եղած չէ, և ոչ անանկ կարողութիւն մը կեցած է՝ որ կրնար անանկ փոփոխութիւն մը յառաջ բերել :

Չ. Այս յառաջադիմութեանը որչափ արդելք կենալն իմանալու համար մտածելու ենք, որ կրօնք մը՝ իբրև կրօնք, թող թէ ուրիշ կրօնքի հետ չմիաբանող կրօնք մը՝ տարածելու ձեռնարկութիւնն անատենը բոլորովին նոր բան մըն էր : Արեւմտեան դրութիւնը յարմարութիւն չունէր ընդհանրական տարածութեան, և Արեւելից նախանձը՝ ուրիշ ազգերը յաւէտ իրենցմէ հեռացընելու ուղղուած էր, քան թէ անոնք իրենց առանձնաշնորհութիւններուն հաւասար մասնակցութեանը մօտեցընել : Աեթանոսներն ուրիշ կրօնքի հետ չմիաբանող կրօնքի վրայ դադափար չունէին, և ոչ մարդասիրական կրօնքի վրայ, անանկ կրօնքի՝ որ մարդասիրական ըլլալուն համար, ուրիշի հետ չկրնար միաբանիլ : Աեթանոսութիւնն առանց Անդանակի և առանց սկզբունքի ըլլալով՝ կար-

դացողներուն խաբէութեանը կամ ժողովուրդին
 սնասպաշտութիւններուն և մոլութիւններուն ընտ-
 րել կցած ամեն ձևի մտնելու՝ և ամեն կուռքի պաշ-
 տօն մատուցանելու՝ ամեն ծէս ի դործ դնելու՝ և ամ-
 մեն անտեղութիւն ընդունելու ազատութենէն ի
 զատ բան մը չունէր պնդելու կամ վիճելու . բնաւ
 ուխտէ կարգ հեթանոսական ժողովուրդի մը միտ-
 քէն ալ անցած չէր որ ինչպէս իրենց կրօնքն ի-
 րենց աղէկ է՝ անանկ ալ ամեն ուրիշ կերպ կը-
 րօնքներն անոնք բռնողներուն աղէկ չըլլայ, կամ
 թէ բնաւ մարդասիրական զգացում մը կամ հա-
 սարակ բանականութիւնը զիրենք պարտաւորէ որ
 ջանք ընեն ուրիշներուն չաստուածները հերքել՝
 որ իրենցն անոր տեղը հաստատեն : Ասիկա է
 Արապօնի և Ալօլդէրի այնչափ դոված մարդասի-
 րութեանը և համաձայնութեանը հիմը, որոնք կը-
 ծագին ճշմարիտ կրօնքին գիտութեանը և այն
 կրօնքին ունեցած անսպասմելի արժէքին ճանաչմանը
 չկենալէն : Այց այս բաներն ասանկ ըլլալով՝ չէր
 կրնար մէկ բան մը աւելի նոր ու սքանչելի և ան-
 հաճոյ ըլլալ բոլոր Հեթանոս ժողովուրդոց՝ որչափ
 Քրիստոնէութեան նախնի ջատագովներուն վրայ
 դրուած պարտաւորութիւնը, երթալ ամեն աղղե-
 րուն և Աւետարանին՝ այլոց խափանիչ պահանջում-
 ները հաստատել, ամեն ուրիշ կրօնքներուն վաւե-
 րականութիւնը հերքելով, և աշխատիլ ամէն արա-
 րած Քրիստոսի եղական հաւատքին բերել : Աւս-
 տի Աւետարանին կրօնքն անոնց ըմբռնումներէն
 որչափ տարբեր բան մըն էր, ոչ միայն ուրիշ կը-
 րօնքներու հետ ունեցած վերաբերութիւնովը,

այլ և բուն իսկ ինքնին նկատելով : Անթանոսաց
մէջ կրօնքը քաղաքականութեան ծնունդն էր • և
կրկայանար բացարձակապէս արտաքին բաներէ ,
ինչպէս տաճարներ՝ պատկերներ՝ սեղաններ՝ քա-
հանայներ և զոհադործութիւններ , տօներ և փա-
ռաւոր բաներ • կը բազմապատկէր պաշտամունքի
առարկաները քաղաքական իշխանութեանց ու-
զածին չափ • ոչ մէկ վարդապետութեան դրու-
թիւն մը կը քարոզէր , և ոչ բարոյականի դրութիւն
մը կը ճանչնար • սրտէն բան մը չէր պահանջեր •
մարդուն կեանքը անսանձ կը թողար , և կը նդու-
նէր որ ո՛ր և իցէ մէկը կատարելապէս հաճոյ կը-
կենայ աստուածներուն առջևը՝ (անոնց պաշտա-
մունքին քիչ մը յարգութիւն ցուցընելու չնչին
պայմանովը ,) ո՛ր աստիճան ալ որ իր բնութեան
ամենաչար կիրքերուն և ամենանուաստ յօժարու-
թիւններուն ծառայէ : Չէր կրնար բան մը աւելի
օտար ըլլալ Յունաստանի կամ Առովմայ բնիկ
եզոզի մը ունակութիւն եղած խորհելու կերպին ,
քան թէ Սուրբ Վրոց վարդապետութիւնները
մեզքին բնութեանը և յանցաւորութեանը , զըզը-
ման՝ ապաշխարութեան՝ հաւատոյ՝ սիրոյ՝ հեղու-
թեան և սրտի մաքրութեան :

Տանին բնութիւնովը ասանկ կրօնք մը թէ Ար-
րէից և թէ Անթանոսաց ամեն քահանայութիւն-
ներուն բոլոր ներդործութիւնն իրեն դէմ պիտի
յարուցանէ : Արէից քահանաներուն իշխանու-
թեանը և Քրիստոնէութեան դէմ անոնց ու-
նեցած դառն թշնամութեանը բաւական տեղեակ
կնք , բայց այնչափ ծանօթ չէ մեզի թէ ուրիշ

ազգերուն քահանաներուն ունեցած իշխանութեանը՝ և անոնց ինչ սնապաշտական երկիրով իրենց կարգաւորներուն վրայ նայելը : « Ազգերուն կրօնքը » , կրսէ Արարչոն , « լոկ մտածական վարդապետութիւն մը չէր՝ դպրատուններուն մէջ դաս տրուած և տաճարներուն մէջ քարոզուած , բազմաստուածութեան անհամար պարտականութիւնները և ծէսերը՝ սերտիւ մանուած ու խառնուած էր մարդոց զբաղմունքին կամ զբօսանաց և կամ պաշտօնական կամ առանին վիճակի վերաբերեալ ամեն պարագաներուն հետ . և անհնար կը թուէր անոնք բռնելէն ազատել , առանց մարդոց հաղորդակցութենէն զրկուելու : Այսպէս զութեան և պատերազմի կարևոր գործառնութիւններուն պատրաստութիւնը և վախճանը հանգիստէր զոհերով կըլլար , որուն մէջ դատաւորին՝ ծերակոյտին և զօրականին պարտ էր մասնակցութիւն ունենալ » : Քահանաներուն վրայ խօսելով՝ կրսէ , « Անոնց ծիրանի վերարկունները՝ փառաւոր կառքերը և բազմածախ հիւրընկալութիւնները ժողովուրդը կը զմայլեցնէին . և նուիրուած երկիրներէն ու քաղաքական և կամ մուտներէն մէկ մեծ բաժին մ՝ ունէին՝ որով առատաբար կը հոգացուէր քահանայութեան շքեղութիւնը և քաղաքական կրօնքին բոլոր ծախքերը » : Արեւ ապացոյց այս կարգաւորներուն ունեցած կարգադրութիւններուն ոյժին և ընդարձակութեանը , ըսուած է թէ՛ Արիստոնէութիւնը նույնիսկ Գրուտեան հաստատուն կրօնքն ըլլալէն վաթսուն տարի վերջը չորս հար-

իւր քսան և չորս տաճար ու աղօթատեղի կար
 շուրջ քաղաքը, ուր այն քահանաներուն սլաշ-
 տամունքը կրկատարուէր : Եթանոսութեան բո-
 լոր այս կարգադրութեանը և խորին արմատացած
 իշխանութեանը հետ մտածէ՛ նաև անոր այլ և
 այլ տեսակ ստորին սլաշտօնեաները և շահու ըն-
 կերները, այսինքն է վհուկները՝ կախարդները և
 պատգամախօսները, անթիւ տեսակ կուռքերու տա-
 ճարներուն սպասաւորողներուն և օգնականներուն
 հետ մէկտեղ. և ան արհեստները՝ որոնց գործը
 կրքանի պատկերապաշտութիւնը պաշտպանելով,
 ինչպէս արձանագործները՝ սեղան շինողները՝ զոճ
 ծախողները՝ խնկեղէններու վաճառականները.
 մտածէ այն մեծ տօները և խաղերը՝ որով Եթա-
 նոսութիւնը մարդոց ախորժակներուն կը հաճոյա-
 նայ, ու ամեն կարգի և ամեն երկրի մարդիկն իր
 պաշտպաններուն կարգը կանցընէ. և ըսէ՛ թէ
 ինչ եղած ըլլալու է այն ահագին ոյժը՝ որ ամեն
 Եթանոս ազգերուն կարգաւորները շրէից քա-
 հանաներուն հետ կրնային իրենց մէջ մէկտեղ բե-
 րել, անանկ կրօնք մը ճղմելու հասարակաց փաս-
 տին համար՝ որուն վարդապետութիւններուն քո-
 վը անոնց ոչ մէկը կրնար կենալ : Աւ բոլոր պատ-
 մութիւնը կը վստահացընէ մեզ, թէ անոնց ամեն
 մէկն իրեն ինկածին չափ միացաւ, հաւանութիւն
 տալով՝ եթէ ուրիշ բանի չէ, այս միակ նպատա-
 կին, որ Քրիստոնէութիւնն իր օրօրոցին մէջ
 խեղդեն, կամ անոր հետեւողներուն արիւնին մէջ
 ընկղմեցընեն :

Աւ քահանաներուն ներգործութեանը հետ

կառավարութեան իշխանութիւնը միացած էր : Ար-
 օնական թոյլտուութեան ճշմարիտ սկզբունքը բո-
 լորովին անձանօթ էր շեթանոս աղգաց մէջ ,
 և անձանօթ է մինչև այսօր . թոյլտուութիւնը՝
 որ իր ճշմարիտ իմաստովն առնելով ո՛չ անտար-
 բերութիւն է և ոչ ծուռ ոգիէն շարժուած և
 ծուռ կերպով ի գործ դրուած նախանձ , բնական
 չէ մարդուն . անիկա Քրիստոնէական առաքինու-
 թիւն մըն է : շեթանոսները պատրաստ էին
 թոյլտուութիւն բնելու ամեն բանի՝ որ կառավա-
 րութեան ընդունելի եղած պաշտամունքին չէր
 դպչեր . բայց երբոր կրօնք մ՛ ելաւ՝ որ կարգիլէր
 իր հետևողներուն մասնակից ըլլալ այն պաշտա-
 մունքին , իսկոյն մէկ անողոքելի հալածանք մը
 բորբոքեցաւ ամեն կողմը , և քաղաքական բաղու-
 կին բոլոր ոյժն անոր վրայ ծանրացաւ :

Այս ըլլալով քահանաներուն և կառավարու-
 թեան ոգին Քրիստոնէութեան վրայ՝ բնական է
 ակնկալել այն աղմուկները և հասարակութեան
 սրամտութեան բորբոքները , որ ընդհանրապէս կը-
 գրգռուէին անոր նոր քարոզուած ժամանակը :
 Մոլի՝ սկզբունքի տէր չեղող և ըստ մեծի մա-
 սին ըմբշամարտութեան ցոյց բերու և արիւնհե-
 ղութեան տեսարաններու սովորած հասարակու-
 թենէն էր շատ անգամ Քրիստոնէութեան քա-
 ռողիչներուն անմիջական վտանգը :

Աչ ալ փիլիսոփաներուն քիչ ընդդիմութիւն
 ունէր Քրիստոնէութիւնը , կամ անոնք հասարա-
 կութեան ուրիշ կարգերէն քիչ ընդդէմ էին ա-
 նոր : Անոնց աղանդները թէպէտ բազմաթիւ էին

և անխախտան զանազանութիւններ ունէին մէջեր-
 նին, իսկ ամենը միաբան էին ինքզինքներնուն
 վստահելու՝ թէ իրենք իմաստուն են, և ուրիշնե-
 րը անարգելու կողմանէ. իրենց հրատարակած
 կարծիքներն ու առանձնական մտածութիւնները
 և բարոյականի դէմ վարմունքը՝ զիրենք անհաշ-
 տելի հակառակորդ ըրած էին Քրիստոնէութեան ։
 Քրիստոնէութիւնը մինչև անոնց ձեմարանները
 հասաւ, և անոնց իմաստութիւնը յիմարութիւն
 կոչեց. և յանդիմանեց անոնց հպարտութիւնը .
 «Մ. յս սերմանաքաղը ինչ ըսել կուզէ . կերևի թէ
 քանի մը օտար աստուածներու քարոզիչ է» . այս
 էր Ապիկուրեան և Ստոյիկեաններէն ոմանց նա-
 խատական խօսքերը՝ երբոր Պօղոս Առաքեալին
 դէմն ելան . ծաղրաբանութիւնն իրենց մտքին բնա-
 կան արտայայտութիւնն էր՝ երբոր մեռելոց յարու-
 թիւնը կրլսէին ։ Ուստի Առաքեալներն Աւետա-
 րանը նեթանոսաց մէջ տարածելու ջանացած ա-
 տեննին՝ Վիլիստոլիայից ամեն աղանդին բոլոր ճար-
 տարամտութիւնը՝ ուսմունքը՝ իմաստութիւնը և
 բոլոր հպարտութիւնը, նախանձութիւնը և չարա-
 մտութիւնը իրենց դէմ էր ։

Ա. յս ծանօթութիւնները կրկարողացընեն մեզ
 դատել թէ աշխարհին վիճակն անատենը նպաս-
 տաւոր էր Քրիստոնէութեան՝ թէ՛ ոչ . վասն զի
 այս բանին վրայ կերևի թէ զանազան կարծիք-
 ներ ունին շատերը ։ Աշխարհին վիճակը նպաս-
 տաւոր էր կարծողներէն երկու կարգ անձինք կան .
 ոմանք կը խորհին թէ Աստուածային Նախա-
 խնամութեան ձեռքը կը տեսնեն այն կարգադրու-

Թիւններուն և նախապատրաստութիւններուն մէջ որ իրենք կը կարծեն թէ եղած են Քրիստոնէութեան աշխարհ մտնելուն համար . իսկ միւսներն այնպէս կը խօսին , յայտնապէս այն միտքով որ Քրիստոնէութեան տարածումէն սովորաբար հանուած փաստին ոյժը տկարացրնեն : Բայց շատերուն անանկ երեցած է թէ աշխարհի ան ատենուան վիճակը՝ ասանկ կրօնքի մը տարածուելուն ասկից մեծ արգելքներ բնաւ դրած չէ : Մէկ կողմէն կրսեն թէ Աշխարհ խաղաղութեան մէջ էր , և մէկ կառավարութեան տակ միացած , և դիւրին էր տեղէ տեղ երթալ և ընդարձակ հաղորդակցութիւն ունենալ . և թէ հին սնապաշտութիւններուն ոյժը ցրուած էր , և մարդոց միտքերը պատրաստուած էր նոր կրօնքի : Միւս կողմէն ալ կրսեն թէ Աթէ խաղաղութեան դար էր , ատիկա այսչափ օգուտ ունէր միայն՝ որ պատեհութիւն կուտար նոր կրօնքի մը պահանջումներն աւելի խրնամքով քննելու . և լուսաւորեալ դար մըն էր , գրականութեան՝ փափկութեան և մտլութեան դար մը , և Ապիկուրեան փիլիսոփայութիւնն ու սկեպտիկեանութիւնը առհասարակ կրտիրէր . և սուտ կամ տկար բանի մը յաջողելուն ամենէն քիչ հաւանականութիւն ունեցող դարն էր աշխարհիս պատմութեանը մէջ . ասիկա է իմ գաղափարս : Քրիստոնէութեան պէս անտարակուսելի վկայութիւն և ծանր շարժառիթների ունեցող կրօնքի մը տարածմանը համար անշուշտ շատ նպաստաւոր բաներ կային , բայց եթէ Քրիստոնէութիւնն ինքն իր հաստատածին պէս չըլլար , անշուշտ

Ասոր վրայ ինձի երկարել հարկ չէ : Տասնևմէկ
 մարդ՝ (վասն զի մինչև Քրիստոսի մահը աշխարհը
 դարձի բերելու մեծ ձեռնարկութիւնը սկսուած
 չէր ,) տասնևմէկ մարդ առանց ուսման՝ առանց
 հարստութեան կամ պատուոյ կամ իշխանութեան ,
 աննշան անձինք և անարդ ժողովուրդէ ըլլալով՝
 բնաւ նիւթական ոյժի չդիմելով և քաղաքակա-
 նութեան կապակցութիւն չունենալով , այլ պար-
 զապէս եղելութիւններ ըսելով՝ Քրիստոս և ա-
 նիկա խաչը ելած քարոզելով դարձուցին՝ Հրէա-
 կանութեան Աստուածային սահմանադրութիւնով
 եղած կարգադրութիւնները վերջացուցին , և դա-
 բերով մնացած սնապաշտութիւնները կործանեցին
 աշխարհիս անատենը ծանօթ եղած ամեն կողմերը :
 Մարդկային ազգին պատմութիւնը անանկ բան
 մը չունի ցուցնելու՝ որ երբէք կրնայ ասոր համե-
 մատիլ . եթէ ուրիշ կրօնքներ կան՝ որոնք Քրիս-
 տոնէութեան կրնան համեմատիլ իրենց տարածու-
 թեանն արագութեանը կողմանէ , բայց և այնպէս
 բոլորովին տարբեր են անկէ իրենց ծագման բոլոր
 պարագաներովը և իրենց տարածութեանը համար
 ի գործ դրուած բոլոր միջոցներովը : Ինչաւ երբէք
 չտարածուեցան այն միակ կերպովը՝ որ պայծառ
 կրնայ ցուցուիլ թէ ճշմարիտ կրօնք մը անով տա-
 րածուելու է : Աւստի թէ բանին բնութիւնը քննենք
 և թէ պատմութեան լոյսով նայինք բանին վրայ ,
 պիտի զգանք որ ասանկ կրօնքի մը ընդդէմ ա-
 սանկ արգելքներու և ասանկ արագութեամբ ու ա-
 սանկ միջոցներով տարածուիլը , բարոյական հրաշք
 մըն է , և բանաւոր կերպով միայն ճշմարտութեան

և Մատուծոյ զօրութեանը կրնայ տրուիլ . ինչպէս պիտի մեկնէ անհաւատը ասիկա . եթէ կը հաւատայ որ այս մարդիկը տկարամիտ ու խաբուած էին , ուրեմն կը հաւատայ որ տկարամիտ և խաբուած մարդիկն անանկ գործ մը կատարեցին՝ որ ուրիշ ամեն գործէ աւելի բարոյական կարողութիւն կը պահանջէ . իսկ եթէ կը հաւատայ որ խաբերայ էին , ուրեմն կը հաւատայ որ անոնք աշխատեցան՝ չարչարուեցան և մեռան ուրիշներուն հաւտացնելու այն բանը՝ որ իրենք չէին հաւատար :

Հիմա կանցնինք Քրիստոնէութեան արդիւնքներուն և հակումներուն : Այժմէ կրնայ ցուցուիլ որ այս կրօնքը՝ և այս միայն եղած է մարդկային ազգին վայելած ամենամեծ բարօրութիւններուն պատճառը , և ցուցուիլ թէ՛ եթէ կատարելապէս ընդունուի , պիտի հասցնէ թէ՛ անհատները և թէ՛ հասարակութիւնը նար եղած ամենաբարձր աստիճան կատարելութեան այս կեանքին մէջ , և պիտի յարմարցնէ մարդն ըմբռնել նար եղածին չափ բարձր աստիճան երջանկութեան՝ հանդերձ եալին մէջ , ուրեմն Մատուծմէ ըլլալու է այս կրօնքը . և ասիկա կրնայ ցուցուիլ : Այս և այս նիւթին վրայ խօսած ատենս՝ չեմ ուզեր ծածկել ինչ չարիք որ պատահած է Քրիստոնէութեան ծագմանը հետ , և ինչ անիրաւութիւն որ գործած են անոր անունը կրող մարդիկ : Այս այս միայն կը խնդրեմ որ մարդիկ որոշում ընեն՝ ինչպէս ամեն անաչառ մարդ պիտի ընէ , բանին հակումներուն և ծուռ ճամբաներով ու չարութեամբ այն հակումներուն դէմ ընթացք բռնուած ատենը յա-

ուաջ եկած արդիւնքներուն մէջ, նաև անուններուն ու բաներուն մէջ :

Առաջին որոշումը բացատրելու համար օրինակ առնենք Աերոնի ձեռքով եղած հալածանքը, որ չարիք մըն էր, և պիտի չըլլար առանց Քրիստոնէութեան: Բայց ո՞վ էր կամ ի՞նչ էր անոր պատճառը. մի՞թէ անմեղ Քրիստոնեաներն էին որ պարզապէս կը հաստատէին իրենց անբառնալի իրաւունքը Փրկիչը սիրելու և զԱստուած պաշտելու իրենց խղճին վկայութեանը համեմատ, կամ թէ Աերոնի և անոր կամակիցներուն չարութիւնը. երբոր դէր Քրիստոսի հրամանով մէկ դիւահարէ մը կելնէր, սաստիկ ցնցեց անիկա և մեռելի պէս ըրաւ, Քրիստոս էր այն ցաւին պատճառը. և այսպէս եղած է միշտ Քրիստոնէութեան ալ. իր նպատակը՝ թէ բուն իր իրաւունքները վայելել և թէ ուրիշներուն օգուտ ընել եղած ատենը. եթէ չարիք ծագած է, մարդոց՝ Քրիստոնեաները հալածելուն և Աստուծոյ տուած անուրանալի իրաւունքներն անոնցմէ յափշտակել ջանալուն համար ծագած է. կամ թէ անոր համար՝ որ երբ Քրիստոնէութիւնը մեծամեծ և խորարմատ չարիքներու վրայ յարձակած է, ինչպէս կռապաշտութեան և գերութեան, մարդիկ մէկ չար հաճութիւնով մը յարած են անոնց, և դէր հասարակութենէն չէ ելած՝ առանց անիկա սաստիկ ցնցելու:

Արկրորդ որոշմանը նկատմամբ մէկ շատ ընդհանուր սխալմունք մը կայ, որ անզգալապէս կը խաբէ միտքը, Քրիստոնեայ անունը՝ բնաւ Քրիս-

տոնէական սկզբունքով չկառավարուողներուն վը-
րայ կանչուելովը: Աթէ մարդիկ ուզեն փորձել
դեղի մը ներգործութիւնը՝ այն դեղն ուտելու են
և ոչ թէ ուրիշ բան մը՝ որ իրենք միտքերնին կը-
դնեն այն անունովը կոչել. եթէ ուտեն մկնդեղ
և անիկա ալիւր կոչեն, անիկա լոկ սխալ անունով
կոչելնին պիտի չարդիլէ անոր թունաւոր ներգոր-
ծութիւնները. անանկ ալ փառասիրութիւնը՝ հը-
պարտութիւնը՝ սնամիտութիւնն և անձնասիրու-
թիւնը բուն իրենց յատուկ ներգործութիւնները
յառաջ կրբերեն ինչ կերպ ժողովուրդի մէջ որ
ըլան, և ինչ անունով որ կոչուին: Այս երկու
որոշմունքը միտքերնուս առջևը պահելով՝ դիւրաւ
կրտեսնուի որ Քրիստոնէութիւնը ոչ մէկ չարիքի
մը իրական պատճառ եղած է իրականապէս, քա-
նի որ անհուն պարգևներ տուած է մարդկային
ազգին, և միայն կատարելապէս ընդունուելու կը-
նայի՝ որ աշխարհն այն կատարելութեան վիճա-
կին բերէ, որ կրնայ ըմբռնուիլ բաներուն ներ-
կայ Փիղիքական կաղմութեանը հետ:

• Անշուշտ՝ մարդոց մէջ երբէք պատահած ոչ
մէկ յեղափոխութիւն մը կրնայ համեմատիլ Յի-
սուս Քրիստոսի խօսքերովը յառաջ եկած փոփո-
խութեանը: Այն խօսքերը մարդուն հոգիին մէջ
եղած մէկ կարօտութիւն մը և խորին կարօտու-
թիւն մը լեցուցին. այն խօսքերը ճշմարտութեան
պայծառ լոյսին բերին մարդուն և անոր ապագայ
վիճակին վերաբերեալ անանկ խորին խնդիրնե-
րուն լուծմունքը՝ որուն վրայ փիլիսոփաները կը վի-

Ճէին միայն, և հաստատեցին ու հաստատելէն ալ
աւելի ըրին ամեն երկբայելի յոյս՝ որ խիստ իմաս-
տուն ու բարի մարդիկ կըտածէին սրտերնուն
մէջ: Անիկա ցուցուց անոնց՝ երկինքը հայր մը,
և հանգստեան բնակարաններ՝ որ պիտի պատրաս-
տէր. «կեանքն ու անմահութիւնը լոյսի բերաւ».
կանգնեց բարոյականի մէկ կատարեալ գաղափար
մը, և պնդիւ պատուիրեց սէր առ Աստուած և
առ մարդ, և կեդաւ մարդոց առջին բուն իր կա-
տարեալ օրինակին փառաւոր լոյսովը. այն խօ-
սեցաւ, և փախցուց մարդոց այն հոգևոր քունը՝ որ
մահուան պատկերի պէս կերևէր, և բարոյական
տարրերուն մէջ շարժում մ՝ սկսեց, որ այն օ-
րէն մինչև այսօր դադրած չէ, և բնաւ դադրելիք
չունի. սուգի մէջ եղողները լսեցին անոր ձայնը՝
և մխիթարուեցան, յոգնած ու բեռնաւորածները
լսեցին՝ ու հանգիստ գտան իրենց հոգիին. թէ
հակառակութեան և թէ սիրոյ անանկ զգացում-
ներ զարթուց՝ որ բնական սէրէն աւելի խորին
են. ուստի անոր խօսքերը որդին հօրը դէմ և
հայրը որդիին դէմ հանեց, և մարդուն թշնամին
իր ընտանիքին մէջէն եղաւ: Աշխարհիս վրայ տիրող
տեսակ տեսակ կռապաշտութիւններուն և պղծու-
թիւններուն բնաւ մերձաւորութիւն չունենալով՝
և անոնց հետ բնաւ դաշնագրութեան չմտնելով՝
աշխարհը տակն ու վրայ ըրաւ ուր որ գնաց. անոր
առջևը հեթանոսական պատգամները կըլուէին և
անոնց սեղաններուն կրակը կըմարէր. հասարա-
կութեան վրայ մէկ անտեսանելի և գաղտնի ղո-
րութեան մը պէս կընկերգործէր, մարդոց հետ

գիշերն իրենց անկողինին մէջը խօսելով՝ և դանոնք
 չարութենէ դարձնելով՝ և խղճին ձայնն երկրոր-
 դելով՝ և յստակութիւն ու միանգամայն սաստ-
 կութիւն տալով անոր ձայնին, և արդարութեան՝
 ժուժկալութեան ու դալու դատաստանի վրայ եր-
 բեմն փսփօալով, և երբեմն անանկ ձայնով մը
 խօսելով՝ որ ամենէն անխօղճը կրդողացնէ. եր-
 կինքը բացաւ ու մարդոց յոյս խօսեցաւ. բացաւ
 ցուցուց այն աշխարհը՝ ուր “անոնց որդը չմեռ-
 նիր, ու կրակը չմարիր”. խիստ էին իր յանդի-
 մանութիւններն ամեն մեղքի դէմ. և քաջալերող
 էր ամեն բանի՝ որ “մաքրութիւնով՝ սիրով և բարի
 համբաւով է” : Ան հասարակ մարդոց ուղղուած
 ըլլալով՝ առանց անոնց վիճակին կամ ազգին նա-
 յելու, չէր նկատէր լեզուի կամ սովորութիւննե-
 րու և կամ երկրի սահմաններու տարբերութեան :
 Աւ հալածանքը ելաւ, անոր բոցը բորբոքեցաւ՝
 և յառաջ բերաւ իր վայրենի դազանները : Ան-
 իւնը ջուրի պէս կրժափէր, բայց մարտիրոսնե-
 րուն արիւնը եկեղեցիին սերմն էր : Աչ մէկ ար-
 տաքին ոյժ մը ասոր պէս զօրութեան մը դէմը
 կրնար առնել. խօսքը խօսուեցաւ և ալ նար չէր
 ետ դարձրնել անիկա : Աստուծոյ ձեռքը նոր տնօ-
 րէնութիւն մ՝ ըրած էր աշխարհիս բարոյական
 կազմութեանը շարժմունքին մէջ, և մարդուն
 ձեռքը չէր կրնար անիկա ետ ընել : Աւրիշ յե-
 ղափոխութիւն ասանկ ընդարձակ և ասանկ հիմ-
 նական եղած չէ. Քրիստոսի ձայնը յառաջ խա-
 ղալով դէպի իր անմիջական ու բարձրագոյն նպա-
 տակներուն կատարմանը՝ անուղղակի կերպով

պատճառեց նաև ոչ միայն բարոյական՝ այլև ըն-
 կերական ու քաղաքական փոփոխութիւններ :
 Աւերցուց կուսապաշտութիւնն ու բազմաստուածու-
 թիւնը հանդերձ անոնց անբաժանելի անարդու-
 թիւններովը՝ պղծութիւններովը և անգթութիւն-
 ներովը . մարդ զոհելը՝ որ կընէին Յոյները՝ նուով-
 մայեցիները և Վարժագիներցիները ու Քահաղի և
 Մողոքի նախնի երկրպագուները , և կընեն հիմա
 խաղաղական Ովկիանոսի կղզիները՝ և նոյնպէս
 տան ու Վ. փրփիկէ , իսկոյն կըդադարին՝ ուր որ Քը-
 ռիստոնէութիւնը կերթայ . անոր լոյսն Վ. մերիգա
 այցելութիւն ընելէն առաջ էր որ եօթանասուն
 հազար մարդկային էակ զոհուեցաւ մի միայն տա-
 ճարի մը նուիրմանն ատենը Մեքսիքայի մէջ :
 Աւերցուց նախնի խաղերը՝ ուր մարդիկ մէկզմէկ
 կըսպաննէին , և վայրենի՝ կատաղի գազաններուն
 առջևը կըձգուէին որ գիշատեն ժողովուրդին զուար-
 ճութեանը համար . վերցուց՝ ատեն մ՝ այնչափ
 տիրող գերութիւնը Աւրոպայէն և Վ. մերիգայի
 մեծ մասէն . մեծ չափով մը վերջացուց նորածին
 մանկանց անխնամ թողուիլը . կնիկներուն վիճակը
 բարձրացուց , և անոնց տուաւ մարդկային ընկե-
 րութեան մէջ այն աստիճանը՝ որ Վ. ստուած սահ-
 մանեց որ անոնք ունենան . բազմակնութեան և
 յաճախ արձակումներու վախճան տալովը՝ ընտա-
 նեկան և բնական սիրոյ մշակութիւնը՝ զաւակաց
 պատշաճ կրթութիւնը , և Քրիստոնէական ըն-
 տանիքներուն մաքրութեանը՝ խաղաղութեանը՝
 փոխադարձ սիրոյն և վստահութեանը հետ կա-
 պակցած բոլոր անպատմելի բարօրութիւնները յա-

ռաջացնող անօրէնութիւն մ' ըրաւ : Այնչափ
 բարձրացուց բարոյականի ընդհանուր վիճակը՝
 որ անբնական եղեռնագործութիւններ և հեշտու-
 թեան խիստ անարգ կերպերն որ ատեն մը բաց
 ու յայտնի կերեւէր, և փիլիսոփաներն ի գործ կը-
 դնէին ու կրպաշտպանէին, հիմա անդին ասդին
 կրփախոջութիւն և ինքզինքնին մութի մէջ կը ծած-
 կեն. պատերազմներուն յաճախութիւնը նուազե-
 ցուց և անոնց արհաւիրքը մեղմեց. մարդոց մէջ
 ընդհանրական մարդասիրութեան սկզբունքը խօ-
 թեց, և մարդոց յօժար ըլլալ տուաւ այլոց հոգիին
 բարեւաւութեանը համար աշխատիլ, և այս աշ-
 խատութեանը հետ՝ հոգ տանիլ աղքատաց ներդու-
 թիւններուն և նիւթական կարօտութիւններուն,
 և կրտեսներնք որ այս երկուքը ձեռք ձեռքի տուած
 մեկտեղ կերթան և չեն կրնար զատուիլ : Աթէ
 անդին ասդին դանուի մէկ խարուած նախանձա-
 յոյզ մը կամ Վրիստոնէութեան կեղծաւոր դա-
 ւանող մը՝ որ ուզէ նախանձաւոր երևիլ, սակայն
 անօթիին ու մերկին ըսէ, «Տաքցէք ու կշտացէք,
 և մարմինին պէտք եղած բաները անոնց չտայ,
 այս ալ կրտեսնուի որ ո՛չ միայն մարդուն ներկայ
 բարեւաւութեանը ճշմարիտ նկատումը՝ անոր հո-
 գեւոր կարօտութիւններուն եղած նկատումովը պի-
 տի յայտնուի, այլ նաև երբոր այն կարօտու-
 թիւններուն նկատումը դադարի, ստորին մարդա-
 սիրութիւնն ալ՝ որ մարմինը կը հոգայ, անոր հետ
 պիտի ոչնչանայ : Արբոր կը շորնայ ծառին դա-
 գաթը՝ ուր որ անիկայ սնուցանող նիւթերը կը
 զտուին, այն ծառը մինչև վար ալ կը շորնայ :

Քրիստոնէութիւնը միայն շինած է հիւանդա-
նոցներ և դէշ կնիկներուն բարեկարգութեանը
համար տեղեր, և հոգ կը տանի բանտի մէջ եղած
յանցաւորներուն կրթութեանը և բարեկարգու-
թեանը համար: Միթէ բնաւ չեթանոս երկրի
մը մէջ եղած է կոյրերուն կարդալ սորվեցընե-
լու ձեռնարկութեան պէս բան մը: Ի՞նչ գիրք
է որ կոյրերը կը սորվին կարդալ, Լստուածա-
շունչն է. եթէ չկենար Լստուածաշունչ և ա-
նոր ցուցուած վարկու մը մարդուն արժէքին վրայ,
կրնայ մէկը հաւատալ որ կոյրերուն համար տը-
պագրութիւն ընելու մեծ գործը պիտի կատա-
րուէր. կամ թէ խուլերուն և համրերուն ալ
կարդալ ու գրել պիտի սորվեցընէին: Մօտերս
երբոր տեսայ այն կոյր տղաքն որ այնչափ կըր-
թուած էին, և լսեցի անոնց երգելը. երբոր տեսայ
որ խորհուրդներն և զգացումները լոյսի ու ստուե-
րի նման մէկզմէկ կը յաջորդեն մէկ խուլ՝ համր և
կոյր աղջկան մը բարբառող դէմքին վրայ, չէի
կրնար չխորհիլ որ թէպէտ գիտութեան սովորա-
կան աղբիւրները դոց էին, սակայն խօսքի բարձր
իմաստովն անանկներուն և այն աղջկանը կրնայ
ըսուիլ՝ ինչ որ Պետրոս Լաքեալ Անեային ըսաւ,
թէ «Յիսուս Քրիստոս քեզ կըբժշկէ»:

Եւ Քրիստոնէութիւնն ինչ որ մինչև հիմա
ըրած է, նոյնը կրնէ հիմա: Մէկ չափով մը
հիմա իր ոյժն օտար երկիր քարողիչ զրկելու
գործին մէջ կըբողուէ. և իր նախկին զօրութե-
նէն բնաւ կորսնցուցած չէ. կան մարդիկ՝ Յի-
սուսի սիրոյն համար կեանքերնին իրենց ձեռքն

առնելու, և իրենց երկիրը՝ բարեկամներն և զաւ-
կրները թողելու և ուրիշ աղգաց մէջ երթալու
յօժար, և կրտսններք որ նոյն խաչին պարզ քա-
րողութիւնն որ հին ատենը զօրաւոր էր՝ ամբող-
ները քակելու՝, հիմա ալ Աստուածային զօ-
րութիւն կայ անոր հետ, և կռատաշտ՝ վայրենի՝
մարդակեր ու մանկասպան աղբերը հեթանոսու-
թեան խաւարէն կելներն, ու քաղաքաւար՝ գիտ-
նական և Քրիստոնեայ աղգաց կարգը կանցնին:

Ասոնք և ասոնց նման բաները Քրիստոնէու-
թեան յայտնի ու ակներև և անուրանալի ար-
դիւնքներն են, որ միշտ յառաջ կուգան ու իցէ
ժողովուրդի մէջ գուտ Քրիստոնէութիւնն անոնց
մէջ տիրելու աստիճանին համեմատութիւնովը:
Բայց և այնպէս ես ասոնք յաւէտ մեծ գործքի
մը նշանները կըսեպեմ՝ քան թէ բուն իսկ այն
գործքը: Քրիստոնէութիւնը մարդկային ընկե-
րութեան վարէն կսկսի՝ և մինչև վեր կըգործէ,
անոր յաջողիլն արտաքին զօրութեան մը պէս մար-
դուն կարողութիւններուն ներգործելով չէ, այլ
նոյն այն կարողութիւններուն ձեռքով պիտի գոր-
ծէ. վասնորոյ միայն անհատներուն վրայ փոփո-
խութիւն ընելով կրնայ փոխել հասարակութեան
վերաբերեալ տնօրէնութիւնները և կառավարու-
թեան կերպերը, և յառաջ բերել վերոյիշեալ
արդիւնքները. ո՛րչափ մեծ գործ՝ և ի՛նչ հզօր
փոփոխութիւն եղած ըլլալու է ամեն անհատի վրայ,
մինչև որ այն հաւաքեալ և հասարակաց արդիւնք-
ներն երևան ելեր են: Ասանկ տնօրէնութիւններ
և արդիւնքներ մէկ կեանքէ մը՝ կենդանութենէ մը

և զօրութենէ մը կրնան յառաջ եկած ըլլալ . և
 անոնք կրկենան իբրև անոր ներգործութեանը
 նշաններն և յիշատակները : Արբոր կրտեսներմ
 երկիրը բոյսերով ծածկուած , երբոր կրտեսներմ
 ընդարձակ անտառ մը ծառերով լեցուն և ամառ-
 ուան կանանչ վերարկուն հագած , կրգիտնամ որ
 բնութեան տարերքներուն մէջ մեծ գործողու-
 թիւններ եղած են . կրխորհիմ թէ ինչպէս մթնո-
 լորտը՝ լոյսը՝ խոնաւութիւնը և հողը մեկտեղ միա-
 բանած ըլլալու են , և ինչպէս բուսական կենաց
 սկզբունքը բոյսին զանգուածը կազմած ըլլալու է՝
 մասնիկ մասնիկի վրայ դնելով , մինչև բարձրա-
 ցուցած է հաստատուն բունը , և իբրև անտառին
 թագաւորը՝ անոր վրայ դրած է կանանչ տերեւե-
 րէ թագը : Այն պէս՝ երբոր կրտեսներմ այն ար-
 գիւնքները՝ այն մարդասիրական տնօրէնութիւն-
 ներն իրենց առոյգութիւնովն ու դալարութիւնովը
 կեցած , երբոր կրտեսներմ բարոյական անասաւոր
 որ կրծաղկի և կրկանանչնայ , կրգիտնամ որ բա-
 րոյական կեանքի ներգործութիւնը՝ ճշմարտութեան
 պայծառ ծագումը՝ Աստուծոյ Հոգիին շարժումը՝
 և մարդուն հոգիին՝ թէպէտ թերևս լռիկ , բայց
 խորին ճիգն ի գործ դրուած է . անատենը կրգիտ-
 նամ որ խիղճն արթընցած ըլլալու է , և անձկու-
 թեամբ խորհուրդ հարցընելներ և սրտի մտօք ջանք
 եղած է , և զղջման արտասուքներ հոսած է , և ա-
 ռանձնական աղօթքներ մատուցուած են , և յուսո՛
 ու փրկութեան երգեր բռնած են յանցանքի ճա-
 նաչման և երկիւղի անձկութեան տեղը : Անատե-
 նը կրգիտնամ որ սուրբ վարքեր և երջանիկ մա-
 հեր եղած են : Անհատներու վրայ ասանկ փոփո-

խուժիւններ և ասանկ արդիւնքներ այս օրերն
 ապրողներէն ո՞վ տեսած չէ: Քրիստոնէութեան
 մեծ նպատակն է ասանկ փոփոխութիւններ և ար-
 դիւնքներ յառաջ բերել, երբոր այս փոփոխու-
 թիւնները կատարելապէս յառաջ բերէ ամենուն
 վրայ՝ զանոնք ամենը երկինքի յարմար ընելով,
 անատենը՝ և միայն անատենը անոր հակումները
 կատարելապէս ի գործ պիտի դրուի: Անատենը
 մարդկային ընկերութեան կազմութեան և յարա-
 բերութեանը մէջ ամեն ծուռ բան ինքնին պիտի
 վերնայ, ինչպէս որ այն որդին ձեն ու կազմութիւ-
 նը կերթայ, անոր մէջ ամփոփուած պայծառ և
 թեւաւոր կենդանիին երևալովը, և անատենը
 մարդկութիւնն իր կատարեալ վիճակովը պիտի
 երևան ելնէ: Անատենն Աստուծոյ կամքը պիտի
 կատարուի, և այս՝ այնչափ ատեն փոթորիկներով
 ալեկոծեալ երկիրը, մէկ հանդարտ ու պայծառ լիճի
 մը նման երկինքին պատկերը պիտի անդրադարձէ:

Այսպէս՝ մեր գրքին համառօտութեանը և մեր
 կարողութեանը ներածին չափ, և առ Աստուած
 մեր պատասխանատուութիւնը ճանչնալով, ըստ
 կարգի ներկայացուցի Քրիստոնէութեան ապա-
 ցոյցները. բայց եթէ կուզենք տեսնել փաստա-
 բանութիւնը բոլոր իր ոյժովը՝ այս ապացոյցներուն
 միացած ոյժին նայելու ենք: Վիտենք որ մէկ ա-
 պացոյց մը կրնայ կազմուիլ զատ զատ պարագայ-
 ներէ, որոնց ամեն մէկը կրնայ ըլլալ որ շատ ոյժ
 չունենայ, բայց բոլորին ոյժը մէկտեղ միացած՝
 բանը բարոյապէս ապացուցանէ. այս կերպով է
 որ նախընթաց անհատ ապացոյցներէն ոմանք կազ-
 մուած են, բայց այն կերպով չէ որ այս անհատ

ապացոյցները կրնե՞րկայացնենք՝ իբրև թէ ամենը
 մէկէն առնելով իրենց ոյժը կըբաւականանայ :
 Մենք կըհաստատենք թէ Քրիստոնէութեան հա-
 մար զատ զատ անսխալելի փաստեր կան, որոնց ա-
 մեն մէկն ինքնին բաւական են. բայց և այնպէս միտ-
 քին վրայ եղած ընդհանուր տպաւորութիւնն աւելի
 կըհաստատուի՝ երբոր ամենուն մէկ տեղ նայուի :
 Արհաստատենք թէ Քրիստոսի կրօնքին համար
 եղած իր յարութեանը փաստերուն պէս են՝ որոնք
 ցուցուեցան աշակերտներուն այլ և այլ զգայա-
 րանքներովը. ոմանք հաւատացին՝ երբոր լոկ տե-
 սան զինքը, ոմանք հաւատացին՝ երբոր տեսան և
 լսեցին անոր ձայնը. ասոնց երկուքն ալ մէկզմէկէ
 որոշ և բաւական փաստ են. բայց (Թովմաս սե-
 պեց թէ ոչ միայն հարկ է տեսնել անիկա ու լսել
 ձայնը, այլև դնել իր մատը գամերուն տեղերը,
 և ձեռքը անոր կողը : Քրիստոս անատենը չխնդ-
 րեց իր աշակերտներէն որ առանց ապացոյցի հա-
 ւատան, և հիմա ալ չպահանջեր : Բաւական բան
 պատրաստեր է որ անհաւատ (Թովմասն անգամ՝
 յագեցնէ, միայն թէ այն արդարասէր ըլլայ. և այս
 փաստերը բազմազան և մէկզմէկէ անկախ տեղիք-
 ներէն ելած ըլլալով՝ կըպատշաճին ամեն միտքի :
 Արդ՝ տեսանք թէ փաստաբանութեան բնու-
 թեանը և ականատեսներուն վկայութեանը մեր
 փորձառութենէ ունեցած տարբերութեանը նա-
 յելով, այս նիւթին վրայ մեր ստուգութեան
 հասնիլը արգիլող բան չկայ. և թէ առաջուց
 անհաւանականութիւն չկայ բանին մէջ որ մէկ
 հայր մը իր մողորեալ ու կորսուած զաւկին խօսի,
 և հրաշքի ապացոյցը տայ իր խօսելուն : Ասեցինք

բնութեան ձայնը, որ իր վերաբանութիւններովը
 կրնգունի Քրիստոնէական կրօնքին համաձայնու-
 թիւնը՝ իր խորին և մանուածոյ կարգադրութիւն-
 ներուն և հզօր շարժմունքներուն հետ: Տեսանք
 բնական կրօնքի վարդապետութիւններուն համա-
 ձայնութիւնը Քրիստոնէական կրօնքիններուն
 հետ, և այն բաներուն մէջ որ Քրիստոնէու-
 թիւնը բնական կրօնքին սահմանը կանցնի, տա-
 կաւին անոր դէմ չըլլալը, ինչպէս որ հեռադի-
 տակին յայտնածները մերկ աչքով տեսնուածին
 դէմ չեն: Տեսանք որ այս կրօնքը խղճին յար-
 մար է, ոչ միայն մէկ կատարեալ կանոն մը հաս-
 տատելով անոր ճանաչման կարողութեան բոլոր
 կարօտութիւնները լեցնելովը, այլև բուն իսկ խիղ-
 ճը զօրացնելով և մշակելովը, և անոր կենդանու-
 թիւն ու խաղաղութիւն տալովը: Տեսանք նաև թէ
 թէպէտ Մ. Երտարանին մեծ նպատակը բարոյակա-
 նութիւն կազմել չէր, սակայն երբոր կատարելապէս
 ընդունուի անոր վարդապետութիւնները՝ անոր հետ
 կատարեալ բարոյական մը յառաջ կուգայ: Տե-
 սանք որ յարմար է իմացականութեանը՝ սիրոյ
 զգացումներուն, երևակայութեանը և կամքին, և
 իբրև սանձող զօրութիւն իր արգելքները ճիշդ
 ուր որ պէտք է՝ հոն և ամենէն իմաստուն կերպով
 կրդնէ. անանկ որ իբրև զարթուցանող՝ առաջ-
 նորդող և սանձող դրութիւն մը, այն է՝ բոլոր
 ինչ որ մարդկային բնութիւնը կատարելութեան
 իր ամենաբարձր կէտին հասցնելու համար հար-
 կաւոր է: Տեսանք որ այս կրօնքը՝ բանողին մէկ
 ներքին վկայութիւն մը կուտայ, և յարմարած է
 ու հակած է ընդհանրական ըլլալու, քանի որ

միանգամայն մինչև ժամանակին սկիզբը կը հասնի
 անոր գոյութիւնը: Քարձեալ տեսանք որ ասանկ
 կրօնք մը թէ անոր գրութեան խորհրդաւորու-
 թեանը՝ և թէ անոր ծագմանը պարագաներուն ու-
 թէ անոր գրութիւններուն պարզութեանը և հա-
 մաձայնութեանը նայելով այնչափ անձնար էր մար-
 դու ձնարել, որչափ որ անձնար էր անոր Ավիհանութիւն
 կազմել: Տեսանք մեր Վրկչին խոնարհ վիճակը՝
 եղական պահանջումներն և զարմանալի որպի-
 սութիւնը: Աւ այսպէս վաւերացած կրօնքի մը
 չորս կողմը տեսանք որ պատած են ամեն ձնարաւոր
 կերպ արտաքին վիպութիւն: Տեսանք նաև անոր
 գիրքերուն վաւերականութիւնը հաստատուած ամ-
 մեն կերպ փաստելով, թէ արտաքին թէ ներքին:
 Աւ տեսանք որ անոր եղելութիւններն և հրաշք-
 ները անանկ էին՝ որ մարդիկ չէին կրնար խաբ-
 ուիլ անոնց վրայով, և այն եղելութիւններուն ի-
 րականութիւնը ոչ միայն ականատեսներուն կող-
 մանէ մարտիրոսութիւնով հաստատուած է, այլև
 հիմա կեցող սահմանադրութիւններէն և ծէսնե-
 րէն ալ կիմացուի, և Քրիստոնէութեան կե-
 նալուն մի միայն բանաւոր բացատրութիւնն է:
 Աւ տեսանք որ թէ շրէայ և թէ շեթանոս հե-
 ղինակներ կը հաստատեն մեր գիրքերուն ըրած
 պատմութիւնները: Աւ ոչ միայն տեսանք որ հը-
 րաշքներ գործուած են և Քրիստոնէութեան
 գլխաւոր եղելութիւններն ուղղակի ապացոյցնե-
 լով կատարելապէս հաստատուած են, այլև լսե-
 ցինք մարգարէութեան ձայնը, որ իր շատ զօրու-
 թեամբը պանծալով Քալողին մօտենալը կիմա-
 ցընէր և կըսէր, «Պատրաստեցէ՛ք Տէրոջը ձամ-

բան" : Տեսանք նաև որ այս կրօնքն իբրև խմոր
 հասարակութեան մէջ ձգուած է , և հետզհետէ ի
 դործ կըդնէ իր դադանի բայց անհակառակելի
 զօրութիւնը , ու ապականեալ զանգուածը կըվե-
 րանորոգէ : Նարձեալ տեսանք որ աշխարհիս
 բաղդին տիրող ազդեցութիւններուն մէջ առա-
 ջինն է , անանկ որ " առանց ձեռքի կտրուած քա-
 ըր մէկ մեծ լեռ մը եղաւ" . և վերջապէս տեսանք
 անոր յառաջ բերած օրհնեալ արդիւնքները և
 ունեցած հակումը՝ երկիրը արդարութիւնով և
 խաղաղութիւնով լեցունելու :

Այս բաները տեսանք մենք զատ զատ , և հի-
 մա որ ասոնք ամենը մէկ տեղ մեր առջևը կըկե-
 նան և իրենց հաւաքեալ վկայութիւնը կուտան ,
 յառաջ չե՞ն բերեր և բերելու չե՞ն մէկ ամբողջ ու
 կատարեալ և մնայուն հաւանութիւն մը այս կրօն-
 քին ճշմարտութեանը : Աթէ ասանկ փաստաբա-
 նութիւնը կրնայ ըլլալ որ մեզ սխալեցնէ , իրաւունք
 չունի՞նք սեպելու թէ ուրեմն նոյն իսկ տիեզերքը
 խաբէութեան սկզբունքի վրայ կազմուած ըլլալու է :

Իսկ հիմա՝ որ մինչև հոս մէկտեղ պարտեցանք
 մեր Միօնին բոլորտիքը , պէտք չէ՞ որ յուսամ
 թէ ընթերցողներէն դոնէ ոմանք զգացին որ ա-
 նոր աշտարակներն անշարժ են . արժան չէ՞ որ
 յուսամ թէ այսչափին եկան՝ որ այնպէս խմանան
 սորված բաներնուն ստուգութիւնը , որ իրենց ներ-
 քին պատերազմներուն մէջ զօրութիւն ստանան ,
 ու քալուածքնին աւելի ուժով ըլլայ , և ինքզինք-
 նին դօտուորեն առաւել ջանացողութեան համար ,
 որ այս օրհնեալ կրօնքը բոլոր աշխարհ տարա-
 ծեն : Աթէ այսպէս չէ՞ որ արժան ան իմ :





3228

ՀՀ Ազգային գրադարան



NL0030273

3228

3228

